




787

L. I. S.







ՀԱՆԴԵՍ
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ԵՒ

ՊԱՏՄԱԿԱՆ




ՄՈՍԿՈՒԱ

ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ Ի.

1896

ԲՈՎՈՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ



	ԵՐԵՍ.
I. ՄԻՔԱՅԷԼ ՂԱԶԱՐԵԱՆ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ, ԿՆՆԱՎՐՈՒԹԻՆ, ԵՐ. ՇԱՀԱԶԻԶ	1
II. ԴԱՐԵՐՈՎ ԼԱՑԻՐ... ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՆ ՅՈՎ. ՅՈՎ. ՀԱՆԻՍԵԱՆ	162
III. ՏԱՃԻԿ ՓԱՇԱ, ԲՈՂԳԱՐ ՍԻԱՆՃՆՈՒՆՈՒ յԻՂԱՏԱԿԱՐԱՆՔ, ԿՈՒՍԱՂՐ. Գ. Բ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆ	164
IV. ԼՈՒՍԱՂԲԻԻՐԲ ՎԱՆԻՑ Ս. } Գ. Վ. ԱՅՎԱԶԵԱՆ	197
V. ԲԷՕՊԷԲ	199
VI. ԽԵԼԱԳԱՐ, ԶԱԽԷՐ-ՄԱՂՈՒԿ, ԹԱՐԳ. Մ. ՏԷՐ-ԶԱ-ԲԱՐԵԱՆՑ	201
VII. ԾՈՎԻ ՎԵՐԱՅ. Գ. Բ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆ	222
VIII. ՄԻ ԽԻԶԱԽ ՓՈՐՁ, ՀԵՆՐԻ ՀԱՐԼԱՆԳԻՅ, Ա. Դ.	224
IX. ՎԵՐԶՆ Է ԳՈՎԵԼԻ } ԱՇԴԴ-ԶԻԻԱՆԻ	246
X. ՎԱՌ ԵՐԵԻԱԿԱՅՈՒԹԻՒՆ }	247
XI. ԽՈՐՀՐԴԱԽՈՐ ԶԱՐԴ, ԹԱՐԳ. ՏԻԿ. ՄԱՐԳԱՐԻՏ	249
XII. ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ. I. ՄԱՐԿԱՆ. Մ. ԲԵՐԲԵՐԵԱՆ	266
XIII. ՀԱՅԿԱԿԱՆ ԱՅԺՄԵԱՆ ՔՆԱՐԵՐԳԱԿԱՆ ԲԱՆԱ-ՀԻԽՈՒԹԻՒՆԸ Լ ԱՇՈՒՂ ԶԻԻԱՆԻՆ. ԳՐԱՍԷՐ	280

ՀԱՆԴԵՍ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ԵՒ

ՊԱՏՄԱԿԱՆ



ՄՈՍԿՈՒԱ

ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.

1896

Дозволено цензурою. С.-Петербургъ, 15 мая 1896 г.

Типогр. Х. Бархударянъ, Мосева, Мясницкая, д. Ермаевыхъ.

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

—*—

	ԵՐԵՍ
I. ՄԻՔԱՅԷԼ ՂԱԶԱՐԵԱՆ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ, ԿԵՆՍԱ- գրուծիւն, ԵՐ. ՇԱՀԱԶԻԶ	1
II. ԴԱՐԵՐՈՎ ԼԱՅԻՐ... քանաստեղծուծիւն ՅՈՎ, ՅՈՎ- ՀԱՆՆԻՍԵԱՆ	162
III. ՏԱՃԻԿ ՓԱՇԱ, Բոլգար Միանձնուհու յիշատակարանը, փոխադր. Գ. ք. ՄԿՐՏՈՒՄԵԱՆ	164
IV. ԼՈՒՍԱՂԲԻՒՐՔ ՎԱՆԻՑ Ս. } ԽԱԶԻՆ	Գ. Վ. ԱՅՎԱԶԵԱՆ 197
V. ՔԷՕՊԷՔ	
VI. ԽԵԼԱԳԱՐ, Զախէր-Մաղոխից, Թարգ. Մ. ՏԷՐ-ԶԱ- ՔԱՐԵԱՆՑ	201
VII. ԾՈՎԻ ՎԵՐԱՅ. Գ. ք. ՄԿՐՏՈՒՄԵԱՆ	222
VIII. ՄԻ ԽԻԶԱԽ ՓՈՐՁ, ՀԵՆՐԻ ՀԱՐԼԱՆԳԻց, Ա. Դ.	224
IX. ՎԵՐՋՆ Է ԳՈՎԵԼԻ } X. ՎԱՌ ԵՐԵԻԱԿԱՅՈՒԹԻՒՆ } ԱՇԸՂ-ԶԻԻԱՆԻ	246
XI. ԽՈՐՀՐԴԱԻՈՐ ԶԱՐԴ, Թարգ. ՏԻԿ. ՄԱՐԳԱՐԻՑ	
XII. ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ. I. Մուրացան. Մ. ԲԵՐԲԵՐԵԱՆ	266
XIII. ՀԱՅԿԱԿԱՆ ԱՅԺՄԵԱՆ ՔՆԱՐԵՐԳԱԿԱՆ ԲԱՆԱ- ՀԻԻՍՈՒԹԻՒՆԸ Լ ԱՇՈՒՂ ԶԻԻԱՆԻՆ. ԳՐԱՍԷՐ	280

XIV.	ՊԱՏՃԷՆ ԽՆԴՐԱԳՐՈՅ ՀԱՅՈՑ ԱՌ ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ	317
XV.	ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ	322
XVI.	ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՄԱՍՆԱ- ԻՈՐ Լ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ	} Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆ 326
XVII.	ԵՐԿՈՒ ԽՕՍԲ ԲԱՐԵՊԱՇ. Լ ՀԱՒԱՏԻ ԱՆՏԱՐԲԵՐ. ՄԱՍԻՆ	
XVIII.	Ի ԳԱԼՈՒՍՏ ԽԱԶՍՏՐՈՅ ԼԱ- ԶԱՐԵԱՆՑ	332
XIX.	Ի ԳԱԼՈՒՍՏ Վ. Պ. ԲՈՒՏԿՈ- ՎՈՒ	} Վ. ԱՍԿԱՐԵԱՆՑ 337
XX.	ՄԱՏԱՆԻ ՊՈՂԻԿՐԱՏԵԱՅ, ՇԻԼ- ԼԷՐ	
XXI.	ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐԲԵՐ, ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ Լ ՅԱՅ- ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	339
		343

Յ Ա Ր Ե Լ Ո Ւ Ա Ծ.

ՏԱՅՄԱԲՎԱՅ ՊԱՆԵՐ, ՍԻՒԼԻԿԿ	1
------------------------------------	---



ՄԻՔԱՅԷԼ ՂԱԶԱՐԵԱՆ

Ն Ա Լ Բ Ա Ն Դ Ե Ա Ն Ց¹

(ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ)

Աստուած հրգօր, երկայնամիտ,
Լիր բաղձանքը մեր միամիտ,
Հաս օգնութիւն թշուառ հային,
Հալածէ մեր չար թշնամին:
Տէր ողորմեան, Տէր ողորմեան,
Տէր ողորմեան, Տէր ողորմեան:
Եւ թէ մօտ է մեր օրհասը
Եւ մեզ սպասէ դառն թասը,
Գոնէ տուր մեզ արիութիւն
Վրկայ լինել մեր հաւատոյն:
Տէր ողորմեան, Տէր ողորմեան,
Տէր ողորմեան, Տէր ողորմեան:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ.

ԳԼՈՒԽ Ա.

Նալբանդեանցի ծննդեան թուականը:—Նալբանդեանց ընտանիքի խորթութիւնները:—Նալբանդեանց ազգանունը:—Նալբանդեանցի մանկութիւնը և նորա սկզբնական կրթութիւնը:—Նախիջևանի ուսումնարանական գործի զրութիւնը երեսնական թուականներում:—Տէր-Գարբիէլ Պատկանեանցի դպրոցը:—Պարագմունքների ժառանգականութիւնը Հայոց մէջ:—Նալբանդեանցի Պատկանեանցի դպրոցում ձեռք բերած գիտութեան չափը և զարգացման աստիճանը:

Միբայէլ Նալբանդեանցը ծնուել է Նոր Նախիջևանում և մկրտուել ս. Թէոդորոս եկեղեցում, որի ծուխն էր

¹ Մենք այս աշխատութեան համար մեր ձեռքին ունեցել ենք հետեւեալ գլխաւոր աղբիւրները՝ ա. «Միբայէլ Նալբանդեան»

Նալբանդեանց ընտանիքը: Նորա ծննդեան թուականը համարվում է 1830-ը. զոնե այդ թուականն է կրում այն մահարձանը, որ կանգնել է նորա վերայ նորա քոյր Վառվառէ Մեսնիկեանը¹: Մենք ասում ենք «զոնե» ոչ թէ նորա համար, որ չենք հաւատում այդ թուականի ճշտութեան,

ցի համառօտ կենսագրութիւնը», որ տպուած է Միքայէլ Տէր-Գրիգորեանի ջանքով 1868 թ. Պետերբուրգում հրատարակուած Նալբանդեանցի Հազար Փարպեցու (Թղթի) աշխարհաբառ թարգմանութեան սկզբում: ք. Փարրիէլ արքեպիսկոպոս Այվաղեանի «Պատմութիւն Խալկական ուսումնարանին ազգիս Հայոց». 1870 թ. Տիփսիս. գ. Տէր-Փարրիէլ Պատկանեանցի Արարատ ամսագիրը. 1850—1851. Տիփսիս. դ. Նալբանդեանցի թէ առանձին հրատարակութեամբ լոյս տեսած և թէ «Հիւսիսափայլում» տպագրուած երկասիրութիւնները. և. Ստեփան Ոսկանեանի 1859 թուականի «Արեւմտեքը». գ. Ս. Թէոդորեանի «Մուրադեան և Հայկազեան վարժարանաց պատմութեան» չորրորդ հատորը 1866 թ. Փարիզ. է. Նալբանդեանցի նամակները, որ ամենայն յօժարութեամբ Նաղարեանցի նամակների հետ միասին մեզ յանձնեց օգտուելու և տպագրելու հանգուցեալի բարեկամ Գրիգոր Սալտիկեանը. ը. «Մասեաց Աղանի», «Մեղու Հայաստանի», Պօլսի «Մեղու», «Երեւակ» պարբերական թերթերի մէջ գտնուած Նալբանդեանցին վերաբերեալ յօդուածները. թ. Նալբանդեանցի անտիպ աշխատանքները և թղթերը, որ յօժարութեամբ մեզ յանձնեց օգտուելու հանգուցեալի քոջորդի պ. Յովհաննէս Խաչատրեանը. ժ. Ղ. Աղայեանցի «Իմ կեանքի գլխաւոր դէպքերը». «Մուրճ» 1893 թ. ժա. Ա. Երիցեանի «Գրիգոր Արծրունու և նրա քսան և հինգ տարուայ գրական գործունէութեան առիթով». Թիֆլիս 1890 թ. ժք. Յ. Տէր-Արաշամեանի «Յովսէփ չորրորդ երկայնարաւուկ Արցութեանց». Ռոստով (Դոնի վերայ). 1881 թ. և ժգ. Աւետիս վարժապետ Բէրբէրեանի «Պատմութիւն Հայոց 1772—1860 թ.» Կ. Պօլսի. 1871 թ.: Բացի գրաւոր աղբիւրներից, մենք օգտուել ենք և հանգուցեալի աղբալանների և ժամանակակիցների՝ հանգուցեալի քոյր Գայիանէ Խաչատրեանի, նորա աշակերտ Գէորգ Խաչատրեանի, բարեկրօն Տէր-Խաչատուր քահանայ Զարիֆեանի, ծերունի Գասպար Սալտիկեանի, Փ. Վարդանեանի և միւսների պատմածներէց:

¹ Մահարձանի արեւելեան կողմն ունի հետեւեալ արձանագրութիւնը՝ «Աստ հանգչի մարմին Միքայէլի Հազարեան Նալբանդեանց ծնեալ ՚ի 27 հոկ. 1830 ամի, վախճանեալ ՚ի 1866 ամի 31 Մարտի»: Այս արձանագրութեան գլխին գտնվում է Փրկչի պատկերը՝ ձախ ձեռքին սկիհ բռնած, իսկ աջը խաղա-

այլ որ մենք չկարողացանք նորան ստուգել ամենաճիշտ աղբիւրից, եկեղեցու այն ժամանակուայ ծննդական մատեանից: Յայտնի է, որ երեսնական թուականներում մեր եկեղեցիներում ծննդական կանոնաւոր մատեաններ պահելու սովորութիւնը դեռ ամեն տեղ չէր ընդհանրացել: Մանուկների ծննդեան թուականները ծնողները կամ ազգականները պահում էին յիշողութեամբ կամ, եթէ դրադէտ էին, նշանակում էին ժամագրքի, Սաղմոսի, Աւետարանի, Աստուածաշնչի կամ տանը գտնուած մի որ և է գրքի առաջին կամ վերջին երեսի վերայ: Նալբանդեանց ընտանիքը մեծ է եղել և բազկացած շատ խորթ տարերից, որովհետեւ Ղազարոսը չորս անգամ է ամուսնացած եղել և չորսից ևս զաւակներ է ունեցել¹: Բայցի այս մօ-

ղութիւն տալու ձեով, հիւսիսային կողմն ունի հետեւեալ արձանագրութիւնը՝ «կանգնեաց տապանս այս քոյր հանգուցելոյն Մ-սի Վառվառէ Մենիքեան»: Այս արձանագրութեան գլխին էլ գտնվում է Աստուածամօր պատկերը՝ Յիսուս մանուկը գրկին, Մահարձանի արեւելեան կողմն ունի հետեւեալ ուսերէն արձանագրութիւնը՝ «Здѣсь почитается прахъ Мххана Лазаревича Налбандова», սորա շարունակութիւնը գտնվում է մահարձանի արեւմտեան կողմի վերայ՝ «родившагося 27 Октября 1830 года, скончавшагося 31 Марта 1866 года». Մահարձանը չուգուցից է և գրուած է մի քանի աստիճան ունեցող քարեայ պատուանդանի վերայ, Փղբրիկ խաչը, որ զարդարում է այդ մահարձանի գագաթը, ունի իւր վերայ Բրիստոսի խաչելութեան ձուլածոյ պատկերը:

¹ Ղազարոսի չորրորդ անգամ ամուսնանալու մասին հետեւեալ կերպով են պատմում: Ղազարոսը երրորդ անգամ այրիանալով, մտածում է նորից պսակուել, բայց քահանաները արգելք են լինում: Այն ժամանակ նա դիմում է առաջնորդին և յայտնում է նորան իւր գլխին եկած անբաղդութեան մասին: Առաջնորդը ի նկատի առնելով, որ Ղազարոսը իւր երկու առաջին կանանց հետ կենակցել է ընդամենը հինգ տարի՝ առաջին հետ երկու, երկրորդի—երեք, իսկ երրորդի հետ նա կարողացել է ապրել միայն տասն ամիս, ի նկատի առնելով, որ նա այն ժամանակուայ սովորութեամբ շատ կանուխ կարգուած լինելով, դեռ շատ երիտասարդ է, հրամայում է պսակել նորան:

րենական խորթութիւնից, Ղազարոսի ընտանիքում եղել է և Հօրենական խորթութիւն, որովհետեւ չորրորդ կինը Մարիանէն այրի լինելով բերել է իւր հետ Ղազարոսի տուն իւր առաջին ամուսնութիւնից ունեցած երեխաներին ևս¹։ Միքայէլը ծնունդ է չորրորդ ամուսնութիւնից։ Ղազարոսը հարուստ չէ եղել, բայց այնքան է ունեցել, որ կարողացել է առանց զղալի չքաւորութեան պահել իւր մեծ ընտանիքը։ Նա կարավաճառի խանութ է ունեցել քաղաքի շուկայում կամ, ինչպէս Նախիջևանցիք տաւած են, «բազարի տեղը», ու յայտնի է եղել «Ուստայի Ղազար» անունով²։ Ուստայ տաճկական բառը յոյց է տալիս, որ Ղազարը մի որ և է արհեստի վարպետ է եղել, կարելի է կարագործութեան, որի առեւտրով, ինչպէս ասացինք, պարապում էր նա։ Բայց հաւանական է, որ նա երիտասարդ հասակում պարապած լինի պոյատութեամբ, որ, ինչպէս երևում է նորա ազգանունից, նոցա ընտանեկան նախնին արհեստն է եղել։ Այդ ենթադրութիւնը մենք հաւանական ենք համարում, հիմնուելով այն սովորու-

¹ Մարիանէն առաջին ամուսնութիւնից ունենում է չորս որդի՝ Լուսեղէն, Ղազարոս և Սերովբէ և մէկ աղջիկ՝ Վառվառէ. իսկ երկրորդից—երկու որդի՝ Գաբրիէլ և Միքայէլ և երկու աղջիկ՝ Շահդադէ և Գայիանէ։ Ղազարոսի առաջին կնոջ անունը եղել է Տիրուհի, երկրորդինը—Գեղեցիկ և երրորդինը—Աննա։ Տիրուհուց նա ունեցել է միայն մի որդի՝ Գրիգոր, Գեղեցիկից—երկու որդի՝ Լուսեղէն և Յակովբ և Աննայից—մի աղջիկ՝ Գալիանէ։

² Ղազարոսի Ուստայ մականունից է, որ Միքայէլին, փոխանակ Նալբանդեանց ասելու, ասում ու գրում էին, նամանաւանդ առաջին ժամանակները, «Ուստայեան»։ Տես «Պատմութիւն Խալիպեան ուսումնարանին ազգիս հայոց», էջ 79։ Ինքը Նալբանդեանցը «Ուստայեան» ազգանունը երբէք չէ գործածել, այլ միշտ կամ պարզ «Մ. Նալբանդեանց» և կամ «Մ. Ղ. Նալբանդեանց» յաշակերտութենէ՝ Տեառն Գարրիէլի Պատկանեան, ինչպէս որ մենք տեսնում ենք ստորագրուած նորա «Արարատում» տպուած ոտանաւորների տակ։

Թեան վերայ, որ 'ի սկզբանէ եղել է ոչ թէ միայն Նախիջևանցուոց, այլ և բոլոր Հայերի մէջ: Նախիջևանցիք, որ Խռիմում Թաթարների և առ Հաստորակ արեւելքում ընդունուած սփորութեամբ բաւականացել են ազգանուան տեղ տաճկական «օղլու» բառի դործածութեամբ, Ռուսաստան տեղափոխուելուց յետոյ, ստիպուած են եղել մի որ և իցէ «լազաբ» ազգանուն ընդունել: Այս դէպքում նոքա մի քանի միջոց են դործ դրել. նոքա կոչուել են կամ Հայերի կամ արհեստների կամ մականունների անունով և կամ նախկին օղլուն ուղղակի ազգանուն են շինել: Նախիջևանցուոց ահագին մեծամասնութիւնը արհեստաւոր լինելով, յայտնի բան է, նոցա ազգանունների մեծամասնութիւնը ևս արհեստներից պէտք է առաջ դար, ինչպէս որ այդ մինչև այժմ ևս կարելի է տեսնել, չնայելով, որ շատերը արդէն իրենց ազգանունները Թարգմանել կամ յարմարեցրել են ռուսաց ազգանուններին: Նախիջևանցի մանկութեան տարիների մասին մենք շատ տեղեկութիւն չունինք: Ընտանեկան աւանդութիւնը պատմում է, որ փոքր Միքայէլը մի վատոյժ, նիհար, թոյլ կազմուածքով երեսայ էր, բայց վերին աստիճանի ժիր, կայտառ և սրամիտ. նա իւր արտաքոյ կարդի աչքաբացութեամբ զրաւում էր ոչ միայն իւրացիների, այլ և օտարների ուշադրութիւնը: Ութ-իննը տարեկան Հասակում Ուստա Ղազարը ապիս է նորան ուսման: Երեսնական թուականներում Նախիջևանում, ինչպէս և բոլոր Հայաբնակ տեղերում, դեռ կանոնաւոր դպրոցներ չկային: Թէև մենք ղիտենք, որ Յովսէփ Էպիսկոպոս Արղութեանը

¹ Արծաթ պանեան - Սերբերեական, Ոսկերչեան - Զոյոտարեան, Զէյթունեան - Մալիկով, Խնձորեան - Եարլովով, Դաբախեան - Գաժենիկեան, Խլթ ջեան - Սարելիկով, Խալիախեան - Շապշիկեան, Քեչեջեան, Սրմաքէշեան, Միհանաջեան, Խարախաշեան, Եարմաղայեան, Խալաջեան և այլն և այլն.

Նախիջևանը հիմնելուց մի քանի տարի յետոյ, երկու դարոյց բաց արեց՝ մէկը փոքր ընթացքով հասարակութեան և եկեղեցու հաշուով, իսկ միւսը աւելի ընդարձակ ընթացքով Զուղայեցի Գերաբեան Յովհաննէան տղայի ծախքով և կոչեց նոցա Ս. Սահակայ և Մեսրոպայ զըպրոցներ, որոնց օգտին մեծագումար կտակներ ևս արին ճնդկաստանցի հարուստ հայերը. զիտենք նոյնպէս, որ այդ զըպրոցները գոյութիւն ունեցան մինչև 37—38 թուականները և բաւականին ծաղկեալ զրութեան հասան Եփրեմ, Յովհաննէս և Ներսէս առաջնորդների վերահսկողութեան ներքոյ, բայց Նալբանդեանցի ուսման տալու ժամանակները, ինչպէս երևում է, նոքա արդէն փակուել էին, իսկ նոցա փոխանակող Խաչատուր Խումանցեանի քաղաքապետութեան օրով բացուած և Խալիբի ժամանակ արքունի դաւառական դպրոցի վերափոխուած և յետագայ ժամանակներում նոյն իսկ առաջին դպրոցների տնունը իւր վերայ առած դպրոցը տակաւին գոյութիւն չունէր: Հայոց ուսումնարանական զործը այն ժամանակները իւր խալիֆայական շրջանումն էր: Ուսման պահանջը ընդհանուր չէր, գիտութիւնը անհատների սեփականութիւն էր միայն, իսկ ընդհանրութիւնը բաւականաւորում էր շատ չնչին ուսման պաշարով¹: Ուսումնարանական զործը հոգեւորականութեան ձեռքին էր, թէև կային և աշխարհական զրադէաներ, որոնք զրել-կարգալ էին սովորեցնում: Ամենալու և զիտնական ուսուցիչները վարդապետներն էին, բայց նոցա մօտ յաճախում և ուսում էին առնում միայն հոգեւորականացուները և կատարելագործուելու առանձին ցանկութիւն ունեցողները, իսկ ընդհանրութիւնը բաւականաւորում էր քահանաների

¹ Տես Յովհաննէս Տէր-Արրահամեանի «Յովսէփ չորրորդ երկայնարաղուկ Արղւութեանց» աշխատասիրութիւնը. էջ 21—29:

և տիրացուների աւանդածով: Միքայէլին ևս վիճակուեցաւ խաղիւթացութեան համն առնելու, այն ժամանակուայ զխտութեան այդ աւազանում մկրտուելու: Այդ այն քուրան էր, ուր մանելով նա իբրեւ տնկաղմ, փափուկ և հում նիւթ, թրձուեցաւ և տոկունութիւն ստացաւ, որտեղ կաղմակերպուեցաւ նա և որտեղ զրուեցաւ նորա կամքի և բնաւորութեան հզօր սաղմը, այդ այն քուրան էր, որտեղ զտուեցաւ և գոյութիւն ստացաւ այն ազնիւ մետաղը, որ ապագայում մեծամեծ փորձութիւնների դիմանալով, այնքան գեղեցիկ պտուղներ տուեց ազգին:

Ուստա Ղազարը առաջ տալիս է նորան տիրացու Օքսէնա Եղեշէի դպրոցը: Աչքաբաց Միքայէլը կարճ միջոցում սովորում է այն բոլորը, ինչ որ զիտէր, ինչ որ դաս էր տալիս տիրացուն: Հաւանական է, որ վարժապետի զխտութիւնն էլ գրեւ-կարգաւորց այն կողմը չէր անցնում: Այն ժամանակ հայրը անսնելով որդու ընդունակութիւնը և նորա ուսման զօրծը շարունակելու ցանկութիւնը, հանում է նորան տիրացուի դպրոցից և տալիս է Տէր-Գաբրիէլ Պատկանեանցին, որ այն ժամանակ միւս քահանաների պէս երեսանէր էր կարողայնում: Պատկանեանցը Նախիջևանի քահանաներից ամենակրթուածն էր. նա իւր կրթութիւնը ստացել էր իւր հօրից՝ Սերովրէ վարժապետից, որին Նախիջևանցիք հրաւիրել էին հաշտարխանից վարժապետութեան համար: Ուստա Ղազարը փոքրիկ Միքայէլին ուսման տալով առաջ տիրացու Օքսէնային, յետոյ Տէր-Գաբրիէլին, անկասկած նպատակ չունէր նորանից զիտնական մարդ պատրաստելու: Այդ ճիշտումն այն ժամանակ հայերի մէջ չէր: Ուսումը շարունակում, զիտնականութեան էր պատրաստվում միայն նա, ով որ միտք ունէր հոգեորական դառնալու: Մեր հայրերը բաւականանում էին նորանով միայն, որ իրենց գլուխները գրեւ-կարգալ իմանան, սկզբնական ազօթքները

սովորեն և ընտելանան մեր եկեղեցու ժամասացութեան: Իսկ այդ նպատակին նոքա շատ շուտով էին հասնում, որովհետև այն ժամանակուայ դպրոցները հոգևոր ուղղութիւն ունենալով, գրաճանաչութեան հետ միասին գործնական կերպով արդէն ուսուցանում էին ծնողների ցանկացածը: Աշակերտները պարտական էին ամենայն օր յաճախել այն թաղի եկեղեցին, որի տիրացուի կամ քահանայի մօտ ուսանում էին նոքա, և կատարել ամեն անհատի տիրացուական պարտականութիւն: Յայտնի բան է, աշակերտը ամեն օր ներկայ գտնուելով ժամերգութեան, ինքը ևս ծառայելով եկեղեցում, շուտով բերանացի էր սովորում բոլոր ժամասացութիւնը և ընտելանում էր եկեղեցական արարողութեան կարգ ու կանոնին: Այդ մի լաւ սովորութիւն էր, որ միջոց էր տալիս հին հայոց հասարակութիւններին այն ժամանակուայ գրադիտութեան սակաւ տարածուած դրութեան մէջ սովորելու ճանաչել իրենց եկեղեցին, սիրել նորան և այնպիսի ամուր կապելով կապուել նորա հետ, որ հաւատարիմ էին մնում նորան և հարստային խորշակի և հիւսիսային բորհասի ազդեցութեան ներքոյ: Այդ նպատակին հասնելուց յետոյ, մեր հայրերը հանում էին դպրոցից իրենց որդիներին և դնում իրենց գործին, որովհետև այն ժամանակուայ քրդադմուռնքն էլ մեծաւ մասամբ ժառանգական էր: Արհեստաւորը սովորեցնում էր որդուն իւր արհեստը, խանութպանը — իւր խանութպանութիւնը, երկրագործը — իւր երկրագործութիւնը, խաշնարածը — իւր խաշնարածութիւնը, մինչև անգամ քահանայութիւնն էլ ժառանգական էր: Այլքառ դասակարգի շատ անգամ և միջին կարողութեան տէր մարդիկ իրենց որդիներին սովորութիւն ունէին տալ հարուստ վաճառականների խանութը, որ ապագայում նոքա նոցա մարդ շինեն: Այդպիսիներից էին առաջ գալիս «չրադները», որով պարծենում էին ազա-

ները ասելով՝ «այս ինչ մարդը իմ տան չբաղն է, այն ինչը քո» և այլն: Ահա ուստայ Ղազարն էլ առաջնորդուելով այդ ընդհանրացած սովորութեամբ, իւր որդուն Պատկանեանցի մօտ 5—6 տարի թողնելուց յետոյ, հանում է նորան զպրօցից, կամենալով նորան կամ մի որ և է վաճառականի տալ և կամ իւր գործին դնել: Բայց Միքայէլը հակուէմն չէ ցոյց տալիս իւր հօր ընտրած ճանապարհով երթալու. նա, ինչպէս երևում է, կասկածում էր իւր խանութպանութեան և վաճառականութեան ընդունակութեան վերայ: Նա ստեղծուած չէր վաճառական լինելու. նորան դէպի ինքն էր քաշում մի ուրիշ բան՝ զատուել շրջապատող հասարակութիւնից, բարձրանալ, ուսանել և ուսուցանել: Ահա այդ նպատակին հասնելու համար նա թողնում է վաճառական լինելու զխաւորութիւնը, և հիկեղեցի է մտնում ծառայելու, որովհետեւ նորան դէպի իւր ցանկացած նպատակը տանող ճանապարհներից միայն հոգեորականն էր մատչելի: Թէ որքան զարգացում, որքան գիտութիւն ձեռք բերեց Միքայէլը Պատկանեանցի մօտ, մենք, ձեռքներին գրաւոր ապացոյց չունենալու պատճառով, ճշտութեամբ չենք կարող ասել. բայց ի նկատի առնելով, որ նորա Տէր-Փարբիկից ստացած գիտութիւնը ծառայեց իբրեւ հիմք նորա ապագայ գիտութեան և գրաւոր վաստակների, կարելի է ասել, որ նա զրաբառ այնքան սովորեց, որ առանց զգալի զժուրութեան կարողում ու հասկանում էր մեր մատենագրների գրուածները, գիտէր չոյոյ պատմութեան կմախքը, ծանօթ էր չոյոյ հիկեղեցու պատմութեան և, վերջապէս, բոլոր իւր աշակերտութեան ժամանակամիջոցում տիրացութիւն արած լինելով, լաւ գիտէր հիկեղեցու ժամասացութիւնը և արարողութիւնը: Իսկ ինչ որ վերաբերում է նորա այդ ժամանակուայ զարգացման աստիճանին, թէև այդ մասին գրաւոր ապացոյց նոյնպէս չունենք, բայց

ի նկատի առնելով, որ դպրոցից դուրս գալով, նա ուսման գործը չթողնեց, ինքնուսուլթեամբ շարունակեց իւր ուսման թերին լրացնել, միշտ ամեն բանի հետաքրքիր լինելով, միշտ կարգալով ու անցածը կրկնելով, կարելի է գալ այն եղբակացութեան, ըր նա Պատկանեանի դպրոցից ուսման սիրոյ հետ միասին և բաւականին զարգացման պաշար տարաւ:

ԳԼՈՒԽ Բ.

Նալբանդեանցի տիրացութիւնը.—Նրջանկայիշատակ Ներսէս կաթողիկոսի Նախիջևանում արած կարգադրութիւնները:—Նախիջևանի հոգևորականութեան ազիաութիւնը և Վերաիչ Նախիջևանի դպրոցը:—Տիրացուական դասակարգի նշանակութիւնը անդեալում և մեր ժամանակ:—Նալբանդեանցի բռնած դիրքը Նախիջևանի հոգևորականութեան մէջ:—Նալբանդեանցի նիւթական ապահովութիւնը:—Նալբանդեանցի քարտուղարութեան պաշտօնը առաջնորդի մօտ:—Առաջնորդի և Նալբանդեանցի յարաբերութիւնը:—Նալբանդեանցի գործունէութեան բնաւորութիւնը և դորանից առաջացած հետեանքը:

Նալբանդեանցը, ինչպէս վերը ասացինք, առաջ էլ դեռ իւր աշակերտութեան ժամանակ տիրացութիւն էր արել ս. Լուսաւորիչ եկեղեցում, որի միաբան քահանաներից էր և նորա ուսուցիչ Տէր-Գարրիէլը: Բայց նա այն կատարել էր անգիտակցաբար իբրեւ ընդունուած սովորութիւն, իբրեւ աշակերտական պարտականութիւն: Իսկ այժմ նա տիրացութիւնը ընդունում է իբրեւ գործ, իբրեւ պաշտօն, այնպէս որ էրբ 45 թուականին երջանկայիշատակ Ներսէս Հիմդեորդ կաթողիկոսը այցելեց Նախիջևանը, նա արդէն պաշտօնապէս հոգևոր կոչման մէջ հաստատուած ս. Լուսաւորչի տիրացուներից մէկն էր: Յայտնի է, որ Բեսսարաբիոյ առաջնորդ Ներսէս եպիսկոպոսը Յովհաննէս Կարբեցու մահից յետոյ հաստատուելով կաթողիկոս, իս-

կոյն չգնաց ս. Էջմիածին, այլ նախ գնաց Պետերբուրգ և յետոյ այցելելով Ռուսաստանի Հայաբնակ քաղաքները, միայն 1847 թուին ժամանեց ս. Էջմիածին և ընդունեց ս. Օժումն: Ահա այդ միջոցումն էր, որ Քիչինևից իւր աթոռատեղին զնալով, կաթողիկոսը եկաւ և Նախիջևան: Նա այստեղ բաւականին երկար մնաց, սպասելով Թիֆլիզի պատգամաւորներին, և, ինչպէս ամեն տեղ, այստեղ ևս վերահասու եղաւ ժողովրդի կացութեան պայմաններին և ծանօթացաւ եկեղեցական գործերին և նամանաւանդ նոցա տնտեսական դրութեանը: Եկեղեցիների տնտեսական դրութեան վերայ աւելի մօտ և խիստ Հսկողութիւն ունենալու մոքով, նա, ինչպէս այդ արեւ էր Խռիմում, Բեսսարաբիայում և մայրաքաղաքներում, այն ժամանակուայ քաղաքազուլիս Յարութիւն ազա Խալիբեանին գործակալ կամ վէքիլ նշանակեց, որի ձեռքին կենտրոնացրեց եկեղեցիների բոլոր առձեռն պատրաստի դումարները և ընթացիկ եկամուսները, և պատուիրեց միայն իրեն Հաշիւ տալ: Երջանկայիշատակ կաթողիկոսի աչքից չխուսափեց և քաղաքիս Հոգեւորականութիւնը, քահանաների բարոյական անկեալ վիճակը և նոցա առասպելական տգիտութիւնը: Նա Հոգեւորականներին, գոնէ, մի փոքր զիտութիւն ձեռք բերելու համար, հրամայեց յաճախել Մկրտիչ Եղենեան վարժապետի դպրոցը քերականութիւն սովորելու, որովհետեւ հարց ու փորձից յայտնուել էր, որ բոլոր քահանաներից միայն Պապկանեանցն էր տեղեակ քերականութեան: Այս հրամանի Հիման վերայ Նալբանդեանցն էլ իբրեւ տիրացու ստիպուած է լինում միւս տիրացուների և քահանաների հետ միասին յաճախել Եղենեանի մօտ դաս առնելու նորանից: Մկրտիչ Եղենեանը իւր կրթութիւնը ստացել էր Վենետիկի Մխիթարեանց դպրոցում և արդէն քանի ժամանակ էր, որ բնականօրով Նախիջևանում էր բնակվում և վարժապե-

տուութիւն էր անում: Նա թէև զաւանուութեամբ կաթողիկէր, ինչպէս բոլոր Միսիթարեանց զպրօցում՝ ուսում առնողները, բայց Նախիջևանցիք խտրութիւն չէին անում և միայն, ինչպէս կաթողիկի, կոչում էին «ձուկ ուտող»¹: Նորա տուած կրթութիւնը կրում էր իւր վերայ Միսիթարեանց ուղղութիւնը, որ նոքա փոխ էին առել Եւրոպայի պապական դպրոցներից. նա սքոլաստիկ էր: Նա, ճիշտ է, լաւ գիտէր գրաբառ լեզուն, բայց քերականութիւնը, որի համար հոգացող կաթողիկոսը պատուիրել էր հոգեւոնականներին նորա մօտ դնալ, նա սովորեցնում էր ոչ որպէս միջոց լեզուն սովորելու, այլ իբրև առարկայ, արուեստ: Նախնականցը, իբրև յաճախողներից առննապատրաստուածը և զարգացածը, իսկոյն նկատում է վարժապետի ուղղութիւնը և ժամանակի 'ի վրէր կորուստ և ապարդիւն աշխատանք է համար երկար ժամանակ յաճախել վարժապետի դասերին: Ասում են, որ նա ուղղակի այդ կարծիքը յայտնում է վարժապետին ասելով՝ «եթէ նոր բան ունիս սովորեցնելու, սովորեցրու, թէ չէ ես քո սովորեցրածը արդէն շատ ժամանակ է որ վիտեմ»: Կաթողիկոսը իմանալով տիրացուի այդ յանդգնութեան մասին, հրամայում է, նորա գիտութիւնը փորձելու համար, մի գրաբառ շարադրութիւն առլ նորան գրելու: Նախնականցը այդ իւր առաջին շարադրութեամբ ցոյց է տալիս այնքան զարգացումն ու գիտութիւն, որ խստապահանջ հայրապետը բաւական է մնում և ազատում է

¹ Զարմանալին այն է, որ մինչև անդամ՝ Ներսէս կաթողիկոսը ևս ուշադրութիւն չէ դարձնում վարժապետի դաւանութեան վերայ և հրամայում է հոգեւորականներին նորանից դաս առնել: Եղեկեանը շարունակում է հոգեւորականներին դասաւանդել Նախիջևանում մինչև 49 թուականը, երբ Մատթէոս առաքնորդը, երևի, Նախնականցի զրգմամբ, վերջապէս, փակում է նորա այդ տարօրինակ ընծայարանը, Տես Վիսիստափայլ 1858 թ. թիւ 8, էջ 150:

նորան Մկրտիչ վարժապետի դասերից¹։ Տիրացու. Պրքան մեծ և վսեմ իմաստ է պարունակում իւր մեջ այդ բառը, բայց և նոյն ժամանակ Պրքան ընկել և ի՛նչպէս կորցրել է նա իւր նշանակութիւնը մեր օրերում։ Ահա մի երիտասարդ, որ պատրաստվում է բռնին Աստուծոյ քարոզ լինելու, ժողովրդին հայր, կարօտեալներին ու վշտացեալներին մխիթարող, Տէր և քահանայ լինելու, ուրեմն Պրքան ծանր ու մեծ աշխատանք է հարկաւոր այդ պաշտօնին համապատասխան պատրաստութիւն ձեռք բերելու համար. չէ՞ որ նա պէտք է քաջ հովիւ լինի, որ համարձակ կարողանայ իւր անձը դնել ոչխարների վերայ։ Հայոց եկեղեցու բարեգարդութեան ժամանակ, երբ բոլոր նուիրապետութեան աստիճանները համապատասխան էին իրենց վեհ կոչմանը, տիրացուական դասակարգը ևս յետ չէր մնում նոցանից։ Տիրացուները սնվում ու մեծանում էին բարեպաշտ հովիւների հսկողութեան ներքոյ, նոցա առաջնորդութեամբ և ղեկավարութեամբ, ամեն բանում նոցանից էին օրինակ առնում։ Նոքա աշխատում էին անարատ կեանք վարել, անբիծ վարքի տէր լինել, աշխատում էին ներքին շնորհների հետ միասին, և արտաքին բարեմասնութիւն ձեռք բերել. նոքա սովորում էին սիրել եկեղեցին և նորան կազմող ժողովուրդը, սովորում էին յարգել ղիտութիւնը իբրեւ ս. Գրոց քարոզութեան, նորա ծածկուած խորհուրդների մեկնութեան նախադուռն

¹ Ցաւում ենք, որ Նալբանդեանցի գրչի այդ առաջին երեսայրիքը, որով մենք միջոց կ'ունենայինք նորա այդ ժամանակուայ թէ գիտութեան և թէ զարգացման աստիճանը չափելու, մեր ձեռքը չէ հասել. Գուցէ այդ գրուածքը պահպանուած լինի հանգուցեալ Եգեներանի թղթերի մէջ, որ, ասում են, նորա մահից յետոյ անցել են Այվազեան Գարրիէլ եպիսկոպոսի ձեռքը. Մեզ յայտնի է, որ հանգուցեալ եպիսկոպոսի թղթերը տարուել են ս. Էջմիածին, իսկ այնտեղից, եթէ ոչ բոլորը, գոնէ մի մասը, ինչպէս մենք լսել ենք, Վահրամ եպիսկոպոս Մանկունին իւր հետ տարել է Պոլիս։

ու բանալին. նորա այն ժամանակուայ զիտութեան զինուորներն էին, ուսանողներն էին: Եւ ժողովուրդը սիրում, յարգում և գնահատում էր նոցա. «տիրացու» պատուաւոր կոչումն էր, զիանականութեան նշան, հասկացողութեան տիպոս էր: Ահա այսպիսի տիրացուներից զուրս եկան, պատրաստուեցան Սահակները, Մեսրոպները, Ներսէսները, Ղեոնդ Երէցները, Գիւտերը, Մանգակունիները, Օձնեցիները, Կոմիտասները, Փիլիպոսները, Տաթևացիները և մեր եկեղեցական ու քաղաքական պատմութեան մէջ աչքի ընկնող հոգևորականները: Բայց երբ ազգի ընդհանուր թշուառութեան հետ միասին եկեղեցին ևս անշքացաւ և ազիտութիւնը և խաւարը իրենց կնիքը դրին մեր հոգևորականութեան վերայ, տիրացուները ևս կորցնելով իրենց առաջնորդող լոյսը, ընկան խաւարի մէջ: Այլ ապագայում ստանձնելիք քահանայի վսեմ պաշտօնը չէր, որ ողևորում էր նոցա, այլ զիտութեան ու կրօնի սրբութիւնը չէր, որ յափշտակում ու դէպի ինքն էր քաշում նոցա, այլ միայն խաղաղ և ապահով կեանքը: Եւ ժողովուրդը փոխեց իւր յարաբերութիւնը, երես դարձրեց նոցանից և սկսաւ արհամարհանքով նայել նոցա վերայ: «Տիրացու» և «տիրացուական» բառերը մեր լեզուում, փոխանակ իրենց առաջուայ նշանակութեան, հայհոյանքի բնաւորութիւն ստացան, անշնորհք և ազէտ բառերի հոմանիշ դարձան: Ահա այդ տեսակ տիրացուներից պատրաստուեցան, զուրս եկան Տէր-Մրջինիկները, Սորմակները, Պետրոս և Զանգակ Երէցները, Եղըները, Տէր-Կիրակոսները, Գետադարձները¹, Մնաւարդեցիները և միւս բոլոր

¹ Պետրոս Գետադարձ կաթողիկոսի (1019—1058) գործունէութեան վերաբերութեամբ մինչև ցայսօր ղեռ մեր մէջ մի որոշ քննական կարծիք չէ կազմուել: Մեր պատմաբանները 'ի նկատի առնելով նորա գրական գործերը (նա, բացի մի քանի ճառից, գրել է «Մարտիրոսաց, հանգստեան և Մանկունք» կո-

դաւաճան և իրենց վեհ կոչման անարժան չայոց հոգեւորականները: Տիրացու Նալբանդեանցը չէր նմանում իւր ընկերակիցներին. նա և զարգացմամբ և գիտութեամբ վեր էր նոյանից և իւր կեանքի անարատութեամբ և պարկեշտութեամբ: Տիրացու բառը իւր նոր նշանակութեամբ չէր յարմարւում նորան, նա աւելի նմանում էր իւր հին պաշտօնակիցներին, իրենց պատուաւոր պաշտօնին համապատասխան տիրացուներին: Նորա ընկերները այդ զգում էին և նայում էին նորա վերայ ոչ իբրեւ իրենց հաւասար տիրացուի վերայ, այլ պատկառանքով ու յարգանքով: Պատմում են, որ Կարասու-Բաղար քաղաքում, ուր գնացել էր տիրացու Միքայէլը առաջնորդի հետ միասին նորա Խռիմի հայաբնակ քաղաքները այցելելու ժամանակ, նա զեռ ժամասացութիւնից առաջ դնում է եկեղեցի՝ շինութիւնը նայելու և կարգ ու կանոնը զիտելու համար: Տեղական տիրացուն նայելով նորա վերայ իբրեւ հասարակ փոքրաւորի և իրեն հաւասար տիրացուի վերայ, չէ յոյց տալիս նորան այն յարգանքն ու պատիւը, որին նա

չուած շարականները), նորա Յովհաննէս—Սմբատ և Աշոտ թագաւորների մէջ նոցա կռիւների ժամանակ խաղաղութեան միջնորդ հանգիստնալը և հաշտեցնելը և նորա արած սխալները հայաստանի այդ ժամանակուայ քաղաքային դժուար հանգամանքների արդիւնք համարելով, առ հասարակ եթէ չեն գովաբանել, դոնէ, չեն էլ պիտարակել: Մենք 'ի նկատի առնելով այն ժամանակուայ քաղաքային հանգամանքները և միտ դնելով ժամանակակից պատմիչների ասածներին, եկել ենք այն համոզման, որ վերոյիշեալ կաթողիկոսը իւր եկեղեցու և ազգի շահերը զոհ է բերել իւր փառասիրութեան ու անյապ արծաթասիրութեան, մի խօսքով զաւաճանի դեր է կատարել: Նա էր Յովհաննէս—Սմբատի չարաբաղդ կտակի գրողը, թէև իբրեւ կաթողիկոս միշտ կարող էր խափանել թագաւորի այդ չար խորհուրդը, նա էր, հակառակ իւր թագաւորին, Վեստ-Սարգսի հետ Յունաց կայսեր հետ բանադնացութիւն անողը. նա էր Գազիկ թագաւորին Բիւզանդիոն դնալու համոզողը, նորա կեանքի ապահովութեան համար երաշխաւորողը. նա էր, վերջապէս, Անդոյ բանալիները կայսեր ուղարկողը:

սովոր էր Նախիջևանում, և իւր այդ յանդգնութեան համար այնպիսի մի ապտակ է ստանում նորանից, որ արձագանդ է տալիս եկեղեցու կամարների տակ: Քահանաները մինչև անգամ պատվում ու յարգում էին նորան. նոքա երբէք թոյլ չէին տալիս իրենց այնպէս նայել նորա վերայ, ինչպէս սովոր էին առ հասարակ նայելու միւս տիրացուների վերայ, չէին հրամայում, չէին համարձակում ծառայեցնել նորան: Ընդհակառակը նոքա շատ անգամ նորա խորհրդին էին դիմում, նորանից բան էին սովորում: Նա ազդում էր իւր ընկերների վերայ, նա յայտնի դեր էր խաղում ոչ միայն իւր նեղ տիրացուական շրջանում, այլ ընդհանրապէս քաղաքի հոգևորականութեան մէջ. նորա դիտութեան, հզօր կամքի և անդիմադրելի փաստաբանութեան առաջ հէնց այդ ժամանակներից շատերը անպայման հնազանդում ու գլուխ են խոնարհեցնում: Նալբանդեանցը օժտուած էր նուրբ լսելիքով և երաժշտական ընտիր ճաշակով. նա քաջ գիտէր բոլոր շարականների ձայները և, չնայելով որ շատ էլ ասորոժի ձայն չունէր, բայց սիրում էր երգել և իւր խրոխտ ու բարձր ձայնով ուրիշներից առաջ ընկնել և երգիչների ձայնը փակել: Նալբանդեանցի պաշտօնապէս տիրացու հաստատուելու օրից սկսվում է նորա անկախ կեանքը, նորա չափահասակութիւնը, նորա արբունքը: Այդ ժամանակից է իսկապէս սկսվում նորա զիաւեցական կեանքը. նա ծանօթանում է եկեղեցական գործերին, ծանօթանում է այն ժամանակուայ քաղաքի հոգևորականութեան զրութեան, մտնում է հասարակութեան մէջ և այդ տեղ շփուելով բոլոր խաւերին, ուսումնասիրում է ժողովրդի կենցաղավարութիւնը, քաղաքի առօրեայ կեանքի չարն ու բարին, հասարակաց դժբիւհների առաւելութիւնները և պակասութիւնները և իւր վերին աստիճանի զարգացած գիտելու ընդունակութեամբ գննում, քննում

և կշռադատութեան է ենթարկում ամենայն բան: Սակայն նա զեռ այդ ժամանակ հասարակութեան գործերին չէ խառնվում: Նա դեռ 16—17 տարեկան պատանի է և հասարակութեան աչքին չունի այն կշիռը, որ պէտք էր հասարակաց գործչին: Նախքան դեռնալ այդ ժամանակ միայն մի չէղաք, հեռուից դիտող անձն է. նա պատրաստվում է այն հասարակաց գործունէութեան, որի ասպարէզը շատ շուտով պէտք է նորա առաջ բացուէր: Անկախ ու գիտակցական կեանքի հետ միասին նախքան դեռնալի համար սկսվում է և մի շատ նեղ կացութիւն—այդ նորա կեանքի նիւթական անապահովութիւնն էր, որի դէմ նա, թէև իւր ամբողջ կեանքը մաքառեց, բայց վերջ 'ի վերջոյ դարձեալ ինքը եղաւ ընկճուողը, յաղթուողը: Ընտանեկան սուղ հանգամանքների պատճառով նա հէնց այդ ժամանակներից ինքն է ստիպուած լինում իւր վերայ հոգալ, իւր սպազայ կեանքի շաւիղը հարթել: Չպէտք է զարմանալ այն հանգամանքի վերայ, որ մենք ասում ենք, թէ նա ամբողջ կեանքը մաքառեց նիւթական անապահովութեան դէմ, բայց դարձեալ ինքը յաղթուեցաւ: Նա անկասկած այնքան կեանքի ոյժ և մտքի կորով ունէր, որ եթէ իւր ուշադրութիւնը դարձնէր միայն նիւթականի վերայ, հեշտութեամբ կարող էր ձեռք բերել նորան, բայց հէնց խնդիրն էլ նորանուսն է, որ նիւթականը նորա համար մի երկրորդական բան էր. նա նորան հարկաւոր էր միայն համեստ կերպով ապրելու համար. նա իւր բոլոր ճիզն ու աշխատանքը գործ դրեց հասարակաց գործունէութեան, զրահանութեան վերայ, իւր կեանքը, անձը նուիրեց հասարակութեան, իսկ մեր հասարակութիւնը, յայտնի է, որ, նամանաւանդ այն ժամանակները, ոչ խրախուսել և ոչ գնահատել զիտէր իւր մշակին: Նախքան դեռնալի դրութիւնը փոխվում է միայն այն ժամանակ, երբ գալիս է նախիջևան Մատթէոս Վեհապետեան եպիս-

կոպոսը, որին երջանկայիշատակ Ներսէս կաթողիկոսը 47
 թուականին նշանակել էր Բեսսարաբիոյ թեմի առաջնորդ:
 Մատթէոսը սրբազանը, որ կառքից ընկնելու և ոտքը
 կոտրելու պատճառով իւր թեմի ժողովորդից ստացել էր
 «Թովալ առաջնորդ» անունը, այն առաջնորդներից չէր,
 որոնք շատ քիչ կամ ամենևին չէին շրջում իրենց խը-
 նամբին յանձնուած թեմում. նա, ընդհակառակը, չէր
 սիրում երկար նստել իւր աթոռատեղում, այլ սովորու-
 թիւն էր արել միշտ այցելել թեմի զանազան քաղաքները
 և երկար ժամանակ ապրել պատեղ-այնտեղ, նամանաւանդ
 մայրաքաղաքներում և Նախիջևանում: Ահա առաջնորդի
 Նախիջևանում եղած ժամանակ Նալբանդեանցը իւր վե-
 րայ է դարձնում նորա ուշադրութիւնը և ստանում է
 առաջնորդի անձնական քարտուղարի պաշտօնը, որ նորա
 այդ ժամանակուայ դրութեան ու կեանքի պայմանների
 համար ունենում է մեծ նշանակութիւն: Տիրացու Մի-
 քայէլի առաջնորդի մօտ քարտուղարութեան պաշտօն
 ստանալու մասին նորա քոյր Գայիանէն հետեւեալ կեր-
 պով է պատմում: Տէր-Գաբրիէլ Պատկանեանցը ստէպ-
 ստէպ պատահելով առաջնորդարանում, շատ անգամ
 տանում էր իւր հետ սրբազանի մօտ և իւր ձեռքի տակ
 տիրացութիւն անող Միքայէլին, որին, իբրև իւր նախ-
 կին աշակերտի, նա շատ սիրում էր: Մէկ անգամ էլ
 Պատկանեանցի յորդորանքով, որ ցանկանում էր նորա վե-
 րայ դարձնել առաջնորդի ուշադրութիւնը, Միքայէլը
 կարդում է սրբազանի առաջ իւր շարադրութիւններից
 մէկը: Առաջնորդը, որ առանց այն էլ շատ հաւանում էր
 պատանի տիրացունին նորա հասկացողութեան և աչքա-
 բացութեան համար, հիանում է նորա գրչի սրութեան և
 առողջ դատողութեան վերայ և ցանկութիւն է յայտ-
 նում նորան իւր մօտ առնել: Իսկոյն առաջնորդարան են
 հրաւիրում հօրս. սրբազանը սկսում է հարց ու փորձ

անել նորան մեր նիւթական ապահովութեան և առհասարակ մեր ընտանեկան որպիսութեան մասին, և, վերջապէս, առաջարկում է եղբօրս, տիրացու Միքայէլին իրեն յանձնել: Սյլ այնուհետև Միքայէլը մեր տանը չէր ապրում, նա ամբողջ օրը սպրապում էր առաջնորդարանում, այն տեղ ծաշում, այն տեղ էլ քնում էր: Մինչև անգամ երբ մի անգամ եղբայրս սաստիկ հիւանդացաւ, սրբազանը չթողեց, որ նորան մեր առէն փոխադրենք. հիւանդին տեսնելու համար ստիպուած էինք մենք ինքներս առաջնորդարան գնար:

Քարտուղարութիւնը տալիս է նորան միջոց, զոնէ, համեօտ կերպով ապահովելու իւր նիւթական պրութիւնը, բայց, որ գլխաւորն է, նա այդ պաշտօնի շնորհիւ առիթ է ունենում խառնուել հասարակաց գործերին, նորա շնորհիւ առաջին անգամ նա հասարակաց գործունէութեան ասպարէզն է դուրս գալիս: Առաջնորդը իւր ընտրութիւնից գանգատուելու տեղիք չէ ունենում. պատանի քարտուղարը իւր բարեմասնութիւններով շուտով դրուում է նորա սէրը և այնքան մօտենում է նորան, որ նոքա աջ ձեռքն է դառնում: Սյլ այնուհետև առաջնորդը ոչ մի բան չէ անում առանց նորա խորհրդի. նորա ճարտար զրիչը, սրամիտ և վերին տատիճանի խելացի խորհուրդները շատ են նպաստում առաջնորդի գործունէութեան ընդարձակ և օրինաւոր կառավարութեան շատ կարօտ թեմում: Ուր որ գնում է առաջնորդը, նորա հետ է և Նալբանդեանցը, ինչ գործ բռնում է նա, նորա մատը անպատճառ խառն է նորա մէջ: Թեմի բոլոր ազգային-եկեղեցական հաստատութիւնների կառավարութիւնը դանվում էր առաջնորդի ձեռքին, բոլոր ազգային խնդիրները ուղղութիւն և լուծումն էին ստանում նորանից, մէկ խօսքով թեմի հայերի թէ՛ մտաւոր և թէ՛ բարոյական շարժման լծակը պտտվում էր առաջնորդարանում:

իւր պաշտօնի շնորհիւ Նալբանդեանցը ընկնում է Հէնց այդ շարժողութեան, գործունէութեան միջնաւայրը: 'Ի բնէ աշխոյժ, եռանդուն, գործ ու շարժումն սիրող, 'ի բնէ ամեն բանի հետաքրքիր, ազգային գործերի, հասարակաց գործունէութեան սիրահար, նա իւր պատանեկութեան հասակի բոլոր եռանդով անձնատուր է լինում իւր նոր պաշտօնին: Առաջնորդի բոլոր գործերը անցնում էին նորա, ինչպէս առաջնորդի անձնական քարտուղարի ձեռքով. նա էր գործերին ընթացք տուողը, գործերի հանգամանքները պարզաբանողը, լուսաբանողը, ուրեմն թեմի հայ հասարակութիւնների հասարակաց կեանքի բանալին իսկապէս գտնվում էր նորա ձեռքին: 'Ի նկատի առնելով նորա վառվռուն բնաւորութիւնը, նորա անհրաժեշտ գործունէութիւնը, մտքի աշխոյժը և սրտի եռանդը, կարելի է երեւակայել, թէ նա ի՞նչպիսի արագութեամբ էր կատարում բոլոր գործերը, նոյն ժամանակ իմանալով նորա անհանդիստ բնաւորութիւնը և կրքոտութիւնը, կարելի է եզրակացնել, թէ նա բոլոր գործերին ի՞նչ գոյն, ի՞նչ ուղղութիւն էր տալիս: Կարձ միջոցում Նալբանդեանցի ազդեցութիւնը զգացվում է գործերի վերայ, դորա հետ միասին նորա անունը հռչակվում է ոչ միայն Նախիջևանի մէջ, այլ բոլոր թեմում: Շատ անբաւականութիւններ, շատ խառնակութիւններ էին առաջ գալիս Նալբանդեանցի այդ տեսակ գործունէութիւնից, բայց առաջնորդը ամեն բանում համամիտ և համակամ էր նորա հետ, սիրում ու յարգում էր նորան: Առաջնորդի համարմունքը Նալբանդեանցի վերայ այնքան էր, որ նա Քիշինեկից, մինչև անգամ հաշտարխանից, ուր յետոյ նա տեղափոխուեցաւ, խորհուրդներ էր հարցնում նորանից իւր ձեռնարկութիւնների համար: Հաշտարխանից նորան զրաժ իւր նամակներից մէկում առաջնորդը ասում է՝ «դիտաւորութիւն ունիմ մի ազգային դպրոց բանալ հաշտարխանու

մէջ, բայց շատ արգելքներ... ղիմացս կան, ուստի չեմ իմանում ինչպէս կատարեմ գիտաւորութիւնս. ահա դարձեալ քեզ եմ ղիմում և քո շնորհքով յոյս ունիմ յառաջ տանել այս գործը», և այլն¹։ Սիրում և յարգում էր նորան և թեմի ժողովրդի մեծամասնութիւնը. ժողովուրդը նորա վերայ մեծ կարծիք ունէր. նա կարծում էր, որ նորա ձեռքից ամեն բան կգայ, նա ամեն բան կարող է անել։ «Վայ, ան սեկրետար Նալբանդովը, ան ամեն բան կրնայ անել», յաճախակի կրկնում էին նոքա։ Նալբանդեանցը իմանում է օգուտ քաղել իւր յարմար զրութիւնից, բայց նա այդ զրութիւնը գործ է զնւում ոչ իւր անձնական օգտի համար, ոչ իւր նիւթական զրութիւնը ապահովելու համար, այլ թեմական գործերը, հոգեւոր առեւանների գործավարութեան եղանակները, Սինոդի և ս. Էջմիածնի բռնած ուղղութիւնը ուսումնասիրելու համար և, որ զլսաւորն է, նա օգուտ է քաղում իւր զրութիւնից թեմի հայ հասարակութեան կեանքը, նորա պակասութիւնները ու կարիքները ուսումնասիրելու, որ նորա ապագայ գործունէութեան համար շատ հարկաւոր եղաւ։ Դժբաղգարար այն ժամանակուայ հայ հասարակութիւնը ընդհանրապէս շատ քիչ զարգացած լինելու և բոլոր հասարակայ խնդիրների մանր, կուսակցական ոգի կրելու պատճառով Նալբանդեանցի մէջ ևս զարգանում է գործելու մի տեսակ անհանգիստ բնաւորութիւն, մի տեսակ խռովասէր, անձնական նշանակութիւն ունեցող ուղղութիւն, որ առանց օգուտ բերելու մասնաւորին, ընդհակառակը շատ է փնտրում ընդհանուրին, չինք տեսնում, որ նորա դէմ պատրաստում է թշնամիների մի ստուար բանակ, որ ապողայում շատ է արգելք լինում նորա օգտաւէտ գործունէութեան։

¹ Տես Միքայէլ Տէր-Գրիգորեանցի «Միքայէլ Նալբանդեանցի համառօտ կենսագրութիւնը», էջ IX:

ԳԼՈՒԽ Գ.

Նալբանդեանցի թշնամիները:— Աղայական դասակարգը:— Յարու-
թիւն ադա խալիբեանը և նորա աղդեցութիւնը:— Հայրապետեանց
կուսակցութիւն կազմակերպութիւնը:— Բեստարարիոյ թեմի գործա-
կալները կամ վեքիները և եկեղեցական փողերի խնդիրը:— Հայրա-
պետեանց և խալիբեանց կուսիները:— Եկեղեցական փողերի համար
կազմուած յանձնաժողովը:— Վեհապետեան Մատթէոս արքեպիսկո-
պոսի և Ներսէս կաթողիկոսի յարաբերութիւնը:— Նալբանդեանցի
թշնամիների ձգտումը:— Նալբանդեանցի հոգեւոր կոչումից դուրս գալը:

Նալբանդեանցի թշնամիները, քանի որ նա ղեռ չէր
կպել նոցա էական շահերին, չէին երևում, ծածկուած էին
ստուերի տակ, նոքա մի կազմակերպուած հակառակ կու-
սակցութիւն չէին կազմում և ակն յայտնի կերպով մինչև
անգամ իրենց անբաւականութիւնը ևս չէին ցոյց տալիս:
Նոքա բաւականում էին միայն նորանով, որ ընկած աեղը
ծիծաղում էին նորա ուսումնականութեան վերայ և առ հա-
սարակ խուլ անբաւականութիւն էին ցոյց տալիս նորա
առաջնորդական գործերում խառնուելու և ներգործական
գեր խաղալու դէմ: Բայց երբ բացվում է յայտնի եկե-
ղեցական գումարների խնդիրը, որ էապէս կաչում ու շո-
շափում է քաղաքի մեծամեծների կամ, յաւ է ասել,
քաղաքի աղայական դասակարգի շահերը, այն ժամանակ
արդէն ամեն կողմից գլուխ են բարձրացնում նորա թշնա-
միները և մի ամուր անդրդուելի կուսակցութիւն կազմե-
լով, կամենում են իւր բնում խեղդել աղայի անդոր-
րութիւնը խանգարող, հոտած ճահճի ջրերը խառնող
ոյժը: Խնդիրը նորանումն է, որ Նախիջևանում, ինչպէս
և այն ժամանակուայ բոլոր հայաբնակ քաղաքներում,
հին ժամանակներից դեռ կազմուել էր մի դասակարգ,
բազկացած թէև ազէա, բայց հարուստ մարդկանցից, ո-
րոնք իրենց հարստութեան շնորհիւ բոլոր տեղական հա-

սարակայ գործերը հաւաքել էին իրենց ձեռքը և վարում էին նոցա այնպէս, ինչպէս որ ինքեանք էին բարեհաճում: Ձկար ոչ հսկողութիւն և ոչ հաշուետեսութիւն. նոյն իսկ հոգեւոր իշխանութիւնը, որին պատկանում էր գործերի հսկողութեան գլխաւոր հեղինակութիւնը, զտնվում էր նոցա ազդեցութեան տակ: Ոչ ոք իրաւունք չուներ բողոքելու, նամանաւանդ եթէ այդ բողոքողը հասարակ մահկանացու էր, աղաներից չէր: Սյդ յայտնի ազայական դասակարգն էր:

Հայաստանի թշուառ ժամանակներում, երբ մեր երկիրը հեղեղեցին անապատական հեթանոս և մահմետական ցեղերը և հայերը կորցրին իրենց իրաւունքը իրենց սեփական երկրի վերայ, նոքա ստիպուած եղան իրենց ձեռքին կենտրոնացնել այնպիսի զբաղմունքներ, որով կարողանային ակնածելի և անհրաժեշտ լինել իշխողների համար և այդ միջոցով պահպանել իրենց գոյութիւնը: Հայը եղաւ հմուտ երկրագործ, ճարտար արուեստագէտ և ճարպիկ վաճառական: Ժամանակի փորձը ցոյց տուեց, որ այդ բոլոր պարապմունքներից ամենաապահով զրութիւնը տալիս է հարստութիւնը, որ հեշտութեամբ ձեռք էր բերվում միայն վաճառականութեամբ: Սյդ պատճառով և հայերը շատ սիրեցին այդ պարապմունքը և դորան նուիրեցին իրենց ոյժերը ամենաընդունակ մարդիկը: Հարստութիւն ձեռք բերելով հայ վաճառականը, ապահովում էր դորանով իւր ընտանիքը բարբարոսների նեղութիւններից, հարստութեամբ նա հասնում էր պատուի և շատ անգամ իշխանութեան: Հարուստները ապահովուած լինելով, վայելելով իշխողներից մեծարանք և պատիւ, յայտնի բան է, աւելի մեծ և ակնածելի պէտք է երևէին և իւրացիների, այսինքն բուն հայերի աչքին: Հայերը, որ արգէն կորցրել էին իրենց ժողովրդական իշխանական ցեղերը, սկսան նոցա վերայ նայել ինչպէս իրենց մեծերի,

իշխանների վերայ, նամանաւանդ որ իշխողները նոցա էին հայ հասարակութիւնների ներկայացուցիչ համարում, նոցա էին հաւատում հայ հասարակութեան զործերը, աղա էին կարգում նոցա միւսների վերայ: Ահա այսպէս առաջ եկաւ հայոց մէջ աղայական դասակարգը, որ ունենալով իւր մասնաւոր օգտաւէտ կողմերը, ընդհանրապէս մեծամեծ փեսաներ է տուել հայ հասարակութեան շահերին: Նախիջևանի այդ ժամանակուայ աղայական դասակարգը բաւականին մեծ էր, բայց բոլոր աղաների մէջ թէ հարստութեամբ, թէ իւր դրաւած զիրքով և թէ խելքով ու ընդունակութեամբ առաջին տեղը բռնում էր Յարութիւն աղա՝ Խալիբեանը, որին բաւական չէ միայն «աղա» անունը տալ, այլ «աղաների աղա», որովհետեւ շատ ուրիշ աղաներ նորա հլու հպատակն էին ամեն բանում: Յարութիւն աղան արդէն շատ ժամանակ էր, որ քաղաքագլխութիւն էր անում, և այնպիսի իշխանութիւն էր ձեռք բերել քաղաքի և գիւղերի հասարակութեան վերայ, որ համարեա՛ն անձնիշխան կերպով կառավարում էր բոլոր քաղաքային զործերը: Վայ այն մարդուն, որ համարձակուէր նորա հրամանները չկատարել, ուր մնաց, որ գտնուէր մէկը, որ քննութեան ենթարկէր նորա զործունէութիւնը և կասկածէր նորա անշահասիրութեան վերայ: Նալբանդեանցը, որ շատ վաղուց արդէն հասկացել էր Խալիբի և նորա նմանների անսահման իշխանութեան փնասակարութիւնը քաղաքի հասարակաց զործերի համար, չէ վախենում արձակ-համարձակ բողոքել նորա զործունէութեան դէմ և հասարակութեան աչքերը բանալ: Բայց որովհետեւ նա գիտէր, որ հակառակ կուսակցութեան յոյժ շատ մեծ է և ինքը մենակ չէ կարող տապալել նորան, թէև իւր բողոքը ըստ ամենայնի արդար էր, ուստի և աշխատում է իւր կուռակցութիւնը կազմել: Առաջնորդը, որ, ինչպէս ասացինք,

ամեն բանում հաւատում էր նորան, արդէն նորա կողմն էր, շատերը, որոնք տանջուած ու նեղուած էին Խալիբից, նոյնպէս նորա ջերմ կուսակիցներն էին. մնում էր միայն գտնել մի արժանաւոր պարագլուխ նոյն իսկ ազանների դասակարգից, որ հասարակութեան աչքին այդ կուսակցութիւնը կշիռ ունենար. այդ ևս գտնուեցաւ: Կարապետ ազա հայրապետեանց վաճառականը, որ իւր լուսամտութեամբ մի բացառակի երեւոյթ էր կազմում այն ժամանակուայ Նախիջևանի աղաների մէջ, անձնատուր է լինում Նալբանդեանցի գաղափարներին և սիրայօժար կամքով նորա կուսակցութեան գլուխն է կանգնում: Այսպէս առաջ եկան Խալիբեան և հայրապետեան կոչուած կուսակցութիւնները, որոնց կռիւները շատ երկար ժամանակ տևեցին: Երկու կուսակցութեան ընդհարումը տեղի ունեցաւ առաջին անգամ եկեղեցական փողերի առթիւ¹: Ներսէս կաթողիկոսը, ինչպէս արդէն մէկ անգամ առիթ ունեցանք յիշելու, Նախիջևանը այցելելու ժամանակ, Խալիբին անսահման իշխանութեամբ գործակալ էր՝ կարգել եկեղեցիների վերայ, նորան յանձնելով եկեղեցու եղած և ստանալիք գումարները, մոմի մենավաճառութիւնը և ս. Խաչ վանքի կառավարութիւնը²: Խալիբը օգտուելով իւր

¹ Բացի եկեղեցական փողերի խնդրից, գժտութեան առարկայ էր երկու կուսակցութեան մէջ և Խալիբի քաղաքագլխութիւնը: Խալիբը 12 տարի ինքնիշխան կերպով քաղաքագլխութիւն արած լինելով, ոչ մի հաշիւ չէր ներկայացրել հասարակութեան: Հայրապետեանք պահանջում էին, որ Խալիբը իւր գործունէութեան և անտեսութեան հաշիւը ներկայացնէ հասարակութեան և վերադարձնէ հասարակութեան այն հողը, որի վերայ շինուածք կառուցանելով և տասը տարի օգտուելով նորանից, հնութեան օրէնքի հիման վերայ (Д-СИТЕЛЪТНАЯ ДАВНОСТЬ), իրաւունք էր համարել իրան բոլորովին տիրապետել նորան:

² Երջանկայիշատակ Ներսէս կաթողիկոսը այդ կարգադրութիւնը արել էր ոչ միայն Նախիջևանում, այլ Բեսսարաբիոյ թեմի միւս երեք մասում ևս՝ Խոխմում, Բեսսարաբիայում և

զրութիւնից, ժողովել և ժողովում էր եկեղեցական փո-
ղերը և անհաշիւ կերպով շահեցնում ու գործ էր դնում
ըստ իւր քմաց, ընկած տեղը միշտ տսելով, որ ինքը
պարտական չէ հաշիւ տալ հասարակութեան, որովհետեւ
կաթողիկոսից լիազօրութիւն ունի: Զբաւականանալով
իւր այդ ընդհանուր երէցփոխանական անտահման իշխա-
նութեամբ, նա իրեն իրաւունք էր համարում խառնուել
և քաղաքի և գիւղերի եկեղեցիների բուն կրօնական գոր-
ծերի կառավարութեան մէջ, իշխանութիւն բանեցնելով
հոգեւորականների վերայ և հոգեւոր կառավարութեան հրա-
մաններ արձակելով. միով բանիւ նա անտեսական մասի
գործակալութեան իրաւունքի հետ միասին իրեն սեփա-
կանել էր և Նախիջևանի յաջորդութեան իրաւունքները:
Մեր ձեռքին գտնվում է Խալիբի Նախիջևանի հոգեւոր կա-
ռավարութեան անունով տուած բաղմաթիւ յառաջա-
զրութիւնից մէկը, որ, իբրեւ հետաքրքիր զոկումէնտ և
հաւաստիք նորա բուն եկեղեցական գործերում գործ դրած
իշխանութեան, աւելորդ չենք համարում այստեղ մէջ
բերել: «Որովհետեւ բանասցի խնդրագործութիւնք 'ի քա-
ղաքայւոյ բազմացան առ մեզ վասն օծել տալոյ զքանի
մի պատկերս փրկչական զանազան սրբոց և զխաչ նուի-
րելոյ յազգի յազգի անձանց յանուն եկեղեցեաց քաղա-
քիս այն է 'ի պարոն Մկրտիչ Կոկոյեանէ զԹաղման պատ-
կեր, 'ի պարոն Սերսբ Զուշովովէ զխաչ արծաթեաց, 'ի
պարոն Վրդանիս, Ալաճալեանց զպատկեր Գրիգոր Լու-
սաւորչի, 'ի պարոն Յովհաննէս Խոմաճովէ մին խաչվառ
և 'ի պարոն Մինաս Սատէթովէ զպատկեր սրբոյն Մի-
նասայ. վասնորոյ յառաջադրեմ չ. Կառավարութեանդ
իրբւե նախանկատոց գորին յանձնել զայն պաշտօն Արժա-

մայրաքաղաքներում: Խռիմում նա գործակալ էր նշանակել Թո-
րոս աղա Տէօրվէթեանին, Բեսսարաբիայում՝ Աստուածատուր
աղա Աւետիքեանին, իսկ մայրաքաղաքներում՝ Լազարեաններին:

պատիւ տէր Մարտիրոս քահանայի Թորոսեան, զի յաւուր ասնականաբարութեան սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի օծեացէ սրբալոյս մեռնաւ զնախանշանակեալ պատկերս, յորում և եկեղեցւոջ տնօրինեացէ կառավարութիւնը¹։ Առաջնորդ Մատթէոս սրբազանը 48 թուականին գալով Նախիջևան, թէ հոգեւոր կառավարութեան շրջերից և թէ ժողովրդի բերանացի և զրաւոր բոլորներէից տեղեկանում է փողերի խնդրին, բայց քաշուելով, կաթողիկոսի կարգադրութեան հակառակ, Խալիբից ուղղակի հաշիւ պահանջել, զիմում է Վեհափառին և հարցնում Խալիբի լիազօրութեան մասին։ Հանգուցեալ կաթողիկոսը կոնդակով² հերքում է Խալիբի լիազօրութիւնը և մինչև անգամ յանդիմանում է առաջնորդին, որ նա

¹ Սյս Յառաջադրութեան պատճէնը մէնք գտանք Նալբանդեանցի թղթերի մէջ, որ ամենայն յօժարութեամբ յանձնեց մեր տնօրէնութեան հանգուցեալի քրոջ որդին՝ պ. Յովհաննէս Խաչատրեանը։ Սա գրուած է մի հասարակ մեծութեամբ փոստի թղթի վերջին երեսի վերայ, որովհետեւ առաջին երեսները բռնում է Գեորգ քահանայ Պետրոսեանցի Նալբանդեանցին գրած նամակը, որի մէջ արժանապատիւ քահանան յայտնում է Նալբանդեանցին, որ ուղարկում է Նորան Խալիբեանի այդ յառաջադրութեան պատճէնը և խոստանում է, ըստ պահանջման հարկի, ուղարկել Նորան միս յառաջադրութեան պատճէնը ևս։ Սյս յառաջադրութիւնը, որ ստորագրուած է՝ «Գործակալ սրբոյ Աթոռոյն Էքմիաձնի Յարութիւն ԽԼԳՎ», մի կատարեալ պաշտօնական թղթի ձև ունի, Նորա վերը նշանակուած է կառավարութեան մէջ թղթի ստացուելու ժամանակը՝ «Ընկալաւ կառավարութիւնս ի 28 մարտի 1856»։ Եւտոյ «ի Նախիջևանայ Հայոց Հ. Կառավարութիւն» վերնագիրը, իսկ կողքին՝ «ի գործակատարէ սրբոյ Աթոռոյն Էքմիաձնի Յարութիւնէ Պօղոսեան Խալիբեանց ի 28 մարտի 1856 ամի, և ազգական ՌՅԷ, համար 11 ի Նոր-Նախիջևան»։ Խնչպէս երևում է, հանգուցեալ Նալբանդեանցը մեղադրական կէտեր ժողովելով Խալիբի գէմ, խնդրել է իւր բարեկամ Գեորգ քահանայից Խալիբի Հ. Կառավարութեան տուած յառաջադրութեան պատճէնները ևս ուղարկել իրան։

² Կոնդակը տուած է 1848 թ. յունիսի 20-ին ընդ համարաւ 160. տես «Հիւսիսափայլ» 1858 թ., 11 ամսնտետրակը. էջ 132։

իրեն թոյլ է տուել կարծելու, որ հայոց կաթողիկոսը կարող է եկեղեցական գումարը մի մասնաւոր մարդու յանձնել: Այնուհետեւ կաթողիկոսի կոնդակը ձեռքին առաջնորդը սկսում է հաշիւ պահանջել Խալիբից, բայց նա, թէեւ տալիս է հաշիւը, սակայն առանց առաջնորդի գիտութեան հրամայում է քանդել ս. Խաչի սենեակները և ս. Թէոդորոս եկեղեցու պարիսպը, ասելով, որ կամենում է նորից շինել: Խալիբի այդ գործողութիւնը ստիպում է առաջնորդին խիստ միջոցների դիմել, որպէս զի մէկ անգամ բնդ միշտ կարողանայ վերջ տալ նորա եկեղեցական գործերին խառնուելուն. նա պահանջում է նորանից ցոյց տալ կաթողիկոսի այն յանձնարարական կոնդակը, որով լիազօրութիւն է տրվում նորան իշխանութիւն ունենալու եկեղեցական փողերի վերայ և, երբ Խալիբը զլանում է կամ չէ կարողանում կատարել նորա պահանջը, նա ուղղակի բողբոսում է նորանից կաթողիկոսին: Բայց առաջնորդը, հակառակ իւր ակնկալութեան, իւր բողբոսի համար յանդիմանութիւն է ստանում կաթողիկոսից, որովհետեւ այդ ժամանակամիջոցում Խալիբեանք արդէն կարողացել էին ամեն բան խեղաթիւրուած ու ծուռ մեկնուած հասցնելով կաթողիկոսի ականջը, մոլորեցնել նորան: Գործերի այս դրութեան մէջ առաջնորդը բարձի թողի է անում փողերի հաշիւը և կարգադրում է, որ այնուհետեւ, գտնէ, երկցփոխները այլ ևս փող չյանձնեն Խալիբին, այլ բոլոր եկամուտները ուղարկեն արքունի դրամատունը. բայց Խալիբեանք այնպէս են զործը տանում, որ կաթողիկոսից հրաման են բերել տալիս առաջուայ պէս բոլոր փողերը ու եկամուտները յանձնելու Խալիբի տնօրէնութեանը, չնք ասում արդէն այն զըրպարտութիւնների ու սուա լուրերի մասին, որ նոքա տարածում են ժողովրդի մէջ, իբրեւ թէ առաջնորդը անգարձ կերպով փողերը յանձնել է արքունի գանձարա-

ներ¹: Այն ժամանակ առաջնորդը վերին աստիճանի վշտացած Խալիբեանների յանդգնութիւնից և կաթողիկոսի վճռից, մի ծայրացեղ քայլ է անում, որի հետեանքը լինում է այն թշնամական յարաբերութիւնը նորա և կաթողիկոսի մէջ, որ վերջանում միայն Վեհափառի մահով: Նա զիմում է նախարարին և խնդրում է կարգադրութիւն անել փողերի մասին, և հրաման է ստանում ոչ միայն չտալ Խալիբին 48 թուականից յետոյ գոյացած զումարները, այլ և խստիւ պահանջել և նախկին գումարը: Մտաթէոս արքեպիսկոպոսը հիմնուելով նախարարի վերոյիշեալ հրամանի վերայ և կամենալով գործին կանոնաւոր ընթացք տալ, կազմում է մի յանձնաժողով փողերի խնդիրը քննելու, հաշիւ կազմելու և իրենց կազմած հաշուի համաձայն փողերը Խալիբից պահանջելու: Յանձնաժողովի անդամ ընտրվում են Խալիբի կուսակցութեան հակառակ մարդիկ, որոնցից գլխաւորը լինում է չայրապետեանցը, իսկ գործին ուղղութիւն տալու զերը իւր վերայ է առնում Նալբանդեանցը, թէև այդ ժամանակ նա արդէն Նախիջևանում չէ լինում²: Մենք, չնայելով մեր բոլոր աշխատանքին, չկարողացանք ճշդութեամբ իմանալ, թէ իսկապէս մինչև 57—58 թուականները, երբ այդ խնդիրը եթէ ոչ վերջնականապէս, զոնէ,

¹ Խալիբեանի կուսակիցներից ոմանք կամենալով արգելք լինել փողերի արքունի դրամատունը ուղարկելուն, զիմում են դրաւոր կերպով առաջնորդին և առաջարկում են փողերը կնքած պահել մի արկղի մէջ, իսկ յատկացած տոկոսը համաձայնում են ինքեանք վճարել:

² Յանձնաժողովի անդամները, բացի չայրապետեանից, էին Դանիէլ Թորոսեան Քարաքաշը, Գրիգոր Կարապետեան Սալտիկեանցը, Պետրոս Դանիէլեան Սախաւեանցը, Յակովբ Ստեփանոսեան հալաճեանցը և Յովհան Գողբեալեանցը: Սղբա պէտք է քննէին փողերի հաշիւները Մազիստրատի գործակցութեամբ, որի նախադասն էր այդ ժամանակ Մանուէլ Դանիէլեան Քարաքաշը: Այս յանձնաժողովի կազմութիւնը եղաւ 56 թուականին:

պաշտօնապէս վերջացաւ, որքան զաւմարի հաշիւ էր պահանջվում Խալիբից: Ոմանք ասում են, թէ փողերի իսկական զումարը եղել է 150 հազար, ոմանք 200 հազար, իսկ ոմանք այդ զումարը մինչև անգամ հասցնում են 500 հազարի: Յանձնաժողովի զրաւոր հաշիւը չգտնուելու պատճառով մենք ստիպուած ենք այս դէպքում բաւականանալ այն հաշուով, որ առաջ ապուել է Մեղուում, յետոյ արտասպուել Մասեաց Աղաւնիւում, յետոյ ամբողջովին մտել է Սյւլաղեան Գաբրիէլ եպիսկոպոսի Խալիբեան ուսումնարանի պատմութեան մէջ¹, թէև մենք գիտարանում ենք լիբիւն հաւասարնայել զորան իբրև Խալիբեան կուսակցութեան բովից և խմբադրութիւնից անցած ցուցակի: Այդ ցուցակով առաջնորդից հաստատուած հաշուատեսները Խալիբից պահանջում էին 123 հազար 551 ոտւրլի 92 կ., համարելով զորա մէջ մինչև 1858 թուականը հաւաքուած զումարի շահը և շահի շահը: Իսկ Խալիբը իւր մաս գտնուած եկեղեցական բոլոր փողերի զումարը ցոյց էր տալիս 83 հազար 98 ոտւրլի 19 կ., հրաժարուելով պարտք ընդունել իւր վերայ ս. Խաչ վանքի և նորա պարտէզի վերայ ծախսած 18 հազարը և կաթողիկոսին ուղարկած 15 հազարը, որոնց վաւերաթղթերը իբր թէ գտնվում էին իւր ձեռքին: Եթէ մինչև անգամ ընդունենք, որ այդ հաշուեցուցակը և նորա մէջ զրած թուերը բոլորովին ճիշտ են, մենք ի նկատի առնելով այն ժամանակուայ բոլոր հանգամանքները, դարձեալ կրդանք այն եզրակացութեան, որ առաջնորդի և նորա կազմած յանձնաժողովի պահանջը, որ և ժողովրդի պահանջն էր, բոլորովին իրաւացի էր. հայաստանայց եկեղեցու օրէնք զարձած սովորութեամբ եկեղեցու-

¹ Տես «Մասեաց Աղաւնի» 1861 թ., թիւ 3, էջ 27—35.
«Մեղու հայաստանի» 1859 թ., համար 10. «Պատմութիւն Խալիբեան ուսումնարանի» գլուխ Դ. էջ 34—45:

կան փողերը գտնվում են ծխերի և նոցա ներկայացուցիչ երէցփոխների իշխանութեան տակ. նոքա զործ են ածում նոցա կամ եկեղեցիների կամ զպրօցների կամ եկեղեցիների վերաբերեալ մի հաստատութեան վերայ բարձր հոգևոր իշխանութեան թայլատուութեամբ: Խալիբը իբրև կաթողիկոսից նշանակուած մի ընդհանուր երէցփոխ չունէր իրաւունք իւր ձեռքին գտնուած եկեղեցական փողերի հաշիւը ծխերին չտայ, նա չէր կարող առանց ծխերի գիտութեան 15 հազար կաթողիկոսին ուղարկել, նամանաւանդ իրաւունք չունէր ինքնիշխանաբար 18 հազար ս. Խաչի վերայ ծախսել: Մեզ թւում է, որ Խալիբը գիտութեամբ, թէ անգիտութեամբ չէր հասկացել կաթողիկոսի Բեստարաբիոյ թեմի զանազան մասերում գործակալներ կամ ընդհանուր երէցփոխներ նշանակելու խօրհուրդը: Անկասկած երջանկայիշատակ կաթողիկոսը իւր այդ կարգադրութեամբ նպատակ չէ ունեցել ծխերը զրկել իրենց իրաւունքներից, որովհետեւ այդ կրնշանակէր հայոց եկեղեցու ոգին չհասկանալ, որ Ներսէս կաթողիկոսի վերաբերութեամբ անկարելի է ասել, այլ կարգի ձգել այն ժամանակուայ Բեստարաբիոյ թեմի եկեղեցական փողերի վերին տասիձանի խառնակ խնդիրը: Ոչ միայն Բեստարաբիայում, այլ և բոլոր հայոց թեմերում այն ժամանակները եկեղեցական փողերի ոչ ճիշտ մատենաններ, ոչ կանոնաւոր հաշուետուութիւն, ոչ էլ օրինաւոր շահեցողութիւն կար: Առհասարակ երէցփոխանները ընտանեկան կերպով կամ ինքեանք էին շահեցնում փողը կամ թէ առանց վաւեռական թղթերի բաժանում էին սորաննորան, որից առաջ էր գալիս այն հանգամանքը, որ շատ անգամ փողերը կորչում էին և եկեղեցին զրկվում: Ահա այդ չորիքի առաջն առնելու համար էր, որ կաթողիկոսը գումարները կենտրոնացրել էր յայտնի հարուստ մարդկանց ձեռքին, որ կարողանայ եկեղեցու փողերի ճիշտ հա-

շուետուութեան և անկորուստ պահպանութեան երաշխաւոր ճանաչել նոցա: Բայց այդ արդէն աղաների սովորութիւնն էր իրենց յանձնած իշխանութիւնը 'ի չար գործ դնել, հասարակաց փողերով լաւամարդի, բարերար լինել, հասարակաց գրպանից մեկեանս լինել շատ էին սիրում նոքա: Աղմուկը քանի դնում սաստկանում էր, քանի դնում սուր բնաւորութիւն էր ստանում: Բոլոր նախիջեանը երկու մասի էր բաժանուել, մինչև անգամ հասարակ մարդիկ, պատանիներ, կանայք ևս կուսակցութեան էին պատկանում. հարսանիքներում, խնջոյքներում, տոնախմբութիւններում և առհասարակ ամեն մի տեղ, ուր խմբվում, ժողովուում էին քաղաքացիք, առանց հայրապետեանց և Խալիբեանց խօսակցութեան, զրոյցների և վէճերի չէր լինում: Շատ անգամ վիճարանութիւնը անհամութեան, կռուի էր հասնում և ուրախութեան հանդէսները փոխարինվում էին կռուատեղերի: Մինչև ցայսօր դեռ քաղաքումս պատմում են «տօն-շնորհաւորում» պատահած երկու հակառակ կուսակցութեան պատկանող կանանց կռուի մասին, մինչև ցայսօր դեռ մի «բողաջի» Թադէոսի անուն են տալիս, որին բաւական է լինում եղել միայն Խալիբեանց անունը տալ, որ իւր «բողայի»¹ կժերը միմեանց զարնելով, փշրէ: Հայրապետեան կուսակցութիւնը հզօր առաջնորդի պաշտպանութեամբ, հզօր նախնականցի ղեկավարութեամբ, յենուած ժողովրդի մեծամասնու-

¹ Բողան կորեկից պատրաստած գարեջրի նման ըմպելիք է, որ գործ են ածում Խոիմի թաթարները: Նախիջեանցիք երկար ժամանակ թաթարների մէջ ապրած լինելով, ուրիշ սովորութիւնների հետ միասին փոխ են առել նոցանից և (բողա) խմելու սովորութիւնը, որ այժմ արդէն կամաց-կամաց վերանալու վերայ է: «Բողաջի» կոչվում է (բողա) ծախողը և պատրաստողը: Մենք Թէոդոսիայում և Խոիմի զանազան տեղերում տեսել ենք խանութներ, որտեղ, ինչպէս սրճարաններում, հաւաքվում են թաթարները հանգստանալու, զրուցելու և 'ի միջի այլոց (բողա) խմելու:

թեան և նամանաւանդ իրենց պահանջի արդարութեան վերայ, օրէցօր սաստկացնում էր իւր պահանջմունքը և պատրաստվում էր իւր ձայնը լսեցնել մինչև անգամ բարձր իշխանութեան առաջ: Իսկ Խալիբեանք Հզօր Խալիբի ազդեցութեամբ, նորա հարստութեամբ և յենուած կաթողիկոսից ստացած լիազօրութեան վերայ, ամենեւին տեղի չէին տալիս, պատրաստ լինելով մեծամեծ զուժարներ ծախսելու, միայն որ կարողանան իրենց կամքը առաջ տանել և տեղի տուած չլինել մի որ և է նալբանդեանցի... Խալիբեանք, յայտնի բան է, գիտէին որ հակառակ կուսակցութեան գլխաւոր ղյոժերից մէկը և հէնց խնդիրը զարթեցնողը նալբանդեանցն էր, ուստի և իրենց շանթերը դէպի նորա անձն էին ուղղում և իրենց բոլոր ազդեցութիւնը գործ դնելով, աշխատում էին պատժել տալ նորան իբրև հոգեւոր պաշտօնեայի, տիրացուի: Անկասկած նոքա կը հասնէին իրենց նպատակին և նալբանդեանցը կը սուսկէր, եթէ միայն նա չաշխատէր հոգեւորականութիւնից դուրս գալ և հեռանալ Մոսկուա: Գործը նամանաւանդ սուր բնաւորութիւն էր ստանում նալբանդեանցի համար, որովհետև Մաթթեոս սրբազանը սիրում ու պաշտպանում էր նորան, իսկ առաջնորդի և կաթողիկոսի յարաբերութիւնը առանց այն էլ շատ լաւ չլինելով, այդ ժամանակ աւելի ևս վատացել և թշնամութեան բնաւորութիւն էր ստացել: Առաջնորդի և կաթողիկոսի յարաբերութեան այդ աստիճանի լարուելուն, բացի եպիսկոպոսի եկեղեցական փողերի խնդրում բռնած ընթացքից, որի մասին արդէն մենք վերը յիշեցինք, նպաստել էր և այն հանգամանքը, որ առաջնորդը իւր Պետերբուրգում գտնուած ժամանակ կատարել էր Խաչատուր ազա Լուղարեանի գտեր կաթողիկոսից արգելուած պսակադրութիւնը, և, չնայելով վեհափառի բոլոր սպառնալիքներին, Լաղարեանց պաշտպանութեամբ նա անպատիժ էր մնա-

ցիլ¹։ Թէ ի՞նչպէս է պղպխի զժուար Հանգամանքներում Նալբանդեանցը կարողանում կաթողիկոսից, որ արգէն նախապատրաստուած էր նորան բերել տալու ս. Էջմիածին և պատժելու, իբրև յանդուգն անրացուի, Հոգևորականութիւնից արձակելու թուղթը ստանալ,—այդ մասին պատմում են Հետեւալը։ Նալբանդեանցը դիմում է խընդիւքով կաթողիկոսին, իսկ Մատթէոս սրբազանը իւր կողմից մասնաւոր նամակով յայտնում է գործի էութիւնը այն ժամանակուայ տեղապահ Լուկաս եպիսկոպոսին և խնդրում է նպաստել խնդրի յաջողութեան։ Տեղապահ սրբազանը, որի ձեռքով զեկուցվում և ստորագրութեան կին առաջարկվում բոլոր թղթերը, միւս շատ գործերի Հետ ստորագրութեան է տալիս կաթողիկոսին և Նալբանդեանցի խնդիրը, որ և ստորագրում է նա առանց կարգալու։

ԳԼՈՒԽ Դ.

Նալբանդեանցի Մոսկուա գնալու պատճառն ու նպատակը։—Ինտելլիգենտ շրջանի բաղակալութիւնը Նախիջևանում։—Հոգևորականութեան սգիտութիւնը։—Տէր-Գաբրիէլ Պատկանեանցի բողոքագիրը։—Հայոց քառասնական թուականների գրականութիւնը և նորա ազդեցութիւնը Նալբանդեանցի վերայ։—Նալբանդեանցի գրչի առաջին երեխայրիքը։—Նալբանդեանցի ձեռքի արուեստի ճարտարութիւնը։

Նալբանդեանցը Հոգևորականութիւնից արձակուելու և Մոսկուա գնալու երկու նպատակ է ունենում։ Նախ, ազատուելու թշնամիների ձեռքից, որոնք միշտ կարող էին նորան, իբրև Հոգևոր իշխանութիւնից կախումն ունեցող պաշտօնեայի, պատժել տալ, երկրորդ, մայրաքա-

¹ Տես Աւետիս վարժապետ Պէրպէրեանի Հիատմութիւն Հայոց. գլուխ ԾԶ. էջ 290—296.

ղաքում կատարելագործելու իւր ուսումը, որի թերի լինելը և պակասութիւնը ինքը միշտ դգում էր: Պէտք է նկատել, որ Նալբանդեանցը իւր բազմութիւ. զբաղմունքների՝ տիրացութեան, քարտուղարութեան և հասարակաց գործունէութեան մէջ երբէք չէր մոռանում իւր ինքնուսութեան և ինքնազարգացողութեան գործը, բայց դժբախտաբար նորան չըջապատող հանգամանքները ամենեւին չէին նպաստում նորան այդ նպատակին հասնելու: Նախիջևանի հասարակութիւնը, որի մէջ նա ապրում էր, վերին աստիճանի տգէտ էր. չկար ոչ մտաւոր և ոչ հասարակաց կեանք: Ամեն մարդ ապրում էր իւր համար, նեղ, անձնական շահերը վերադասում էին ամեն բանից: Կրթութեամբ մարդկանց թիւը շատ սակաւ էր, աւարտածների վերայ մատով էին ցոյց ապլիս և առհասարակ ինտելիգենտ շրջան ամենեւին չկար: Ծիշտ է, Նախիջևանը իւր առեւտրական շահերով կապուած էր մեծ քաղաքների հետ, Նախիջևանցիք յաճախում էին Խարկով, Մոսկով, բայց այդ կենտրոններից նոքա ոչ մի լուսաւոր միտք, ոչ մի լուսաւոր գաղափար իրենց հետ չէին բերում, որովհետեւ այն տեղերում նոքա յարաբերութիւն էին ունենում գլխաւորապէս միայն իրենց պէս տգէտ վաճառականների, գործարանատէրերի հետ: Հոգեւորականութիւնը, որ, ըստ իւր կոչման և պաշտօնին, պէտք է կրթութեամբ լինէր և ինտելիգենտ շրջան կազմէր, ոչնչով չէր զատվում իւր հօտից, որին նա կոչուած էր հովուելու: Նոքա զբաղուած լինելով իրենց պաշտօնական ծիսակատարութեամբ, իրենց կեանքը անց էին կացնում ժողովրդի հետ միասին մանր ինտրիգների և հասարակաց մանր կուսակցութիւնների և խռովութիւնների մէջ: Միմեանց բամբասել, զրպարտել, հոգեւոր իշխանութեան անդադար միմեանց վերայ բողոք տալ, հրապարակաւ անպատուել միմեանց և մինչև անգամ եկեղեցիները ևս կռուի ասպա-

րէզ շինել—ահա այս էր նոյա կենցաղավարութեան սովորական կերպն ու եղանակը: Մեր ձեռքին գտնվում է տեղական հոգեւոր կառավարութեան առաջին ատենական տէր Մարտիրոսին ներկայացրած մի բողոքաթուղթ¹, որ շատ գեղեցիկ կերպով պատկերացնում է այդ ժամանակների Նախիջևանի հոգեւորականութեան կեանքի պատկերը: Բողոքողը Տէր-Գաբրիէլ Պատկանեանցն է, որ 'ի դէպ է ասել, թէ և ամենից կրթութեամբ է եղել, բայց վերին աստիճանի անհանգիստ և խռովասէր քնութիւն է ունեցել: Պատկանեանցը իւր այդ բողոքի մէջ, նախ, իբրև յառաջաբան, պատմում է իւր մասին, թէ ինչպէս ինքը 32 թուին ձեռնադրուելով «'ի նորին գերամբարձ սրբապան քահանայապետէ, 'ի վիճակաւոր առաջնորդէ և յառաքելաշաւիղ արքեպիսկոպոսէ» քահանայ է կարգուել քաղաքիս ս. Լուսաւորիչ եկեղեցում, և այնուհետև այնքան սիրուել է ժողովրդից, որ մինչև անգամ և միւս քահանաների ծխականները սկսել են յաճախակի իրեն հրաւիրել ծխակատարութեան կամ իրենց քահանաների հետ միասին և կամ առանձին, և իրենց սեփական քահանաներից աւելի են շահել: Սակայն ինքը միշտ պաշտպանել է իւր ընկեր քահանաների շահերը, և հրէք չէ համաձայնել ուրիշ քահանայի ծխականների ծէսը կատարել, մինչև որ նոքա բաւականութիւն չեն տուել իրենց սեփական քահանային: Բայց միւս քահանաները տեսնելով, որ իւր պատիւը գնալով աւելանում է, սկսել

¹ Բողոքը գրուած է 1843 թ. յունուարի 26-ին Նախիջևանում և կրում է հետևեալ վերնագիրը՝ «'ի Նախիջևանայ հայոց հոգեւոր կառավարութիւնդ 'ի Նախիջևանայ աւագ եկեղեցւոյ սուրբ Գրիգորի 'ի Գաբրիէլ քահանայէ Սերովբեան Պատկանեանց խոնարհադէմ խնդիրք և բողոք»: Այս բողոքագրի իսկական օրինակը տուեց մեզ կարդալու և օգտուելու Տէր-Մարտիրոս Գանձապետեանը, որի համար և յայտնում ենք բարեկրօն հօրը մեր շնորհակալութիւնը:

են նախանձել և թշնամացել են իւր հետ: Յետոյ Պատկանեանցը բերելով անցեալից քահանաների իւր հետ վատ վարեցողութեան մի քանի օրինակ, ուղղակի անցնում է այն դէպքին, որ առիթ է տուել նորան բողոքելու: «Յայսմ տմի 'ի Յունուարի 15 խնդրեաց մահաւոր Մարկոս Խաչկուռուզովն, զրում է նա, պսակել զնա. ես պատասխանեցի թէ առանց յատուկ հրամանի կառավարութեանս ոչ արարից. բերին և զհրաման զրեալ իսկական ձեռամբ տէր Մարտիրոսի, և ես պսակեցի զմահաւոր Մարկոս Խաչկուռուզովն ընդ դստեր Մարտիրոս Մաղլումովն. Խաչկուռուզեանց տան քահանայն էր տէր Մարտիրոսն: 'ի 24 Յունուարի դարձեալ խնդրեցին զնա և զօրդի Մարտիրոս Մաղլումովն պսակեցից, որովհետեւ քահանայ նորա տէր Մինաս Օքսենտեանն է արգելեալ. տէր Մարտիրոսն յայնմ առաւօտու հիւանդացեալ էր: Ես յարգելով և զքանաւոր հաճութիւն նորա յանձին կալայ 'ի տեղի տէր Մինասի կատարել զպաշտօն նորա, միայն թէ տէր Մինասն նախ ստացի զիւր բաւականութիւն լիակատար, զօր և կատարեցին, յետ օրհնութեան հանդերձից փեսային, զնաջաք բազմութեամբ հարսնուորաց 'ի սուռն հարսին օրհնել և զնշանն: Քահանայ տան հարսնացուն էր տէր Դրիգոր Մերունին, որ և զպսակն պարտ էր առնել. առաքեցին կոչել զնա, այլ նա զնացեալ էր յազարակ Խաչերես համալովի կատարել զտարելից մահու նորա: Վասն որոյ երկուստեք կոչականք փեսային և հարսին թախանձեցին զնա, որովհետեւ օրն տարաժամեալ էր, կատարել զխորհուրդն, և ես, չ'տեսնելով ինչ արգելառիթ, օրհնեցի զնշանն, զհանդերձ հարսին և զսկզբնաւորութիւն պսակին որ տսի տան կարգ կամ թէ պսակի: Յետ այսորիկ խնդրեցին զնա և զպսակն կատարեցից 'ի սուրբ Նիկողայոս, որովհետեւ տէր Դրիգորն չէ առաջիկայ և ես, որ չունէի ամենեւին պարտաւորութիւն ոչ զիտաւորութիւն

և ոչ յօժարութիւն երթալ 'ի սուրբ Նիկողայոս վասն
հեռաւորութեան և աղմաշաղախ ճանապարհին, այլ կա-
մէի երթալ 'ի սուրբ Լուսաւորիչ և անտի փութալ յամ-
բիծ Կէօղպեթիովի, սախպեցայ երթալ ընդ 'նոսա: Ընդ
հասանէին 'ի սուրբ Նիկողայոս տեսաք զի տէր Գրիգորն
երթայր 'ի տուն հարսանեաց. կոչեցի զհետնորս և յայտ-
նեցի թէ կատարեցաք անդ զկարգ տանն, տէր Գրիգորն
գոհացաւ և ստիպեաց. հայտայ գնացէք, շէն կենաք ան
ալ կատարեցէք, և ես զնացեալ 'ի սուրբ Նիկողայոս,
արկի զանձամբս զգգեսա քահանայազօրծութեան զի և
զպսակն կատարեցից, մատեաւ տէր Ղուկասն նախ առ տի-
րացոյս և ապա առ իս և թէ վասն էր դու համարձա-
կիս կատարել զայս պսակ, պատասխանեցի թէ զփութածն
և խնդիր կողմանցն փեսային և հորսին այսպէս տնօրի-
նեաց, ստէ տէր Ղուկասն՝ նաքա չունին իրաւունս այդ-
պէս տնօրինելոյ, զի պսակն է տէր Գրիգորի. պատասխա-
նեցի՝ թէ և նա հաճեցաւ. կրկնեաց տէր Ղուկասն՝ դու
զե՞նչ իրաւունս ունիս յայլ հկեղեցիս մատակարարել
խորհուրդ. պատասխանեցի, զայդ առ 'ի հոգեւոր կառա-
վարութեան. տէր Ղուկասն կամելով յերկարել զբանս, զի
բանակոխ ինչ հանիցէ, մանաւանդ զի էր սաստիկ գի-
նեհարեալ, և ցաւ զխոցս քանի աւուրք են զի սաստիկ
տանջէ զիս և հօտ զինւոյն անտանելի էր ինձ, ասացի—
Աստուած կսիրես, տէր հայր, թող զիս. զիտես զի ես ոչ
սիրեմ... իբր թէ հրկարել զբանս Ընդ այս բորբոքեալ
տէր Ղուկասն, սկսաւ զարձեալ ըստ իւրում սովորու-
թեան վաւթար քան զառաջին նուազան զիս բանակոծի,
լիրբ, անզգամ, յանդուփն, գարշելի, պիղծ, СКОТИНА,
СОБАКА, СВИНЬЯ, С... С... և այլովք զանազան նախա-
տական բանիւք զիս երգիծանել և նման առաջնոյն հայ-
հոյել, և ոչ շատացեալ այսու բռնութեամբ կամէր տէր
Գրիգորին տալ կատարել զպսակն: Յեա զգետաւորելոյ

իմ յայտնի իսկ է, զի յառաջ քան զզգեստաւորելն իմ եթէ կամէր տէր Գրիգորն պսակել, կարէր ասել, և ես ոչ բնաւ հանէի ձայն. իսկ յետ զգեստաւորելոյ թէև ասէր, կարէի ասել թէ, տէր հայր, որովհետեւ ես զգեցեալ եմ զգեստ, խնդրեմ թոյլ տալ, և թոյլ տայր անշուշտ, այլ տէր Ղուկասն որպէս ցայն վայր նոյնպէս և յետոյ ոչ միայն բազում բանիւք նախատանայ առ իս թէ ընդ իս և թէ ընդ ժողովրդականաց քաջաբանեաց, այլ և յընթացս խորհրդոյ կատարմանն մինչ բանն էր 'ի բերանս, եկեալ մեծաւ բարկութեամբ յափշտակեաց զմաշտոցն 'ի ձեռացս, ընդ որ ափ 'ի բերանն եղեն ժողովրդականք, և թէ ես չ'զխտէի անգիր զընթերցուածսն, խորհուրդ պսակին ունէր խափանել և ես մնալոց էի յամօթ մինչև 'ի բերելն տիրացուաց զայլ մաշտոց, յորդորէր և հրաման տայր տիրացուաց գալ բառնալ 'ի զլիւոյս և զսողաւարտն, այլ նոքա ոչ համարձակեցան, կամէր ինքնին գալ և ցուցանել զայս մարդավարութիւն, այլ տիրացուք չետուն նմա թոյլ»:

Տգէտ քահանայական դասից միակ բացառութիւնը, ինչպէս արդէն ասել ենք, կտրուում էր Պատկանեանցը, որի հետ մտերիմ սիրով կապուած էր Նալբանդեանցը դեռ իւր աշակերտութեան օրերից: Դժբախտաբար նա էլ այդ ժամանակ չկար Նախիջևանում, որովհետեւ նա իւր անհանգիստ ու համարձակ բնաւորութեամբ զուր չէր եկել ազաններին: Ներսէս կաթողիկոսը լսելով Խալիբի և միւս ազանների խօսքին, տարել էր նորան Թիֆլիս, մտածելով, որ դորանով, նախ, նա բուռնականութիւն կըրտայ ազաններին, երկրորդ, որ իւր ձեռքի տակ կ'ունենայ մի ուսումնական քահանայ, որ միշտ կարող է պէտք գալ իւր ուսումնարանական գործերի ձեռնարկութեան մէջ. նա նորան այնտեղ ուսուցիչ էր կարգել Ներսիսեան Դպրանոցում: Այսպիսով Նալբանդեանցի ինքնու-

սութեան և ինքնազարգացողութեան գործում քաղաքի հասարակութիւնը միայն բացասական ազդեցութիւն կարող էր ունենալ: Մնում էր նորան իւր կրթութեան թերին լրացնել կարգալով, սակայն այդ կողմից ևս հանգամանքները շատ չէին նպաստում նորան, որովհետեւ, նախ, ռուսերէն գրուածներէց շատ քիչ բան էր ընկնում նորա ձեռքը, երկրորդ, ընկածներից ևս, լեզուն լաւ չիմանալու պատճառով, լիովին չէր կարողանում օգտուիլ: Իսկ հայոց գրականութիւնը, որ այդ ժամանակ կազմուած էր միայն Մխիթարեանց հրատարակութիւններից ու լրագրութիւնից, շատ քիչ նիւթ էր մատակարարում նորա հարցասիրութեան: Նա մեծ յափշտակութեամբ կարգում էր ամեն մի գրուածք, որ միայն գուրս էր դալիս հայ մամուլի տակից և ընկնում էր նորա ձեռքը, և ամեն մի խնդրի մասին, որ այդ ժամանակ արծարծվում էր հայոց մտաւոր անդաստանում, աշխատում էր իւր սեփական հայեանքը և համոզմունքը կազմել: Այդ ժամանակի նորա ընթերցանութեան արդիւնք պէտք է համարել այն հակիրճները, որ զգում էր նա դէպի ազգային եկեղեցին դաւաճանողները ընդհանրապէս և դէպի Մխիթարեանք մասնաւորապէս, որ զնալով զարգացաւ և զարձաւ նորա մէջ մի հաստատ համոզմունքից բղխած ատելութիւն: Հաւատորմների կրօնական-բարոյական չոր ուղղութիւնը, նոցա հակազգային ընթացքը, որ արտայայտվում էր նոցա գրաւոր վաստակների մէջ, նոցա առաքելութեան գործունէութիւնը, պապական և իւստերական սկզբունքների հայ ժողովուրդի մէջ տարածելու եռանդը նորա մէջ ծնեցրին ձգտում մաքառելու նոցա դէմ մինչև իւր արեան վերջին կաթիլը, որ և նա իւր յետագայ գործերով լիովին արդարացրեց: Այդ ժամանակուայ նորա ընթերցանութեան արդիւնքն էր և այն սերը, որ արծարծուեցաւ նորա մէջ դէպի հայ լրագրութիւնը, որ յետոյ աւելի ևս զարգացաւ

և մղեց նորան հայ հրապարակախօսութեան ասպարէզը, որի մէջ ցոյց տուեց նա այնքան կամքի ոյժ, մաքի կորով և զրական ճարտարութիւն: Դժբախտաբար հայ լրագրութիւնը իւր սկիզբն առած լինելով հայ զագրութենում՝ ճնշկաստանում, Վենետիկում, Պոլսում և Զմիռնիայում, ծանապարհների հեռաւորութեան և դժուարեան պատճառով, շատ սակաւ էր տարածվում հայաբնակ տեղերում, իսկ Ռուսաստանում հայ լրագրութիւնը գտնվում էր դեռ իւր սաղմի մէջ: Ռուսահայոց առաջին լրագիրը՝ Կովկասը¹, ինչպէս յայտնի է, հրատարակուեց միայն 46 թուին, բայց մի տարի միայն գոյութիւն ունեցաւ, իսկ երկրորդը՝ Արարատը² հէնց այդ ժամանակները սկսաւ հրատարակուել Տէր-Գաբրիէլ Պատկանեանցի խմբագրութեամբ. դորան, իբրեւ Ռուսաստանի միակ հայ լրագրի և իւր սիրելի ուսուցչի օրգանին, շտապեց մասնակցել և ինքը նալբանդեանցը, տպելով նորա մէջ իւր զրջի առաջին երեխայիքը: Արարատի տետրակներում մենք նորա ստորագրութեամբ տպագրուած երեք ոտանաւոր ենք գտնում՝ երկուսը գրաբառ, մէկը աշխարհաբառ: Գրաբառ ոտանաւորներից մէկը հերքումն է յիմարների ուսման վերայ ունեցած կարծիքի և կրում է իւր վերայ հետեւեալ վերնագիրը՝ «Հերքումն յիմարական կարծեաց, զոր անմիտք ունին ի վերայ ուսման»:

¹ Կովկասը (1846—1848) շաբաթաթերթ էր և հրատարակվում էր Թիֆլիսում Կարնեցի Յակոբ վարժապետ Կարինեանցի և Միքայէլ Պատկանեանցի խմբագրութեամբ: Կովկասը ուսաց „Кавказъ“ լրագրի թարգմանութիւնն էր և գրվում էր գրաբառ լեզուով:

² Արարատ (1850—1851) շաբաթաթերթը հրատարակվում էր աշխարհաբառ լեզուով, թէև գրաբառ յօդուածներ և ոտանաւորներ էլ էին տպվում նորա մէջ, ինչպէս նալբանդեանցի երկու գրաբառ ոտանաւորները, որոնք տպուած են Արարատի 26 և 33 տետրակներում:

Նալբանդեանցը հետևեալ կերպով է ամփոփում յիմարների ուսման վերայ ունեցած կարծիքը:

Ժ՞նչ քո անձդ մանուկ մատաղ՝ կըչարչարես նաֆիլէ,
 Վոգիդ կեանքդ ուսման համար՝ որ շատ յիմար պօշ բան է.
 Վարդապետ մի կուզես ըլլալ, թէ աստղաբաշխ փիլիսոփայ,
 Թէ կուզես որ իմաստութեանդ վրայ աշխարհ զարմանայ,
 Ժ՞նչ՞ո՞ւր է պէտք գրել կարդալ՝ որ մէկ փողն չի արժէր,
 Հիլիդ հազար գիրք ժողովել, բանդ գործդ ձգել անտէր,
 Ժ՞նչ հարկաւոր միշտ ամէն օր՝ նոր նոր բաներ մոքէդ հանել,
 Կամ առաջվան ընկերներուդ՝ ախմախ յիմար պակաս կանչել.
 Արի երթանք շուտով խանութ մեր զանազան հնարքով,
 Ապրանք ծախենք թէկուզ մեր հօրը, սակայն շատ մեծ օգուտով,
 Էինձ վերայ դու մէկ լաւ նայէ՝ որ չգիտեմ անունս գրել,
 Ընդհակառակն փողը ճիպումս՝ հազարաւոր ծագ է հանել.
 Դու երբ տեսար խելօք գիտուն՝ որ հօրերուս ատելթով,
 Աստուած պաշտէր, ժամը երթար, պասը պահէր հաւատքով,
 Արի բաց թող այդ ուսումը, դու որ այժմէն՝ չես հաւան,
 Եկեղեցու կանոններուն, վաղն կըլլաս փրօտեստան.
 Ո՞չ պաս գիտնաս և ոչ ուտիք, ոչ հաւատքով աղօթել,
 Ո՞չ մեղքդ լալ ջերմ արցունքով՝ ոչ Աստուծոյ տուն մտնել.
 Ըժէպըդ նայէ թէ որ լիք է ոսկի արծաթ փողերով
 Փիլիսոփայ գիտնականէն դու միշտ վեր ես՝ իմ խելքով,
 Զերէ փողով ամէն բանը կը լըմընայ աշխարհիս,
 Բայց ուսումով գիրք կարդալով չի կշտանալ փորերնիս.
 Ըներկայ դարուս ուսումնականք ինչ մեծ գիտեն, ինչ իշխան,
 Ազատ Աստուած մեզ ստեղծեց, կասեն կելլան ման կուգան,
 Բայց որ երթանք մենք խանութը բարև կուտանք ամենուն
 Եթէ աղա՝ իշխան անձինք՝ մեղիմէն պատիւ կառնուն,
 Փող շատ ըլլայ՝ ուտենք հագնենք՝ գինին խմենք ու պառկենք.
 Եւ աս կերպով մեր օրերնիս՝ ուրախութեամբ անցնենք.
 Մեր գիտցածը մեզի կօգտէ թէ հաւատքի զօրութիւնը
 Եկեղեցի, աւետարան, ամուր պահենք մեր մոքումը ¹.

¹ Այս ոտանաւորը կրում է իւր վերայ՝ «Յիմարաց ուսման վերայ ունեցած կարծիքը» վերնագիրը, և տպուած է Արարատի 32 տետրակում. էջ 509—510.

Յիմարների այս կարծիքը նա հետևեալ կերպով է
հերքում:

Յէ՛ բանգագուշ 'ի սէր ոսկւոյ որ զհոգիդ հանես ձօն
Զաշխոյժ հոգի պարմանեկին քոյդ թակարդես 'ի ծուղակ.
Դմա թոյլ արա՛ գարունագեղ լուսաւորեալ հոգւովն օ՛ն,
Քան յորդայթ ցանցել յիմար խենէշութեան 'ի վանդակ.
Զի՞նչ ոչ ուսումն ո՛չ ընձեռէ ո՞վ ժպիրհ ցնդաբան,
Զո՞ր զկուրացեալ հոգւոյ ակունս չ'լուսաւորէ անաղօտ,
Զյիմարութիւնդ յորում թխեսս, նա փարատէ անպայման,
Որում թշուառ քով վիճակաւ զանխուլ 'ի քէն դու կարօտ,
Բաբէ՛ խաւար մտացդ հոգւոյդ, սին սաղարթիւք քո անձին,
Որ ոսկեկիր ըղձաս լինել քան գրագէտ ու գիտուն.
Որ անկասկած զկուրութեան զմթութիւն անփարատ,
'ի քոյդ հոգւոյ շիջցե՛ ակունս յաւերժաբար հաստատուն,
Քո կրպակաց պատուարք որմունք և խտապինդ՝ մեծ դրունք,
'ի քոյդ գլուխ աւերակօք կարկառեցին յաւիտեան,
Եւ քո կրիւք մտաց վարկօք զգածեալ որդիքդ և թողունք,
Զքարի հարցեն միշտ անխնայ իբր զծնունդ քաղդէեան,
Իմաստութիւնն՝ չէ՞ որ զլուսոյ իւր ճառագայթ եօթնաջահ,
Հանգոյն արիւղին տարածանէ հողագնդոյն 'ի յոլորտ,
Մի՛թէ և քեզ զկորութեան մերկել խաւար չէ 'ի ճահ,
Բանասիրացս՝ զի զշինուածս փլուզանես դու յոխորտ,
Թո՛ղ պատանեակդ մինչ յառոյգ տիս մինչ զօրեսցէ հաստատուն,
Զդայլ գիտութեան ձգել կաթին սիրտ փութասցի կամակար.
Թո՛ղ և լուսով պերճ գիտութեան հոգւոյն կացցեն ջահք փայլուն,
Զի աշխարհի մի՛ յիւր ընթացս դեղերեսցի վայրապար.
Խիղճ ազդեսցէ գոնէ 'ի սիրտդ յէ՛ անուպայ դատաւոր,
Արծաթ քանզի արդարանայ յատեան մտացդ քան զլոյս.
Զի՞նչ քո ոսկի հոգիդ զօրէ պողարերել բեղմնաւոր,
Որչափ ուսման լոյս անաղօտ յոր չէք մտաց տարակոյս.
ԶԱրքայորդւոյն Սողոմոնի զարդար առ այդ վճիռ լուր,
Որ լաւ ասէ զկոյր ակամբ, քան զկուրացեալն մտօք,
Ո՛ր քո ապա ոսկւոյ անուն, ո՞ր արծաթին, ո՞ դու կոյր.
Յոր դանդաշես զառանցանօք, զլուսոյ բարձեալ զբողոք:
Նիւթ ժանգաճար որ ըստ ինքեան զիւր ոչ պահէ մաքրութիւն,
Զիարդ կարէ անախտ պահել զքեզ յասպարէզ կենցաղոյս,

Այլ գիտութեան անշամանդաղ ճառագայթից զօրութիւն.
Խաւար բանաէդ զոգիդ կարէ լուսաւորաց բերել կոյս.
Օ՛ն սիգաճեմ ընդ պատանւոյն 'ի լոյս փութա՛ գիտութեան,
Յաջող ի քայլ զճեմ առնուլ 'ի լուսեղէն 'ի կամար.
Ի բաց ընկեա՛ զախտ արծաթին և որ զոսկւոյն ցանկութեան,
Որք զբեզ յանել կարթեալ զհոգիդ մաշէ ժանգաճար¹.

Այս ոտանաւորները, թէև թէ լիցուի, թէ ոճի և թէ բանաստեղծութեան արուեստի կողմից, դեռ անպա-
ճոյճ են, թէև հեղինակի գրչի անփորձութիւնը երևում է գրուածքի ամեն մի տողից, բայց նոքա արդէն կրում են իրենց մէջ ապագայ հեղինակի սրամտութեան, երգի-
ծաբանութեան և գրական տաղանդի սաղմը: Եւ զարմա-
նալին այն է, որ Նալբանդեանցը հէնց իւր գրականու-
թեան ասպարէզ մտնելու այդ առաջին քայլերից որո-
շում է իւր ապագայ գործունէութեան գլխաւոր նպա-
տակը՝ լոյս, ուսումն տարածել հայ ժողովրդի մէջ, մա-
քառել ազիտութեան խաւարի դէմ, ծաղրել, խորտակել հակառակորդներին, մի ուղղութիւն, որին նա հաւատա-
րիմ մնաց մինչև իւր կեանքի վերջը: Թէև նորա այդ ժամանակուայ գրուածներից տպագրուած են միայն երեք ոտանաւոր, բայց, ինչպէս երևում է, նա աւելի է ունե-
ցել գրած: Նորա քոյր Գոյիանէն պատմում է, որ նա երբեք պարապ չէր նստում. պաշտօնական ղեաղմունքնե-
րից ազատ ժամանակը նա ամբողջովին նուիրում էր զը-
րութեան կամ զանագան իրեղէններ շինելու: Թէ ինչ էր գրում, ասում է նա, մենք չգիտէինք, միայն նա միշտ գրում էր, յաճախակի մինչև անգամ զիշերները ևս քա-
նիցս դարթնելով, նա ստիպում էր մեզ ձրագ վառել և միտքը եկած բաները նշանակում էր թղթի վերայ: Զեռքի արուեստի մէջ էլ նա շատ վարժ է եղել: Մինչև ցայսօր

¹ Տես «Արարատ» 1851 թ. տետրակ 33.

նորա ազգականների մօտ դեռ կարելի է տեսնել նորա փորագրած երկու կնիքը, որոնցից մէկը ներկայացնում է բուրի պատկեր, իսկ միւսը մի հին յղկած հինգ կոպէկանոց, որի վերայ արուեստական կերպով փորագրուած է մի քահանայի պատկեր, զինու շիշը լաւաջը: Ասում են, նա ունեցել իւր ձեռքով շինած և մի փոքրիկ շոգեկառք, որի զլխաւոր պահասութիւնը այն է եղել, որ ընթանալու ժամանակ յաճախակի պառկելուս է եղել կողքի վերայ:

ԳԼՈՒԽ Ե.

Նալբանդեանցը Պետերբուրգում:—Նալբանդեանցի Նազարեան ծեմարանի ուսուցիչ նշանակուիլը:—Նալբանդեանցի ուսուցանելու եղանակը:—Նալբանդեանցի ծեմարանից դուրս գալը և Մոսկուայում հաստատուիլը:—Մոսկուայի ուսանողական շրջանը:—Վաթմանկան թուականների մեծ վերանորոգումների պատրաստութիւնը Ռուսաստանում:—Էմինը, Մսերը և Նազարեանցը:—Գրաբուեան և Աշխարհաբուեան կուսակցութիւնները:—Հիւսիսափայլե հրատարակութիւնը:

1853 թուին Նալբանդեանցը իւր պաշտպան Մատթէոս արքեպիսկոպոսի յանձնարարական նամակով ուղևորվում է Մոսկուա և այնտեղից Պետերբուրգ, որտեղ յաջողութեամբ քննութիւն տալով, ստանում է հայոց լիզուրի ուսուցչութեան իրաւունք: Անկասկած ժամանակի պահանջներին նայելով, նորա հայոց լիզուրից ունեցած գիտութիւնը բաւական էր, բայց չենք կարծում, որ նա բաւականացուցիչ գիտութիւն ունենար և այն բոլոր օժանդակ առարկաներից, որ հարկաւոր էին այդպիսի քննութեան համար: Մենք կարծում ենք, որ այդ դէպքում մեծ օգնութիւն ցոյց տուած պէտք է լինի նորան Խաչատուր աղա Նազարեանը, որի յարաբերութիւնը Մատթէոս սրբազանի հետ վերին աստիճանի սիրալիր և բա-

րեկամական էր: Բայց իւր յաջող քննութիւնից, այդ յարաբերութեանն էր պարտական Նալբանդեանցը և նորանով, որ նա իսկոյն և եթ պաշտօն ստացաւ Լազարեան Ճեմարանում, որտեղ, Ոսկան Տէր-Գէորգեան Յովհաննիսեանի հեռանալու պատճառով, առաջին երեք դասարանում Հայոց լեզուի ուսուցչի տեղ էր բացուել: Նալբանդեանցի Մոսկով գնալու նպատակը այն չէր, որ նա պաշտօն ստանայ, այլ, ինչպէս որ արդէն յիշել ենք, ուսանելու, ընդհանուր զարգացումն, կրթութիւնն ձեռք բերելու, բայց դժբախտաբար նիւթական միջոցների պակասութիւնը արգելք էր լինում նորան ուղղակի իւր այդ նպատակին դիմելու: Ինչպէս մենք տեսանք, նա դեռ Նախիջևանում նոյն իսկ իւր պատանեկութեան հասակում զրկուած էր ընտանեկան նիւթական օժանդակութիւնից և ստիպուած էր ինքը հոգալ իւր վերայ: Առաջնորդի քարտուղարութեան պաշտօնը մի առ ժամանակ նորան ազատեց այդ հոգացողութիւնից և միջոց տուեց նորան իւր կրթութեան գործով և հասարակաց գործունէութեամբ զբաղուելու: Այժմ Մոսկուա գալով, անշուշտ նա զրկուեցաւ այդ ապահովութիւնից, ուստի և ստիպուած եղաւ առաջ մի տեսակ իւր նիւթակաշէն հոգալու, որ յետոյ կարողանայ լիովին անձնատու լինել իւր ցանկացած գործին: Ճեմարանի ուսուցչութիւնը տալիս էր նորան, թէև շատ համեստ, բայց և այնպէս անկարօտ ապրելու մի միջոց, նոյն ժամանակ նա նորանից և շատ ժամանակ չէր խլում, որովհետև նա միայն Հայոց լեզուի ուսուցիչ էր և այն էլ միայն առաջին երեք դասարանում, ուրեմն նորա դասերի թիւը շատ քիչ էր: «Ես երրորդ դասարանի աշակերտ էի, պատմում է նորա աշակերտներից մէկը, երբ Ճեմարանի առաջին երեք դասարանի Հայոց լեզուի ուսուցիչ Յովհաննիսեանը թողեց իւր պաշտօնը և լուր տարածուեցաւ, որ Խաչատուր աղայի առանձին հաճութեամբ

այդ պաշտօնին նշանակուել է նախիջևանցի Միքայէլ Նալբանդեանցը: Մենք օրէ ցօր սպասու մ էինք նորան, որովհետեւ նոր ուսուցիչը զեռ. Պետերբուրգումն էր: Մէկ օր էլ յանկարծ էմինի հետ. դասարան մտաւ մի բարակ-բարակ, միջին հասակով երիտասարդ: Տեսուչը նորան ծանօթացրեց մեզ հետ, յայտնելով, որ այսուհետեւ նա պէտք է մեզ հայոց լեզուի դաս տայ: Մեր առաջ կանգնած էր Միքայէլ Նալբանդեանցը: Ճշմարիտը խոստովանած նորա չոր կազմուածքը, դէմքի խոժոռ զծագրութիւնը, սափրած ընչացքով ու մօրուքով երեսը և կարճ ֆրակը առաջին նուագ շատ էլ ախորժելի տպաւորութիւն չարին. մեր վերայ: Բայց այդ անախորժութիւնը շարունակուեցաւ մինչև տեսչի նորան մեզ ծանօթացնելու պաշտօնական ծիսակատարութեան վերջնալը, որովհետեւ երբ որ տեսուչը գնաց և նա ամբիոն բարձրանալով, սկսաւ իւր առաջին դասը, նա կերպարանափոխուեցաւ. նորա առանց այն էլ փայլուն աչքերը կրակով լցուեցան և երեսը մի այնպիսի գեղեցիկ և գրաւիչ արտայայտութիւն ստացաւ, որ իսկոյն յափըշտակեց մեր սիրտը և ընդ միշտ կապեց մեզ իւր հետ: Նա խօսում էր ազատ այն ժամանակուայ մաքուր աշխարհաբառով, չէր կմկմում, չէր կակազում. նա բառերը հնչում էր մաքուր առողջանութեամբ և, որ գլխաւորն է, նախադասութիւնները շատ ճարտարութեամբ կոկում էր և միտքը յայտնելու համար բառեր ու ոճեր չէր որոնում: «Տղայք, թողնէ՛ք զբարտառը, այսուհետեւ մենք աշխարհաբառ պէտք է սովորենք» — այս խօսքերով նա սկսաւ իւր դասախօսութիւնը: Եւ մենք սկսանք աշխարհաբառ սովորել: Էմինի «Ընտիր հատուածքի» զբաւառ յօդուածները մենք թարգմանում էինք աշխարհաբառ: Խօսում էր ինքը և մեզ էր խօսեցնում. կարդացածներին պատմական նիւթը նա լրացնում էր հայոց պատմութիւնից ամբողջ զլուխներ պատմելով, շատ անգամ էլ նիւթից հեռա-

նայով, ուրիշ պատմութիւններ էր անում, որոնք բոլորը
 ևս Հայկական կեանքին վերաբերելով, շարժում էին մեր
 հետաքրքրութիւնը և մեծ բաւականութիւն տալիս մեզ:
 Այսպէս անցնում էին օրեր ու շաբաթներ և մեր դասերը
 աւելի նմանում էին ախորժելի և հետաքրքիր զրուցա-
 արութեան, քան թէ մեր սովորական դասերին: Մէկ ան-
 գամ ես, որ արդէն գրաբառի ճաշակը մասամբ առել էի,
 հարցրի՝ «վարժապետ, ապա մենք երբ պէտք է քերական-
 ութիւն, գրաբառ ոճեր սովորենք»: «Ոճեր սովորելը մի
 ապարդիւն աշխատանք է, իսկ քերականութիւնը միայն
 միջոց է և ոչ նպատակ», պատասխանեց նա, և սկսաւ
 այդ նիւթի վերայ երկար խօսել: «Մենք պէտք է հայերէն
 մտածել սովորենք—ահա մեր ուսմունքի գլխաւոր նպա-
 տակը», ասում էր նա: Մենք, որ մինչև այդ ժամանակ
 հայոց լեզուն միայն գրաբառ էինք համարել, իսկ նորա
 քերականութիւնը համարեա՝ նպատակ, յայտնի բան է,
 այդ ժամանակ չհասկացանք նորա ասածի միտքը, նա էլ
 ժամանակ չունեցաւ այդ մեզ հասկացնելու, որովհետեւ
 շուտով ստիպուած եղաւ թողնել ձեմարանի դասերը:
 Մենք յետոյ միայն հասկացանք, թէ ինչ էր ուղղում ա-
 սել նա, թէ մենք պէտք է հայերէն մտածել սովորենք...»
 Նորա ձեմարանից դուրս գալու պատճառը ներսէս կա-
 թողիկոսն էր, որ լսելով Նախիջևանից գնացած չարա-
 բանութիւններին, պահանջել էր Մոսկուայի ոստիկանա-
 պետից, որ բռնեն նորան, իբրեւ փախստական եկեղեցա-
 կան պաշտօնեայի, և էտապով ս. Էջմիածին ուղարկեն:
 Ահա այդ հրամանի հիման վերայ ոստիկանապետը գալիս
 է ձեմարան, կախնաւորում է նորան և բանտարկում, որ
 կատարէ Վեհափառի հրամանը: Թայտնի բան է, ձեմա-
 րանի ուսուցչի բանտարկութեան լուրը կայծակի արագու-
 թեամբ տարածվում է մայրաքաղաքի հայերի մէջ և Տէր-
 Մովսէս աւագ քահանան և Ս. Նազարեանցը, որոնք լաւ

էին ծանօթ գործի հանգամանքին, գնալով ոստիկանատուն, երաշխաւոր են լինում և ցոյց տալով վաւերական թղթեր և նոյն իսկ կաթողիկոսի ձեռքով ստորագրած արձակման թուղթը, ազատում են նորան: Այսպիսով թէև նալբանդեանցը արգարանում է, բայց արդէն ուսուցչութիւն չէ անում, այլ հաստատւում է Մոսկուայում, որտեղ մնում է մինչև 59 թուականի վերջերը: Այդ բոլոր ժամանակամիջոցը նա անց է կացնում, նուիրուելով իւր նպատակի իրագործման՝ կատարելագործուելուն, որի համար իսկապէս նա եկել էր: Հանգամանքները ամեն կողմից նպաստում էին նորան: Նա գտնւում էր Ռուսաստանի մաււոր կենտրոնում, նորա չորս կողմը եռ էր գալիս կեանքը և դէպի ինքն էր քաշում ամեն մի մտածող մարդու: Ժամանակն էլ վերին աստիճանի յաջող էր. Խոիմի պատերազմի և նորան յաջորդող հասարակաց գործունէութեան ամենափայլուն միջոցներից մէկն էր: Մամուլը ազատ գատում, ազատ կշռում էր, հասարակութիւնը սկսել էր ջերմ մասնակցութիւն ունենալ հասարակաց գործերում և ամեն բանում ընդ առաջ էր գնում կառավարութեան ժողովրդի օգտին ծառայելու բարի նպատակներին, գրականութիւնը թե էր առել, թըռչում էր. ընտիր հեղինակութիւնները յաջորդում էին միմեանց, Եւրոպայի մեծ մտածողների երկերը առատութեամբ թարգմանւում և հեղեղում էին մաւււր ասպարէզը: Բարձրագոյն կրթութիւնը ընդհանուր ազատ հասանքի ազդեցութեան ներքոյ, ըստ ամենայնի, համապատասխան էր եղել իւր դերին և նշանակութեան. ամբիոններից բարձրաբարձաւ քարոզւում էր զիտութիւնը և առաջնորդում ժողովուրդը դէպի լոյս, դէպի ճշմարտութիւն: Մեծն Պետրոս «պատուհան բանալով» դէպի Եւրոպա, այդ ուղղութեան սկիզբն էր դրել, այդ հոսանքի առաջին զարկն էր տուել. Եկատերինէ կայսերուհին և

նորա գործակիցները՝ Կանաեմիրը, Փոն-Վիգինը և միւսները
 ընդունել ու զարգացրել էին մեծ թագաւորի սկսած
 գործը. քառասնական թուականների գործիչները՝ Գը-
 րանովսկին, Բելինսկին, Գոգոլը, և Տուրգենևը կարա-
 պեա էին եղել այդ մեծ գործին, նոքա հասունացրել ու
 պատրաստել էին հոգը, նիւթը մեծ շինուածքի համար,
 նոքա հարթել ու մաքրել էին ճանապարհը մեծ ճարտա-
 րապետի համար, որ պէտք է վերջացնէր, ամբողջացնէր
 բոլոր շինութիւնը, ձև ու գեղեցկութիւն տար նորան:
 Այդ հոսանքի և ուղղութեան արդիւնքը, այդ ընդհանուր
 շատ վաղ ժամանակներից պատրաստուող գործի իդէան
 իւր մէջ պարունակողը, մեծ շինութեան մեծ ճարտարա-
 պետը էր Աղեքսանդր Բ կայսրը, որի ազատարար շնչով
 լցուած էր չորս կողմը: Պատրաստվում էին վաթսնական
 թուականների մեծ վերանորոգումները՝ ճարտերի ազատու-
 թիւնը, տեղական ինքնավարութիւնը և դատաստանական
 բարեփոխումները: Գործելու, ոգևորելու, բարձր զգաց-
 մունքներով լցուելու ժամանակներ էին: Նախնադեանցը
 'ի բնէ աշխոյժ, 'ի բնէ եռանդուն, ձգտումն ունենալով
 դէպի ամեն մի ոգևորող գործ և ուղղութիւն, յայտնի
 բան է, չէր կարող անդդալ մնալ դէպի իւր չորս բոլորը
 եռացող կեանքը և մտաւոր շարժումն: Եւ յափշտակուե-
 ցաւ նա և անձնատու եղաւ տիրող հոսանքին: Նա ա-
 զահութեամբ կարգում էր ընտիր հեղինակներին, ուսում-
 նասիրում էր եւրոպական թարգմանութիւնները և իւր
 մեծ աշխատասիրութեամբ, կամքի հաստատութեամբ և
 ընդունակութեամբ կարողանում էր իւրացնել ամենա-
 դժուար, վերացական գաղափարները, որով նա մի կող-
 մից լրացնելով իւր ուսման թերին և հսկայական քայ-
 լերով իւր զարգացման գործը առաջ մղելով, միւս կող-
 մից իւր ապագայ գործունէութեան համար և գիտութեան
 մեծ պաշար էր ձեռք բերում: Նա սովորում էր և Ֆը-

րանսերէն լեզուն, որ կարողանար թարգմանութիւնների և բնադիրները կարգալ, լսում էր բժշկական մասի պատաստութիւնները և նոյն ժամանակ պարապում Հայոց Հին մատենագրութեան և իւր ժամանակի ընթացիկ կեանքում վարժնած ու յարուցուած վանական խնդիրների պարզաբանութեամբ: Այդ կողմից ևս հանգամանքը նպաստում էր նորան, որովհետեւ այն դերը, որ այժմ ուստահայոց կեանքում խաղում է Թիֆլիսը, այն ժամանակ խաղում էր Մոսկովը: Թիֆլիսը այն ժամանակ շնորհիւ Ներսիսեան զարանոցի և նորա ուսումնաւարանների, շնորհիւ մայրաքաղաքից վերադարձած կրթուած երիտասարդների դեռ նոր էր միայն սկսել հայկական կեանքի մտաւոր ասպարիզում նշանակութիւն ունենալ: Մոսկովում էր Լազարեան ձեմարանը, Մոսկովում էր ուսանողական շրջանը, Մոսկովում էին ապրում Մսերը, Էմինը, Նազարեանցը, որոնք այդ ժամանակուայ Հայոց մտաւոր կեանքի փայլուն աստղերն էին համարվում: Նալբանդեանցը առաջ իբրեւ ձեմարանի ուսուցիչ, յետոյ իբրեւ համալսարանի ազատ ունկնդիր ծանօթացաւ ձեմարանի կեանքին, մտաւ հայ հասարակութեան մէջ և բնականապէս մտեցաւ թէ գործիչներին և թէ ուսանողութեան: ձեմարանը, որտեղ ժողովուած էին Հայոց աշխարհի և ամեն կողմից երեւաններ, որտեղ անմահ Հիմնադիրների անհուն հոգացողութեամբ խնամվում էր հայկական կեանքը և պահպանվում հայկական հոգին, մի մեծ դպրոց էր, որտեղ նա միջոց ունեցաւ ուսումնասիրելու Հայոց կեանքի տիպերը, մայրաքաղաքը և նորա մէջ ապրող հայ հասարակութիւնը, որ այդ ժամանակուայ հայ հասարակութիւններից ամենակրթուածը կարելի էր համարել, տուին նորան այն խոհական մտաւոր կեանքը, որին նա կարօտ էր Նախիջևանում: Էմինը, Մսերը և Նազարեանցը ազգեցին նորա վերայ և նպաստեցին առաջին անգամ որոշակի կերպով

նորա մէջ գրականական ուղղութիւն կազմելուն, բայց ամենամեծ ազդեցութիւնը նորա վերայ ունեցաւ ուսանողական շրջանը, որ այդ ժամանակ բոլոր միւս Հայ ուսանողական շրջաններից համարվում էր ամենամեծը և ամենահինը¹:

Մոսկովի Հայ ուսանողութեան հսութեան և մեծութեան նպաստել էին համալսարանը, որ, իբրեւ Ռուսաստանի ամենահինը, մեծ հռչակ էր վայելում և դէպի ինքն էր քաշում ուսումնաճարաւ Հայ երիտասարդներին, Հայ հասարակութեան մեծութիւնը, որ մեծ հաւաստիք էր տալիս չքաւոր ուսանողների կեանքի ապահովութեան և, վերջապէս, Լազարեան ձեմարանը, որ ուսանողների ամենամեծ կոնտինգենտն էր պատրաստում թէ իւր լիկէոնական լսարանների և թէ համալսարանի համար: Բացի իւր հսութիւնից ու մեծութիւնից Մոսկուայի Հայ ուսանողութիւնը միւս Հայ ուսանողական շրջանների վերայ յիսնական և վաթսնական թուականներում ունէր և մի մեծ առաւելութիւն: Մոսկուայի ուսանողները հայկական տեսակէտից աւելի էին պարտաստ ուսանողութեան, որովհետեւ նոքա աւարտած լինելով իրենց ուսման ընթացքը ձեմարանում, գիտէին իրենց լեզուն և կրօնը, ծանօթ էին հայկական կեանքին զիտակցաբար, այն ինչ միւս ուսանողական շրջանները նիւթ էին ստանում Կովկասի, զըլխաւորապէս Թիֆլիսի միջնակարգ դպրոցներից տւարտածներից, որոնք համարեա հայկական և ոչ մի պաշար չէին բերում իրենց հետ: Այդ պարպէս լինելով, յայտնի բան

¹ Մոսկուայի Հայ ուսանողութեան սկիզբը համարվում է դարիս առաջին քառորդից, մօտաւորապէս 1803 թուականից, երբ թագաւոր կայսրը բարեհաճեց իրաւունք տալ իշխան Տիցիանովին 12 հօգի Հայ և վրացի տղայ ուղարկել Մոսկուայի համալսարանը թագաւորական հաշուով պիտեղ բժշկականութիւն սովորելու: Տես Երիցեանի «Դրիգոր Արծրունի» աշխատասիրութիւնը. էջ 49—61:

է, Մոսկուայի ուսանողութիւնը միշտ աւելի էր զբաղ-
վում Հայկական գործերով, քան թէ միւս ուսանողները,
Հայկական գրականութեան վերակենդանութիւնը ու բար-
գաւաճումը միշտ նորա մասնագութեան առարկայ էր լի-
նում, Հայոց կեանքի՝ երեւոյթները միշտ վիճաբանութեան
և քննադատութեան նիւթ էին լինում նոցա շրջանում:
Մոսկուայի ուսանողութեան այդ կենդանի ուղղութեան
հետեանք պէտք է համարել և ուսանողական ժողովը,
որ 58 թուին կազմուելով, իրեն նպատակ դրեց նիւթա-
կանապէս օգնել չքաւոր ուսանողներին և այդպիսով
միջոց տալ շատ Հայ երիտասարդների հասարակութեան
օգտուէտ անդամ լինելու: Նախնայականցը մոռաւ այդ ու-
սանողական շրջանը և իւր մեծ եռանդով ու առողջ դա-
տողութեամբ շուտով իւր վերայ դարձրեց բոլորի՝ ուշա-
դրութիւնը. նամանաւանդ գրաւեց ուսանողների սէրն ու
համակրանքը իւր Հայկական գիտութեան մեծ պաշարով և
իւր աշխարհաբառ խօսակցութեան անպաճոյճ և պարզ
եղևէջներով, որ այն ժամանակ մի գեղեցիկ նորութիւն էր:
Ուսանողութիւնը խմբուեց նորա չորս կողմը և կազմուե-
ցաւ մի թարմ հուսակցութիւն, պատրաստ անձնուիրաբար
գործելու հասարակաց տպարիզում, միջնորդ լինելու և
տարածելու եւրոպական լուսաւորութիւնը Հայ հասարա-
կութեան մէջ: Հայոց կեանքի, գրականութեան և կրթու-
թեան մէջ այդ ժամանակները առաջ էին եկել երկու
կուսակցութիւն՝ գրաբառեան և աշխարհաբառեան: Ա-
ռաջինը Հայկական հին կեանքի հետեանքն էր, իրկրորդը՝
նորի. առաջինն կուսակից էր հին սերունդը, երկրորդին
—նորը, առաջին պարագլուխն էին Վենետիկ միաբանու-
թիւնը իւր դպրոցով և բոլոր Հայկական հին հաստա-
տութիւնները, երկրորդի—եւրոպական կրթութիւն ստա-
յած երիտասարդները, նոր դպրոցը, աշխարհաբառ մա-
մուլը և թատրոնը: Սնկասկած երկու ուղղութեան նպա-

տակն էլ մէկ էր՝ հայ հասարակութիւնը հաղորդակից անել եւրոպական լուսաւորութեան, հայերի մէջ գիտութիւն տարածել, թարմութիւն ներշնչել նորա մէջ և վերակենդանացնել հայ ազգը իւր դարաւոր թմրութիւնից. զանազանութիւնը միայն միջոցների մէջ էր. Գրաբառեանները կարծում էին իրենց նպատակին հասնել հայոց հին գրականութեան և կրթութեան գործի վերակենդանութեամբ ու շարունակութեամբ, գրաբառ լեզուն մտքի հաղորդակցութեան պիտաւոր գործիք շինելով, իսկ աշխարհաբառեանները կարծում էին, որ պէտք է թողնել հինը իբրև նիւթ, պէտք է ստեղծել նոր գրականութիւն նման եւրոպականին, նոր, եւրոպական սիստեմով դպրոց հաստատել, ժողովրդի կենդանի լեզուն մշակել, գրականի հասցնել և նորան հայ մտքի փոխանակութեան գործիք շինել: Ամեն տեղ, որտեղ միայն կար հայ հասարակութիւն, նկատուում էր հին և նոր սերնդի կարծիքների մէջ եղած այդ զանազանութիւնը, նկատուում էր խուլ անբաւականութիւն, որ տեղ-տեղ մինչև անգամ աշխարայ կերպով թշնամութեան էր հասնում: Բայց կարելի է ասել, որ ոչ մի տեղ կարծիքների այդ զանազանութիւնը այնպէս որոշ կերպով չէին արտայայտւում, ինչպէս Մոսկուայում: Այստեղ Մսերն ու Էմինը գեռ շատ վաղ ժամանակից խուլ կերպով կռիւ էին մղում նազարեանցի դէմ, որ բողոքում էր նոյա ձեմարանում բռնած դպրոցական սիստեմի¹ և գրական գործունէութեան

¹ Նազարեանցը այնքան անբաւական էր ձեմարանից, որ ուզում էր իւր ձեմարանում ունեցած պաշտօնը թողնել և, հայ երեխաներին իւր ցանկացած ուղղութեամբ դաստիարակելու համար, իւր առանձին մասնաւոր դպրոցը բանալ: Այդ ձեռնարկութեան մասին նա իւր նամակներից մէկում գրում է՝ իմ անձնական դրութիւնս, պատճառ կայ մոռածելու, որ շուտով կփոխուի: Այսինքն կամիմ ես իմ պաշտօնը Լազարեանց դպրոցի մէջ թողուլ, և մի մասնաւոր ուսումնարան (պանսիօն) բանալ հայոց

դէմ: Նալբանդեանցը, իբրեւ նոր հոսանքի մարդ, իսկոյն նկատում է կարծիքների զանազանութիւնը և իրեն համակրող ուսանողների հետ անցնում է Նազարեանցի կողմը և իւր տաք գործունէութեամբ շուտով այնպիսի բընաւորութիւն և գոյն է տալիս գործին, որ մինչեւ այդ ժամանակ եղած խուլ անբաւականութիւնը իսկոյն փոխվում է սաստիկ հակառակութեան, մինչեւ անգամ թըշնամութեան ու ատելութեան: Առ հասարակ նոր, աշխարհաբառեան կուսակցութեան գործը շատ զփուար էր: Այն ժամանակ, երբ զբաւառեանները արդէն ունեին պատրաստի գրականութիւն, պատրաստի լեզու և ուղղութիւն,

զաւակների համար Մոսկվայի մէջ: Յոյս ունիմ որ դուք, հայրապետեանցը և մեր բարեկամները օգնական կլինեն իմ ձեռնարկութեան յառաջագիմութեանը, տղայք ուղարկելով ինձ. կարծեմ այս գործը աւելի օգտակար կլինի ինձ և մեր սիրելի ազգին, մանաւանդ որ ազգի որդիքը դաստիարակելուց աւելի լաւ բան չկայ, և պիտոյ է ուսման մեծութիւնը այնքան լինի, որ աշակերտքը պատրաստուին ուղղակի մտնելու դէպի համալսարան» (Այս նամակը գրուած է Գրիգոր Սալտիկեանին յուլիսի 8-ին 1859): 61 թուականին Նազարեանցը արդէն պատրաստել և ուղարկել էր իւր բարեկամներին իւր բաց անելիք դպրոցի «յայտարարութիւնը»: Այս մասին նա իւր բարեկամ Գրիգոր Սալտիկեանին գրում է՝ «խնդրեմ թող տալ ինձ մատուցանել Ձեզ մի առանձին օրինակ յայտարարութեան այն ուսումնական և գործնական դպրոցին, որ կամիմ բանալ Մոսկուայի մէջ հայոց մանուկների դաստիարակութեան համար: Յուսով եմ, որ և դուք իմ միւս ազգասէր բարեկամների հետ չկամէիք անմասն մնալ գործակցութիւնից այս սկսուածի յառաջագիմութեանը և կաշխատէիք աշակերտացուք պատրաստել իմ դպրոցի համար: Իմ կարծիքս այս է, որ մենք պարտական ենք գալոց ազգը պատրաստել արմատից և հիմքից, մանկուցը դաստիարակելով և կրթելով, որ մի օր բարեկարգվի մեր ազգային վիճակը: Այստեղ հարկաւոր է կենդանի խօսքով և ոչ թէ մեռեալ տպած բառով մասնաւորել ազգի մանուկներին մեր նոր ժամանակի գիտութեան նիւթը. ուրեմն ուսումնարանն առաջին հոգայի բանն է մեր ամեններին համար: Սակայն Նազարեանցի այդ ձեռնարկութիւնը չիրագործուեցաւ, որովհետեւ 69 թ. նա հրաւիրուեցաւ Ներսիսեան դպրանոցի տեսչութեան պաշտօնին, որ արդէն ինքն ըստ ինքեան նորա ձեռնարկութեան իրագործումն էր, թէ և ուրիշ եղանակով:

աշխարհաբառեանները դեռ համարեալ թէ ոչինչ չունէին: Նոքա ամէն բան նորից պէտք է պատրաստէին և, որ գլխաւորն է, նոքա ամէն բան պէտք է այնպէս յարմարեցնէին, որ չճեղուէին, չհեռանային հայկական կեանքից, չընկնէին ծայրայեղութեան մէջ, այլ եղածը եւրոպականացնէին, չեղածը հայկական հոգւոյն համեմատ ստեղծէին: Աշխարհաբառեաններին նամանաւոր ու պէտք էր մեծ ջանք ու աշխատանք գործ դնել, որովհետեւ նոցա յոյժերը շատ քիչ էին, նոքա շատ ցրուած ու թոյլ էին. պէտք էր ցրուած յոյժերը միացնել մի ամուր, կանոնաւոր կուսակցութիւն կազմելով, գործը առաջ տանել, որովհետեւ այլ բան է մէկ բան նորից ստեղծել, այլ բան—եղածը, սկսածը շարունակել:

Ահա այդ նպատակին հասնելու համար Նալբանդեանցը և Նազարեանցը դիմում են իրենց հօրը զրչի և մամուլի գործակցութեան. նոքա մտածում են հիմնել մի ամսագիր, որ բերան լինելով նորարոգութեան, ցրուած յոյժերը ի մի ժողովէր և մղիչ ու յորդորիչ լինէր նոր ուղղութեան: Այդ ամսագիրը էր Հիւսիսափայլը, որի «պրոֆէքտը» Նազարեանցը գրեց և ուղարկեց հաստատութեան 56 թուին. հրատարակելու թոյլ տուութիւն ստացաւ 57-ին և սկսաւ հրատարակել 58 թուականի Յունուարից¹:

¹ Մեր ձեռքին գտնվում են Նալբանդեանցի Նախիջևանցի Գրիգոր Սալտիկեանին գրած նամակները, որոնցից երկուսի՝ 56 և 57 թուակ. գրածների մէջ տեղեկութիւն կայ Հիւսիսափայլի սկզբնաւորութեան մասին: Այժմուս, գրում է նա 56 թուականի նամակի մէջ, նոր թագաւորի քաղցր շնորհից և ողորմութիւնից մի փոքր աւելի ազատութիւն և համարձակութիւն լինելով, և ես ոտք խաղացուցի և գլուխ բարձրացուցի, մի հայկական օրագրի պրոֆէքտ գրելով և մի նամակի հետ ուղարկելով աղգային լուսաւորութեան նախարար Նօրովին. Կարծիք ու յղյս կայ, որ այս մարդը բարի լինելով և ժամանակը ևս ձեռնառու լինելով, թոյլ

ԳԼՈՒԽ Զ.

Նալբանդեանցի և Նազարեանցի Հիւսիսափայլի վերայ գործ գրած ծիգն ու աշխատանքը: — Թշնամիների ձգտումն: — Նալբանդեանցի բանաստեղծութիւնների հաւաքածուն: — Քափառական Հրէայի թարգմանութիւնը և Միսին խօսք, միւսին հարաւ վէպը: — Նախի-Ջլանի կուսակցութիւնների մէջ Այվաղեանի միջնորդութեամբ կա-յացած հաշտութիւնը: — Նալբանդեանցի նամակները: — Նալբանդեանցի վարմունքը իւր հակառակորդների հետ: — Նալբանդեանցի նամակաձև. թղթերը:

Ճիշտ որ հսկայական ճիգ թափեցին Նալբանդեանցը և Նազարեանցը հիւսիսափայլի վերայ. նոքա զանազան քաղաքներում գործակալութիւններ հաստատելով. նիւթական միջոցներ հայթայթեցին, նոքա դատոններից գտան իրենց ուղղութեան համապատասխանող աշխատակից մարդիկ, որով կանոնաւոր թղթակցութեան սկիզբը դրին մեր մէջ, նոքա կաղմեցին մի աշխարհարաւ գրական այն

տայ ինձ տպել այդ շատ հարկաւոր օրագիրը. Երբոր հրաման ստացայ հրատարակելու, այնուհետև կուղարկեմ և ձեզ այդ մասին արած ծանուցումը, և յուսով եմ որ և դուք վերահասու լինելով այս ձեռնարկութեան հանրաշահ օգտին և պողա-բերութեան, ջանդիր լինիք ինչքան կարելի էր շատ զուբարբե-ցիա գտանել իմ օրագրի համար ձեր քաղաքումը. Օրագրի բո-լոր հանգամանքը կրկարդաք դուք իւր ժամանակին ծանուցարար թղթի մէջ, ուրեմն այժմ պատճառ չկայ երկարախօս լինել ձեր հետ այդ մասին: 57 թուականի նամակի մէջ նա գրում է՝ «Բարի աւետիք տամ ձեզ. թագաւոր կայսրը անցեալ Մարտի 17 թուականից տուել է իւր բարեհաճութիւնը իմ հիւսիսափայլ անունով օրագրի համար, և լուսաւորութեան նախարարը, Մոսկ-վայի ցենզուրեան կոմիտեի ձեռքով տեղեկութիւն է տալիս ինձ անցեալ Ապրիլի 29 թուականից այս մասին, և շնորհում է ինձ թոյլտուութիւն հրատարակելու իմ օրագիրը, ստորագրելով նո-րան Պետերբուրգեան ցենզուրայի քննութեանը, Թոյլտուութեան զփուարութիւնը վերջացաւ ահա. մնում է մեզ այժմ յաղթե-լու մի այլ զփուարութեան, այսինքն մեր ազգի սառնասրտու-թեանը դէպի լուսաւորութիւն»:

Ժամանակուայ Համար կանոնաւոր լեզու, որով սկսան ժողովրդի հետ նորան հասկանալի լեզուով խօսել, բայց, որ ղլխաւորն է, նոքա այդ հասկանալի լեզուով սկսան այնպիսի նիւթերի վերայ խօսիլ, որ ժողովրդի սրտին մօտ լինելով, գրաւում էին նորա համակրութիւնը, զարթեցնում էին նորան քնից, ստիպում էին հետաքրքրուել

Դնում ենք այստեղ և նալբանդեանցի «Հիւսիսափայլի» թղլտուութիւնը ձեռք բերելու մասին գեներալ Սուլթանշահին գրած նամակը:

«Գերապատիւ Հայրենակից, Սիմէօն Գրիգորեան.

«Արգոյ բարեկամ.

«Առաջին նամակը, որ գրում եմ ձեզ մանաւանդ առաջին անգամ՝ ծանօթանալուց յետոյ, պարունակում է իւր մէջ մի խնդիր, որ կարելի էր միայն գործել երկար ու շատ ծանօթութեանց յետոյ: Չնայելով այս անյարմարութեան վերայ, ես բաց սրտով գրում եմ ձեզ այս նամակը, առանց սուտ քաղաքավարութիւնների, որ մինչև այժմ ևս չեն ամաչում ոմանք գործ դնել:

«Երկար ժամանակ է, որ ես և պարոն Նազարեանցն ցանկանում էինք դուրս տալ մի հայկական օրագիր, աշխարհարաւ լեզուով հասարակին հասկանալի. երկար ժամանակ այս խորհուրդը մնացել էր մեր սրտումը բոլորովին անգործ, պատճառ որ զանազան հանգամանք արգելք էին լինում այս ազգասիրական գործին: Այժմ տեսանելով այդ արգելաւիթ հանգամանքների փոփոխութիւնը, տեսանելով մանաւանդ, որ Ձուլսօները մինչև անգամ հրաման ստացան Ռուսաստանի մէջ օրագիր տպելու, կրկին անգամ զօրացաւ մեր սրտի ցանկութիւնը, և սկսեցինք հետեւել այս գործին, որ մեզ ևս թղլտուութիւն լինի Տերութեանց տպել ամենայն ամիս հայկական օրագիր Ռուսաստանի հայերի համար: Այս խորհրդով պ. Նազարեանցն ամօդայ 19-ից խնդիր գրեց Ազգային լուսաւորութեան նախարարին, որի հետ միասին ուղարկեց և տպելի օրագրի պայմանքը, որի համաձայն պարունակութիւնը այս է: Առաջինը՝ որ այդ օրագիրը պիտի դուրս տայ պ. Նազարեանցը ամենայն ամիս ութամսով ութն թերթ: (Իմ անուամբ խնդրել չէր կարելի, պատճառ որ ես համալսարանում լինելով և բժշկութեամբ պարապելով, չունիմ իրաւունք յայտնի կերպով պարապել այսպէս բանի, թէպէտեւ առանձին գործակից եմ օրագրին, ըստ որում մի մարդի անկարելի է այդ գործը կատարել): Երկրորդ՝

ազգային գործերով և զիսակցօրէն վերաբերուել հայկական կեանքի երևոյթներին: Ամսագրի հրատարակութիւնը տեւեց վեց տարի՝ առաջին երեք տարին Նալբանդեանցի ջերմ գործակցութեամբ, վերջին երեք տարին համարեա՛ միայն Նազարեանցի աշխատանքով, և այնպիսի մի հիմք ստեղծեց, որի վերայ յենուելով, արդէն անսպթաք կեր-

« օրագիրը՝ լաղկանում է չորս մասնից, այսինքն Ուսումնական,
« Բանասիրական, Պատմական և Բնական հատուածներից, որոնք
« համաձայն յօդուածների պարունակութեանը պիտոյ է զար-
« դարվեն գեղեցիկ պատկերներով և օրինակներով: Երրորդ՝ օրա-
« գիրը պիտոյ է անուանվի «Իւսիսային Փայլողութիւն» (Сѣвер-
« ное Сіяніе) և ամենայն ամսական տետրակի վերայ պիտոյ է
« տպվի որպէս անունը, նոյնպէս այս փայլողութեան պատկերը:
« Յոյս ունինք, որ Տէրութիւնը հրամայէ, եթէ միայն մի ար-
« գելքը որ կայ, մի կերպով վերանայ—այսինքն Մոսկվայի մէջ
« հայոց լեզուի ցենզօր չլինելը:

« Այս մասին խնդրի մէջ ասված է, որ անգամ ընդունեն
« Մոսկվայի ցենզուրնի Կոմիտետին, հայ, Գուբերնսկի սեկրետար
« Գէորգ Կարապետեան Սուրենեանցը. սա աւարտել է իւր ու-
« սումը Լազարեանց ձեմարանում, Լիցէյական արտօնութեամբ,
« արժանացել է 12-երորդ աստիճանին, գիտէ ինչպէս հայոց
« նոյնպէս և այլ արեւելեան լեզուները և այժմ վարժապետ է
« նոյն ձեմարանի մէջ: Գիտելով, որ Տէրութիւնը յանձն առու-
« չի լինիլ հայ ցենզօրի համար ջոկ ուճիկ նշանակել, յօժարա-
« ցել ենք, ինքներս նորան տարեկան բաւականութիւն տալ, և
« խնդիրի մէջ գրել ենք, թէ նա առանց վարձի պատրաստ է
« ծառայել, որպէս զի Տէրութիւնը չհանգիպի դժուարութեան,
« և թոյլ տայ:

« Լաւ գիտեմ, որ թէ այդ տեղ մի հոգաբարձու մարդ
« չունենանք այս բանին, մեր խնդիրը չի ընդունվելու, մանա-
« լանդ որ պատճառը պատրաստ է. վասնորոյ ո՞վին կարող էի
« դիմել այս խնդրովս, եթէ ո՛չ ձեզ իբե հայրենակցի և լիզգի
« օգտին ցաւակցողի, թէպէտե այս բանը ձեր ծառայութեան
« պաշտօնից դուրս է, այսու ամենայնիւ դուք շատ բարեկամներ
« ունենալով, որոնց առաջն հաւատարմ գիտեմ, որ յարգելի էր
« ձեր միջնորդութիւնը կարօղ էիք օգնել մեզ այս ազգային
« գործի մէջ, որով ոչ թէ միայն մեզ կպարտաւորէիք, այլ և
« բոլոր հայոց ազգը, որ չունի ոչինչ լուսաւորութեան հնար:

« Այս հիման վերայ ես խնդրում եմ ձեզանից չխնայել
« ձեր աշխատութիւնը, որ Նախարարութիւնը յետ չզարձուցանէ

պով առաջ գնաց նոր կուսակցութեան գործը և հասաւ այն զրուութեան, որի մէջ գտնուում է նա՝ այժմէ չին բանակը խլրաուեցաւ, նորա պարագլուխները սկսան աջ ու ձախ փրփուր ժայթքել բերաններից, ազգի ու եկեղեցու թշնամի հրատարակել երկու մշակներին, հայհոյել, մինչև անգամ քսութեան ու մատնողութեան զիմել, բայց նորածին զործը չհարողացան իւր բնում խեղ-

« մեր առաջարկութիւնը, և թողլ տայ սկսանել մեր գործը,
« Պարոն Նազարեանցը նոյնպէս մի պրոֆեսսոր Մուխլենսկից
« խնդրել է, որ նա ևս աշխատի. Ուրիշ մարդերից չէր կարելի
« խնդրել, պատճառ որ հայերը դժբաղդաբար այնպիսի մի զար-
« մանալի հոգւոյ տէր են դարձած, որ եթէ չկարողանան կամ
« չկամենան մի բանի օգնութիւն տալ, վնասելու և քանդելու
« միշտ պատրաստ են, ի հարկէ այս ո՛չ այլ ինչ է բայց եթէ
« ապացոյց նորա բարոյականութեան հիւանդութեանը:

« Գիտեմ, որ մեր օրագիր տպելը քանի մի հնամոլ մար-
« դերի ընդդէմ պիտի թուի, պատճառ որ դոքա հին և մեռեալ
« լեզուի քամակից գնալով, կարծում են թէ կարող են մի մո-
« գական գաւազանով յետ դարձնել հայերի համար հինգերորդ
« դարը. բայց այդ պարոնները փորձով կտեսանեն և Աստու-
« ծով առաջին անգամ մեր օրագրի վերայ, թէ ժողովուրդը
« փոքր ի շատէ ճանաչել է ժամանակի իրաւունքը, կտեսանեն,
« թէ հայը եթէ մի գիր չի առնում ձեռը բոլոր պատճառը այն
« չէ, որ չէ կամենում կարգալ, բան հասկանալ, այլ մանաւանդ
« այն է, որ կարգացածը չի հասկանում, և թէ մինչև այժմ
« հայերի համար գրվել են միմիայն մի սխալաստիկական կրօնա-
« կան շնչին վէճերու վերայ, որոնք ժողովուրդի համար եղած թէ
« չեղած մի և նոյն է:

« Մեր ցանկութիւնը այն է, որ կարողանանք ժողովուրդին
« մօտեցնել փոքր ինչ դպրութեան հետ, նիւթ և սնունդ դնել
« հայկական չոր ու ցամաք դպրութեան մէջ, և ինչպէս մի կող-
« մից լեզուն, միւս կողմից և նոյն ինքեան դպրութեան հոգին և
« ուղղութիւնը որքան կարելի է շինենք ժողովրդական, ազատե-
« լով սրեղայականութենից, որի մէջ մնացած է այժմ անտէր
« անտէրունք:

« Շատ յոյս ունեմ, որ ձեր աշխատութիւնը կպսակէ մեր
« սրտի ցանկութիւնը և դա յաւիտեական արձան կլինի մեր
« անկեղծ բարեկամութեանը:

« Ողջ եղէ՛ք և ուրախ Ձեր բոլոր գերդաստանով. (Ի 21
« մարտի 1856, Մոսկվա):»

ղեկ¹։ Թէև դեռ մանուկ էր, դեռ խանձարուրումն էր նոր գործը, թէև դեռ մեւթն էր հայկական կեանքի հորիզոնը, բայց երկնքի մի կողմում արդէն երևում էր արշալոյսը, որ պէտք է փարատէր ագիտութեան մռայլը և լուսաւորէր հայոց աշխարհի մեւթն ու խաւարը։

Դեռ մինչև 58 թուականը, երբ Նալբանդեանցը տա-կաւին չէր մղուել լրագրութեան տապարէզը, նա իւր մեծ աշխատանքի մէջ, որ գործ էր դնում իւր ինքնուսու-

¹ Դնում ենք այստեղ համարեա՝ ամբողջութեամբ Նալբանդեանցի նամակներից մէկը, որի մէջ ի միջի այլոց տեղեկութիւն կայ և հակառակ բանակի յոյսերի և ձգտումների մասին։

« Բո գրած նամակներդ, երկուքը պ. Նալբանդեանցի վերայ, « երրորդը պ. Բերբերեանցի ձեռքով ստացայ անկորուստ. Երկար « ժամանակ նամակներիդ չըպատասխանելուս պատճառը էր իմ « անդադար զբաղմունքը և եթէ ճշմարիտը կամիս վերին աստի- « ճանի թուլութիւնը և վերջումը տասն օրվայ հիւանդութիւնս, « ինչ և իցէ այժմ փառք Նստուծոյ։

« Եղբայր, խնդրում եմ ներողութիւն Թափառական հրէայի « ճակատին գրած երկու տող բանիս համար, ես կամէի դորա- « նով ցոյց տալ քեզ իմ երախտագիտական շնորհակալութիւնը. « բայց քո առաքինութիւնը գերազանցեց քան թէ իմ երախ- « տագիտութիւնը հեռի փախչելով ամենայն արտաքին փառքից « ու պատուից։

Օրագրի Յիշատակարանների վերայ դարձուր առանձին ու- « չադրութիւն, մանաւանդ 7 և 8 համարներին, և հասկացուր « չըհասկացողներին որ իմանան. 8-ի մէջ շատ սաստիկ խառն- « ված են մեր թշնամիների աղբաթը և այսուհետև ևս պիտի « խառնվի։

« Ճշմարտութեան թշնամիների յոյսը այն է, որ Օրագիրը կը « խափանվի, բայց չէ պիտոյ թոյլ տալ, որ այդ հարուածը ստանանք— « լայտնի բան է այդ նոցա աչքը ծակում է և ծանր բան է հրապա- « րակով օրագրի մէջ խայտառակվիլ, որ ամենայն տեղ գնում է և « կրմնայ շատ երկար տարիներ։ Թիֆլիզի մէջ այժմ բաւական « ստորագրողք կան, և այնտեղ յոյս կայ, որ գալոց տարի ա- « լելանայ, ուրեմն պակասածը միայն պիտի լինի Ղրիմում և « Նախիջևանում, բայց յոյս ունիմ, որ դուք ձեր անգլաախրական « օգնութիւնը չէք խնայելու. Եղբայր, մենք առանց ձեր, ոչինչ « ենք, նոյնպէս և դուք առանց մեզ, պէտք է ձեռք ձեռքի տալ « և միաբան ուժով ջարդել խաւար վիշապի գլուխը. Դեռ ևս « նոր կաթուղիկոսի հաստատութիւնը չըկայ. ձայն կայ որ Լան-

թեան և կատարելագործութեան համար, ժամանակ էր գտնուում և գրաւոր աշխատանքով պարապելու: Այդ ժամանակներումն (55—58) եւ զրուած նորա մի շարք բանաստեղծութիւնները, «Մինին խօսք, միւսին հարա» վէպը և «Թափառական չրէայ»-ի առաջին հատորի թարգմանութիւնը¹: Նալբանդեանցի բանաստեղծութիւնները նորա այն ինքնուրոյն, թարգմանական կամ նմանողութեամբ

« սկոյն պիտի փոխուի և նորա տեղը, ասում են, որ պիտի կարգվի Ռոստովցովը:

« Վարժապետի գործի մասին այսքան կարող եմ յայտնել, որ ինչ այստեղ կարելի էր նորա օգտի համար գործ դրվեցաւ, « բացի դորանից մարդ գնաց այստեղից Պետեր., որովհետեւ գործը « ծը մտաւ Государст. Сов. յոյս կայ, որ շուտով վերջանայ, « բայց թէ որքան կըթեթեւանայ այդ գիտցողը Աստուած է:

« Հոկտեմբերին պիտի ստորագրութիւն բանանք, գալոց 1859 « թուակ. Հիւսիսափայլի համար, ես կարծում եմ որ ուշ չէ, « բայց դու քո խնդիրը յայտնէ մեզ:

« Եւ մի փոքր կամենում ենք ձեռք մեծացնել կամ մի երկու թերթ աւելացնել: Մտերը յունվարից կամի ծաւաքաղը « իբրեւ օրագիր տպել ամիսը 4 թերթ, նշանակած գինն է 4—50 « կոպէկ, որովհետեւ Իզմիրեանը կամ մի քանի այլ մարդիկ տարեկանը տպելու են իւրեանց ծախքով:

« Այս օրերս մեր օրագիրը մի երկու խօսք խօսելու է Մասեաց Աղաւնու վերայ, ի հարկէ կըկարդաս, միայն ինչ որ դու « կըկարդաս և կըհասկանաս աշխատէ որ ուրիշներին ևս հասկացնես, որ ճշմարտութիւնը յայտնվի. (1858. Սեպտեմբերի « 1. Մոսկվա):»:

¹ Թափառական չրէայն տպուել է 1857 թ. Գրիգոր Սալտիկեանի ծախքով: Դնում ենք այստեղ Նալբանդեանցի նամակներից մէկը, որի մէջ Թափառական չրէայի թարգմանութեան նպատակի և տպագրութեան հանդամանքներին վերաբերեալ տեղեկութիւններ կան:

« Սիրոյ ողջունով յայտնում եմ, որ մեր Օրագրի թղթատուութիւնը դուրս եկած լինելով հրատարակում ենք այժմ « յայտարարութիւնքը, ահա ուղարկում եմ քեզ մի օրինակ, « որ կարդաս, հոգիդ փառաւորվի ու ցնծաս: Ես քո այս բանի « վերայ ուրախանալուդ անցեալ եկածիդ Ռոսսիկի Վեստնիկ « գրվածէդ գիտեի:

« Հետեւեալ փոշտերով կուղարկեմ մի քանի օրինակ ևս, « որ ցրուես քո ծանօթներին և քո բնական ազգասիրութենովը

գրուած ոտանաւորներն էին, որ նա զրել էր մինչև 55 թ. և 55 թուականին: Տեսնելով, որ իւր գրուածներէից շատ բան սորա նորա ձեռքը անցնելով, կորչում է, նա 55 թուականին իւր ձեռքին եղած բոլոր ոտանաւորները ամփոփում է մի տետրակի մէջ և մի տռանձին յառաջաբանով յանձնում է Տէր-Յարութիւն քահանայ Գեորգէեանին պահելու: «Վերանորոգեալ Հայտնութեան այս Հասակի (տղայութեան) վերաբերած քանի մի յիշատակարանք ունելով իմ մօտ, գրում է նա յառաջաբանում, կամ իմ սեփական մատածողութեան պատուը և, կամ ուրիշից մշակած, որոնց անունը տակերում նշանակած է,

« յորդոր լինիս, որ սորա մասնակից եղողների թիւը շատանայ,
« որպէս զի այս գործը գլուխ գալով, Վենետկեցոց աղբաթը
« խառնվի. այլև, որովհետև. օրագրի տարեվերջումը պէտք է
« չափաւորակենք ո՞ր քաղաքից ո՞րքան մարդ ստորագրվածը, այն-
« տեղ ևս մեր Նախիջևանի անունը թող առաջինն լինի իւր
« ազգասիրութենովը և լուսաւորութիւն սիրելովը քան թէ այլ
« քաղաքներ:

« Սիրական եղբայր, գիտես մեր գիշեր ցերեկ աշխատու-
« թիւնը և ջանքը, ուրեմն դուք ևս ձեր կողմից բան չհասկա-
« ցողներին բան հասկացուցէք և դորանով այս ազգապարծանք
« գործին պատճառ եղէք յառաջ գնալուն: Ներիք է, սրբենք
« մեր վրայից այն ամօթը, թէ լուսաւորութիւնը մեր ազգի մէջ
« պիտոյ է փթած պապական արեղանների ձեռքով մտանէ, նոցա
« լոյսը խաւարից շատ վատ է, վասնորոյ թող իւրեանց պահեն,
« հայոց ազգի մէջ կան այժմ մարդիկ, որ կարող էին հազար
« անգամ լաւ գրել, լուսաւոր, ճշմարիտ և մաքուր, քան թէ
« մի Վենետկեցի արեղայ: Թափառական իմանալ Բերբերեանից թէ ի՞նչ
« դադար, որի մասին կարող ես իմանալ Բերբերեանից թէ ի՞նչ
« պէս խնամատար էի նորա մաքուր, գեղեցիկ և անսխալ տպա-
« գրութեանը: Եղբայր, ես խօսք չունիմ, որ կարողանայի կա-
« տարելապէս յայանել քեզ իմ սրտի շնորհակալութիւնը, պատ-
« ճառ, եթէ այդ գիրքը պէտք է երևի հայոց ազգի մէջ և
« պիտի մի օրինաւոր ընթերցանութեան գիրք դառնայ, մի և նոյն
« ժամանակ պապականների աղբաթը խառնող, դորա պատճառը
« դու էիր: Յոյս ունիմ, որ իմ այս խօսքերս կընդունես, որպէս
« անկեղծ սրտի բղխուածք: Եթէ դու չ'լինէիր մեծահոգութե-
« նով յանձնառու դորա տպագրութեանը, այդ աշխատութիւնը
« պիտի մնար ո՞վ գիտէ, որքան տարի և իմ այնքան տարվայ

կամենում էի նորանց չ'մոտենել յաւերժական կորուստի, ինչպէս մինչև այսօր իմ անհոգութիւնովը իմ զրաժ Բաներից շատերը այս կամ այն կողմը ցրուած կորած են, որոնց անունը ևս օր ըստ օրէ մոռանում եմ: Վասնորոյ ինչքան որ այժմ ձեռքումս ունիմ այս տետրակիս մէջ գրած, աւանդում եմ ձեզ, յուսալով, որ ձեզ մօտ չէ կարող Սատուրնոսը մերձենալ և իմ գրուածներովը իւր սրկորը խճողել: Թէպէտ այս զրուածքը մի երեւելի բաներ չեն, այլ նոր լեզուի տղայութեան հասակի յիշատակաբանք կարող են համարուել»: Այդ բանաստեղծութիւնները, ինչպէս ինքն էլ յիշում է յառաջաբանում, «մի երեւելի բաներ չեն»: Դոքա արդիւնք են հեղինակի ոչ

« ջանքս և տառապանքս պիտի զուր անցանէր, ուրեմն ընդունիր
« իմ անկեղծ շնորհակալութիւնս, որպէս գրաւական մեր անքակ-
« տելի բարեկամութեանը:

« Խնդրում եմ քո մեծահոգի ներողամտութիւնը, որ քո
« յանձնարարութիւնքը փոքր ինչ ուշ եմ կատարում, հաւատա
« Աստուած, որ մոխիր կտրել եմ, դուռնէն գուրս գնալու ժա-
« մանակ չունիմ, համայնարանի գործերը, Թափառական հրէայի,
« օրագրի և վերջապէս Սրբազանի գործերը այնպէս են արել իմ
« դրութիւնը, որ համարեա՛ թէ ամենայն րոպէս հաշուած է:

« Ես գիտեմ քո իմ վերայ ունեցած սէրդ և բարեկամու-
« թիւնդ և յոյս ունիմ որ երբէք բարկանալու չէիր իմ վերայ:

« Սրբազանի գործերը մի կտրողական ընթացք չունեցան
« մինչև այժմ, օր ըստ օրէ սպասում եմք հրամանի, որ ինչ-
« պէս լսում ենք մասնաւոր կերպով պիտոյ է լինի անպատճառ:
« Մի երկու բան կը պատմէ քեզ Բերբերովը: Ուրիշ նոր բան
« չունիմ: Սուլթանին թամամ հազար անգամ ասի, եղբայր, ես
« գոցա խօսք հասկացնել չ'կարողացայ չգիտեմ ի՞նչ է մտքերը:
« Այս ամառ յուլիսի վերջերին կամ կէսերին յոյս ունիմ նա-
« խիջան քեզ տեսնելու:

« Խնդրեմ որչունես իմ կողմից բոլոր մեզ սրտով բարեկամ-
« քը: Ինչ բաների մասին որ Սրբազանը կատարէր, բոլորն ևս
« կլինի, այս օրերս վաճի մասին տնօրէնութիւն կը լինի, միա-
« միտ եղիք:

« Ես գիշեր ցերեկ քուն չունիմ այդ բոլոր գործերի մա-
« սին, քեզ ասում եմ, որ մոխիր եմ դարձել, հիւանդութիւ-
« նիցս յետոյ մի լաւ օրինաւոր առողջութեան երես տեսած չեմ:
« (1857 յունիսի 1. Մոսկվայի մէջ):

այնքան բանաստեղծական բուռն երևակայութեան, որքան հայոց նորաբողոք աշխարհաբառ գրականութեան մէջ ևս, ինչպէս ուրիշ ազգերի նոր սկսուող գրականութեան, զանազան երգեր ունենալու ցանկութեան¹:

«Մինին խօսք, միւսին հարս» վէպը առնուած է Նախիջևանի կեանքից. նորա մէջ Նալբանդեանցը նկարագրում է մի երևոյթ, որ շատ հասարակ բան է մինչև ցայսօր ևս մեր կեանքում: Մի պարոն համաձայնում է իւր աղջկան կնութեան տալ մի երիտասարդի. խօսքը կապում է, և երիտասարդը, Նախիջևանում ընդունուած սովորութեամբ, ուխտ է գնում ս. Կարապետ, որ վերադարձին հարսանեաց հանդէսը կատարէ. բայց նորա բայակայութեան ժամանակ աղջկայ հայրը գրծում է իւր խօսքը և ամուսնացնում է աղջկան մի ուրիշի հետ, ուրեմն լինում է «մինին խօսք, միւսին հարս»: Գրական տեսակէտից այդ վէպը մի ուշադրութեան արժանի բան չէ, որովհետև նա, իբրև վէպ, ամենաթեթև քննութեան անգամ չէ կարող զիմանալ, բայց նա կարևոր է և ունի նշանակութիւն իւր բովանդակութեամբ և պատմութեան ձևով: Նա արժանի է ուշադրութեան հայ ժողովրդի ամուսնական խնդրի վերայ ունեցած հայեացքի՝ արտայայտութեամբ ընդհանրապէս և Նախիջևանի կեանքի նկարագրութեամբ մասնաւորապէս: Այդ կողմից այդ վէպը ոչ այլ ինչ է, եթէ ոչ շարունակութիւն հայկական այն

¹ Բանաստեղծութիւնների այդ հաւաքածուն այժմ պատկանում է Նոր-Նախիջևանի Ս. Հռիփսիմեան դպրոցի ուսուցիչ պ. Յակոբ Բողգանեանին, որին անցել է հանգուցեալ Տէր-Յարութիւն Գեօրջէեան քահանայի որդուց: Դա մի 22 թերթից բաղկացած փոքրադիր տետրակ է, որ իւր մէջ պարունակում է 25 ոտանաւոր, որոնցից չորսը թարգմանութիւն են, իսկ 21-ը ինքնուրոյն բանաստեղծութիւն: Թարգմանած ոտանաւորներն են Լերմոնտովի՝ «Վէճ», «Ոստ Պալեստինու», «Մարգարէ» և Պուշկինի՝ «Չերքեզի երգը»:

ժողովրդական գրականութեան ձևին, որ իւր «Վերք հա-
յաստանի» գրուածքով ստեղծեց անմահ Խաչատուր Ա-
բովմանը: Նալբանդեանցը իւր այդ վէպով հանդիսանում
է իբրև Աբովեանի սկսածի շարունակող, նորա դպրոցի
մարդ, նորան հետևող և աշակերտող: Նամանականդ հե-
տաքերքիւ է վէպի այն մասը, որ նկարագրում է նախի-
ջևանցւոյ ս. Խաչ վանքի պարտիզն ծառերի վերայ հը-
նոտի կապելու սովորութիւնը, վախ չափելը, թեթև թա-
փելը և այլն. հետաքերքիւ է և վէպի յառաջաբանը, որի
մէջ հեղինակը ընդունակ կերպով իւր հայեացքն է յայտ-
նում հայկական հին և նոր լեզուի մասին: Թափառական
հրէայի թարգմանութեան նպատակը այն հակաթիւթիւնն
էր, որ դեռ նախիջևանում ծնւել էր նորա մէջ զէպի կա-
թոլիկութիւնը ընդհանրապէս և զէպի հայ կաթոլիկու-
թիւնը մասնաւորապէս. նորանով նալբանդեանցը նպա-
տակ է ունեցել հարուած տալ կաթոլիկութեան հայ
ժողովրդի մէջ տարածուելուն և ժողովրդի աչքը բանալ
Մխիթարեանների դործունէութեան վերայ, որի մէջ պար-
զամիտ ժողովուրդը չէր կարողանում ջոկել օգտուէտը
վնասակարից: Նոյն նպատակով էր, որ նա յետոյ հիւսի-
սափայլում հրատարակեց և մի մեծ քննադատական յօդ-
ուած «Մխիթար և Մխիթարեանք» վերնագրով¹, որի մէջ
նա լուրջ կերպով քննադատելով կաթոլիկութիւնը, դա-
լիս է այն եզրակացութեան, որ Պապի իշխանութեան ազ-
դեցութեան սակ կաթոլիկ եկեղեցու մէջ ստեղծուել է մի
ստրկական հոգի, որի մէջ չէ կարող լինել ոչ բարբի և
և վարբի մաքրութիւն, ոչ մտքի, ոչ էլ կամքի ազատու-
թիւն: Թափառական հրէայն, որի մէջ շատ գեղեցիկ կեր-
պով պատկերացնում է ճեղուխների արարքը, ինքն ըստ

¹ «Մխիթար և Մխիթարեանք» մեծ յօդուածը կազմուած
է մի քանի առանձին փոքր յօդուածներից և տպուած է հիւսի-
սափայլի 58 և 59 թուականի տետրակներում:

ինքեան արդէն շատ նպատակայարմար էր ատելութիւն զարգացնելու ժողովրդի մէջ դէպի կաթողիկոսութիւնը, բայց Նալբանդեանցը դեռ գորանով չէ բաւականացել, նա իւր թարգմանութեան տուել է և մի յառաջաբան, որի մէջ արձանագրելով Յիսուսեան կարգի հաստատուելու պատմութիւնը, նա հայ ժողովրդին ներկայացնում է ճեղուխո- ների կատարեալ պատկերը, թէև պէտք է այն էլ ասել, որ նա չէ մոռանում մատնացոյց անել և նոյա լաւ կողմերի վերայ: Նալբանդեանցը դեռ թարգմանութեան և տպագրութեան ժամանակ զգում էր այն ազդեցութիւնը, որ այդ զիրքը պէտք է անէր հայ ընթերցողներէ վերայ, և նախօրօք արդէն ժպտում ու հրձվում էր: Նա իւր նամակներէից մէկի մէջ տեղեկութիւն տալով իւր այդ աշխատանքի մասին իւր բարեկամ Գրիգոր Սալտիկեանին, որի ծախսով տպագրվում էր գիրքը, ասում է՝ «պէտք է տեսնես թէ ժիտը ի՞նչ փառաւոր տպվում է փիր փիր- վինտէ և լաւ հասկանալի լեզուաւ. կաթողիկոսների մէջքը կոտրելու է այդ»¹:

¹ Բերում ենք այստեղ այդ նամակը ամբողջութեամբ, բաց թողնելով նորա միջից միայն մասնաւոր գործերի վերաբերեալ տողերը:

«Սիրելի եղբայր իմ Գրիգոր Կարապետեան,

« Գրած նամակներդ ստացել եմ: Նազարեանցի ձեռ-
« քով «ստրախ» գիրք ևս առի. անշափ շնորհակալ եմ, որ
« այդպէս մեծահոգութեամբ յայտնում ես քո ազգասիրութիւ-
« նը: Աղաչում եմ ինձ ներել, որ մինչև այժմ չէի կարողացել
« քո մի քանի յանձնարարութիւնքը կատարել պատճառը ան-
« թիւ զբաղմունքներս են, որ գիտէ Աստուած. տիւ և գիշեր սրբա-
« զանի մօտ, յետոյ ժխտի տպագրութիւնը, ամէն թերթ պիտոյ
« է երեք անգամ սրբագրել: Եղբայր, ես գիտէի քո մեծահո-
« գութիւնը վասնորոյ և այնպէս արել էի, և շատ և անշափ
« շնորհակալ եմ և քաջալերվում եմ, որ իմ ազգի համար աշ-
« խատութիւնս կորած չէ. գոնէ կայ մի մարդ, որ ձանաչում է
« և ինձ օգնական է լինում և ես յոյս ունիմ, որ մեր բարեկա-
« մութիւնը պիտի մինչև գերեզման գնայ և ես իմ այս գրքովը

Բացի այս բազմաթիւ պարապմունքներից, որ նա առաջ գործ էր դնում իւր ուսման, իւր զրաւոր վաստակների, յետոյ և լրագրութեան վերայ, նա ժամանակ էր գտնում և բազմաթիւ նամակներ գրելու իւր Նախիջևանի բարեկամներին, որոնց կեանքը և գործերը նամանաւանդ Հասաքրքրում էին նորան: Մենք գիտենք, թէ ի՞նչպիսի Հանգամանքներում նա թողեց Նախիջևանը. եկեղեցական փողերի Համար յարուցուած Հայրապետեան և Խալիբեան կռիւների ամենաթոււնդ ժամանակն էր գործում: մենք գիտենք նոյնպէս, թէ ի՞նչպիսի ջերմ մասնակցութիւն ունէր նա այդ գործում, բայց ինչպէս նա, Հանգամանքներից ստիպուած, թողեց և հեռացաւ ասպարէզից: Հասկանալի է, ուրեմն, որ նա հեռուում ևս չէր կարող անտարբեր, չէզոք մնալ և պէտք է աշխատէր օգնել իւր կուսակիցներին բոլոր իւր ձեռքից եկած միջոցներով, նամանաւանդ որ Հանգուցեալ Սյւվաղեան Գաբրիէլ վարդապետի այդ ժամանակը Բեսսարաբիոյ թեմին վիճակաւոր նշանակուելովը, գործը աւելի ևս խճճուել էր և վէճը սաստկացել: Կռիւների սաստկանալու պատճառը այն էր, որ Սյւվաղեանը 58 թուականին գալով Նախիջևան, հաշտեցրել էր երկու կուսակցութիւնը, սակայն

« պէտք է արձան յաւիտենական յիշատակի կանգնեմ . քո համար մեր ազգի մէջ. Յոյս ունիմ, որ քո ազգասիրական հոգաբարձութիւնը չի թողու ինձ երբէք անօգնական և յուսահատութեան մէջ, Սիրական եղբայր, Նախարարն Հրաման է գրել ստորոգո. վասն եկեղեցական գումարաց, բայց մեզ ծանօթութիւն չէ տուել ես մասնաւոր կերպով իմացայ: Սրբազանի բոլոր բաների համար այս օրերս, ինչպէս խոստանում է Նախարարութիւնը, պիտի կարգադրութիւն լինի, և այս է պատճառը, որ Սրբազանը սուս է, սպասում է, որ ստանայ իւր վճռական իրաւունքները և ապա գործ կատարէ այնպէս որ ոչինչ անհամութիւնք չ'պատահին: Պէտք է տեսնես թէ Ժիտը ի՞նչ փառաւոր տպւում է, փիր փիրվենտէ և լաւ հասկանալի լեզուաւ. կաթովիկների մէջքը կոտրելու է այդ »: (29 Մայիսի 1857. Մոսկվայի մէջ):

լիովին բաւականութիւն չէր տուել Հայրապետեան կողմին, ուստի և Հայրապետեանցը իւր մի քանի զխաւոր կուսակիցների հետ միասին հաշտութեան պայմանաթղթի տակ ստորագրել էր՝ «յօժարիմ հիմնաւոր հաշտութեան», իսկ այդ հիմնաւոր հաշտութիւնը գլուխ չէր եկել, որովհետեւ Սյւվազեանը Խալիբից 50 հազար ռուբլի առձեռն պատրաստի գումար և Խալիբեան ուս. Խաչի դպրոցները իւր հաշուով շինելու խոստումն առնելով, բաւականացել էր դորանով, չենք ասում արդէն այն, որ այդ փողը Նախիջևանից դուրս գործ ածելով, ս. Խաչի դպրոցը բոլորովին չշինելով, իսկ Խալիբեանը Թէոդոսիայում լինելով, դորանով աւելի ևս զրգռել էր Հայրապետեանց անբաւականութիւնը և ինքը կամայ թէ ահամայ կուսակցութեան մարդ դարձել Նալբանդեանցի ձեռքից եկած միջոցները իւր հզօր ու ազգու գրիչն էր, որ նա իւր բոլոր ոյժով գործ դրեց ժողովրդի դատը պաշտպանելու։ Մէկ կողմից նա մամուլի մէջ քննադատում էր Սյւվազեանի գործունէութիւնը, սկզբունքի խնդիր շինելով նորա առաջնորդութիւնը, միւս կողմից նա իւր նամակներով ողորդում էր Նախիջևանը, իւր բարեկամներին ու կուսակիցներին ընդհանուր խորհուրդներ տալով և գործելու եղանակը ցոյց տալով։ Իւր մէկ նամակի մէջ նա հիտեհալ կերպով է ամփոփում բարեկամներին տուած իւր այդ ընդհանուր խորհուրդները՝ «Միայն այսքան իմացէք, որ դուք միաբանվելով շատ բան կարող էք առնել, իսկ միմեանցից հեռանալով ամենքդ ևս ջոկ ջոկ կակարանաք, աշխարհս որ կայ, միաբանութեամբ կայ, եթէ այն նիւթերի միաբանութիւնը քակտուի աշխարհս ևս կքանդվի. այս բաները լաւ հարկաւոր է իմանալ և իմացածը գործ դնել խելօք կերպով, պէտք է այր մարդու սիրտ ունենալ և կին չ՛դառնալ, և եթէ մենք կամենայինք, որ մեզ ուրիշները պատվէն պէտք է, որ նախ և յառաջ մենք մեր

անձը պատուենք, եթէ այս չենք կատարում մենք, կանարգենք մեր անձը և պատճառ կրտանք ուրիշներուն ևս անարգել մեզ»¹: Բայց այդ բոլորով նախանգնանքը չէր բաւականանում, նա իւր բնաւորութեան յատուկ առանձնայատկութեամբ, որի վերայ մենք առիթ ունեցանք շեշտելու, գործը միշտ ծայրայեղութեան էր հասցնում և շատ անգամ գործին անձնական կլբի բնաւորութիւն էր տալիս: Նա քայլ առ քայլ հետևում էր իւր հակառակորդներին, նկատում էր նոյա բնաւորութեան թոյլ կողմերը, նոյա անձնական պակասութիւնները և իսկոյն այդ բոլորը ծաղրի նիւթ ու առարկայ էր անում և յաճախակի մինչև անգամ մամուլի մէջ էր մտցնում կամ նամակաձև թղթերով տարածում ժողովրդի մէջ: Իւր յիշատակարաններէյ մէկի մէջ, օրինակի համար, նա սուրում է իրեն ուղղած մի անստորագիր նամակ, որի մէջ պատ-

¹ Դնում ենք այստեղ այդ հետաքրքիր նամակը համարեա թէ ամբողջութեամբ:

« Պատուելի եղբայր Գրիգոր Կարապետեան,

« Յայտնում եմ հղբայրութեանդ, որ Ապրիլի 3-ին գրած
« սիրոյ նամակդ ստացայ և ինչ որ գրել էիր կարդացի իմացայ,
« ինչ որ կամենում էիր ահա ուղարկեցի տե՛ս և ինչպէս պէտք
« է այնպէս գործ կատարէ, յոյս ունիմ, որ կատարվի ցանկու-
« թիւնդ: Շուտով կստանաս ինձանից մի այլ գիր այսինքն երկու
« շաբաթից կամ տասն օրից, նորա մէջ կկարդաս դու ևս նոր
« բան, ինչպէս ինձ դու քո կողմից գրել էիր, այժմ չեմ ա-
« սում, որովհետև սպասելու բան կայ, միայն այսքան իմացէք,
« որ դուք միաբանվելով շատ բան կարող էք առնել, իսկ մի-
« մեանցից հեռանալով ամենքդ ևս ջոկ ջոկ կտկարանաք, աշ-
« խարհս որ կայ, միաբանութեամբ կայ, եթէ այն նիւթերի
« միաբանութիւնը քակովի աշխարհս ևս կքանդվի. այս բաները
« լաւ հարկաւոր է իմանալ և իմացածը գործ դնել խելօք կեր-
« պով, պէտք է այր մարդու սիրտ ունենալ, և կին չ'դառնալ,
« և և եթէ մենք կամենայինք, որ մեզ ուրիշները պատուենք, պէտք
« է, որ նախ և յառաջ մենք մեր անձը պատուենք, եթէ այս
« չենք կատարում մենք, կանարգենք մեր անձը և պատճառ կը-
« տանք ուրիշներուն ևս անարգել մեզ: Եղբայր սիրելի, այժմ

մուտ է «մի հազուադիւս քաղաքավարի մարդու» մասին մի փոքրիկ պատմութիւն, որ իւր զուարճալի բովանդակութեան զիմակի տակ պարունակում է կճու ակնարկներ Մոսկուայի յայտնի մի անձնաւորութեան վերայ:

«Այս քաղաքավարի մարդը, պատմվում է նամակում, երեկոյեան ժամանակի խնդրեց ինձ և իմ բարեկամիս, որ թէյ խմելու գնանք իւր մօտ, յօժարութիւն ցոյց տուելինք և գնացինք: Երբոր դռնից ներս մտանք, մեղ հիւրասիրողը առկայտացաւ միւս սենեակներում, և ես իմ բարեկամի հետ մնացինք միայն, սպասելով դործի կատարածին: Երկար ու ձիգ սպասելուց յետոյ յանկարծ երեւցաւ քաղաքավարի մարդը, բայց ի՞նչ դրութեան մէջ, զարմանալի բան: Սորա կինը չիմանալով, որ այրը հիւրեր է կանչելու, ջուր է պատրաստել, որ լուանայ իւր ամուսինը, իսկ երբ ամուսինը ներս է մտնում, կինը ամենեին ուշադրութիւն չ'դարձուցանելով ներկայ հանգամանքների վերայ, հարկադրում է ամուսնուն լուացվել. ինչ պիտոյ է առնէր, կամայ ակամայ յօժարում է: Մեր, իմ բարեկամի հետ առանձնութեան միջոցին, միւս սենեակումը բաղանիքի

« այնպիսի ժամանակ է, որ ամենայն մարդ, ամենայն տուն, ամենայն քաղաք և հասարակութիւն ինքը իւր խելքը գլուխը բերած պիտի մտածէ իւր անցածը, ներկայն և ապագայն. պիտի չափէ օգուտը, որ կարող էր լինել իւր խելացի կերպով քաղութեամբ գործ կատարելուց, պիտի չափէ նոյնպէս վնասը, որ կարող էր հասնել անխելութիւնով և երկչոտութիւնով կնիկ մարդու նման գործ կատարելուց, Աշխարհի լուսաւորութիւնը ծայրն է հասած, և մի՞թէ մենք այնքան անարգ մարդիկ ենք, որ մինչև այնքան տեղը լինինք հասած, որ չ'կամենանք գոնէ ճանաչել լոյսը և խաւարը, սահմանել երկուսի դանազանութիւնը, որոշել չարը և բարին, Խնդրեմ միւս անգամ գիր գրելու ժամանակ յայտնես ինձ, ի՞նչ եղաւ մեր վարժապետի (Տէր-Գրորիէլ Պատկանեանցի) գործը, յոյս կայ փրկութեան, կամ ողջ առողջ է և գործը ի՞նչ դրութեան մէջ է: Այս անգամ այսչափ գրով բաւականացիր, հետեւեալ անգամ կգրեմ բոլորովին այլ բանի մասին. (19 Ապրիլի 1856, Մոսկվա) »:

Հանդէս է կատարուել, և արդարեւ քաղաքավարի մարդը երևեցաւ շէմքի վերայ կարմիր, ճերմակ, թաց մազերով, լուացող կինը քամակից»¹: Տիւր գնացողը ինքը Նալբանդեանցն է, որ իբր թէ մէկ օր այցելելով **... ամուսիններին՝ քաղաքավարի մարդուն և լուացող կնոջը, գտել է նոցա բալանիքի Հանդէս կատարելիս, այսինքն կինը լուանալուս է եղել մարդու գլուխը: Ասում են Նալբանդեանցը չի բաւականացել միայն այդ դէպքը իւր յիշատակարանի մէջ արձանագրելով, այլ և նոցա անքաղաքավարի ընդունելութեան պատասխանել է նոյնպէս անքաղաքավարի կատակով:

Մենք ասացինք, որ Նալբանդեանցը իւր Հակառակորդների դէմ սովորութիւն ունէր և նամակաձև թղթեր տարածել ժողովրդի մէջ: Մեր ձեռքը Հասել է այդ թղթերից մէկը, որ ուղղուած է Սյվազեանի այն շրջաբերականներից մէկի դէմ, որ վարդապետը սովորութիւն էր արել յաճախակի արձակելու իւր թեմի Հայ Հասարակութիւններին: Մեզ անյայտ է, թէ ի՞նչ բովանդակութիւն է ունեցել այն շրջաբերականը, որի դէմ ուղղուած է այդ թուղթը, բայց 'ի նկատի առնելով թղթի մի քանի տեղերը, կարելի է եզրակացնել, որ շրջաբերականում խօսվում է եղել առաջնորդի և կաթողիկոսի յարաբերութեան մասին: Պէտք է կարծել, որ այդ այն շրջաբերականն էր՝ որի մասին Ղազարոս Աղայեանը իւր «Իմ կեանքի գլուխը դէպքերը» աշխատասիրութեան մէջ ասում է՝ «Այս դիրքի մէջ ևս այնքան գոռուղացաւ (Սյվազեանը), որ չուզեց խոնարհել իւր Հովուապետին—Մատթէոս կաթողիկոսին, որի դէմ մինչև անգամ մի շրջաբերական բողոք հրատարակեց իւր թեմի մէջ, բայց սրբալոյս կաթողիկոսը

¹ Տես «Յիշատակարան Կոմս Էմմանուէլի օրագրութեան թերթերից», «Տիւրսիսափայլ» 1858 թ., 4 տետրակ, էջ 344:

կարողացաւ նորա եղջիւրները ջախջախել և նախկին Սյվաղեանին շինել մի խրտուխրակ»¹:

Թուղթը գրուած է շատ լուրջ կերպով և նպատակ ունի բանալ ժողովրդի աչքերը Սյվաղեան Գարրիէլ վարդապետի գործունէութեան վերայ և ցոյց տալ այն չարիքը, որ կարող է առաջ գալ առաջնորդի դէպի Մայր Աթոռը և դէպի նորա Սրբազան գահակալը բռնած դիրքից: «Անցեալ օրերում, գրում է նա այդ թղթում, մեր եկեղեցու բեմից կարգաւորեց Սյվաղեան վարդապետի թուղթը, որով դառնում է նա դէպի ժողովուրդը և ինքն իրան անթիւ գովասանութիւններ տալուց յետոյ (եթէ ուրիշները չեն գովում, բաս ի՞նչ անի) ընդդէմ մեր եկեղեցւոյ դարևոր աւանդութիւններին մի օրինակ յանդրգնութեամբ ձեռն ա. բեմից գրգռում է դէպի անհնազանդութիւն Գրիգորի Լուսաւորչի Աթոռակալին: Ձեր լռութիւնը այդպիսի ապստամբուած գործի դէմ, տեղի կտայ էսօր Սյվաղին, էգուց՝ Կիրակոսին, միւս օրը՝ Մարկոսին պատերազմ քարողել մեր ս. Աթոռի դէմ և պատրաստել այն Հերձուածի և բաժան բաժանութեան անդունդը, որ սպառնում է կուլ տալ մեր ազգի կորած մնացած փառքի վերջին նշխարքը: Թէև նա Հիմնվում է իբր՝ կայսերական օրէնքի վերայ, բայց ոչ մի կայսերական օրէնք թոյլ չի տալի մի որ և իցէ աբեղայի եկեղեցու բեմիցը գրդռել ժողովուրդը իւր հոգեւոր զլխի դէմ, կամ աւելի պարզ ասել՝ իւր եկեղեցու անկախութեան դէմ: Հայեր, եթէ տակաւին չէք տմաջում պարծենալ ձեր կրօնի անկախութիւնովը, եթէ տակաւին ձեր սրտի խորքում մընայեղ է այն սուրբ զգացմունքը, որ մի ժամանակ ոգի էր տալիս ձեր ազգին և կրօնի պաշտպաններին—չլպէտք է թոյլ տաք, որ մի սեահոգի (հազար փմստ), հաւատար

¹ Տես «Մուրճ» 1893 թ. համար 6. էջ 394—395.

օրացոյց շինող եղուիա արեղայ իւր կեղտոտ ոտերով կոխի ձեր ազնիւ սրտերը և կտրատի ձեր կրօնի այն սուրբ կապը, որ Համարեա՝ միայն պահել է մինչև այսօր Հայի ազգութիւնը:

Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,

Գառնազգեստ գալլը մեզ զլուխ դառաւ.

Սցւրբ խորան պղծեց, արդ հւր աղօթենք—

Հիմի էլ լոնք.

Սյւլազեանը, Լոյսլայի Հարազատ Ժառանգը գօլով ամենայն կողմից, ուղում է ծածկել իւր կոշտ և կոպիտ երկպառասիրութիւնը, փառամոլութիւնը, ապստամբութիւնը հեռեւեալ փափուկ խօսքերով թղթի վերջում, իբր «Հնազանդեցէք էլի ս. Աթոռին, Աթոռակալին...» Բայց չ'խաբվէք, եղբարք, զլիաւոր միտքը սկզբումն է և բոլոր թղթի բովանդակութիւնում: Սյւլ այն օրօրն է, որով երեխային քնայնում են¹:

¹ Այս թուղթը թէև անստորագիր է, բայց շարադրուածքի եղանակից, լեզուից և ոճից հեշտութեամբ կարելի է ճանաչել, որ Նալբանդեանցիներն է. Ստորագրութեան բացակայութեան պատճառը, գուցէ, այն է, որ փոստի կապոյտ թուղթը, որի վերայ գրուած է, կիսով չափ պատռուած է. թուղթը կրում է իւր վերայ. «Ընդունելութիւն Սյւլազի կոնդակին» վերնագիրը, Յայտնում ենք հրապարակով մեր շնորհակալութիւնը րժ. Մնդրէաս Սալտիկեանին, որ թէ այս թուղթը և թէ Կոմս Էմմանուէլի «Մեծ մայր» ոտանաւորի բնագիրը բարեհաճեց մեզ ընծայել: Մեծ մայրը տպուած է հիւսիսարիայի 58 թուականի 6 տետրակում. էջ 500—503:

ԳԼՈՒԽ Է.

Նալբանդեանցի իւր պարապմունքների վերայ գործ դրած տաժանելի աշխատանքը:—Նորա առողջութեան խանգարուիլն ու ֆեասուիլը:—Նորա արտասահման գնալը, օտար երկրների կեանքի ուսումնասիրութիւնը:—Նորա արտասահմանից դրած նամակները և վերագարծը:—Նալբանդեանցի և Նազարեանցի մէջ պատահած դժաւութիւնը և նորա պատճառները:—Նալբանդեանցի Մոսկուայից Պետերբուրգ փոխադրուելը և կանդիդատի քննութեան պատրաստուիլը:

Նալբանդեանցը վեց տարի (1853 — 1859) մնաց Մոսկուայում և այդ բոլոր ժամանակամիջոցը, կարելի է ասել, առանց ձեռք ծայելու, անց կացրեց անընդհատ զբաղմունքի և տաժանելի աշխատանքի մէջ, որով և բոլորովին խանգարեց իւր առողջութիւնը և թուլացրեց իւր առանց այն էլ հիւանդոտ կուրծքը: Հայոց լեզուի ուսուցչութեան իրաւունք ձեռք բերելու աշխատանք, միամեայ ուսուցչութիւն Լազարեան ձեմարանում, բժշկականութիւն ուսանելու պարապմունք, անընդհատ նասողական կեանք իւր զրականական վաստակները հրատարակելու և հիւսիսափայլին աշխատակցելու համար, իւր ուսման թերին լրացնելու և զարգացման գործը առաջ տանելու անձնական ճիգն ու պարապմունքը, չենք ասում արդէն այն բարոյական զրկանքների մասին, որ դոցա հետեանքն էին, — սորա այնպիսի աշխատանքներ էին, որ կարող էին Ֆիզիքապէս թուլացնել ոչ միայն այնպիսի թոյլ մարդուն, ինչպիսին Նալբանդեանցն էր, այլ և աւելի առողջ և զիմացկուն անձնաւորութիւն: Եթէ նա, գոնէ, ունենար այնքան նիւթական կարողութիւն, որ իւր բազմութիւ և տաժանելի զբաղմունքների մէջ կարողանար իւր համար կեանքի և ապրուստի յարմարաւոր պայմաններ ստեղծել, գեռ, գուցէ, անվնաս մնար և նորա հիւանդութիւնը վտանգաւոր բնաւորութիւն չստանար, բայց

յաւն էլ հէնց այն էր, որ նա միշտ կարօտութեան մէջ լինելով, միշտ իրեն զրկելով կեանքի ամենամահաւոր յարմարութիւններէ, ինքն էլ իւր կողմից աւելի էր նըպաստում իւր հիւանդութեան զարգանալուն:

Մենք խօսելով նալեանդեանցի նիւթական միջոցների մասին, ասել էինք, որ նա դեռ նախիջլեանում եղած ժամանակ ստիպուած էր ինքը իւր ապրուստը հոգալու, Մատթէոս Սրբազանի մօտ քարտուղարութեան պաշտօն կատարելով: Մոսկուայում թէև նա իւր դրութիւնը ձեմարանի ուսուցչութեամբ մի տու ժամանակ ապահովեց, բայց այդ ապահովութիւնը, ինչպէս մենք տեսնեք, շատ կարճատև եղաւ: Այնուհետև նա մեծ կարօտութեան մէջ ընկաւ. նա իւր զրբերից, զրաւոր վաստակներից համարեա՞ ոչինչ չէր ստանում, ոչինչ չէր ստանում և հիւսիսափայլէն աշխատակցելուց: Նորա ապահովութեան միակ աղբիւրը Մատթէոս սրբազանն էր¹, որ այդ ժամանակ, վերը յիշած հաս պսակադրութիւնը կատարելու պատճառով, վախենալով վերադառնալ իւր վիճակատեղին, մեծաւ մասամբ ապրում էր մայրաքաղաքներում, զլիաւորապէս Մոսկուայում, և ընկած տեղը միշտ օգնում էր իւր մտերմին: Ծիշտ է, նորան կողմնակի կերպով օգնում, նորա զրբերը տպում և մինչև անդամ բժշկութեան համար փող էին ուղարկում և նորա նախիջլեանի բարեկամները՝ հայրապետեանցը և Սալաիկեանցը, բայց անկասկած այդ բոլորը շատ քիչ էր յարմարաւոր ապրուստ ստեղծելու համար, նամանաւանդ որ ինքն էլ անձնասէր մարդ լինելով, շատ անգամ էլ իւր նեղ դրութիւնը իւր բարե-

¹ Մատթէոս սրբազանի պղպխի դրութիւնը շարունակուեցաւ մինչև Ներսէս կաթողիկոսի մահը, նա այնուհետև 57 թուականի վերջերում փոխադրուեցաւ հաշտարխան, իսկ Բեասարաբիոյ առաջնորդ Նոյն թուին նշանակուեցաւ Այվազեան Գարրիէլ վարդապետը:

կամներից ծածկում էր: Եւ նորա առողջութիւնը գնալով վտանգվում էր և Ֆիլիքական զօրութիւնը քայքայվում: Հիւանդութեան սաղմը արդէն կար նորա մէջ. ժամանակին ուշադրութիւն չդարձնելով, Հիւանդութեան առաջը արմատական կերպով չառնելով, արագ-արագ պատրաստվում էր այն հողը, որի վերայ պէտք է զարգանար նորա դերեզման տանող սարսափելի ախտը: 58 թուականի վերջերում և 59-ի սկզբներում՝ նա իրեն արդէն այնքան վատ է զգում, որ իւր բարեկամների խորհրդով ու օրնութեամբ մտածում է գնալ արտասահմանի հանքային ջրերը: Բըժշկուելու ցանկութեան հետ միասին նորան մղում է դէպի արտասահման և այն միշտ ուսանելու և կատարելագործուելու առանձին ցանկութիւնը, որ չթողեց նորան մինչև վերջը: 59 թ. մարտի 24-ին նա զուրս է գալիս

¹ Դնում ենք այստեղ Նալբանդեանցի երկու նամակը, որոնց մէջ հանգամանօրէն մեկնուած է նորա արտասահման գնալու նպատակը և պատճառները:

Սիրական եղբայր Գրիգոր Կարապետեան,

« Երկու նամակդ, մինը Նախիջևան հասածովդ, իսկ երկ-
« րորդը մարտի երեքից, ստացայ անկորուստ և ինչ որ գրել էիր
« կարգացի տեղեկացայ:

« Քո գնալուց յետոյ, մինչդեռ Մոսկվա էին դեռ ևս պ.
« Ալեքսանովն և պ. Պոպովն, ես հիւանդացայ և պառկեցայ 18
« օր մեծ նեղութեան մէջ, վերջապէս Աստուած ողորմեցաւ և
« լաւացայ մին փոքր: Ահա գիր չ'գրածիս պատճառը. Երբ որ
« դու գնացիր այստեղից, խոստանալով հասուցանել ինձ 250
« մանէթ, և երբ զգացի ես կարօտութիւն դրամի, իսկոյն պ.
« Սատայից փոխ առի 1 ամիս ժամանակով այդ դրամը և հա-
« սուցի որոնց արժանն էր սպասելով քո մեծանձն օրնութեանը,
« բայց ինչպէս տեսանում եմ այժմ՝ պիտի մի մարդուց առնուլ
« և տալ նորան. պատճառ շուտով գնալու է, մի գուցէ քո
« ուղարկելու փողը դեռ ևս ուշանայ. ահա եղբայր իմ, իմ որ-
« պիտութիւնը. Ես անչափ շնորհակալ եմ քեզանից և մինչև
« իմահ մոռանալու չեմ քո սէրը իմ վերայ: Խնդրում եմ, որ
« ինձ հասուցանելու 250 մանէթը (աւելի չեմ համարձակվում
« խնդրել) ուղարկես պ. Նաղարեանցի անունով, նա կ'ըստնօրինէ
« ըստ պատկանելումն, էզուց փոշտան մին ստրախավոյ գիր կու-

Մոսկուայից և Վարսովայի վերայով անցնում է ստՀմանը, պտտում է Հանքային ջրերը, այցելում է արտասահմանի մայրաքաղաքները՝ Բերլինը, Վիեննան, Հոմբուրգը և զխաւորապէս Պարիզը, որ թէ իբրեւ մի տեսակ համաշխարհային կենտրոն և թէ հայ զաղութների զխաւոր մտաւոր կենտրոններից մէկը, նամանաւանդ զբաւում էր նորա ուշադրութիւնը: Պարիզումն էր Արեւելեան կինդանի

« տամ, բայց նա ուշ կստանաս, բայց այս գիրս ստացածովդ
« իսկոյն տնօրէնութիւն գործես փող հասուցանելու, հիմնաւոր
« պատճառը կիմանաս միւս նամակիցս:

« Ես իմ տկարութեան պատճառով, խորհրդով Վաւրկինսկուն
« և Գլեբովին գնում եմ սահմանից դուրս, այս բանը հարկա-
«ւոր էր իմ կեանքը փրկելու համար... մանրամասնութիւնը
« այս բաների էգուցվայ նամակիցս կիմանաք:

« Ես Աստուծոյ յաջողելով մարտի 24-ին երեկոյեան 6^{1/2}
« ժամին դուրս կերթամ Մոսկվայից դէպի Վարշաւ... իմ հո-
« գաբարձութիւնը յանձնելով իմ բարեկամներին և Նախախնա-
« մութեանը:

« Լազարեանք քո նամակը և միւս բանը իսկոյն ուղարկել
« են Սովալը. և ինչպէս ասում է էջովը զեռ ևս չկարգացած
« պ. հայրապետեանցը այնպէս գիտէ, որ մի օրինակ մեննի մենք
« քո հետ տուել ենք Սիվերսին. ես արդարեւ հասուցել եմ
« Սիվերսին այդ բանի օրինակը, բայց ասացի թէ քո հետ միա-
« սին Մոսկվայից ուղարկեցինք տաքլատնոյ զարխայով, նայէ
« չխայտառակես ինձ, այդպէս սրայ էր:

« Իմ գնալուս համբաւը, որ Նախիջևան տարածվի գնա-
«ւուցս յետոյ, խնդրեմ մերոնց միամտացնես, թէ ես ողջ և
« առողջ եմ և թէ բան ուսանելու գնացել եմ զազրանից, որ
« խեղճ մայրս հոգս չառնէ. և գնալուս մասին առ այժմ ոչոքին
« բան չասես, ոչոքին ամենեւին, ոչ թշնամու և ոչ ամենամերձ
« բարեկամի, այդպէս հարկաւոր է, մինչև որ ստանաս ստրա-
« խավոյ նամակս:

« Հիւս. 1 տետր. ստացած կլենիք, 2, էգուց փոշտ կլնկնի.
« 3-ը ամոյս 20-ին փոշտ կլնկնի. Ապրիլի 15-ին կստանաք չոր-
« րորդը կտակներով հանդերձ (1859, Մարտի 16, Մոսկվա)»:

« Սիրական եղբայր Գրիգոր Կարապետեան.

« Յոյս ունիմ, որ Մոսկվայից գրած նամակս ստացած կլի-
« նիս մինչև այժմ և խնդիրքս կատարած, ըստ որում մեծ է
« իմ յոյսս քո բարեկամութեան և մարդասիրութեան վերայ:

լեզուների դպրոցը, իւր Հայոց լեզուի ամբիոնով, Պարիզումն էին արեւելագէտները և հայագէտները, Պարիզումն էր Հայոց դժբաղդ Լեոնի գերեզմանը, Մուրատեան վարժարանը, հոգեւորքի մէջ զանուոգ հայկալնեան վարժարանը և, վերջապէս, «Արեւմուտք» երկշաբաթաթերթը, որ նոյն 59 թուականի Յունուարից սկսել էր հրատարակել նախկին «Արեւելքի» խմբագիր Սաեփան Ոսկանեանը¹։ Թէ

« Ես խոստացած ստրախովոյ նամակս չ'կարողացայ գրել, որովհետեւ մարտի 24-ին դուրս եկայ Մոսկվայից և այսօր հասայ Վարսովիա, իմ տկարութեան պատճառով հարկաւոր համարվեցայ մի քանի ժամանակ դուրս գամ Մոսկվայից դէպիօտար աշխարհ, ի հարկէ դուն լաւ գիտես իմ տկարութեան որպիսութիւնը և յոյս ունիմ, որ ամենայն բան այնպէս լաւ կերթայ, որ թշնամիք ամօթապարտվին։ Կարդացած կլինիք Մեզի 10 համարի իմ նամակիս պատասխանը, որ գրել է պ. Վալասանեանցը, ես երկու օր մնում եմ Վարսովիա, որ հարկ. մերժողութիւնը գրեմ (опровержение) և ուղարկեմ հիւսիսափայլին, թող այնտեղ տեսանեն նորա խայտառակութեան հանդէսը, ես նոցա ցոյց կտամ իւրեանց հօր հարսանիքը. հանգիստ կացիր, եղբայր, մեք այդպէս կիրակոսներու լեզուի տակ չենք մնալու, Աստուած ողորմած է ճշմարտութիւնն մերն է և նա կպահէ մեզ։

« Ես Բեռլինից կամ Վեննայից դարձեալ կըգրեմ և դու առ ժամանակ մինչև իմ հասցէս կարողանամ ուղարկել, եթէ կամենաս ինձ նամակ գրել, ուղարկիր պ. Նազարեանցին, նա Արեւմուտքի հրատարակողն ձեռքով ինձ կըհասուցանէ։ Կտակը իւր յառաջաբանով և վերջաբանով վաղուց ուղարկված է ցենսզօրին, այժմ ի հարկէ պտացաւ և կըտպվի փառաւոր 2 N. Յիշատակարանն ի հարկէ կարդացիր, թող պ. Շամիրը իւր Խալիլ Նայիբին մի հոգւոց ասէ։

« Իմ առողջութիւնս այս րոպէիս այնպէս է ինչպէս թողել էիր Մոսկվայում, բայց հանքային ջրերը յոյս ունիմ, որ առողջութիւն տան ինձ։ Եթէ այնպիսի բաներ ունենաս, որ հարկաւոր էին տպվել հիւսիսափայլի մէջ, դոցա մասին երկու խօսքով ինձ գրէ այնուհետեւ Տէրս գիտէ։ (13 մարտի 1859, Վարսովիա)։

¹ «Արեւելք» կիսամսեայ թերթը, որ մեծ եռանդով պաշտպանում էր Մուրատեան կտակին վերաբերեալ ազգային դատը, հրատարակուեց միայն 8 ամիս, 1855 թուականի Յունիսի մէկից մինչև 1856 թուականի Յունուարի 15-ը, իսկ «Արեւմուտքը» —

ինչ ազդեցութիւն է անում, ինչ տպաւորութիւն է թողնում նորա վերայ արտասահմանը—այդ կարելի է տեսնել այն երկու յիշատակարանից, որոնցից մէկը նա գրել է Հեսսեն-Հոմբուրգեան կոմսութեան նոր մայրաքաղաք Հոմբուրգից, միւսը Պարիզից: Չպէտք է վարմանալ այն հանգամանքի վերայ, որ իւր բոլոր ճանապարհորդութեան ժամանակ նա միայն այդ երկու յիշատակարանաձև նամակն է ուղարկել Հիւսիսափայլին: Արտասահմանեան կեանքի տպաւորութիւնները այնքան զանազանակերպ, շատ ու բուռն են եղել, որ նա միանգամայն ճնշուել է նոցա տակ: Նա ոգևորուած իւր տեսածով ու լսածով, յափշտակուած կարճ ժամանակում ամեն բան մէկ անդամից տեսնելու և ուսումնասիրելու ցանկութեամբ, ժամանակ չէ ունեցել իւր ժողոված տպաւորութիւնները ստէպստէպ հաղորդել իւր ընթերցողներին: Նա միայն մի ամիս հանքային ջրերում դեղերելուց յետոյ, բոլոր միւս ժամանակամիջոցը անցրել է երկար ճանապարհորդութեան մէջ, թիթեռնիկի պէս անդադար մի քաղաքից դէպի միւսը, մի երկրից դէպի մի ուրիշը թռչելով, նամանաւանդ որ ստացած տպաւորութիւնները ևս շատ քիչ յարակցութիւն ունէին հայկական կեանքին: Սորա վերայ պէտք է աւելացնել և այն, որ այդ բոլոր ժամանակը նա այնքան

երեք տարի 1859, 64 և 65, բայց միայն առաջին տարին կտրողացաւ ամբողջացնել իւր համարները, իսկ միւս երկու տարին կիսատ թողնց, Տես Գրիգորիս Վ. Գալէմբեարեանի Վատմութիւն հայ լրագրութեան աշխատասիրութիւնը. էջ (156—157 և 189—192): Նալբանդեանցը Պարիզում համակրելով Ոսկանեանի գործունէութեան, մտերմանում է նորա հետ: Պէտք է ասել, որ այդ հրապարակախօսները շատ նմանում էին միմեանց: Ոսկանեանն էլ Նալբանդեանցի պէս սուր գրիչ ունէր, նորա պէս ընդունակ, աղնիւ ու սրամիտ էր. նա ինչ եռանդով Վարեելքում, պաշտպանում էր Մուրատեան կոտլի դատը, նոյն եռանդով Արևելքում յարձակվում էր այնտեղի Յակոբ աղա Կոճիկեանի և Պօլսի ամիրաների վերայ և դատաւիտում էր Այվազեան և Շահնազարեան վարդապետներին:

Թոյլ ու հիւանդ է եղել, որ դժուարացել է ոչ թէ զրաւոր աշխատանքով պարապելու, այլ և մինչև անգամ զրիչ բարձրացնել: Վերոյիշեալ երկու նամակն էլ գրում է միայն այն ժամանակ, երբ «բարոյական յոժը յաղթահարում է նորա Ֆիզիքական թուլութիւնը և զօրացնում է նորա ջղերը, երբ, վերջապէս, դադարում է կարմրագոյն և ջերմ հեղանիւթի շատրուանը, որ այնպիսի յորդութեամբ դուրս էր զարկում նորա թոքերից և նա սկսում է՝ ազատ շունչ առնել»: «Երկար և անդադար ճանապարհորդութիւնը Եւրոպայում, ամսօրեայ ժամանակով դեգերվելը հանքային ջրերում, տկարութեան կատաղաբար զայրանալը և սորանից պատճառուած աննկարագրելի Ֆիզիքական թուլութիւնը, գրում է նա այդ մասին իւր առաջին Յիշատակարանում, համարեա թէ զրկել էին ինձ կարողութիւնից զրիչ վեր առնուլ: Միւս կողմից բիւր նորանոր տպաւորութիւնք պատերազմ բանալով ուղեղիս մէջ, աշխատում էին իւրաքանչիւրքը առաջին տեղը բռնել Յիշատակարանումս. բայց ես թողնում եմ՝ նրանց, մինչև որ մի փոքր նստի նոցա ջերմութիւնը, որպէս զի սառն աչքով կարողանամ նկատել նրանց, մանաւանդ որ այդ բաները համարեա թէ յարակցութիւն չունին իմ նուիրական ազգային խորհուրդների հետ: Ինչ օգուտ ինձ Լոնդոնի հսկայական կերպարանքից, ինչ օգուտ Պարիզի փառաւոր և զեղխ դէմքից, Բեռլինի և Գերմանիայի մտածող և փիլիսոփայական պատկերից, մինչ նոցա հետ միասին աչքիս առջև են գալիս սուերակ հայաստանը, ցիրուցան ժողովուրդը, անդոստիարակ և նիւթապաշտութեան հօգուով զործականապէս տաշված սղզի զաւակները, անխորհուրդ և տղայական փառասիրութեամբ հիւանդ, միակողմանի, ուսումնական անուանված պարոնները, որ թիթեռնակի պէս թռթռում են ճրագի չորս կողմով, երբ սա երևում էր հայկական թանձր խաւարով պատած

խոնաւ զետնափորի մէջ...¹»։ Դատարկ նորասիրութեան փափազը չէր, որ ստիպում էր նորան այդպէս անդադար թափառել օտար երկրում, մեծամեծ քաղաքների փողոցները չափափելու սին ցանկութիւնը չէր, որ նորան ձգում էր Բեռլինից հոմբուրգ, Վիէննայից Պարիզ և Պարիզից Լոնդոն, այլ այն անյաղ ուսանելու և կատարելագործուելու ձգտումն, որ նորան նախընտանից տարաւ Մոսկուա, Մոսկուայից Պետերբուրգ և, վերջապէս, ձգեց նորան արտասահման։ «Մի նոր քաղաք մասնելով, գրում է նա իւր երկրորդ Յիշատակարանում, ես ոչ միայն անարժան, այլ և ամօթ եմ համարում փողոցներ չափել դատարկ նորասիրութեան պատճառով։ Ես չտեսած հաւատում եմ, որ կայսրների, թագաւորների և դուքսերի ապարանքները բոլոր մահկանացուների բնակարաններից ամենափառաւորքն են։ Այո, ես զնացի Բեռլինի մուգէօնը, Լոնդոնի համաշխարհական հանդիսարանը, բայց այդ դիպուածներում գնալու խորհուրդը եղած է մի բան ուսանել»։ Դուվերը, Վինդորը, Վերսայլը և նորա պարտէզում կանգնեցրած Միհրդատի և Արշակունի Տիգրանի արձանները, Մուրատեան և Հայկազեան վարժարանները, Ճանիկ Արամեանի տպարանը, Արեւմուտքի խմբագրատունը—սոքա բոլորը ևս շարժում են նորա հետաքրքրութիւնը, բոլորն էլ նորա ուսումնասիրութեան առարկայ են դառնում։ Հետաքրքրում են նորան և արտասահմանի հայ գործիչները՝ «Արեւմուտքի» խմբագիր Ս. Ոսկանեանը, տպարանատէր Ճանիկ Արամեանը, Հայկազեան վարժարանի կառավարիչ Խորէն և Ամբրոսիոս վարդապետները, Մուրատեան դպրոցի ղեկավար՝ Ղևոնդ Ալիշանը, Մխիթարեաններից բոժանուած, բայց նոցա համախոհ Դապարձի Կարապետեան Գրիգոր վարդապետը, և մինչև անգամ վաճառական Թիւսիւզեանը, որոնց թէ անձնաւորութիւնը և թէ գործունէու-

¹ Տես Հիւսիսափայլը 1859 թ., ամսատետրակ 8. էջ 648—649.

Թիւնը նորա առանձին ուշադրութեան և քննութեան նիւթ են լինում, չենք ասում արդէն այն բազմաթիւ ահանաւոր օտարազգի գործիչների մասին, որոնց հետ նա բարեկամութիւն է կապում, թէև այս վերջինները, իբրև ընդհանուր մարդկութեան կամ իրենց ազգային գործերով պարագողներ, այնքան էլ չէին զբաղեցնում նորան: «Շատ պատահեցայ գեղեցիկ և սրատուական հոգու տէր մարդերի, որոնք դարձան ինձ շատ լաւ ծանօթ, ասում է նա իւր օտարազգի ծանօթների մասին, բայց նոքա պարապում էին կամ իրենց ազգային գործերով կամ ընդհանուր մարդկութեան գործերով»:

Նալբանդեանցը արտասահմանից վերադառնում է բոլորովին սիրալը կոտրած և վհատուած: Վհատուած ենք ասում ոչ թէ նորա համար, որ օտար կրկիրը չտուեց նորան այն, ինչ որ նա ցանկանում էր, այլ որովհետև նիւթական սուղ միջոցների պատճառով նա ստիպուեցաւ շուտ վերադառնալ այնտեղից, կիսատ թողնելով թէ՛ բժշկութեան և թէ՛ ուսանելու գործը: ձիշտ է, այն վեց ամսում, որ նա անց կացրեց ճանապարհորդութեան մէջ, նա ուսումնասիրեց Եւրոպայի հայերի կեանքը, տեղն ու տեղը տեսաւ այն բոլորը, ինչ որ նա մինչև այդ ժամանակ միայն լսելով և կարդալով գիտէր Եւրոպայի մասին, և առիթ ունեցաւ անձամբ ծանօթանալու շատ առաջաւոր մարդկանց հետ, սակայն այն ուսման կատարելագործութիւնը, որ նա յոյս ունէր ձեռք բերել Եւրոպայում, այն մարմնի կատարեալ առողջութիւնը, որ նա ակնկալում էր այնտեղի հանքային ջրերից, ժամանակի, գլխաւորապէս նիւթական սուղ միջոցների պատճառով, նա չկարողացաւ ստանալ: «Բժշկութիւնը ինձ ոչ միայն տաելի չէ, այդ մասին զրում է նա Սալտիկեանին, որ մեղադրում էր նորան վատ բժշկուելու համար, այլ և գորանից աւելի սիրելի բան չունիմ, սակայն համաձայնիր ինքզ, որ

Հնար չունէի շարունակել. ի՞նչ առնէի, որ քարին տայի գլուխս, մտածիր ինքզ ու յետոյ դատապարտէ: Արտասահմանից վերադառնալով, նա այլ ևս Մոսկուայում չէ մնում, այլ հաստատւում է Պետերբուրգում: Նալբանդեանցի Մոսկուայից Պետերբուրգ տեղափոխուելու պատճառը կրկին էր՝ մէկ որ նա ուզում էր այնտեղ արեւելեան բաժնի կանդիդատի քննութիւն տալ, երկրորդ, որ այդ ժամանակ նորա և Նազարեանցի մէջ մի ինչ որ զրգտութիւն պատահած լինելով, նոցա յարաբերութիւնը տառել էր: Մինք տեսնեք, որ նա Հէնց սկզբից ցանկանում էր մի այդպիսի զործ ձեռք բերել, որ բաւականութիւն տար թէ իւր ներքին ձգտումներին և թէ կեանքի ապահովութեան. նա առաջ կամեցաւ հոգեւորական լինել, յետոյ ուսուցիչ, բայց այդ երկուսը ևս, նորանից անկախ պատճառներով, չյաջողուեցաւ. այնուհետեւ նա ազատ ունկնդիր դրուեցաւ համալսարանի բժշկական մասում, կամենալով բժշկութեան պատրաստուիլ, բայց ընթացքի զգուարութեան, թէ կանոնաւոր կերպով համալսարան յաճախելու ժամանակ չունենալու պատճառով, նորա այդ դիտաւորութիւնը ևս չիրագործուեցաւ: Եղաւ մի ժամանակամիջոց ևս — այդ նորա արտասահմանից վերադառնալու միջոցումն էր, — երբ նորա բարեկամների մէջ միտք յղացաւ 600 ռուբլի տարեկան թոշակ նշանակելով, միջոց տալ նորան արտասահմանում կատարելագործուելու, բայց այդ ևս, մեզ անյայտ պատճառով, անկատար մնաց: Ահա այսքան անյաջողութիւններից յետոյ, նա սիրտը կոտրած դիմում է Պետերբուրգ կանդիդատի քննութիւն տալու, որ, ինչպէս երևում է, նորա վերջին ապաւէնն էր: Համալսարանի դիպլոմի միջոցով նա մտածում էր մի որ և է ծառայութիւն ձեռք բերել, որով կարողանայ ապահովել իւր կեանքը և լուրջ կերպով բժշկուելու վերայ մտածել: «Մտածեցի մտածեցի ուրիշ ճար չգտայ, զրում է նա այդ

մասին, ասացի երթամ կանդիտատի քննութիւն. տամ, զոնէ մէկ տեղ կ'գտանեմ և կկարողանամ դուխս ապրեցնելով իմ գործը շարունակել և այս յուսով զուրս եկայ Մոսկվայից և ահա զտանվում եմ Պետերբուրգի համալսարանում: Իմացիր, որ ես Մայիսին կանդիդատ եմ առանց այլ և այլի. թող այդ ստանամ ինձ ֆեսա. բերելու չէ. ընդհակառակը շատ և շատ օգուտներ ունի, որոնց մասին միմեանց տեսած ժամանակներս մանրամասն կխօսենք»¹: Նալբանդեանցի և Նազարեանցի մէջ սրտակից բարեկամութիւն և մտերմական ընտանի յարաբերութիւն երբէք եղած չէ, և, նայելով նորա բնավորութեան, գոստիարակութեան և բոլոր կեանքի պայմանների կազմակերպուելուն, նոցա մէջ այդ տեսակ յարաբերութիւն լի-

¹ Դնում ենք այստեղ Նալբանդեանցի Պետերբուրգից գրած այդ նամակը:

«Սիրելի և հոգեկից եղբայր իմ Գրիգոր Կարապետեան,

« Դրած ցաւակցական նամակդ ստանալով փոքր չեղաւ իմ « մխիթարութիւնը. շատ շնորհակալ եմ, որ ինձ չէս մոռանում « ինչպէս ես ևս չեմ մոռանում: Դրում ես, թէ իմանալով իմ « դրութիւնը ցաւել էք և մի փոքր բարկացել էք: Յաւածնե- « րուդ համար անչափ շնորհակալ եմ և հաւատում եմ, որ « պիտի ցաւէիք, բայց, եղբայր, ինչո՞ւ էք բարկանում իմ վե- « րայ, ի՞նչ եմ արել ես. եթէ յառաջ չեմ յայտնել իմ « վիճակի մասին, (երևի թէ այս է մեղքս) ի՞նչ յայտնէի. ես « ինքս զգուած եմ իմ դրութիւնից, ուրեմն ինչ ուրիշներին ևս « զգուանք և ձանձրութիւն պատճառեմ. դուք լաւ գիտէք, որ « միմիայն վերջին աստիճանի նեղութիւնը կարող է ինձ բերան « բանալ տալ: Բացի սորանից, ես, մանաւանդ քեզանից բան « թաքցրած չեմ, իմ դրութիւնը, որ ոչ դք չ'գիտէ, քեզ միշտ « յայտնի է եղել և անչափ գոհ եմ, որ դու ինձ միշտ օգնել « ես: Բժշկութիւնը ինձ ոչ թէ միայն ատելի չէ այլ և դորա- « նից աւելի սիրելի բան չունիմ, սակայն համաձայնի ինքդ, որ « հնար ունէի շարունակել. ի՞նչ առնէի, ո՞ր քարին տայի գը- « լուխս մտածիր ինքդ ու յետոյ դատապարտէ: Այս բոլոր բա- « ները դեռ անցեալ տարուց քեզ յայտնի էր: Մտե՛ծեցի, մտա- « ծեցի ուրիշ ճար չ'գտայ, ասացի երթամ կանդիդատի քննու- « թիւն տամ, գոնէ մէկ տեղ կը գտանեմ և կը կարողանամ գը-

նեղ էլ չէր կարող: Նաղարեանցը մի ազնիւ, շիտակ, միա-
միտ և բարեհոգի մարդ էր. կեանքի անսեստկան մասում
նա շատ համեստ էր և խնայող խելացի կերպով, իսկ
մտքի, համոզմունքի աշխարհում նա լաւատես և զաղա-
փարական էր. նա հայ կեանքի վերայ նայում էր ուսում-
նական մարդու տեսակէտից. հեռու հայկական կեանքից,
հայկական կենտրոնից նորա քարոզութիւնները կրում
էին աւելի վերացական, քան թէ գործնական բնաւորու-
թիւն. նա կարծում էր, որ բաւական է միայն բարի
սերմը ձգել և նա արդէն ինքն ըստ ինքեան կատարանայ
և կրեցիմնաւորի, իսկ անձամբ հոգը պատրաստել, խոպա-

« լուսա ապրեցնելով իմ գործը շարունակել, և այս յուսով
« դուրս եկայ Մոսկվայից և ահա գտանվում եմ Պ.-բուրգի
« համալսարանում: Իմացիր որ ես Մայիսին կանդիդատ եմ ա-
« ռանց այլ և այլի. թող այդ ստանամ ինձ վնաս բերելու չէ.
« ընդհակառակը շատ և շատ օգուտներ ունի, որոնց մասին մի-
« մեանց տեսած ժամանակներս մանրամասն կըխօսենք: Եթէ դուք
« այնքան բարի էք, որ կտմիք ինձ օգնել և իմ խաւար դրու-
« թիւնից դէպի լոյս քարշել, շատ և անչափ շնորհակալ եմ,
« եթէ այդ բարերարութիւնը ինձ առնէք, որ ես կարողանամ
« շտարի ժամանակով Փարիզ մնալ և այնտեղ ուղղակի վար-
« պետի քննութիւն տալ. եթէ այսքան դժուարութեամբ և նե-
« դութեամբ գնաց իմ բանս գոնէ դորանով միութարվեմ, որ
« Ակադեմիայի մէջ աւարտեմ իմ գիտութիւն ուսանելու ըն-
« թացքը. հաւատացած կացիր, որ այդ բանը ինձ մեծ և մեծ
« օգտակար կլինի և ճանապարհս ոչ թէ միայն շօսեսյնի կըշինէ
« այլ և երկաթի. Ես այնտեղ վերահասու եղայ ամենայն բա-
« նին, ճարեցի ազնիւ բարեկամք թէ հայ և թէ ֆրանսիացի,
« քննեցի հիւանդանոցը և ակադեմիայն. մեր համալսարանը Ա-
« կադեմիայի դիմաց այնպէս է ինչպէս Մոսկվան Պետերբուրգի
« դիմաց, հարկ չկայ ասել, որ ֆրանսիարէն կուսանիմ որպէս
« ֆրանսիացի, այն ժամանակ կըցնծացնեմ ամեն բան. Ահա,
« եղբայր, իմ միակ խնդիրս և ցանկութիւնս. Փարիզում ես կա-
« րող եմ ապրել 800 մանէթով, երբ դուք այնքան բարի էք
« եղել, որ յանձն էք առել զոհել 600, տարակոյս չունիմ, որ
« կըզոհէք և 800 մ: ես էլ թէ մարդ եմ կըճանաչեմ ձեր
« ազնուութիւնը. ինչ երկար խօսեմ, տեսած ժամանակներս կը-
« խօսենք: Սպասում եմ պ. հայրապետեանցին: (19 նոյեմբերի
« 1859, Ս. Պ.-բուրգ): »

նը մշակել, պարարտացնել, — այդ նորա մտքով չէր էլ անցնում: Նա աւելի առանձնասենեակի ուսումնական էր, քան թէ իրական կեանքի գործիչ: Նա շուտ էր վհատում, շուտ էր զզվում գործից. Ներսիսեան դպրանոցում նա միայն երկու տարի կարողացաւ դիմանալ: Իսկ Նալբանդեանցը ունենալով Նազարեանցի ազնուութիւնը և շիտակութիւնը, զանազանփում էր նորանից իւր խառնուածքի տաքութեամբ, կամքի վերին աստիճանի ամրութեամբ և համոզմունքի անսասանութեամբ: Առանձնասենեակ նա չէր սիրում, նա սիրում էր կեանք և շարժողութիւն. նորա գործունէութիւնը, քարոզութիւնները աւելի գործնական էին. նա իրական կեանքից, ժողովրդի սրտիցն էր խօսում. նա իսկական կեանքի և ժողովրդի մարդ էր: Տնտեսական կեանքում անհաշիւ էր նա, իսկ մասնաւոր կեանքում նա իւր անհանգիստ և ծաղրող, մանրակրկիտ, կրքոտ և բծախնդիր բնավորութեամբ Նազարեանցի կատարեալ հակապատկերն էր կազմում: Արդ, ի՞նչ էր այդ երկու զանազան խառնուածքով մարդկանց միմեանց հետ միացնողը, անկասկած ոչ անձնական մտերմութիւնը և բարեկամութիւնը, այլ ընդարձակ մտքով առած համոզմունքի և կործիքների միութիւնը երկուսի մէջ: Նազարեանցը կարծում էր, որ մշակուած աշխարհաբառ լեզուն պէտք է հայ ժողովրդի մտքի հաղորդակցութեան գործիքը լինի, այդպէս էր կարծում և Նալբանդեանցը. Նազարեանցը կարծում էր, որ կենդանութիւն և թարմութիւն պէտք է ներշնչել հոգեւորականութեան և եկեղեցու կառավարութեան մէջ, այդպէս էր քարոզում և Նալբանդեանցը. Նազարեանցը կարծում էր, որ եւրոպական սիստեմի մամուլ, դպրոց, թատրոն և բոլոր եւրոպական լուսաւորութեան ֆակտորները պէտք է մտցնել հայերի մէջ. Նալբանդեանցը նոյնն էր ասում և աւելացնում էր, որ հայկական կեանքին պէտք է յարմարացնել դոցա. Նազարեանցը իւր ա-

ուղաղրած նպատակներին հասնելու համար մամուլը ամենամեծ զէնքն էր համարում, նալբանդեանցը զրչին նոյնպէս մեծ ոյժ և ազդեցութիւն էր վերադրում և այլն և այլն: Այդպիսի թէև ընդհանուր համոզմունքով միատեսակ, բայց անհատական բնաւորութեամբ միմեանց հակադատէր կազմող մարդկանց ընկերական գործունէութեան մէջ, անկարելի էր, որ մասնաւոր անհամաձայնութիւն և սրտացաւութիւն չպատահէր: Ժամանակակից ականատեսների ասելով, նոցա անհամաձայնութիւնը և վիճաբանութիւնը համարեա՞ միշտ լինում էր տպուկիք յօդուածների նիւթի և զլսաւորապէս լեզուի մասին: Նազարեանցը սովորութիւն էր արել միշտ ուղղել յօդուածների լեզուն, որ շատ օգտաւէտ բան էր ամսագրի լեզուի միատեսակութիւնը պահպանելու համար, եթէ միայն չափը պահուէր, բայց զժբաղդաբար խմբագիրը ծայրահեղութեան էր հասցնում բանը. նա, փոխանակ քերականական ձևերի և ոճերի, շատ անգամ ձեռնամուխ էր լինում և ամբողջ պարբերութիւններին, որով յաճախակի յօդուածադրների էական միտքն ու իմաստն էր փոխվում, խանգարվում: Նալբանդեանցը, զոնէ, իւր յօդուածների վերաբերութեամբ միշտ ընդդիմանում էր ասելով՝ «Ստ. Իսայիչ, թոյլ տուէք, խնդրես, որ իմ մտքերը տպագրուին այնպէս, ինչպէս որ նոքա ինքնորոշաբար բղխում են»: «Եղբայր սիրելի, պատասխանում էր Նազարեանցը, այդ անկարելի է, որովհետև ձեր գրուածներում շատ անգամ տրամաբանական կապակցութիւն չէ լինում»: Սակայն երբէք չէր պատահել, որ նոցա մէջ գժտութիւնը այնպիսի սուր բնաւորութիւն ստանար, որ պատճառ լինէր Նալբանդեանցին հեռանալու Նազարեանցից և, զոնէ, մի առ ժամանակ ընդհատելու իւր աշխատակցութիւնը ամսագրում: Ինքը Նալբանդեանցը այդ զրժտութեան պատճառները հետևեալ կերպով է նկարա-

գրում՝ «Այժմ այսքան ասեմ, որ գնում եմ Պետերբուրգ, կանդիդատի քննութիւն տալու, որպէս զի մի արժանաւոր տեղ ծառայութիւն գտանելով, կարողանամ օրական ապրուստ ճարել և բժշկութիւնը շարունակել: Պէտք է որ ես ինքս գտանեմ իմ ճարը, ըստ որում ոչ մի կուպէկ ստանալու յոյս չունիմ ոչ մի կողմից: Հիւսիսափայլից ձեռք վեր առի, ըստ որում մի ժանդոտ կուպէկ չեմ ստանում. ինչ հարկաւորութիւն ունեմ էշի նահատակ լինելու: Այդ ինչ խելագարութիւն է, որ ես ուրիշից պարտք առնում ապրեմ և հիւսիսափայլի վերայ տիւ և գիշեր աշխատեմ, բայց հիւսիսափայլից մին կուպէկ չ'ստանամ, այդ ո՞ր գրքի մէջ գրած է: Եւ ո՞ր մարդը, որ չունէր բնակութիւն, կերակուր և զգեստ կարող է գործ կատարել և այն ձրի: Մինչև այժմ ես զոհ եղայ, թող Աստուած ընդունէ այդ զոհը, բայց տեսնում եմ, որ այսուհետև անկարելի է: Քեզ քաջ յայտնի է, որ ես բարոյագէտ թուլացած չեմ, կարող եմ շատ աշխատել, բայց աշխատելու համար հարկաւոր են պայմանք, որ ես չունիմ և որի մասին չկամիմ ոչ ոքի բերան բանալու բան խնդրել: Այս պատճառով ոչինչ մասնակցութիւն չունիմ այսուհետև հիւսիսափայլի հետ»¹: Նամակի այս տողերից

¹ Բերում ենք այստեղ այդ նամակը ամբողջութեամբ, բացի նորա մի քանի ընտանեկան և մասնաւոր բնակչութիւն կրող տողերից:

« Սիրելի եղբայր Գրիգոր Կարապետեան,

« Դիտեմ բարկացած ես իմ այսքան անգամ լռութեանս
« պատճառով, բայց պիտի ներողամիտ լինես, եթէ իմանաս իմ
« ողորմելի վիճակը և դրութիւնը, որի մէջ գտանվեցայ մինչև
« այս րոպէս:

« Սիրտս շատ կուտրած է, և ոչինչ բան աչքիս չէ երևում,
« վերջին յուսահատութեան մէջ: Այս բոլորի զօրութիւնը Մոսկ-
« վա գաս կիմանաս թէ և չեմ կարծում, որ բոլորովին անգէտ
« լինիս իմ հանգամանքներին ըստ որում զեռ անցեալ տարի
« բացել էի քեզ իմ սիրտը: Չկամիմ երկար գրել, որովհետև

կարելի է եզրակացնել, որ նորա Հեռանալու պատճառը այն դրամական հաշիւներն էին, որ նա ունէր Հիւսիսափայլի խմբադրի հետ: Խնդիրը նորանուսին է, որ Նալբանդեանցը, իւր ժամանակի և աշխատանքի ամենամեծ մասը գործ զնելով ամսադրի վերայ, եթէ ոչ շատ, զոնէ, այնքան յոյս ունէր նիւթականապէս օգտուելու նորանից, որ կարողանայ իւր ամենաանհրաժեշտ պիտոյքներին՝ կերակրի, զգեստի և բնակարանի կարօտութիւնը հոգալ: Յայտնի բան է, առաջին տարին, երբ հարկաւոր էր միանուագ բաւականին գումար ծախսել և շատանալ միայն 270 բաժանորդագրով, Նազարեանցը անկարող էր իւր համակերբի աշխատակցին մի որ և է օգնութիւն անել, և Նալբանդեանցը տեսնելով հրատարակութեան դրամական նեղ դրութիւնը, չէր էլ սրահանջում: Իսկ երկրորդ տարին, երբ գործը աւելի ամրանում է և արտաքոյ կարգի ծախսեր ևս չեն լինում, նա արդէն, ինչպէս երևում է,

« սիրտս լցվում է արիւնով և կեանքս մաշվում է: (Հետևում
« են մեր վերը բերած տողերը՝ «Այժմ՝ այսքան ասեմ») և այլն):
« Ինչ որ օտար աշխարհից բերած տուել էի Հիւսիսափայլին պի-
« տի տպուի հոկտեմբերի տետրակի մէջ և այնուհետև բարեաւ
« մնայ հայոց ազգու: Գրիչս պիտի կոտրեմ և ձգեմ միւս անգամ
« հայոց ազգի անունը տուած ժամանակները ևս պիտի սիրտս
« խառնվի և փսխելիքս գայ: ահա եղբայր, այժմ իմ դրութիւ-
« նը և յուսահատութեան չափը: Սփսոս ինձ, որ ես երևեցայ
« հայերի մէջ, մի այլ ազգի մէջ երբէք այս վիճակում գտան-
« վելու չէի ես, անտէր և անօգնական, միմայն յուսալով նա-
« խախնամութեան վերայ, որ կերակրում է ճնճղուկները: Սիրտս
« արիւնի ծով է, բայց այնքան հոգու զօրութիւն ունիմ, որ ոչ
« զբ չէ կարող իմ դրութիւնը կարգալ երեսիս վերայ: Ուրախ
« եմ միայն, որ առողջ եմ և տկարութիւնս իսպառ փարատուե-
« ցաւ: Որպէս ապրուստի ճանապարհ ևս պիտոյ է լինէի կան-
« զիդատ և գնում եմ Պետերբուրգ մնալ մի քանի ամիս ու
« քննութիւն տալ: իմ ամենայն բանը այսպէս պատերազմով
« պիտի լինի, բայց երևակայիր քեզ, եթէ այս վիճակում: Պե-
« տերբուրգ գնալու այնտեղ համալսարնի 50 մանէթ տալու ևս
« արծաթ չլինի, թողում այնտեղ բնակութեան և ապրուստի
« հոգսը, ի՞նչպէս կըլինի երթամ Նազարեանցին 200 մանէթ

սկսում է փող պահանջել որից և առաջ է դալիս վերոյիշեալ գծուութիւնը: Մենք հիւսիսափայլի հրատարակութեան նիւթական գործին լաւ ծանօթ չենք. մենք միայն իմանալով բաժանորդների թիւը, կարող ենք հաշուել, թէ իւրաքանչիւր տարի ճրքան եկամուտ էր ստանում խմբագրութիւնը և մօտաւորապէս ճրքան էր ծախսում բաժանորդների թուին համեմատ օրինակներ ապելու համար, բայց չենք կարող իմանալ, թէ իւրաքանչիւր տարի ճրքան արտաքոյ կարգի ծախսեր էին լինում և կամ, բացի բաժանորդագինից, ինչ և ճրքան ուրիշ եկամուտներ էր ունենում նա: Նալբանդեանցը իւր վերոյիշեալ նամակում հետեւեալ կերպով է մեզ ներկայացնում ամսագրի 59 թուականի դրամական պատկերը՝ «340 ստորագրութեան (բաժանորդագրութեան) փող է ստացել և 600 մանէթ պարզեւ. տպագրութեան ծախքը հասնում

« խնդրեմ, այստեղ 100 մանէթ մանր պարտքեր տալու և 100
« մանէթ ճանապարհի ու համալսարանի փողը տալու համար և
« նա ինձ ասէ թէ ոչ մի կոպէկ օգուտ չ'կայ, 340 ստորագրու-
« թեան փող է ստացել և 600 մանէթ պարզեւ. տպագրութեան
« ծախքը հասնում է մինչև 1800 մանէթի, ինչպէս է այս լաւ
« է, սիրտ կըմնայ չես յուսահատելու, Ահա եղբայր, իմ հան-
« գամանքները, թողում եմ Սադայի 250 մանէթ պարտքը, որի
« մասին յայտնած եմ երբեմն և ամեն օր մաշում է հոգիս,
« իմանալով այս բոլոր բաները աչքի տակ առնելով, թէ այս
« վիճակում եղած մարդու սիրտը և հոգին ինչպէս կ'լինէր, մի
« մեղադրիր ինձ իմ լուութեան համար, այլ ներիր և ցաւակից
« եղիր որպէս բարեկամ, ասացի սիրտս արիւնի ծով է, խոնդ-
« րեմ նազարեանցի բանը ոչ դի մի ասա՛, հարկաւոր չէ թող
« թշնամիք չ'ուրախանան, նորա պատիւը մերն է ուրեմն խոստո-
« վանութիւն մնայ քո մօտ կարող ես միայն պ. հայրապետեան-
« ցին յայտնել, որի հոկտեմբերի 9-ին գրած նամակին այսօր
« պատասխանելով մասնաւորապէս յայտնեցի այլ ոչ բոլորովին.
« Գեղ գրածս ևս բոլորը չէ, աւելի խայտառակ բաներ կան, որ
« միմիայն բերանով կարելի է ասել, ըստ որում ամօթ է թղթի
« վերայ գրել: 1860-ին հիւսիսափայլին պիտի ստորագրվեմ և
« Պետերբուրգից պիտի ուղարկեմ պ. Նազարեանցին 9 — 50
« կոպէկ, (27 հոկ. 1859. Մոսկվա)»:

է մինչեւ 1800 մանէթի...»։ Մենք, յայտնի բան է, մեզ իրաւունք չենք համարում չհաւատալ հանգուցեալի բերած թուերին, բայց ճանաչելով Նաղարեանցին իբրեւ ազնիւ, վերին աստիճանի ճիշտ դրամական հաշիւներում, աւելի ուրիշներից խաբուելու, քան թէ մէկին խաբելու հակումն ունեցող մարդ, չենք կարող Նալբանդեանցի ասածները թիւրիմացութեան արդիւնք և բոպէի ազդեցութեան տակ գրած չհամարել։ Գործին մօտ կանգնած և նոյն իսկ Նալբանդեանցի սրտակից բարեկամների տեսելով, երկու գործիչ աշխատաւորների մէջ եղած բոլոր անբաւականութեան պատճառը եղել է այն, որ Նալբանդեանցը խմբադրութեան համար շատ թանկագին տառեր է բերել Պարիզից և Նաղարեանցը ստիպուած է եղել ընդունելու և զինք վճարելու։ Շատ հասկանալի է ուրեմն, որ տպագրութեան բոլոր ծախսերը հանելուց և նոր թանկագին տառեր ձեռք բերելուց յետոյ, Նաղարեանցը կարող էր այլ ևս միջոց չունենալ հանգուցեալի պահանջներին բաւականութիւն տալու։ Որ այդ գժտութիւնը հետեւանք էր թիւրիմացութեան,—այդ երևում է նորանից, որ Նալբանդեանցը այնուհետև ևս շարունակում է աշխատելը Հիւսիսափայլին, թէև արդէն ոչ այնպէս յաճախ, ինչպէս առաջին երկու տարին, որ այն բոպէական ազդեցութեան և ժամանակաւոր յուսահատ դրութեան արդիւնք էր—այդ կարելի է տեսնել և եղրակացնել նամակի ամբողջ գրուածքի ձևից և բովանդակութիւնից։ Ապա-քէն ոչնչով չէ կարելի մեկնել նամակի հետեւեալ տողերը՝ «Այնուհետև բարեաւ քնաց հայոց ազգը։ Գրիչս պէտք է կտրեմ և ձգեմ, միւս անգամ հայոց ազգի անունը տուած ժամանակները ևս պիտի սիրտս խառնչի և փախելիքս զայ»։ Եւ այս գրում է այն մարդը, որ մոռանալով իւր անձնականը, մինչև իւր կեանքի վերջը միայն հասարակացի վերայ մտածեց, միայն ազգի ցաւով ցաւեց, ազգի

ուրախութեամբ ուրախացաւ: Իսկ ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ նա հէնց այդ ժամանակներից ըսկսած արդէն այնպէս յաճախ և այնպէս եռանդով, ինչպէս առաջին երկու տարին, չէ մասնակցում հիւսիսափայլին և վերջերը մինչև անգամ բոլորովին դադարում է աշխատակցելուց նորան,—այդ պէտք է մեկնել նորանով, որ նորա միտքը դեռ 59 թուականի վերջերից զբաղվում էր մի ուրիշ խնդրով, որին և մի փոքր յետոյ, 60 թուականի սկզբներում նա բոլորովին անձնատուր եղաւ:

ԳԼՈՒԽ Ը.

Մասեհ Բաբաջանի կտակը—կտակաւորած փողերը ստանալու համար եղած ջանքերը:—Նալբանդեանցի վերագարծը Նախիջևան և հասարակութեան կողմից հաւատարմատար ընտրուիլը:—Նալբանդեանցի ծանապարհորդութիւնը դէպի ա. Էջմիածին և արտասահման:—Տաճկաց սահմանագրութիւնը:—Նալբանդեանցի գործունէութիւնը Պոլսում:—Պօղոսեան և Ապօղոսեան խնդիրը:—Նալբանդեանցի գործունէութիւնը Պարիզում:—Նորա ծանապարհորդութիւնը գէպի Հնդկաստան:—Նորա Մասեհի Նոր-Նախիւանի Բարեկարգութեանց կտակած փողերը ստանալու համար գործ դրած աշխատանքը և քաջած նեղութիւնները:—Նալբանդեանցի թշնամիների զբաղւածութիւնները:

Այն խնդիրը, որով զբաղուած էր Նալբանդեանցը 60 թուականի սկզբներում, էր Մասեհ Բաբաջանի կտակազիրը, որի պստոճէնը նա Սալտիկեանի աշխատութեամբ ստանալով Նախիջևանի Մագիստրատից, իւր մեկնաբանութեամբ և յառաջաբանով տուել էր տպագրութեան դեռ իւր արտասահման գնալուց առաջ¹: Հանգուցիալ Մասեհ Բաբաջանեանը այն հարուստ չայերիցն էր, որոնք

¹ Տես «Հիւսիսափայլ» 1859 թ. 5 ամսատետրակ. էջ 379—393. («Ազգային ժառանգութիւնք»):

Տնդկաստանում մեծ գումար ձեռք բերելով, սովորութիւն էին արել իրենց կարողութիւնից մասն հանել և ազգին: Նա իւր կարողութեան կէսը, որ 31 հազար 280 ռուբլու արժողութեամբ անշարժ կայք էր, կտակել էր Նախիջևանի չայերի օգտին: Այդ հանգուցեալ Մասնհի կողմից մի պատասխան էր երջանկայիշատակ Յովսէփ Արղութեանի այն նամակներին և թղթերին, որով հանգուցեալ կպիսկոպոսը, Նախիջևանը հիմնկուց յետոյ, դիմել էր Տնդկաստանի հարուստներին, խնդրելով օգնել Նախիջևանեւոյ: Կտակը արուած էր 1794 թուականի Մայիսի 30-ին, բայց մինչև այդ ժամանակները, այսինքն մինչև 60 թուականը, ոչ ոք Նախիջևանցիներից հոգ չէր տարել վերահասու լինելու գործին և ստանալու անշարժ կալուածքից Նախիջևանին հասանկիւք եկամտի մասը, այն ինչ ժամանակը անցնում էր և կտակը հնանալով, կարող էր կորցնել իւր նշանակութիւնը: Արղարութիւնը պահանջում է ասել,

¹ Բոլոր կտակագիրը բաժանվում է հինգ յօդուածի կամ «հատորի»: Այդ հինգ յօդուածից կամ հատորից Նոր-Նախիջևանին վերաբերում է միայն երրորդ հատորը, որ ամբողջութեամբ դնում ենք այստեղ խնդրի պարզաբանութեան համար:

« Երրորդ պատուէրս յայտնեմ կտակակատարացն իմոց. զի
« իմ ամենայն կայքն, այսինքն վերն յիշեալ տներն՝ և այլն,
« զորս ներկայ ունիմ, և կամ՝ զորս այսուհետև ստացայց Աս-
« տուծով, այսինքն զկնի մահուանն իմ, ամենայն որ ինչ կայք
« գտանիցին ինձ ի վերայ աշխարհիս, զայն ամենայն միանգամայն
« ահա՛ ի կենդանութեանս իմում գրովս հաստատեցի ի ժառան-
« գութիւն ներքոյ յատկացեալ տեղեացն այսպէս. — Իմ ամե-
« նայն կայքն տասն և վեց մասնիցն՝ ութն մասն վախմ արարի (կը-
« տակեցի) և կատարելապէս ետու Ազոֆ գաւառոջ Նոր Նախի-
« ջևանու քաղաքի չայոց բարեկարգութեանց: Այսինքն երկու
« մասն դպրատանցն, երկու մասն աղքատանոցին, երկու մասն
« հիւանդանոցին, և երկու մասն որբոց տանն. առ ի մնալ անդ
« ի նոսա ինձ յիշատակ ի քալութիւն մեղացս՝ և ի մխիթարու-
« թիւն ազգին մեր. — Եւ մնացեայն յութն մասանց վեց մասն
« թողում եմ մնալ վասն Կալկաթայ քաղաքիս Կօրտ աֆ - Ռի-

որ Նալբանդեանցը առաջինը չէր, որ բարձրացնում էր կտակի խնդիրը: Դեռ նորանից առաջ էլ 65 տարուայ ընթացքում (1794—1859 թ.) այդ խնդիրը քանիցս անգամ յարուցուել էր, բայց ամեն անգամ էլ, երկար դրուծիւն անելուց յետոյ, վերջացել էր անյաջողութեամբ: Առաջին անգամ Մասեհի կտակի մասին նախիջևանցւոց յիշեցնում են պօլսեցիք 1818 թ., երբ երրորդ կտակաւատար Տէր-Ստեփաննոս Տէր-Յարութիւնեան քահանան, որ Յովսէփ եպիսկոպոս Սրղութեանի կողմից զլիաւոր զրդիչն էր եղել Բաբաջանի կտակաւանդութեան, զտւով Պօլիս, մեռնում է, և երկիւղ է լինում, որ կտակած փողը անցնի քահանայի ժառանգներին. երկրորդ անգամ կտակի խնդիրը յարուցանում են Կալիթայի «Ազգասէր» և Զմիւռնիոյ «Արշալոյս» լրագրները, որոնք 1846 թ. տպելով կտակի օրինակը և յոյց տալով ստանալու ճանապարհը, առաջարկում են նախիջևանցւոց շուտով հոգ

« կուէշտի բանտարկելոցն, այսինքն Փոքր Զլի բանդարկելոցն. —
 « Եւ երկու մասն թողում եմ մնալ վասն Կալիթայ եկող հա-
 « յոց ազգ զարիրականացն, այսինքն հայաստան աշխարհիցն մեր
 « ազգ զարիրական աղքատ բիւռւղիգար (գժբաղդ) մարդկանցն,
 « որք եկեսցեն աստ. — Որպէս վերն գրեցի թէ իմ ըստադն
 « (գոյքն) տասն և վեց սամ (բաժին) խսէպվի (հաշուի), ահա
 « այս երեք տեղեաց բաժինն եղև տասն և վեց սամ. Որպէս
 « վերն սամ արածիցն յայտնի այ. — Արդ աստանոր վերն յիշեալ
 « սամատէրերոցիցն, և նոցա կողմանէ տեղս եղեալ վէքիլներիցն
 « որք իմ կտակակատարք պէտք է լինին, ի նոցանէ ևս խնդրում
 « եմ և պատուիրում եմ նոցա՝ որ մշտապէս հաւատարմաբար
 « հետևող կըլցին տների մարամաթին (վերանորոգութեան) և
 « քրիհնով տալոյն, որ մի՛ գուցէ անմարամաթ և դատարկ մնա-
 « լով տներն քանդվին, և աղքատքն ի մխիթարութենէ զրկուին.
 « Ուրեմն պատուիրում եմ զի իմ կտակակատարքն՝ այսպիսի
 « հաւատարմաբար հոգացողութեամբ յամենայն տարւոջ Դեկ-
 « տեմբեր՝ ամսումն, իմ ըստադի նոյն տարէն եկամուտն ջամայ
 « արասցեն (ժողովին), և ջամ եղած մապլադիցն (գումար) նախ
 « իւրեանք՝ Քի հարիւրին հինգ իւրեանց հախսայ վեր առցեն.
 « յետ այնորիկ ևս տների մարմաթի, խազնի, և վերն յիշեալ
 « երեսուն և մին ուռւփի ամսական խարջն, և կամ այլն վեր

տանել ձեռք բերել թէ հանգուցիալի թողած անշարժ կայքի տարեկան եկամուտը ստանալու իրաւունքը և թէ մինչև այդ ժամանակ այդ եկամուտից ժողովուած հարկը հաղար «ուռփին»։ Երրորդ անգամ կտակի մասին տեղեկութիւն են տալիս Կալկաթայի Գէորգ Փանոս Բարաղամեանը և Տէր-Յովսէփ աւագ քահանան 1825 թ., գրելով ուղղակի երջանկայիշատակ Եփրեմ կաթողիկոսին, որ այդ ժամանակ տպրում էր հաղբատում, և, վերջապէս, չորրորդ անգամ Մասեհի կտակի խնդիրը կալկաթացի տիկին Կատարինէ Խօջամալեանի յօգուտ Նախիջևանի «բարեկարգութեանց» արած կտակի խնդրի հետ միասին յարուցվում է 1858 թ. Գաբրիէլ վարդապետ Սյվազեանի առաջնորդութեան օրով։ Այս անգամ խնդրի յարուցանողը լինում են Տագանրօզի քաղապետը, Պարսկաստանի և Հնդկաստանի առաջնորդ Թադէոս եպիսկոպոսը և Նախիջևանի այդ ժամանակուայ քաղաքագլուխ Ս. Ալաջալեանը, որոնցից առաջինը հարցնում է, թէ ի՞նչ պատճառով Հնդկաստանի փողերը մինչև յայժմ չեն ստացվում, երկրորդը տեղեկութիւն է տալիս կտակների մասին

« առցեն, և ապա մնացեալ մապլադն վերն գրածիս համեմատ
« տասն և վեց սամ ստացեն. ութն սամն նոյն յառաջակայ
« Զանէր (Յունուար) ամսումն առաքեսցեն ի նոր Նախիջևան բա-
« րեկարգութեանց կառավարչաց ձեռն.— Եւ երկու սամն էլ նոյն
« Զանէր ամսումն բաժանեսցեն հայաստանիցն եկեալ դարիբա-
« կան բիւռզիգար մարդկանցն.— Իսկ մնացեալ վեց սամն, Կօրտ
« աֆ.Ռիկուէշտի բանդումն եղեալ քրիստոնեայ բանդարկելոցն՝
« քանի անձին պարաքն վճարելէ՝ որ բաւական. լինիցի, էնքան
« անձանց պարաքն հատուցեն յաւուրս Մեծի Աւագ Շարաթու-
« պահոցն, Բայց եթէ ի նոյն բանդին քրիստոնեայ անձինք չգտա-
« նիցին էն միջոցումն, և կամ գուցէ սակաւ անձինք գտանի-
« ցին, և յիշեալ վեց սամիցն աւելի մապլադ մնացէ, առ այս
« պատուիրեմ, զի նոյն մապլադովն ի նոյն բանդումն եղեալ
« քուրթ կամ հիթանոս բանդարկեալս ազատեսցեն. քանզի
« վերն յիշեալ տեղն և կամ անձինքն են ինձ ժառանգ և սա-
« մատէր ամենայն կայիցն իմոց զկնի մահուան իմ»։

Թէ Գարրիէլ վարդապետին և Թէ Սինօղին, իսկ երրորդը խնդրում է առաջնորդից Հոգ տանել ստանալ փողերը: Սակայն այս անգամ էլ ինչպէս առաջին երեք անգամը, Կործր վերջանում է միայն դրադրութեամբ, որովհետև Թադէոս եպիսկոպոսից տեղեկութիւն է ստացվում, Թէ Մասեհի փողերը ստանալու Անդղիացոց օրէնսդրութեամբ սահմանած 36 ամեայ ժամանակամիջոցը անց է կացիլ:

Նալբանդեանցը, իբրև աչքաբաց և ամեն բանի, որ միայն վերաբերում էր հայկական կեանքին, հետաքրքիր մարդ, իսկոյն ուշադրութիւն է դարձնում այդ խնդրի վերայ: Նա, ինչպէս ասացինք, առաջ իւր մեկնաբանութեամբ և յառաջաբանով տպագրելով կտակի պատճէնները, Կորանով արդէն նախապատրաստել էր հօղը. նա հրաւէր էր կարգացել, որ ժողով կայացնեն և պատշաճաւոր թղթերով մէկին ուղարկեն հնդկաստան, որպէս զի նա հաւաքուած եկամուտները ստանայ և այնուհետև ևս ստանալէք եկամուտները ապահովէ օրինական կերպով և որոշ ժամանակամիջոցներով Կալկաթայից ստանալու: Այժմ մնում էր միայն դնալ Նախիջևան և անձամբ ազդել հասարակութեան զուլխ կանգնած մարդկանց վերայ, իրագործել իւր հրաւերքը: Ահա այդ էր պատճառը, որ Նալբանդեանցը 60 թուականի դարնանը քննութիւնները վերջացնելուց յետոյ, ճանապարհ է ընկնում դէպի Նախիջևան: Այստեղ այդ ժամանակուայ քաղաքադուլխ և Նալբանդեանցի մտքերին և դիտաւորութիւններին ջերմ համակրող հայրապետեանցի նախադաժութեամբ հասարակաց ժողով է կազմվում Մաքիստրատում և ձայների առաւելութեամբ ընդունվում է հիւսիսափայլի հրաւերքը և ինքը Նալբանդեանցը ընտրվում է հասարակութեան հաւատարմատար: Հակառակ կուսակցութիւնը չկամենա-

¹ Տես «Մասեաց Աղանի» 1861 թ., Թիւ ԺԲ, ԺԳ, ԺԴ, ԺԵ.

լով Նալբանդեանցին, աշխատում է ազմուկ հանել, որպէս զի մի տեսակ կարողանայ խափանել այդ ընտրութիւնը և մի ուրիշին ընտրել նորա տեղ, բայց չէ աջողում: Այն ժամանակ Խալիբեանք սկսում են իբր թէ օրէնքից խօսել, որ ինքեանք Նալբանդեանցի դէմ բան չունին, բայց թղթերը օրինական զօրութիւն չեն ունենալ, եթէ որ առաջնորդից չվաւերացուն. նոքա, յայտնի բան է, հաստատ հաւատացած էին, որ Այվազեան Գաբրիէլ վարդապետը երբէք չի հաստատիլ իւր արիւնարբու հակառակորդի ընտրութիւնը: «Ընտրութիւնը շիտակ չէ, աղբար, ասում էին նոքա, ապէս անօրէնք բան չի լալ, մենք ադ բանին յօժարութիւնք չինք տալ. առաջնորդը պէտք է ձեռք դնէ, որ բանը թամամ ըլլայ: հանա հոս նստած է Մուխալը, օրէնքը մեզիմէն աղէկ զիտէ, կուզեքնր իրեմէն հարցուցէք շիտակ է ասածներս, չէնէ չէ»¹: Նալբանդեանցը հասկանալով, թէ իւր թշնամիները ինչ թակարդի մէջ են ուղղում ձգել հայրապետեանց, այլ ևս չէ համբերում. նա վեր է կենում տեղից և վերաւորեցուցիչ ակնարկութիւններ ուղղելով առաջնորդի հասցէին, տաք-տաք խօսքերով ապացոյց է տալիս, որ այդ հասարակութեան դործն է, որ առաջնորդը դորանում մասն չունի և այն և այլն: Ժողովը լուծվում է և Նալբանդեանցը ստանալով հայրապետեանց հաւատարմութիւնը և ճանապարհածախս, շտապում է ճանապարհ ընկնել. նա, որպէս զի միջոց չուայ իւր հակառակորդներին մի որ և իցէ կերպով խափանել իւր ընտրութիւնը, առաջ գնում է ս. Էջմիածին, վաւերացնում է թղթերը երջանկայիշատակ Մտաթէոս կաթողիկոսի ստորագրութեամբ, և յետոյ արդէն ուղևորվում է արտասահման:

¹ Տես «Միքայէլ Նալբանդեանցի համառօտ կենսագրութիւնը», էջ ԱՎ:

Այս ճանապարհորդութեան ժամանակ նա նորից առիթ է ունենում այցելելու Եւրոպայի մայրաքաղաքները և միջոց է ունենում տեսնել և ուսումնասիրել առաջին ճանապարհորդութեան ժամանակ չտեսածն ու չսովորածը, որով և բաւականութիւն է տալիս իւր անյաբ հետաքրքրութեան և ամեն բան իմանալու պահանջին։ Այս անգամ նա երկար ժամանակ մնում է Պոլսում, իբրեւ մի հայաշատ կենտրոնում, հետաքրքրվում է այնտեղի գործերով, աշխատակցում լրագրներին և մասնակցում է հայ հասարակութեան հասարակաց կեանքին։ Տաճկահայոց ընդհանրապէս և Պոլսի հայոց մասնաւորապէս ամենալաւ ժամանակն էր։ Յիսնական և վաթնական թուականները, ինչպէս որ Ռուսահայոց մտաւոր շարժման և ինքնաճանաչութեան վերայ ազդելով, նոցա մէջ կեանք, կենդանի գործունէութիւն առաջ բերին, նոյնպիսի ազդեցութիւն և գոյէ աւելի ևս ունեցան նոքա Տաճկահայոց կեանքի վերայ։ Այդ ժամանակներից երեւցաւ պատրիարքների և առաջնորդների մէջ ձգտումն պաշտպանելու իրենց հարածեալ հօտը Տաճկաց բարբարոսութիւնից, այդ ժամանակներից զարթեցաւ հայ կարող դասակարգի մէջ սէր դէպի զուլառները և զաւտոպիները և ցանկութիւն օգնելու նոցա, այդ ժամանակներից է, վերջապէս, զարթնում հայ արհեստաւորների և առհասարակ հայ յամբոխի մէջ ինքնաճանաչութիւնը և իւր կեանքի երեւոյթներին զիտակցաբար վերաբերուելը, որի հետեանքը լինում է Պատրիարքի իշխանութեան իւր նշանակութեան համեմատ բարձր տեղ բռնելը և հարուստ ու ազդեցիկ դասակարգի՝ ամիրանների, էֆենդիների և աղաների ազդային, գործերի վերայ ունեցած անսահման իշխանութեան սահմանափակումն։ Բացվում են դպրոցներ, կրօնական երկպառակութիւնների պատճառով զարթնում է ժողովրդի մէջ սէր դէպի ազգային եկեղեցին, սկսվում են

Հրատարակուել նոր ուղղութեամբ լրագրներ, նոր շարժման, ուղղութեան գլուխ են կանգնում Պալեան Նիկողայոսները, Օտեան Գրիգորները, Ռուսինեանները, Աղաթօնները, որոնք կարապետ լինելով այդ նոր հոսանքին, առաջ են բերում ժողովրդի ցանկացած Սահմանադրութիւնը, որի նախապատրաստութիւնը սկսուել էր դեռ 39 թուականից: Մահմուդի որդի Աբդուլ-Մէջիդ Սուլթանը 39 թուականին «Թանչիմաթ» կոչուած օրէնսդրութեան Հրատարակութեամբ կեանքի, ստացուածքի և իրաւունքների հաւասարութիւն խոստանալով քրիստոնեաներին, դորանով առիթ էր տուել զարթնելու հայերին և իրենց կորցրած և ամիրաններից ոտնակոխ եղած իրաւունքները պահանջելու: Յակօբոս պատրիարքի աշխատութեամբ 1841 թուականին ազգային գործերը վարելու համար 24 հոգուց բաղկացած, ամիրանների իշխանութիւնից անկախ, հոգաբարձութեան հաստատուիլը, Մատթէոս պատրիարքի ձեռնեղէցութեամբ 1844 թուականին նոյն նպատակի համար ամիրաններից և պատուաւոր արհեստաւորներից բաղկացած երեսնից ժողովի կազմուիլը, նոյն պատրիարքի օրով 1847 թուականին երեսնից ժողովի «ճոգևոր և Գերագոյն» ժողովների փոխուիլը նախադուռն էին Սահմանադրութեան: Նալբանդեանցը մի այդպիսի հրատապ ժամանակում ընկնելով Պօլիս, իբրև ժողովրդի շահերը իւր սրտին մօտ ընդունող մի մարդ, յայտնի բան է, չէր կարող անտարբեր մնալ Հրապարակի վերայ դրուած խնդիրներին. նա իսկոյն անցաւ ժողովրդական կուսակցութեան կողմը և թէ զրչով, թէ խօսքով դործակից եղաւ Սահմանադրութիւնը պատրաստողներին: Բացի Սահմանադրութեան մեծ խնդրից, որ վերջանալով 60 թուականի Մայիսի 24-ին, ուրեմն Նալբանդեանցի Պօլիս հասնելուց մի փոքր առաջ, զօրութիւն էր ստացել և գործադրութեան մէջ մտել հէնց նորա այն աեղ եղած ժա-

մանակաները, հրապարակի վերայ դրուած էին և ուրիշ խնդիրներ, որոնք թէև աւելի մասնաւոր, ներքին, ընտանեկան բնաւորութիւն էին կրում, բայց և այնպէս շարժում էին բոլորի հետաքրքրութիւնը և ընդհանրութեան դատողութիւնների և լրագրութեան վիճաբանութիւնների նիւթ էին լինում: Նալբանդեանցը ուշադրութիւն է դարձնում և այդ խնդիրների վերայ, նամանաւանդ նորանից մէկի վերայ, որ միւսներից աւելի էր զրգուում ժողովուրդը: Այդ «Պօղոսեան և Ապօղոսեան» կոչուած խնդիրն էր: Պօղոս վարդապետը Վանի առաջնորդն էր. նա իւր զանազան անիրաւացի և ժողովրդի համար զայլթակեցուցիչ գործերով իւր դէմ էր յարուցել ժողովրդի մի մասը և ամբողջ թեմը երկու հակառակ կուսակցութեան էր բաժանել: Թեր և դէմ թղթեր էին, որ տեղում էին պատրիարքարանը: Ոմանք հերքելով առաջնորդի վերայ բարձած յանցանքները, արդարացնում ու պաշտպանում էին նորան—գոթա Պօղոսեաններն էին. միւսները անասելի զեղծումներ, չարագործութիւններ վերագրելով նորան, մեղադրում էին նորան և պահանջում նորա պաշտօնանկութիւնը—գոթա Ապօղոսեաններն էին: Վանայ կուսակցութիւնների այդ կռիւները արձագանգ էին գտել Պօլսում և բոլոր լրագրները ժողովրդի հետ միասին նոյնպէս, ինչպէս Վանում, բաժանել էին Պօղոսեան և Ապօղոսեան: Ինչ ասել կ'ուզի, որ Նալբանդեանցի համակրութիւնը, իբրև բոլոր վերաւորուածների և նեղուածների պաշտպանք, Ապօղոսեանների կողմն էր: Սակայն Նալբանդեանցը այնպիսի մի մարդ էր, որ միայն իւր համակրութիւնը կամ հակակրութիւնը յայտնելով չէր բաւակաւանում. նա սիրում էր իւր թէ համակրութիւնը և թէ հակակրութիւնը գործով ցոյց տալ: Այդ դէպքում ևս նա հաւատարիմ է մնում իրեն յատուկ բնաւորութան և իւր մէկ անգամ ընդ միշտ ընդունուած գործունէութեան:

Թեան եղանակին: Նա մղվում է փճարանութեան ու կր-
ուիւնների ասպարէզը և, ըստ իւր սովորութեան, այնպիսի
եռանդ ու ապքութիւն է ցոյց տալիս, որ գործը ծայրա-
յեղութեան է հասցնում: Պօլսում այդ ժամանակները
հրատարակուող Սըվաճեանի տասնօրեայ Մեղուն և Տէ-
րոյինց Չամուռճեանի Երեւակը զլուխ էին կանգնել այդ
կոիւններին. գորանցից առաջինը Սպօղոսեան էր, իսկ երկ-
րորդը — Պօղոսեան¹: Չամուռճեանը, հիմնուելով Վանից
ստացած Պօղոսեանների տեղեկութիւնների վերայ, աշխա-
տում էր ամեն տեսակ արգարացնել առաջնորդին², իսկ
Սըվաճեանը առաջնորդի զանազան ապօրինի գործողու-
թիւնները երեւան հանելով, մտրակում էր նորան և պա-
հանջում էր, որ շուտով հեռացնեն նորան Վանից: Նալ-
բանդեանցը Մեղունի թերթերում հրաւէր կարգաց Պօլսի
հայերին, որ նոքա ուշադրութիւն դարձնեն Պօղոսի վե-
րաբերութեամբ Մեղունում հրատարակուած տեղեկութիւն-
ների վերայ և խորհուրդ տուեց կարգալ «ոչ որպէս սոսկ
լուր, որ վերաբերութիւն չունէր ընթերցողներին, այլ որ-
պէս մարդ և մարդկային զգացողութեամբ: Ազգայ կու-
սութիւնը խախտել յետոյ ամուսնացնել իւր մանուկ
փոքրաւորի հետ, յետոյ ստիպուելով առեւանդեալ կնոջ
բողոքելուց, ամուսնութիւնը լուծել և վերստին պսակ
գնել մի այլ մարդու հետ» և այլն, և այլն³: Տէրոյինց
Չամուռճեանին էլ խայտառակելու համար հաւատամքի

¹ Մեղուն հրատարակուել է 1856—1871. նա առաջին եր-
կու տարին 1856—1859 երկշաբաթաթերթ էր, երկրորդ երեք
տարին՝ 1859—1863 տասնօրեայ, իսկ վերջին տարիները՝ 1863
—1871 շաբաթաթերթ. Երեւակը երկշաբաթաթերթ էր և հրա-
տարակվում էր 1857—1866: Տես Գրիգորիս վ. Գալէմբեարեանի
«Պատմութիւն հայ լրագրութեան» աշխատասիրութիւնը. էջ
157—159—161—163:

² Տես «Երեւակ» 1860. Թիւ 85. էջ 7:

³ Տես «Մեղուն». Պօլսոյ 1860. Թիւ 118, էջ 266—267:

ձևով կաղմած «Ճրաշափառ խայտառակութիւն» խորագրով մի գրութեամբ Հրատարակեց, որին կցեց և մի Ամօդէյ ստորագրութեամբ նամակ Ամօդէյ գեղի Զամուռ-ձեանին գրած, որովհետեւ նա Զամուռձեանին համարում էր այնպիսի մի անձնաւորութիւն, որ հաւատում է կախարչութեան և գիւտական աղբեցութեան: Հաւատամքը սկսւում էր այսպէս՝ «Հաւատամք յարգիւնս Քրիստոսի, միջնորդութեամբ կախարչութեան: Հաւատում 'ի փրկութիւն հոգւոյ, հաղորդակցութեամբ գիւտաց: Իսկ որք ասեն թէ չեք կախարչութիւն կամ թէ ոչ զոն գեւք, զայսպիսիսն նորով մեծ տրամարան և աստուածաբան, տնօրինող և յօրինող «Երեւակ» հանդիսի պ. Յովհաննէս Տէրոյենց Զամուռձեան Պրուսացի»:

Եւրոպայի միւս մայրաքաղաքներից նա այս անգամ ևս երկար՝ համարեա՛ երկու ամիս մնաց Պարիզում, որտեղից անցաւ Լօնդոն և այնտեղից արդէն նաւ նստելով, նա 61 թուականին Սուրբի ջրանցքով ճանապարհ ընկաւ դէպի Նիդերլանտների մայրաքաղաքը: Պարիզում անց կացրած երկու ամիս ժամանակը նա գործ դրեց իւր «Երկու տող» վերնագրով գրքոյկի վերայ, որի նիւթը կաղմում էր Այվազեան Գաբրիէլ վարդապետի այն նամակները, որ նա գրել էր Սարգիս Թէոդորեանի դէմ Եդուարդ չիւրմիւլեանին: Յայտնի բան է, թէ հանդուցեալ Սարգիս Թէոդորեանը ի՞նչպիսի աշխատանքով էր կարողացել ստանալ Սամուէլ Մուրատի յօդուտ «Որք և աղքատ մանկանց» կտակած գումարը և ի՞նչ ղիբ էր բռնել նա այդ գումարով առաջ Պապուսյում բացուած, յետոյ Պարիզ տեղափոխուած Մուրատեան վարժարանում, յայտնի է նոյնպէս, թէ ի՞նչպէս էր սիրում ու պաշտպանում նա Այվազեանին նորա դէմ Գէորգ չիւրմիւլեի հանած հալածանքի ժամանակ, յայտնի է, վերջապէս, թէ ի՞նչպիսի ապերախտութեամբ վարուեցաւ այդ

բօրրի փոխարէն Սյվաղեանը, կեղծելով ու ծածուկ նամակագրութեամբ նորա թշնամիների կողմն անցնելով: Ահա Սյվաղեանի այդ ծածուկ նամակագրութիւնն էր, որ Նալբանդեանցը ձեռք բերելով Պօլսում, հրատարակեց «Երկու տող» վերնագրով, որով նա ցոյց տալով Գաբրիէլ վարդապետի մեղմէի բնաւորութիւնը, պարզեց նորա երկղիմի վարմունքը, բայց արեց Յերուսի Թէոդորեանի աչքերը և ազդին ցոյց տուեց նորա անցեալ կեանքի և գործունէութեան իսկական պատկերը¹: Մենք հասկանում ենք, որ շատ էլ օգտուէտ չէ հրապարակ հանել մի որ և է գործչի անցեալ կեանքում պատահած այնպիսի դէպքեր, որոնք թէև անպատուաբեր են, բայց չեն վնասում գործչի ներկայ գործունէութեան, նամանաւանդ որ այդ դէպքերից շատերն էլ մասնաւոր, ընտանեկան բնաւորութիւն են կրում, բայց չենք կարող այդ բանում մեղադրել Նալբանդեանցին: Արդէն շատ էր յարուած նոցա յարաբերութիւնը, արդէն շատ նեղութիւն, շատ հալածանք էր կրել նա վարդապետից, որ կարողանար նա նորան խնայել, զրահանութեան մէջ ընդունուած համեստութիւնը, քաղաքափարութիւնը և չափաւորութիւնը պահպանել: Նալբանդեանցի Պարիզում հրատարակած այդ գրութեանը, որի մէջ, բացի վերոյիշեալ նամակագրութիւնից, մտել էր և նորա պատասխանը Չամուռճեանին, որ նորա «հաւատամքի» դէմ՝ «Խայտառակութեան քննութիւն» խորագրով մի յօդուած էր գրել Մեղուում², մեծ ազմուէկ հանեց այն ժամանակուայ ընթերցող հասարակութեան մէջ և մեծ հարուած տուեց Սյվաղեանին, որ առանց այն էլ հանգստութիւն չունէր իւր թեմի ամենահայաշատ կենտրոնի՝ Նախիջևանի հակառակորդներից և նամանաւանդ

¹ Տես՝ Սարգիս Թէոդորեանի «Պատմութիւն Հայկազեան վարժարանի». էջ 390—398:

² Տես՝ «Մեղու» Պօլսոյ, 1861. թիւ 123, էջ 21—22:

երջանկայիշատակ Մատթէոս կաթողիկոսի նորա հետ ունեցած յարաբերութեան սուր բնաւորութիւն ստանալուց: Գրքի մէջ ամեն մի բան նախատեսուած էր թշնամիների սիրտը խոցելու համար, մինչև անգամ գրքի վերջում դրած բուի պատկերը ևս ունէր իւր առանձին նշանակութիւնը, դա իւր հակառակորդների պլաբանական պատկերն էր և նշանակում էր խաւարատես, խաւարամիտ, զիջերատես և այլն: Բուն Նալբանդեանցի էմբլէմը, նշանն էր. բուի պատկեր էր փորագրուած նորա այն կնիքի վերայ, որ, ինչպէս արդէն մենք յիշել ենք, նա այնքան արուեստագիտորէն և նրբութեամբ շինել էր դեռ. Նախիջևանում:

Նալբանդեանցի բուն Տնդկաստանի ճանապարհորդութեան և նորա Կալկաթայում կատարած գործերի մասին մենք համարեւո՞ւ ոչինչ տեղեկութիւն չունինք, որովհետև նորա այն «Յիշատակարանը», որի մէջ նա նկարագրել էր իւր ճանապարհորդութեան տպաւորութիւնները, ուրիմն և Կալկաթայի գործերը, մեր ձեռքը չէ հասել: Որ այդպիսի մի յիշատակարան նա ունեցել է—այդ երևում է նորա 63 թուականին Պետերբուրգից իւր եղբորը գրած նամակից, որի մէջ պատմելով բողոքական միսիօնարների և նոցա Տաճկահայոց մէջ կատարած գործերի մասին, 'ի միջի այլոց ասում է՝ «Մի օր գուցէ Ասածու աջողելով յիշատակարանս կարգի կբերեմ և կտպեմ. ուշադրութեան արժանի շատ տեղեկութիւնք և դիտողութիւնք մեր ցիր ու ցան եղած հայերի մասին...»¹: Ինչպէս գործի հանդամանքից երևում է, Նալբանդեանցը Կալկաթայում շատ նեղութիւն է քաշել, շատ արգելքների է հանդիպել, շատ դժուարութիւնների է ստիպուած եղել յաղ-

¹ Տես՝ «Նալբանդեանցի համառօտ կենսագրութիւնը». էջ XVI—XIX.

թել: Առաջին դժուարութիւնը նորա տեղական Հանդամանքներին և իշխող օրէնքներին անձանօթ լինելն էր, երկրորդը՝ իշխող կառավարութեան լեզուի չիմանալը և, երրորդը՝ որ և ամենադժուարն էր, գործի Հնութիւնը և խճճուած լինելը: Պէտք էր կտակը պաշտօնապէս ծանաչել առաջ Անգղիացւոյ կառավարութեան, պէտք էր կտակի Հիման վերայ որոշել անշարժ կալուածքի Նախիջևանին Հասանելիք տարեկան եկամտի ճիշտ մասը և, վերջապէս, պէտք էր ստանալ մինչև այդ ժամանակ այդ եկամտի մասից Հաւաքուած, բայց Նախիջևան չուղարկուած գումարը: Այդ նպատակին Հասնելու Համար Նալբանդեանցը ստիպուեցաւ անձամբ ուսումնասիրելու Անգլիական օրէնդրութեան կառուանդութիւններին վերաբերեալ մասը, ստիպուեցաւ սովորելու Անգղիացւոյ լեզուն, զոնէ, այնքան, որ փաստաբանները, որոնց ձեռքով նա պէտք է գործ կատարէր, չխաբեն և առ Հասարակ ստիպուած էր անձամբ ուսումնասիրելու և ձեռք բերելու այնպիսի տեղեկութիւններ, որ միշտ Համարեալ Հարկաւորում են այնպիսի Հանդամանքներում ու գործերում, մինչև անգամ, ասում են, նա գատարանի առաջ ստիպուեցաւ երգուիլ, որ Սահակ-Մեսրոպեան զպրոցը, որի անունով արած էր կտակը, գոյութիւն ունի Նախիջևանում... Թէ որքան յաջողութեամբ նա կարողացաւ կատարել իւր վերայ առած պարտականութիւնը,--այդ կարելի է տեսնել նորանից, որ նա կարողացաւ կտակը ծանաչել տալ տեղական կառավարութեան, որոշեց Նախիջևանի Հասանելիք տարեկան եկամուտը և, վերջապէս, ստացաւ Հաւաքուած գումարի մի մասը: Մենք չգիտենք, թէ նա ճիշտ գումար պէտք է ստանար և ճիշտ ստացաւ, բայց Հաստատ գիտենք, որ 70—75 տարուայ ընթացքում Հաւաքուած բոլոր գումարը նա չկարողացաւ ստանալ, նա ժամանակ չունեցաւ Հաշիւ տալու իւր գործողութիւնների մասին,

չկարողացաւ իւր ճանապարհածախքի, Կալկաթայում վարած զատի և ուրիշ ծախքերի մանրամասն ցուցակը ներկայացնել Նախիջևանի Հասարակութեան, ուստի և նորա ստացած գումարի իսկական քանակութիւնը անյայտ մընայ: Այդ վերջին Հանդամանքն էր, որ պատճառ եղաւ չար մարդկանց չար լեզուներին լուրեր տարածելու Հասարակութեան մէջ, թէ Նալբանդեանցը բոլոր ստացած գումարը չէ յանձնել Հասարակութեան, թէ այդ փողի մի մասը իրան է առել և թէ, վերջապէս, նորանով Հարքստացել են նորա եղբայրները, ազգականները... Լուրեր, որ մինչև ցայսօր դեռ կարելի է լսել Նախիջևանի Հասարակութեան Հին սերնդին պատկանող մի քանի անձնաւորութիւններից, չենք ասում արդէն, որ այդ մասին ուղղակի ակնարկութիւններ կան Գաբրիէլ եպիսկոպոսի «Խալիբեան ուսումնարանի պատմութեան» մէջ¹: Մենք մեր ձեռքին փաստ չունինք հերքելու այդ լուրերը, որ բիժ են թողնում, սաուեր են ձգում Հանգուցեալի մաքուր յիշատակի վերայ, բայց մենք ուսումնասիրած լինելով նորա կեանքի մանրամասնութիւնները, նորա բնաւորութիւնը, նորա հայեացքը նիւթականի վերայ, իսպառ հրաժարվում ենք հաւատալ, որ Նալբանդեանցի պէս մարդը, որ բոլոր կեանքը զոհեց Հասարակութեան օգտին, կարող էր զողանալ Հասարակութեան փողերը: Մենք այդ լուրերը համարում ենք Կատարկապոլտ և չարալեզու մարդկանց անգործութեան արգասիք, զրպարտութիւն և բամբասանք Հանգուցեալի յիշատակին. նա մեռած է, նա չէ կարող արդարանալ, պաշտպանուել իսկ երբ որ կենդանի էր, նա, ինչպէս ասացինք, ժամանակ չունեցաւ այդ լուրերը իւր բնում խեղդել, որովհետեւ նախ քան Հասարակութեան Հա-

¹ Տե՛ս՝ «Պատմութիւն Խալիպեան ուսումնարանին». գլուխ Ժ, էջ 82—83:

շիւ տալ, ստիպուեցաւ տէրութեան հաշիւ տալ իւր անդգոյշ գործողութիւնների համար, բայց մենք, որ կենդանի ենք և վայելում ենք թէ՛ նորա զրական գործողութեան պտուղները և թէ՛ նոյն իսկ «Ճնդկական գումարի» արդիւնքը, պէտք է բողոքենք նոցա դէմ: Նալբանդեանցը մանրակրկիտ էր, բժախնդիր, դիւրագրգիռ և կրքոտ էր, մինչև անգամ կարելի է ասել, որ նա անհանգիստ ու խռովասէր էր, բայց գոյ չէր: Թող չմոռանան չարխօսները, որ եթէ դուրս չգար Նալբանդեանցը, Ճնդկական գումարը իսպառ կորած կըլինէր նախիջևանցւոց համար. կտակաւանդութեան օրից արդէն անցել էր 70 տարի և ոչ ոք նախիջևանցիներից այնպէս եռանդով չէր բարձրացրել այն խնդիրը, ոչ ոք սիրտ չէր արել այնպիսի մի դժուար ու երկար ճանապարհորդութիւն յանձն առնել: Ճնդկաստանը այն ժամանակ նախիջևանցւոց համար մի վերին աստիճանի անծանօթ երկիր էր: «Ճինդիստան» ասելով նոքա հասկանում էին մի շատ, շատ հեռու, համարեա՞ աշխարհիս ծայրում գտնուած առասպելաբանական աշխարհ, որտեղ զնացողը հազիւ թէ յետ գայ. քիչ սխալուած կըլինենք, եթէ ասենք, որ նոքա Ճնդկաստանի մասին այնպիսի կարծիք ունէին, ինչպիսի Կոլումբոսի նաւաստիները Ամերիկայի կամ նոյն իսկ Ճնդկաստանի մասին: Այդ այդպէս լինելով, նախիջևանցիք, մինչև անգամ եթէ Նալբանդեանցը ստացած գումարից մի բան ևս աւելի ծախսած լինէր, քան թէ հարկաւոր էր, պէտք է, չարխօսելու փոխարէն, շնորհակալ լինեն և օրհնեն նորա յիշատակը: Եւ պէտք է ասել, որ Նախիջևանի հասարակութեան մեծամասնութիւնը, խօսքներս անհատների մասին չէ, հասկացաւ նորա երախտիքը: Ուրիշ ոչ մի բանով չէ կարելի մեկնել այն շքեղ յուզարկաւորութիւնը, որ պատրաստուեցաւ նորա համար, այն սրտի անկեղծ արտայայտութիւնները, որ յայտնուեցան նորա դագաղի վե-

րայ. այն թաղում չէր, այլ ժողովրդական հանդէս, երախտագիտութեան հանդէս զէպի բարերարի յիշատակը:

ԳԼՈՒԽ Թ.

Նալբանդեանցի վերադարձը Կալկաթայից:—Նորա Հայաստանի քարտէզը տպելու և իւր ճանապարհորդութեան հաշիւը տպելու պատրաստութիւնները:—Նորա շտապով Պետերբուրգ գնալու պատճառները:—Նորա հաշուէտուութեան խնդիրը և թշնամիների զրպարտութիւնները:—Նորա Պետերբուրգի կեանքը և զբաղմունքը:—Նորա հիւանդութեան զարգանալը:—Նորա Կամիշին գնալը և այնտեղի կեանքը:—Նորա վերջին նամակները և յուսահատ դրութիւնը:—Նորա մահը և յուղարկաւորութեան հանդէսը:—Նորա թաղումից յետոյ պատահած դէպքերը:

Ճանապարհորդութիւնից Նալբանդեանցը վերադարձաւ 62 թուականին. նա ուղիղ Ռուսաստան չվերադարձաւ, այլ նորից այցելեց Եւրոպայի մի քանի տեղերը, 'ի միջի այլոց և Իտալիան, որտեղ ստացած հնդկական ոսկիները նա փոխեց իտալական թղթադրամի: Պետերբուրգ նա հասաւ 62 թուականի Յունիսի 18-ին և մէկ ամսուայ չափ մնաց այնտեղ. բայց այդ մէկ ամիսը, որ նա պէտք է զործ գնէր երկար ճանապարհորդութիւնից հանգստանալու համար, նա անց կացրեց հին Հայաստանի քարտէզը տպելու պատրաստութիւնների մէջ, որի մասին նա մի յայտարարութիւն ևս տպեց հիւսիսափայլում. նա մտածում էր զալ Նախիջևան, հաշիւ տալ հասարակութեան և մէկ ամսից վերադառնալով Պետերբուրգ, սկսել քարտէզի տպագրութիւնը: Բայց նա չկարողացաւ իւր այդ ցիտաւորութիւնը կատարել, որովհետեւ դեռ Նախիջևան հասած չհասած, նա ստիպուեցաւ նորից վերադառնալ Պետերբուրգ: Նորա այդպէս շտապով Պետերբուրգ վերադառնալը ժամանակակիցների պատմելով հետեւեալ կերպով է պատահում:

Նալբանդեանցի Նախիջևան ժամանելուց մի քանի օր յետոյ, երբ նա իւր հաշիւները կարգի դնելու վերայ էր և այդ պատճառով այցելութեան էր գնացել Հայրապետեանցին, Մազխատրատ են գալիս Տաղանթոզի քաղաքապետի մարդիկը և յայտնելով իրենց դալու նպատակը, առաջին դատաւոր Մանուէլ Գարաշաշի և մի քանի «բեշլիների» հետ դիմում են Նալբանդեանցի տունը: Եկողները սկսում են իրենց գործը, մինչև որ գալիս է և ինքը Նալբանդեանցը, որի յետևից Հայրապետեանցի տունը Մազխատրատից արդէն «աթլը կարաուլ»¹ են ուղարկած լինում: Թէև արդէն նորան յայտնի է լինում եղելութիւնը, բայց նա, գոնէ, արտաքուստ իւր հանդատութիւնը չէ կորցնում, չէ վրդովւում, այլ ընդհակառակը ուրախ և ծիծաղերես է երևում: Ասում են, որ մանեկով, տուն, նա շատ քաղաքավարութեամբ ինքը ևս սկսում է օգնել եկողներին, բանալով նոցա առաջ իւր գրքերը և թղթերը և, երբ որ ամեն բան վերջանում է, նա շամպայն է պահանջում, հիւրասիրում իւր անակնկալ հիւրերին և նոցա հետ ճանապարհ ընկնում: Եղելութեան լուրը կայծակի արագութեամբ տարածվում է քաղաքում և շարժելով բոլորի հետաքրքրութիւնը, ուրախացնում է նորա հակառակորդներին, նամանաւանդ Խալիբին և Սյվաղեան վարդապետին, որոնք հեռուդրով աւեստում են միմեանց իրենց թշնամու բռնուիլը և այդ առթիւ խնջոյքներ են սարքում, ուրախութիւն են տնում², և տխրեցնում բարեկամներին, մանաւանդ Հայրապետեանցին, որի մասին բիհեստենի³ ականատես խանութպանները պատմում են,

¹ Աթլը - կարաուլ և բեշլի կոչւում էին Մազխատրատի պահապանները, բեշլին հնգապետի աստիճան ունէր, իսկ աթլը - կարաուլը ձիաւոր ոստիկան էր:

² Տես Աղայեանցի իմ կեանքի գլխաւոր դէպքերը . «Մուրճ» 1893 թ. համար 6. էջ 933:

³ Բիհեստեն կոչւում էր խանութների այն մեծ շարքը, որ

որ դեռ ինքեանք ոչինչ չեմանալով, բայց տեսնելով հայրապետեանցին վրդովուած իւր տան պատշգամբում յետ ու առաջ գնալիս, շուտ-շուտ ներս ու դուրս անելիս, արդէն հասկանում են, որ մի արտաքոյ կարգի բան պիտի պատահած լինի: Ինչ ասել կ'ուզի, որ կատարուած եղելով թիւնը շատ ծանր տպաւորութիւն է թողնում նորա աղջականների վերայ և կատարեալ սգի մէջ է ձգում նորա ընտանիքը: Նորա հայրը, ծերունի Ղազարոսը, ինչպէս որ որդու գործերը քննելու ժամանակ նստած է լինում, այնպէս էլ որդու գնալուց յետոյ դեռ երկար ժամանակ սառած նստած է մնում: Նա ցնորվում է: Նա միշտ սպասում է իւր որդուն և ամեն անգամ, երբ զրած թղթի կտոր է տեսնում կամ գանում, կարծում է, որ որդուց նամակ է ստացել: Մէկ օր էլ, ասում են, նա զարթնում է կէս գիշերին, լուսաւորում է բոլոր տունը, բայց է անում դռներն ու պատուհանները և զարթեցնելով իւրայիններին, ասում է՝ «եկէք, ասօր որդիս պիտ գայ»: Ղազարոսի հիւանդութիւնը գնալով սաստկանում է, այնպէս որ վերջին ժամանակները արդէն անհետրին է լինում նորան տանից փոքոց դուրս թողնել: Նա մեռնում է 65 թ., ուրեմն որդուց մի տարով առաջ: Հօր մահից յետոյ խելագարվում է նորա մայրը, և այդ դրութեան մէջ ահանաւան է լինում որդու թաղման հանդիսին: Պատմում են, որ երբ տնեցիք թաղումից վերադառնալով, տանը ևս շարունակում են լաց լինել, նա հարցնում է նոցա՝ «ի՞նչու կուլաք»: Նոքա պատասխանում են՝ «մենք կուլանք, որովհետեւ դուն հիւանդ ես»:

պատկանում էր Գէորգ աղա Խաթրանեանին: Այժմ այդ շինութիւնը չկայ. Խաթրանեանի ժառանգները ծախել են նորան քաղաքին, որ խանութները քանդելով, տեղի մի մասի վերայ շինել է արքունի քաղաքային դպրոցի շէնքը, իսկ մեծ մասը միացրել է փողոցի հետ և ճեմելիք է շինել:

Սյն ժամանակ նա էլ սկսում է արտասուել: Եւ երբ որ նորան հարցնում են՝ «ապա դուն ի՞նչու կուլաս». պատասխանում է՝ «ինչպէս չըլամ, հանա տիրացու որդուս առին տարին. քարով զարկին զուսը պատուեցին. արունը կվաղէր...» Խեղճ հիւանդը ոչ մի տեղեկութիւն չունենալով որդուց, կարծես, ինչպէս որ ասում է այս մանրամասնութիւնները մեզ պատմող հանգուցեալի քոյր Գայիանէն, հօգուով է վկայում նորա մահուան մասին: Իշխանութիւնը Նալբանդեանցին այնպէս շտապով Պետերբուրգ հրաւիրելու անկասկած իւր յարգելի պատճառներն ունէր, բայց հասարակութեան համար այդ պատճառները անյայտ մնացին: Ոմանք ասում են, թէ նա հակատէրութեան կան մի գաղտնի ընկերութեան անդամ է եղել, ոմանք, թէ նա թղթակցութիւն է ունեցել կասկածելի մարդկանց հետ, որոնց հետ նա ծանօթացել է արտասահմանում, ոմանք էլ, իբր թէ նա արտասահմանից իւր հետ արգելուած զրբեր, թղթեր և պատկերներ է բերել, կան այնպիսիներն էլ, որ կարծում են թէ Սյվազեան վարդապետն է նորան իշխանութեան աչքին կասկածելի արել: Ինքը Նալբանդեանցը, գոնէ, այդ վերջին կարծիքը աւելի հաւանական էր համարում և իւր բոլոր անյաջողութիւնների ու դժբաղդութեան պատճառը Սյվազեանից էր առաջ եկած կարծում: Որ Նալբանդեանցը արտասահմանում կարող էր ծանօթացած լինել կասկածաւոր մարդկանց հետ, նոցա հետ թղթակցութիւն ունենալ, արգելուած զրբեր բերել—շատ հաւանական է, այդ նորատաք, անզգոյշ, անհեռտես և շուտ յափշտակուող բնավորութեան շատ յարմար է: Որ Սյվազեանը զգուած լինելով նորա հակառակութիւնից, նորա տեղի ու անտեղի վերաւորանքներից, կարող էր նորա բոլոր դործողութիւնները տէրութեան առաջ վատ կողմից նկարագրել, բողոքել նորա վերայ—այդ էլ ճշմարտութիւնից շատ հեռու չէ, բայց

որ միայն մէկը այդ կարծիքներից առանձին առած նշանակութիւն ունեցած լինի, մենք հաւանական չենք համարում: մենք կարծում ենք, որ վերոյիշեալ կարծիքները բոլորը միասին պէտք է նշանակութիւն ունեցած լինին:

Պետերբուրգում Նալբանդեանցը մնում է ուղիղ երկու տարի և տասն ամիս և այդ բոլոր ժամանակամիջոցը անց է կացնում անընդհատ աշխատութեան և զբաղան զբաղմունքի՝ մէջ: Սյոյ նորա համարեան երեք տարուայ անընդհատ աշխատանքի արդիւնքը եղան՝ մեր Աստուածաշնչի թարգմանութեան «համեմատութիւնը» Յունաց թարգմանութեան և Եբրայեցւոց բնագրի հետ, որի համար նա ստիպուած է լինում ուսանելու Յունաց և Եբրայեցւոց լեզուները, որ առաջ չգիտէր. Ղազար Փարպեցու «Թղթի թարգմանութիւնը», որի զբաբառ. օրինակը առաջին անգամ հրատարակել էր Էմինը Մոսկուայում 1853 թուականին ս. Էջմիածնի օրինակից. Պոռօեանցի «Սօս և Վարդիթեր» վէպի «քննութիւնը», որի համար հարկ է լինում հեղինակին ուսումնասիրելու բացի «Սօս և Վարդիթերից», և Աբովեանցի «Վէրք հայաստանի», որ նա շատ սիրում էր և որի հետեոջութեամբ նա գրել էր իւր «Մինին խօսք, միւսին հարս» վէպը. «Նիւթեր ֆիլիկա-ֆիլոլոգիական-պատմաբանական-աշխարհագրական ներածութեան համար», որի մասին իւր եղբօրը այդ ժամանակները Պետերբուրգից գրած նամակներից մէկում նա ասում է՝ «Ես պատրաստեմ նաև նիւթեր վասն ներածութեան մի մեծ գործի—ֆիլիկա-ֆիլոլոգիական-պատմաբանական-աշխարհագրական, նման բան դեռ ևս չէ եղած. ես այս գործի մէջ Բեքլին եմ պարտական, նորանից ուսայ: Բայց այդ նիւթերը դեռ ևս ցրուած են, պատճառ, ես առանձին զրութեանց (тезисъ) վրայ առանց կարգի եմ գրում: Սյոյ կտորները ես չեմ կարող այստեղ և անկարելի է միաւորել յառաջ քան գործիս վերջա-

նալը. . .¹ Բայց ամենամեծ աշխատանքը և իւր ժամանակի ամենամեծ մասը նա այդ միջոցում գործ է գնում աշխարհաբառ լեզուի ուսումնասիրութեան և նորա քերականութիւնը գրելու վերայ, որի համար նա անընդհատ զանազան աղբիւրներ էր խնդրում իւր եղբօրից: Իւր եղբօրը այդ մասին գրած նամակի մէջ նա խօսելով Մադատով—Սէյադի գրքի մասին, որ սխալմամբ ուղարկել էր նորան եղբայրը Սայաթ-Նովայի երգարանի տեղ, նա ասում է՝ «պէտք է քեզ ասեմ, որ ուղարկածդ այն չէ, ինչ որ քեզանից խնդրել էի: Քո ուղարկած գրքի բովանդակութիւնը մի անպիտան բան է, յիմար և անձոռնի ոտանաւորներ, աշխատասիրութիւն մի ոմն Մադատովի, որ իւր աղճատութեանց տակ Սէյադ է ստորագրում: Երևի թէ այդ իսկ անունը քեզ սխալանքի մէջ է ձգել, ըստ որում ես Սայաթ-Նովայի երգարանն էի խնդրել. այս վերջինս բոլորովին ուրիշ գիրք է: Ուղարկած ոտանաւորներդ որ և է գաւառական բարբառով չեն գրած, այլ աղաւաղած և աղճատած լեզուով, որ ոչ հօգի ունի և ոչ բնաւորութիւն. իսկ Սայաթ-Նովայի երգարանը գրած է ճիշտ և յատկապէս այն բարբառով, որով խօսում են Վրաստանի հայերը: Ինձ հարկաւոր են բուն բարբառները, և ոչ թէ լեզուների խառնուրդը: Սայաթ-Նովայի երգարանը, որ 1852 թ. տպուեցաւ Մոսկուայում, մի պատուական զիրք է, որի սկզբում գրած է նոյն բարբառի քրննութիւնը, Գէորգ Ախվերգեանի աշխատութիւն: Յուսով եմ, որ այժմ հասկացար թէ ինչ էի խնդրում: Մեծապէս կ'ուրախացնէիր ինձ, եթէ ձարէիր իմ համար «Սօս և Վարդիթեր» և «Վէրք հայաստանին». այստեղ երևի մեր ծանօթների մօտ կ'գտնուին, աղաչում եմ խնդրիր նոյա-

¹ Սյս նամակը, որ գրուած է 1863 թ. Ապրիլի 14, տպուած է Փարպեցու Թղթի Թարգ. վերջում իբրեւ յաւելուած. էջ 84:

նից և ուղարկիր ինձ: Նմանապէս ինձ հարկաւոր են մի քանի ուրիշ զրբեր և բառարաններ...»¹: Այդ երեք տարուայ նստողական կեանքը, որ հարկաւոր է լինում նորան իւր ձեռնարկած զրաւոր վաստակները 'ի կատարածելու, շատ վատ հեաւանք է ունենում նորա խանգարուած առողջութեան վերայ. նա զարթեցնում է և առանձին կերպով զարթեցնում նորա հին հիւանդութիւնը, որ սկսուել էր Մոսկվայում: Ծովային ճանապարհորդութիւնը, շարժուն կեանքն ու գործունէութիւնը և անընդհատ բժշկութիւնը եթէ ոչ բոլորովին, գոնէ, մի առ ժամանակ նորա հիւանդութեան արագ զարգանալու առաջն էին առել: Թոքախտը նորա մէջ ստացել էր մի տեսակ երկարատեւ, քրոնիկական բնաւորութիւն. նա թէև շարունակում էր իւր բնական ընթացքով զարգանալ և օրէ ցօր մօտեցնում էր նորան իւր վախճանին, բայց յոյս կար, որ դեռ շատ կարողանայ ապրիլ: Իսկ վերոյիշեալ պայմանների մէջ նորա հիւանդութիւնը փոխում է իւր բնաւորութիւնը և դառնում է արագընթաց, որին շատ է նպաստում և Պետերբուրգի կլիման, որ, ինչպէս, յայտնի է, կատարեալ թոյն է պղպխի հիւանդութիւն ունեցողների համար: Այդ ժամանակները, նամանաւանդ նորա Պետերբուրգում ապրելու երկրորդ տարին շատերն էին բարեկամներից աեսնվում նորա հետ՝ գեներալ Սուլթանշահը, Տէր-Գրիգորեան քահանան, իւր եղբայր Ղազարոսը, որ ամենայն օր համարեաւ այցելում էր նորան և միւսները: Թէև հիւանդութիւնը արդէն իւր կնիքը զրել էր նորա վերայ, թէև թոքախտի նշանները արդէն յայտնի կերպով երեւում էին մինչև անգամ ոչ բժիշկներին նորա աչքերի առանձին արտայայտութեան և բոլոր կազմուած-

¹ Այս նամակը, որ գրած է Պետերբուրգից 1863 թ. Ապրիլի 12-ին, տպուած է Փարպեցու Թղթի Թարգմանութեան վերջում իբրև յաւելում. էջ 77.

քի մէջ, բայց այդ տեսակցութիւնների ժամանակ նա աշխատում էր իւր բարեկամներին զուարթ երևիլ. նա բարեկամների հետ խօսում էր իւր պարապմունքների, իւր զրաւոր վաստակների, իւր ապագայում անելիքների մասին: Նորա Լազարեան ձեմարանի աշակերտներից մէկը հետևեալ կերպով է մեզ պատմել իւր նորան արած այցելութեան մասին: «Գործով Պետերբուրգում պատահելով, ես կամեցայ տեսնուել վարժապետիս հետ: Ես զրնայի նորա մօտ գներալ Սուլթանշահի և նորա Ղազարոս եղբօր հետ, որոնք միշտ այցելում էին նորան: Ինչ տեսնելուն պէս, նա փարուեցաւ և սկսաւ արտասուել: Նա թէև առանձին կերպով ծերացած չէր երևում, բայց շատ նիհարած էր, ճակատը բացուած և կզակները զուրս ցցուած: Վարժապետ Նալբանդեանից համարեա՝ ոչինչ չէր մնացել. առաջուայ Նալբանդեանցին յիշեցնում էին միայն աչքերը, որ վտիտ և չոր դէմքի վերայ շարունակում էին կրակի պէս վառուիլ ու ցոլալ: Իմ այցելութիւնս կարճատե եղաւ, որովհետեւ չէի ուզում անհանգիստ անել նորան. առանց այն էլ իմ այցելութիւնս, իբրեւ երբեմնական աշակերտի, շատ վրդովեց նորան: «Դու, ի՞նչպէս եղաւ, որ դու եկար ինձ այցելութեան», հարցրեց նա: Ես պատկանում էի հսկառակ բանակին՝ Մսերի, Էմինի, ուստի նա չէր սպասում իմ կողմից համակրութիւն, իմ այցելութիւնս նորա համար անակնկալ էր: Ես եկայ, պատասխանեցի ես, հարցնելու, թէ ի՞նչ է նշանակում հայերէն մտածել, որ զուք միշտ կրկնում էիք մեզ ձեր դասերի ժամանակ: Նա մի քանի խօսքով մեկնեց ինձ իւր ասածի միտքը, իսկ իւր կեանքի պայմանների մասին միայն այսքանը կարողացաւ ասել՝ «Ա՛խ, այն Այվազը...» 1865 թուականին Նալբանդեանցի զրութիւնը արդէն այնքան վատացել էր, որ արդէն ինքն էլ հասկանալով, որ իւր զրութիւնը վտանգաւոր է, որոշում է թողնել

մայրաքաղաքը, բայց բժիշկները խորհուրդ չեն տալիս, որովհետեւ նա այնքան թոյլ է լինում, որ նոքա կարծում էին, որ չէ կարող դիմանալ ճանապարհորդութեան: Տեսնողներն ասում են, որ նա այդ ժամանակ այնպէս փոխուել էր, որ չէր կարելի ճանաչել: Նա, ինչպէս որ այդ միջոցում սովորութիւն էր արել իւր համար ասել կատարեալ ոսկոր ու կաշի էր դարձել: Բժիշկների խորհրդին հետեւելով, նա այլ ևս վեց ամիս սպասում է մայրաքաղաքում, բայց տեսնելով, որ իւր դրութիւնը, փոխանակ լաւանալու, աւելի ևս վատանում է և գնալով թուլանում է, յոյսը կտրում է բժիշկներից և ապաւինելով Աստուծոյ օգնութեանը, նա ճանապարհ է ընկնում դէպի Սարատով նահանգի Կամիշին քաղաքը «ղլմրդ» խմելու: Թէ ինչպիսի դրութեան մէջ է հասնում նա Կամիշին, — այդ հրեում է նորա այնտեղից գրած առաջին նամակից՝ «Ամիս 7-ին, գրում է նա, մտայ Կամիշին առաւել մեռած քան թէ կենդանի. ճանապարհին քաջածներս անտանելի էին իմ վիճակում, բայց դարձեալ վերջին փութերս և ոգիներս գործ դնելով դիմացանք: Հասայ այստեղ հագիւ մի բնակարան գտայ և չորս օր պառկած էի ջերմով բռնված մինչև ստիպուեցայ հրաւիրել տեղոյս բժիշկներից մինը և խնդրել, որ տայ ինձ քինա և այլն և այլն. ընդունեցի և այս 2—3 օրն էլ տան պիտանի բաները ծարելու աշխատելով ահա այսօր առաջին նամակը գրում եմ ձեզ: Քաղաքի մասին լաւ բան չունիմ ասելիք, անպիտան մի տեղ է և ձմեռը բոլորովին մեռած. ամառը, ասում են, մի կենդանութիւն փայլում է անդադար շոգեհաւների և անցորդների պատճառով. բայց ես դորանից էլ օգուտ չպիտի քաղեմ, պատճառ, ապրիլի 15-ին թէ միայն մնացի կենդանի կերթամ քաղաքից դուրս մի հովտի մէջ, ուր շատ ծառաստանք կան և աղբիւրներ և ուր բժիշկ նայիտեսողը կուսիս է խմացնում տկարներին, ու-

ընդ մինչև սեպտեմբեր դրեթէ ես մնամ այնտեղ, ինչ կըլլայ եղիւր: Ինչանից շատ նամակ մի՛ պահանջեցէք, զիտէ Աստուած, որ չունիմ ուժ և զօրութիւն: Այս առդերը պրում եմ, բայց կուրծքս և թիկունքս ցաւից խեղդում են. երբ մի փոքր առողջանամ պարապութիւնից այնքան զրեմ, որ դուք էլ զգուրք, բայց առ այժմ ներեցէք»¹: Սակայն նա իւր սպասած այդ «մի փոքր առողջութիւնը» մինչև անգամ չէ գտնուում: Նորա չար բաղդից նայդենով բժիշկն էլ տեղափոխվում է Սարատով, ուստի նա այլ ևս չէ ուզում վերոյիշեալ հովիտը գնալ, այլ մտածում է մայիսի մէկից մինչև օգոստոսի 15-ը անց կացնել Սամարա նահանգի Սամարա քաղաքից 60 վերստ հեռաւորութեան վերայ գտնուած «Դմրդի» բուժարանում, բայց նա մայիսի մէկին չէ հասնում: Վինօգրադով բժիշկը, որ բժշկում էր նորան Կամիշինում, պարզապէս հասկացնում է նորան, որ նա օրէ ցօր մօտենում է գերեզմանին: Նորա կեանքի վերջին օրերի մասին մենք տեղեկութիւն չունինք: Նորա վերջին նամակը, որ գրուած է նորա մեռնելուց երկու ամիս առաջ, հետեւեալ կերպով է նկարագրում հանգուցեալի այդ ժամանակուայ դրութիւնը. «Մինչև մայիսի մէկը հասնելս Աստուած զիտէ. այս ոչ թէ լոկ իմ խօսքն է, այլ այստեղի եղածներից ամենալաւ Վինօգրադով բժիշկը ինձ պարզապէս ասաց, և ես օրէ օր մօտենում եմ գերեզմանին: Հաւատացէք այնպէս վատած եմ այժմ, որ ինքս ինձ հայելիի մէջ տեսնել վախենում եմ, վկայ է Աստուած, ջիւժը ամենայն օր հոգիս է հանում, քրտինքը, հազը և թուրք թիւ չունի, աւելցուր սոցա վերայ իմ անօգնական միայնութիւնը. մի

¹ Այս նամակը, որ գրուած է 1865 թ. դեկտեմբերի 15-ին Կամիշինից, տպուած է Միքայէլ Նալբանդեանցի համառօտ կենսագրութեան մէջ. Տես ՎՓարպեցու Թղթի աշխարհաբառ թարգմանութիւնը. էջ XIX—XX.

կուխարկա ունիմ անուանով միայն շէկ կաշա գիտէ, որ ես չեմ ուտում, այլ բան բնաւ, ուրիշ բան էլ չ'կայ...»¹։ Մարտի 31-ին նա այլ ևս չկար։ Նալբանդեանցի մահուան լուրը հասաւ Նախիջևան և քաղաքացիք, նամանաւանդ նորա բարեկամները՝ հայրապետեանցը և միւսները մտածեցին նորան արժանավայել կերպով յուղարկաւորել, որովհետեւ լսել էին, որ հանգուցեալը մեռնելուց առաջ ցանկութիւն է յայտնել իւր ծննդավայրում թաղուել։

1866 թուականի ապրիլի 13 էր։ Մեծ կենդանութիւն, մեծ շարժում կար Նախիջևանում։ բոլոր քաղաքը համարեա ոտի վերայ էր, ամբոխը դիմում էր դէպի քաղաքի ծայրը, դէպի գետը։ Իսկոյն երեւում էր, որ մի արտաքոյ կարգի բան է պատահել ամենին հետաքրքրող, ամենի սրտին մօտ։ Շտապող ժողովուրդի բերանից յաճախակի լսուող Նալբանդեանց, Մուխալ բառերը և հասու կտոր խօսակցութիւնը ցոյց էին տալիս, որ այդ օրը պէտք է Նախիջևան հոսանի հանգուցեալ Նալբանդեանցի մարմինը, որ նորա երեք եղբայրը, համաձայն մեռեալի վերջին ցանկութեան, բերում էին իւր ծննդեան տեղում հողին յանձնելու։ Այո՛, այդ մասին այլ ևս կասկած չէ կարող լինել։ ահա և բոլոր հոգեւորականութիւնը զգեստաւորուած, խուսկ ու մոմը ձեռքին, խաչ ու խաչվառով նոյնպէս դիմում է դէպի գետը, ահա և եկեղեցիների զանգակները զօղանջելով, հնչում են իրենց տխուր եղանակը։ Դօնի ափին մեծ ամբոխ է ժողովուրդը բոլորեքեան եկել են ընդունելու այն մարդու մարմինը, որ իւր կենդանութեան ժամանակ սիրել էր ժողովուրդը և ոչինչ չէր խնայել պաշտպանելու նորա շահերը, բոլորեքեան եկել են վերջին անգամ տեսնելու ճնդկաստանի հրիտակ-

¹ Այս նամակը տպուած է «Միջայէլ Նալբանդեանցի հաժառօտ կենսագրութեան» մէջ։ Տես Նալբանդեանցի Փարպեցու Թղթի աշխարհաբառ թարգմանութիւնը, էջ XX:

ները կորստից ազատողին: Երախտապարտ ժողովուրդը դադարը բարձրացնում է ուսի վերայ, և Հանդիսաւոր Թափորը շարժվում է դէպի մայր եկեղեցին, որտեղ կարգ կատարելով ցրվում է, որպէս զի առաւօտը նորից խռնուի աւելի մեծ բազմութեամբ Թաղման Հանդէսը կատարելու: Միւս օրը նոյն զանգահարութիւնը, նոյն ամբօխի կուտակուիլը, նոյն խօսակցութիւնը, շարժումն ու կենդանութիւնը: Ս. Լուսաւորիչ եկեղեցում 10 ժամին արդէն սկսուել էր պատարագը, եկեղեցում ասեղ ձգելու տեղ չկար. ամբօխը բռնել էր եկեղեցու բակը և մօտակայ տեղերը: Ամենքի երեսին երևում էր մի տեսակ լըրջութիւն, մի տեսակ Թախիծ, շատերը արտասովում էին: Թաղման կարգի կատարողն էր ծերունի Մկրտիչ վարդապետը, ներկայ էր քաղաքի Հոգեւորականութիւնը: Ազգականների ու Հարազատների սուգն ու կոծը, ժողովրդի խռնուիլը և վրդովմունքը գազաթնակէտին են հասնում, երբ պատարագը վերջանալով, սկսվում է Հանգստեան կարգը և վարդապետը դամբանական է ասում, թուելով Հանգուցեալի Նախիջևանին արած բարիքը, և նամանաւանդ երբ Հանդէս է դուրս գալիս Հանգուցեալի ընկեր Յովհաննէս Բերբերեանը և համառօտ, բայց սրտառուչ խօսքերով յիշում է իւր ընկերի բարեմասնութիւնները: Հանգստեան կարգից յետոյ բոլորեքան դուրս են գալիս եկեղեցուց և դիմում դէպի ս. Խաչ վանքը, որտեղ, իբրեւ մի առանձին պատիւ, որոշուած էր ամփոփել Հանգուցեալի մարմինը: Քաղաքի և վանքի մէջ եղած եօթ վերստ տարածութիւնը բոլոր ժամանակ համարեա՞լ դադարը ուսերի վերայ են տանում: Ետեւից գնում էին քաղաքացիք՝ մեծ ու փոքր, հարուստն ու աղքատը, աղան ու սոսկը, կին ու աղջիկ, ուրը ոտովը որը կառքով ու սայլով, բոլոր քաղաքը մասնակցում է յուզարկաւորութեան, կարելի է ասել մի առ ժամանակ բոլոր քաղաքը տեղափոխ-

վում է ս. Խաչ Թաղումն վերջանում է, բազմականները հոգեհացի ճոխ սեղանը վայելելուց յետոյ, ողորմի տալով հանգուցեալի հոգուն՝ դո՛ւ սրտով ցրվում են: Վանքի բակում բարձրաւանդակի վերայ, զանգակատան և եկեղեցու հարաւային դրան անկիւնում ահա բարձրացած է զերեզմանի հողաբլուրը: Նորան շրջապատել են մի քանի մարդ. դժբա հանգուցեալի մօտերիմ ընկերները և սրտակից բարեկամներն են. նոքա լուռ ու մունջ, մտախոհ կերպով յառել են իրենց աչքերը զէպի հողակոյտը, որի տակ ամփոփուած է այնքան եռանդ ու զործունէութիւն, այնքան իղձ ու ցանկութիւն, այնքան խանդ ու անձնուիրութիւն: Նոցա մէջ նամանաւանդ աչքի է ընկնում մէկը, որի աջակցութեամբ, որի թև ու թիկունքով զործել էր նա. դա հայրապետեանցն է, որի նիւթական և բարոյական հոգացողութեամբ պատրաստուել ու հոգացուել էր հանգուցեալի այդ վերջին կարօտութիւնը — շքեղ յուղարկաւորութիւնը¹:

¹ Մենք Նալբանդեանցի յուղարկաւորութիւնը նկարագրեցինք այնպէս, ինչպէս մինչև ցայժմ դեռ պատմում են ականատեսները: «Մեղու հայաստանի» լրագրի 1866 թ. 19 համարում հանգուցեալի թաղման հանդէսը հետեւեալ կերպով է նկարագրուած. «Նա (Նալբանդեանցը) զգալով իւր մահուան մօտենալը յայտնեց իւր ցանկութիւնը, որ նորա մարմինը թաղվի իր հայրենի քաղաքում, Նոր-Նախիջևանում, որ և կատարվեցաւ. նորա երեք եղբայրները շոգենաւով րերին հանգուցելոյ մարմինը Նոր-Նախիջևան, ուր Դօն գետի ափումը սպասում էր մեծ բազմութիւն նորան ընդունելու համար. Բաղմաթիւ յուղարկաւորները և Նախիջևանու բոլոր հոգեւորական դասը հանդիսով տարան մարմինը Լուսաւորջի մայր եկեղեցին. Սյս էր Սպրիլի 13. Միւս օրը ժամը 10-ին սկսաւ սուրբ պատարագը հանգուցելոյ համար. Խուռն բազմութիւն ժողովրդոց եկել էին իրանց վերջին հրաժարականը տալու իրանց բարեկամի անշնչացած մարմնոյն. Պատարագից յետ, ծերունի և Գերապատիւ Մկրտիչ վարդապետը ասաց ազդու քարոզ, որի մէջ յիշեց հանգուցելոյ բարի և օգտաւէտ յատկութիւնները. Երբ աւարտուեցաւ այս էլ, բոլոր եկեղեցականք շրջապատեցին հանգուցելոյ դագաղը և կատարեցին

Մենք ասացինք, որ բազմականները դո՛հ սրտով ցըր-
ուեցան. բայց արդեօք բոլորեքիսն դո՛հ մնացին, ոչ ամենեւին ոչ: Հայերի մէջ շատ սակաւ է պատահում, որ մի
որ և իցէ հասարակաց ուրախութիւն ուրախութեամբ էլ
վերջանայ, մի որ և իցէ հանդէս հանդիսաւոր էլ վերջ
ունենայ. միշտ ուրախութեանը հետեւել են տրտմութիւնն
ու վիշտը, հանդիսին աղմուկն ու խռովութիւնը. վկայ է
սորան հայոց ամբողջ պատմութիւնը: Յուդարկաւորու-
թեան հանդէսի շքեղութիւնից, հանգուցեալին տուած
պատիւներից դո՛հ չեն մնում մի խումբ կարող մարդիկ,
նոցա ձայնակցում են նոցա խնամիները, արբանեակները,
խունկ ծխողները: Թշնամիները կատաղած են, մեքենայու-
թիւն է, որ լարվում է, չարութեան և զրպարտութեան,
թղթեր է, որ գրվում է, քսութիւն է, որ լինում է: Նո-
քա օրէնքից են խօսում: Ի՞նչ իրաւունք կար կնքած դա-
գաղի կափարիչը բանալ, ի՞նչ խորհուրդ ունէր ազգական-
ների և հարաւատների վայր 'ի վերոյ գոռում-գոչումն,
նորան թագաւոր-եղբայր, իշխան-եղբայր անուանելը,
ի՞նչ իրաւունքով են հայրապետեանցը և նորա կուսա-
կիցները Նալբանդեանցին այնպիսի պատիւներ տալիս, այն-
քան շքեղ յուդարկաւորութիւն անում: Ուղարկած թըղ-
թերը ունենում են իրենց ազդեցութիւնը: Քննութիւն է
նշանակվում, քննիչ է գալիս և Մագիստրատից նշանա-

հանգստեան կարգը, այս ժամանակ յարգոյապատիւ պ. բժիշկ
Յովհաննէս Բերբերեանցը կարգաց դամրանական ճառ, որից յետ
բոլոր բազմութիւնը յուդարկաւորեցին հանգուցելոյ մարմինը մին-
չև քաղաքից դուրս, ուր դրվեցաւ դագաղը առանձին պատրաս-
տած կառքի վերայ, որն որ տարաւ նորան հանգստեան տեղը—
Սուրբ Խաչ վանքը, ուր հետեւեցին նորան բոլոր եկեղեցական-
ները և բազմաթիւ ժողովրդականները կառքերով. Այս տեղ կա-
տարվեցաւ թաղման վերջին կարգը ու մարմինը դրին գերեզմանի
մէջ: Պատրաստած էր մեծ հացկերոյթ, որնոր վայելեցին բոլոր
եկեղեցականները և յուդարկաւորները, ու ողորմի ասելով հան-
գուցելոյ հոգուն և օրհնելով նորա յիշատակը դարձան քաղաք:

կուած ներկայացուցչի ներկայութեամբ քննուած հետազօտուած է բոլոր գործի էութիւնը: Քննութիւնը բաւականին երկար է տևում, կոչվում և հարց ու փորձի են ենթարկվում 70 մարդ, մի շատ հաստափոր գործ է կազմվում, սակայն այդ բոլորի հետեանքը լինում է միայն քսութիւնների պարզուիլը և նոցա կուսակցութեան ինտրիգների արդիւնք լինելը և մեղադրեալների արդարանալը: Իշխանութիւնը ոչ միայն յանցանք չէ գտնում այն բանում, որ քաղաքացիք կամեցել են պատուել քաղաքի շահերին ծառայողին, հնդկաց հրետակների խնդիրը յաբուցանողին, կտակած փողերը կորստից ազատողին, յանցանք չէ գտնում այն բանում, որ հոգևորականութիւնը զիջանելով ազգականների բուռն ցանկութեան վերջին անգամ ևս հանգուցեալի երեսը տեսնելու, մասամբ ևս հայաստանեայց եկեղեցու սովորութեան հակառակ համարելով հանգուցեալի երեսը չտեսած թաղելը, բայց էր արել դադաղել կափարիչը և, վերջապէս, յանցանք չէ համարում ազգականների և հարազատների հանգուցեալին զանազան զովասանք տալը, իբրև հայ ժողովրդի ազգային սովորութիւն:

ԳԼՈՒԽ Ժ.

Նալբանդեանցի գրաւոր վաստակների շատութիւնը — Նորա տպագրուած և անտիպ երկերը:—Նորա գրուածների բաղմատեսակութիւնը:—Նալբանդեանցի իբրև հրապարակախօս:—Հայոց առաջին լուսաւորիչները:—Կեղծ լուսաւորութեան արգասիքը:—Հայոց գործիչների երկու հակառակ բանակի բաժանուիլը և նոցա կարծիքների մէջ եղած հսկան զանազանութիւնը:—Հրապարակի վերայ եղած կամ գրուած խնդիրները:—Նալբանդեանցի կարծիքները կրօնական, ուսումնարանական և ազգային լուսաւորութեան խնդիրների մասին:

Նալբանդեանցը իւր կարճատև կեանքի ընթացքում խիստ շատ է գրել. նա, կարծես, թէ զգացիլ է, որ ի-

րեն վիճակուած չէ երկար ապրել, ուստի և շտապել է ձեռնարկել բազմաթիւ զրաւոր վաստակների, որոնցից մի քանիսը նա ժամանել է գլուխ հանել, մի քանիսը կիսատ է թողել, մի քանիսի համար էլ միայն կարողացել է ծրագիր կազմել և նիւթեր պատրաստել:

Հանգուցեալի վերջացրած և առանձին գրքով հրատարակուած երկերը սոքա են՝

1. Թափառական չրէայ, — Եւթեն Սիւ. Ֆրանսիացի հեղինակի գործը, ընդարձակ յառաջաբանով Յիսուսեան կարգի արեղանների մասին. հատ. Ա. Մոսկուա 1857 թ.:

2. Դքսուհի դը-Շեվրեօզ, Կլեմանս Բոբերտի գործը, արտատպած հիւսիսափայլից, Մոսկուա. 1858 թ.:

3. Մինին խօսք, միւսին հարս, վէպ. Մոսկուա. 1857 թ.:

4. Երկու տող. Փարիզ. 1861 թ.:

5. Դազար Փարպեցու Թղթի թարգմանութիւնը. Ս. Պետերբուրգ. 1868 թ.:

Հիւսիսափայլի առաջին երեք տարուայ տետրակներում հրատարակուածները սոքա են՝

1. Յիշատակարան Կոմս Էմմանուէլի օրագրական թերթերից. 1858 թ. ամսատետրակ 4, 5, 6, 7, 8, 9, 10. 1859 թ., ամսատետրակ 1, 2, 8, 9, 11. 1860 թ., ամսատետրակ 5, 6:

2. Թալիսմաններ, գործ Ֆարր Դօլիվիէ. 1858 թ., ամսատետրակ 12.

3. Մխիթար և Մխիթարեանք. 1858 թ., ամսատետրակ 5, 6, 11:

4. Մեռելահարցուկ. 1859 թ., ամսատետ. 8, 9, 10:

5. Բանաստեղծութիւններ 1858 թ., ամսատետ. 3, 4, 5, 11. 1859 թ., ամսատետ. 6, 9. 1860 թ., ամսատետրակ 7:

6. Կրիտիկա, 1858 թ., ամսատետ. 1, 5:

7. Մանր յօդուածներ՝ նամակ առ հիւսիսափայլի

Հրատարակողը, 1858 թ., ամսատետ. 4, 11., Պրուպեր-
ցիա Բոսսի. 1858 թ., ամսատետ. 4., Աշխարհքի կազ-
մուածը և նորա Հրաշքները. 1858 թ., ամսատետ. 3.,
Դամբանական. 1858 թ., ամսատետ. 2., Նկատողութիւնք.
1858 թ., ամսատետ. 10., Ազգային Ժառանգութիւնք.
1859 թ., ամսատետ. 5:

Դրականական և Պատմական Հանդիսի գրքերում տը-
պուած են՝

1. Բանաստեղծութիւններ. (II, III, IV),
 2. Երկու խօսք—յառաջարան. (II),
 3. Սօս և Վարդիթեր, վէպ Պերճ Պռօշեանցի, քըն-
նութիւն. (III),
 4. Յաղագս Հայկական դպրութեան ճառ. (VI),
- Տէր-Գաբրիէլ Պատկանեանցի Արարատում տպա-
գրուած են՝

1. Բանաստեղծութիւններ՝ մէկը աշխարհաբառ, եր-
կուսը զրաբառ. «Արարատ» 1851 թ., համար 27, 32, 33:
Պօլսի Մեղուում տպուած են մի շարք յօդուածներ
Պօղոսեան և Ապօղոսեան խնդրի վերաբերութեամբ և Զա-
մուռճեանի դէմ:

Փորձ ամսագրի 1881 թուականի Հինգերորդ գրքում
տպուած է՝ Ստտանայի պաշտօնական մեծ Հանդէսը:

Հանգուցեալի անտիպ աշխատութիւններից յայտ-
նի են՝

1. Փորձ արդի աշխարհաբառ լեզուի քերականու-
թեան¹:

¹ Այս աշխատութիւնը, որ նա հասցրել էր մինչև բայերը,
«Քիմիայի Համառօտութիւն» վերնագրով գրուածքի հետ միասին
այժմ գտնվում է Հանգուցեալի քրոջ որդի պ. Յովհաննէս Խա-
չատրեանի մօտ. Դժբաղդարար քերականութեան թերթերի մի
մասը կորած է, իսկ եղածներից հազիւ թէ կարելի լինի մի ամ-
բողջութիւն կազմել:

2. Շերամարուծութիւն¹;
3. Աղցմիք (զրաբառ բանաստեղծութիւններ)²;
4. Աստուածաշնչի Համեմատութեան նիւթեր:
5. Փիղիկա-Ֆիլօլոգիական-պատմաբանական-աշխարհադրական ներածութեան նիւթեր³;
6. Գիմիայի Համառօտութիւն (կիսատ):

Նալբանդեանցի երկերի այս ցուցակից կարելի է տեսնել, որ Հանգուցեալը ձեռնարկել է ամեն տեսակ գրական աշխատանքի, զրականութեան Համարեւո՞րոք ճիւղերի մէջ էլ փորձել է իւր ոյժը: Նա թարգմանութիւններ է արել, վէպ, բնագիտական և քննադատական յօդուածներ է գրել, քերականութիւն է յօրինել, բանաստեղծութիւններ է շարադրել և զիտնական վաստակների է ձեռնար-

¹ Այս գրուածքը, որ բոլորովին պատրաստ է եղել տպագրութեան համար, այժմ՝ չկայ: Գուցէ հնարաւոր լինի գտնել նորան հանգուցեալ Միքայէլ-Տէր-Գրիգորեանցի թղթերի մէջ, որ, ինչպէս մենք լսել ենք, նորա մահից յետոյ անցել են նորա ազգական Մարկոս Իսկիւդարեանցի ձեռքը:

² Աղցմիք կոչուած բանաստեղծութիւնները մենք տեսած չենք. դժբա ևս մնացել են Միքայէլ Տէր-Գրիգորեանցի ձեռքին: Այդ բանաստեղծութիւններից նշանաւոր է եղել մի պօէմայ (Արկածք Ազամայ) վերնագրով, որի մասին Աղայեանցը ասում է՝ «գրածներից (Նալբանդեանցի) նշանաւոր էր Արկածք Ազամայ» պօէման, գրած ընտիր գրաբառով: Այդ բանաստեղծութիւնը գլխէ 'ի գլուխ բերան էր արել Մ. Բուդաղեանցը և ասում էր շատ տեղ: Դա մի շատ հրաշալի բանաստեղծութիւն էր, նկարագրում է բնականի կոիւր անբնականի դէմ, Ազամը վիճում է հրեշտակի հետ որ թող չի տալիս նորան սիրելու Նւային: Հրաշալի էր մանաւանդ սիրահարուած Ազամի և Նւայի գեղեցկութեան նկարագրիրը: Տես Աղայեանցի «Իմ կեանքի գլխաւոր գէպքերը». Մուրճ 1893 թ. № 9:

³ Աստուածաշնչի Համեմատութեան և Փիղիկա-Ֆիլօլոգիական պատմաբանական-աշխարհադրական ներածութեան նիւթերը հանգուցեալի կորած համարած ճանապարհորդական Յիշատակարանի հետ միասին գուցէ գտնվում լինին նոցա եղբորորդիների Ղազարոսի և Յարութիւնի մօտ: Մենք լսել ենք, որ նոցա մօտ գտնվում են հանգուցեալի գրուածները, բայց չենք կարողացել տեսնել:

կեր: Սակայն նա ոչ թարգմանիչ է, ոչ կրիտիկոս, ոչ վիպագիր, ոչ բնագետ, ոչ զիտնական և ոչ, վերջապէս, բանաստեղծ, այլ հրապարակախօս, որովհետեւ թէև նա մասնաւոր կերպով յաջողութիւն է գտել բոլոր իւր զրբաւոր ձեռնարկութիւնների մէջ, բայց նորա տաղանտը լայն ասպարէզ է գտել, իւր բոլոր ոյժով արտայայտուել է միայն նորա հրապարակախօսական գրուածներում: Ով որ միայն ուշի ուշով կարդացել, ուսումնասիրել է նորա Յիշատակարանները, Մեռելահարցուկը, Մխիթարեանք, Երկու տողը և Պօլսի Մեղուում տպուած յօդուածները և առհասարակ ով որ քննական աչքով է նայել նորա գրական գործունէութեան վերայ, անկասկած անհերքելի կերպով համոզուել է, որ նախնադեանցի գրուածների մէջ կան բոլոր այն տարրերը, որ յատուկ են հրապարակախօսներին: Աշխարհահայեացքի լայնութիւն, առաջարկութիւնների նպատակայարմարութիւն, հրապարակի վերայ եղած կամ դրուած խնդիրների բաղմակողմանի քննութիւն, ժամանակակից հանգամանքներին մօտ ծանօթութիւն, ամենախճճուած խնդիրների մասին պարզաբանութիւն, բաղմակողմանի դիտութիւն, դժուար հասկանալի վերացական մտքերի դիւրամբոնելի կերպով բացատրելու և ժողովրդականացնելու ընդունակութիւն, սուր զրիչ, անդիմադրելի փաստաբանութիւն և ակնիւ, անկաշառք համարձակութիւն — ահա նորա գրուածների գլխաւոր յատկութիւնները: Յայտնի է, որ մի ազգի հրապարակախօսը այդ ազգի իւր ժամանակի մտաւոր կեանքի ճիշտ պատկերը, հայելին է. նորա մէջ արտացոլում, պատկերանում են ազգի ժամանակակից կեանքի երեւթիւթները իրենց բոլոր լաւ և վատ կողմերով: Ահա այդ տեսակէտից նայելով և նախնադեանցի վերայ, կարելի է ասել, որ նորա հրապարակախօսական գործունէութեան մէջ պատկերանում է յիսնական և վաթսնական թուականների հայոց

կեանքը: Հայերը անցեալ դարի վերջերից և ներկայ դարի սկզբից մօտենալով Եւրոպային, սկսում են ընդունել այնտեղից քաղաքակրթութեամբ ազգերի լուսաւորութիւնը: Դժբաղդաբար այդ ընդունելութիւնը լինում է զխաւորապէս Վենետիկի և Վիեննայի Մխիթարեանների, հռոմի արքանեակների, պոպագանդայի աշակերտների և բողոքական միսիօնարների ձեռքով, ասել է թէ ոչ ուղղակի, այլ երկրորդական և երրորդական ձեռքից, ոչ յատուկ և անապական, այլ անմաքուր ազգիւրներից: Այդ տեղ, ինչպէս առհասարակ այդ պատահում է, երկու ծայրեր հանդիպում են միմեանց՝ հայերի վարք ու բարքի, կեանքի, գաղափարների և հայեացքների պարզ նահապետականութիւնը եւրոպական կեանքի աննահապետականութեան հետ, և սկսվում է հզօրի ազդեցութեան փոխանցումն թոյլի վերայ և դորա հետ միասին կամաց-կամաց պատրաստվում է անկեղծ լուսաւորութեան այն խմորը, մակարդը, որ միշտ այդպիսի փոխանցութեան անհրաժեշտ և համարեա՞ թէ անխուսափելի հետեանքն է լինում, որովհետեւ հայերը դեռ անպատրաստ լինելով, չեն կարողանում ջոկել լաւը վատից, փաստակարը օգտակարից, և ամեն բան, ինչ որ միայն եւրոպայիցն է գալիս, լաւի տեղ են ընդունում, լուսաւորութեան արգասիք և արդիւնք են համարում:

Անցնում է ժամանակ և այդ կեղծ լուսաւորութիւնը տարածուելով ժողովրդի մէջ, սկսում է տալ իւր պտուղները: Այլ այնուհետեւ մեր մէջ ամեն բան փոխվում է, ամեն բան տալիս ու վերայ է լինում: Պարզ կեանքի տեղը բռնում է զեղխութիւնը, մաքուր բարք ու վարքին փոխանակում է ապականութիւնը, անմեղ, պարզ ազիտութեան տեղը երևան է գալիս խաբուսիկ գիտութիւնը, արտաքին ցոլքը, շքեղութիւնը և ներքին դատարկութիւնը. միով բանիւ խեղճ հայր, որ կա-

մենում էր լուսաւորութիւն ձեռք բերելով երջանիկ լինել, աւելի ևս անբաղդ է լինում, որովհետեւ նա եւրոպական լուսաւորութեան, քաղաքակրթութեան բուն խորհուրդը չհասկանալով, ընդունել էր միայն նորա արտաքինը, կեղեք, որով եւրոպացի չղառնալով, զրկուել էր և իւր հայկական լուսաւորութիւններէց: Ճիշտ է, այդ լուսաւորութիւնը դեռ կպել էր եւրոպային մօտ կանգնած հայերին, տարածուել էր եւրոպայի հայ գաղութներում և մօտիկ էր մեր երկրի հայաբնակ մեծ քաղաքները միայն, բայց նա, եթէ միայն գործը այդպէս շարունակուէր, կարող էր շօշափել և հայութեան բուն ամբօխը, կարող էր վարակել և գիւղացիներին, որ դեռ շարունակուում էին խարխափել նահապետական տգիտութեան և թանձր խաւարի մէջ: Բարեբաղդաբար, ինչպէս առհասարակ այդ պատահում է, հայերի մէջ էլ այդ ծայրայեղութիւնները շուտով յառաջ են բերում ընդդիմադարձութիւն: Ժողովրդի միջից լսվում են անբաւականութեան ձայներ, որ պահանջում են թէ դեռ պէտք է նահապետական խաւարի մէջ ապրող հայ ամբօխի տգիտութեան և թէ նորա առաջնակարգ, կրթուած մասի մէջ մտած կիղծ լուսաւորութեան առաջն առնել: Գտնվում են մարդիկ, որ լսելով այդ բողոքի և անբաւականութեան ձայնին, իրենց վերայ են առնում հայի տգիտութեան դէմ թէ խօսքով և թէ գրչով մաքառելու գործը, և կամաց-կամաց կազմվում է մի թէև փոքր, բայց զօրաւոր շրջան հակառակ ուղղութեամբ, հակառակ նպատակներով: Այդ մարդիկը, որ լինում են հայոց առաջին գործիչները, առաջին հրապարակախօսները, դուրս են գալիս կամ նոյն իսկ ամբօխի միջից և կամ արտասահմանից փրադարձած կրթուած երիտասարդներից, որոնք առաջին ձեռքից, անտպական աղբիւրից ջամբած լինելով ուսման և լուսաւորութեան կաթը, աւելի շուտ են նկատում մեր հասարակութեան

պակասութիւնները և նորա մէջ հաստատուած սխալ
 ուղղութեան հետեանքները և աւելի եռանդով են հետա-
 մուտ լինում արմատախիլ անել նոցա: Սակայն ժամա-
 նակի ընթացքում կեանքի փորձը և գործունէութիւնը
 առաջացնում են զանազանութիւն և հայոց այդ առաջին
 հրապարակախօսների և գործիչների կարծիքների մէջ և
 ընդդիմադարձ կուսակցութիւնը ձեռքովում է երկու բա-
 նակի՝ իւրաքանչիւրը իւր բնորոշ կարծիքներով, ընդհա-
 նուր նպատակին համահիշտ համար գործ դրած միջոցնե-
 րով և հետեորդներով: Ոմանք յարձակողական դիրք են
 բռնում դէպի ազգը, մտրակում և հարուածում են նո-
 րան, երեւան են հանում, հռչակում են նորա վատ կող-
 մերը, թերութիւնները, պակասութիւնները, կամենալով
 ձեռքից եկած ամեն միջոցներով «խթան ընդօստուցիչ»
 լինել նորա համար, ոմանք, ընդհակառակը, ծածկելով
 ազգի վէրքերը, գովաբանելով, երկինք բարձրացնելով նորա
 առաւելութիւնները, կարծես թէ դորանով քաղցր օր-օր
 են կարգում նորան աւելի խոր ընկղմելու դարաւոր քնի
 մէջ: Առաջինները նմանում էին այն հմուտ վերաբոյժնե-
 րին, որոնք աւելի բանալով, աւելի զրգռելով հիւանդի
 վէրքերը, կծու, ցաւեցնող սպեղանիներ դնելով վերան,
 արմատական կերպով մաքրում են հոտած խոցը, բնակա-
 լած շարաւը և դորանով արգելելով բոլոր մարմնի վա-
 րակումը, իսպառ բժշկում են նորան. միւսները ընդհա-
 կառակը նմանում էին այն «ջառահներին», որոնք, տռանց
 վէրքը մաքրելու, աշխատում են շուտով ծածկել նորան,
 որով նոքա թէև մի առ ժամանակ թեթեւութիւն են տա-
 լիս հիւանդի ցաւերին, բայց շուտով նորա կորստեան
 պատճառ են լինում, որովհետեւ չմաքրուած, չարբուած
 շարաւը տուն տալով վէրքի խորքերում, շուտով ճանա-
 պարհ է բաց անում մարմնի և միւս անդամների մէջ և
 անարգել կերպով վարակում է բոլոր կաղմուածքը: Եր-

կու բանակի կարծիքների մէջ եղած այդ զանազանութիւնը վնասով մեծանում է և հետզհետէ սուր բնաւորութիւն է ստանում, նամանաւանդ դարիս առաջին կիսից՝ յիսնական—վաթսնական թուականներին:

Ահա հէնց այդ ժամանակներն է, որ Ս. Նալբանդեանցը սկսում է հրատարակել չիւսիսափայլը և Նալբանդեանցը իջնում է հայ հրապարակախօսութեան ասպարէզը: Բազմաթիւ խնդիրներ կային այդ ժամանակ զրուած հրապարակի վերայ, որոնք, մասամբ երկու բանակի մրցութեան, մասամբ էլ ոյժերի պակասութեան պատճառով դեռ չէին վճռուած: Հրապարակի վերայ զրուած և չվճռուած խնդիրներից նամանաւանդ նշանաւոր էին կրօնական, ուսումնարանական, զրահանական, ազգային ժառանգութեան, ժողովրդի պարապմունքի, լիզուի և բազմաթիւ մանր խնդիրներ, որ կամ առաջ էին գալիս զոյանից, կամ զոյա հետեւանքն էին և կամ, վերջապէս, զոյա երկրորդական կամ երրորդական ճիւղերն էին: Նալբանդեանցը իրրե լաւ դիտող, խոր թափանցող և բոլոր վիճաբանելի խնդիրների վերաբերութեամբ բազմակողմանի զիտութիւն ունեցող մարդ շատ ճշգրիտ կերպով վճռել է այդ խնդիրները, որն էլ չէ ժամանել վճռել, զոնէ, նորա վճռելու համար ճանապարհ է ցոյց տուել նորա կոնսպեկտը, ծրագիրն է կազմել. նա իւր բոլոր կրթութեամբ, զաստիարակութեամբ, իւր բնաւորութեան, իւր բոլոր կազմուածքի էութեամբ առաջին բանակին պատկանելով, միացել, ձուլուել է նորա հետ և իւր մէջ է ամփոփել նորա բոլոր ձգտումները, իգէալները, և պէտք է ասել, որ յաղթանակի անիւր կարողացել է նորա կողմը դարձնել: Կամենում էք գաղափար ստանալ վաթսնական թուականների հայոց առաջաւոր դործիչների գործունէութեան մասին, ճանաչել նոյա ուղղութիւնը, հոգին, կարգացէք Նալբանդեանցի Յիշատակարանները, ուսումնասիրեցէք առհասարակ նորա

գրուածները: Նա վաթսնական թուականների դործիչների ամենալուռ տիպարը, ներկայացուցիչն է. նա ինքը մարմնացեալ վաթսնական թուականներն է:

Կրօնական—դաւանարանական խնդիր ասելով, մենք հասկանում ենք հայերի իրենց ազգային եկեղեցին և դաւանութիւնը թողնելը և կաթողիկ ու բողոքական եկեղեցիներին յարիլը: Խնդիրը նորանումն է, որ զեռ երեքտասաներորդ դարի վերջերում և չորեքտասաներորդ դարի սկզբներում Ռուբինեանց թագաւորների բռնած սխալ քաղաքականութեամբ, հայոց բարձր հոգևոր իշխանութեան աններկի թուլութեամբ և Լամբրոնացու և նորա նման առաջնորդների քրիստոնէական ներողամիտ եղբայրասիրութեամբ, Պապերի անխոնջ աշխատանքով և Պրէմոնստրեան, Դոմինիկեան և Ֆրանչեսկեան արեղանների քարոզութեամբ Կիլիկիայում կազմուել էր մի փոքրիկ հայ կաթողիկ համայնք, որ գնալով մեծացել, վարակել էր բոլոր հայ գաղութները և Ունիտորների ջանքով մտել էր մինչև անգամ և բռն հայաստան: Սակայն դորանով զեռ չէր սահմանափակուել գործը: Յիսուսեան, Պռոպագանդայի և Մխիթարեան արեղաները բռնելով առաջին քարոզիչների տեղը, շարունակել էին նոցա սկսածը և օգտուելով հայաստանի քաղաքական թշուառ դրութիւնից և վայելելով եւրոպական կաթողիկ տէրութիւնների զեսպանների պաշտպանութիւնը, այնքան զարգացրել, այնքան առաջ էին տարել կաթողիկոսեան գործը հայերի մէջ, որ յաջողեցրել էին 1835 թուականին ձեռք բերել առանձին հայ կաթողիկ պատրիարք ունենալու իրաւունք և վտանգաւոր զիրք էին բռնել զէպի Լուսաւորչական Սուրբ եկեղեցին: Համարեա նոյն հանգամանքներից, նոյն ճանապարհով, բայց աւելի նոր ժամանակներում առաջ էր եկել հայերի մէջ և բողոքականութիւնը բողոքական տէրութիւնների պաշտպանութեան ներքոյ: Նալբանդեանցը

բոլոր սրտով ատելով Յիսուսեան աբեղաներին, պռուպ-
զանդայի աշակերտներին, բողոքական միսիօնարներին և
առհասարակ քրիստոնէութիւնը քրիստոնեաների մէջ
տարածողներին և իւր զրուածներում սաստիկ քննելով
ու հարուածելով նոցա գործունէութիւնը, պապականու-
թիւնը ոչ թէ միայն հայերի, այլ և ընդհանուր մարդ-
կութեան համար վնասակար համարելով, այնու ամենայ-
նիւ կատարուած իրողութիւնը ընդունում էր իբրեւ փաստ
և առաջարկում էր սիրով վարուել դաւանափոխների հետ:
Նա սեղ-տեղ հայերի կաթողիկոսների և բողոքականների դէմ
յարուցած հալածանքները թէ անցեալում և թէ իւր
ժամանակները աւելորդ և պատրիարքների ու առաջնորդ-
ների պրոպագանդայի դէմ գործ դրած խիստ միջոցները
սխալ և ապարդիւն էր համարում: Նա առաջարկում էր
օտարադաւան հայ քարոզիչների, պատրների և միսի-
ոնարների քարոզութեան դէմ մաքառել նոցա զէնքերով՝
քաբողութեամբ, ժողովրդի մէջ լուսաւորութիւն տարա-
ծելով: Մեր ձեռքին պտնվում է նորա անտիպ զրուած-
ներից մի հատուած, որ, ըստ ամենայնի, լոյս է սփռում
նորա այդ խնդրի վերաբերութեամբ ունեցած հայեացքի
վերայ: Իւր այդ զրուածքում նա առաջարկում է Օս-

¹ Այդ զրուածքը, որից մեր ձեռքն է հասել միայն մի
հատուած, կտակագրի ձև ունի, որովհետև սկսվում է այսպէս՝
«Մնացած երկու բաժինը իմ ունեցածի թողում եմ մի ազգա-
յին միաբանութեան, որ նոր պիտի հիմնվի հետեւեալ հիմնական
կանոններով...» Ինչպէս երևում է հայ հարուստներից մէկը
ցանկացել է, յայտնի բան է, նախանդեանցի զրգմամբ, իւր կա-
րողութիւնից մաս հանել նորա վերոյիշեալ նպատակի իրագործ-
ման համար, և նա գրել է նորա կտակը, Աւելորդ չենք համա-
րում դնել այստեղ այդ հետաքրքիր հատուածը ամբողջութեամբ:

«Մնացած երկու բաժինը իմ ունեցածի թողում եմ մի
« ազգային միաբանութեան որ նոր պիտի հիմնվի հետեւեալ հիմ-
« նական կանոններով, որոնց գործադրութիւնը յանձնում եմ
« որպէս կտակակատարներիս, այնպէս և բուն իրեն միաբանու-
« թեանը, իշխանութիւն տալով այս վերջինիս, որ այդ կանոն-

մանեան բաժնի Հայաստանի արեւմտեան մասում, Ճորոխ գետի ափերին, Պարխարեան լեռների ստորոտներում զբա-
նուած Հին վանքերից մէկի մէջ մի կրօնական միաբանու-
թիւն, ուխտ հաստատել, որի նպատակը լինէր ուսումն,
գիտութիւն տարածել Հայրենիքում, ճշմարիտ լուսաւո-
րութեան միջնորդ հանդիսանալ Եւրոպայի և Հայաստա-
նի մէջ: Վանքի միաբանութիւնը իւր ընդհանուր առաջ-
նորդով, ըստ կրօնականին, գտնուելով ամենայն Հայոց
Կաթողիկոսի և Պօլսի Պատրիարքի իրաւասութեան տակ,
ըստ ներքին կառավարութեան, պէտք է վայելէ անկախու-
թիւն, և ինքը տէր և կառավարիչ պէտք է լինի իւր

« ների վերայ հիմնվելով մշակէ իւր վախճանական սահմանա-
« դրութիւնը էական պիտոյքներին համեմատ. բայց առանց բնաւ
« իշխելու նաև յովտ մի փոխել այս հիմնական կանոններից,
« որոնք որպէս անկիւնաքար պիտի մնան յաւիտեան:

« Նախ, միաբանութիւն, ուխտ կամ կրօն, հիմնել և հաս-
« տատել Հայաստանի Օսմանեան բաժնում հնուց մնացած պա-
« տուական վանքերից մինի մէջ, որ գտնւում են Պարխար սա-
« րերի լանջերում, Ճորոխ գետի վերայ, որպէս զի միաբանու-
« թիւնը դիւրին և յաջող ճանապարհ ունենայ Սև ծովի միջ-
« նորդութեամբ Եւրոպայի հետ հաղորդակից մնալու: Միաբա-
« նութեան էական խորհուրդը և նպատակն է իւր վանքի պա-
« տերի մէջ կազմել մի ուսումնական ազգային հարազատ կենդ-
« րոն և այդ կենդրոնից ազդել ազգի լուսաւորութեան վերայ,
« հիմնելով և պահպանելով իւր մէջ դպրոց և տպարան:

« Նշյալ, և ոչ ուրիշ մի բան լինելով միաբանութեան խոր-
« հուրդը, նորա՝ ամեն ջանքը և ճիգը պիտի ուղղվի հսկել բուն
« ինքեան միաբանութեան վերայ այսինքն նորա ապահովութեան
« և մշտնջենականութեան վերայ, որպէս զի նորա հետ միասին
« նորա ազդեցութիւնը ևս ազգին վերայ լինի ապահովեալ և
« մշտնջենական:

« Միաբանութիւնը մեծ խնամով և զգուշութեամբ գործ
« դնելով իրեն յանձնված արծաթագլխի շահը, ըստ որում ար-
« ծաթագլուխը պիտի մնայ անձեռնամերձ ամբողջ, պիտի աշխա-
« տուի, որ հետզհետեւ եթէ ծախքի տնտեսութիւնից և եթէ այլ
« ազդեւորներից, արծաթագլուխը աճի օր ըստ օրէ որպէս զի ա-
« պագայ ժամանակներում աւելի արդիւնաւէտ լինելով ընդար-
« ձակի նոյնպէս և միաբանութեան ներգործութեան շրջանը,
« որ է կամաց կամաց դպրոցներ բանալ Հայաստանի այս ու այն

զանազան կողմերում հաստատուած դպրոցների և ուրիշ ուսումնական միաբանութիւնների, մի խօսքով դա պէտք է լինի մի երկրորդ. Մխիթարեան ուխտ միայն Լուսաւորչական դաւանութեամբ և ազգային ուղղութեամբ, ազգային նպատակներով. մինչև անգամ միաբանութեան տեղը ևս ընտրուած է հայաստանի այն մասը, որտեղ մի ժամանակ Մխիթար Սեբաստացին կոմենում էր հիմնել իւր ուխտը: Այդ հին «Ուխտեաց» վաւան է, որ գրտնուելով բուն հայրենիքում, մօտ հայաշատ կենտրոններին, ուրիշ տեղերի վերայ ունի այն առաւելութիւնները, որ Սև ծովի վերայով մօտ և հեշտ հաղորդակցութիւն ու-

« տեղերում, իւր աշակերտներից ընտիրները ուղարկել Ներսիս, վանքում ստացած ուսումները կատարելագործելու համար:

« Միաբանութիւնը, որպէս Լուսաւորչական եկեղեցւոյ հարազատ մնում է որպէս Կ. Պօլսի, նոյնպէս և Ամենայն հայոց Կաթողիկոսի իրաւասութեան տակ, բայց այս իրաւասութիւնը սահմանափակվում է լոկ կրօնական, այսինքն դաւանաբանական և ներքին եկեղեցական խնդիրների մէջ:

« Միաբանութեան վարչութիւնը կատարելապէս ազատ է որ և է ուղղակի կամ անուղղակի ազդեցութիւնից կամ իշխանութիւնից թէ Կ. Պօլսի պատրիարքի, և թէ ամենայն հայոց Կաթողիկոսի:

« Միաբանութիւնը գաղտնի քուէարկութեամբ կընտրէ իւր միջից իր առաջնորդը, որ և ընդհանրական վանահայր և հրամանատար ոչ միայն այն վանքին, միաբանութեան և դպրոցին, այլ և այն վանքերին միաբանութեանց և դպրոցներին որոնք ժամանակով կարող են ծաղկել ներկայ միաբանութեան անհուն ջանադրութեամբ:

« Միաբանութիւնը ընդհանուր և գաղտնի քուէարկութեամբ ընտրելուց յետոյ իր առաջնորդը, կըծանուցանէ Կ. Պօլսի պատրիարքին խնդրելով որ Նորին սրբազնութիւնը տնօրէնութիւն անէ պատշաճ թղթերը պատրաստելու առ ամենայն հայոց Կաթողիկոսը նորընտիր առաջնորդը Արքեպիսկոպոս ձեռնադրելու մասին, իսկ թէ ընտրվածը արդէն ունի այս աստիճանը այն ժամանակ միաբանութիւնը տեղեկութիւն կտայ որպէս Կ. Պօլսի պատրիարքին, նոյնպէս ամենայն հայոց Կաթողիկոսին:

« Միաբանութեան առաջնորդը է Մայրագոյն իշխանը այդ վանքի, և ամեն այդ վանքին պատկանած բաներին. սակայն ա-

նի Եւրոպայի հետ: Հայերի մէջ առաջ եկած զաւանու-
փոխութիւնը, եթէ միայն զորա առաջը չառնուի, Նալ-
բանդեանցի կարծիքով, շատ վնասակար հետեանք կարող
է ունենալ ազգի համար, որովհետեւ զորանով քակտւում
է ազգի ամբողջութիւնը, որ պահպանում է միայն եկե-
ղեցու միութեամբ: Նա կործում է, որ հայոց եկեղեցին
ինչպէս որ մեծ նշանակութիւն է ունեցել անցեալում,
այնպէս էլ մեծ նշանակութիւն ունի և ներկայ կեան-
քում: Նորանով է հայը պահել իւր ազգութիւնը, լեզուն
և ամենայն ինչ, որ միայն նուիրական է ազգի համար.
առանց եկեղեցու հայը շատ ժամանակ կորած և ձուլուած
կըլինէր ուրիշ ազգերի հետ: Խնկիլ են այդ պատճառով
հայի համար այն նշանաւոր հոգեւորականները, որոնք իր-

« մենայն կարգադրութիւն, ամենայն տնօրէնութիւն կըլինի վա-
« նական վարչութեան անունով, որ բաղկանում է 4 անգամնե-
« րից և որոնց նախագահ նստում է վարչութեան ատեանում
« Առաջնորդը:

« Վարչութեան անգամները կընտրվեն համօրէն միաբանու-
« թեան գաղտնի քուէարկութեամբ:

« Այս վարչութեան վերայ է միաբանութեան ներքին, ար-
« տաքին, նիւթական և բարոյական հոգսերը և պատասխանա-
« տու է կառավարչական և տնտեսական մասին միմիայն նոյն
« միաբանութեան ընդհանուր ժողովի առջև, որ և ունի լիակա-
« տար իշխանութիւն միշտ վերահասու լինել վարչութեան բոլ-
« նած ընթացքին և հսկել որ վարչութիւնը չ'խոտորի որ և իցէ
« պատճառով իր հիմնական կանոնից, որ է լինել գործիք ստոյգ
« լուսաւորութեան:

« Ոչ մի ազգային իշխանութեան՝ որպիսիք են Կաթողիկոս,
« Պատրիարք, կրօնական ժողով, ազգային վարչութիւնը և այլն
« և այլն իրաւունք չեմ տալիս ներս խառնվել միաբանութեան
« գործերի մէջ, կամ ազդեցութիւն բանեցնելու կամ հաշիւ
« պահանջելու և կամ որ աւելի խստիւ արգելվում է արծաթ
« կամ գոյք պահանջելու համար: Միաբանութիւնը ինքնավար
« է, և անպատասխանատու է արտաքին իշխանութեանց իւր կա-
« ռավարչական և տնտեսական մասին. լոկ կրօնական խնդրի
« պատճառով միաբանութեան մի անդամը կամ նոյն ինքը ա-
« ռաջնորդը կարող է ենթարկվել ազգային վարչութեան իշխա-
« նութեան կամ կաթողիկոսական իրաւասութեան»:

րև եկեղեցու առաջնորդ և գլուխ անաստան են պահել հայութեան փառքի այդ վերջին մնացորդը, ատել են եզրները, որոնք փորձ են փորձել խախտելու և այդ վերջին պատուարը: Նալբանդեանցի դաւանութիւնը հայ ազգի ամբողջութեան մասին այն է, որ «հայոց ազգը պիտի իւր գոյութիւնը պահպանէ իւր եկեղեցու միջնորդութեամբ»:

Ուսման, դաստիարակութեան և ուսումնարանական գործի մասին Նալբանդեանցի դատողութիւնները շատ լուրջ և որոշակի են: Նա կարծում է, որ մանուկը իւր դաստիարակութիւնը պէտք է ստանայ ընտանիքում իւր ծնողներից և իրեն շրջապատողներից, իսկ գիտութիւնը ուսումնարանում—ուսուցչից. ընտանիքը երեխայի դաստիարակութեան դպրոցն է, ուսումնարանը—նորան գիտութիւն մատակարարելու: Զգաստիարակուած կամ վատ դաստիարակուած մանուկը աւարտելով համալսարանի ուսման ընթացքը, գիտութիւնը իւր ձեռքին չարիք կարող է շինել, ուրեմն կարող է փնասակար լինել ոչ միայն իւր ընտանիքի համար, այլ և իւր հասարակութեան, մինչև անգամ իւր համար. չի օգնիլ նորան այդ դէպքում և ծնողների թողած ժառանգութիւնը՝ հարստութիւնը, արծաթը: Մանուկը իւր ծնողներից միայն լաւը պէտք է տեսնէ, որովհետև նա իբրև նոր կազմակերպուող մի էակ շատ շուտով ու հեշտութեամբ է ընդունում ամեն մի բան, որ միայն տեսնում ու լսում է իւր շուրջը. անբարոյական «Մեծ մայրը» միայն անբարոյականացուցիչ ազդեցութիւն կ'ունենայ մանկան վերայ: Երեխայի թէ դաստիարակութիւնը և թէ ուսումնառութիւնը պէտք է լինի իւր հայրենի հողի վերայ, ապա թէ ոչ նա կարող է ունենալ այն վիճակը, որ ունենում են մի հողից, մի կլիմայից դէպի միւս հողն ու կլիման փոխադրուած բոյսերն ու կենդանիները: «Վան քաղաքից էջմիածին տարված

երկայն բրդով մեծ-մեծ կատունները, մի քանի պորտ անց-
 նելով, կորուսին իրանց բրդի այդ յատկութիւնը և կա-
 մաց կամաց ընկան տեղական կատունների կարգը, թեթե-
 զանազանութեամբ», ասում է նա: Նա չէր հաւանում
 ոչ Մուրատեան, ոչ Հայկազեան, ոչ Խալիբեան և ոչ մին-
 չե անգամ Լազարեան ձեմարանի ուսումնատուութեան
 եղանակին. մի որ և է դպրոցի օգուտ առաջ է գալիս նորա
 ուղղութիւնից. իսկ այդ դպրոցների ուղղութիւնը չէր
 համապատասխանում ազգի պահանջներին: Նորա կար-
 ծիքով, հայոց կաթողիկոսը պէտք է հոգայ միայն ազգի
 կրօնական կրթութեան վերայ՝ ս. էջմիածնում դպրոց հիմ-
 նելով. Ներսիսեան և միւս հոգեւոր դպրոցները կանոնաւո-
 րելով, իսկ ժողովրդի ընդհանուր լուսաւորութիւնը պէտք
 է հոգայ ինքը ժողովուրդը, պարզ ժողովրդական դպրոց-
 ներ բանալով և եւրոպական երկրորդ կարգի վարժարան-
 ներ հաստատելով: «Հայ դպրոցը հարկաւոր է հիմնել և
 պահպանել այնտեղ, ասում է նա, ուր է ազգը, դպրոցը
 հիմնելուց առաջ ապահովել նորա մշտնջենաւորութիւնը,
 որ ազատ մնայ ամենայն պատահարների երեսից, դպրո-
 ցից առաջ հոգաբարձութիւն գործել օրինաւոր ազգային
 դաստիարակներ պատրաստելու համար, ազգային դպրոցը,
 ազգային լուսաւորութիւնը չշփոթել կրօնի կամ կրօնա-
 ւորների հետ, դպրոցի կառավարութիւնը յանձնել ու-
 սումնական աշխարհական անձերի, մերժել հոգեւոր վիճա-
 կից մարդերի իրաւասութիւնը որ և իցէ ազգային աշխար-
 հական դպրոցների վերայից, դպրոցը վարել ճիշտ եւրո-
 պական ուղղութեամբ, դպրոցի մէջ աւանդվելու ուսմուն-
 քը և գիտութիւնքը յառաջ վարել եւրոպական երկրորդ
 դասակարգի վարժարանների ընդարձակութեամբ»: հոգեւոր
 իշխանութիւնը շատ նպաստած կըլինի ազգի լուսաւո-
 րութեան գործին, եթէ միայն պատրաստուած քահանա-
 ների և վարդապետների ձեռքով անպարտ կենդանի

բարբառով քարոզէ ս. աւետարանը ժողովուրդի մէջ, որովհետեւ առանց քրիստոնէութեան չկայ ճշմարիտ լուսաւորութիւն, իսկ քրիստոնէութեան զլիսաւոր աղբիւրը աւետարանն է: Ժողովուրդը ինքն էլ պէտք է սովորի կարգաւ աւետարանը, որպէս զի կարողանայ հասկանալ իւր վարդապետների և առաջնորդների քարոզածը, իսկ դորա համար անհրաժեշտ է աշխարհաբառի վերածել սուրբ գիրքը: «Առանց նոր Կտակարանի,—ասում է նա,—սուտ է ամենայն քրիստոնէութիւն, և մեր ազգին բարոյապէս ամրանալու համար հարկաւոր է կարգաւ սուրբ գիրքը»:

Ազգը լուսաւորելու գործում, Նալբանդեանցի կարծիքով, պէտք չէ միայն բաւականանալ ուսումնարաններով, զանազան ուսումնական նպատակով հաստատուած ընկերութիւններ, թատրոնը, մատենադարանները և ընթերցարանները նոյնպէս նպաստում են ազգի լուսաւորութեան գործին: Նա առաջարկում էր հիմնել մի ընկերութիւն ճայոց պատմութեան և հնութեան ընկերութիւն» անունով, որի նպատակը լինէր ճայոց հին գրականութեան անտիպ զանաքը հրատարակել, մեր նախնեաց գրչի կորած վաստակները որոնել—գտնել, զրքերի յիշատակարանները ուսումնասիրել, հնութիւնները ժողովել, պեղումներ անել և ձեռք բերած նիւթերից օգտուելով ճայոց ազգային և եկեղեցական պատմութիւնը գրել, որովհետեւ մինչև այդ ժամանակ եղած ճայոց պատմութեան զրքերը իսկապէս պատմութիւն չէին, այլ զանազան անմշակ նիւթերի հաւաքածու. եթէ եւրոպացու աչքով նայելու լինէնք նոյա վերայ, շատ բան նոյա միջից կ'ոչնչանայ և շատ էջեր դատարկ կրճատն: Նա գուրդուրալով է խօսում ուսանողների առաջին անգամ 59 թուականին Մոսկուայում ճայոց լեզուով կազմած ներկայացման մասին, և թէ և մեծ արժանաւորութիւն չէ ցանկում ոչ ներկայացրած պիեսների՝ Փոլիկսենացի մշակած «Արիստակէս» ողբերգութեան

և Ալադաթեանցի «Վայ իմ կորած յիսուն ոսկի» կատակերգութեան գործողութիւնների և լեզուի, ոչ էլ խաղացողների խաղի մէջ, բայց և այնպէս զովում է նախաձեռնութիւնը և գործի սկզբնաւորութիւնը ազգի յառաջադիմութեան նշան է համարում: Նա շեշտում է թատրոնի դաստիարակիչ նշանակութեան մասին, ցաւում է, որ բեմի վերայ ոչ մի կին անձնաւորութիւն չի երևայել և առաջարկում է, գոնէ, տարին մի քանի անգամ Մոսկուայում հայկական ներկայացում կազմել, իսկ Թիֆլիզում մի մշտական հայկական բեմ հաստատել: «Յառաջ, դէպի յառաջ, այդ մասին բացազանջում է նա, և մի հաստաւոր կորած չէ սարի ահալին կազմուածքի մէջ, ամենայն կայծ կարող է բոլբոքել մի կրակ, եթէ ձեռնտու լինեն հանգամանքների յարմարութիւնքը»: Նա ինքը անձամբ շատ էր սիրում ներկայացումներ, և գործից ազատ ժամերը միշտ յաճախում էր մայրաքաղաքի թատրոնները, որոնց մասին և յաճախակի տեղեկութիւններ է հաղորդում իւր նամակներում բարեկամներին: Երբեմն էլ ցոյց տալու համար, որ շատ գործ ունի, զբաղուած է, նա իւր նամակներում նկատում է բարեկամներին, որ այնքան զուլիւր խառնուած է, որ մինչև անգամ թատրոն չէ յաճախում: Ազգը, որի համար պէտք է և պարտական է աշխատել ամեն մէկը, կազմում է, նորա ասելով, ոչ թէ կրթուած և հարուստ դասակարգը, այլ խեղճ, չքաւոր և տղիտութեան մէջ խարխալող զիւղացի ամբոխը: Երին առաջինները պէտք է ձեռքից եկած միջոցներով օգնեն, հարուստը իւր արծաթը տալով, զիտնականը իւր գիտութիւնը նորա օգտին գործ ածելով: Ազգութիւնը հաստատ է, երբ որ հաստատ է ընտանիքը, երբ որ հայ կինը ազգային տեսկէտից է ճանաչում իւր պարտականութիւնները դէպի իւր զաւակները, երբ նա աշխատում է նմանել հինգերորդ դարի հայ կանանց: Ըն-

տանեկան կամ մայրենի դաստիարակութեան մէջ է, ասում է նա, ազգի ապագայի սերմը»:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Հայոց հին և նոր գրականութիւնը և Նալբանդեանցի կարծիքը նորա մասին:—Ազգային ժառանգութեան և Հայերի անտեսական դրութեան խնդիրները և Նալբանդեանցի կարծիքները նոցա մասին:—Գրաբառ և աշխարհաբառ լեզուները:—Աշխարհաբառի զարգանալը և գրական նոր լեզուի կազմակերպուիլը:—Նալբանդեանցի կարծիքը լեզուի խնդրի մասին:—Նալբանդեանցի հակումն դէպի գիտնական պարապմունքը:—Նալբանդեանցի իւր գրութեան հերթը ներկայացրած հակառակ բանալի տիպարները:

Նալբանդեանցի կարծիքով իւր ժամանակուայ հայերը դեռ լուրջ քննադատութիւն — կրիտիկա չունէին, ուրեմն չունէին և գրականութիւն, որովհետեւ այդ երկուսը այնպէս անձուկ կերպով են կապուած միմեանց հետ, որ մէկը առանց միւսի գոյութիւն չէ կարող ունենալ, մէկը միւսի հետևանքը, արդիւնքն է: Ասելով, որ իւր ժամանակուայ հայը գրականութիւն չունի, յայտնի բան է, նա ուզում էր ասել, որ ժամանակի պահանջներին, հոգուն յարմար գրականութիւն չունի: Հայոց գրաբառ դասական լեզուն և նորանով գրուած պատուական գանձերը թէև շատ մեծ նշանակութիւն ունին, բայց ժամանակակից հայերի մեծամասնութեան համար չնղածի հաշուի են, որովհետեւ մեծամասնութիւնը նորան չէ հասկանում, չի օգտւում նորանից. նա միայն բաւականութիւն է տալիս ազգի սակաւաթիւ մասին՝ կրթուած հոգեւորականներին և աշխարհական ուսումնականներին: Վիեննացւոյ և Վենետիկեցւոյ աշխատանքով առաջ եկած գրականութիւնը իւր ուղղութեամբ, նպատակներով և բո-

վանդակութեամբ չէ համապատասխանում ոչ ազգի պէտքերին, ոչ պահանջներին. նա ազգից կտրուած մի բան է և կրում է մի առանձին մասնագիտական բնաւորութիւն. նա կամ հնի շարունակութիւնն է, կամ նոր կեղեւի տակ հին նիւթի մշակութիւնը, որ շատ անգամ իւր բձէճի մէջ պարունակում է կաթոլիկութեան թոյնը: Վիեննացու քարոզած մատենագրութիւնը, տոտում է նա, զանաւոյ կտրուած բաժանուած է ժողովրդից. դա ազգի հոգու բղխուածքը չէ, այլ մի դիմակաւորուած անձնաւորութիւն. իսկ այն մատենագրութիւնը, որի մէջ իբրեւ հայեւու մէջ չէ երևում ազգի կեանքը, նորա և ամենանուրբ գծագրութիւնը, այդպիսի մի մատենագրութիւն, թող ներեն մեզ այսպէս ասել՝ ճշմարտութիւնը, նման է ձեզուիթների կրօնաւորութեանը... այդպիսի մատենագրութիւնը այնքան դաստիարակիչ կըլինի ազգին, որքան մի խորթ մայր օտարի զաւակներին»: Նա հրճուանքով է խօսում Նազարեանցի «հանդէս նոր հայախօսութեան», «Վարդապետարան կրօնի» մասին, գովում է Պատկանեանցի «Խօբինդոնի» վատ թարգմանութիւնը, հպարտութեամբ մատնացոյց է անում իւր «Մինին խօսք, միւսին հարս» թոյլ վէպի և աննպատակայարմար «Դքսուհի դը Շելքեօզ» թարգմանութեան վերայ, յաճախակի յիշում է «Թափառական հրէայ» և «Պաւլոս և Վիրգինիա», մինչև անգամ և «Ճոզեղէն կերակուր հայոց երեխաների համար» և «Սյրբհնարան հայկական լեզուի» զրբերը ոչ թէ նորա համար, որ դոքա մի նշանաւոր բաներ էին, այլ որովհետև դոքա զրուած էին հասկանալի լեզուով և կորող էին ընթերցանութեան լաւ նիւթ լինել: զոցա նա համարում է հայոց նոր մտաւոր կեանքի սկիզբը և կարծում է, որ դոյն ճանապարհով պէտք է զարգանայ նոր աշխարհաբառ զրականութիւնը, որ իւր ուղղութեամբ, նպատակնիրով բոլորովին պէտք է զատուի հին գրականութիւնից:

Ինչպէս որ նոր հայերը նման չեն հներին, ինչպէս որ այժմուայ մեր կեանքի պայմանները, երեւոյթները, ձրգտումները, հոգին, պահանջումները նման չեն առաջուանին, նոյնպէս և գրականութիւնը չէ կարող նմանել հին: Յին գրականութիւնը հայական հին կեանքի արտայայտութիւնն է, նորը պէտք է լինի նոր կեանքի: Հնի մէջ երեւում է հին հայը իւր բոլոր մտաւոր կարողութիւններով, քաղաքական և քաղաքացիական պայմաններով, նորի մէջ պէտք է երևի նոր հայը իւր նոր կեանքի պայմաններով, վերջապէս, եթէ հին գրականութիւնը բաւականանում էր միայն հոգեւոր դասակարգի և աշխարհական անհատների սեփականութիւն լինելով, նորը չէ կարող այդպէս լինել: Նա պէտք է բոլորի սեփականութիւնը լինի: Անկասկած հին գրականութիւնն էլ նոր հայի համար կորած բան չէ, նա մի մեծ, անսպառ գանձ է, որտեղից իւր համար նիւթ պէտք է ժողովէ, պէտք է հարստանայ նորը, չնք ասում արդէն այն, որ նա ուղղակի կարող է նորանալ, եթէ միայն ջանք լինի թարգմանելու նորան և հասկանալի լեզուով մատուցանելու ժողովրդին: «Մենք մեր կողմից խոստանում ենք, ասում է նա, եթէ ամենակալ Տէրը շատ չհամարէ այս խոստումները և ժամանակ տայ մեզ, դնել մի օր մեր ազգի առաջ և նորա հինգերորդ դարու հեղինակների գործերը, զորօրինակ, Խորենացին, Եղիշէն, Ղազարը և այլն և այլն—նոր, ժողովրդական կենդանի և հասկանալի լեզուով»: Նախանդեանցի կարծիքով, ազգերը, հասարակութիւնները ևս, ինչպէս առանձին անհատները, ունին իրենց սեփականութիւնը, որ նոքա ստացել են ժառանգութիւն իրենց հայրերից ու նախահայրերից: Ազգը անպատճառ հոգ պէտք է տանէ այդ իւր ժառանգութեան վերայ, հակառակ դէպքում նա կըմասնաւոր յափշտակութեան, աւերանքի և կորստեան, ինչպէս որ մեր եկեղեցական իշխանութեան թուլութեան

և անհոգութեան պատճառով շատ ազգային-եկեղեցական
 և վանքական կալուածքներ, գումարներ, հասոյթներ և
 արդիւնք անհետ կորած և կորչում են, ինչպէս որ ազգի
 ձեռնհաս անդամների զատապարտելի անհոգութեամբ կոր-
 ցնում են իրենց նշանակութիւնը հնդկական կտակները,
 չենք ասում արգէն այն, որ չկորածներն էլ բռնակալ
 հրէցփոխների և շահասէր կտակալատարների անսահման
 իշխանութեամբ 'ի չարն են գործ դրվում, անկանոն կեր-
 պով են տնօրինվում, ինչպէս Նախիջևանի եկեղեցական
 գումարները, կամ Սամուէլ Մուրատի կտակը: Նալբան-
 դեանցի հրապարակախօսութիւնը շօշափելով հայի մտա-
 ւոր և բարոյական կեանքի բոլոր կողմերը, անուշաղիր չէ
 թողնում և նորա նիւթական կողմը: Նա, ինչպէս երե-
 ւում է, շատ լաւ է հասկացել, որ ազգի մտաւոր և բա-
 րոյական բարգաւաճումը սերտ կապ ունի նորա տնտեսա-
 կանի հետ. այնտեղ, որտեղ ժողովուրդը աղքատ է, որ-
 տեղ նորա տնտեսութիւնը խանգարուած է, այնտեղ և
 մտաւոր վարգացումը ստոր աատիձանի վերայ է: Նորա
 կարծիքով, ժողովրդի ապահովութեան գլխաւոր աղբիւրը
 հողն է, որ նա պէտք է սիրէ, փայփայէ, աչքի լոյսի պէս
 պահէ. հողից կտրուած ժողովուրդը կորցնում է իւր յե-
 նարանը, նեցուկը և դառնում է «եղէգն շարժուն 'ի հող-
 մոյ»: Հողը այն կթան կոմիւն է, որ երբեմն ամբողջ ընտա-
 նիք է կերակրում, նա այն կերակրիչ մայրն է, որի ստիները
 միշտ բաց է իւր հարազատ մանուկների համար. բայց
 պէտք է իմանալ օգտուել նորանից, պէտք է քրտինք թա-
 փել մշակել նորան, զիտութեան արդիւնաբերած արգա-
 սիքը գործ դնել նորա վերայ, ապա թէ ոչ նա կընմանի
 այն կովին, որ քաղցած մնալով, կաթից կրկտուի, կամ
 այն մօրը, որ լաւ անունդ չունենալով, սննդարար և ա-
 ոռոջարար կաթ չէ կարողանում մատակարարել իւր ե-
 րեխաներին: Խոհական կերպով գործ դրուած իրագործու-

թիւներ—ահա՛ մի ազգի ամենաարդիւնաւէտ և արդար պարտաւորութիւնքը: Արհեստները, զործարանական արդիւնաբերութիւնը ևս ապահովութեան աղբիւրներ են, բայց զօքա աւելի մասնաւոր նշանակութիւն ունին, քան թէ հողի հետ կապուած պարտաւորութիւնքը. դժբա շատ արդիւնաւոր են, եթէ միայն կայ հողը, որի շուրջը իսկապէս պտոյտ են գալիս նոքա: Իսկական հիմքը, կապիտալը հողն է, միւս պարտաւորութիւնները կապ ունին նորա հետ, նորանից են առաջ գալիս: Վաճառականութիւնն էլ շահաւէտ պարտաւորութիւնք է, եթէ միայն նա հասարակ տուր և առուութիւն չէ, հիմնուած խորդախութեան և խաբէութեան վերայ: Հայի վաճառականութիւնը մանրավաճառութիւն, փրիթզակութիւն է, տպարդիւն միջնորդութիւն է արդիւնաբերողների և զործ ածողների մէջ: Սյդպիսի վաճառականութիւնը հաստատուն հիմք չունի, ժամանակաւոր է: Հայը պէտք է արդիւնաբերող վաճառական լինի, նա ուղղակի Եւրոպայի հետ պէտք է հաստատէ իւր առևտրական կապերը, տալ թէ ոչ—նա անմիջական յարակցութիւն չունենալով Եւրոպայի հետ, միշտ ստիպուած կըլինի հնազանդել Ռուսաստանում, Տաճկաստանում և Պարսկաստանում գտնուած եւրոպական առևտրական տներին: Ընկերովի զործ տեսնել, մեծամեծ առևտրական տներ հաստատել, ձեռք քաշել փրիթզականութիւնից, վաշխառութիւնից, որ մի անպատիւ բան է—ահա այն միակ ճանապարհը, որ կ'արող է և շահ և պատուաւոր դիրք և վարի ընձեռել հայ վաճառականին: Բայց Նալբանդեանը իւր հրապարակախօսութեան ամենամեծ մասը նուիրել է լեզուի խնդրին: Պէտք է գրել ժողովրդին հասկանալի լեզուով, որովհետև ինչ որ զրկում է, ժողովրդի համար է զրկում: Եթէ ժողովրդի մեծամասնութիւնը քեզ չէ հասկանում, ապարդիւն է ուրեմն և քո այդ անհասկանալի լեզուով գրածդ. ժողովուրդը դորան չի կարգաւ:

Կ[թ]է մինչև անգամ դորա մէջ շատ խելացի, շատ օգտաւէտ մտքեր ևս յայտնուած լինին: Մինչև վերջին ժամանակները Հայ Հեղինակները սովորութիւն են արել իրենց մտքի վաստակները գրել զրաբառ լեզուով, ուստի և Հայոց զրահանութեան գանձերը մնացել են մեռեալ տառ ժողովրդի Համար. նա նորանից օգուտ չէ քաղել: Երեւի, Հեռաւոր անցեալում մեր գտական լեզուն աւելի հասկանալի լինելով ժողովրդին, նորա գործունէութիւնը ունեցել է իւր «ուզոն դ՛ետօք», բայց ներկայ ժամանակներում, երբ նա միայն սեփականութիւն է մի քանի հոտած փրտած գիտնականների, իսկ ժողովրդի մեծամասնութեան համար մի կատարեալ գիտի է, ոչ մի խորհուրդ չունի շարունակել Հների սկսածը և յամառութեամբ կարծել, որ կարելի է մեռածին կենդանութիւն տալ: Ժողովրդի մտքին սնունդ տալ, հետաքրքրել նորան կարելի է միայն մօտենալով նորան, յարմարելով նորա առօրեայ կեանքին, հասկացողութիւններին, խօսակցութեան ձևին և ոչ թէ տնհասկանալի, խրթին զրաբառով խօսելով նորա հետ. այդպիսով միայն կարելի է աւելի հեռանալ բարձրանալ նորանից: Ահա այս է Նալբանդեանցի Հիմնական կարծիքը լեզուի խնդրի մասին: Ժիշտ է, աշխարհաբօր Հայ ժողովրդի խօսակցութեան լեզուն լինելով, դոյութիւն է ունեցել գեա զրաբառից առաջ, իսկ երբ կազմակերպուել է զրահան զրաբառ լեզուն, նա, իբրեւ ժողովրդի կենդանի բարբառ, շարունակել է գոյութիւն ունենալ նորա հետ միասին. ճիշտ է, նա երկար դարեր զրաբառի հետ ապրելով, միշտ ազդել է զրաբառի վերայ, միշտ աշխատել է մուտք գործել զրահանութեան մէջ. ճիշտ է, նա շօշափելի հետք է թողել Խօմեհրօրդ զարի Հեղինակ Յովհան Մամիկոնեանի «Տարոնի պատմութեան» մէջ, իններորդ զարի Հեղինակ Շապուհ Բաղրատունու «Պատմութեան» մէջ, Բաղրատունեայ արձանագրութիւն-

ների, Կիլիկեան շրջանի տարեգրերի մէջ, մինչև անգամ
 նոյն իսկ Ոսկեդարեան Հեղինակներս զրուածքների մէջ,
 բայց նա խփապէս օտք է դրել զրահանութեան մէջ, իշ-
 խող դեր է սկսել կատարել միայն 13 դարի վերջերից
 և 14-ի սկզբներից: Գրաբառի մեր կենսքում այդպէս եր-
 կար կենաք ունենալու, նորա կենսականութեան պատճա-
 ւը, թէև, ինչպէս երևում է, ժողովուրդը կրէք նորան
 լաւ չէ հասկացել, իսկ վերջին ժամանակներում և հո-
 ղեօրականութիւնը և աշխարհական կրթութեամբ պատկար-
 զը մինչև անգամ դժուարացել են հասկանալ և գրել
 նորանով, պէտք է որոնել ժամանակի սրբագործութեան, հե-
 ղինակների հոգեօր կոչման և, վերջապէս, նորա այն ճկու-
 նութեան, այն կատարելագործութեան մէջ, որ տուել են
 նորան Հինգերորդ դարի հեղինակները: Իսկ աշխարհաբա-
 րի թուլութեան և անվստահութեան պատճառը, թէև
 նա, իբրև ժողովուրդի կենդանի բարբառ, հեշտութեամբ
 կարող էր յաղթութիւնը տանել, պէտք է որոնել նորա
 բաղմատեսականութեան, բաղմութիւ բարբառների բաժանուե-
 լու և հին հայոց աշխարհական պատկարզի կրթութեան
 պակասութեան մէջ: Մինչև անգամ ասելով, որ աշխար-
 հաբառ լեզուն 14 դարի սկզբներից զրահան լեզու եղաւ,
 չպէտք է հասկանալ, որ այդ ժամանակներից սկսած ար-
 զէն բոլոր հայ հեղինակները սկսան աշխարհաբառ լեզու-
 ով գրել, այլ որ այդ ժամանակներից սկսած հեղինակ-
 ները սկսում են յաճախակի աշխարհաբառ բառեր, ոճեր,
 դարձուածներ մտցնել իրենց զրուածքների մէջ: Իսկապէս
 այդ ժամանակներում գոյանում է զրահան լեզու, որ ոչ
 զրաբառ է և ոչ աշխարհաբառ, այլ մի խառնուրդ, որ
 կարելի է կոչել «զրաբառախառն-աշխարհաբառ»: Զուտ
 աշխարհաբառ լեզուով զրուած գրքերը սկսում են երևել
 17 դարի վերջին քառորդից: 1685—87 թուականներին
 Գիւլնազարի օրդի Զուլպայեցի Նահապետի Վենետիկ ապա-

րանից լոյս է տեսնում «Պարզարանութիւն Հոգեւորապ
սաղմնասցն Դաւթի», որ կարելի է առաջին աշխարհա-
բառ զիրքը համարել բայց դարանից յետոյ էլ զեռ աշ-
խարհաբառը ընդհանուր գործածութեան մէջ չէ մտնում,
մի կազմակերպուած զրական լեզու չէ դառնում: Ոմանք
զեռ շարունակում են զբաբառ զրել, ոմանք զբաբառա-
խառն - աշխարհաբառ և ոմանք, թէև աշխարհաբառ, բայց
բարբառներով: Միայն ներկայ դարիս սկզբներից է, որ ջանք
է լինում աշխարհաբառը մշակելու, կանոնաւորելու և
ընդհանուր գործածութեան մէջ մտցնելու: Պարբերական
թերթերի հրատարակութեամբ, մասնաւոր մարդկանց ջան-
քերով, որոնք նոր լեզուի համար «Քերականութիւններ» և
«Ուղղախօսութիւններ» են դրում¹, վերջապէս, յաջողում
է կազմակերպել առաջ արեւմտեան հայոց կամ ծածկա-
հայոց զրական լեզուն, յետոյ արեւելեան կամ Ռուսա-
հայոց: Մասնաւորելով մեր խօսքը Ռուսահայոց արբի
զրական լեզուի կազմակերպութեան վերայ, մենք պէտք է
ասենք, որ դուրս մշակութեան գործում մեծ դեր է խա-
ղացել հիւսիսափայլը, որի, ինչպէս ասել ենք, զխառնոր
աշխատակիցն էր Նալբանդեանցը:

¹ Արեւմտեան աշխարհաբառի առաջին քերականութիւն
գրողը եղել է Մխիթար Սեբաստացին 1727 թ., երկրորդը Ա-
մերիկացի Ռիկար անգլիերէն բացատրութեամբ, երրորդը մի խումբ
գրագէտներ Ուղղախօսութիւն արբի հայ լեզուի անունով 1853
թ. և չորրորդը Մ. Տ. Քիրիճեանը 1864 թ. Սոքա բոլորը ևս
յաջողութիւն չունեցան, որովհետեւ գրուած էին կամ գործին
անհմուտ մարդկանց ձեռքով և կամ չափուած ու ձեւուած էին
գրաբառի վերայ: Վերջապէս 1866 թ. դուրս եկաւ զիտնական
Արսէն Այտնեանի արբի հայ լեզուի Գննական քերականութիւնը,
որ քննութեան նիւթ չինելով և Արեւմտեան և Արեւելեան գրա-
կան լեզուները, վճռեց շատ բաց մնացած խնդիրներ և կանոնա-
ւոր աշխարհաբառ քերականութիւն գրելու հիմքը դրեց մեր մէջ:
Տես Գ. Զարբանալեանի «Պատմութիւն հայերէն ղպրութեան».
նոր մատենագրութիւն. էջ 90—98:

Աշխարհաբառ լեզուի մշակութեան խնդրի վերաբերութեամբ Նալբանդեանցի կարծիքներն ու հայեացքները միշտ մի և նոյնը չեն մնացել: Նա իւր հրապարակախօսութեան առաջին հինգ տարին (1858—1863 թ.), ինչպէս և Նաղարեանցը, կարծում էր, որ աշխարհաբառ լեզուն պէտք է զարգացնել մի որ և է բարբառի վերայ, փոխ առնելով գրաբառից ինչ որ պակասում է նորսն և ձգելով նորա միջից ինչ որ չէ համապատասխանում գրաբառին, և հէնց այդ ուղղութեամբ էլ նա գործում էր, բայց յետոյ նա իւր հայեացքը այդ խնդրի մասին բոլորովին փոխում է: «Ասենք թէ, ասում է նա այդ մասին, կարելի է զրել կոկ և հարթ ոճով, սակայն դարձեալ դժ ժողովրդի համար կըլինի օտար և խորթ. ժողովուրդը այդպիսի գրուածք երբէք և ամենեւին կարող չէ մարսել, ուրեմն դա չի միանալ նորա բարոյական կազմութեան հետ, վասն զի այդ կոկ ու հարթ գրուածքի տարերքը առնուած են ոչ թէ կենդանի, այլ հին ու մեռած լեզուից և կազմուած են հնացած սխտեմայի աղբեղութեան տակ, ուր երբեմն թէև լսվում են կենդանի լեզուից առած նախադասութիւնք, բայց դոքա առհասարակ անհետ կորչում են խիստ սխտեմամբութեան հեղեղների մէջ»: Խօսելով իւր հայեացքի այդ խնդրի վերաբերութեամբ փոխուելու մասին, նա ասում է. «Մենք առաջինը մոցրինք և ընդհանրապէս գործածեցինք գրականութեան մէջ քաղաքական լեզուն: Ահա արդէն 10 տարի ժամանակ է անցել այն օրից, երբ առաջին անգամ լոյս տեսաւ այդ լեզվով գրած զիրքը, և մենք միշտ հրապարակով յայտնած ենք մեր պատրաստութիւնը ուղղել մեր սխալները, եթէ բարեխղճաբար ցոյց տան մեզ...: Վերջապէս մեր այդ ասպարէզի վերայ ունեցած տասնամեայ փորձը, մեր յարաբերութիւնը ժողովրդի հետ, բերին մեզ վերոյիշած փրկարար խոստովանութեան, և այդ եղելութիւնը պէտք է

ուրախ սրտով յայտնենք—կատարվեցաւ առանց զրամուր-
ների և հնութեան պաշտօնների օգնականութեան»։ Իսկ
նորա վերոյիշեալ կարծիքը այն է, որ նոր զրահան լե-
զուն պէտք է բոլորովին անկախ և ինքնուրոյն կերպով
զարգանայ և ստանայ այն ձևը, այն կազմակերպութիւնը,
որ պահանջում է ժամանակի հոգին և ուղղութիւնը։
Լեզուն չպէտք է հնազանդեցնել կամ սարկացնել մի որ և է
բարբառի, որովհետեւ ամեն մի բարբառ համապատասխան
լինելով իւր զաւառի ժողովրդի պահանջներին, անբաւա-
կան և անհամապատասխան կըլինի մի ուրիշ զաւառի
բնակիչների պէտքերին. զրահան լեզուն պէտք է այնպէս
լինի, որ հաւասարապէս բոլորին էլ հասկանալի լինի,
բոլորի պահանջներին էլ բաւականութիւն կարողանայ
տալ։ Լեզուն մշակողները չպէտք է ուշադրութիւն զար-
ձնեն, թէ այս ինչ ոճը հրքան գեղեցիկ կամ հրքան մօտ
է հին լեզուին, այլ հասկանալի, թէ անհասկանալի է
մեծամասնութեան։ Լեզուի հետ զգուշութեամբ պէտք է
վարուել, որովհետեւ նա մի արուեստական բան չէ, որ
կարելի լինի հեշտութեամբ պատուաստել. «Ուղես, ասում
է նա, առ բոլոր ազգը և նստեց՝ ուր աշակերտական նըս-
տարաններու վերայ, որ անկարելի բան է, զարձեալ աշ-
խատանքի անօգուտ կըլինի»։ Լեզուն վարդապետութիւն
չէ, ամեն վարդապետութիւն կարելի է տարածել և գտնել
հետեորդներ, բայց լեզուն միշտ բնական օրէնքով առաջ
պէտք է ընթանայ։ Նա համաձայն չէ հախվերդեանի այն
կարծիքին, որ նա յայտնում է «Սայաթ-Նովայի» յառա-
ջաբանում՝ թէ իբրեւ հիմք զրահան լեզուին պէտք է
ընդունել Տարօնի բարբառը, որովհետեւ նորա մէջ աւելի
են պահպանուել հնութեան ձևերը։ Նորա կարծիքով, մի
որ և է բարբառի մէջ պահուած հնութեան ձևերը զեռ
ապացոյց չեն այդ բարբառի պիտանութեան կամ լուու-
թեան, ահա քեզ զբարբառը իւր կոկիկ ձևերով և կանո-

նաւոր քերականութեամբ, բայց նա մեռաւ, որովհետեւ այլ ևս չէ համապատասխանում ժողովրդի պահանջներին—նոյնը կրէին և այդ բարբառի հետ. նա տրմատ չէ կարող բռնել, որովհետեւ նորա մէջ պահպանուած հնութեան ձևերը հայ ժողովրդի մեծամասնութեան հասկանալի չեն: Աշխարհաբառի զարգացման պէտք է օգնեն հասարակաւ բոլոր բարբառները, բայց միայն նոյնանից օգտուողը մեծ զգուշութիւն պէտք է գործ դնէ: Եթէ հեղինակը կամենում է մի բարբառից մի որ և է ոճ կամ դարձուած փոխ առնել, այդ նա պէտք է անէ զաղտագողի, որպէս մաքսանենգութիւն: Մենք, ասում է նա, հիսփերդեանցի կարծիքը ընդունում ենք ոչ զրականապէս, այլ համեմատութեամբ»: Բարբառներից պէտք է ընդունել զխաւորապէս այն ոճերը, այն դարձուածները և քերականական ձևերը, որ ընդհանուր են բոլոր բարբառներին, ապա թէ ոչ—«ամենայն մի փորձ որ և է բարբառի կողմից միւս բոլոր բարբառների համար դրօշակ բարձրացնել «այսպէս խօսիր» վերնադրով, միշտ կրէին ձայն բարբառոյ յանապատի»: Լեզուի խնդրի վերաբերութեամբ իւր Յիշատակարանում, նամակներում և առանձին հրատարակութեամբ լոյս տեսած գրքերի յառաջաբաններում յայտնած այս թռուցիկ կարծիքներով նա չէր բաւականանում: Նա պատրաստվում էր իւր բոլոր հետազօտութիւնները և ուսումնասիրութեան արդիւնքը այդ խնդրի վերաբերութեամբ ամփոփել մի մեծ աշխատանքի մէջ, որ պէտք է լինէր Ռուսահայոց առաջին աշխարհաբառ քերականութիւնը, բայց յժբաղդաբար հիւանդութեան զարգանալը և վերահաս մահը շուտով ընդհատեց նորա այդ աշխատանքը. նա կարողացաւ միայն հասցնել մինչև բայերը...

Նալբանդեանցը վերացականութիւն, տեսականութիւն չէր սիրում. նա ինչ որ քարոզում էր, ինչ որ առաջարկում էր, սիրում էր իրականացած տեսնել, և իւր

մտքերի առաջին իրագործողը, կեանքի մէջ մտցնողը Հէնց ինքն էր լինում: Լեզուի մշակութեան, կազմակերպութեան մասին արտայայտած իւր հայեացքներն էլ նա աշխատում էր փորձել, ստուգել կեանքի մէջ, գործնականութեան բովից անց կայներ: Եւ Ճմարիտը պէտք է խոստովանել, նա հասնում էր իւր նպատակին: Ոչ ոք նորա ժամանակակից հեղինակներից այնպէս կոչ, հարթ ու հասկանալի աշխարհաբառով չէր գրում, ինչպէս նա, և, որ զխաւորն է, նա գրում էր այնպէս, ինչպէս որ խօսում էր, մի յատկութիւն, որ մինչև ցայսօր դեռ ընդհանրացած չէ մեր հեղինակների մէջ: Ղ. Աղայեանցը, որ իւր կեանքում երկու անգամ պատահել է նորան՝ մէկ անգամ նորա Ս. Էջմիածին գնալու ժամանակ, միւս անգամ Պետերբուրգում հիւանդ ժամանակ, նորա լեզուի մասին հետեւեալն է հազորդում մեզ: «Այս մարդուն (Նալբանդեանցին), գրում է նա, առաջին անգամ ես տեսել էի Թիֆլիս, ուր եկել էր Էջմիածին գնալու համար: Այդ ժամանակ մենք յափշտակուեցանք նորա ճարտար հայախօսութեան վրայ: Գրական լեզուով մենք դեռ ևս թութովում էինք. այսպէս չէր Նալբանդեանցը, նրա լեզուն արդէն կազմակերպւել էր և խօսում էր այնպէս, ինչպէս որ գրում էր: Իսկ հիմա նրան խօսել արգելել էին բժիշկները. թոքախտը մաշել էր նրան և առաջւայ Կալանդեանցի սուերագիծն էր մնացել: Բայց որքան զարգացել էր մտաւորապէս և որքան յետ թողել իրանից Ս. Նաղարեանցին: Համակիր չէր այլ ևս ոչ նրա լեզւին և ոչ նրա ուղղութեանը, համարելով յետամնաց և պահպանողական: Նալբանդեանցը աշխարհից կտրւելով՝ չէր կտրւել ժամանակակից գրականութիւնից, շարունակ կարդացել էր միայնութեան մէջ և շատ էր մտածել:

Իւր կեանքի վերջին տարիներում ստիպուած լինելով նստողական կեանք վարել, Նալբանդեանցը սկսում է

զբաղուել այնպիսի խնդիրներով, այնպիսի գրական աշխատանքների է ձեռնարկում, որոնք համարեն՝ ոչ մի կապ չունենին նորա հրապարակախօսական գլխավոր գործունեութեան հետ: Աստուածաշնչի համեմատութիւնը, Աշխարհաբառ. քերականութիւնը, Ֆիզիկա-Ֆիլոլոգիական-պատմաբանական-աշխարհագրական ներածութեան համար նիւթեր պատրաստելը և միւսները աւելի գիտնական ուղղութիւն ունէին, քան թէ հրապարակախօսական: Պէտք է կարծել, որ եթէ երկար շարունակուէր նորա կեանքի վերոյիշեալ եղանակը, նա կամաց-կամաց բոլորովին կը փոխէր իւր գործունեութիւնը և պարապմունքի ձևը և հրապարակախօսութեան աղմկալից ասպարէզից կ'իջնէր գիտնականի խաղաղ առանձնատենեակը: Մեր ձեռքին գտնվում է նորա Մխիթարեանց վարդապետներից մէկին՝ Յ. Աթանազինէին ուղղած նամակը, որով հանգուցեալը յայտնում է նոցա իրեն ուղարկած զրքերի ստանալու մասին և ենթադրութիւններ է անում, կարծիքներ է յայտնում հայոց Հին մատենադրութեան վերաբերեալ զանազան կնիքոտ խնդիրների մասին: Նորա Մխիթարեաններից թէ ստացած և թէ ստանալու զրքերը՝ Ներսէսի Շնորհալը՝ «Ճառք և Նամականի», «Էկլեզիաստիկէ», Գրիգոր Տղայի՝ «Նամականի», Ներսէսի Լամբր.՝ «Նամականի», «Մատենադրութիւնք Մովսիսի Խորենացւոյ», Յ. Ղ. Ինչիջեանի՝ «Նոր հայաստան», Քաջունը՝ «Հին հայաստան», «Հոգևոր Վարժութիւն» Իգնատ. Լոյսլայի և միւսները և յարուցած խնդիրները կատարելապէս ապացոյց են տալիս նորա այդ ժամանակուայ հակումները և ապագայ պարապմունքների ուղղութիւնը: Հետաքրքիր է նամանաւանդ նամակի վերջը: «Դիտեմ, զրում է նա, նամակս շատ ձգվեցաւ, և ձեզ էլ երկար տաղտկութիւն, բայց կենդանի է Տէրը և կենդանի է անձն ձեր, թէ թողից զՁեզ, մինչև այս վերջին խօսքս էլ հասկնա՝ Սոփերայց

20 զրբուհը բովանդակում է Ս. Շմառնի վարքը և ներբող 'ի վկայան Արևելից: Ազգարարութեան մէջ ասվում է... «Կամ զաղբս 'ի վկայան Արևելից, որոյ Հեղինակ Ասորի անշուշտ» և այլն: Եւ ծանօթութեանց մէջ. ծան. 4. այսպէս. «Յէջ 25. անուն քաղաքին որ պակասի 'ի մերում թարգմանութեան 'ի բնագրին Լիտան գրի» և այլն: Էջմիածնի ծառնաիրեներից մինի մէջ—Հրաշափառ տօնական, գրուած՝ 1456 - ին—Հատուած կայ այս ողբից այսպիսի վերնագրով. «Երանելոյն Արրահամու խոստովանողին տօնացեալ 'ի վկայան Արևելից»: Ուրիշ ծառնաիրեների մէջ ևս նոյն ողբի վանական հատուածները ցիր և ցան՝ դարձեալ վերագրվում են Արրահամու Խոստովանողին: Մինչև ձեր տպածը տեսնելը մենք կարծում էինք թէ այդ հատուածները գուրս են եկած «Արևելեաց» գրքից, որ թովմ. Արծր. յիշում է պարզապէս, այսինքն Արևելեաց գիրքը, բայց վերջը մէջ բերած ձեր բանքը զղրկեցին մեր հաւատար, ուստի եթէ անարժան չհամարիք, ձեր նամակի մէջ քանի մի տողով՝ ուսուցանել մեր տկարութիւնը, հաճեցէք: Ա. բնագիր ասելով (ծան. 4) ի՞նչ էք հասկանում, Ասորերէնը, եթէ այո՛, և եթէ Լիտան խօսքն էլ այնտեղից էք տունում, ասել է թէ բնագիր Ասորերէնը կայ ձեր ձեռքում, կամ գէթ ուրիշն մօտ, բայց վերջապէս ոչ անցայտ ձեզ, որովհետև քաղաքի անունը այնտեղից է յիշում ծանօթութիւնը: Բ. Լիակատար է բնագիր Ասորերէնը, թէ՛ նոյնպէս թերի, և ի՞նչ վերնագիր ունի: Գ. Ձե՛ք կարելի արդեօք Ասորերէնը հայերէնից թարգմանված ենթադրել, եթէ իսպառ անընդունելի համարել ծառնաիրեների մէջ այդ բանը Արրահամին վերագրվելը¹:

Բոլոր այս խնդիրները, որ շոշափում և վերոյիշեալ ուղղութեամբ վճռում էր իւր Հրապարակախօսութեան

¹ Այս նամակի պատճէնը մենք գտանք հանգուցեալի թղթերի մէջ. սա գրուած է 1865 թ. մարտի 22. Ս. Պետերբուրգից:

մէջ Նալբանդեանցը, հակառակ բանակը այլ տեսակ էր հասկանում, այլ տեսակ էր վճռում: Նոքա կրօնը ազգութիւնից չզանազանելով և հայ ասելով հասկանալով միայն լուսաւորչական չայերին, դաւանաւորներին համարում էին իրրեւ ազգից հեռացած, բաժանուած մի կտոր, իբրեւ զաւաճան, ոչ հայ, այլ «ախթարմայ» «պոօտ», «Ֆարմասօն», որոնք ուրանալով իրենց ազգութիւնը, միացել էին Ֆրանկների և լեւնէների հետ. նոքա բացի նորանից, որ եղբայր չէին համարում, չէին սիրում, չէին պատվում նոցա, այլ և հաւանում, համակրում էին նոցա դէմ տեղ-տեղ հանած հալածանքին, զոլաբանում էին նոցա դէմ խիստ միջոցների զիմող հոգեւորականներին, որով և շատ էին նպաստում արիւնակից եղբայրներին միմեանցից հեռանալու, միմեանց ատելու գործին: Նոքա բաւականանում էին չայոց զպրօցներում ընդունուած միջնադարեան կարգերով օրինակելի էին համարում չայկաղեան, Մուրատ-Ռափայէլեան, Խալիբեան զպրօցները, իսկ Լադարեան ձեմարանը մինչև անգամ քննութիւնից էլ վեր էին դասում, խուսափելով և աւելորդ համարելով ժամանակի պահանջներին համապատասխան հոգի և թարմ և կենդանի հոսանք մտցնել նոցա մէջ: Նոքա չայ ազգը ընդունելով նորա ամբողջութիւնը, առաւելութիւն էին տալիս նորա հարուստ դասակարգին, խունկ էին ծխում կապալառու վաճառականներին, վաշխառու և բռնակալ աղաներին, հասարակութեան մէջ զիրք, պաշտօն ունեցող ամիրաներին, էֆենդիներին և զորանով նպաստում էին բոլոր ազգային պաշտօնները, բոլոր ազգային գործերի ղեկավարութիւնը նոցա ձեռքը անցնելուն: Նոքա չայոց եկեղեցական կառավարութեան եղանակը ամենայարմարն էին համարում և ամեն մի առաջարկութիւն, որ վերաբերում էր եկեղեցական գործերի կառավարութեան այս կամ այն ձևի փոխելուն, հռչակում էին

իրրև ձգտումն դէպի զաւանստիոսութիւն, դէպի կրօնա-
փոխութիւն. նոքա բաւականանում էին զբարաւով կամ
զրաբաւախաւն աշխարհաբաւով, չէին աշխատում մշա-
կել նորա զրական լեզուն, իսկ եթէ պատահում էր, որ
աշխարհաբաւ էին զրում, այդ էլ միայն ստիպուած էին
լինում, որովհետեւ պէտք էր նոյն ղէնքով մաքառել հա-
կառակորդների դէմ և այլն և այլն: Նոցա հետ զժուար
էր վիճել, որովհետեւ նոքա զրուած կամ առաջարկուած
հարցերին ուղղակի չէին պատասխանում, այլ հակառա-
կորդի զրուածքի մէջ մի պակաս կողմ գտնելով, ձգնում
էին ապացուցանել, որ հեղինակը տգէտ է, մի խօսքով
խնդիրը անձնականի էին դարձնում: Առաջարկվում էր,
օրինակի համար, թողնել զրաբաւը և աշխարհաբաւը զը-
րել, նոր զրական լեզուն մշակել, կազմակերպել. նոքա
խնդրին ուղղակի պատասխանելու տեղ, կամ գովում էին
զրաբաւի գեղեցկութիւնը, ոճի վսեմութիւնը, կամ պա-
խարհում էին աշխարհաբաւի գոեհկութիւնը և կամ
ձգնում էին ցոյց տալ, որ Նաղարեանցը և Նալբանդեանցը
հայերէն չգիտին և, որ զլիաւորն է, նոցա տգիտութիւնը
երևան հանելու համար, աշխարհաբաւը զրաբաւի վերայ
էին ձևում, իրենց դատողութիւնների մէջ ղեկավարվում
էին զրաբաւի ոճերով, կանոններով ու ձևերով: Առաջարկ-
վում էր եկեղեցու պաշտօնեաների միջից վերացնել սի-
մոնականութիւնը, կաշառակերութիւնը, բարւոքել վար-
չութիւնը, հակառակորդները փոխանակ ապացոյց տալու,
որ կաշառակերութիւն չկայ, որ վարչութիւնը լաւ է,
սկսում էին բամբասել, թէ առաջարկողը կաթողիկոսութիւն,
բողոքականութիւն է քարոզում, թէ նա հայաստանեայց
սուրբ եկեղեցուն թշնամի է և այլն: Ահա հակառակ բա-
նակի բռնած այդ ուղղութիւնն էր, որ զրգուում էր Նալ-
բանդեանցի գայրոյթը և ստիպում էր նորան նորա ղեկա-
վարներին՝ «Մեզու հայաստանի» թերթի խմբագիր Ս. քա-

Հանայ Մանգինհանցին, «Ճռաբաղի» խմբագիր Մսեր Մազիստոսին, «Մասեաց Աղանի»-ի խմբագիր Գարրիէլ վարդապետ Այվազեանին, «Երեւակի» խմբագիր Զամուռ-Ճանին և միւսներին կոչել «սուտ ազգասէրներ», «մոսյ-լապատիւ օբսկուրանտներ», «Մաքիավելու հոգով խմոր-ված պարոններ», «պօլսատիկ», խաւարատեսիլ զիշերի զուակներ, խաւարատէր և կամակոր տղէտներ. նոցա այդ վարմունքն էր, որ ստիպում էր նորան իւր Յիշատակա-րաններում ներկայացնել նոցա տիպարը և Կոմս Էմմա-նուէլի և նորա հետևորդ «Շահրէկների» բերանով քննել «բէկլադէների» դործունէութիւնը: Նորա Մեռելահարցուկը և Սատանայի պաշտօնական մեծ հանդէսը մի-մի հանդի-ստրան են, որտեղ մեր աչքի առաջից, ինչպէս կալէյդոս-կոպի միջից, անցնում են զանազան դասակարգի, զանա-զան պայմանի մարդիկ. զոքա բոլորեքեան հակառակ բա-նակին պատկանող աշխարհականների և հոգեւորականե-րի ներկայացուցիչներն են: Ահա Մարկոսը, Շաքարեանցը, Մանթուխեանցը, Յովնաթանեանցը և միւսները, զոքա մի ընկերութիւն են կազմում՝ զոքա աշխարհական ազգա-սէրներն են. ահա և «Բէեղղբուղը», «Ծայրազոյն բրամի-նը», «գրականութեան դեապետը», «Անասնազուլութը» և միւս-ները. զոքա էլ մի ընկերութիւն են կազմում՝ զոքա հո-գեւորական ազգասէրներն են: Թէ աշխարհական և թէ հոգեւորական ներկայացուցիչների տիպարներն էլ առնուած են իրական կեանքից, քաշուած ու նկարուած են յիսնա-կան և վաթսնական թուականներում մեր կեանքում գեր խաղացող գործիչներից: Մինչև յայսօր դեռ ևս մեր պատ-մութեան և գրականութեան քաջ ծանօթ ընթերցողը հիշտութեամբ և համարեա՛ առանց սխալի կարող է մատ-նացոյց անել, թէ ո՞ր տիպարը ո՞ր գործչից է պատկերա-հանած. ահա՛ Զերբեզեանցը, Արարատեանցը, Կարինեանցը, միլիօնատէր Յովնանեանցը, ահա՛ և Մսերը, Սարգիս Զալա-

լեանը, Գաբրիէլ Այվազովսկին, Վենետիկի և Վիեննայի Մխիթարեանք: Այդ ազգասէրների կարծիքով, ազգասէր լինելու համար շատ բան հարկաւոր չէ. արժէ միայն ազգի պահասութիւնները ծածկել, օտարների առաջ զոյգել, երկինք բարձրացնել նորա առաւելութիւնները, զբաւարանել բամբասել ազգի վերայ վաս խօսողներին, ազգը խայտառակողներին, մի քանի կոպէկ ողորմութիւն տալ ազգի աղքատներին, ուրախանալ ազգի յառաջադիմութեան վերայ, և պրծաւ, գնաց. անձամբ աշխատել, նպաստել նորա յառաջադիմութեան,—այդ մի անհրաժեշտ պայման չէ: Ինքեանք ոչ ազգի երեսփոխան են, ոչ պաշտօնեայ. թող դորա վերայ հոգ տանեն կաթողիկոսը, առաջնորդները, ազգային պաշտօնեաները: Ազգասէր լինելու համար զիտութիւն էլ շատ հարկաւոր չէ. բաւական է, որ մարդ կարգացած լինի Սաղմոսը, Նարեկը, աղօթքները և շարականներից շատ բան բերանացի իմանայ, և ահա, պատրաստ է ազգասէրը: Նա միշտ կարող է իւր գիտութեամբ զարմացնել ազգաներին, պապանձեցնել, կտրել յանդուգն հարցասէրին, օրինակի համար, այսպիսի հարցմունքներ տալով՝ ի՞նչ է նշանակում «Որ ՚ի լերինս այլակերպեալ ցուցեր զքո զօրութիւնդ» և կամ ի՞նչ տեսել է «Լոյս զուարթ»: Դոցա տեսելով, նոր ուսմունքը դատարկ բան է. բուն եւրոպական ուսումը կախարդութիւնը, ալքիմիան և միւս միջնադարեան գիտութիւններն են, նամանաւանդ որ դոցա միջոցով, ինչպէս, օրինակի համար, ալքիմիայով, կարելի է և մեծ հարստութիւն ձեռք բերել և ազգի կարիքների համար զօրծ գնել: Բայց անավելիւ մետաղներից ստացած ոսկիներով չպէտք է դպրոցներ բանալ, որովհետեւ դպրոցից աւարտածները կորցնում են իրենց հաւատը, պաս չեն պահում, մատաղ չեն մօրթում, եկեղեցի շատ չեն յաճախում, ախտարների, ուրբաթազրքերի, վեցհաղարեակների և զանազան մագաղաթեայ գրչազիր երազա-

ցոյցների չեն հաւատում: Ազգի կարիքները կատարեալ կերպով հոգացուած կըլինեն, եթէ եկեղեցիներ շինուին, եղած եկեղեցիների պատկերները արծաթապատուին, ննջեցեալների դերեղմանները օրհնուին, ջրհորները փորուին, տանը մնացած աղջիկները մարդու տրուին, տօնի, վատիկի աղքատներին կերակուր և հանդերձ բաժանուի: Եւս առաւել ազգը կը յառաջագիւծի, եթէ Երուսաղէմ, ս. Կարապետ յաճախակի դարպաս ուղարկուի, Վարազայ, Օթեայ, Վանկոյ, Աղթամարայ և Գեղարդայ ս. Նշաններին նուէրներ տրուին: Այս բոլորով ազգասէրները մէկ անգամից երկու նպատակի կը հասնեն՝ մէկ որ աղզի կարիքները կը հոգան, երկրորդ՝ իրենց հոգու փրկութեան ճանապարհը կը գտնեն, նամանաւանդ որ էժան էլ կընստի: Շատ անգամ մանէթուկիսով կարելի է «օրհնենք աղիք» ստանալ՝ «ի սուրբ և Աստուածընկալ զրանէ... աստուածային օրհնութիւն եկեալ հանգիցէ, ծաւալեսցի ի վերայ ձեր և համայն ձերայնոց»: Նոր զրոյսն լեզուով, աշխարհաբասով ազգասէրները չեն զրում և խորհուրդ էլ չեն տալիս զրիւ որովհետեւ նա բոլորին հասկանալի է և «զըրկեալ է ՚ի կարի կարեւորաց կանոնաց ուղղախօսութեան»: Գրաբառի գործածութիւնը, նոցա կարծիքով, երկու զրլխաւոր խորհուրդ ունի՝ նախ, որ նա «համեզական և ազդոյ է» և, երկրորդ, որ նորանով կարելի է ծածկել հեղինակի ազիտութիւնը՝ զրիւ ամէն տեսակ յիմարութիւն և ամբօխի աչքին իմաստուն երեւի: Երէցփոխների ընտրութեան և նոցա գործունէութեան, հաշուեհաշութեան գործում ժողովուրդը գործ չունի. զորա համար կայ հոգեւոր իշխանութիւն, որ տարին մի անգամ քահանաների ձեռքով հեշտութեամբ և առանց ազմուկի կարող է աչքի անցնել հաշուեմատեանները և «ճոգեւոր կառավարութիւնս վերահասու եղեալ ստուգութեան հաշուոյ, ելից և մտից եկեղեցւոյն, եղիս գայնս ՚ի պատշաճեալ կարգի,

ըստ օրինացն հրամայելոյ. զորմէ ստորագրութեամբ անգամոց և զրութեամբ կնքոյ վկայէ» պաշտօնական վկայութեամբ վաւերացնել: Ազգասէրին ի՞նչ փոյթ, որ եկեղեցու անտեսական մասի տէրը ժողովուրդն է. նա է շինում եկեղեցին, նա է հոգում նորա պահասութիւնները, ուրեմն նա էլ չհաւատալով զանազան «ստորագրութեամբ անդամոց և զրութեամբ կնքոյ» վկայութիւնների, իւր անտեսից—երէցփոխից պէտք է հաշիւ պահանջէ:

Նալբանդեանցը այսպէս կէս լըջութեամբ, կէս հեղնօրէն ներկայացնելով հակառակ բանակի տիպարները, հերքելով նոցա կարծիքները, աջ ու ձախ հարուածելով, մտրակելով ազգի թերութիւնները, նոյն ժամանակ ջերմ սիրով սիրում էր իւր ազգը, նորա բարօրութեան մէջ էր որոնում իւր երջանկութիւնը, նորա թշուառութեան մէջ էր տեսնում իւր անբաղդութիւնը, իւր վեշտն ու թախիծը: Նա նմանում էր այն ծնողներին, որոնք իրենց հարազատների լաւութիւնն ու յառաջագիմութիւնը ցանկալով, ծածկում են իրենց սրտի խորքերում ծնողական սէրն ու գոլթը և, զոնէ, արտաքուստ խստութեամբ են վերաբերվում դէպի նոցա գործողութիւնները, խիստ դատաւոր են հանդիսանում նոցա արաքներին: Սակայն ինչպէս ծնողների իրենց զաւակների վերաբերութեամբ զործ զրաժ խստութիւնների, նոյն իսկ նոցա պատժի մէջ միշտ համարենս երևում է նոցա թաղցրաժ սէրն ու գոլթը, նոյնպէս և Նալբանդեանցի բոլոր քննադատական, յարձակողական, նոյն իսկ նորա ամենախիստ մտրակողական զրուածներում արտացոլվում է, ինչպէս թափանցիկ առարկաների միջից դուրս ցայտող ճրագի լոյսը, նորա դէպի իւր ազգայիները ունեցած անհուն սէրն ու բարեցակամութիւնը: Միայն ազգի սիրով պրոուող, ազգի յաւով մաշուող սրտից կարող են բղխել հետեւեալ խօսքերը՝ «Ո՛վ Նախախնամութիւն, ի՞նչու վառեցիր բորբո-

քեցիր իմ մէջ մի ազգասիրութեան անշիջանելի կրակ,
ինչու այդպէս անգթաբար պատժեցիր ինձ բորբոքելով
այդ կրակը, մինչ նա, փոխանակ ջերմացնելու իմ սիրելի
ազգակիցների պողած սիրտը, խորովելու էր իմ ներսը:
Նախախնամութիւն, խնայէ ինձ... Նախախնամութիւն,
խնայէ իմ սիրական ազգին. Նախախնամութիւն...»

Ազգի բարեկամները նոքա չեն, որոնք մի կողմ թող-
նելով նորա պակասութիւնները, շողոքորթում, շղջում
են նորա փառասիրութիւնը և դորանով պատճառ են
լինում նորան միշտ մի և նոյն դրութեան մէջ մնալու,
այլ նոքա, որոնք քննադատում, դատաւիտում են նորա
պակասութիւնները և դորանով ստիպում են նորան ըս-
թափուելու ուղղուելու, յառաջագիմելու: Նալքանդեանցը
ազգի ճշմարիտ և անխարդախ բարեկամն էր:

Ե. ՇԱՀԱՋԻԶ.

1894 թ. Նոյեմբերի 18-ին.

Նոր-Նախիջևան:



Դարերով լացիր, ո՞վ մայր հայրենիք,
Եւ արիւնահոս վերքերը ցարկ բայ,
Անվերջ տանջանքիդ ահաւոր զաղանիք
Անարցունք աչքից պահում ես ծածկած...
Մահամերձ հիւանդ՝ անփառք ապրեցար,
Հալուում ես կամաց դու մոմի նրման.
Դու կայծեր տուիր, խարոյկ չունեցար,
Գրնում ես դէպի անխաչ գերեզման:

Մընացել ես լուռ ինչպէս սև զիշեր,
Մենաւոր ճամբորդ՝ շուրջըդ պիշ աչքով
Նայում ես—արդեօք չե՞ն ցոլաց աստղեր,
Խաւար անապատն ահեղ կայծակով
Զի՞ լուսաւորուիլ արդեօք առաջիւ,
Զի՞ իջնիլ հրեշտակ քեզ հովանաւոր՝
Երկնադեղ զէմքին հաշտութեան ժլպիտ,
Զի՞ վառուիլ արդեօք այդը փառաւոր... .

Սպասում ես արդեօք որ նիրհըդ մահուան
Թափելու համար՝ որոտայ երկին,
Զոր ու հովիտներդ արեամբ ծովանան,
Որ վերքը սրբեն քո մաշուած կուրծքին.
Թէ՞ պիտի մընաս դու յուսահատուած,
Որ օրհասական ժամըդ վերայ գայ,
Ողջակէզ լինիս կենդանի մեռած՝
Բռնութեան զազիր սեղանի վերայ. . .

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.



ՏԱՃԻԿ ՓԱԹԱ

ԲՕԼԳԱՐ ՄԻԱՆՁՆՈՒՀՈՒ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ.

Բօլգարիայի սարերում ճանապարհորդելիս՝ մտայ
«Ընծայումն Աստուածածնայ» անունով կուսանաց վանքը
տեսնելու այն եկեղեցին, որ իբրեւ թէ շինուած էր շատ
հարիւր տարիներ առաջ: Ես ցանկութիւն յայտնեցի ծա-
նօթանալ մայրապետի հետ. ինձ տարան նորա խույր:
Երբ ներս մտայ, առաջս կանգնած էր մի քառասնամեայ
կին, որ գեռ չէր կորցրել իւր գեղեցկութիւնը և երեսի
զուարթութիւնը: Նա խմոր էր հունցում զաթայի հա-
մար: Նորա հագուստը շատ աղքատ էր. տկլոր մարմնի
վերայ հագել էր մի անշնորհք քուրձ, իսկ բոբիկ ոտնե-
րին կանացի ոտնամաններ: Բայց՝ չնայելով նորա աղքատ
հագուստին, շատ բարի զէմք և մարդասէր նայուածք
ունէր. այնպէս որ ամեն նորան տեսնողը կ'ասէր — զա թէև
հագնուած է աղքատ, բայց անպատճառ թշուառների
բարեկամ պիտի լինի և օգնող նոցա՝ նեղութեան մէջ:

Մենք շուտով մտերմացանք իրար հետ:

Դարակների վերայ և պահարաններում դարսած էին
տեսակ տեսակ զրբեր. շատ զարմացայ, երբ իմացայ, որ
դրանք իտալերէն, ռսերէն, յունարէն, սիրերբէն, բօլգարե-
րէն զրբեր էին. մի քանիսն էլ մինչև անգամ տաճկերէն
ձեռագրեր էին: Կար նոյնպէս Աստուածաշունչ և ուրիշ
շատ եկեղեցական զրբեր:

— Ինչպէս երևում է, քեզ զարմայնում է իմ գրա-
դարանը, — հարցրեց մայրապետը: — Ես զրբեր շատ եմ

սիրում և շատ էլ կարգում եմ: Իսկ մի բոլգարերէն զիրք կամ լրագիր տեսնելիս, հէնց զիտեմ, թէ հարազատ զաւաններս եմ տեսնում: Պէտք է ասել, որ բոլոր լաւ գրքերս, մանաւանդ բոլգարերէն լեզուով գրուածները, կողպած եմ պահում սնդուկումս:

— Բայց դու զիտե՞ս, որ գրքերը կարդալու համար են և ոչ թէ կողպած պահելու:

— Այո՛, ես այդ զիտեմ: Բայց ունեցած գրքերս ոչ թէ մի, այլ հարիւր անգամ եմ կարդայել, իսկ այժմ ոչ մի զիրք չունիմ կարդալու, ուստի սկսել եմ Աստուածաշունչը կարդալ տաճկերէն լեզուով:

— Բայց զորտեղ ես սովորել տաճկերէն, — հարցրի ես:

— Տաճկերէն, յունարէն, իտալերէն, բոլգարերէն, սլաւոներէն սովորել եմ դեռ ջահիլ ժամանակս, իսկ ռուսերէն և սերբերէն սովորել եմ կուսանոցում:

— Ի՞նչ զարմացնում ես, — ասացի, — ես չեմ կարողանում հասկանալ, որ դու կին լինելով և ապրելով կուսանոցի մի անկիւնում, ի՞նչպէս կարողացել ես այսչափ շատ բան սովորել:

— Զարմանալու ոչինչ չկայ, — ասաց մայրապետը քմծիծաղ տալով, — կեանքը ամեն բան սովորեցնում է: Իմ կեանքը անտանելի էր, ոչ ոք և ոչինչ չունէի, սր օրէի, այս պատճառով էլ ես սիրեցի գրքերը, ուսումը և միայն գրքերիս մէջ գտայ իմ ցաւերիս դեղը: Եթէ ցանկանում ես ծանօթանալ անց կացրած կեանքիս հետ, իմանալ քաջած չարչարանքներս, վեր առ այս տետրուկը ու լաւ կարդա՛, իսկ յետոյ ինչ ուզում ես՝ մտածիր իմ մասին, — ասաց նա:

Այժմ մեր առաջն է այդ փոքրիկ տետրակը, որ մեզ ծանօթացնում է այն տանջանքների հետ, որ քաշել են Բոլգարները Մահմուդ փաշայի տիրապետութեան օրով:

Ա.

Գլխովս անցածները շատ դառն են և վարհուրելի և շատ կ'ուզէի մոռանալ, բայց մարդ այնքան ոյժ չունի, որ զլիով անց կացածները մոռանայ: Զյիշել անցածը—վիճակուած չէ մարդուն, այս պատճառով էլ ակամայից մտաբերելով սարսափելի անցեալս, միշտ ինքս ինձ հարցնում եմ. ի՞նչու համար է վերջապէս մարդս տշխարհ եկել: Եթէ նա աշխարհ է եկել միայն չարչարանքներ քաշելու և արտասուքներ թափելու, աւելի լաւ էր, եթէ չճնուէր: Ի՞նչու են բոլոր մայրերը երեխաներ ծնում. մի՞թէ նորա համար, որ բոլորը տարիներով եղի նման աշխատի, չարչարուի, իսկ թուրքը նորա արիւն-քրտինքով դատածին տէր դառնայ և նորա հաշուով ուրախ, անհոգ կեանք անց կացնի: Մի՞թէ նորա համար են բոլոր մայրերը երեխաներ մեծացնում, որ սուրը, կրակը, կախաղանները, կացիւնները վերջ տան նոցա կեանքին. էլ ո՞ր մէկը ասեմ... Բոլորներ, փրկուելու հնարներ մտածեցէք. թագընէք ձեր սնդուկները, ահա՛ ազահ, կատաղի թուրքը կրգայ և Մահմեդի անունով ձեր փորը դուրս կըթափի: Մայրե՛ր, պահպանեցէ՛ք ձեր աղջիկներին, նոցա սպասում է խայտառակութիւն և անբաղդութիւն: Թաղընէ՛ք ձեր տղաներին, նոքա կըթրքանան և վերջը ձեր զլխին կրակ կըթափեն: Միայն տաճիկները չեն, որ այսպիսի անդթութիւններ են անում, յոյներն էլ Ասատուծոյ և կրծնի անունով պատրաստ են մեզ ծախել, ում կամենաք հէնց նորա համար, որ իրենք լաւ ապրեն: Նոքա տաճիկների հետ խօսք են կապում և այնուհետեւ սկսում են կոտորել բոլորներին, փակում են բերդերում, ծովում խեղդում են և ջահիլ տղաներին ու աղջիկներին թրքացնում են և այլն... Յոյները քարոզում են. «Մենք բոլորս

էլ եղբայրներ ենք. միմեանց, մինչև անգամ մեր թշնամիներին էլ պէտք է սիրենք»։ Իսկ տաճիկները ասում են. «Մեզ Աստուած և Նորա մարգարէն իրաւունք են տուել պատժել ամեն չարութիւն, պակասութիւն և ամենը՝ ինչ որ օրէնքից դուրս է»։ Բայց թէ տաճիկները և թէ յոյները անխիղճ կերպով սուտ են ասում. երկու աղգների քարոզածներն էլ խօսքեր են միայն։ Ուղիղն ասած, պատահում է ժամանակ, որ յոյները իրենք էլ են խոստովանում, որ եթէ Բօլղարները և Սերբերը չլինէին, իրենք քաղցածութիւնից կըմեռնէին և թէ Տաճկաստանում անկարելի է առանց ցածութիւններ անելու ապրիլ. որ այդ բոլորը ճշմարտութիւն է, դորա կենդանի օրինակը ես եմ։

Ես ծնուել եմ Տրքնով քաղաքում. Հայրս Հարուստ մարդ էր և ունէր սեպհական տուն։ Մեր քաղաքը շինուած էր սարի լանջին, որի մօտով անցնում էր Եանտրա գետը։ Այդ քաղաքի մասին շատ աւանդութիւններ են պատմում. ահա թէ ինչ ասաց տատս մի անգամ.— Յովհաննէս Թաղաւորի ժամանակ յոյները յաղթեցին բօլղարներին և ուզում էին նոցա Հոդերին տիրել. բօլղարների զօրքը յրուեցաւ. Թաղաւորն էլ ընտանիքով փախաւ։ Ճանապարհին մի Հովիւ ասաց Թաղաւորին. «Թաղաւորը տպրած կենայ, մի՞թէ ամօթ չէ քեզ փախչել թշնամիներից և քո ժողովրդին թողնել յոյների ձեռքը. դորա համար Աստուած քեզ կըպատժի»։

— Ի՞նչ անեմ, որ չփախչեմ,— Հարցրեց Թաղաւորը։

— Ես յոյց կըտամ մի տեղ, ուր կարելի է փշերից այնպիսի պատ շինել, որ նորա միջից ոչ մի յոյն չէ կարող դուրս անել. քեզ, եթէ միայն յոյներին խորամանկութիւնից չխաբուես։ Յոյնը խորամանկ է ինչպէս սատանայ, բայց վախկոտ է, ինչպէս նապաստակ, ասաց Հովիւր և Թաղաւորին տարաւ այն տեղը, ուր այժմ շի-

նուաժ է Տըրնով քաղաքը: Այնտեղ թագաւորը զօրք ժողովեց, նորից պատերազմ սկսեց, յաղթեց յոյներին և ազատեց իւր հայրենիքը:

Մեր առւնը շինուած էր գետի մօտ: Նորա միւս ափում բարձրանում էին հասմիկի ու վարդի թփեր, ուռենիներ և ուրիշ շատերը, որոնք ազատ մեծանում էին: Շատ էի սիրում նստել գետի ափին՝ մեր պարտիզում և հիանալ Աստուծոյ գեղեցիկ աշխարհով. միշտ ուզում էի աղատ լինել, թողուել կանաչի մէջ և շատ անգամ էլ նախանձում էի թռչուններին, որ նոքա այնպէս աղատ են:

Մի անգամ, ինչպէս միշտ, նստած էի մեր պարտիզում. արեւը վաղուց ծածկուել էր սարերի ետեւը. միայն վիրջնալոյսը ոսկեղօծում էր բարձր ծառերի և սարերի կատարները: Այդ ժամին մօտեցաւ ինձ Բօժանը և նըստեց մօտս:

Բօժանի հայր՝ չեչօ (բիճա) Նետկօն հարկահան էր: Նա մեր կողմերում հարուստ և նշանաւոր մարդ էր, նորան բոլորը սիրում էին ու պատվում: Այդ մարդը ունէր երկու երեխայ.— Բօժանն՝ աղջկայ անունն էր, իսկ տղայինը՝ Ստամէն. նոքա երկուսն էլ շատ գեղեցիկ էին: Մենք երեքս էլ իրար սիրում էինք. միասին խաղում էինք, պարում էինք ու երգում և համարեա ամեն օր տեսնվում էինք: Եթէ Բօժանը և Ստամէնը մի օր չէին դալիս, ես էի գնում նոցա մօտ և չեչօ Նետկօն երկար չեբուխը քաշելով՝ նայում էր մեզ և ուրախանում: Այս բարեկամներիս մօր անունը Նետկովիցա էր. նա այնքան լաւ կին էր, որ մօռանալ չեմ կարող: Նա շատ բարի էր, հրեշտակի համեստութիւն ունէր. միշտ սիրով ու քնքշութեամբ զուրգուրում էր թէ իւր և թէ օտար մանուկներին: Այո՛, մօռանալ չեմ կարողանում դորանց, որովհետեւ միայն դորանք էին ամենաթանկագին մարդիկը

իմ սրտի համար: Երբ մայրս մեռաւ, ես շատ փոքր էի. հօրս էլ շատ քիչ էի տեսնում, որովհետեւ նա միշտ ճանապարհորդում էր, իսկ խորթ մօրս յիշելու կարիք էլ չկայ:

Ես և Բօժանը մի հասակի էինք — ութ տարեկան, իսկ Ստամէնը տասներկու տարեկան էր. նոքա երկուսն էլ ուրախ էին և ծիծեռնակների նման թրթռում էին: Կարծես նոքա այժմ էլ աչքիս առաջն են, ծիծաղում են, թռչկոտում ու գփոթիւններ են անում: Շատ անգամ պատահում էր, որ Ստամէնը մեր պարտիզում թաք էր կենում խաղողի որթերի մէջ և հէնց որ մենք Բօժանի հետ գալիս, նստում էինք, նա դուրս էր գալիս և «բա՛հ» բղաւում: Իսկ մենք վեր էինք թռչում և վախենում:

Այսպէս մի օր էլ նստած էինք Բօժանի հետ և դէսից դէնից խօսում էինք, չէինք ուզում բաժանուել իրարուց:

— Տուն գնալու ժամանակը չէ՞, — հարցրեց Բօժանը.

— արդէն կէս գիշեր է:

— Էլի մի քիչ էլ նստի՛ր, հայրդ եթէ տուն եկած լինի, մարդ կ'ուղարկեն քեզ կանչելու. ես էլ տանը մնալու եմ. — ասացի ես. — և նա փնայ ինձ մօտ:

Շատ ուշ էր. քաղաքում բոլոր ճրագները հանդերիւ էին. ամենքը քնած էին. միայն ժամանակ-ժամանակ լսվում էր սօխակի զգաստ ծլվլոցը: Օդը խեղդում էր կ'ասես. երկինքը ծածկուել էր սև ամպերով. երբեմն լսվում էր որոտ, երբեմն էլ լուսաւորում էր կայծակը և սկսել էր կաթկաթել անձրևը:

— Գնանք տուն, անձրևում է, — ասաց Բօժանը:

Եւ հէնց ուզում էինք վեր կենալ տեղներիցս, լսեցինք, որ մի բան շարժուեցաւ որթերի մէջ: Մենք կարծեցինք, որ Ստամէնն է, երկու բռով գետնից աւաղ վերցրինք և պատրաստվում էինք ածել նորա վերայ, երբ յանկարծ երկու թուրք դուրս թօան կանաչի միջից, մեզ

բռնեցին, փակեցին բերաններս և ուսներին դնելով՝ տա-
տան նաւակը, որ կապած էր գետի ափում: Գետի միւս
ափում մեզ հետ միացան ևս երկու թուրք և մի քանի
աղջիկներ ու աղաներ. վերջիններս մեղանկից առաջ էին
կալանաւորուած: Նոքա ոչխարների նման կապուած՝ ըն-
կած էին խոտի վերայ. այդ անբաղդներից մէկը Ստամէնն
էր: Թէ ի՞նչ պատահեցաւ այնուհետեւ, ոչինչ չեմ յի-
շում. միայն զիտեմ, որ մեզ քշում, տանում էին անտառ-
ների, սարերի, քարերի, ցեխերի միջով և ճանապարհին
զիւղեր, քաղաքներ մեզ քիչ էին պատահում: Ամեն բան
լուռ էր. մեր չորս կողմը, ախուր էին և մեր սրտերը.
բոլորս լաց էինք լինում, բայց հանդարտ, որովհետեւ վա-
խենում էինք ծեծից: Յիշում եմ, որ իմ և Բօժանի ուս-
ները շատ ման գալուց սկսան ուռչել, կօշիկները մաշուե-
ցան և այն տեղը հասաւ, որ մի զիւղում տեղներիցս վեր
կենալ չէինք կարողանում: Գիշերները մենք քնում էինք
անտառներում, կամ երբեմն տաճիկ զիւղացու տանը՝
յատակի կամ խոտի վերայ: Մեզ փակում էին տօթ տանը
և քնում էինք միմեանց փաթաթուած. կարծես վախե-
նում էինք, որ մեղանկից մէկն ու մէկին չփախցնեն: Միայն
Աստուծուն է յայտնի թէ՛ որքան համբերում էինք: Ա-
ռաւօտեան վաղ մտնում էր տաճիկը և բղաւում: «Դէ՛հ,
վեր կացէ՛ք, ճանապարհ ընկե՛ք»:

Մենք էլ ստիպուած վեր էինք կենում, բայց մեր
յոգնած ոտները չէին շարժվում, կործես, քարեր էին կա-
խուած նոցանից, ուստի նորից ցած էինք թափվում խո-
տի վերայ: Այդպիսի բուլէներին «Ասում են ձեզ, վեր կա-
ցէ՛ք» գոռում էր տաճիկներից մէկը և խփում մեզ
մտրակով. մենք էլ վեր էինք թռչում տեղներիցս և ճա-
նապարհ ընկնում:

Ահա դուրս եկանք գիւղից: Մեր ճանապարհը անց-
նում էր խոր ցեխերի միջով, որտեղ բուսած էին մեծ մեծ

ծառեր. այդ ծառերին շրջապատում էին բազմաթիւ թրփեր՝ վայրենի վարդենիներ, փշեր, որոնք դժուարացնում էին ճանապարհը. նորա պատում էին մեր շորերը, գըլտում մեր ուսները, ձեռները ու երեսը, արիւնը ներկում էր մեր մարմինը: Բոժանը չկարողացաւ համբերել այդ չարչարանքներին, մի անդամ նստեց ճանապարհին և սկսեց լաց լինել. «Ուտե՛րս ցաւում է, էլ չեմ կարողանում ման գալ», ասում էր նա:

Տաճիկներից մէկը իւր հետ միասին ձի նստեցրեց նորան: Դորա անունը Ահմէդ էր. մի փոքր մարդավարին իւր ընկերների մէջ դա էր. մինչև անդամ նորա տեսքը զիջեցիկ էր: Ահմէդը մեզ հետ աւելի լաւ էր վարվում և, ինչպէս թվում էր, Բոժանին սիրում էր, նորան կերակուր շատ էր տալիս, նորա վերայ խնամք շատ էր տանում և երբեմն էլ գիւղի միջով անցնելիս նորա համար քաղցրեղէն էր առնում: Ահմէդը հապած ունէր կարմիր չոպկն (շորի տեսակը) բուզմա շարած, սպիտակ չալման (ապարօշ) գլխին. իսկ արեշումի դօտիի մէջ խրած էին երկու ռսկեղօծ ատրճանակներ և Վիզինի երկայն ետապանը (սուր): Նորա երեսը սպիտակ էր, մաղերը շէկ և աչքերը կապոյտ: Մենք՝ երեսաներս, որ պատրաստ էինք սիրել գեղեցիկ մարդկանց, քան այլակերպներին, սպասում էինք, որ Ահմէդը բարի սիրտ կ'ունենայ և ազնիւ մարդ կըլինի, բայց շատ սխալուել էինք, ինչպէս վերջը իմացանք. նա մի այնպիսի չարագործ էր, որին զեռ աշխարհը չէր տեսել: Սյո՛, լինում են այնպիսի մարդիկ, որոնք ունենում են սիրուն դէմք, բայց սև, փչացած հոգի. իսկ կան այնպիսիներն էլ, որոնց դէմքը գեղեցիկ չէ, բայց ունեն ազնիւ հոգի և բարի սիրտ: Ահմէդը միշտ մօտենում էր Բոժանին, ձեռքը շփում էր նորա թշերին և ասում էր. «Օն բին»: Մենք սկզբում չէինք հասկանում այդ խօսքերի նշանակութիւնը, բայց վերջը իմացանք,

որ թուլքը միտք ունէր Բօժանին ծախել տաս հազար պիտատրոփ:

Ես Բօժանից աւելի ուժեղ էի և համարձակ. բայց ես էլ շուտով դադարեցայ և ընկայ գետին. ինձ չուանով ձիուց կապեցին և հրամայեցին ձիան ետևից վազել:

Բ.

Մեր վեճակը անտանելի էր: Այդ բոլորը մեզ ծանօթ էին այն երգերից, որ երգում էին մեր ծնողները. մեր հայրն ու մայրը շատ բաներ էին պատմել այն չարչարանքների մասին, որ տալիս էին տաճիկները, բայց որքան էլ խօսքով լսած լինէինք, գործով չէինք տեսել այն կրակիծները, որ մենք քաշում էինք: Յիշում էի այդ բոլորներին, ինչպէս մեր ծերերն արտասուէն աչքներին և անքաշելով ասում էին. «Բօլգարի ձեռքում ոչ մի իրաւունք չկայ այսօր. նորա կինը, երեխաները, նա՛ ինքը, նորա աշխատանքը, կեանքը, մի խօսքով՝ ինչ որ թանկ է մարդու համար, բոլորը պատկանում է տաճիկին»: Այո, ուղիղ է. Բօլգարիան—իմ պաշտելի հայրենիքը աղատ չէ այդ վայրենիների գաղանուծիւններից. մինչև այժմ էլ տեսնում եմ չորս կողմն ամեն տեսակ գաղանուծիւն և վայրենուծիւն. այժմ էլ Բօլգարից կարելի է խլել ոչ միայն նորա արիւն քրտինքով աշխատածը, այլ և նորա սիրած կնոջը և երեխաներին. . .

Վերջապէս հասանք Ազրիանապօլ. միացինք այնտեղ մի օր և նորից շարունակեցինք մեր ճանապարհը:

—Տէ՛ր Աստուած, հանգստանալու էլ չեն թողնում. —ասում էինք և արտասուք թափում:

—Մի փոքր էլ համբերէք,—սիրտ էր տալիս Ահմէդը, —շուտով կը հասնենք ծարղրադ և այնտեղ կը հանգստանանք:

—Սյնաեղ ի՞նչ կ'անենք.—Հորցրինք մենք:

—Զգիտեմ,—պատասխանեց Ահմէղը:

—Երեւի մեզ այնաեղ կը ծախեն, — ասաց Ստամէնը արտասուելով:

—Իսկ ի՞նչ անելիս կըլինեն այժմ հայրս ու մայրս, — հարցրեց Բոժանը հղբօրից:

—Նոքա երեւի մեր մասին այժմ սուգ են տնում,— ասաց Ստամէնը և ինքն էլ չկարողացաւ արտասուքը պահել:

Հասանք Ղըրղ-Քիլիսէ, որին բոլգարները ասում են Լօզին-Գրադ: Ղըրղ-Քիլիսէ տաճկերէն նշանակում է քառասուն եկեղեցի. մի ժամանակ այստեղ հղել է քառասուն եկեղեցի, հէնց գորանց անունով էլ կոչուել է քաղաքը: Այժմ քառասունից հինգն է մնացել, իսկ միւսները օրէցօր քանդվում են և ծածկվում խոտով, կամ տաճիկներն են քանդում ու քարերից իրենց համար գոմեր, տներ շինում: Այդ քաղաքի հրապարակում հաւաքուած էին շատ բոլգարուհիներ. նոքա երգում էին, պարում ու խաղում. ուրախ էր և ամբողջ քաղաքը: Ա՛խ, ինչ սևաչեայ էին այդ բոլգարուհիները և որքան ուրախ էին ու զարգարուած նոցա շրջապատող երիտասարդները. գոքա բոլորը՝ թէ աղջիկ, թէ երիտասարդ, ծվվում էին ինչպէս անմեղ թռչուններ, զուարճանում էին միմեանց տեսնելով, աչք ու ունքով ամենը իւր սրտի փափաղն էր տնում... Բայց հէնց մեր քարվանք տեսան թէ չէ, կարծես երկիրը պատառուեց և այդ ուրախ խումբը մէջը թափուեց, որովհետև յանկարծ հրապարակը զատարկուեց, ոչ ոք չմնաց այնտեղ:

Որքան ցանկանում եմ, բայց չեմ կարողանում մոռանալ այդ քաղաքը, որովհետև այնաեղ չարչարեցին իմ թանկազին բարեկամներից մէկին, ահա՛ թէ ինչ պատահեց: Մեկ տարան մի հին, կեղտոտ քարվանսարա, որտեղ

մենք ձիերի հետ միասին՝ քնեցինք աղբի վերայ: Ճանապարհի չարչարանքները այնքան թուլացրել էին մեզ, որ մոռացանք իրիկնահացը և իսկոյն քնեցինք: Կէս ղիշեր էր, երբ մէկ էլ զարթնեցայ և ի՜նչ տեսնեմ— Ստամէնը ճրագը ձեռին չոքած էր Բոժանի մօտ և հանդարտ լաց էր լինում: Մի փոքր յետոյ նա պինդ համբուրեց քրոջը, հանգցրեց ճրագը: Նա մօտեցաւ և ինձ, նորա շրթուները հանդարտ մօտեցան իմ թշերին և ամենայն ինչ լռեց. ամենքը քնած էին մեր չորս կողմը. միայն այդ սրբազան լուսթիւնը խանդարում էր քնածների խումփոցը: Ես էլ քնեցի, բայց շատ քիչ յանկարծ ձայներ լսուեցան, բղաւոյ, գոռոյ և մենք վեր թռանք տեղներիցս:

— Սնհաւատ շունը փախել է,— գոռում էր մեր պահպան տաճիկ ասիացին:

— Այն դժոխքի ծնունդը, մարդարէից անիծուածը փախել, կորել է,— բարկութիւնից տառամները կրճտելով բղաւում էր չոփու տաճիկը, որ ինձ և Բոժանին յափըջտակել էր Տըրնոփում:

Ամենից շատ զայրացած էր գեղեցիկ Ահմէդը: Նա հեկեկում էր. խօսք չէր գտնում իւր սրտի չարութիւնը թափելու. նա անչափ բարկացած էր:

Նոքա բոլորն էլ ընկան փախչողի ետևից: Ստամէնից յետ ես և Բոժանը մնացինք, կարծես, առանց պաշտպանի. մենք այնուհետեւ աղօթում էինք Աստուծուն, որ Նա օգնէ, խեղճ՝ Ստամէնին աղատուել անիրաւ տաճիկների ձեռքից և եթէ մէկն ու մէկը նոցանից ներս էր մտնում ախոռատուն, ուր մենք ղիշերել էինք, կարծում էինք թէ՛ կապած, թաղ ու ջարդ արած բերում են Ստամէնին, բայց Աստուծոյ օղորմութեամբ հինգ օր էր անցել և չէին գտնում նորան:

Հինգ օրից յետոյ երևեցաւ Ահմէդը, բայց վա՛յ մեզ, նա բերեց իւր հետ Ստամէնին ձեռք ու սուքը կապած,

նորա հետ էլ մի երեխայ ու երկու հասակ առած աղջիկ: Նոքա համարձակուել էին Ղըրղ-Քիլիսէում թաղ-ցնել Ստամբուլն իրենց տանը և դորանով իրենց կորցրին յաւիտեան:

Մտնելով ախուռատուն, տաճիկները Ստամբուլի ոտնէրը մի մեծ գերանից կապեցին. նոցանից մէկը նստեց Ստամբուլի կրճքի վերայ, իսկ միւս երկուսը վեր բարձրացրին գերանը, այնպէս որ նորա բորիկ ոտները վեր ցցուեցան. դորանից յետ երկուսն էլ անողորմաբար սկսեցին խփել նորա զարշապարներին: Ամեն մի խփելիս, ոտների միսը կտոր կտոր ցած էր թափվում, կարմիր արիւնը շլթի էր տալիս և ներկում էր անբաղդ նահատակին: Թշուառ Բոթանը չկարողացաւ՝ դիմանալ այդ վայրենի տեսարանին և ընկաւ ուշաթափ... Ես մինչև այսօր զարհուրում եմ, յիշելով այդ ծանր օրը՝ ոտներս գողում են, մարմինս թուլանում, գլուխս այրվում, աչքերս մթնում է. . .

Ղըրղ-Քիլիսէում մենք մնացինք էլի հինգ օր, մինչև որ Ստամբուլ և Բոթանը մի փոքր առողջացան և նորից ճանապարհ ընկանք: Ճանապարհին պատահում էին հովիւներ, որոնք ուրախ երգում էին, դաշտերը կանաչով էին ծածկուած, ցորենը ոսկու նման դեղնել էր, թռչուններն էլ ուրախ, անհոգ ասում էին իրենց տաղերը. իսկ մենք անպոյն, նիհար, կտրտուած կօշիկներով, մաշուած հազուստներով, լաց ու կոծով առաջ էինք գնում... Բայց պէտք է ասել, մեզ այնքան նեղութիւն չէին տալիս, որովհետև մենք փոքր էինք, իսկ հասակաւորների հետ տաճիկները վարվում էին ինչպէս անասունների հետ: Ի դուր էր տղամարդիկների լացը, կանանց հեկեկանքը և վախեցած երեխաների աղաղակը. այդ ամենը լսող չկար, չարազործները կտաարում էին իրենց անարգ ցանկութիւնները... և յետոյ՝ նորից սառնասրտութեամբ քշում էին թշուառ զոհերին առաջ, մարակներով զարկում, ծիծա-

ղում էին նոցա վերայ և նոցա մասին կատախներ էին անում. . .

Մեր ամենիս միակ ցանկութիւնն էր՝ շուտով ծարգրագ հասնել, այս պատճառով էլ ամեն մի զիւզ պատահելիս, հարցնում էինք մեր ընկերակիցներից մէկին, որի անունը Գիօրգի էր և լաւ տեղեակ ճանապարհներին. «Արդեօք շուտ կըհասնենք ծարգրագ, արդեօք այդ երեւոյժ ծարգրագ չէ»:

— Ոչ, ծարգրագը շատ հեռու է, — պատասխանում էր Գիօրգին: Մի անգամ էլ ասաց, որ ծարգրագին մօտենում ենք:

— Հասանք վերջապէս, — զօչեցին մի առաւօտ մի քանիսը:

— Աստուած իմ, ահա՛ ծարգրագը երևում է, — ասում էին միւսները:

Գ.

Ահա՛, մի քանի օր է ապրում ենք ծարգրագի քարվանսարաններից մէկում, որ ստրուկների վաճառանոցին մօտ էր: Գալիս էր ժողովուրդը մեզ գնելու և շատ բաւական էր մնում, որովհետեւ ծախու ապրանքները բոլորն էլ ընտիր էին: Մեր ընկերներից մի քանիսին արդէն ծախեցին. մենք էլ մեր բաղդին էինք սպասում: Բոլորս՝ թէ աղջիկ, թէ աղայ, նստած էինք բոլորովին մերկ, միայն մեզ վերայ ձգել էին արբեշումէ սպիտակ ծածկոյններ և հրամայել էին նստել պարսկական խալիչաների վերայ հետեւալ կերպով՝ տղամարդիկ ծալապատիկ, իսկ կանայք մի ոտը ձգած և միւսը մի փոքր բարձրացրած, որ ցնոյժ կարողանար ձեռով շօշափել: Առաւօտները մեզ սանում էին բազնիս. լուսնում էին, սանրում, սպիտակ

և կարմիր երեւելու համար դեղեր էին քսում երեսներին, տեսակ-տեսակ հոտաւէտ իւղերով օծում էին մեզ և ծածկոյններում փաթաթելով տանում էին մեր բնակարանը ու շարքով նստեցնում: Եթէ մի գնող էր դալիս, մեր վրայից վերցնում էին ծածկոյնները և այն ժամանակ մնում էինք բոլորովին մերկ: Գնողը՝ ծխելով իւր չիբուխը, նստում էր և կանչում մեզանից մէկին կամ միւսին. եթէ աղջիկ էր լինում նորան մօտեցողը, նորա կուրծքը և աղբրի հաստութիւնն էր զննում, իսկ աղամարդոց ոտները և ձեռները քննում:

Մի առաւօտ մեզ մօտեցաւ մի սպիտակամօրուս ծերունի, կանաչ ապրեջումէ չալմէն զլխին. նա հագել էր կարմիր վարաիկ և կանաչագոյն թանկագին մուշտակ: Նորա հետ էր և Զօեան, որ մանրունք ծախող և բամբասանք անող յոյն կին էր: Զօեան միշտ զալիս էր մեզ մօտ, նստում էր և մեզ զննում. նորա շորերը բոլորովին պատռտած էին: Զարմանալի բան է, այդպիսի պատռտոտած շորերով աղքատներ շատ էի տեսել, նոքա միշտ իմ գութը շարժել էին, սիրտս ցաւում էր նոցա տեսնելիս, իսկ Զօեայի պատռտած շորերը, ընդհակառակն, զզուանքս էին շարժում: Աւելի ևս զզուելի էին նորա վառուող, չարութեամբ լիքը սև աչքերը ու դեղին, չոփուռ երեսը. իսկ նորա սուր ու երկայն քիթը, բարակ շթուկները ցոյց էին տալիս, որ նա մի փչացած, անբարոյական կին էր:

Տաճիկ ծերունին զննեց բոլորիս և առանց մի խօսք տեսլու դուրս գնաց: Նորանից յետ՝ մի կամ երկու ժամ անցած, մտաւ մեր տէրերից մէկը և յայտնեց, որ ես և Ստամէնը պէտք է Զօեայի հետ գնանք տաճիկ ծերուկի տունը, մենք այժմ նորան ենք պատկանում, նա է մեր տէրը:

— Իսկ քոյրս, — հարցրեց Ստամէնը, — մի՞թէ նա էլ չի գալ մեզ հետ. նա առանց մեզ ի՞նչ կ'անի:

— Նա ծախուած է, — ասաց չոփուռ թուրքը:

—Ես ուզում եմ նորան մի հարուստ փաշայի ընծայել, —ասաց ժպտելով Ահմէդը:

Բոժանը լսելով այդ, ընկաւ եղբօր դիրկը. նոքա չէին կամենում միմեանցից բաժանուել. կարծես զիտէին, որ էլ չեն տեսնուիլ, էլ չեն փաթաթուիլ միմեանց. նոքա երկուսն էլ լաց էին լինում: Քարը կտարաքէր, տեսնելով այդ անբաղդներին, բայց տաճիկները և մոցիքուլ կիներ հանգիստ նայում էին ինչպէս մի սովորական բանի վերայ. ոչ թէ մարդու, այլ և գազանի սիրտ էլ չկար այդ մարդոյ մէջ: Սյժմ հարցնում եմ. մեղաւոր են այդ մարդիկը, որ գազանից էլ ցած, փառ են մեր աչքում: Ո՛չ, դոքա մեղաւոր չեն, այլ մեղաւորները, զլիաւորապէս, զոյա մեծ մարգարէ Մահմեդն է ու հոռոժ մուլանները. դոյա այդպէս վայրենի գարձնողը իրենց կրօնը, կրթութիւնն է. այդ անտանելիս օրէնքն ու սովորութիւնները նոքա ժառանգել են իրենց անխիղճ հայրերից. դոքա այն կրօնի դերիներն են, որ քարոզում է. «Ով կը յաղթի կամ կը սպանի զեաւուրին, նա Մահմէդից կը վարձատրուի:

Մի փոքր յետոյ Ստամբուլ ընկաւ տաճիկների ոտքը և հեկեկալով աղաչում էր. «Ահմէդ աղա, Ալի՛ աղա, ողորմէ՛ք, ինայէ՛ք մեզ մի՛ բաժանէ՛ք քրոջս, դեռ նա շատ մատաղ է: Մեզ ծնողներից բաժանեցիք, բայց այժմ դրթացէ՛ք, քրոջը հղբօրից մի՛ բաժանէ՛ք». բայց այդ աղաչանքները զուր անցան: Զուր էր Ստամբուլ արտասուք թափում, խնդրում. նորան լսող չկար: Զուր էր Բոժանը եղբօրը փաթաթուելով գոռում. «Ձեմ՝ թոյնի եղբօրս, չեմ տայ նորան տաճիկներին»:

—Ի՞նչ էք կանգնել, տեղներիցդ չէք շարժուում, —ասաց Զօհան, —նոքա են ձեր բարեկամները, ում մօտ որ լաւ էք ապրում. տանջանքով աշխատած հայը ծնողների հետ ուտելիս էլ դառն է լինում: Շուտ արէ՛ք, դրնանք, թէ չէ մտրակով կը քշեն ձեզ: Սյս տսելով՝ Զօհան

բռնեց Ստամբուլի ձեռքից և քաշեց նորան, ինչպէս արծիւը իւր թշուառ որսին. . .

Մեր նոր աէրը ինձ տեղաւորեց Հարեմում, իսկ Ստամբուլին սեւամաշկութեամբ Նոր բնակարանումս մի նշանաւոր բան սովորեցի, այն է՝ ԱՏԵԼ. ես անիծում էի բոլորը աշխարհիս երեսին, անիծում էի մօրս, որ ինձ ծնել էր, հօրս, որ ինձ կեանք էր տուել. անիծում էի և նոյա, որոնք անբաղդութեանս պատճառ էին դառել... Բայց ի՞նչ կարող էր անել իմ անէծքը. անզօր խօսքեր էին միայն, որ ոչ մի կերպ չէին կարող չարագործներին վշտասել և չեմ էլ հաւատում այն մաշուած ձմարտութեանը, թէ՛ վաղ, ուշ յանցանքը բացվում է և մեղաւորը իւր պատիժը քաշում, տանջվում է իւր հին մեղքերի համար: Ո՛չ, ես աւելի հաւատում եմ, որ Տաճկաստանում իսկական յանցաւորները ազատ են մնում պատժից, փառք ու պատիւ են վայելում և համարձակվում են խաղաղ ժողովրդին տանջել, կոտորել և եթէ պատահում է, որ նոքա իրենց պատիժը ստանում են, այն էլ նեղացածների, չարչարուածների ձեռքից: Այժմ ես ի՞նչ եմ, եթէ ոչ մի գուր նահատակ (այդպէս էի մտածում Հարեմում). այս պատճառով էլ սիրա եմ անում ձեռնկա թաթախել չարագործի արիւնում... Թէպէտ ես կին եմ, բայց կինն էլ պէտք է իմանայ իւր պատիւը, իրաւունքը պահպանել... Կինն էլ այնքան ոյժ ունի, որ կարող է իւր չարչարողին պատժել... Շատ կարելի է, որ այդ արարմունքովս կըհաստատան ժողովրդի աւանդութիւնը, որ ասում է—վայրենի կենդանիների մէջ ամենից կատաղին էլն է.—բայց դժբանքով միայն ուզում եմ վրէժս առնել չարագործներից: Թո՛ղ ինձ անուանեն արիւնարբու, վայրենի... ինչ ուզում են տան, բայց ես կ'առնեմ վրէժս... Ուրիշ ի՞նչ անեմք...

Դ.

Հարեմում կեանքը բաւական լաւ էր. մանաւանդ փողի կողմից: Ինչ ուզում էինք, տալիս էին, որքան էլ թանկագին լինէր: Հէնց որ առաւօտեան զարթնում էինք, մտնում էին մեր՝ սենեակ սե ներքինին և արարայի աղախինները. նոքա բերում էին մեզ համար քաղցրեղէն, դայֆէ, պաքսիմատ: Սոցանից յետոյ խմում էինք շաբաթ, յետոյ տեսակ-տեսակ մրգեր էինք ուտում և ամենից վերջը ճաշ էին բերում: Ճաշից յետոյ լծում էին կռքերը և կանայք գնում էին քաղաք հարկաւոր բաներ գնելու, ուղիղն առած, աւելի գնում էին գործակատարների հետ տեսնուելու, այս պատճառով էլ Սառմբոյի վաճառականները միշտ սիրուն ու ջահիլ գործակատարներ էին պահում: այդ անում էին աւելի հայ և յոյն վաճառականները, որովհետեւ առ հասարակ ամենից անբարոյական և խաբեբաները դոքա էին վաճառականների մէջ: Շատ անգամ էլ բոլորս գնում էինք բաղնիս, այնտեղ ուտում, խմում, պարում, երգում էինք և առանց պատճառի անվերջ ծիծաղում:

Մէկ էլ տեսար փաշայից հրաման էր գալիս, որ բոլոր կանայք զուրս գան այգի զբօսնելու: Այգիում ամեն բարիք կար, ի՞նչ սիրտդ ուզում է—դեղձ, ծիրան, խնձոր, աանձ, խաղող և փորթոկալ: Շատրուանները կարկաչում էին, վարդերը անուշ բուրում, թռչունները երգում էին և բազմատեսակ կենդանիները վազվզում:

Բարձր ընկուզենիների հովում ներքինին փռում էր խալիչաներ ու տեղաշորեր և շարում էր բարձեր. խի կանայք նստում, չարութիւնների էին անում, կամ պարում էին և ով որ տարիքով մեծ էր, չլրուխ էր ծխում և կամ նստած բամբասանք էր անում:

Ինձ հետ ապրող կանայք բոլորն էլ համարեա ողորմելի, փչացած արարածներ էին. նոքա այնքան անարգ, վատ էին, որ իրենք իրենց չէին ճանաչում և շատ դժուար էր նոցա մէջ գտնել մարդու վայել վարմունք: Ես նոցա բոլորին էլ առում էի և շատ քիչ էի տեսնվում նոցա հետ. միակ մխիթարութիւնս այն էր, որ սենեակիցս չէի դուրս գալիս և միշտ զլքեր էի կարդում:

Պէտք է ասել, որ ես առաջ էլ սլաւօներէն և բօլղարերէն շատ լաւ էի կարդում, բայց այն ժամանակ բօլղարերէն գրքեր չկային. իսկ երբ մտայ հարեմ, ինձ սովորեցրին արաբերէն (աղօթել Ալլահին և ՄաՀմէդին) և յունարէն. վերջինը իմ աղատ ցանկութեամբ սովորեցի. ուսուցիչներս էին սև ներքինին և մի յոյն գերի, որին նոյնպէս ներքինացրել էին: Յունարէնից յետոյ սկսեցի խաւերէն: Յոյնը ծանօթ էր և այդ լեզուին:

Այդպէս օրերը անցնում էին, բայց տխրութիւնս՝ քանի գնում, շատանում էր: Իտալերէն և յունարէն գրքեր կարդալով, աւելի և աւելի էի սկսում հասկանալ ամօթալի դրութիւնս: Գիշերները՝ հէնց որ աչքերս ծածկում էի, մի ինչ որ ծանր բան ընկնում էր կրծքիս վերայ, շնչառութիւնս դժուարանում էր և մի սարսափելի երկիւղ էր ընկնում սիրտս... Ինձ թւում էր, որ մի բան ուռնում է և խրխուում, լաց է լինում և անի քաշում... Յանկարծ աչքիս երևում էր Բօժանը արիւնաթաթախ, արցունքն աչքերին... Յետոյ այդ բոլորը ոչնչանում էր և նոր պատկերներ էին երևում աչքիս: Ես տեսնում էի հօրս, խորթ մօրս. ահա և Ստամբուլը, նորա ոտներին սաստիկ խրփում են. խփում են և միլիօնաւոր մարդկանց. արիւնը վազում է... մտի կտորները թափվում... այդ բոլորներին վեր էի թռչում քնիցս. կուրծքս սաստիկ ցաւում էր:

Ընթրիքի ժամանակ միշտ գալիս էր ծերուկ փաշան. ուտում, խմում էր և ստիպում մեզ իւր առաջ երդել.

պարել ու դայիրա ածել: Մենք երկար ժամանակ պարում էինք, իսկ նա նստած խողի նման խմում էր Մահմեդի արդեւած խմիչքը, մինչև որ հարբում էր, քնում և ներքինիները ասնում էին նորան իւր ննջարանը. իսկ կանայք նորանից յետոյ էլ շարունակում էին քէֆը: Հասակ առածները այնքան խմում էին, որ նոքա էլ փաշայի նման հարբում էին: Ես չգիտեմ, հարբած կնոջից զզուելի բան կ'ոյ աշխարհիս Լրեւին թէ ոչ իսկ այս հուրինները ևս առաւել զզուելի էին... Նոքա համբուրվում, փաթաթվում, փայփայում էին իրար, բայց մէկ էլ անսարկուեցին և այն տեղն էր հասնում, որ քիչ էր մնում միմեանց սպանելին:

Մի անգամ փաշան գործով Բէյրութ գնաց և կանայք մնացին մենակ:

— Ազատութիւն, — գոռում էին լողորը, — ազատութիւն:

Թէև փաշան պատուիրել էր ներքինիներին, որ մեզ լաւ նայեն և կարգ պահպանեն, բայց կանայք գիտէին ներքինիներին ձեռքներում խաղացնել — մի քանիսին կաշառում էին, միւսներին էլ ափի ո՛ն ու վ հարբեցնում էին ու այնուհետև ինչ ուզում անում էին: Շատ անգամ էլ պատահում էր, որ չուանների օգնութեամբ անձանոթ մարդիկ էին բարձրանում հարեմ, կամ կանայք կառքերում նստած Ֆրանցուզների հետ էին քէֆ քաշում:

Ահա այդ մարդկանց, այդ կեղտերի, այդ յետի մեջ տարեցի ինը երկար տարիներ: Մինչև այսօր էլ ահանջներս խշխշում են այդ դժոխքի որդիների աղաղակներից ու ծիծաղից:

Ե.

Ստամբնին տաճկացիին—Խէյրուլին էին կանչում և իրթում էին նորան տաճկօրէն: Փաշան նորան իւր որդու պէս սիրում էր, և ի՞նչպէս չսիրէր, քանի որ նա խելօք, մտածող և գեղեցիկ էր:

Մի առաւօտ կանչեցին ինձ փաշայի մօտ: Փաշան ծալապատիկ նստած՝ չկուխ էր ծխում: Ստամբնն էլ նորա աջ կողմի՝ զալեան էր քաշում: Նա հագնուած էր թուրքի ձեռք—կարմիր, լայն վարտիկ՝ բուզմա դրած, թանկապէս ապրեշումի դօտին կապած, նորա մէջ երկու տորճանակ և մի եռաթաղան (սուր) խրած, սպիտակ չալմէն գլխին. ամբողջ նորա հագուստը ոսկեկար էր: Կարծես սիրտս մի վատ բան էր նախազգում: Եւ երբ զողորդալով սպասում էի փաշայի հրամանին, նա իւր ծոյլ աչքերը բարձրացրեց և ասաց. «Դու այսուհետև Ստամբնի կենը կրլինես, դու պէտք է պսակուես նորա հետ»: Երբ այդ հրամանը լսեցի, աչքերս սևացան, ոտներս թուլացան: Եթէ Ստամբնը քրիստոնեայ լինէր, մի օր, մի ժամ էլ որ նորա կենը լինէի, ինձ աշխարհում ամենաբաղդաւորը կը համարէի, բայց նորա հարձը (անհարազատ կին) լինել, որին այնքան սիրում էի, այդ անտանելի էր: Ստամբնը բացի ինձանից՝ երկու, երեք կին ունէր:

Երկրորդ օրը կատարեցին մեր պսակը: Մօլլան մի աղօթք կարդաց և բռնելով ձեռքս, տուեց Ստամբնին (ես միշտ նորան Ստամբն էի կանչում, չէի սիրում Խէյրուլին՝ տաճկական անիծած անունը). յետոյ սկսեցին քէֆ անել և դորանով էլ վերջացաւ մեր պսակը: Ինձ համար ոչինչ ուրախ բան չկատարուեցաւ այդ հանդիսում—ոչ ընկերուհիներին ուրախ երգերը լսեցի, ոչ մեր սիրելի բօլ-վարական պարերը տեսայ և ոչ էլ հօրա օրհնութիւնը

ստույգ. մինչև անգամ զրկուեցի Քրիստոսի խաչը համբուրելուց. . .

Մեր պսակը կատարուեցաւ Զատիկին: Քրիստոնեաները եկեղեցի էին գնում, պարում, երգում էին, ամենքը ուրախ էին, իսկ ես մանում էի սենեակս և նստած այնտեղ երկար լաց էի լինում: Մի անգամ մտաւ Ստամէնը, լուռ մօտեցաւ ինձ, բռնեց ձեռքս և ասաց, «Նայի՛՛՛, ինչո՞ւ ես լալիս»: Ես փաշայի տունն մանեւուց յետոյ առաջին անգամն էի լսում իմ մայրենի լեզուն, իմ բոլգարական անունը առաջին անգամ էի լսում Ստամէնից:

— Սիրտս ցաւում է,— ասացի ես.— ակրութիւնից սիրտս կտրաւում է... դու էլ դռնէ մի՛ աւելցուր տանջանքներս... անիծում եմ քեզ մօրդ բերանով, քո անբաղդ քրոջ բերանով. . .

— Ի՞նչ է պատահել քեզ, Նայի՛՛՛,— ասաց Ստամէնը դարմացած,— ես քեզ ճանաչել չեմ կարողանում, չեմ հասկանում քեզ. մի՞թէ մեր պսակը բարկացրեց քեզ. ճշմարիտն ասա և իմացած եղի՛ր, որ բոլոր ցանկութիւններդ կրկատարեմ: Եթէ այժմ աշխարհում մի սիրելի բան ունեմ, այդ դու ես. մի՞թէ կարող եմ սիրալ ցաւեցնել: Նա խօսում էր բոլգարերէն, որ արդէն կիսով չսփմուայել էր:

— Թէ ուզում ես իմանալ, ինձ համար անպատուութիւն եմ համարում պստիուել տաճկի հետ. իմացի՛ր, որ ես ծնուել և ապրել եմ միշտ ազատ և ազատութիւնը ինձ համար թանկ է աշխարհիս երեսին. մաքովդ մի՛ անց կայնիր, որ քո ստրուկը, հարձր կրլինեմ... Ո՛չ դու դեռ ինձ չես ճանաչում. կարծում ես, որ կին եմ, մի թոյլ արարած, բայց իմացի՛ր, այնքան քաջութիւն ունիմ, որ պատրաստ եմ անիծել, կոտորել բոլոր տաճիկներին... Անիծել մինչև անգամ քեզ, որովհետեւ դու տաճիկ դարձար, հաւատդ ուրացար, սուրբ հայրենիքդ մոռացար. . .

Հայրենիքը անիծում է քեզ, դու արժանացար նորա թուր ու մուրին... Ես այժմ էլ ազատ Բոլղարիայի զաւակն եմ, իսկ դու հոտած տաճկի ստրուկը... . .

Ստամբուլ ոչ մեռած էր, ոչ կենդան, նա աչքերը բարձրացրեց և ցած ձայնով ասաց.

— Աղաչում եմ քեզ, Նայիօ, մի՛ բարկանար վերաս, ասո՛ւ, ի՞նչ է սիրտդ ուղում, պատրաստ եմ, կարողացածիս չափ, քեզ համար անել բոլորը:

— Ես ամեն բանով լի ու առատ եմ, բայց վառն այն է, որ ազատ չեմ, ազատութիւնս խլուած է, որ ամեն մարդու համար էլ թանկ է: Միայն ազատ կեանքը կարող է թեթեւցնել սրախ ցաւերը. իսկ այդպէս ստրուկ, հարձ լինելը ինձ գերեզման կըտանի: Դու մարդ չես ճանաչում, դու չգիտես, որ իւր պարտքը ճանաչող մարդը աւելի լաւ է համարում քաղցած մեռնել կամ իւր կամքով ցրտումը ստուշել քան թէ ազատութիւնից զուրկ Սուլթանի կինը լինել:

— Ձեմ ցանկանում քեզ հարձ շինել, դու օրինաւոր կինս կըլինես, եթէ միայն կամենում ես, — ասաց Ստամբուլ:

— Ես չեմ կամենում ստրուկներ կամ չարագործներ ծնել. իմացի՛ր, որ մեր տղաները դահիճներ կըլաւնան, իսկ աղջիկները ստրկուհիներ, հարձեր կըլինեն: Ես չեմ կամենում, որ վերջը մեր երեխաները մեզ անիծեն, որ նոցա ստրուկ ենք ծնել: Հասկացի՛ր այդ բոլորը, Ստամբուլ, և մտածի՛ր, որ դու էլ մի ժամանակ բոլղար էիր, քրիստոնեայ էիր... Թող այդ ոսկեղօծ պալատները, տաճիկայդ սև օձերին, ցած անասուններին և փախչեմք Բոլղարիա, Ռուսաստան, ուր ուղում ես, մինչև անգամ աշխարհիս ծայրը և միայն այն ժամանակ կըսիրեմ քեզ սուրբ սիրով, այնտեղ կըպաշտպանեմ, կըփայփայեմ քեզ... զուրկ կըտամ քեզ համար... . .

—Նայի՛՛, ինչ ուզում ես խնդրիր, բայց մի՛ ասա, ես չեմ փախչիլ,—ասաց սառնութեամբ Ստամէնը:

—Տեսնում ես, Ստամէն,—ասացի ես,—բոլորը եկեղեցի են գնում, իսկ մենք տանը փակուած, նստած ենք. «Քրիստոս յարեալ» ասող չկայ... Իսկ ո՞ւր են մեր անբաղդ ծնողները... երեւի նոքա մոռացել են մեզ... շատ կարելի է, որ մեռած էլ լինեն, պատկած լինեն սառ Հոգի տակ... ո՞վ սուգ կ'անի նոցա վերայ, ո՞վ կրկարդարի ծաղիկներով և օհնիկ կրտայ նոցա գերեզմանները, ո՞վ յիշելիք կրտայ եկեղեցում նոցա Հոգու Համար... նոքա մոռացուած կըլինեն ամենքից, նոցա գերեզմանը կորած կըլինի մեզ Համար:

—Ի՞նչ անենք, երեւի մեր բաղդն էլ այդպէս էր,—ասաց Ստամէնը:

—Միայն յիմարները և անպիտաններն են, որ բոլոր անաջողութիւնները բաղդ են Համարում և միայն բաղդաւորութիւնից կշտացած մարդիկն են ասում, որ մենք ենք մեր թշուառութիւնների պատճառը. բայց ընդունիր, որ քեզ այդ փչացած կեանքի Հետ կապողը Հարստութիւնը, ոսկին է: Սյո՛, շատ բարի, տգնիւ մարդիկ կորան, փչացան Հարստութեան Համար, ոսկին նոցա բարութիւնը փոխեց չարագործութեան...

Երբ ես խօսում էի, Ստամէնը սենեակում շտապ ման էր դալիս: Նա յանկարծ կանգնեց առաջ և ասաց Հանդարտ.

—Ծնորհակալ եմ քեզանից, Նայի՛՛, որ ինձ ցոյց տուիր ճշմարիտ ճանապարհը. ես այս օրուանից կը փոխեմ սխալ ճանապարհս և ուրիշ տեսակ մարդ կը դառնամ, շուտով ինքդ էլ այդ կրտեսնես:

—Ստամէն, նա ճշմարտութիւն կըզանի, ով ապրում է ճշմարիտ կեանքով, ով միանդամից կը բաժանուի այդ անպիտան կեանքից և գործ չի ունենալ նորա Հետ:

Ինչ ուզում է լինի, թող այս աղբի փոսը, զնանք Ձեր-
նագործես, որտեղ ազատութիւն կայ, որտեղ մարդիկ ապ-
րում են իբրեւ մարդ. . .

— Լճու կայ, Նայգօ, ես այդ լսել չեմ ուզում, այդ
խօսքերից պլուխս պտտվում է, հասկանում ես, լռի՛ր,—
գոռաց Ստամէնը:

— Ոչինչ, բղաւ՛ր, ինչպէս ուզում ես և որքան ու-
զում ես. կտրի՛ր աջ ձեռքս, ես ողորմութիւն ուզելով
էլ կ'ապրեմ, բայց զարձեալ ճշմարիտը կրիտեսեմ և եթէ
քեզ կարողացայ հասկայնել, այն ժամանակ ես բաղդաւոր
կըլինիմ, որովհետեւ կորչելուց քեզ ազատած կըլինիմ:

— Ես չեմ մոռացել իմ հայրենիքը, իմ անբաղդ
Բօլգարիան,—ասաց Ստամէնը արտասուքը աչքին:—Հաս-
կանում ես զու և մինչև արիւնիս վերջին կաթիլը կըծա-
ւայեմ հայրենիքիս: Ով ցանկանում է բարի գործ անել,
նորա համար գործ կըպնտուի և այդպիսի գործերէլ շատ
կան, միայն մարդիկ են հարկաւոր, որ ինչ ճանապարհով
էլ լինի, գործ կատարեն: Ես կըսկսեմ խորամանկութիւն-
ներ անել, կըստորանամ տաճիկների տուօջ, կըխաբեմ նո-
ցա, կըմոռանամ ինձ, հոգ չեմ քաշել իմ մասին, այլ
միայն կըմտածեմ եղբայրներիս համար, ազգիս համար
գործ կ'ածեմ բոլոր ոյժերս՝ խելքս, միտքս, հարստու-
թիւնս: Այսպէս եթէ կարողացայ օգնել՝ լաւ է, եթէ ոչ,
թող ների ինձ Բօլգարիան... Կ'աշխատեմ այնպիսի գոր-
ծեր անել, որ Սուլթանի աչքին լաւ երևեմ, նորա առա-
ջին մարդիկներից մէկը պառնամ և այն ժամանակ կարող
կըլինեմ օգնել ազգիս և նորա պակասները լրացնել: Իսկ
զու, սիրելի Նայգօ, այդ բոպէներին կըլինես իմ ընկերը,
օգնականը, խորհուրդ տուողը և Սստուած կըվարձատրի
քեզ համբերութեանդ համար:

— Ամէ՛ն,—ասացի ես,—ահա իմ ձեռքը, ընդունի՛ր
նորան ինչպէս մի տղնիւ կնոջ ձեռք... ուզում էի խնդրել,

որ թողնես ինձ Տըրնով զնալ Հորս տեսութեան, յիտոյ՝
կուսանոց պիտի մտնէի, բայց որ դու զանում ես, թէ
կարող եմ օգուտ տալ քեզ, օգնել Հայրենիքիս, պարտք
եմ Համարում մնալ այստեղ՝ քեզ մօտ:

Եւ այսպէս ես ազատ էի. բայց մնացի Հարեմում...
անտանելի է թւեր ունենալ և ամենեւին չթուշել. . .

Զ.

Ստամբըլ փաշա զարձաւ. նա հասաւ խոր ցանկու-
թեանը: Եւ զարմանալի էլ չէր, որովհետեւ Տաճկաստա-
նում մարդիկ շատ շուտ են բարձրանում: Նորան նշանա-
կեցին Ֆիլիպուպօլ քաղաքի կառավարիչ. ամբողջ Հարեմն
ևս պատրաստվում էր Ստամբըլի հետ ճանապարհ ընկ-
նել, որովհետեւ ծերունի փաշան էլ մեղ հետ էր գալիս,
չէր կարողանում բաժանուել Ստամբըլից:

Սիրտս շատ վատ էր. մտայ սննեակս, փակեցի դու-
ռը, սննուկիցս հանեցի մի փոքրիկ պատկեր, որ երկար
ժամանակ թաղցրել էի չար մարդիկներից և սկսեցի նորա
առաջ աղօթել: Յափշտակուած օրիցս այդ պատկերն էր
իմ ընկերը, այն էր կախած կրծքիս, երբ ինձ մկրտում
էին և նորանով օրհնեց ինձ մայրս, երբ յաւիտեան փա-
կեց իւր աչքերը... Աղօթելուց յիտոյ սիրտս փոքր ինչ
թեթեւացաւ:

Մի գեղեցիկ օր մօտ հրեսուն կառքեր ճանապարհ
ընկան երկու փաշաների կարգ ու սարգը բարձած. այդ
կառքերից միայն քսանը տանում էին փաշայի կանանոցը:
Իմ կառքում միայն ես էի, կանանցից ոչ մէկը չուզեց
ինձ հետ նստել. նոքա ինձ տառում էին, որովհետեւ չէի
նմանվում նոցա, չէի մասնակցում նոցա անարգ արար-
մունքներին. սորա համար էլ ինձ անուանում էին յիմար,

խելագար և ես չէի բարկանում: Ի՞նչպէս բարկանայի, ի՞նչպէս պահանջէի փչացած կանանցից, որ նոքա աղնիւ, բարի վարմունք ունենային, չվերաւորէին այն աղնիւ մարդիկներին, որոնց չէին հասկանում. . .

Ֆիլիպոպօլը լաւ քաղաք էր. շինած էր զեղեցիկ տեղում, նորա մօտովն էր հոսում Մարիցա գետը. փաշայի տունը շինած էր ուղիղ գետի վերայ: Ինչ ուրախացնում էր այն, որ այդ քաղաքում շատ բոլգարներ էին բնակվում:

Նաղիւ քաղաք էինք հասել, Ֆիլիպոպօլի թրքուհինները, բոլգարուհիները և յոյն կանայք սկսան մեզ տեսութեան դալ: Նոքա շնորհաւորում էին մեր գալը և ծանօթացնում մեզ քաղաքի բամբասանքների, գաղանիքների և փողոցների հետ: Ես շուտով բարեկամացայ մի քանի բոլգարուհիների հետ. իսկ թրքուհիներից՝ Իզմայիլ փաշայի կնոջ հետ, որ շատ բարի էր: Իզմայիլ փաշան ծնունդ էր Բոսնիայում և նորան մեզ նման տաճկացրել էին փոքր հասակում: Նա առաջ զօրքի մէջ էր ծառայում, բայց վերջը թողել էր ծառայութիւնը: Ստամբուլ շատ շուտ ծանօթացաւ Իզմայիլի հետ և միտսին սկսեցին այն գործը. . . որ Ստամբուլ ինչ խոստացել էր: Ես փայլուն գործեր բոլգարները նոցա երկուսին էին պարտական. շատ բարիքներ էին վայելում այդ երկսից. . .

Ստամբուլ Ֆիլիպոպօլում բոլորովին փոխուեց. նա ուրիշ մարդ դարձաւ՝ հէնց սկզբից նա սկսեց բժշկել ժողովրդի ցաւերը: Ստամբուլ այդ քաղաքը մօտ հինգ տարի կառավարեց և այդ հինգ տարուայ ընթացքում շատ թշուառների օգնեց, շատ որբերի տուն-տեղ արաւ, շատ աղքատների նեղ օրերին օգնեց:

—Գալով Ֆիլիպոպօլ, —ասում էր Ստամբուլ, —ինչ բոլորովին մոռացել եմ, սկսել եմ սաստիկ սիրել Բոլգարիան և բոլգարներին և կեանքս դնում եմ նոցա համար:

Եւ ուզիլ որ, իւր կարծօրեայ իշխանութեան միջոցին Ստամբուլ ապրում էր ուրիշների համար, քան թէ իւր. նա այնքան սիրել էլ բարի գործեր անելը, որ իրեն մոռացել էր: Տեսնելով այդ բոլորը, ես սաստիկ ուրախանում էի և մեծ յոյսեր ունէի նորա վերայ, բայց...

Մի անգամ Իզմայիլ փաշան ասաց Ստամբուլին.

— Բարեկամ, ես շատ կըցանկանայի աւելի մօտ բարեկամանալ քեզ հետ. ոչ աղջիկ ունիմ, ոչ էլ քոյր, որ պսակեմ քեզ հետ, բայց ունիմ մի որդեգրուհի, որին աղջկա պէս սիրում եմ, այդ հրեշտակին յանձնել է ինձ նորա հայրը, որ մեռնելիս արտասուքը աչքերին խնկրեց, որ իւր աղջկան բաղկաւորեցնեմ: Ես ծեր եմ և չեմ կարող նորա հետ ամուսնանալ, մեղք է և ամօթ. իսկ դու, Խէյրուդին, ջահիլ, խելօք և բարի երիտասարդ ես, շատ կ'ուզէի, որ դու պսակուես որդեգրուհուս հետ և բաղկաւորեցնես նորան:

— Ոչ, — ասել էր Ստամբուլ, — առանց այն էլ երեք կին ունեմ, նոցա էլ ուզում իմ ազատութիւն տալ, ուր մնաց նորից պսակուեմ:

— Խէյրուդին, լաւ մտածիր և խնդիրս կատարի՛ր: Եթէ ուզում ես, որ գործդ յաջող գնայ, եթէ ուզում ես քո աղգին, հայրենիքին օգուտ տալ, մի՛ արձակիր կանանցդ, մի՛ խնաց տուր, որ դու տաճիկ չես և քո մէջ տաճիկ արիւն չէ վազում:

— Եթէ այդպէս է, ինչ ուզում ես արա՛, ես բոլորը կ'ընդունեմ, միայն թէ հայրենիքիս օգնելու գործը չվնասուէր:

— Դէ՛հ, ուրիմն վաղը արի՛ ինձ մօտ, ես կ'ասեմ իմ Զմրութին, որ դուրս դայ այդի վրօսնելու. դու նորան կըտեսնես պատուհանից: Ուրախութեամբ քեզ կըտանէի հարեմ և հէնց այնտեղ էլ կըտեսնէիր Զմրութին, բայց դու իմանում ես խօսմ անիծած տաճիկների վատ

սովորութիւնը, բոլոր քաղաքը կը բարկանայ, բոլոր տաճիկները առամ կը կը ճաղեն վերաս:

Երկրորդ օրը Ստամբուլը գնացել էլ իզմայիլ փաշայի մօտ, այնտեղ պատուհանից տեսել էր Զմրութին և շատ հաւանել: Վերադառնալով տուն, նա խօսել էր ծերունի փաշայի հետ իւր նոր ամուսնութեան մասին, ծերունին էլ շատ ուրախացել էր որդու նոր բաղդաւորութեան վերայ և իրաւունք էր տուել նորան պսակուել: միայն մի բան վատ էր թուել նորան—որ Զմրութը անյայտ ծընողների որդի էր: Բացի այդ՝ վաճել էին, որ Զմրութը կը լինի Ստամբուլի օրինաւոր կինը, իսկ առաջուայ երկուսը, որոնցից մէկը ես էի, նորա հարձերը:

Երբ իմացայ, որ Ստամբուլ նորից պսակուել էր, լացս պահել չկարողացայ և արտասուքներս աղբիւրի պէս սկսեցին վազել: Բայց շուտով սրբեցի աչքերս, որովհետեւ միտս ընկաւ Ստամբուլի բարեգործութիւնները և հայրենիքս՝ Բօլքարիան. . .

Է.

Պաշտելի և սիրուն արարած էր Զմրութը. բերանով պատմել չէմ կարողանում նորա առաւելութիւնները. ես այդքան սիրուն և բարի կին ամենեւին չէի տեսել կեանքումս: Աւելի աննման էր երեւում նա, երբ հագնում էր իւր թանկագին ոսկեկար շորերը, բայց էր թողնում ուսերի վերայ երկայն շէկ մուգերը, զարդարում էր իւր սպիտակ կոնքն ու մասնները ակն ու մարդարիտներով և թանկագին մատանիներով. մի խօսքով՝ նա հոգեղէն արարած չէր կարծես, այլ մի անմեղ հրեշտակ: Նորա բնաւորութիւնը իւր թանկագին ակներից էլ առաւել էր: Ոչ դժի վերայ բարկանալ չունէր, նորանից ոչ դժ վատը

խօսք չէր լսում և ոչ ոքի էլ չէր նեղացնում: Կարգա-
ներն էին նորա բարեկամները, նոցա միշտ օգնում էր: Մի
անգամ մօտը փող չունենալով, մի խեղճ պառուշի տուել
էր մատանու ակներից մէկը: Մի ուրիշ անգամ էլ տես-
նելով, որ մի կին երեխան ձեռին արտասուելով բանդից
զուրս էր զալիս, Զմրութը հարցրել ու խմացել էր, որ
այդ թշուառի մարդը բռնուած էր պարտքերի համար,
ուստի խեղճն տուել էր բոլոր պարտքը և ազատել էր
ընտանիքի հօրը: . .

Այդ անգին կնոջ հետ ես ապրեցի մի տարի և նո-
րան ինչպէս քոյր սիրում էի. ինքը՝ Ստամէնն էլ շատ
էր սիրում և ուրախութիւնից ոտը զեանին չէր զիպ-
չում: Բայց ինչպէս պայծառ օրից յետոյ կարկուտ, անձ-
րև է զալիս, այնպէս էլ մեր ուրախ օրերը տխրութեան
փոխուեցան:

Վաղուց Ստամէնը ուզում էր մարդ ուղարկել Տըր-
նով և իմանալ՝ արդեօք իւր ծնողները կենդանի են թէ
ոչ, բայց միշտ ուշացնում էր, կարծես մի բանից վախե-
նում էր: Վերջապէս նա մարդ ուղարկեց Տըրնով և կան-
չեց իւր ծնողներին տեսնելու: Ես էլ իմ կողմից գնացող
մօրդուն խնդրեցի, որ իմ հօր մասին էլ մի համբաւ բերէ
կամ եթէ կարելի կըլինի, հօրս բերէ իւր հետ:

Ստամէնը իւր անելիքի մասին ոչինչ չասաց Զմրու-
թին և ինձ էլ խնդրեց, որ ոչինչ չասեմ, նա յանկուրծ
էր ուզում ուրախացնել Զմրութին. բայց ես համբերեցի
և բոլորը պատմեցի նորան: Զմրութը լացը չխորոզացաւ
պահել և ասաց ինձ.

— Դու և Խէյրիդինը բազմաւոր էք ուրեմն, խեղ
ես, վա՛յ ինձ, ես չգիտեմ էլ, թէ ո՞րտեղ եմ ծնուել և
ո՞վքեր էին իմ ծնողները:

— Մի՞թէ դու որք չես, — հարցրի ես:

— Ոչ, երբ ինձ յափշտակեցին, ծնողներս կենդանի էին:

—Ո՞վքեր էին նորա, զորտեղ էին ապրում,—հարցրի:

—Ոչինչ չգիտեմ և ոչինչ չեմ յիշում... շատ կարելի է իզմայիլ փաշան իմանայ, եթէ միայն Ահմէդը պատմել է:

Այդ ժամանակ իզմայիլ փաշան ապրում էր հալէպում: Մենք Զմրութի հետ երկար խօսելուց յետոյ, վըճռեցինք մի նամակ գրել և խնդրել նորան, որ նա տեղեկանար և յայտնէր թէ՞ ո՞րն է Զմրութի հայրենիքը, ո՞վքեր էին նորա ծնողները: Ինչ որ մտածեցինք, այն էլ արեցինք. իսկ Ստամբուլին այդ մասին ոչինչ չտեսցինք:

Ը.

Մի ամսից ուղարկուած մարդը յետ եկաւ Տըրնուփեց, բերեց իւր հետ Ստամբուլի ծնողներին և իմ հօրը:

Պատմել չեմ կարողանում, թէ ինչ ուրախութեամբ տեսնուեցանք մեր ծնողների հետ: Երբ առաջին¹⁾ ուրախութիւնը մի փոքր անց կացաւ, ես յիշեցի Զմրութին և նայեցի նորան: Նա նստած էր գլուխը ձեռքին խոնարհած և պատուհանից մեզ էր նայում: Իսկ արցունքները անդադար վազում էին աչքերից: Այդ բոպէներին դժուար էր նայել նորան: Նորան բաւականութիւն տալու, հանգստացնելու համար ես պատրաստ էի բոլոր բաւականութիւններս տալ նորան:

Մտանք բոլորս տուն և Ստամբուլի ծնողներին տարաւ Զմրութին ցոյց տալու: Այդ բոպէին Զմրութը մեռելի էր նման, նորա աչքերը խոր էին ընկած, շրթունքները սպրանսած և ամբողջ մարմնով զոգում էր:

—Ահա և իմ կներ, — ասաց Ստամբուլ, բայց երբ նայեց կնոջ երեսին, ապշած մնաց:

— Ի՞նչ է պատահել, հոգի՛ս, — ասաց Ստամէնը նորան, — կարելի է հիւանդ ես:

Զմրութը լուռ էր և անընդհատ գետին էր նայում:

— Դորա ծնելու ժամանակը մօտենում է, — հանդարտ փսփսաց ծնողներին և դառնալով կնոջը ասաց, — գնա՛, սիրելիս, գնա՛, հանգստացի՛ր:

— Ես առողջ եմ, — ասաց Զմրութը և արտասուքը դուրս վազեցին աչքերից:

— Ի՞նչու դու էլ չես ուրախանում ծնողներին դալու համար, մի՞թէ անբաւական ես, որ նոցա տեսնում ես, ինձ սիրում ես, պարտաւոր ես ծնողներին էլ սիրել:

Զմրութը շարժեց գլուխը և ասաց.

— Ես ուրախանում եմ քեզ հետ միասին, Ստամէն. ուրախ եմ քո ուրախութիւնը տեսնելով և խնդրում եմ ծնողներիցդ, որ ինձ էլ սիրեն, փայփայեն ինչպէս քեզ և յուսով եմ, որ նոցա սիրոյն կ'արժանանամ: Մայրական սէր ամենեւին չեմ տեսել և եթէ տեսել եմ, այնքան փոքր էի, որ գնահատել չկարողացայ. այժմ ուզում եմ, որ ինձ սիրեն, ինձ այժմ փայփայել է հարկաւոր. ամեն բան պատրաստ եմ տալ, մինչև անգամ որբացած սիրտս էլ, միայն ինձ սիրեն, փայփայեն... Իմ բարեկամ, ես կըսիրեմ ծնողներիդ ինչպէս աչքիս լոյսը, ինչպէս ինձ. . .

Ստամէնի հայրը փաթաթուեց իւր հարսին և ասաց.

— Այո՛, իմ հրեշտակս, քեզ ամենեւին չեմ մոռանալ, միշտ կըսիրեմ, միայն այն ժամանակ սէրս կըհեռանայ քեզանից, երբ այս աշխարհից կըհեռանամ, երբ յաւիտեան կըբաժանուեմ իմ սիրելի Ստամէնից:

Իսկ Ստամէնի մայրը՝ Նետկովեցան ոչինչ չկարողացաւ ասել. նա միայն համբուրում էր կամ հարսին, կամ որդուն և աղիողորմ լաց էր լինում:

— Փայփայի՛ր, մայրիկ, կնոջս և խոստացի՛ր սիրել նորան, ինչպէս մի ժամանակ սիրում էիր քո աղջկան,

այնպէս կարծիր՝ թէ Բօժանը այսօր կենդանացել է քեզ համար. երանի իմանամ, որտեղ է սիրելի քոյրս, կենդանի է, թէ պառկած է սառ հողի տակ:

— Բօժան, իմ աղջիկս, — ասաց Նետկովիցան, — որտեղ ես այժմ, իմ սրտիս զանձը, ուր տարան քեզ անիծած զաւանները... Մի՞թէ ես քո սիրուն տեսքին կարօտ պիտի մնամ, մի՞թէ առանց քեզ տեսնելու հողը պէտք է մոնեն... վա՛յ ինձ, իմ Բօժանից զուրկ մնացի...

Զմրութը երբ լսեց Նետկովիցայի խօսքերը, վեր թռուաւ տեղից, նորա աչքերը փայլում էին, և դողդօշուն ձայնով ասաց.

— Մայրիկ, ի՞նչ էր աղջկադ անունը, կարծեմ, դու տաացիր Բօժան. ես այժմ յիշում եմ, որ ինձ փոքր ժամանակս Բօժան էին կանչում. այո՛, այժմ ես սկսեցի յիշել, որ երբ մայրս սկսում էր խաղացնել ինձ և սիրել, միշտ ասում էր. «Բօժկօ ջան, հոգի ջան»:

Նետկովիցայի երեսը սաստիկ փոխուեցաւ և խեղդուող ձայնով ասաց. «Իմ Բօժանը մարմնի վերայ մի նշան ունէր...»

Նետկովիցան նոր էր վերջացնում իւր խօսքը, յանկարծ Զմրութի ոտները դողացին, նա ընկաւ ուշաթափ... Ստամէնը քարացած կանգնել էր և չէր հասկանում բանը ի՞նչումն է:

Հէնց այդ ժամին ծառան մի նամակ բերեց Ստամէնին: Նա իսկոյն ճանաչեց Իզմայիլ փաշայի ձեռագիրը և շուտով բացեց և սկսաւ դողալով կարդալ.

«Սիրելի բարեկամ Խէյրուդին,

Ես մի նամակ տաացայ Զմրութից. նա խնդրում էր ինձ, որ տեղեկանամ թէ՛ ովքեր էին նորա ծնողները, այժմ աշխատիր բանը մի տեսակ ծածկել, որովհետեւ Զրմ-

բուժը քո քոյրն է, քո իսկական քոյր Բոժանը: Ահմէլը, որ յափշտակել էր նորան Տըրնովում, ծախել էր իմ տաճիկ տիրոջը. իսկ քեզ և մի աղջիկ ծախել էր ծերունի փաշային, որ այժմ քո տէրն է: Ի՞նչ անենք, եղբայր, Աստուած մեր մեղքերի համար պատժեց մեզ»:

Մարդու նոր ցաւերը միշտ համարեա միտն են բերում Հին կսկիծները և Հինն ու նորը միասին խառնուելով, սպանում են մարդուն. այդպէս էլ պատահեցաւ Բոժանի հետ: Հէնց այն օրը երեկոյեան Բոժանը ծնաւ տղայ մանուկ և երբ երեխան առաջին անգամ ձայն հանեց, Բոժանը վեր առաւ նորան և ընկաւ Մարիցա գետը իւր ամօթալի կեանքին վերջ տալու համար. նորան ազատեցին, բայց երեխան խեղդուեցաւ:

Ահա, այն օրից սկսած ապրում եմ ես Սուրբ Կուսի Ընծայման վանքում Բոժանի հետ: Բոժանը անտանելի կսկծից կորցրեց խելքը՝ նա խելագարուեց և ապրում է իւր խցում միայնակ. երբեմն ուշքի է դալիս, գնում է եկեղեցի և խօսում է ինձ հետ, բայց այդ տարէնը մի անգամ է պատահում: Ստամբուլն էլ Բոժանին ինձ յանձնելով, բոլորովին անյայտացաւ. ո՞ւր — ոչ ոք չիմացաւ: Միայն ասում են, որ տաճկաց կառավարութիւնը բանդարկեց նորան Սերբերին ծածուկ օդնելու համար և այնտեղ էլ մեռաւ. . .

Փոխադրեց ԳԷՈՐԳ ԲԱՀ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆՑ.



ԼՈՒՍԱՂԵՐԻՐ ԳԱՆԻՑ Ս. ԽԱԶԻՆ.

Ն Ե Ր Ք Ի Ն Ն.

Լուսաղբիւրիկ, լուսաղբնցուղ աղբարիկ, — աղբարիկ,
Դու մինչև ցե՞րք մընաս լըռիկ աղբիւրիկ, — աղբիւրիկ,
Տըրտում տըլտուր տեսք ու տիպարդ աղբարիկ, — աղբարիկ,
Սուրբ նըշանիս աղբիւրիկ:

Վ Ե Ր Ի Ն Ն.

Ո՛վ սիրասուն սիրակարկաջ իմ քուրիկ, — իմ քուրիկ,
Ի՞նչպէս ցընծամ՝ ի՞նչպէս խօսիմ ես այժմիկ, — ես այժմիկ,
Վանքս անապատ անշէն մնաց աւասիկ, — աւասիկ:
Սուրբ նըշանիս աղբիւրիկ:

Ն Ե Ր Ք Ի Ն Ն.

Լուսաղբիւրիկ, լոյս աղբարիկ գեղեցիկ, — գեղեցիկ,
Իմ աչկունքէս կաթածն արցունք՝ չէ ջըրիկ, — չէ ջըրիկ,
Սարեր ձորեր ինձ վկայեն աւասիկ, — աւասիկ,
Սուրբ նըշանիս աղբիւրիկ:

Վ Ե Ր Ի Ն Ն.

Սիրուն քուրիկ, սիրեմ ըզքո սիրա գողարիկ,—սիրա
 գողարիկ,
 Իմ արյունքս վաղ ցամքեցաւ աղբիւրիկ,—աղբիւրիկ,
 Յուսահատեալ և վըհատեալ կամ այժմիկ,—կամ այժմիկ,
 Սուրբ նըշանիս աղբիւրիկ:

Ն Ե Ր Ք Ի Ն Ն.

Եկ աղբիւրիկ, բառնանք յերկինք մեր ձայնիկ,—մեր ձայնիկ,
 Լոյս զըթուլթեան ծաղի հայոց ի սըրտիկ,—ի սըրտիկ,
 Վանքս յօրինեն, ըզմեղ առնեն արժանիք,—արժանիք,
 Սուրբ նըշանիս աղբիւրիկ:

Ք ի Օ Պ ի Ք.

Դովեմ ըզքեզ, ո՛վ զեղազուարձ, զեղիկ սիրելի,
Դովեմ ես քո ջուր բարեհամ, հողիկ բարելի.

Քան զամենայն

Գեղ ու աւան,

Քան զամենայն

Պերձ օթարան.

Օրհնեալ ես. Քէօպէք.

Դովեալ ես, Քէօպէք:

Աղարմըշին բարձր սարէն ջրեր կը վազեն,

Դոհար մարգրիտ ծաղկըներով ըզքեզ կը սաղեն.

Քան զամենայն

Գեղ ու աւան, և այլն:

Բարձրադիտակ քո մարգերէն ծովեր կերևան.

Ծովածաւալ հորիզոնիդ զեղեր կը ծփան.

Քա զամենայն և այլն:

Բոպէն ի քեզ քաղցր ու հանգիստ, կեանք է ցանկալի,

Երբ քու օգէն շունչ մի կ'առնում՝ շունչ է խնկալի.

Քան զամենայն և այլն:

Իմ վշտահար սիրտ ու հոգի՝ քեզ հիւր եկաւոր,
 Շուտ մոռացաւ բիւր նեղութիւն և վիշաք անցաւոր.
 Քան զամենայն և այլն:

Է՛ր զեղեցիկ դու միջակէտ օրհնեալ կրողնկիս.
 Գըլուխդ է խաչ ոտքդ ի ծով. ծըլիս ու ծաղկիս.
 Քան զամենայն և այլն:

Լըսես հազար թրոշուններուդ սիրուն երգերը.
 Յիշես և իմ յանկարծական խաղն ու խօսքերը.
 Քան զամենայն և այլն:

Գ. Վ. ԱՅՎԱԶԵԱՆ.



Խ Ե Լ Ա. Գ Ա Ր

(Զ Ա, Խ Ե Ր - Մ Ա, Զ Ո Խ Ի Ց).

Մի քանի ժամ էր արդէն, որ իմ հրէայ կառապանը շարժում էր իւր գլուխը, կարծես թէ ընկղմուած լինէր Սուրբ գրքի սրբազան վայելչութեան մէջ կամ Թալմուդի ոսկեայ գանձի առջև։ Բայց յանկարծ կանգնեցրեց իւր փոքրիկ ձիաներին ու երկար մտրակով ցոյց տուեց երկինքը, որ մեր առջևում աւելի և աւելի էր ծածկվում ամպերով։ Իսկապէս երկինքն սպառնալի տեսք ունէր։

— Եթէ մենք չսպասենք փոթորկի անցնելուն, նա մեզ վրայ կըհասնի ճանապարհին, — ասաց Պինկուս Գլեանցմանը։ — Դուք կարող էիք սպասել Դուբենսկիի գինետանը։ Միայն մտածեցէք, որ մենք ոչ մի բնակարանի չենք հանդիպելու մինչև ձեր հօրեղջօր տունը — Վրիցինը։

— Ոչ, ոչ — պատասխանեցի ես, — գնա։

Մի քանի տարի էր արդէն, որ ես հեռացել էի հայրենիքիցս և ինձ հէնց այդ զիշեր սպասում էին տանը։ Կառապանը շարժեց ուսերն ու շարունակեց ճանապարհը։ Մեր առջևում մութ վարագոյրի նման մի բան կար, ինչպէս լինում է թատրոնում ներկայացումից առաջ։ Անդրնդից դուրս եկած ահագին ամպերը լողում էին հորի-

ղոնի վերայ: Կարծես երկրի կեղևը պիտի շրջուէր, որ հրաբուխի ծխի ահագին կծիկներ բարձրացնէր: Օղբ, որ սովորաբար թարմ ու թեթեւ շփվում էր ծառերի դաղթներին ու ոսկեզոյն հասկերին, յանկարծ անտանելի ծանրացաւ: Նա կարծես շրջակայքում ամենայն ինչ ճընշում էր: Ծառերի տերեւները, դաշտերի խոտը ախուր ու մեռածի նման կախ էին ընկել զէպի գետինը: Տաքութիւնից կարելի էր շնչարդել լինել: Ձէր լսվում ոչ ձայն և ոչ թռչունների երգ. կարծես թէ այժմ ամբողջ աշխարհին պահասում էր ամառնային օրուայ այն կենդանացուցիչ թարմ շնչառութիւնը, որից տատանվում ու սոսափւն են արձակում կանաչ դաշտերն ու հասկով լի արտերը: Ամեն ինչ թւում էր ընկղմուած լուսթեան մէջ և սպասվում էր մի ինչ որ անյայտ ու ծանր բան: Արեգակը, որ թաքնուած էր խիտ, համարեա՝ անթափանցիկ վարազոյրի ետևում, երբեմն նուազ կերպով լուսաւորում էր ճնշուած երկիրն իւր խանձող-թռուցիկ ճառագայթներով: Այն ժամանակ դաշտերն ու մարգագետինները կարծես վառվում էին, որպէս զի խելոյն ընդունեն մետաղեայ—արձա՛ի զոյն, հէնց որ երկնի լուսատուն թազցնի իւր ճառագայթները: Որպէս թէ տեղատուութիւնից յետոյ՝ հաճարի այդ ընդարձակ ծովի մէջ փայլում էին կալուածատէրերի կամիր կղմինդրով ծածկուած տները, ուղղափառ եկեղեցիների կըոր գմբեթները, յարդով ծածկուած խրճիթները, փոքրիկ տնակները և այստեղ ու այնտեղ ցրուած ջրհորները: Բլրակի դագաթին հողմաղօրիքը տարածել էր իւր մութ թևերը. արօտատեղերում արածող դառները պժուարութեամբ էին առաջ գնում: Ոտները կապուած ձիաները ծանրութիւնով էին կտրում հիւթալից խոտը. մորուկները փորձում էին խաղալ, թոյլ ձայն հանելով իրենց պղնձեայ զանգակներով: Մեր առջև խտանում էր անտառը, որից հոսում էր կատաղած գետը.

երբեմնակի երեացող արեգակն առասօրէն թափում էր նորա մէջ իւր աղամանեայ կայծերը: Մթնեց: Կայծակները ժամանակ առ ժամանակ լուսաւորելով ամպերը թռուցիկ կարմրագոյն լուսով՝ կարում էին մութ-մութ-րագոյն հորիզոնը: Յանկարծ լսուեց որոտման առաջին ձայնը, կարծես հեռուում խուլ ձայն արձակեց սկսուող պատերազմի զէնքը. մի և նոյն ժամանակ դպալի դարձաւ, որ ծանր ծոյլ օդի զանգուածը նկատելի կերպով սկսեց շարժուել, տերեւներն սկսեցին հանդարտ օրօրուելի, խօտն ու հասկերը ուղղուեցին. որոտման ձայներն ու քամու շառաչիւնն աւելի յաճախ և աւելի ուժեղ դարձան: Անտառն, որ մինչև այժմ սև անթափանցիկ զանգուածի նման անշարժ կանգնած էր, սկսեց տատանուել ինչպէս հաճարի դաշտ: Ծառերը ճկվում, ճայթվում էին և, ինչպէս փոթորիկը կամ ալիքները զարկում են ժայռերին, այնպէս էլ նոքա աղմկով միմեանց էին զիպչում: Կառապանը շարունակում էր քշել ձիւներին: Թեթև կառքը ցնցվում էր երբեմն ընկնելով այս փոսի մէջ, երբեմն այն ցիխի մէջ և թռչնի նման ցայտում էր քարերի ու արմատների վերայով: Մենք զնում էինք կոյրերի նման: Յանկարծ երևեց մի բացուածք, որ կարծես կամենում էր մեզ կլանել և մենք երևեցանք կանաչի երկու խիտ պատերի մէջ:

Իւրաքանչիւր կողմով ձգուել էին կարգով կազնիներ, թեղոշներ, հսկայ կեչներ, որոնց երկար ճիւղերը խիտ միանում էին միմեանց հետ և ճանապարհի ամբողջ երկարութիւնով կամարի նման մի բան էին կազմում: Ծառերի այդ մութ խումբը ենթարկուելով փոթորիկին՝ կատաղած ծովի նման մռնչում էր մեր գլխի վերևում: Գամին սաստկացաւ: Փոշու և չոր տերեւների զանգուածը բարձրանում էր դէպի երկինք, կարծես թէ խանդարելու համար կայծակի կրակից պատռուող մռայլ ու տատա-

նուող կամարին խորտակելու և ամբողջ երկիրը կրակի հեղեղով ընդգրկելու: Շարունակ որոտում էր: Կախումած ամպերից սկսեցին ջրի մեծ կաթիրներ թափուել: Ես մտածում էի. ցած չեն իջնում արդե՞ք հրեշտակներն իրենց թևերի ազմկով ու փողերի ձայնով յայտնելու մարդկանց դատաստանի մեծ օրուայ հասնելը: Հենց ես բաց արի կառքի դռնակն ու ձգեցի զոգնույր թէ չէ, անձրևի ամբողջ հեղեղ թափուեց մեզ վերայ:

Եռացող առուակները շարունակ մեծանում էին, ըսպառնում էին վայրենի, կատաղի հեղեղ դառնալ, ոչնչացնել բոլոր ցանքսն ու արմատախիլ անել ծառերը: Իմ կառքը դժուարութիւնով էր առաջ դնում. լճակների տղմալի ջուրը մինչև անիւներն էին հասնում. մենք ոչ թէ գնում, այլ լողում էինք: Կայծակի լոյսը, փոթորկի մըռնչիւնն ու որոտման ձայնը միմեանց յաջորդում էին մեր առջև: Յանկարծ հրեղէն օձ փայլեց մեր առջև և տարսափելի հարուածից դողաց երկիրը. մի քանի վայրկենաչափ մենք կատարեալ կուրացել էինք. ձիաներն իրենք կանգնեցին. երբ հրէան ուղեց քշել նոցա — նոքա տեղներից չշարժուեցին: Այն ժամանակ տեսանք, որ կայծակի վերջին հարուածից կէս եղած ահագին կաղնին ընկաւ ճանապարհի մէջ. իսկոյն վառուեց նորա կանաչը, յիշեցնելով ինձ Մովսիսի անշէջ մօրենին:

— Ծար չկայ, — տապ Պինկասն, որ համարեա՛ յուսահատուել էր. — պէտք է փորձել դնալ Փիրլէիւվկա, ուրիշ ճար չունինք:

Նա շարժեց սանձերն ու գնաց դէպի ձախ նեղ ճանապարհով: Մենք շուտով հասանք գետի վրայով պոսժ կամրջին. բայց այստեղ էլ ձիաները կանգնեցին. չեն հրնաղանդվում կառապանի ձայնին: Խեղճ հրէաս խոր ախքաշեց. ցած իջաւ իւր տեղից, բռնեց նոցա սանձից և, մինչև ծնկները մոնելով ջրի մէջ, ստիպեց նոցա անցնել

կամուրջն ու դուրս գալ զետի միւս ափի մեծ ճանապարհը: Այնտեղից ոչ հեռու խոնավ ամպի միջով տեսանք փայլող կրակ:

— Մի՛թէ սա է Ֆիրէիւ վկան. — հարցրի ես Պինկասից:

— Այստեղ է, տէր:

— Ձե՞ որ դու տեսցիր այս ըուպէիս, թէ Դուրինինի և Վրիցինօի մէջ մարդկային բնակութիւն չկայ:

— Բայց այստեղ ապրողն էլ մարդ չէ:

— Ի՞նչ է հապա:

— Խելագար է: Շատ կարելի է, որ նա չկամենայ մեզ ընդունել:

— Այսպիսի՞ եղանակին:

— Գուցէ միայն եղանակի պատճառով ընդունեն մեզ. իսկ լաւ օրերին այդ մասին երազելն անգամ աւելորդ է:

— Նա հէնց այդ տեղում է ապրում:

— Այո. դա մի փոքրիկ ամրոց է. նորա տէրն է Սերբրատովիչը, որի հետ ապրում են միայն մի քանի շատ ծեր ծառաներ:

— Եւ նա խելագար է:

— Համարեան թէ այդպէս:

Մինք՝ մօտեցանք բնակարանի ցտնկապատին: Այգու ծառերի միջով մենք տեսանք փոքրիկ ամրոցի կտուրն ու աշտարակները: Հրէաս սաստիկ բաղիւնց դուռը և, որովհետեւ ոչ ոք դուրս չեկաւ՝ ուստի սկսեց աղաղակել. «Օգնեցէք, օգնեցէք»:

Մի քանի ըուպէից յետոյ վանդակի ետեւից երևեց սպիտակ մազերով ու միրուքով բարձրահասակ մի ծերունի:

— Ո՞վ է կանչում, — հարցրեց նա:

— Ես եմ՝ Պինկաս Գլեանցմանը, Վեննայից եկող պարոնիս հետ: Մեր ձիաները չեն կարողանում զնալ և

այսպիսի եղանակին մենք չենք կարող գիշերել բաց երկրնքի տակ: Օգնեցէք մեզ, պարօն Կաէտան, ապաստարան սուէք մեզ:

— Սնկարելի է:

— Միայն մինչև վաղը:

— Պարօնը չի թոյլ տալիս:

— Բացառեցէք նորան մեր յուսահատ գրութիւնը: Եթէ մենք կորչենք, մեղաւորը զուք կըլինիք:

— Լաւ, տեսնենք:

Եւ ծերունին զնաց: Ածրելը հանդարտուեց, բայց կայծակը ժամանակ-ժամանակ լուսաւորում էր սև երկնակամարն ու սաստիկ քամին դեռ շարունակում էր կրճատել զարաւոր ծառերի գազաթները: Երբ ծեր ծառան վերադարձաւ, նա հասարակ կերպով առանց մի բառ անգամ ասելու, բաց արաւ դռներն ու մեզ ներս թողեց բակը: Հասնելով ամբողջը ես հիտեցի ծերունուն բարձրանալով սանդուղներով, որոնք տանում էին դէպի սենեակները: Վառելով արծաթեայ մոմակալի մոմերը, Կաէտանն առաջ անցաւ նախասենեակների միջով, ուր կախ էին արած Հին պատկերներ, պտուղների նկարներ և որսորդական տեսարաններ: Մենք բարձրացանք սանդուղով և Կաէտանը բացեց մի ընդարձակ սենեակի դուռ, ուր պէտք է ես գիշերէի: Մինչդեռ նա կտրգի էր բերում սենեակս, ես կարողացայ զիտել նորան: Նա բարձր հասակով մի նիհար մարդ էր. նորա վարդազոյն այտերն ու սպիտակ մազերով ծածկուած բարի կապոյտ աչերն ունէին իրենց մէջ երիտասարդական մի ինչ որ բան: Նա հազել էր լիվրէի նման մի զգեստ, որ շնուած էր Հին տարազի մուլթ ծխախոտի գոյնի սերթուկից, երկար քղանցներով ու սպիտակ փողպատով: Երբ նա ժպտում էր, այն ժամանակ ցոյց էր տալիս երկու կարգ սպիտակ ատամներ, որոնց կարող էին նախանձել այժմեան երիտա-

սարկներից շատերը: Նորա ուռած ձեռները նման էին այն քաջանայի ձեռներին, որ պակասութիւն չէ զգում իւր եկամուտների կոդմից:

Երբ նա դուրս գնաց, եւ բաց արի պատուհանը, որովհետեւ սենեակի օդը շատ տաք ու ծանր էր: Քամին շարժեց սպիտակ վարագոյրներն առագաստների նման և անձրեւն աղմկով թափուեց պատուհանիս մէջ: Փոթորիկն փոքր առ փոքր դէպի հարաւ էր անցնում: սրտոն ու կայծակը ուշ-ուշ էին լսվում: Նոցա խուլ ձայները կարծես թուլանում էին: Պատուտում ամպերն աւելի ու աւելի էին ցրվում և երկինքն սկսում էր պարզել: Մէկը կամաց բաղնից իմ սենեակի դուռն ու շեմքի վերայ երևեց Կաէտանը դուրեկան ժպիտը երեսին:

— Պարոնս խնդրում է ձեզ ընթրել իրա հետ, — ասաց նա ինձ:

— Այդ շատ սիրալիր է, — պատասխանեցի եւ նորան, — բայց ես չեմ ցանկանում նորան անհանգստացնել:

— Եթէ նա ձեզ հրաւիրում է, դուք կարող էք առանց քաշուելու ընդունել նորա հրաւերը, — պատասխանեց ծերունին, — միայն ոչ մի բանի վերայ չզարմանաք և ոչինչ չհարցնէք, — ասաց նա ինձ ցածր ձայնով, անհանգստութեամբ նայելով սենեակի մէջ:

— Լաւ է, որ դու նախազգուշացիր ինձ:

— Ես կատարում եմ պարտքս: Սակայն իմ պարոնը կատարեալ բարութիւն է և դուք հեշտութիւնով կըմբռնեմանաք նորա հետ:

Մենք ցած իջանք և անցանք մի քանի սենեակներ: Աշտանակի մոմերը, որ տանում էր Կաէտանը, դողդողում էին և իրենց անհանգիստ լուսով լուսաւորում էին պատերը, ստիպելով բնական զարդերին, Փանտաստիկական պատտառներին, մարմարեայ արձաններին, ժանգով ծածկուած հին վահաններին, սպիտակ արջի մորթիներին

մի րոպէ դուրս գալ խաւարից: Վերջապէս ծերունին բարձրացրեց դռան ծանր, մութ կապտազոյն մետաքսեայ վարագոյրը և ես մտայ. կանոնաւոր քառ. ակուսի մի սենեակ: Յատակի վերայ փռած գորգի մէջ տեղում դրուած էր մի մեծ սեղան, որի վերայ թափուած էին զրքեր, թըղթեր և քարտէզներ. սեղանի միակ զարդարանքն էր խաչելութիւնը. Բրիստոսը փղոսկրից շինուած՝ կախուած էր սև փայտէ խաչի վերայ: Այդ սեղանի առջև կաշուեպատ բազկաթուռի մէջ՝ մէջքը դէպի դուռը՝ նստած էր և զրուում էր մի ծերունի: Ամբողջ սենեակի մէջ աիրում էր այնպիսի ճնշող հանդիսաւոր լռութիւն, որ կանգնեցի, չհամարձակուելով մի քայլ անգամ առաջ շարժուել: Ես զարմացած նայեցի զրքերով, հանքերով, միջատներով ու թիթիռներով լիք պահարաններին, պատուհանում զրուած հեռադիտակին, դեղին ապակեայ աչքերով արհեստական բոցփետուրին, այդ հաղուազիւտ բաների մէջ ցրուած խաղալիքներին ու վերջապէս բնական մեծութիւնով երկու պատկերներին, որոնք կախուած էին զրասեղանի դիմաց: Առաջինը մի կնոջ պատկեր էր. ներքին հրաշալի լուսով լուսաւորուած նորա գէմքն ու հայեացքի զգուշուն արտայայտութիւնը շնչում էին անբացատրելի փայլով. նա կարծես զեղարուեստական ծաղկի նման դողում էր սամուրի մուշտակի մէջ: Այդ թաւիշը, թանկագին մորթիները, փոքր ինչ ոլորած մագերի, կաշուի քնքոյշ-վարդազոյն գոյնի և կիսաբաց շրթունքների հետ միասին կապմում էին գեղարուեստի և արժանաւորութեան հաղուազիւտ միաւորութիւն: Նորա կողքին էր մի գեղեցիկ երեխայի պատկեր, որի ճակատը ծածկուած էր մութ շիկագոյն ու շատ ոլորուած մազերով. նորա մտածող մեծ աչքերը կարծես այս աշխարհից չէին: Այդ հրեշտակային գծերի մէջ արտայայտվում էր նոյն հոգեկան պարզութիւնը, քնքշութեան զգացմունքի արտայայտելու նոյն

խաղաղութիւնն ու դուրեկան համեստութիւնը, որպիսին էր և կնոջ զծերի մէջ: Միայն մանկան շրթունքներն ըստառնական էին, ինչպէս մարդկանց. նորա կօլոր, որոշ ծնօտը նախադուշակում էր հաստատակամ բնաւորութիւն: Մանուկը լի էր կեանքով: Ինձ թուում էր, թէ ես տեսնում եմ, ինչպէս սկսում է բարձրանալ ու շունչ քաշել լայն կուրծքը, որ գտնվում էր սև թաւշի և Վան-Դիկի ժամանակուայ մեծ ասեղնադործ օձիքի տակ: Վերջապէս ծերունին վայր դրեց գրիչն ու շրջեց զլուխը:—Ներեցէք, եթէ անհանգստացնում եմ ձեզ:

—Ամենևին,—պատասխանեց նա, վեր կենալով ու մի րոպէ կանգնելով.—բարեւ էք եկել:—Նա մեկնեց դէպի ինձ իւր ձեռքն ու նստեց այն ժամանակ միայն, երբ ես տեղաւորուեցի սեղանին մօտիկ բաղկաթողի վերայ:

Սերբրատովիչը շատ հետաքրքրական անձնաւորութիւն էր. նա չափազանց տարբերվում էր կնոջից ու երեխայից, որոնք քնքշաբար ժպտում էին նորան իրենց շրջանակների միջից: Շատ բարձրահասակ չլինելով՝ նա ժամանակից առաջ էր կորացել և երևում էր, որ ծերութիւնը ժամանակից առաջ էր եղեամն դրել նորա խիստ մազերի վերայ. նորա պարզ զծաղրուած ու որոշ դէմքը մի փոքր դեղնաւուն էր և ամբողջովին ծածկուած էր կնճիռներով: Նորա համեստ, դուրեկան դէմքը կրում էր տխրութեան և խոնարհութեան կնիք: Մութ խորն ընկած աչերը դեռ երբեմն բորբոքվում էին կրքի սաստիկութեան ժամանակ և աւելի կենդանի էին փայլում, երբ սիրտն անձնատուր էր լինում բարութեան զգացմունքին ու կտրեկցութեան: Նորա վեհ-զծաղրուած ճակատը ցոյց էր տալիս բարձր մտքերի ու հիանալի երևակայութեան ներկայութիւն: Սերբրատովիչը պահում էր միայն բեխեր, որոնց ծայրերը տխուր ընկել էին արապայտիչ բերանի կրկու կողմով: Նորա բարակ ձեռները շարունակ զբաղուած էին

երբեմն զրջով, երբեմն թղթի կտորով, երբեմն բազկաթուռի մջքի կոճակներով, որոնց կարծես համարում լինէր:

— Ինչպէս դուք վատահայտք այսպիսի եղանակին ճանապարհ գնալ: Ձէ որ փոթորիկը դեռ առաւօտեանից էր սպառնում: Սյս ամենասարսափելի փոթորիկներից մէկն է, որ ես տեսել եմ այստեղ. իսկ ես շատ ժամանակ է, որ ապրում եմ այս տանը: Բայց, փառք Աստուծոյ, դուք վախենալու այլ ես ոչինչ չունէք և վաղը հիանալի օր կ'լլին:

Սյս տանելով նա բաց պատուհանից նայեց զէպի դուրս: Որոտման ձայներն հեռանում էին: Համարեան թէ անձրեւը դադարել էր ու զովութեան հրաշալի հոտը տարածվում էր սենեակի մէջ: Աստղերն սկսում էին վառուել:

— Դուք ինձ շատ պարտաւորեցրիք, — պատասխանեցի նորան. — մեր դրութեան մէջ մեզ համար Ֆիրլէիւվկան այն էր, ինչ նաւահանգիստը ծովի մէջ փոթորիկի ժամանակ:

— Չարժէ շնորհակալ լինել. բայց դուք ուրիշ տեղ չէիք գտնիլ: Սյս կողմը շատ սակաւաբնակ է և շատ քիչ է պատահում, որ մեզ մօտ ուրիշ մարդ գայ: Մենք ապրում ենք այստեղ ինչպէս անսպասուում:

— Մի՞թէ դուք մենակ չէք զգում ձեզ այս առանձնութեան մէջ:

— Ամենևին, — պատասխանեց նա, — իմ կարծիքս այս է, որ մարդ կարիք է զգում իւր նմանների բնկերութեան միայն այն ժամանակ, երբ նորա սիրտը դատարկ է, երբ նա անբաւական է իրենով: Սյդ զէպքում նա իրեն մոռանալու միջոց է փնտռում: Իսկ ով դո՛հ է իրենով և գտնում է նորան, ում սիրում է — նա հասնում է բազդին միայն այն ժամանակ, երբ ինքը մենակ է:

— Ես կարծում էի, թէ դուք մենակ էք ապրում:

— Մենակ:

Սերբրատովիչը նայեց ինձ վերայ մի րոպէ, կարծես թէ չսեց ասածս:

— Ճիշտ է, — շարունակեց նա, — ես չափազանց վաղ կօրցրի կնոջս, բայց ես յաղթեցի իմ վիշտս: Վիշտը մեղամբացնում է. ինձ մօտ մնաց միայն իմ որդի Ներմոզենը և ինձ ուրիշ ոչինչ հարկաւոր չէ: Ահա նորա պատկերը:

— Տիանայլե՛ր երեխայ է:

— Եւ լաւ երեխայ. ի՛նչպէս է նա սիրում ինձ: Յաճախ հարցնում եմ ինքս ինձ. ինչո՞վ արժանացայ ես այդպիսի մոտրմութեան: Բայց ես է՛լ եմ նորան սիրում: Զէ որ նա ինձ համար ամենայն ինչ է: Տեսնում էք, երբ ես զբաղվում եմ իմ գրքերով, ձեռագրով, կամ խոշորոցոյցով — նա միշտ պատեղ ինձ մօտ փոքրիկ սեղանի մօտ է լինում: Նա կամ զրում է, կամ զբաղվում է որ և է գործով, որ վերցնում է այդ պահարանից. նա ուրախ զնում է հեծած իւր օրօրուող ձին, կամ հագնում է իւր ասպետական սաղաւարտն ու շարժում թուրը կամ մի բան է ներկայացնում փոքրիկ թատրոնում: Սյդ ամենը համեստաբար, առանց աղմկի: Երբ նա նստում է, այն ժամանակ չի շարժվում. սենեակի մէջ շրջելիս հազիւ են լսվում նորա քայլերը. նա մօտենում է ինձ, դնում է ձեռքն ուսիս, ոչ մի թուղթ չի ծմլում, ոչ մի աթոռ չի շարժում սեղից: Ես չեմ ծանաչում ոչ մի հոգի, որ նորանից հարուստ լինի վարձատրուած, որովհետեւ նա լի է կարեկցութիւնով ու մաքուր սիրով գէպի ճշմարտութիւնը: Բայց չկարծէք, թէ նա երես տուած է: Փառք Աստուծոյ, նա առողջ, ամուր, ուրախ ու կայտառ մանուկ է: Ես զնում եմ նորա հետ ձիով և նա յաճախ ուղեկցում է ինձ որսի ժամանակ: Նա ունի փոքրիկ այգի, ուր նա գործում է: Զմեռը ես նստում եմ նորա հետ վառարանի մօտ, պատմում եմ նորան պատմութիւններ և աշխատում եմ զոցանով, որոնց նա այդպէս սիրում

է՛ իւր համար աննկատելի կերպով զարգացնել նորա մէջ ձգտումն դէպի ամենայն զեղեցիկն ու բարին: Դուք նորան կըսիրէք: Ամենքն ահամայ սիրում են նորան:

Վարպէտրի խշխշոյն ընդհատեց նորան: Մտաւ ծեր Կաէտանն ու յայտնեց, որ ընթրիքը պատրաստ է: Մենք մտանք փոքրիկ սեղանատունը: Ես նստեցի տանտիրոջ դիմաց ու տեսայ, որ մի երրորդ աման էլ է դրուած:

— Նախազգուշացրել ես արդե՞ք երիտասարդ պարոնին, որ մենք պէտք է ընթրենք. — հարցրեց Սերբրատովիչը:

— Այո՛, տէր, — պատասխանեց Կաէտանը, — նա այս րոպէիս կզըայ:

Սերբրատովիչը ծածկեց դէմքը ձեռքերով: Ես նստում էի դռանը, բայց ոչ ոք չընկեց: Սերբրատովիչն ուղղուեց, հռաչեց ու կանչեց.

— Դու ճրտեղ ես. — ոչ ոք չպատասխանեց:

— Իմ աչքերս օրէցօր թուլանում են, — ասաց նա կամաց, կարծես ինքն իրեն, — այդ նորանից է, որ ես շատ եմ լաց եղել:

— Ահա երիտասարդ պարոն չերմոգենը, — ասաց Կաէտանը՝ ցոյց տալով պարապ աթոռը:

Մի թեթեւ յնչուամն անցաւ իմ բոլոր մարմնով:

— Սիրելի չերմոգեն, — ասաց Սերբրատովիչը, — սա մի պարոն է, որ եկել է մեզ մօտ փոթորկի ժամանակ: Նա դալիս է Վիեննայից և քեզ շատ բան կարող է պատմել: Զեռ տուր նորան:

Այս ի՞նչ է նշանակում: Ուրեմն Սերբրատովիչն իսկապէս անմիտ էր: Մտան էլ նոյնպէս անմիտ է թէ կարեկցութիւնից է այդպէս վարվում: Սերբրատովիչը հիւրասիրում էր որդուն. ածեց նորա համար կէս բաժակ զինի: Ընթրիքի ժամանակ նա երբեմն խօսում էր որդու և երբեմն ինձ հետ: Ժամանակ առ ժամանակ ծառան էլ նոյնպէս խօսում էր անտեսանելի հետ: Ընթրիքից յետոյ

երբ մենք մտանք պարապմանց սենեակը՝ Սերբրատովիչը կանչեց որդուն ու նստեցրեց նորան իւր կողքին վառարանի մօտ, ուր մթութեան մէջ կրակ էր երևում:

—Նստի՛ր, որդեակս, ծնկներիս վերայ,—շնչեց նա զրկելով որդուն, որ նորանից իրականապէս նոյնքան հեռու էր, որքան երկնային աստղերը:

—Դուք կրկարճէք անպատճառ, որ ես սորան երեսում տալիս, — ասաց նա ժպտելով մի և նոյն ժամանակ Կաէտանը տուաւ ինձ մի սիգար ու կայրեց իւր պարոնի ծխաքարը:

—Ո՛հ, ես կարող եմ խիստ լինել, երբ այդ նորն օգտին է ծառայում: Բայց այդ շատ սովաւ է պատահում: Նա այնպէս բարի է:

Շառան դուրս գնաց: Մի քանի րոպէ խորին լռութիւն տիրեց սենեակում:

—Յուսով եմ, որ դուք կընեւէք ինձ. — ասաց Սերբրատովիչը: — Հերմոգենը սովոր է, որ ես նորան մի բան պատմեմ, երբ նա պէտք է գնայ քնելու: Սակայն ես չարը չեմ դորձ գնիլ ձեր համբերութիւնը:

—Դուք ինձ շատ կըպարտաւորեցնէք, եթէ հետեւէք ձեր սովորութիւններին, որպէս թէ ես այստեղ չեմ:

Սերբրատովիչը գլուխը յետ թեքեց, հայեացքը ձգելով տարածութեան մէջ:

—Դէ՛հ, լսի՛ր, որդեակս: Կապոյտ ծովի ափին ապրում էր մի ժամանակ մի զօրեղ թագաւոր. նա տիրում էր շատ երկրների, ունէր շատ հպատակներ, բազմաթիւ նաւեր և մի գեղեցիկ կին. բայց նա որդի չունէր և այդ էր նորա անբաղդութիւնը: Նորա մնայլ զրութիւնից (որ սաստկանում էր օրէ ցօր) քիչ չէր տանջվում և նորա տէրութիւնը: Ի զուր թաղուհին խորհրդակցում էր զիտ-նականների ու փորձուած կանանց հետ — նա երեխայ չէր բերում: Մի անգամ թագաւորը որսի ժամանակ մոտ

անտառի խորքն, ուր նկատեց մի փոքրիկ մատուռ. նորանից ոչ հեռու գտնվում էր մի Աստուածապաշտ ճղնաւորի խրճիթ: «Մտի՛ր, — ասաց միայնակեցը, — և աղօթի՛ր Աստծուն: Ով աղօթում է պատեղ, Աստուած լսում է նորա աղօթքը. բայց պղ միայն մէկ անգամ նորա կեանքում. պղ պատճառով էլ եթէ հարկաւոր է քեզ խնդրել մի բան, լաւ մտածի՛ր»: Թագաւորը մտածեց, մտաւ մատուռը, չոքեց ու սկսեց աղօթել. «Ամենակարող Աստուած, առաջ ինձ մի տղայ զաւակ գոնէ մի քանի տարի ժամանակով: Երբ կարեւոր կը համարես յետ վերցնել նորան, ես չեմ գանդատուիլ և անտրտունջ կըխոնարհուիմ Քո կամքի առջև»: Այն ժամանակ Աստուած՝ ուղարկեց իւր հրեշտակներից մէկին երկիրս, գնելով նորան թագուհու օրօրոցի մէջ: Ժառանգի ծննդեանն ուրախացան պալատի և պետութեան մէջ ամենքը: Դա խելօք, գեղեցիկ, հրեշտակային բարութեամբ մի երեխայ էր: Նա մեծանում էր սիրուած ամենքից. թագաւորն ու ժողովուրդը բոլորովին երջանիկ էին: Բայց տասը տարին անցնելուց յետոյ հրեշտակը տարածեց ձիւնի նման իւր փայլուն թևերն ու բարձրացաւ երկինք: Թագաւորն ընկաւ խորին վշտի մէջ, նորանից սահաւ չցաւեց և ժողովուրդը: Այն ժամանակ մի անգամ զիշերը երկնային փայլով ամբողջապէս լուսաւորուած նորա հրեշտակ-որդին երևեց թագաւորին ու ասաց. «Մի՛ լա՛ր, դու չես տեսնում ինձ քո երկրային աչքերով. բայց ես գիշեր ցերեկ քեզ մօտ եմ: Այն օրից խաղաղութիւնն ու հանդստութիւնը լքցրին միայնացած թագաւորի հոգին. ամեն տեղ նա զգում էր իւր մօտ հրեշտակի ներկայութիւնն ու մինչև իւր մահը թագաւորեց իմաստութիւնով ու բարեգործութիւնով:

Սերբրատովիչը շրջեց դուխը և ես տեսայ, որ նորա աչքերում փայլեցին արատաւքի կաթիլներ: Դրսում փառեղանակը բոլորովին հանդարտուել էր. երկնակամարը

փայլում էր: Գիշերուայ սաստիկ անուշահոտութիւնը փութորկի թարմութեան հետ խառնուած լըրել էր սննեակը: Սերբրատովիչը կարծես մոռացաւ ինձ. նա կամայ թեքուեց դէպի երեխան, որին նա կարծում էր թէ բռնած էր ձեռներում և նորան սիրալիր խօսքեր սկսեց ասել: Հրաշալի ժպիտով նա աշխատում էր դուշակել որդու ցանկութիւնները. յետոյ նա մնաս բարև ասաց նորան և մի անբացատրելի ուրախութիւն լուսաւորեց նորա դէմքը, հրը նա հայեացքով հետեւեց որդուն մինչև մօտիկ սենեակի դուռը: Յանկարծ նա յիշեց իմ ներկայութիւնս ու սկսեց ներողութիւն խնդրել:

—Թոյլ տուէ՛ք ինձ,—աւելացրեց նա,—դուրս գալ միայն մի քանի բոպէ, այնուհետև ես բօլորովին պատրաստ կըլինեմ ձեր ծառայութեան:

Նա վերցրեց մօմ ու մօտաւ հարեան սննեակն, ուր սպիտակ վարագոյրի տակ դրուած էին երկու մահճակալներ: Նա մօմը դրեց մի սեղանի վերայ, ուր դարսուած էին զրքեր և որ գտնվում էր մահճակալներից մէկի գլխի մօտ ու ոտի մասներով կամայ մօտեցաւ միւսին, մայրական հոգատարութիւնով բացեց վարագոյրը:

—Բարի գիշեր, որդեակս,—շնչեց նա,—բարի՛ գիշեր:

Գոհ գէմքով յետ դառնալով նա ինձ գլխով արտա:

—Նա արդէն քնեց,—ասաց նա,—և կարելի է երազում տեսնում է այն կատուին, որ ես խօստացել եմ նորան, որովհետև նորա դէմքը փայլում է երջանկութեան ժպիտով: Շուտով նորա ծննդեան տօնն է, ահա ինչու ես կամեցայ իմանալ նորանից, թէ նա ինչ է ցանկանում ինձանից ընծայ ստանալ: Նա շատ համե՛ստ է: Նա երբէք ոչինչ չի պահանջում: Բայց մի և նոյն ժամանակ ինձ համար մեծ ուրախութիւն է, իմ միակ բաւականութիւնս է կատարել նորա անմեղ համեստ ցանկութիւնները: Ծրնրնդեան տօնին ես ընծայեցի նորան այդ պահարանը

զրքերի հետ Այժմ նա կրկամենայ ժամացոյց: Նա իմ բոլոր երջանկութիւնս է: Երբ ես մի լաւ բան եմ կարգում, խիղջն պէտք է պատմեմ նորան, այն ժամանակ եմ միայն ես ամբողջապէս զուարճանում կարգացածովս: Երբ նորա հետ զբօսնում եմ անտառի մէջ, կամ երբ միասին բարձրանում ենք բլրակի վերայ ու զմայլվում այն տեսարանով, երբ արեգակը գլորվում է լոյսի հագլուադիւտ խաղի միջով, երբ ամպերն ստանում են զանազան ձևեր, կամ որ եւ է թռչուն միւսներէց լաւ է երգում, այն ժամանակ ես երեւակայում եմ, որ այդ բոլորն ստեղծուած է նորա համար եւ իմ ամենամեծ բաւականութիւնս է նորա ուշադրութիւնը դարձնել բնութեան գեղեցկութեան վերայ: Այն ժամանակ ես բազմաւոր եմ: Ոչ ոք չգիտէ, թէ ես ո՞րքան երջանիկ եմ: Արդեօք միթէ մարդկային խելքի բոլոր ստեղծագործութիւնները, գիւտերը, փառքը, աղնութիւնը, այս աշխարհի բոլոր հրաշալիքները կարող են հաւասարուել երեխայի ժպտի հետ: Ես ունիմ երեխայ. իսկ ինքս ամբողջապէս նորան եմ պատկանում: Միթէ՞ ես մենակ եմ: Սորանից աւելի էլ ինչ է հարկաւոր մեզ:

Ես նայեցի Սերբրատովիչին ու խօսք չգտայ խօսելու: Ես մօտեցայ պատուհանին, որ ծածկւմ յուզմունքս ուարտասուքս: Ի՞նչպիսի խիստ ճակատագիր է: Բայց խնայութիւն էր սա արդեօք: Այն ինչ ճակատագիրը խլել է նորանից՝ վերադարձրել է նորան երացում, քաղցր երեւակայութեան մէջ, որոնք նորան կատարեալ երջանկացնում են:

— Սրդէն ուշ է,— ասաց նա մօտենալով ինձ. — չէ՞ որ դուք դադարել էք կատաղած բնութեան մէջ ճանապարհորդելուց: Գնանք քնելու: Բարի՛ գիշեր:

— Բարի՛ գիշեր:

Ես մտայ սենեակս սաստիկ յուզուած բոլոր տեսա-

ծիցս ու լրածիցս: Բայ պատուհանի միջով ներս էր թափվում զիշերային զովը բացուած ծաղիկների ու թւփերի հոտաւէտ բուրմուռի հետ: Ամբողջ բնութեան մէջ աիրնւմ էր գիշերուայ խորին ու սուրբ լուծիւնը: Սյգիի սև ծառերը կանգնած էին ինչպէս ողիններ, որոնք չէին համարձակվում մանել այդ ամրոցի զիւթական սահմանի մէջ, որի չորս կողմում բնակվում էին կէս գիշերուայ բարի ողինները: Ամեն ինչ ընկղմուած էր խոր քնի մէջ՝ ոչինչ չէր շարժվում, ոչ տերև, ոչ արօտ: Միայն զետը դառնապէս կրկնալով հեռուում առանց հանգստանալու շարունակում էր իւր ճանապարհը: Երկնականմարի վերայ մեղմ փայլով շողշողացին բազմաթիւ աստղեր: Իրենց երանական բարձրութիւնից նոքա սփռում էին երկրի վերայ հրաշալի լոյս և ճիւղից ճիւղ տատանուող թելեր էին ձգում: Իւր մակերևոյթի վերայ այդ պլսպղզուն լոյսերով ու ստուերներով երկինքը նմանում էր ոսկեայ նկարներով սև փայտից շինած տհազին կամարի: Հորիզոնի վերայ վեհ մթութեան մէջ հանդարտ բարձրանում էր մի ամպ,—նա նմանում էր առաքաասները պարզած խորհրդաւոր նաւի:

Ինչպէս փոխուել էր ամրոցի և այգիի տեսքը, երբ ևս առաւօտեան արթնացայ ու ցածրացայ դէպի բակը տանող սանդուղներով: Առաւօտեան մոռախուղը սփռուած էր ամեն տեղ: Մաքուր օդի մէջ լսվում էին բնութեան անորոշ ձայները, որոնք ողջունում էին նոր ծնուող տրեւին: Իմ յետևում կանգնած էր Սաբեանների ժամանակից շինուած մի սև քարէ շինութիւն, որ այժմ համարեան ամբողջապէս ծածկուած էր արօտով: Երկու կօլոր աշտարակներ, որոնց շուրջն ուրախ պտտվում էին աղուաներ—բարձրացել էին կտուրի վերայ: Առջևի կողմից կար մի մեծ վանդակապատ պատշգամբ զարդարուած սողացող բոյսերով ու ծաղիկներով: Դռան վերայի աղնուական նշա-

նի վերայ ծիծեռնակները բոյն էին շինել: Պատուհանները փայլում էին: Խիստ կապտադոյն ծուխը բարձրանում էր խողովակներից մէկով ու կծկուելով ցրվում էր տարածութեան մէջ: Դռան առջև տարածուել էր մի փոքրիկ մարդագետին ծածկուած հրաշալի, փայլուն-կանաչ արօտով: Մի փոքր հեռու—մի այգի ցողապատ զանազան ծաղիկներով, որոնք կաշում էին արեղակի առաջին ճառագայթներին. այգիի վերայ սաւառնում էր նոյնքան գոյնը գոյն մեղունների, բզէզների, ոսկէ ճանձների և անթիւ թիթեռների կենդանի բզկացող աշխարհ: Գլխաւոր ծառուղիի աւաղի վերայ տարածուել էր ծեր որսկան շունն ու տաքացնում էր իւր խոշոր անդամները արեղակի կենդանացուցիչ ճառագայթների տակ: Վարդի թփերի վերայ տարածուել էր զիւրածածան տերեւներով ու թարմութեամբ լի մացառներով մի անտառիկ: Մէջ տեղում գտնվում էր մարմարեայ մի աւաղան, ուր նստել էր Նեպտունն իւր եռաժանկեով: Մի փոքր հեռու մարդու հայեացքն ընկնում էր ոսկէգոյն-կանաչ ստուերախիտ անտառի, եղեխների կարմրադոյն բուների և մութ ծուռ ու մուռ շառաւիղների ամբողջ լարիրնթոսի մէջ, որոնք կարծես հրաւիրում լինէին քեզ իրենց հովանիի տակ: Այժմ երկնքի վերայ ամպ չկար. նա կապտադոյն էր դարձել: Ամեն կողմից լսվում էին թռչունների ուրախ ձայներ: Լուսի հեղեղները տարածվում էին սաստիկ անուշահոտութիւնով և անցեալ փոթորկալից զիշերուայ թարմութիւնով լցրուած խաղաղ օդի մէջ: Հեռուում երևում էր կապտադոյն տարածութեան մէջ մօտակայ անտառի հարուստ կանաչը: Ոսկէ թիւի նման դաշտերի միջով հոսող գետի խաղաղ ալիքներից լսվում էր մի թոյլ մեղեդի: Արծիւը կարծես հանդստանում էր փայլող եթերի բարձրութեան վերայ: Ամեն կողմից լսվում էին աղաղակներ, երգեր և արօտաաեղերում արածող

ձիանց վզերից կախուած զանգակների ձայներ: Կարծես բոլոր արարածներն ուրախանում էին նոր օրուայ վեհութիւնով և իսկապէս աւելի լաւ էին հրճվում կեանքով երեկուայ փոթորիկից յետոյ: Կաէտանը բերաւ ինձ համար նախաձաշիկ փոքրիկ հովանոցի մէջ, ուր ես նստեցի բնութեան արթնանալու տեսարանով զուարճանալու համար: Կառապանս պատրաստում էր ձիաները:

— Մի՞թէ ես այլ ևս չեմ տեսնելու պարոն Սերբրատովիչին, — հարցրի ես ծառայից:

— Կրտսենէ՛ք, — պատասխանեց Կաէտանը, — պարոնը նոր է վեր կացել և հէնց այս րոպէիս կըդայ այստեղ:

— Ես շատ ուրախ եմ. շատ կըցաւէի, եթէ զնայի առանց նորան մնաս բարեւ ասելու և մի անգամ էլ նորան շնորհակալութիւնս չյայտնելու:

Կաէտանը ժպտեց:

— Ձեզ համար լաւ կըլինի, պարոն, զնալ այս հիւնալի եղանակով և դուք զոհունակութեամբ կըհամոզուիք, որ փոթորիկը մեծ փնտսներ չի հասցրել:

Երբ մօտեցաւ կառքս, Սերբրատովիչը երևեց սրահի սանդուղների վերայ ու բարեւեց ինձ ձեռքով: Ես շտապեցի նորա դիմաց, որ մի անգամ էլ շնորհակալութիւնս յայտնեմ նորան:

— Խնդրեմ, այլ ևս չիօտենք այդ մասին. դուք ամաչեցնում էք ինձ, — ասաց նա: — Միայն երեւակայեցէք, ես ի՞նչ կըզգայի, եթէ իմ չերմոգնեն այդպիսի եղանակին, ինչպէս երէկ էր — զանուէր բաց երկնքի տակ: Ձեր ծնողները դեռ կենդանի են:

— Այո՛, փառք Աստուծոյ:

— Աստուած նոցա երկար կեանք տայ. բայց չէ թէ այդ ճակատագրի օրէնքն է, որ որդիները երկար են ապրում ծնողներից: Մենք հակառակին համեմել չենք կարող — այդ բնութեան դէմ է և կարող է մեզ տախիլ կասկածելու Արարչի վերայ: Աստուած քեզ պահի՛:

Սերբրատովիչը դարձաւ դէպի այդին:

— Ի՞նչ գեղեցիկ առաւօտ է, — զոչեց նա, — Ի՞նչ հր-
րաշալի լոյս է, Ի՞նչ ուրախութիւն, Ի՞նչ պիտի կենդանու-
թիւնն է այս ամբողջ բնութեան մէջ: Կարծես, թէ աւելի
շատ ես սիրում Սատժուն այսպիսի հրաշալի տեսարանի
ժամանակ: Որքան ափսոսում եմ, որ հերմոգէնն այստեղ
չէ. նա քնած է. իսկ ես խղճում եմ նորան զարթեցնել:

Պինկաս Գլեանցմանը նստեց իւր տեղում ու վեր-
ջրից մտրակը: Կառքը շարժուեց. ես մնաս բարեւ ասացի
տանտիրոջ: Երբ Սերբրատովիչը սեղմեց ձեռքս, ես դժուա-
րութիւնով զսպեցի յուզմունքս: Նա կարծես նկատեց:

— Իսկապէս, — ասաց նա, — չպէտք է երբէք բաժա-
նուիլ: Իրաւ է, որ չնայելով ոչ տարերին, ոչ ծովերին,
այնու ամենայնիւ մենք կը հանդիպենք միմեանց կամ այս-
տեղ կամ այնտեղ երկնքում:

Նորա հայեացքն ընդունեց յանկարծ մետաղական
արտայայտութիւն, որ ցոյց էր տալիս անդրդուելի հաս-
տատ ու զարմանալի յոյս դէպի սպառնալի կեանքը:

Ճանապարհին կառապանս դարձաւ ինձ ու ասաց
կամայով.

— Նա զրկուել է կնոջից և ապա միակ որդույ. այդ
դառն եղբւրթիւնները մնասել են նորա խելքին...

Ես տկամայ յետ նայեցի: Մի անգամ էլ զմայլուե-
ցի այդ մոխրագոյն ամրոցով, որ պատած էր խոտով, ինչ-
պէս կանաչ գորգով: Ես տեսայ ինչպէս նա նայում էր
բարձր ծառերի ու ծաղիկների զազաթներէ ետեւից. ապա
նա միանգամից անհետացաւ անտառի խիտ վարազոյրի
հետեւում, ուր գնաց կառքս: Վեհ լուութիւն էր տիրում
այժմ մեր շուրջը, այդ կուսական բնութեան մէջ, ուր
արեգակը երբեմն հազիւ էր ուղարկում իւր ճառագայթ-
ները, որոնք հանգուցանման բունների միջով դժուարու-
թեամբ էին հասնում մամուռի թաւշանման զորդին: Խա-

դադ տիրութիւն էր տիրում եղէինների մէջ: Ձէր լըս-
վում ոչ թռչունների երգ, ոչ մեղունների բզկոց: Մտքով
ես դեռ Ֆիւրէիւ վկայումն էի գտնվում: Նոքա անմիտ ե՞ն
թէ խելացի, — հարցրի ինքս ինձ:

Ձգիտեմ. բայց եթէ նոքա անմիտ էլ լինէին, այնու
ամենայնիւ նոյա անմտութիւնն աւելի գեղեցիկ, վիհ և
աւելի զգայուն է, քան թէ մեր բոլոր տխուր խելացիու-
թիւնը:

Մ. ՏԷՐ-ՉԱՔԱՐԵԱՆՑ.



ԾՈՎԻ ՎԵՐԱՅ.

«Քաջալերեցարհր, ես եմ, մի երկնչիք»:

ԱԻԵՏԱՐԱՆ.

Բ. Ա. - ին.

Լուսնեակ, զով զիշեր: Մփում էր նաւակ
Հեղիկ ու խաղաղ ծովում անյատակ:
Մենք երգում էինք պաշտելի տաղեր,
Մեղ լսում էին լուսին ու աստղեր:

Բայց ահա՛ յանկարծ մեր ուրախ երգին
Խուլ խուլ մռունչներ արձագանք տուին...
Այն ծովն էր հեռում սկսում իր խաղ.
Մենք չսարսեցինք, երգեցինք անաչ:

Եւ մենք զգացինք, ինչպէս մի առիւծ,
Մեղմ նիրհող ծովը կատաղեց քամուլ.
Խառնուեցան տարերք, փրփրացին ալիք
Ու մեր թոյլ նաւակ արին խաղալիք:

Այդպէս էլ ահա՛ և մեր կեանքի մէջ
 Սև փոթորիկներ խռնվում են անվերջ.
 Երգենք միշտ անվախ երգեր յաղթական,
 Սնվհատ կռուներ, քանի յոժեր կան . . .

ԳԷՈՐԳ ԲԱՀ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆՑ.

1894 թ. սեպտեմբ. 29.
 Կոննի Կուտ.



ՄԻ ԽԻՋԱԽ ՓՈՐՁ

Զրոյց ամերիկացի մատենագիր Հենրի Հարլանդի.

Ի.

Նորա անունը Լէօնիդ Բենարի է: Մագումով զուտ անգլիացի, ծնուած Դեւոնշիրում, բայց միշտ բնակվում էր Սմերիկայի Ադիրոնդա քաղաքում: Երկար տարիների ընթացքում նա պարապում էր բժշկականութեամբ, գլխաւորապէս որպէս վիրաբոյժ, բայց այժմ նա լիովին հրաժարուել է որ և է ներգործական գործունէութիւնից: Եւ այդ վարմանալի չէ, եթէ աչքի առաջ ունենանք նորա տարիքը. ծնուել է 1818 թուին:

Մի քանի տարի սորանից առաջ նորա հետ պատահեց մի շատ հետաքրքրական պատմութիւն: Դա տեղի ունեցաւ 1884 թուականին: Այդ օր նա երեկոյեան շատ ուշ էր վերադառնում տուն: Մտնելով Վաշինգտոնի փողոցը՝ նա տեսաւ որ առջեկց՝ մի հարիւր քայլ տարածութեան վերայ, մի կին է գնում: Երիտանարդ էր նա թէ ծեր, սպիտակ էր թէ խափշեկ, աղքատ էր թէ ունեւոր, նա չէր կարող որոշել, որովհետեւ սաստիկ մոլթն էր: Բայց նա խորասուզուած լինելով մտածումնքների մէջ՝ երեւի ուշադրութիւն էլ չէր դարձնիլ այդ կնկայ վե-

րայ, եթէ սա հասնելով այդ անմարդաբնակ փողոցի ծայրը՝ փոխանակ ճանապարհը մի ուրիշ փողոց ծռելու, շտապով իւր քայլերը չուղղէր դէպի գետը տանող սանդուղքները:

Նորան շատ տարօրինակ այդ երևեց զիշերուայ ուշ ժամանակին: Բնականաբար նա մտածեց, որ այդ կինը անձնասպանութիւն է կամենում անել, և ահա, երկար չմտածելուց՝ յետոյ՝ նա նոյնպէս իւր քայլերը ուղղեց դէպի սանդուղքը, մտադրուելով հետեւել այդ անծանօթ կնոջը: Գիշերուայ խաւարը չէր թողնում, որ մարդ մի բան տեսնէր:

Յանկարծ կայծակը խփեց և իւր լուսով լուսաւորեց գետի ափը: Նա կարողացաւ միայն նկատել կնոջ մոլթ զծաղրութիւնը, որ կանգնած էր արդէն գետի ափին: Մի վայրկեանում նա կանգնած էր արդէն կնոջ կողքին և բռնել էր ձեռքից:

Չսպասելով մի այդպիսի բան, կինը ձեռը թափ տուեց և բարեբաղդաբար ոչ դէպի ջրի կողմը, եթէ ոչ ինքն էլ ջուրը կ'ընկնէր, բռնկին էլ հետը կրտանէր:

— Մի՛ վախենաք, — ասաց բռնկը, — ես դեռ փողոցում նկատեցի, ինչպէս դուք եկաք այստեղ... Ես նախազգացի, որ դուք մի ոչ բարի բան էք վճռել անելու...

Սաստիկ սարսուռ էր պատել կնոջ, նա խոր հառաչանք արձակեց և ոչինչ չպատասխանեց նորան:

— Դուք առիթ չունիք ինձանից վախենալու, — շարունակեց բռնկը Բենարին: — Ես մի ծերուկ եմ, որից աւելի քիչ կարելի է երկիւղ կրել, քան մի որ և է ուրիշ բանից: Սյդպէս մի՛ վրդովուիք: Ես միայն կամենում եմ օգտակար լինել ձեզ համար, ինչով որ կարող եմ:

— Խնդրում եմ, բաց թողէք իմ ձեռը, — ասաց նա կտրուկ կերպով և նորա ձայնը արտայայտում էր զայրոյթ, որից միայն կարելի էր իմանալ, որ խօսողը հասարակ կանանց շրջանից դուրս կին էր:

— Ո՛չ — պատասխանեց բժիշկը, — ես չեմ թողնիլ ձեզ:

— Ինչու, ի՞նչ պատճառով, կըհարցնեմ ձեզ:

— Ես զգում եմ, որ եթէ բաց թողնեմ ձեզ, ձեր առաջին գործը կըլինի ջուրը ընկնել, իսկ դա անմատութիւն կըլինէր ձեր կողմից:

— Ձեր ի՞նչ գործն է: Դուք ի՞նչ իրաւունք ունիք միջամտելու: Իմ կեանքը իմ ձեռիս է, ինչ որ ուզում եմ, անում եմ:

— Փիլիսոփայութիւն անելու ժամանակ չէ այժմ, բայց երկվում եմ, որ դուք չէք ազատուիլ մինչև որ խօսք չտաք, թէ անձնասպանութիւնից հրաժարվում էք:

Նա դարձեալ զայրացած ձեռները թափ տուեց, բայց մի քանի վայրկեան լռելուց յետոյ՝ շարունակեց.

— Դուք անտանելի էք, պարոն: Դուք միջամտում էք ուրիշների գործին, ուր ձեզ վերաբերեալ ոչինչ չկայ, ի չարն էք գործ դնում այն հանգամանքը, որ ձեր ձեռը կին է ընկել. դա պախարակելի է:

— Ես շատ ցաւում եմ, որ դուք այդպէս էք մտածում իմ մասին, — պատասխանեց նորան բժիշկը՝ բոլորովին հանդարտ կերպով, — սակայն ես չեմ զիջանիլ:

— Դուք ասում էք, թէ ծեր էք, իսկ ես, ես երիտասարդ եմ, ուժեղ և վճռիս հաստատ, հասկանում էք: Դուք ինձ այն տեղը կըհասցնէք, որ ես կըսկսեմ կռուել ձեզ հետ և...

— Դուք այդ չէք անիլ, որովհետև ինչ որ ես անում եմ, անում եմ բարի ցանկութիւնից զրդուած: Բացի այդ՝ չնայած իմ տարիքներիս, իմ մկանունները պողպատէ են, և վերջ ի վերջոյ հարց է, թէ մեղանից ով աւելի թոյլ դուրս կըգայ:

Նա մի քիչ հպարտացաւ, որովհետև երբէք ուժով մարդ չէ եղել:

— Լաւ են թէ վատ ձեր ցանկութիւնները՝ ինձ համար մի և նոյնն է։ Թողէք ինձ։

Նա ոտը զետնին տուեց և փորձեց ազատուել բժըշկի ձեռքից, որ աւելի ևս ամուր բռնել էր նորան։

— Հաւատացէք ինձ, որ ես իմ քէֆիս համար չեմ այսպէս վարվում։ Իմ պարտքս է, իմ պարտքս ձեզ ոգնել...

— Ես ոգնութեան կարօտ չեմ և ոչ դից չեմ խընդրել... Վերջապէս թողէք ինձ...

Նորա ատամները կրճտեցին և երկրորդ անգամ փորձեց դուրս պրծնել բժշկի ձեռքերից, բայց սա անողոր էր։

— Ես չեմ կարող ազատութիւն առնել այն կնոջ, որ այնպիսի զրգուռած զրութեան մէջ է գտնվում, որ չի հասկանում, թէ ինչ է անում... Ես ինձ յանցաւոր, մարդասպան կը համարէի։ Երբ դուք կը հանգստանաք, կը հանդարտուիք, ինքեանքդ ինձ շնորհակալութիւն կ'անէք։ Վաղը իսկ ամեն բան ուրիշ կերպ կ'երևի ձեզ։ Մտածեցէք ձեր ընտանիքի և բարեկամների մասին։ Դուք զեռ երիտասարդ էք, որքան էլ մեծ լինի այժմ ձեր յուսահատութիւնը, դարձեալ ապագայ ունիք։ Գնանք, ես կ'ամենում եմ ճանապարհ ձգել ձեզ մինչև ձեր տունը։

— Մինչև իմ տունս, — գառնութեամբ արտասանեց երիտասարդ կինը։ — Բարեկամներ, ընտանիք... Հա՛, Հա՛, Հա՛։ — Նա ծիծաղեց սարսափելի, չոր և կծու կերպով։ — Ինչ որ դուք ասում էք, շատ անսիրտ բան կը լինէր, եթէ այդքան յիմար չլինէր։ Ես ոչ տուն ունիմ, ոչ բարեկամներ և որ ամենից վատն է, ոչ մի կուպէկ փող։ Չկայ մի տուն, ուր ես կարողանայի ապաստարան գտնել, ոչ դք ինձ չի որոնիլ, երբ ես անհետանամ, զուցէ միայն թշնամիներս, ռեսերիմ թշնամիներս, որոնք կ'որոնէին ինձ նորա համար, որ սախպէին լաւելի ևս տանջուէր... Ո՛հ, թշնամիներ ես բաւականի՛ն ունիմ։ Այժմ ինձ կը թողնէք... Եթէ դուք բոլոր բանը իմանայիք, դուք ձեր ասածը չէիք

պնդիր: Եթէ դուք խմանայիք, թէ ով եմ ես, ինչ եմ տրել, ինչ է սպասում ինձ այս աշխարհում, այն ժամանակ ինքներդ ինձ կ'ասէիք, թէ ինձ համար ապրելուց աւելի սարսափելի բան չէ կարող լինել: Ապրել՝ նշանակում է ամեն բան յիշել, հասկանալ, իսկ քանի որ ես յիշեա, ամենաթշուառ մարդ կր լինեմ: Մտածեցէք միայն, որ քուեր մինչև անգամ ինձ չէ հանդստացնում, որովհետև երազումս էլ տեսնում եմ: Մեղքանալով ինձ՝ հրաժարուեցէք ինձ աղատելու մաքից... Դորանով դուք ինձ ճշմարիտ բարութիւն արած կր լինիք, բայց չէ՞ որ ինքեանքդ տասցիք, որ կ'ամենում էք ինձ բարութիւն անել:

Նա արդէն չէր խօսում այն հեգեական եղանակով, որ փոքր ինչ վիրաւորում էր բժշկին: Նորա յուզուած դրութիւնը շարժում էր բժշկի խորին կարեկցութիւնը:

—Որդիս,—ասաց նորան բժիշկը:—Ինչպէ՞ս ես կարող եմ համոզել ձեզ, որ ես մեղքանում եմ ձեզ և իրօք կ'ամենում եմ օգնել ձեզ: Լսեցէք, ես այս անգից շատ մօտ եմ ապրում: Դուք ասում էք, թէ ապաստարան ոչ մի տեղ չէք կարողանում գտնել: Դուք սխալվում էք, նա սպասում է ձեզ: Ես միջոյններ ունիմ թէ մարմնի և թէ հոգու համար: Կ'որոնենք, դուցէ մենք կրգտնենք միջոց տանջանքներից ձեզ աղատելու համար... Ես առաջարկում եմ ձեզ համաձայնել ինձ հետ... Եթէ մի ժամից դուք կրկին կըպնդէք ձեր վճիռը, ես աղատութիւն կըտամ ձեզ, որ զնաք՝ ուր որ կ'ամենում էք և ձեր ցանկացածը անէք: Փորձեցէք: Նո ոչ մի վատ բան չէ կարող լինել... համաձայն էք:

—Թող այդպէս լինի, եթէ միայն այդ կերպով կարող կր լինիմ աղատուել ձեզանից,—պատասխանեց անծանօթ կինը մի ներքին դժգոհութեամբ:—Բայց հետեւելով ձեզ, ես ինձ վտանգի, մեծ վտանգի եմ ենթարկում: Տարէք ինձ... Ուրեմն, մի ժամից:

— Մի ժամից դուք կամ կըմնաք ինձ մօտ և կամ կըզնաք. այդ կախուած կըլինի ձեր ցանկութիւնից:

Երբ բժիշկը տարաւ նորան իւր առանձնասենեակը և զալը վառեց, նա իւր առջև տեսաւ կանգնած մի շատ սիրուն կին. նորա խոշոր աչերում փայլում էր խելք, զուկտտ երեսին երևում էր սաստիկ յուսահատութիւն:

— Նստէք, նստէք, ինչպէս ձեզ համար յարմար է և ամենից առաջ թոյլ տուէք, մի բաժակ զինի առաջարկեմ ձեզ:

— Ո՛չ մի կաթիլ, — կարճ կարեց կինը:

— Սյն ժամանակ մի որ և իցէ հանգստացնող ճար: Սյժմ դուք իմ հիւանդս էք: Խմեցէք:

— Ես չեմ խմիլ, — ելաւ պատասխանը: — Իմ տանջանքս մարմնական չէ, և ոչ մի դեղ չի կարող օգնել նորան:

— Ուրեմն խօսենք, — ասաց բժիշկը:

— Որքան կամենաք, միայն մի ժամից ո՛չ աւելի:

— Սյժմ տոտն և երկուսից քսան ըոպէ անցել է, — ասաց նա նայելով ժամացուցին... — Թոյլ տուէք մի քանի հարց առաջարկեմ ձեզ:

— Լաւ, բայց ես խօսք չեմ տալիս, որ անպատճառ կըպատասխանեմ նոցա:

— Դուք ինձ ճիշդ ասացիք, թէ ոչ ոք չունիք, որ զէթ սակաւ ինչ հետաքրքրուէր ձեր վիճակով:

— Զուտ ճշմարտութիւն ասացի:

— Մնացեալը նոյնպէս ճիշդ է: Դուք տուն-տեղ, փող չունիք, զղուե՞լ էք կեանքից...

— Եւ որ ամենից վատն է, — ընդհատեց նա նոյն եղանակով, — ես վատ եմ, անաղնիւ եմ: Դուք յաճախակի չէք պատահիլ ինձ նման կանանց: Իւր տեսակում ես էլ հետաքրքրաշարժ եմ, տխրիկական եմ... — Սյտուել

նա խօսքը կարեց և ապա մի տարօրինակ ծիծաղով շարունակեց.— ես անօրինակ անառակութեան տիպ եմ...

Յետոյ աւելի լուրջ կերպով նա վարձաւ բժշկին և ասաց հետեւեալը.

— Սասցէք, խնդրեմ, դուք տուն կ'ընդունէի՞ք բորոտ: Դէհ, ուրեմն խմացէք, որ ես էլ բորոտ եմ, բարոյապէս բորոտ եմ: Իմ մասին ասում էին, թէ ես մինչ ոսկրներին ծուծը փչացած եմ: Բայց դեռ դա բոլոր կարծիքներին, որ ես լսել եմ, ամենաներողամիտն է: Եթէ դուք կարողանայիք միայն երևակայել, թէ որպիսի ոճիրներ եմ ես գործել, որպիսի ոճիրներ եմ խորհել գործելու, դուք ինձ զուրս կը վաշտակէիք, որպէս մի կատաղած շան: Այժմ դուք տեսնում էք, որ ես փրկութիւն չունիմ, չունիմ և ոչ մի յոյս: Ինչու համար ապրեմ:

Նա վեր կացաւ և քայլերը գէպի գուռը ուղղեց, կարծելով, թէ բժիշկը այլ ևս չի պահել նորան:

— Բայց չէ՞ որ դուք խոստացած մի ժամ մնալ ինձ մօտ,— կրկնեց բժիշկը... Ճիշդ դուք այդքան յանցաւոր էք, որպէս հաւատացնում էք ինձ: Յամենայն գէպս մեղքերը կարելի է քաւել տպաշխարութեամբ:

— Քաւել, տպաշխարութիւն, որպիսի խօսքեր են: Այդ խօսքերին կարող են հաւատալ միայն այն մարդիկ, որոնք չար բանի մասին միայն լսելով տեղեկութիւն ունին: Ոճիրը դուցէ կարելի լինի քաւել միայն այն ժամանակ, երբ հեռեանքները չմնային, բայց ոչ մի տպաշխարանք այդ չի կարող անել, ոչինչ հասկանում էք: Տպաշխարանք... Շատերն են խօսում դորա մասին, բայց կեղծաւորութիւն են անում: Իսկ ես աւելի բայ սիրաւունք եմ տանջվում եմ, տանջվում եմ նամանաւանդ նորա համար, որ կեանքիս վերջին նպատակը— չարամիտ նպատակը— ես չկարողացայ իրագործել. . .

— Սակայն լսեցէք, — ասաց բժիշկ Բենսարին, — լաւ ենք մենք, թէ փառ, բայց մենք չենք մեզ ստեղծել, մենք միայն ժառանգականութեան, շրջանի ազդեցութեան հետեւնք ենք: Մեր բոլոր գործերը, լինեն արդար կամ ոճրալի, մեր ազատ կամքով չեն որոշվում և սահմանվում, այլ կարիքից:

— Դուք մեծահոգի էք, — հեգնօրէն պատասխանեց կինը: — Ձեր վարդապետութիւնը կարող էր մեծ ազդեցութիւն ունենալ քրէական դատավարութեան ժամանակ: Բայց ազատութիւն տուէք ձեր մեծահոգութեան և արձակեցէք ինձ այժմ և եթ, պայմանաւորուած ժամից առաջ:

— Այդ անկարելի է: Ես դեռ շատ բան ունիմ ասելու ձեզ:

— Այո, բայց դուք շատ հեռու էք գնում, — բարկացած պատասխանեց անծանօթ կինը: — Գիտէ՞ք, որ ինձ այստեղ պահելով, դուք երկրի օրէնքների դէմ էք գնում, որ դուք ենթարկում էք ձեզ քրէական յանցանքի: Բացէք աչքներդ և տեսէք:

Եւ կինը ձգելով վրայից ծածկոցը, ցոյց տուեց, որ Դէղլօկի բանտարկեալների շտրով է: Բժիշկը սառած մնաց զարմանքից և մի քանի բոպէ ոչինչ չէր կարողանում ասել: Նկատելով այդ՝ անծանօթը շարունակեց.

— Յոյս ունիմ, որ այժմ դուք թոյլ կըտաք, որ ես հեռանամ այս տեղից:

— Դուք բանտից էք փախել, — շշնջեց բժիշկը:

— Այո, բանտից եմ փախել, այն բանտից, որ այս տեղից շատ մօտ է, գետի միւս ափին: Երկու չարքաշ տարի ես անց կացրի Դէղլօկ կղզում, ուր էլի երկար ես պիտի մնայի: Սակայն ես քաղաքում մի փոքրիկ գործ ունէի մի ջէնտրլմէնի հետ, որ սաստիկ ծանր մեղադրանքներ էր յարուցել իմ դէմ, և ահա ես օգուտ քաղեցի առաջին իսկ յարմար դէպքից ծածուկ այս տեղ գալու:

Քաղաքում եւ իմացայ, որ բախար ինձ հետ էլ նոյն կատակն է արել, որին նա այնքան ընդունակ է, այսինքն՝ հակառակորդս մեռել է։ Սյդպէս կեանքիս վերջին նպատակն էլ ոչնչացաւ, և այժմ ես ուրիշ ոչինչ չեմ կամենում, բայց միայն հանգստութիւն զանեւ այն տեղ, որ ձեզ յայտնի է։

Քանի որ անծանօթ կինը խօսում էր, բժիշկը բոլորովին հանգարտուեց և ապա սառն կերպով նկատեց.

—Է՛հ, կարծեմ, դուք ինքներդ ձեզ խաբում էք։ Իսկապէս դուք ոչինչ ցանկութիւն չունիք այս աշխարհին ձեր հրաժեշտը տալու... Դուք միայն կրկամենայիք փոխել ձեր վիճակը, փոխել... Սյն, ինչ որ դուք այժմ այդքան փափագում էք, մահ չէ, այլ մոռացութիւն։ Ես հիմնվում եմ ձեր խօսքերի վերայ։ Սպրբել, ասացիք դուք, նշանակում է ամեն բան յիշել։ Դորանից դուք եզրակացրել էք, թէ մեռնել—նշանակում է մոռանալ։ Ձեզ տանջում է անցեալը, և եթէ դուք մի անգամ ընդ միշտ կարողանայիք ազատուել նորանից, այդ անցեալից, այն ժամանակ դուք այլ ևս չէիք տանջուիլ այնպէս չէ։

—Դուք է, բայց մոռանալու համար միայն մի միջոց կայ։

—Լաւ, բայց եթէ, ենթադրենք, մի հնար լինէ՞ր անցեալը մոռանալու, մի և նոյն ժամանակ չբաժանուել այս աշխարհից։ Ենթադրեցէք, որ դուք կարող էք, առանց մեռնելու, մոռանալ ձեր անունը, ձեր մայրենի լեզուն, որ ձեզ կարելի է մի նոր էակ շինել, բոլորովին վերածնուած, որ դուք կրգանուիք այնպիսի պայմաններում նոր կեանք սկսելու համար, ինչպէս մի նորածին մանուկ։

—Ի՞նչ կարիք կայ ենթադրելու անկարելի բաներ։

—Անկարելի։ Դուք շատ համարձակ էք նկատում, որ դա անկարելի է։ Միթէ դուք չէք կարգացել կամ լսել այն զարմանալի հեռանքների մասին, որ տեղի են

ունենում տեսակ տեսակ պատահականութիւններէց յետոյ: Ուղեղային թաղանթը մեասուելոյ՝ լինի դա հիւանդութիւնից թէ կառավար մի սոստիկ հարուած ստանալուց, կարող է այնպիսի հետեանք ունենալ, որ մարդ իւր յիշողութիւնը կը կորցնէ, մի և նոյն գամանակ և չեն մեասուիլ մտաւոր ուրիշ ընդունակութիւնները, այնպէս որ հիւանդը առողջանալուց յետոյ բոլորովին ոչինչ չէ յիշում իւր մասին, մոռանում է իւր անունը, իւր անդութիւնը, չէ ճանաչում ո՛չ հօրը, ո՛չ էլ մօրը. նա մինչև անգամ չէ կարողանում ման գալ, խօսել, ուտել. մի խօսքով նա մի նոր էակ է դառնում: Ամենքը զիտեն այսպիսի դէպքերի մասին: Շարունակե՛ք մեր ենթադրութիւնները: Ասենք մինչև անգամ, որ դուք մի այդպիսի փորձի զոհ գնացիք: Սյն՝ ինչ որ դուք մահից էք սպասում, կ'ունենայիք շարունակելով ապրել: Սորանից ի՞նչ լաւ բան կարող է լինել:

— Ունայն խօսքեր: Ես հնար չունիմ այդպիսի փոփոխութիւն անելու, մինչդեռ ազատ եմ մեռնելու:

— Ժիշդ է, որ դուք հնար չունիք այդպիսի փոփոխութիւն անելու: Բայց հօ չէք ասիլ, որ մի որ և է ուրիշն էլ չունի այդ հնարը. օրինակի համար՝ այն մարդը, որ զիտնականօրէն քննել, ուսումնասիրել և հետազօտել է այդ երևոյթի պատճառները, կարծեմ, կը կարողանար ստանձնել զիտակցաբար հասարակ դէպքի դերը: Մի հարուած գլխին, — և յիշողութիւնը այլևս չկայ: Եւ այդ հարուածը կարելի է անել զիտմամբ...

— Բայց այդ փորձը արե՛լ են երբ և իցէ:

— Եթէ մինչև օրս չեն արել, կարելի է այժմ անել... Ես կարող եմ ես եմ այն մարդը, որ այժմ ձեզ հաւատում եմ: Յիշել անցեալը, ընդհանրապէս կորցնել յիշողութիւնը, որի առթիւ այնքան խօսել են մահադրութիւնների տարեկրութեանց մէջ, ես կարող եմ անել ձեզ անդամահատական մի հասարակ միջոցով:

— Դա անհաւատալի է, — շշնջեց անծանօթ կինը:

— Անհաւատալի է թէ ոչ բայց դա իրականութիւն է: Իմ գործիքներս կրկաւարեն այն քարի պաշտօնը, որ ընկնելով ձեր կառավիի վերայ, նոյն փափոխութիւնը կը յառաջեցնէր: Եւ քլօրօֆօրմով ձեզ քնեցնելուց և որոշ անդամահատութիւնն անելուց յետոյ, դուք վերստին կենաք կըստանաք միայն երեխայական հասակի բոլոր պայմաններով հանդերձ, ձեր խելքը, սլոպէս ասած, մի սպիտակ թերթ կը լինի, անցեալը ձեզ համար բոլորովին կ'անհետանայ:

— Եթէ այդ բոլորը ճիշդ է, ինչ որ ասում էք, այն ժամանակ դուք սարսափելի յոժ ունիք ձեր անօրինութեան ներքոյ:

— Բոլոր անդամահատ բժիշկները հաւանական են համարում այդ օպերացիան. բայց ինչ վերաբերում է գործնականութեան, ես չեմ կարծում, որ նոցանից մէկը փորձած լինի անել այդ: Բազմաթիւ կառավիների և ուղեղի վերայ իմ տրած հետազօտութիւնները ինձ կարեւոր կըրտկացութեան բերին, որի մասին ես ոչ գրի չեմ ասել: Մարդկանց վերայ ես փորձ չեմ արել, իսկ զանազան տեսակ կենդանիների, շների, ձիերի, կապիկների ենթարկել եմ այդ փորձին, և միշտ մեծ յաջողութեամբ:

Անծանօթ կինը ժպտեց:

— Ուրեմն դուք ենթակաջ էք որոնում:

— Ձէ, չեմ ասիլ: Անկարող լինելով ամենայն վստահութեամբ շուշակել իմ օպերացիայի հետեանքը մարդկային էակի վերայ, այդ պատճառով ես զժուարացել եմ մարդ զանել: Բայց որպէս զի հանդատացնեմ ձեզ, ես կը պատմեմ, մի դէպք, որ ես տեսել եմ:

Եւ նա պատմեց անծանօթ խօսակցին, թէ երեսուն տարի առաջ ունեցել է մի նաժիշտ, որ մի լաւ և աղնիւ կին էր. նա ստիպուած էր կողել բաժանուել իւր մար-

դույն նորա չափազանց կուպտութեան և բարոյականութեան լիովին քայքայման պատճառով: Նորա ամուսինը սրտում ոխ ունէր պահած և ամեն կերպ աշխատում էր մի յարմար դէպք գտնել վրէժն հանելու: Վերջապէս մի օր երեկոյեան բժիշկը լսում է, որ խոհանոցից սաստիկ աղմուկ է զարկւոյ: Նա շտապով գիմում է գէպի խոհանոց և երբ նա երևում է այն տեղ, ատորձանակի ձայն է գալիս: Կինը՝ ստիպուած լինելով պաշտպանել իւր անձը, ատորձանակ էր արձակել իւր մարդու վերայ, որ նա առաջ գնել էր, յուսալով որ կարող է պէտք դալ: Լաւ զննելուց յետոյ, երևեց, որ գնդակը միայն թեթեւ կերպով անցել է կառափի վրայից, բայց սաստիկ վտանգ չէր ըստպատում: Տիւնն իւր երէք օր առանց ուշքի էր պառկած, բայց յետոյ սկսեց կամաց-կամաց ուշքի գալ և առողջանալ: Բայց մի տարօրինակ փոփոխութիւն տեղի ունեցաւ. նա բոլորովին նոր մարդ դարձաւ: Նա ոչ միայն կորցրել էր իւր բոլոր յիշողութիւնը անցեալի վերաբերմամբ, օրինակ, թէ ինչ էր ինքն առաջ, ոչ միայն չէր ճանաչում իւր կնոջ, այլ մինչև անգամ մոռացել էր ուտել, ման գալ: Նա նոր կեանք սկսեց, բայց նորա վարդապետը շրջապատողների շնորհիւ, շատ արագ էր առաջ գնում, մի շաբաթում իւրացնում էր նա այնքան, որքան որ մի երեխայ իւր ամանն այդ միջոցին մի տարում կարող է իւրացնել: Վեց ամսից նա սկսեց խօսել, բայց միայն անգլիերէն, բոլորովին մոռանալով իւր մայրենի լեզուն (ծագումով նա գերմանացի էր): Միաժամանակ բոլորովին փոխուեց նորա բարոյական էութիւնը, նա միանգամայն ազնիւ և անպայման լաւ մարդ դարձաւ:

— Ես երբէք դորանից լաւ ծագայ չեմ ունեցել, — պարփակեց բժիշկը իւր պատմութիւնը: — Երբ քսան և մէկ տարի դորանից յետոյ նա մեռաւ, նա, զիջանելով իմ թախանձազին աղերսանքիս, կտակեց ինձ

միակ թանկագին բանը, որ նա ունէր. . . . Ահաւասիկ. . . .

Բժիշկը բացեց պահարանը և հանեց մի կառափ:

— Դա կատարեալ հէքիաթ է, — նկատեց անծանօթ կինը, ուշի ուշով գիտելով կառափը, որ բժիշկը տուել էր նորան: — Զարմանալի՛ է:

— Այո՛, և այդ զէպքը իմ մէջ ցանկութիւն արծարծեց բացառապէս պարտաւել ուղեղի փոփոխութիւնների հարցը հետազօտելով: Այժմ՝ ես համարձակ տառամ եմ, որ կարող եմ այդ անել համարեա հաւատացած լինելով, որ կը յաջողուի:

— Կարո՞ղ էք ինձ բացատրել, թէ ինչպէս պիտի անէք:

— Այդ լաւ ըմբռնելու համար պիտի բժշկականութիւնը մասնագիտօրէն ուսումնասիրած լինիք:

— Դուք կառափը պիտի ծակէք:

— Ես մի փոքր կը կոտրեմ նորան, բայց ոչինչ չեմ հանիլ այն տեղից:

— Բայց եթէ ձեր փորձը չյաջողուի, ի՞նչ կը լինի ամենավատ հետեանքը:

— Ի հարկէ մահ:

— Ո՛հ, դա չնչին բան է, — բացականչեց անծանօթ կինը: — Ես միայն մի բան չէի կամենալ — ապրել, կորցնելով զիտակցութիւնս, խենթ կամ ապուշ մնալ:

— Այդ չե՛ լինիլ:

— Դուք երաշխաւո՞ր էք: Ուրեմն այդ կը լինի — լեւկատար մոռացութիւն կամ մահ: Բայց եթէ ես կենդանի մնամ, ի՞նչ կը պատահի ինձ հետ այն Ժամանակ, մինչև որ ես կարողանամ բաւականութիւն տալ իմ պահանջներին:

— Մենք ձեր մասին հոգ կը քաշենք: Քոյրս ինձ հետ է ապրում. նա մի մեղմ, հեղաբարոյ կին է, լաւադրոյնը կանանցից: Նա և ես միասին ձեզ պատշաճաւոր կերպով

կրկրթենք: Դուք մեզ մօտ կրմնաք, մենք ձեզ կրկերա-
կրենք, ամեն բան, ինչ որ անհրաժեշտ կըլինի. . .

— Դէ լաւ քերեմն,— շտապով արտասանեց անձա-
նօթ կինը, — ես ինձ յանձնում եմ ձեզ. . . Օպերացիան
այժմ և եթ կանէք:

— Ի հարկէ ոչ: Անհրաժեշտ է, որ առաջուց դուք
հանգստանաք: Վաղը կրտենենք: Ես այժմ կրկանչեմ
քրօջս և նա ձեզ կրտանէ ձեր սենեակը:

— Սակայն ի՞նչ կրկարծէ ձեր քոյրը, տեսնելով իմ
այս աչքի զարնող հագուստս:

— Նա մինչև անգամ բոլորովին ուշադրութիւն չի
դարձնիր որովհետեւ ես այս ըոպէիս մի երկու խօսքով
նորան կրհասկացնեմ և կրպատրաստեմ:

II.

Բժիշկ Բենարիի քոյրը, Ժողէֆինան, ոչինչ զժող-
հութիւն չյայտնեց իւր եղբօրը, որ քնից զարթեցրեց նո-
րան. կըբացրը պատմելով զործի էութիւնը, խնդրեց, որ
հօգ տանէ նորա մասին:

Սյն անդորրեցուցիչ կաթիլներէ շնորհիւ, որ բժիշկ
Բենարին տուեց իւր հիւանդին, անձանօթ կինը շուտով
քնեց և հետեւեալ օրը բոլորովին հանգիստ ու կազդու-
րուած էր, երբ զարթնեց: Բժիշկը վճռեց չյիտաձգել օպե-
րասիօնը: Բայց նախ քան սկսելը, բժիշկը հարկ համա-
րեց մի քանի հարց առաջարկել նորան:

Անձանօթի պատասխաններէց յայտնուեցաւ, որ նո-
րա անունը Լուիլա Մաստրա է, ծնուած Փրանսիա-
յում, բայց ողջ կեանքը անց է կացրել Ամերիկայում:
Քսան և վեց տարեկան է և անաէր-անտիրական որբ է:
Նա մարդու չէ գնացել, բայց վաղուց արդէն կորցրել է
այս կամ այն բանի համար կարմրելու ընդունակութիւնը:

Եթէ բժիշկը կամենում է, նա կարող է հաղորդել և ուրիշ մանրամասնութիւններ, որոնք կարող են հետաքրքրական լինել բժշկի համար:

— Զէ, պէտք չէ, — ասաց բժիշկը: — Այդ միայն կը ձանձրացնէ ձեզ: Բացի այդ, աւելի լաւ է, որ ոչ ոք չմանայ ձեր ամբողջ անցեալը... Զէ՞ որ նորան զուք պիտի մոռանաք, ինչո՞ւ ուրիշները պիտի յիշեն. . .

Ի՞նչ հարկաւորութիւն կայ օպերատիոնի մանրամասնութիւնները նկարագրելու: Բաւական է ասել, որ բժիշկ Բենարին աննման յաջողութեամբ կատարեց, որ մեծ պատիւ է բերում այն բժշկին, որ կանգնած է ժամանակակից զիտութեան պահանջների բարձրութեան վերայ, եթէ միայն առաջ չէ գնացել նորանից:

Երբ հիւանդը զարթնեց, բժիշկը հարց առաջարկեց.

— Լուիզա Մաստարա, ճանաչում էք ինձ:

Նա պատասխան չստացաւ... Լուիզա Մաստարաը այլ ևս գոյութիւն չունէր աշխարհիս երեսին: Այն տեղ, այն մահճակալի վերայ այժմ տառակած էր մի հեղաբարոյ, անարատ կին, երեխայական անմեղութեան արտայայտութեամբ երեսին, սակայն և երեւում էին այն բոլոր զղացմունքները և բոլոր ընդունակութիւնները, որոնք կարող են կանոնաւորապէս աճել և զարգանալ շրջանի և լըրջմիտ դաստիարակութեան ազդեցութեան ներքոյ: Նորա ամբողջ էութիւնը լիովին ենթարկուել էր անպայման փոփոխութեան: Նա մոռացել էր բոլորը, ամբողջ անցեալը անհետացել էր, նորա համար բոլորովին նոր կեանք է սկսում, մի և նոյն ժամանակ, ներքին վերածնութեան շնորհիւ, բաւականին փոփոխութիւն ևս տեղի ունեցաւ արտաքուստ:

Պառաւները այնքան կապուեցին նորա հետ, որ կարծես, թէ նոցա ամենամօտ մարդը լինէր. փաղաքշում էին նորան, խնամք էին տանում, աշխատում էին, որքան կա-

րելի է, լաւ դաստիարակել նորան: Նոքա սիրում են նորան, որպէս իրենց հարազատ աղջկան, և շրջապատողներին ոչ ոք չէ զարմանում այդ բանի վերայ: Ամենքը հաւատում էին այն բանին, ինչ որ նոքա ներշնչել էին և այն սիրուն օրիորդին, որ անսպասելի կերպով որպէս լուսոյ ճառադայթ ընկել էր այդ միայնակեաց պառաւների փոքր ինչ մօայլ շրջանը: Այդ աղջիկը միտ Միրիամ Բենարին էր, որ բոլորովին որբ մնալով՝ Անգլիայից եկել էր նոցա մօտ:

Ինչ որ վերաբերում է նորան, այդ աղջկան, որին ստորեւ ուրիշ կերպ չենք անուանիլ, այլ միայն Միրիամ Բենարի, նա ինքն էլ չէր ենթադրում, որ երբ և իցէ դոյութիւն է ունեցել մի կին Լուիզա Մասսարա անունով, որ այնքան շատ բան էր քաշել իւր կեանքում:

Անցաւ չորս տարի: 1888 թ. մարտին բժիշկը դէպք ունեցաւ ծանօթանալու մի դեղեցիկ երիտասարդի հետ, չենրի Փէրչիլդ անունով, որի մասնագիտութիւնն անդրէպործութիւն էր: Երբ նորան ծանօթացրին Միրիամի հետ, Փէրչիլդի երեսին նկատելի եղաւ սաստիկ շփոթութիւն: Ժողէֆինան մինչև անպամ ենթադրեց, որ երիտասարդը իմացաւ, թէ նոքա ճիշդ չէին ասում, Միրիամին իրենց ազգականը ներկայացնելով: Բայց ոչ Փէրչիլդը շուտով սթափուեց: Ակներեւ է, որ նորա յուզմունքը յառաջացել էր այն բնական զգացմունքից, որ արծարծում է կնոջ ուշադրաւ գեղեցկութիւնը: Վերջ ի վերջոյ Ժողէֆինան այսպէս բացատրեց Փէրչիլդի վրդովմունքը, երբ նա առաջին անգամ տեսաւ Միրիամին: Բայց խսկապէս նորան այնպէս էր թւում, թէ առաջ տեսել էր այդ կնոջ. նորան թւում էր, թէ իւր առջև Լուիզա Մասսարան է, որ մի քանի տարի առաջ դաստիարակուած էր, որովհետեւ կասկածոտութիւնից սպանել էր Փէրչիլդի հանգույնալ երիտասարդ բարեկամի՝ Բոժէր Բիչամի կնոջը: Որ-

պիսի արտաքին նմանութիւն, սակայն մի և նոյն ժամանակ—նման չեն դէմքի արտայայտութիւնը, խօսելու ձևը, իրեն պահելը և այլն. . .

Շատ ժամանակ չէր հարկաւոր, որ Ֆերչելլը բուռն սիրով սիրէր Միրիամին և, համոզուելով, որ նա էլ փախադարձաբար սիրում է, եկաւ խնդրելու երիտասարդ օրիորդի ձեռք: Ծերունի Բենարին, շատ հասկանալի պատճառներով, վրդովուեցաւ այդ առաջարկութիւնից: Տեղի ունեցաւ նորա մէջ մի ներքին կռիւ. մի կողմից նա համոզուած էր, որ նոյն իսկ Միրիամի համար պէտք է ծածուկ պահել այդ աղջկայ անցեալը, միւս կողմից նա մեղանշած կըլինէր Ֆերչելլի առաջ, որ ի հարկէ չէր խմանում, թէ կին առնելով այդ գեղեցիկ, հեզաբարոյ և աւարատ աղջկան, իրեն համար կեանքի ընկեր է ընտրում մի կնոջ, որի անցեալը անարգուած է խայտառակութեամբ և յանցանքով: Ի՞նչ անել: Ասե՛լ նորան այդ բոլորը:

Ժողէֆինան համոզում է եղբօրը այդ չանել: Ֆերչելլն ու Միրիամը՝ ամուսնանալու համաձայնութիւնը ստանալով, անսահման երջանիկ էին: Հարսանիքից յետոյ իսկոյն ճանապարհորդութիւն են սկսում անել Եւրոպայում, մատուցուած լինելով առաջին ամիսը անց կացնել Փարիզում, որ, ինչպէս յայտնի է, բուն ամերիկացիների աչքում երկրային գրախան է համարվում:

Ովկիանոսը անցնելիս Միրիամը սաստիկ կերպով ենթարկվում է ծովային հիւանդութեան, ցնցումներ են լինում և վերջապէս ուժասպառ ընկնում է: Շոգենաւի բժիշկը կարողանում է հանգստացնել նորա լարուած ու զրգռուած ներգերը միայն սաստիկ ամփոռն խմեցնելով: Վերջ ի վերջոյ նորան զարհուրելի բան պատահեց. Միրիամը զրկուեցաւ տենելու ընդունակութիւնից: Բժիշկը ասում էր, թէ դա ժամանակաւոր կաթում է տեսողական ներզի, որ չափազանց ուժասպառութեան հետեանք է:

Ժամանելով Փարիզ Հիւանդին տեսնելու հրաւիրուեցան ամենալաւ մասնագէտները: Նոցանից մէկը հարկաւոր համարեց մի նոր օպերասիոն անել, որ խկապէս երկիւղալի չէր. պէտք էր զանգից հանել մի կտոր ոսկոր, որ նա նկատել էր և որ վատ էր ազդում նորա ներպային սիստեմի վերայ:

Կարող էք երեակայել, թէ որքան մեծ էր բժիշկ Բենարիի սարսափը, երբ նա լուր ստացաւ Ֆէրչելից այդ օպերասիոնի մասին: Օպերասիոնը կը լինի երկու շաբաթից յետոյ, խորհում էր բժիշկը: Եթէ նա հեռագիր տայ, որ օպերասիոնը մի քանի օրով յետաձգեն, այն ժամանակ էթէ առաջին շոգենաւով գնալու լինի, նա կը կարողանայ հասնել Պարիզ և խանգարել, որ չանեն օպերասիոնը, որովհետեւ նա թէև Միքիամին տեսողութիւնը կը վերադարձնէ, բայց կը վերադարձնէ և յիշողութիւնը և նա դարձեալ կը լինի Լուիզա Մաստարտ. կառափի ոսկորի ճնշող յոժը, որով բացատրում են նորա տեսողութիւնից զրկուելը, այդ կնոջ այդպիսի փոփոխութեան պատճառն էր. նա չի թողնիլ, որ կատարեն այդ օպերասիոնը, կը համոզի Ֆէրչելին, որ վտանգաւոր է կնոջ կեանքի համար: Եթէ նեղն ընկնի, այն ժամանակ նա ամեն բան կը պատմէ նորան, և այդ տւելի լաւ կը լինի, քան թէ թոյլ տալ, որ նա վերստին յիշէ իւր չարաբախտ անցեալը:

III.

Տարաբախտաբար շոգենաւը համարեա մի օր ուշացաւ, և բժիշկ Բենարին, գալով Ֆէրչելի բնակարանը, տեսաւ այնտեղ բժիշկներին, որոնք արդէն կատարել էին օպերասիոնը: Նոքա վճռել էին, որ եթէ յետաձգուի օպերասիոնը, անյաջող կ'անցնի և մինչև անգամ նեարդը կտրող է մեռնելը:

Երբ բժիշկ Բենարին ներս մտաւ, Միրիամը բոլորովին ուշաթափ պառկած էր:

— Պարոններ, — ասաց նա՝ դիմելով բժիշկներին, — թոյլ տուէք, որ ես մենակ մնամ սորա հետ:

Այս առաջարկութիւնն քիչ չզարմացրեց նոցա: Լըսուեցաւ. «Բայց, պարոն»... .

— Ես կամենում եմ մենակ մնալ իմ եղբորս աղջկայ հետ: Այժմ ժամանակ չէ բացատրելու, թէ ինչու եմ ուզում: Ես պահանջում եմ, որ ամենքը զուրս գնան այս սենեակից: Իւրաքանչիւր վայրկեանը թանգ է...

Բժիշկ Բենարին չթողեց, որ մինչև անգամ Ֆերչելը մնայ, չնայելով որ սա չափազանց խնդրում էր:

Նստելով անզգայ Միրիամի կողքին, բժիշկ Բենարին սկսեց հովահարել նորան, որպէս զի ուշքի բերէ: Վերջապէս Միրիամը աչքերը բաց արաւ և ափնապիշ նայեցաւ բժշկին: Աչքերի արտայայտութիւնից նկատելի էր, որ կուրութիւնը անցել էր: Դառն հառաչանք արձակելուց յետոյ նա վեր կացաւ և աչքերը բռնեղով բժշկին, ասաց.

— Ի՞նչ է, վերջացաւ ամեն բան:

— Այո, սիրելի զաւակս, վերջացաւ, — պատասխանեց բժիշկը:

— Եթէ այդպէս է, այն ժամանակ զուք կատարեալ անյաջողութիւն ունեցաք: Ես ամեն բան յիշում եմ: Երբէք իմ յիշողութիւնը այնպէս պարզ չէ եղել, որպէս այժմ: Իսկ զուք այնպիսի ինքնավստահութեամբ պնդում էիք, թէ յաջող կըլինի: Ի՞նչ կարիք կար ստելու:

Նորից խոր հառաչելով՝ նա գլուխը իջեցրեց բարձի վերայ, և բժիշկ Բենարին համոզուեցաւ, որ իւր ախտը ենթադրութիւնը կատարուած է: Նա կրկին Լուիզա Մասսարոն է: Դարձեալ նա սկսեց շարունակել իւր նախկին կեանքն այն վայրկեանից, որ մի քանի տարի ընդհատուած էր: Նա հարցնում էր այն օպերասիոնի մասին, որ

Բենարին արել էր հինգ տարի զորանից առաջ: Դորանից յետոյ եղածները նորա յիշողութիւնից ընկել էին, կարծես թէ այդ ժամանակը նա անց էր կացրել անընդհատ քնի մէջ: Ո՛ւր է Միրիամ Բենարին: Ի՞նչ եղաւ այդ հրաշալի արարածը:

— Սյո՛, ձեզ չյաջողուեցաւ, չյաջեղուեցաւ, — կըրկնում էր նա: Յետոյ նա շարունակում էր աւելի և աւելի յուզուած ձայնով. — Ինչո՞ւ երեկ երեկոյեան դուք խառնեցիք: Ինչո՞ւ ճանապարհս կորեցիք, ինչո՞ւ չլուրդիք, որ ես մեռնեմ, մինչ նա այնքան հեշտ էր և հասարակ... Եւ ես որքան յիմար էի, որ ձեր խօսքերին նշանակութիւն տուի, լսեցի ձեր ասածներին... Սակայն այժմ էլ ուշ չէ... Թողէք ինձ... Սյս բոպէիս ես կըհազնուեմ և կըգնամ: Ի՞նչ տեղ է ձեր քոյրը: Ո՛ւր է նա: Բայց ոչ, այլ ևս դուք ինձ չէք պահիլ այստեղ... Շորերս, շորերս տուէք: Ես կըգնամ, ջուրը կընետեմ ինձ և չեմ թողնիլ, որ ինձ կալանաւորեն և բանտ նստեցնեն:

— Ո՛հ, Միրիամ, Միրիամ, — շնչեց բժիշկը, որի ձայնում նշմարվում էր յուսահատութիւն: — Ի սէր Աստուծոյ հանգիստ եղէք: Դուք կըհիւանդանաք աւելի ևս... այդ յուզմունքը կարող է խլել ձեր ամբողջ կեանքը չանգստացէք և թողէք, որ ես մտածեմ:

— Միրիամ: Սյո՛ ձի է Միրիամ: Միթէ ես ձեզ չասացի՞ իմ անունը: Չէ՞ որ ինձ կոչում են Լուիզա Մասսարո: Ինչո՞ւ դուք ինձ ուրիշ անունով էք կանչում: Ինչ է, մի՞թէ ես խելաղարների տան մէջ եմ: Ո՛հ, զըլուխս, զըլուխս, — բայցապանչեց նա և ձեռներով բռնեց զըլուխը: — Ի՞նչ արիք դուք նորա հետ: Ո՛հ, ինչպէս նա ցաւում է, որպիսի տանջանք:

Դուռը բացուեցաւ և շեմքում Փէրչելլին երևեցաւ:

— Ես չկարողացայ այլ ևս համբերել ես լսեցի նորա աղաղակը... Ես չեմ կարող թողնել նորան:

Տեսնելով Ֆէրչիլդին, հիւանդը դարձեալ վեր բարձրացաւ և, ականերէն է, ճանաչեց նորան, որ կարելի չէր բժշկի կարծիքով, որովհետեւ մինչև այդ ժամանակ նա տեղեկութիւն չունէր, թէ Լուիզան ծանօթ է եղել Ֆէրչիլդի հետ:

— Սոյդ ինչպէս... Դո՛ւք էլ այստեղ էք... չենրի Ֆէրչիլդն այստեղ է... Աստուած իմ,—բացազանչեց Լուիզան:

— Այո, իմ սիրելի Միրիամ,—պատասխանեց նա և քնքոյշ կերպով բռնեց նորա ձեռը:

— Լուզիան խիստ յետ քաշեց ձեռը և շարունակեց:

— Միրիամ... Կրկին Միրիամ: Ի՞նչ է, ես գտերի մէջ եմ ընկել, թէ ինքս եմ խելագարուել: Կամ թէ դուք ինձ հետ խաղում էք: Դուք ի՞նչ էք անում այս տեղ, չենրի Ֆէրչիլդ... Ա՛խ, այս դղուելի ծերունին իւր միամիտ տեսքով և մարդասիրութեամբ: Նա այս բոլորը շինեց, որ ինձ կրկին բանտ տանեն: Դէ՛հ, ուղարկեցէք ոստիկանական ագենտներ յետևից, բայց երգվում եմ, որ նոքա կենդանի ինձ չեն հասցնիլ մինչև բանտը... Իսկ ձեր բարեկամ Բիչամը մեռաւ: Իսկ ես միայն նոր էի կամենում հաշիւներս վերջացնել նորա հետ:

Ֆէրչիլդը զարմանալով լսում էր այս սիրազան:

— Բայց մի՞թէ դուք ճանաչում էք Բոժէր Բիչամին:

— Ձէ՛, այդ արդէն չափազանց է,—բացազանչեց նա:

— Լուիզա Մասսարտը ճանաչում է Բիչամին:

— Լուիզա Մասսարտ,— շշնջեց Ֆէրչիլդը աւելի ևս զարմացած:— Ի՞նչ կապ կայ ձեր և այդ մարդասպանի մէջ... Բժիշկ, նա զառանցանքի մէջ է: Բայց ի՞նչ տեղեց նա զիտէ այդ բոլոր անունները:

— Ես զառանցանքի մէջ չեմ,— իսկոյն վրայ բերեց նա:— Ի՞նչ է, չէ՞ք ճանաչում ինձ: Սյս երկու տարում ես այնքան չեմ փոխուել...

— Ես չեմ կարողանում հասկանալ ձեզ, իմ սիրելի Միրիամ, իմ կինս,— յուսահատ բացականչեց Ֆէրչիլդը:

—Ե՛ս, Միրիամ... Ձեր կի՞ներ... Հա՛, Հա՛, Հա՛... Բա-
ւական է կատակ անէ՞ք, միտեր Ֆէրչիլիւ:

—Նա խելքը կորցրել է: Բայց ասացէ՞ք, բժիշկ, ի՞նչ
տեղից նա զիտէ այդ անունները:

—Այժմ ոչ տեղն է, ոչ էլ ժամանակը, —պատաս-
խանեց բժիշկ Բենարին:

Հիւանդը նորից հեզհօրէն ծիծաղեց ու ուշքից գնաց:

—Նա մեռաւ, նա մեռաւ, —շշնջեց Ֆէրչիլիւր, ծունկ
չոքելով նորա առաջ:

—Ո՛չ, միայն ուշադնաց է եղել, —նկատեց բժիշկը:—
Սակայն այդ կրիզիսի հետևանքը շատ տխրալի կարող է
լինել, ի նկատ առնելով նորա այժմեան դրութիւնը:

Գիտակցութիւնը էլ չվերադարձաւ: Մի քանի օրից
Փարիզի Galignani's Messenger թերթում զետեղուած էր
յայտարարութիւն չենրի Ֆէրչիլիւի կողակցի՝ Ազիրոնդցի
Միրիամ Բենարիի մահուան մասին:

Ա. Դ.



I.

ՎԵՐՋՆ Է ԴՈՎԵԼԻ.

Լայիր, թէ խնդութեան մէջտեղն ենք այսօր.
Կուլանք թէ կըինդանք, վերջն է գովելի,
Քարոտ արտերի մէջ ձգել ենք արօր,
Տրտմենք թէ կըցնծանք՝ վերջն է գովելի:

Վեց պետութեան ձեռին է այժմ մեր դերը,
Տեսնենք, ի՞նչպէս դուրս կըբերեն պատկերը.
Երկբերանի սուր են հայոց գործերը,
Հրճուենք թէ կ'ողբանք՝ վերջն է գովելի:

Ձիւանս լսում եմ զանազան կարծիք,
Որը լաւ, որը վատ, չարիք ու բարիք.
Իբրեւ ազգ ունեցող ազատ հայրենիք,
Մեռնենք թէ կըմնանք՝ վերջն է գովելի:

1895 թ. 12 փետր.

ԹԻՓԼԻՍ.

II.

ՎԱՌ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆ.

Հայաստանը յղի է, ծնածը արու է, աղջիկ չէ,
հաղար հայր ու մայր ունի, մանուկը խեղճ ու որբիկ չէ.
հասակով նոճի է հաստատ, տղեղ, զաճաճ ու կարճիկ չէ,
հայեր, հաստատ մնացէ՛ք, յոյսերդ ճիշդ է, խաբուսիկ չէ.
Ասածս ուղղութիւն է, հասկացիր, ով մարդ, կրիտիկ չէ,
Մեր աղղը դեսպանաց մօտը թեթեւ, անմիտ խաղալիկ չէ:

Հայաստանի ծնած որդին հարազատ հայկայ զաւակն է,
Բժիշկը մեր Ռուսաց Կայսրն է—պահպան և հրեշտակն է.
Վեհափառ Անգլիայի Թագուհին էլ—մամը, դայակն է,
հեռուտես Գերմանիան—կնքահայրը, լաւ օրինակն է.
Հայաստանը յղի է, ծնածը արու է, աղջիկ չէ,
հարազատ հայր ու մայր ունի, մանուկը խեղճ ու որբիկ չէ:

Մանուկի վարժարանը—վարժապետը քաջ Ֆրանսիա է,
Նորան վկայական տուողը, կարծում, Իտալիա է,
հոգաբարձուն Պօլիս է, այլակրօն Խալիֆա է,
Երեխայի մօրաբոյրը—հօր պաշտպանը Վիէննա է.
Հայաստանը յղի է, ծնածը արու է, աղջիկ չէ,
հարազատ հայր ու մայր ունի, մանուկը խեղճ ու որբիկ չէ:

Ջիւսն, աշխարհ չեկած մանկան ձեռք սուր ու հրացան կայ,
 Արեւելքէն, արեւմուտքէն, հիւսիսէն մեծ հրաման կայ.
 Ծնածը ուշ կրծնի, առիւծ է, միջոց ու պայման կայ,
 Լըիւ հօթը ամիս, երկու շաբաթ և տասը վայրկեան կայ.
 Հայաստանը յղի է, ծնածը արու է, աղջիկ չէ,
 Հարազատ հայր ու մայր ունի, մանուկը խեղճ ու որբիկ չէ:

ԱՇՈՒՂ, ՋԻԻԱՆ.

1890 թ. 15 մայիսի,

Ալեքսանդրօպօլ.



ԽՈՐՀՐԴԱԻՈՐ ԶԱՐԴ

Այնպէս ձմեռ, Մեսսինեան ծառուղու շքեղ պալատներից մէկում, տրուեցաւ տնային ներկայացում և երեկոյթ, իսկ յետոյ լինելու էր փառաւոր պարահանդէս: Այդ տօնախմբութիւնը սարքել էր սեղանաւոր Բօլժերը, որ ցոյց տայ ուրախ փարիզեցիներին իւր մեծ և նոր նորոգած զահլիճը, որի պատերը պատած էին բաց-ոսկէգոյն կերպասով: Ներկայացմանը մասնակցում էին «Comédi française»-ի գերասանները, իսկ երեկոյթին կօնսերվատօրիայի երգեցիկ խումբը և ամենալաւ երգիչներ ու երգչուհիներ:

Բացի այդ բոլորից, գեղեցիկ կերպասեայ աֆիշի վերայ ոսկեայ տառերով տպուած էր՝ Թէ երեկոյթին վերջ կը տայ արտասահմանում յայտնի մի զուարճախօս, որ Փարիզի Հասարակութեան գեռ յայտնի չէ: Տանտէրը իւր երեկոյթից երկու օր առաջ լսել է նորա պատմութիւնները Բրիւսսելում, մի դիւանագէտ անձի խնջոյքի ժամանակ, որ յայտնի էր իւր շուպլ կեանքով, և Բօլժերը իւր հիւրերին բաւականութիւն պատճառելու համար, հրաւիրել էր Փարիզ իւր երեկոյթի համար, այդ տաղանտաւոր զուարճախօսին, որին ինքը շատ հաւանել էր:

—Դուք երևակայել չէք կարող, թէ դա ի՞նչ բան է,—կրկնում էր նա համարեա ամեն մի հիւրի առաջ.— նա մի առանձին տեսակ աշխոյժ ունի, որ խօսքերով անգամ որոշելը դժուար է... Դիտոյէ՛ք, որ նա ոչ թէ միայն զուարճախօս է և երգիչ, այլ և հեղինակ է այն բոլոր բաների, ի՞նչ որ ինքը կարդում է. նորա ընկերատուարի խօսքերը, նոյնպէս և երաժշտութիւնը, սեպհական շարադրութիւններն են... Ա՛խ, ի՞նչ հիանալի է այդ... թէև դուք ինքներդ կրտսնէք և կըլսէք:

Ուղիղն ասած, բոլոր «շարադրութիւնները» պ. Փօքսի (ա՛ճիշտմ այդպէս էր տպուած նորա ազգանունը) ճնչին էին և այնքան ծիծաղաշարժ չէին. բայց պէտք է խոստովանել, որ այդ տարօրինակ պատմութիւնները, ներկայացումները և երգերը այնքան հաղուադիւտ և ուրախ էին, որ մինչև անգամ ամենանշանաւոր կոմիկները հետը մըցել չէին կարողանալ: Նորա կնիքներով ծածկուած երեսը, մարած հայեացքը, քիթը, որ նման էր հարցական նշանի, սպիտակած, երկար, դգգուած մաղերը, բարակ ոտքերը և նորան յատուկ երեսի ծրմռելը, երբ նա շրթունքները երկարացնում էր, առանց այն էլ ահագին բերանը մեծանում էր, շատ նմոն էր դառնում շիմպանզէի և այնպէս մի առանձին տեսակ ծիծաղաշարժ էր լինում, որ միայն թէ երևում էր բեմի վերայ և մինչև անգամ առանց մի խօսք արտասանելու, արդէն բոլոր ժողովուրդը ծիծաղից թուլանում էր: Ձեւ՝ կարծում, որ բացի նորանից մէկը կարողանար առանց իրեն նեղութիւն տալու, առանց շեշտերի ու կոտորուելու և մինչև անգամ ամենն ին ծիծաղացնելու ցանկութիւն չունենալով, այդ աստիճան ուրախացնել հասարակութեան, միայն իւր երևելով: Աւելացրէ՛ք այդ ամենի վերայ նորա անսովոր խրոխտ ձայնը, որ մի տարօրինակ, միայն նորան յատուկ բաղմատեսակ խորխրոցներով, անցնում էր ամենացածր, հաստ ձայնանիշ-

ներից մինչև ամենաբարձրն ու քնքոյշը և տխուրից մինչև անհոգն ու ուրախը և այնպէս արագութեամբ էր այդ անուամբ որ մինչև անգամ ոչ մի զիանական երաժիշտ չէր կարողանալ այդ հիանալի ու անսպասելի դարձուածները ձայնագրել:

Նա իրեն շատ լաւ էր պահում և լաւ էլ հագնուած էր. նորա Ֆրակը շատ զեղեցիկ էր վրէն նստած, սպիտակ փողակապը, շապիկը, նոյնպէս և ժիլետը, ձիւնից աւելի սպիտակ էին. սև վարտիկը, որի կողքերը զրսից մետաքսեայ շերտով էին կարուած, առանց ծալքերի էին. սև մետաքսեայ գուլպաները, բարակ կաշուէ, ցածր կրունկներով կիսակօշիկները և վերջապէս սպիտակ ձեռնոցները, որոնք զրեւ էր սև քողով ծածկուած, ծալուող մետաքսեայ գլխարկի մօտ, լրացնում էին նորա զգեստը, որ չէր մերժիլ հագնելու ամենանուրբ արխատօրատը: Միայն մի բան այդ հիանալի զգեստի հետ չէր յարմարվում, այն է՝ մետաքսեայ սև շերտից կախուած ահագին մի արծաթեայ վարդ, որ ներկայացնում էր մի անշնորհք զլուխ, բոժոժներով զարդարուած, յիմարի թասակով այդ արծաթեայ տիկինիկի մարմինը, ինչպէս երևում էր, հին ձեռագործ էր. նորա պարանոցի և ուսերի վերայ կար մի մեծ օձիք, նորա չուրջը շինուած էին փոքրիկ զանգակներ, որոնք այդ տարօրինակ գերասանի ամեն մի շարժումի ժամանակ երաժշտական ձայներ էին հանում. նորա մարմնի վերայ շինած էր մի սողափեայ կոթ, որ ջահերի և ճրագների լոյսից ծիածանի ամեն գոյներն էր ընդունում: Ի՞նչ էր նշանակում այդ տարօրինակ զարդը. արդեօք դա մի կախարդական նշան էր, որ այդ գերասանը զործ էր ածում «բազլի համար», թէ՞ մի որ և է պալատական ծաղրածուի առանձին զարդ էր, որ զտեւ և գնեւ էր հնավաճառի կրպակից:

Մինչև այդ հարցերը ես ինձ տալիս էի, Փօքսը արդէն բարձրանում էր սանդուղքների աստիճաններից դէպի բեմը:

— Սև Պանտերա, — ասաց նա, որից ժողովուրդը սկսեց ծիծաղել:

«Սև Պանտերան՝ ոչ ոտանաւորով և ոչ արձակ գրուած էր, այլ երկու տեսակն էլ. ոչ մենախօսութիւն էր, ոչ տեսարան և ոչ հրգ, այլ խառն. այդ խալտաճամուկ մենախօսութեան մէջ կային ամեն տեսակ կտորներ, նոյնպէս և երաժշտական, որովհետեւ երբեմն Փօքսը անսպասելի կերպով նստում էր դաշնամուրի առաջ և իւր չոր մատներով նուազում էր այն եղանակները, որ երգում էր և կամ տխուր ու ուրախ դայլայլիկներով երգում էր իւր ծիծաղաշարժ, հետաքրքիր պատմութիւնը. նա կամ բարձր ոտանաւորով ներկայացնում էր գազանի կատաղութիւնը, որ յանկարծակի ընկել էր որսորդների ձեռքը, կամ տարօրինակ կերպով երգում էր աչքին հաճելի բնութեան գեղեցկութիւնները, ետևա կղզու վերայ և յետոյ լարելով ժողովրդի ուշադրութիւնը, որ նոքա տրամադիր լինեն դիտելու և զգայուն դառնալու, նա յանկարծ փոխում էր եղանակը և սկսում էր ծիծաղելի կերպով պատմել, թէ ինչպէս նորա գօտին կտրուել է, որ նա իբրև թէ ձգել էր Պանտերայի թաթի մէջ և թէ ինչպէս «սարսափելի գազանը» շատ քիչ կշտանալով այդ գօտուց, այնու ամենայնիւ կարողացել է քաղցրաւենի խել նորա փեշն տակից: Տիկիւնները սաստիկ ծիծաղում էին, մի քանիսն էլ շուտ փախան այդ շքեղ բնակարանի միւս սենեակները, իսկ տղամարդիկ զգում էին, որ իրենց գօտիների հետ էլ նոյնը կըլինի, ինչպէս այդ զուարճախօսինք. ծառաները, ծիծաղեց թուլանալով, հաւաքուել էին դրսի դռների մէջ, իսկ նոցանից մի քանիսը, մտաւանալով քաղաքավարութիւնը, ասում էին՝ «ախ, դու

բարեկենդանի ծաղրածու, ի՞նչպէս էլ այդ բաները հնարում է»:

Ծափահարութեան ձայնից ոչ թէ դողում էին միայն պատուհանների ապակիները, ջահերը, այլև, կարծես, այդ դահլիճի պատերը: Բայց Փօքսը ոչ մի ուշադրութիւն չէր դարձնում այդ աղմկալից ծափահարութեան վերայ և իւր մեծ յաջողութիւնը ոչ մի տպաւորութիւն չէր թողնում նորա վերայ. շատ տխուր, իւր դերը բարեխղճութեամբ կատարելով, նա զնաց այն սենեակը, որ նշանակուած էր մասնակցող ղերասանների հանգստանալու համար. ոչ ոքի հետ չիօսելով, հրաժարուելով առաջարկած հիւրասիրութիւնից, կռանալով անշարժ նստեց խորը բաղկաթոռի մէջ. միայն ձեռքերը մեքենայաբար խաղում էին արծաթեայ այն զարդի հետ, որ կախուած էր սև, մետաքսեայ շերիտից:

Նորա ներկայացման երկրորդ մասը աւելի մեծ յաջողութիւն ունէր, քան թէ առաջինը. այս անգամ նա կատարում էր ցիրկի գործողութիւններ, ներկայացնելով ձիու, կլօունի, ձիաւորի, յամառ աւանակի, կրթուած խոզի և մինչև անգամ՝ ցիրկ պահողի կնոջը, որ տոմսավաճառանոցում կապտում և շնչասպառ էր լինում, ամուր քաշած կօրսէտից, բայց մի և նոյն ժամանակ չէր մոռանում ամեն բոպէ թափ տալ գլուխը, որ աւելի փայլ տայ այն կեղծ գոհարներով զնգասեղին, որ բռնել էին նորա գլխի վերայի մի փունջ ջայլամի փետուրները: Դահլիճը լցուած էր համարեա ծիծաղի ձայներով. նոքա, որոնք զեռ ոյժ ունէին, սաստիկ ծափահարում էին. երկար ժամանակ չէր դադարում այդ ծափահարութիւնը, երկար ժամանակ հասարակութիւնը նորան դուրս էր կանչում, չգիտենալով, որ նա արդէն շտապել է գալ. տանտէրը մատուցարանի վերայ բաժակով խմիչքը ձեռքում բռնած, զուր որոնում էր նորան, որ առաջարկէ զոնէ մի քիչ բերանը թրջել:

Ես իսկոյն ներկայացումից յետոյ պատրաստուեցի գնալու և դռան մէջ, անսպասելի կերպով, պատահեցի այդ տարօրինակ կօմիկին, որ նոյնպէս տուն էր գնում: Ես միայն նայեցի նորա վերայ և զնայել իմ ճանապարհովս, Առսաման զբօսարանի միջով, ծծեկով զիշերային թարմ օդը, որ ինձ շատ զուր էր գալիս այն դահլիճի խեղդող օդից յետոյ: Յանկարծ ետեւիցս լսեցի քայլերի ձայն և լուցկիի լուսով, որով նա սիգարայ էր վառում, ես ճանաչեցի Փօքսին:

— Մի հանգցնէք, — ասացի ես նորան:

Իմ ձեռքումն էլ կար սիգարայ, որ պատրաստուել էի ծխելու:

Ես մօտեցայ նորան, բարեկեցի, ծանօթացայ և յայտնելով, որ ես նոյնպէս Բօդօթերի երեկոյթին ներկայ էի, աւելացրի.

— Դուք երևի արդէն կշտացել էք այն զովեստներից, որ անում են ձեր տաղանտի համար, բայց թէև ձեզ ձանձրալի լինի, ես նոյնպէս կ'աւելացնեմ իմ գովասանքս այն ազմկալից ծափահարութեան, որին այսօր դուք արժանացաք:

Փօքսը ինձ պատասխանեց միայն լուռ գլուխ տալով:

— Դուք երևի գեռ մի քանի ժամանակ կրմնաք Փարիզում և ներկայացումներ կըսումք, — հարցրի ես:

— Ոչ, ես հէնց վաղը գնում եմ առաւօտուայ գրնացքով:

— Ինչո՞ւ այդպէս շուտ... կամ երևի դուք մի տեղ շտապ հրաւիրուած է՞ք ներկայացում տալու:

— Ոչ, ես գնում եմ մեռած ազգականս մարմինը Անտվերպենից այստեղ բերելու:

Ես կարծեցի, թէ նա ուզում է ինձ հետ հանաք անել և իւր սովորութեամբ տխուր բանից է սկսել, որ քիչ-քիչ ծիծաղաշարժին հասնի:

Բայց ես տեսայ, որ սխալվում եմ. խեղճը բոլորովին հանաք տնեղու ժամանակ չունէր:

— Դուք տեսաք, թէ ես ինչպէս ծիծաղեցրի այսօր հասարակութեանը, — ասաց նա տխուր ձայնով, — բայց եթէ զիտենաք, որչափ արտասուք եմ թափել վերջին ժամանակներս:

Ի հարկէ, ինձ շատ շփոթեց այդ ասելու ձևը, որից երևում էր, որ անսխալ թար մի վեշտ ունի:

— Ներեցէ՛ք, եթէ ես իմ խօսքերովս զարթեցրի ձեր մէջ ծանր յիշողութիւն, — ասացի ես:

Փօքսը տխուր զլուխը քաշ արեց:

— Կան այնպիսի վշտեր, որոնք մի բոպէ անգամ չեն քնում, — պատասխանեց նա, — ուրեմն նոցա զարթեցնել չէ կարելի. դուք հեղինակ էք, շատ էք կարդացել, տեսել ու լսել, ուրեմն թոյլ տուէ՛ք պատմեմ ձեզ իմ պատմութիւնս և այն ժամանակ դուք ինձ ասացէ՛ք, թէ կարո՞ղ է, զոնէ մի հեղինակ ստեղծել այդպիսի մի տանջող ցաւ, որպիսին ես եմ տարել. թէև հիմայ էլ եմ համբերում, և ճակատագիրը երբ և իցէ խոցել է իւր երկաթեայ ճանկերով մարդուս սիրտը այնպէս խորը, ինչպէս նա ինձ արեց:

Յետոյ դէն ձգելով իւր սիգարան, սկսեց պատմել:

— Փօքս իմ կեղծ անունս է. ես մի մանրավաճառի միակ որդի եմ և իսկական ազգանունս է Ժիրողէն: Հայրս հոգս էր քաշում իմ կրթութեան մասին և ես, դեռ երիտասարդ, նախարարութեան մէջ ծառայութեան մտայ. չորս տարուց յետոյ ես ծանօթացայ մի խեղճ, որը օրիորդի հետ, սիրահարուեցի նորա վերայ և ամուսնացայ. իսկ տասը ամսից յետոյ մենք մի աղջիկ ունեցանք. նա իւր մօր նման գեղեցիկ էր, զարմանալի խելօք և նոյնպէս հիմնալի բնութիւն ունէր:

«Բացի իմ ռոճիկից մենք ուրիշ ապրուստի միջոց չունէինք. այդ պատճառով ապրում էինք համեստ, աւելի ուղիղն ասած, աղքատ, բայց ընտանեկան համաձայնութիւնից և միմեանց յարգելուց, այդ զրկողութիւնները շատ նկատելի չէին և մենք իսկապէս բաղդաւոր էինք, մինչև որ մեզ հանդիպեց ձախորդութիւն: — Կինս յանկարծ հիւանդացաւ և ստիպուեցաւ անկողին մտնել. նորա կուրծքն էր ցաւում... Ուղիղ է, որ դեռ իմ ամուսնանալուցս առաջ, նորա արհեստաւոր աղնիւ հօրեղբայրը, որ պահում էր նորան, ինձ զգուշացրեց, թէ նորա կուրծքը թոյլ է, բայց գիտէք, որ երբ մարդ երիտասարդ և սիրահարուած է լինում, այդ տեսակ նախազգուշութիւնների վերայ քիչ է ուշադրութիւն դարձնում. ինձ մանաւանդ ներելի էր, որովհետև թոքախտի և առհասարակ կրծքային հիւանդութիւնների մասին ես շատ մութ հասկացողութիւն ունէի և մինչև անգամ չէի երեւակայում, որ այդպիսի հիւանդութիւնները ցեղական են լինում: Կնոջս բժշկող բժիշկը յանկարծ յայտնեց ինձ, որ նորան անհրաժեշտ է ուրիշ, աւելի տաք կլիմայ և որ միայն այդ դեռ կարող է փրկել նորան. նորա ասածը ինձ յիշեցրեց մի քանի բժշկների, որոնք խորհուրդ են տալիս լաւ գինի խմել, զօրեղ արգանակ ու մի լաւ կտոր միս ուտել, այնպիսի հիւանդներին, որոնք հաց անգամ զնելու կոպէկ չունեն: Խորհուրդ տալը հեշտ է, իսկ կատարելը ինչպէս. ռոտեղից ես միջոց զանէի տանելու իմ թանգազին հիւանդիս հեռու երկիր, որ տեղ աւելի տաք էր. ես տխրութիւնիցս ձեռքերս կոտրատում էի այդ հարցը ինձ տալով, երբ, անսպասելի կերպով, ինձ մօտ եկաւ իմ մէկ ծանօթս, որ երգում էր կօմիկական օպերայում:

— Ի՛նչպէս յարմար եղաւ, — ասաց նա. — երեկ երեկոյանն ես պատահեցի սրճարանում մի գրամատիկական

գործակատարի, որին յանձնուած էր դերասանական խումբ կազմել, հոլլանդական թատրոնի համար. դու վատ երաժիշտ չես, ճաշակով ևրգում ես, ռոճիկը մեծ է և Եաւայի կլեման հիւանալի, բժշկարար ազդեցութիւն է անում կրծքի յաւ ունեցողների վերայ. դու այնտեղ երկու տարուայ ընթացքում այնքան կըստանաս, որքան որ Փարիզում քսան տարուայ մէջ հազիւ թէ վաստակես. ես քո տեղը լինէի, առանց մի բոպէ տատանուելու կը թողնէի ծառայութիւնս և կ'երթայի հարաւ, իսկական հարաւը:

«Երեք շաբաթից յետոյ մենք արդէն Սատ-Խնդիի ճանապարհի վերայ էինք. հազիւ նստել էինք շոգենաւ, կինս արդէն իրեն անհամեմատ լաւ էր զգում. բոլոր իմ ընկերներս զգուում, համբուրում ու երես էին տալիս իմ վափլիկ, կարմրաթշիկ աղջկանս, որ ամենի սիրելին էր դարձել. ես այն ժամանակ միանգամայն բաղդաւոր էի և չգիտէի, ինչպէս շնորհակալ լինել ճակատագրիցս այդ բաղդի համար:

«Ամբողջ տարի ու կէս մենք ներկայացումներ էինք տալիս Մալայեան կղզիներում և Աւստրալիայում. այդ ժամանակամիջոցին ես արդէն հաւաքել էի երեսուն հազար Ֆրանկ և որովհետեւ կինս ու աղջիկս բոլորովին առողջ էին երևում, մենք վաճաքինք վերադառնալ Գաղղիա, որտեղ ես թողել էի իմ եօթանասուն տարեկան զգլուած և բոլորովին մենակ հօրս և այնպէս յարմար դէպք պատահեց, որ ամենաջնջին դնով մենք գնացինք այն տնտեսատանաւոր շոգենաւով, որ ուղարկվում էր Գաղղիա սուրճի բեռներով: Այդ շոգենաւի նաւապետին յանկարծ անբախտութիւն պատահեց՝ հէնց ճանապարհ ընկնելուց առաջ, նաւաստիները հրաժարուեցան նորա մօտ ծառայել, այնպէս որ նա ստիպուեցաւ շուտով հաւաքել ուրիշներին, ում որ պատահեց. այդ նոր նաւաստիները շատ ընդու-

նակ և ծովային գործերում փորձուած դուրս եկան, բայց չունէին ամենահասարակ հասկացողութիւն բարոյականութեան և ազնուութեան մասին. բացի այդ, հարբելու սովորութիւնը մեռցրել էր նոցա մէջ մարդկային զգացմունքների վերջին մնացորդները... Պէտք է ձեզ նոյնպէս ասել, որ բացի ինձանից և իմ ընտանիքիցս այդ շողենաւի վերայ ուրիշ ճանապարհորդներ չկային: Մենք նաւեցինք մի հիւանալի մայիսուան առաւօտ և ամենայաջող պայմաններով հասանք շուտով Ս.դդեն, որտեղ մնացինք շատ քիչ այդ քաղաքում եւ իմացայ իմ ընկերոջս նամակից, որ իմ հայրս հանդարտ հանգել է, զուր ինձ կանչելով իւր կեանքի վերջին բուպէներում. այդ ցաւը կարծես յառաջաբան էր այն բոլոր անբախտութիւններին, որոնք ինձ սպասում էին ապագայում... Իեռ մի քանի օր չէր անցել, երբ կինս նորից զգաց կրծքումը սաստիկ ցաւ, այն ինչ եւ կարծում էի, թէ նորա հիւանդութիւնը անդառնալի կերպով անհետացաւ. ամեն բուպէ խեղճին տանջում էր չոր հազը, նա տենդային դրութեան մէջ էր. այտերի վերայ երբեմն առաջ էին գալիս բաց-վարդագոյն բծեր, օրէ ցօր նա նիհարում էր: Ի՛նչ հարկաւոր է ձեզ մանրամասն նկարագրել այն տանջանքով լի և երկար օրերը, որ մենք անցնում էինք նորա հիւանդութեան ժամանակ մեր նեղ և ճնշող օթեակում: Կինս քանի գնում վատանում էր. եւ առանց անկողին մտնելու, անց էի կացնում անքուն գիշերներ, նստելով նորա մօտ: Մէկ գիշեր, ինչպէս պատահեց, սաստիկ յոգնելուց, գլուխս դրի նորա բարձին և քնեցի, բռնելով նորա ձեռքը իմիս մէջ. չգիտեմ եւ երկամբ էի քնել միայն ձեռքիս մէջ մի սառը բանի շոշափումը ինձ զարթեցրեց... դուրս եկաւ, որ իմ սիրելի Պաննիս մեռել է իմ քնած ժամանակ և նորա անշունչ դիակը արդէն սառել էր... Եւ նայում էի նորա վերայ ինչպէս խելագար... առանց արտասուքի...

կարծես չէի զգում այն, ինչ որ պատահել էր... Բայց այդ երկար չտեւեց. թէն ես ցաւից ճշշուած էի, բայց մտաբերեցի, որ ես աղջիկ ունեմ, որի մասին պէտք է հոգս քաշել. նորան առ ժամանակ տեղաւորեցի նաւապետի օթեակում: Աղջիկս առանց մօրն ու առանց ինձ ձանձրանում էր, այնպէս որ ես ստիպուած էի մենակ թողնել թանկագին հանգուցեալին. բայց երեկոյեան դէմ ես դարձեալ հնար գտայ վազել նորա մօտ. երկար ես նայում էի նորա գունատ, կարծես մոմից շինած երեսին. յանկարծ ինձ մատմուռնքից հանեց երկու նաւաստիների երեւելը, որոնցից մէկը բերել էր մի մեծ պարկ և ծանր ուսմբ. միտքս շփոթուեց, ես ուշաթափ եղայ և երբ զարթեցի, հանգուցեալի մարմինը արդէն դատարկ էր. ես վազեցի պատշգամբ. դիակը պատրաստում էին արդէն ծովը ձգելու. ես իմ մնացած բոլոր ոյժերս հաւաքեցի և խլեցի նաւաստիների ձեռքից թանկագին դիակը. բայց այդ ժամանակ եկաւ նաւապետը:

—Նաւապետները այսպիսի դէպքերում կատարում են միայն այն, ինչ որ օրէնքը պահանջում է, — ասաց նա, — և որչափ այդ ցաւալի է, այնու ամենայնիւ պէտք է հպատակել դառն անհրաժեշտութեանը:

Յանկարծ նա ձեռքը խփեց ճակատին:

—Իմ մէջ ծագեց մի լաւ միտք, — ասաց նա, — շուքենաւի վերայ հանգուցեալներին թոյլ է տրվում պահելու միայն այն դէպքում, եթէ նոցա զմոտեն, իսկ զմոտում են օղիով... Իմ նաւաստիներս կարծեմ մի ամբողջ տակառ օղի ունեն և եթէ նոքա ուղինան ձեզ տալ, այն ժամանակ զործը վերջացած է...

Նա գնաց, բայց մի քանի րոպէից, յետոյ վերադարձաւ տիտուր դէմքով:

—Նոքա չեն համաձայնում:

Ես խեղճն վազեցի այն տեղը, որտեղ նաւաստիները հաւաքուած էին:

— Իմ ընկերներ, — կանչեցի ես, — ինձ հնար տուէք թողնելու մօտս իմ թանկագին հանգուցեալս... տուէք օղին, ինչքան նորա համար կամենաք, ես կրվճարեմ:

Անիրաւները լուռ էին. այն ժամանակ ես, բոլորովին շփոթուած և մոռանալով, թէ ինչ եմ անում, հանեցի դրպանիցս փողիս քսակը և բանկային տոմսերս ու ձգեցի նոցա առաջ:

— Ահա՛ ձեզ օղիի վարձը, — ասացի ես, — յուսով եմ, որ դուք երազումն էլ չէիք տեսնի այդքան փող:

— Հաւաքի՛ր քո թղթերը, — պատասխանեց ինձ նաւաստիներից մէկը, — մենք դեռ մի ամիս ճանապարհ ունենք զնալու, իսկ մեզ համար առանց օղիի մնալը մի և նոյն է, թէ մնալ առանց ծովային պաքսիմոթների:

Այդ վճիռը ինձ յուսահատեցրեց և ես համարեալ ուշաթափ ընկայ պատշգամբի վերայ. սարսափելի աղաղակը, մինչև անգամ ալիքների ձայնը կտրելով, որոնք խփում էին շոգենաւի պատերին, ինձ զարթեցրեց. այդ իմ որբացած աղջկաս ձայնն էր. նա տեսել էր, ինչպէս պարկը մօր դիակով ձգել էին ծովը և հիմայ, կարծես, աղաչում էր անխիղճ ծովին վերադարձնել մօրը, ձեռքերը երկարացնելով դէպի այն կողմը, որտեղ ալիքների մէջ պարկը անհետացել էր մեզ համար թանկագին ոսկորներով:

— Դուք երեւի կըմտածէք, թէ դարանով իմ անբախառթիւներս վերջացան, — ասաց նա նորից բոպէական լուռութիւնից յետոյ, — ոչ, համարեալ թէ ամենավտար առաջն էր: Այդպէս անցաւ ամբողջ ամիս ու կէս. բոլոր իմ կեանքս, եթէ կարելի է այդ կեանք անուանել, անցաւ շոգենաւի ծայրումը, որտեղ ես ամբողջ ժամերով անշարժ նստում էի, բռնելով աղջկանս, իմ միակ գանձիս ծնկներին վերայ: Նա խեղճը մօր մահից յետոյ սաստիկ փոխուել, նիհարել էր. նորա երբեմն փափիկ այտերի

կարմրութիւնը բոլորովին անհետացել էր. նորա ուրախ, թռչնիկի նման խօսակցութիւնը կտրուել էր: Նա միայն բոլոր ժամանակ նայում էր ծովային հեռաւորութեան վերայ և դառն կերպով հառաչում էր. իսկ երբ ես հարցնում էի, թէ ի՞նչ է պատահել նորան, նա ցոյց էր տալիս ձեռքով ծովն և ասում էր.

— Մայրիկա այնտեղ է... այնտեղ... ջրի մէջ...

Ճամբուրելով նորան, ես նոյնպէս լաց էի լինում և մեր սիրա ճմլազ ցաւը շուտով ձանձրացրեց մեր ճանապարհորդակիցներին: Նաւապետը, որ սկզբները դէպի ինձ շատ ցաւակցութեամբ էր վերաբերվում, յետոյ սկսեց ինձանից փախչել, որ չպարտաւորուի, զոնէ՛քաղաքավարութեան համար, ինձ մխիթարել. իսկ նաւաստիները շուտով գործով ցոյց տուին, որ նոցա համար օղին աւելի թանգ արժէ, քան թէ աշխարհիս բոլոր ոսկիքը:

«Մեր տանջանքով լի ճանապարհորդութիւնը արդէն վերջանալու վերայ էր. չորս օրից յետոյ մենք պէտք է Անավերպէն լինէինք, բայց անյաջող քամին մեզ պահեց ճանապարհին էլի մի տասը, տասնեւմէկ օր: Վերջապէս նորից փչեց յաջող քամին և այդ, ինչպէս յիշում եմ, երեքշաբթի երեկոյ ուշ ժամանակ էր, բոլորովին արդէն մթնել էր, լուսինը հանդարտ անդրադառնում էր, կարծես, քնած ովկիանոսի ջրերի մէջ. ես և աղջիկս նստած էինք պառչամբի վերայ և երկար ժամանակ հիանում էինք դիշերուան դեղեցկութեամբ և, ինչպէս որ մենք ամեն երեկոյ անում էինք օթեակ գնալուց առաջ, արդէն աղօթել էինք նորա հոգու համար, որ իւր գերեզմանը դաւա՛ծ ծովի խորութեան մէջ: Արդէն պատրաստուել էինք նիւքե իջնելու, երբ աղջիկս, աչքերը չհեռացնելով ասաղերով ծածկուած երկնքից, սաստիկ գունատուեց և ցոյց տալով սիրտը, ասաց կրկնուր ձայնով.

—Մի՛խ, հայրիկ, հայրիկ... ի՛նչպէս ցաւում է այստեղ... այստեղ...

Նա լռեց... յաւիտեան. մեռաւ սրտի պատռուելուց, որովհետեւ մօր մասին դարդ անելուց նորա մէջ զարգացել էր սրտի ցաւը... Դուք երեւի կը զարմանաք, թէ ի՛նչպէս մի մարդ կարողացել է տանել այդքան շատ վեշտ և այդպէս կարճ ժամանակուայ մէջ իրար ետեից և թէ ի՛նչպէս այդ մարդը գլուխը չէ կորցրել, կամ չէ խելագարուել... Մէկից էլ միւսից էլ երեւի ինձ տղատեց այն միտքը՝ թէ աղջկաս էլ ինչպէս և մօրը կը ձգեն ծովը. ահա՛ հէնց այդ միտքը, որից սառչում էին ոսկորներս, ոյժ տուեց հսկելու ինձ վերայ և զսպելու լայ ու տխրութեանս աղաղակը» . . .

Նա լռեց. այդ ժամանակ նորան խղճալուցս մի ակամայ շարժում արի, որի նշանակութիւնը նա չհասկացաւ:

—Ես ձեզ ձանձրացրի,—ասաց նա,—ներեցէ՛ք ինձ և թող տուէ՛ք պատմութիւնս լրացնելու, քիչ մնաց: Կըհաւատո՞ւք, որ ես ամբողջ չորս օր ձեռքերումս բռնել էի մեռած աղջկանս, տսելով, թէ նա հիւանդ է և այդ պատճառով քնած է ամբողջ օրերով... Դիակը արդէն սկսում էր քայքայուել և ես ամեն կերպ աշխատում էի հեռացնել մօտիցս ուրիշ մարդկանց, որպէս զի սարսափելի հոտը չքանայ իմ գաղտնիքս: Երբ ես դուրս եկայ ցամաք, հէնց այնտեղ, գետեզրի սալյատակի վերայ ուշաթափ ընկայ, բայց ձեռքերս դեռ բռնել էին իմ թանկագին բեռս և դորանից յետոյ դեռ երկար ժամանակ, երբ ինձ ուշքի բերին, ձեռքերս չէին կարող ուղղուել: Այո՛, ես ամբողջ իննսուն և ութը ժամ անց կայրի մի և նոյն զրութեան մէջ և այդ բոլոր ժամանակ կուլ չտալով զոնէ մի կաթիլ ջուր:

—Ես ձեզ պէտք է էլի ասեմ,—շարունակեց նա,—որ այդ ամեն անբախտութիւնների հետ միասին, նաւատ-

տիները օգտուելով իմ ուշաթափ լինելուցս, զողայել էին քսակս, որի մէջ իմ բոլոր կարողութիւնս էր, այնպէս որ ես մնացի առանց մի կոպէկի. գողին գտնելու աշխատանքներս զուր անցան: Դադըլիացոյ դեսպանը ինձ խղճաց և միայն նորա բարութեան շնորհիւ ես կարողացայ թողել աղջկաս, ինչպէս որ հարկն էր. նորա արած լաւութիւնը ես չեմ մոռանալ մինչև վերջին շունչս... Դեռ իմ փոքրիկիս զագաղ դնելուց առաջ, ես նորա պարանոցից հանեցի այն խողալիքը, որ զուք երևի նկատեցիք այսօր իմ ժամացոյցիս շերիտի վերայ. այդ խողալիքը նորան ընծայել էր մի հարուստ ժապոնացի կին և աղջկա երբէք նորանից չէր բաժանվում. խեղճին շատ զբաղեցնում էր արծաթեայ բոժոժների ձայնը: Երբ ևս թաղումից վերադարձայ, այն ժամանակ ինձ խօսք տուի, որ ինչ դժուարութիւն էլ որ լինի, յարմարեցնեմ այնպէս, որ մենք երեքս էլ այսինքն՝ իմ հայրս, աղջկա և ես պառկենք մի ընդհանուր գերեզմանոցում... Իսկ կնոջս ոսկորները մերնոց հետ միացնելու համար, ի հարկէ, մրտածել անգամ չէր կարելի. նոքա շատ հեռու մնացին ծովում... Նպատակիս հասնելու համար ինձ անհրաժեշտ էր փող ունենալ, իսկ, ինչպէս ձեզ ասացի, ես մնացի առանց մի կոպէկի. շնորհիւ նոյն այն դեսպանի խնամակալութեանը, ես կարողացայ նորոգել իմ հագուստս, պատուիրելով այն զգեստը, որ զուք այսօր ինձ վերայ տեսաք, իսկ շնորհիւ այդ զգեստի, ես կարողացայ մասնակցել մի քանի տնային երեկոյթներում հարուստ նաւատէրերի մօտ: Իմ մենախօսութիւններս և երգերս այնպէս մեծ յաջողութիւն ունեցան, որ ինձ ձեռից ձեռք խլելով, հրաւիրում էին. այդպէս ես ընկայ և Բրիւսսել, որտեղ ինձ լսել էր պարոն Բօլփերը և ինձ հրաւիրեց Փարիզ մասնակցելու իւր երեկոյթին: Այն գումարը, որ ես նորանից ստացայ, պիտի յաջողցնէ իմ սաստիկ և գուցէ

վերջին ցանկութեանս հասնելու: Հիմայ ես կարող եմ աղջկաս մարմինը բերել այստեղ և միջոց ունեմ վճարելու քաղաքին տեղի համար և մարմարեայ արձան շինողին, որին ես առաջուց արդէն պատուիրել եմ: Ձի անցնիլ տասն օր, ամեն բան այնպէս կըլինի, ինչպէս որ ես ուզում եմ:

... Այդպէս վերջացնելով, Փօքսը սեղմեց ձեռքս և ժամանակ չտալով մտիթարական կամ ցաւակցական մի խօսք ասելու, ծռուեց դէպի անկիւնը և աչքիցս հեռացաւ:

Ես արդէն սկսել էի մոռանալ այդ պատմութիւնը, երբ պատահմամբ գնացի արեւելեան գերեզմանատունը և տեսայ այնտեղ մի գեղեցիկ յիշատակարան, մեծ սև բուրդի նման, որի մէկ կողմի վերայ փորուած էին միայն այս երկու խօսքերը. «Ժիրօղէնի ընտանիքը»: Իմ հաւաքած տեղեկութիւններիցս զուրս եկաւ, որ գերեզմանի պարտիզպանը տարեկան երկու հարիւր Փրանկ է ստանում, որ պահպանէ այն ծաղկանոցը, որ այդ յիշատակարանի շուրջն էր, երկաթեայ վանդակով պատած: Այդ վանդակի մէջ իսկապէս երեք գերեզման են՝ առաջինում հանգչում է Ժիրօղէն հայրը, երկրորդում աղջիկը, իսկ երրորդում նա, որ Փօքս կեղծ անունով, անմտիթար վիշտը սրտում, չափազանց ծիծաղեցնում էր պարոն Բօդ-ժերի հիւրերին... Ուրախ կոմիկը թաղուել էր առանց եկեղեցական արարողութեան, առանց քահանաների. նորա դաճաղը հասարակ սայլով տարել էին գերեզմանատուն. պահապանները այդ դաճաղը իջեցրել էին գերեզման և հողով ծածկել, ինչպէս յանձնում են հողին մարդասպանների մարմինները: Մեր խօսակցութիւնից ճիշդ տասն օր յետոյ, կոմիկը աղջկայ երկրորդ թաղումից վիրադառնալիս, իրեն սպանել է մի համեստ կահաւորուած սենեակում, որտեղ իջևանել էր Անտփերպենից գալիս:

Այդ սենեակում սեղանի վերայ դրել էին մի տուփակ, որի մէջ ինքնասպանը ցանկութիւն է յայտնել, որ իրեն էլ թաղեն այնտեղ, որտեղ որ իւր հայրը և փոքրիկ աղջիկն են և նոյնպէս խնդրել էր, մինչև անգամ աղաչել, որ նորա դագաղի մէջ դնեն և այն արծաթեայ խաղալիքը, որ մեռնողը ձախ ձեռքով ամուր բռնել էր:

Թարգմ.

ՏԻԿ. ՄԱՐԳԱՐԻՏ.



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

I.

Մ Ո Ւ Ր Ա Ց Ա Ն¹

1882 թուականի սկզբին, Թիֆլիսի թատրոնական գործի ամենատաք ժամանակը, ի միջի այլոց ներկայացուեց և մի պատմական դրամա: Պիէսը, որի գլխավոր դերերում գուրս եկան այնպիսի ջոժեր, ինչպէս Ադամեան և տաղանտաւոր դերասանուհի Նրաչեան—մեծ յաջողութիւն ունեցաւ: Մանաւանդ նշանաւոր է այդ յաջողութիւնը, երբ ի նկատ առնենք, որ մինչև այդ ժամանակ մեր բազմաթիւ պատմական դրամաները թէ՛ գրականական և թէ՛ բեմական կողմից շատ թոյլ էին. այժմ այլ ևս ծիծաղ չեն շարժում կեղծ-գասական ոճով թխած, անհամ ոտանաւորների վերածած—մեր երուանդների, Արշակների ու Վարդանների ճառերը: Կար ժամանակ, երբ

¹ Այս յօդուածը պատրաստուած էր Իւր. Վեսելովսկու և Մին. Բերբերեանի ղրատարակած «Армянские Беллетристики» ժողովածուի II-րդ գրքի համար:

դոքա փոխարինելով «միստերիաները», բաւականացնում էին մեր հասարակութիւնը: Այժմ նոքա կորցրել են իրենց «raison d'être»-ը:

Լաւ լեզուով զրուած և ազգասիրական ոգով տոգորուած այդ նոր պիէսը, որի նիւթը վերցրած է մեր պատմութեան հետաքրքրական շրջանների մէկից (Մոն-գոլների արշաւանքներից), շատ դուր եկաւ հասարակութեան և մինչև այժմ էլ, մեր կարծիքով, իբրև ինքնուրոյն պատմական դրամա, դա միակ, ներկայացման արժանի պիէսն է մեր ռէպերտուարում: Պիէսի հեղինակն էր Մուրացյանը: Խրախուսուելով իւր աշխատութեան յաջողութիւնով, նա դորանից յետոյ աւելի ևս մեծ եռանդով նուիրում է իւր ոյժերը զրականութեան. մի ժամանակ «Նոր-Դար»-ի անխնայ աշխատակիցներից մէկն էր. նա մասնակցում էր թերթի բոլոր բաժիններում, բայց զլիաւորապէս իբրև հրապարակաօս-վիպասան — բանասիրականում:

Սակայն մի բանի վերայ չենք կարող չզարմանալ՝ թէ ինչո՞ւ չնայած պիէսի զրականական արժանիքներին և բեմական յաջողութեան, Մուրացյանը այլ ևս չէ փորձել իւր ոյժերը այդպիսի զրուածքների մէջ, իսկ նորա «Ռուզանը» (այդպէս է կոչվում նորա առաջին պիէսը՝ հերոսուհի աղջիկ Ռուզանի անունով) մինչև այժմ չի տպուել...

Մուրացյանը (նորա իսկական ազգանունը Տէր-Յովհաննիսեան է) ծնուել է Շուշում 1854 թուականին: Գրականական հակումը, ինչպէս երևում է, Մուրացյանի մէջ ժաւանդական էր. նորա հայրը պատկանում էր այն «շահիր»-ներին, որոնք վանազան զիպուածների ու երեւթիթների առթիւ յօրինում էին երգեր և երգում էին նոցա տեղն ու տեղը, շարադրած, յարմարեցրած եղանակներով:

Հօր մահից յետոյ երեխային յաջողվում է մանկե Շուշուայ դպրանոցը, ուր այդ ժամանակ առաջին տեղն էր բռնում զրաբաւը: Դպրանոցի աշակերտները այդտեղ լաւ ծանօթանում էին թէ մեր ինքնուրոյն հեղինակների և թէ թարգմանական գրականութեան հետ: Մուրացանը յափշտակուելով Մխիթարեանների թարգմանած հին ու նոր դասական բանաստեղծների գրուածներով, ինքն էլ է սկսում երբեմն-երբեմն բանաստեղծական փորձեր անել և գրել ոտանաւորներ, մեր հին հայկական կեանքից վէպեր և այլն: Ոտանաւորներից մի քանիսը, ի հարկէ զրաբաւ գրած, լոյս են տեսել «Արարատում» և «Արշալոյս Արարատեան» լրագրում 1872 թուականներին:

Աւարտելով դպրանոցը և չքաւականանալով իւր ստացած ուսումով, Մուրացանը աշխատում է ամեն կերպ լայնացնել և լրացնել իւր մտաւոր պաշարը: Դպրանոցը Մուրացանին ծանօթացրել էր իւր ժողովրդի անյեւալի և գուցէ նիրկայի հետ էլ. նա նորա մէջ սէր էր ներշնչել դէպի իւր հայրենիքը և ցանկութիւն ծաւալելու նորա օգտի համար: Դպրանոցը որոշ չափով պատրաստել էր անգամ նորան այդ գործունէութեան համար. բայց ընդհանուր վարգացում, հիմնական գիտութիւն և լայն հայեացակէտ դպրանոցը նորան չէր տուել:

Այն պակասութիւնը, կամ աւելի լաւ է ասել, ազգային կրթութեան միակողմանիութիւնը տեղ-տեղ երեւում է և նորա բէլլէտրիստիկական գրուածքների և այն հայեացքների մէջ, որ նա ունի վիպական դրուածքների մասին: «Ես միշտ այն կարծիքին եմ եղել, — ասում է Մուրացանը, — որ ժողովրդին կարելի է աւելի մեծ օգուտ բերել վիպական գրուածքներով, քան թէ չոր ու ցամաք առաջնորդողներով: Գրածս միմիայն հայ մարդու համար է հղած: Ամեն մի գործ ստեղծելու ժամանակ իմ աչքի առաջ ունեցել եմ իմ հայ ժողովուրդը, նորա

անցեալը, նորա պատմութիւնը, նորա տխուր ներկան...
Նորա համար եմ գրել. նորան եմ կամեցել իմ մտքերն
ու զգացմունքներն հաղորդել» և այլն:

Ահա ինչ տեսակ է նայում Մուրացանը վիպասանի
կոչման և պարտականութեան վերայ: Այդ պատճառով
էլ նորա գրուածները մեծաւ մասամբ առօրեայ հարցեր
ու գաղափարներ են շօշափում, որոնք միմիայն ներկայ բո-
ւայէին, հեղինակի զրաժ ժամանակն են հետաքրքրում հայ
հասարակութիւնը: Մեր վիպասանների մեծամասնութեան
նման, Մուրացանն էլ հրապարակախօս - վիպասան է. իր-
րե վերին աստիճանի տէնդէնցիօզ գրող, նա աշխատում
է որոշ կերպով պարզել ներկայ բոայէին յուզող հարցը,
նորան որոշ գոյն և բացատրութիւն տալ. մի և նոյն ժա-
մանակ առաջ մղել և ժողովրդականացնել այնպիսի դա-
ղափարներ, որոնք, հեղինակի կարծիքով, կարող են ար-
թնայնել ժողովրդին կորստաբեր քնից և քայքայող տգի-
տութիւնից ազատել:

Բայց երբ մենք տեսնում ենք, որ Մուրացանը իւր
հայեացքներով և գաղափարներով իւր հասարակութեան
այն մասին է պատկանում, որ սովորաբար «պահպանո-
ղական» է անուանւում, նորա գրականական գործու-
նէութիւնը մեզ համար աւելի ևս հետաքրքրական է
դառնում:

Ուսումն աւարտելուց յետոյ Մուրացանը մի-երկու
տարի շարունակում է պարապել իւր զարգացումով և
ինքնակրթութեամբ. յետոյ մի-երկու տարի էլ ուսուցչու-
թիւն է անում Շուշուայ դպրոցներից մէկում: Սա-
կայն ուսումնարանը փակուելուց յետոյ Մուրացանը այն-
քան յափշտակուած է լինում աղգային պատմութիւնով
և հին յիշատակներով, որ ամբողջ 1877 թուականը ճա-
նապարհորդութեան մէջ է անց կացնում մեր հին-պատ-
մական գտաւորներում. յաճախում է, տեսնում նոցա ա-

ւերակ քաղաքները, հրաշակերտ, բայց փուլ եկած վանքերը, պատմական նշանաւոր վայրերը և այլն:

Սյդ ճանապարհորդութեան հետեանքն է լինում նորա պատմական-կենսադրական աշխատասիրութիւնը, որ տպուած է 1880 թ. «Փորձ»-ում: Դա Աղուանից վերջին կաթողիկոս՝ Բաղդասար Մետրապօլիտ հասան-ձալաւանի կենսադրութիւնն է, որ կազմելուց առաջ հեղինակը հաւաքել և ուսումնասիրել է բազմաթիւ նիւթեր հասան-ձալաւանների տան պատմութեան վերաբերեալ:

«Որովհետեւ նիւթապէս անապահով վիճակ ունէի, — ասում է պ. Մուրացանը մեզ ուղարկած մի քանի ինքնակենսադրական տեղեկութիւնների մէջ, — ուստի մըշտական մի պարապմունք զանկու յուսով 1878-ի վերջին եկայ Թիֆլիս: Ցանկանում էի այնպիսի մի գործով զբաղուել, որ թէ՛ նիւթական գիւրութիւն տուող լինէր և թէ՛ մաււոր պարապմունքներս չխանգարող: Սյդպիսի պարապմունք շատերից վարժապետութիւնն էր ճանաչուած. բայց ես չկամեցայ ուսուցիչ լինել, որովհետեւ ոչ զլուխ ունէի հոգաբարձուների առաջ խոնարհելու և ոչ էլ լեզու նոցա շողքորթելու: Սյդ պատճառով աւելի լաւ համարեցի առևտրական ծառայութեան մտնել»: Եւ ահա 1879 թուականից մինչև այսօր Մուրացանը ծառայում է Թիֆլիսի առևտրական տներից մէկում և «միմիայն ազատ ժամերն է նուիրում գրականութեանը»: «Դժբաղդաբար, — գանգատւում է Մուրացանը, — այդ ազատ ժամերն շատ քիչ էին»: Սյնու ամենայնիւ մենք գիտենք, որ Մուրացանը բաւականի շուտ-շուտ էր երևան գալիս գրականական ասպարիզի վերայ. ժամանակի սղութիւնը անշուշտ չէր կարող չազդիլ նորա գրուածքների բովանդակութեան վերայ: Շատ անգամ հեղինակը շտապ գրելիս մոռանում է կոկել իւր գրութիւնը, կրկնվում է, իսկ մի քանի բան բոլորովին «հում-հում» է սպել տա-

լիս ու մինչև իսկ չէ ել վերջացնում: «Լուսաւորութեան կենտրոնը» մեր խօսքերի ամենալաւ ապացոյցն է:

Թիֆլիսը— Կովկասի այդ մտաւոր կենտրոնը— երկ-
տասարդ գաւառացու վերայ ունենում է ամենաբարեբար
ազգեցութիւնը: Մի կողմից նորա առաջն են գրքեր ու
լրագրներ, ընկերութիւններ ու թատրոններ. միւս կողմից
նա իսկոյն առիթ է ունենում ի մօտոյ ծանօթանալ մեր
գրականական շրջանների հետ, ծանօթանալ հին և նոր
գրականների (литераторъ), գործիչների ու դերասան-
ների հետ: Թիֆլիսի հայ դերասանական խմբի ներկայա-
ցումների ազգեցութեան ներքոյ Մուրացանը գրում է իւր
«Ռուզան» պիւսան, որ իսկոյն ներկայացվում է և հեղի-
նակի անունը ամենին յայտնի է անում:

Այդ պիէսի արդէն առաջին ներկայացումից յետոյ
Հասարակութեան մի շրջանի մէջ խօսակցութիւն է բող-
վում երկտասարդ հեղինակին արտասահման ուղարկել
ուսումը շարունակելու համար: Մի քանի հարուստ վա-
ճառականներ խոստացան անգամ նորան իրենց հաշուով
ուղարկել իրենց որդեգիր անել և այլն: Բայց ինչպէս
շատ անգամ, նոյնպէս և այս խոստումները միմիայն խոս-
տումներ մնացին և չիրագործուեցան: Յուսախաբ եղած
Մուրացանը, ժամանակ անցնելուց յետոյ, լաւ հատու-
ցումն տուեց այդ պարծենկոտ արարածներին դուրս բե-
րելով իւր «Հասարակաց որդեգիր» պատկերի մէջ: Այս
երգիծաբանական գրութեան հերոսը— Գրիգորը զոհ է դառ-
նում մեր հարուստների և պոռոտախօս ինտելլիգէնտների
սուտ խոստումներին: Հարուստ և աղքատ ընտանիքների
պատկերները, նոցա հոգեբանութիւնը, զինու. ժամանակ
ազգասէր և բարեգործ եղող մեր «կուշտ» մարդկանց բնա-
ւորութիւններն ու խօսակցութիւնները դիտող հեղինակը
շատ ճիշդ և կենդանի է դուրս բերել հեղինակի համակ-
րանքով և սիրով վերաբերուելը զէպի հերոսը և պատ-

մուածի ընդհանուր մեղմ կօլօրիտը յոյց են տալիս, որ դէպքը կենսաբից է վերցրած և հեղինակին արդէն շատ մօտ է. Գրիգորը մի անձն չէ, այլ տիպ է, նա մեր այն երիտասարդների ներկայացուցիչն է, որ իւր ուսման ծաւալը յագեցնելու համար Հարուստների դռներն է բաղխում և փակուած դռներից հիասթափուած հեռանում, այն երիտասարդների, որոնք մեզնից հաց են խրնդրում, իսկ մենք կարծրացած սրտով քար ենք տալիս հացի փոխարէն:

Մուրացանի առաջին լոյս տեսած բէլլետրիստիկական աշխատութիւնն է «Մեղու հայաստանի»-ում տպուած «Հայ բողոքականի ընտանիքը» վէպիկը: Ինչպէս և միւս շատ գրուածները, Մուրացանի այս վէպիկն էլ ոչ այլ ինչ է, եթէ ոչ արձագանք «Մշակի» և «Մեղուի» միջև ծագած տաք գրականական պօլեմիքայի: Առաջին թերթը, ինչպէս յայտնի է, կրօնական աղատութիւն քարոզելով ծայրահեղութեան էր հասնում և ոչ միայն հակառակ չէր հայերի մէջ բողոքականութեան տարածուելուն, այլ և դա, այդ հանգամանքը, մի տեսակ օգտակար երևոյթ էր համարում և իբրև յառաջադիմական մի քայլ էր ընդունում: «Մեղու հայաստանին» ընդհակառակը, յենուելով մեր ազգային պատմութեան վերայ, ապացուցանում էր, որ ամեն մի նոր կրօնի տարածուելը և կամ մուտք գործելը մեր ժողովրդի մէջ փաստակար է հէնց այն պատճառով, որ մեր եկեղեցին ազգային բնաւորութիւն է կրում և նորանից սառչողը սառչում է և դէպի ազգը և ազգային շահերը: Բացի դորանից «Մեղու հայաստանին» յոյց էր տալիս այդ խռովութիւնների վերայ, որ շատ անգամ սերմանում են միսսիօներները հայ ժողովրդի մէջ. պատահում էր յաճախ, որ միսսիօնարական քարոզները պատճառով ընտանիքը ընտանիքի դէմ էր գնում, հայրը որդու, մայրը կնոջ հետ էր կռւում, թշնամանում:

Կարծես լրագրի խօսքերը տպացուցանելու համար Մուրացյանը պարզօրէն պատմում է մի զաւառական ընտանեկան դրամա, որի պատճառն էր այր և կնոջ մէջ եղած տարաձայնութիւնը բողոքականութիւն ընդունելու խնդրում: Մի և նոյն ընտանիքի այր ամուսինը ընդունում է բողոքականութիւն, իսկ կինը ոչ միայն չէ ուղղում հետեւի նորան, այլ և հակառակում է: Հետեւանքը—յաւալի երեւոյթ, ընտանեկան փոթորիկ, դրամա: Վէպիկի սիւժէտը շատ հետաքրքրական է և ընդհանրապէս յաջող է դրուած: սակայն հէնց այն կողմից, որ հեղինակի համար ամենակարեւորն է—վէպիկը, մեր կարծիքով, թոյլ է: Հեղինակը վէպիկը գրում է հրապարակախօսական տեսակէտից: Նա ուղղում է գեղարուեստական կերպով ապացուցանել իւր միտքը, թէ ինչ մեասներ է առաջացնում միասիւններնրի քարոզը, և այդ միտքը առաջ տանելու, ապացուցանելու համար հեղինակը ոչ մի արգիւքի առաջ չէ կանգնում: Նա գիտակցաբար տեղ-տեղ մթնացնում է ներկի գոյները, առաջ է քաշում իրեն անհամակրելի մարդկանց վատ յատկութիւնները և գործերը, մեղմացնում է իւր գաղափարի ներկայացուցչի պատկերը: Մի խօսքով յանցանք գործելով գեղարուեստական ճշտութեան (правдивость) գէմ, մնասում է վէպի ընդհանուր լաւ տպաւորութեանը:

Այնու ամենայնիւ արդէն այս առաջին փորձի մէջ կան շատ գեղեցիկ և ազդու դրած էջեր, որոնք յատուկ են միայն վարժուած վիպասաններին:

Նոյն տեսակի պակասութիւն, որի պատճառն է Մուրացյանի ծայրահեղ տէնդէնցիօզ գրիչը, մենք նկատում ենք նորա «Իմ կաթուղի հարսնացու» վէպիկի մէջ: սա նոյնպէս գրած է կրօնական-գրականական պօլէմիկայի ազդեցութեան ներքոյ, բայց տպուած է «Նոր-Դար»-ում, որ այս, ինչպէս և շատ ուրիշ հարցերում,

չէր կարող համաձայնել «Մշակի» դաւանած սկզբունքների հետ:

Ամուսնութեան, հասի-չհասի, ապահարզանի և այլ այս տեսակ հարցերը հրապարակախօսներին, մանաւանդ մեր մէջ, միշտ առատ նիւթ են տուել գրելու, հակառակ և միմեանց հակասող կարծիքներ յայտնելու ու արծարծելու. մեր մամուլի մէջ մինչև այժմն էլ այս խնդիրների շուրջը պօլէմիկան չէ վերջացել: Հասկանալի է, որ հրապարակախօս-վիպասանը չէր կարող այդ պօլէմիկայի վառ բողոքներին մէկուսի մնալ. նորան հետաքրքրում է նախ և առաջ հասի-չհասի խնդիրը, որ մեր մէջ ճիշդ նախնական դրութեան մէջ է: *Dura lex, sed lex* —ասում էին իրաւաբանները. և եթէ մեր մէջ չհասութեան վերաբերեալ օրէնքները անխտիր պահպանուէին, զուցէ այդ հարցը այնքան էլ տեղիք չտար զանազան տարաձայնութիւնների. սակայն յայտնի է, որ մեր մէջ առաջնորդին և կաթողիկոսին իրաւունք է տրուած ըստ իրենց հայեցողութեան՝ չհասութիւնը «հասութեան» դարձնել. իսկ այդ մէտամօրժօգայի ժամանակ փողը մեծ դեր է խաղում: Դորանից չէ՞ որ հարստանում են մեր եկեղեցու եպիսկոպոսները և հաղարներ ժառանգութիւն թողնում: Մուրացանը իւր «Չհաս է» վէպի մէջ շօշափում է այդ մեղ բոլորիս էլ մօտ խնդիրը և ցոյց է տալիս, թէ ինչպիսի բեռն է դարձել աղքատի ուսին շնչաւոր և անշունչ «դիւանները» կաշառակերութիւնն ու կողմնապահութիւնը:

Հրապարակախօսական տարրը աւելի քիչ տեղ է բռնում և այնքան էլ ընթերցողի աչքը չի ծակում Մուրացանի հետեւեալ վէպերի, վէպիկների ու պատկերների մէջ՝ «Իմ երջանկութիւնը», «Ճարուստները զուարճանում են», «Ի՞նչ լսյեղ է», «Անպատճառ իշխանուհի»: Սոցա մէջ առաջ են բերուած մեր *sui generis* բարձր դասակարգերի բարբ ու վարբը, մեծ քաղաքում բնակուող հայե-

րի բաւականի յաջող պատկերները և առ հասարակ քաղաքացի հայի առօրեայ կեանքը և ինտէրեսները: Մեր «աւար» վիպասանները քաղաքացի հայերի կեանքը զրեթէ չէին նկարագրում և իրենց ուշքն ու միտքը ժողովրդին, զիւղացուն էին տուել: Ընդհակառակը «նոր սերնդի» հայ վիպասաններէց շատերը աւելի սիրով նկարագրում են քաղաքացի հայի կեանքը, որովհետեւ իրենք էլ այժմ բնակվում են քաղաքներում ու նոյա կեանքի հոսանքի մէջ են գտնվում իրենք էլ: Շնորհիւ երիտասարդ վիպասանների մեր դրականութեան այդ ձիւղը աւելի և աւելի զարգացաւ և բազմակողմանի դարձաւ: Թէ Շիրվանզադէի, թէ Մուրացանի և թէ ուրիշների գրութեաներից մենք հետ: ից կարող ենք իմանալ ոչ միայն Քանաքեռի կամ Սշտարակի ժողովրդի առօրեայ կեանքը, այլ և Շամախու, Շուշուայ, Թիֆլիսի և այլ մեծ քաղաքների բնակիչների մտաւոր կեանքին ու պահանջներին, հոգեբանութեանն ու բարոյական դրութեանը ի մօտոյ ծանօթանալ:

Մուրացանը Թիֆլիսի հայերի զանազան դասակարգերի պատկանող հայերին է պատկերացնում և որքան անմխիթար ու յուսահատեցուցիչ են դուրս եկել այդ պատկերները... Սհա ձեզ հարուստներ, որոնք բացի իրենց «ես»-ից ուրիշ իդէալ չեն ճանաչում: որոնք իրենց նեղ անձնական շահերի համար ոտնակոխ են անում ամեն ինչ: որոնք ոչ միայն անտարբեր են դէպի հասարակական պէտքերն ու շահերը, այլ և թքում են նոյա վերայ, եթէ այդ «հասարակականը», «ընդհանուրի շահը» փառաւորելու չէ իրենց անունն ու անձը:

Մուրացանը կարողացել է բաւականի ձիւղ պատկերներ տալու այդ մեր «ինդիֆֆերենտ» հայերի կեանքից: բայց ոչ միշտ յաջող են վէպիկների սիւժէտները ու գործող անձանց հոգեբանութիւնը: բոլորովին թոյլ է «Իմ երջանկութիւնը», որ երկար մտածած և ձեռաց շինած

առակի է նման, որին ոչ հեղինակն է հաւատում և ոչ էլ նորա խօսքերով մենք կարող ենք հաւատալ: Ժլատը կարող է մահուան սարսափից ու վախից առատաձեռն դառնալ, այդ ճիշդ է, բայց դորա համար հարկաւոր է այդ ժլատի հոգեբանութիւնը աւելի խոր և բազմակողմանի ուսումնասիրել և նորա բոլոր մտքերն ու զգացմունքները հոգեբանօրէն բացատրել: Լաւ և գեղեցիկ զրուածք է «հարուստները զուարճանում են» վէպիկը, որի միակ պակասութիւնը ձգձգուած եղածն է: Սա ճշգրիտ պատկեր է իրական կեանքից և մի և նոյն ժամանակը մի սատիրա, որի մէջ հեղինակը ծաղրում է մեր ոտից ցլոււխ անբարոյականութեան մէջ կորած հարուստ հայ երիտասարդներին: Իբրև մայրաքաղաքի Դօն - Ժուանների էժանազին հրատարակութիւն, մեր «ոսկէ երիտասարդութիւնն» էլ իրեն զուարճացնում է ոսկու դնով անմեղ զոհեր ձեռք բերելով ու նոցա «միամտութեան» ու իրենց «լրբութեան» վերայ կուշտ-կուշտ ծիծաղելով: Ասիական շորերը եւրոպականի փոխելով, մեր հայը ասիական ինստիկցաների վերայ աւելացնում է լրբութեան հասցրած այն անբարոյական հակումները, որոնց աղբիւրներն են եւրոպական մեծ քաղաքները: Շատ կենդանի և ճիշդ գուրս են բերուած մանաւանդ Փողշատեանը, Սալումէն և M-me Բէրնարը:

Աւելորդ ենք համարում խօսել Մուրայանի փոքր գրուածքների մասին և թէ նորա վերջին վէպի՝ «Լուսաւորութեան կենդրոնի» մասին: Հեղինակը նպատակ է ունեցել այս վէպով տալ մեր այն դասակարգի պատկերը, որ ինքն իրեն լիովին լուսաւորուած է համարում. նպատակը համակրելի է, սիւժէտն էլ հետաքրքրական: Բայց ընդհանրապէս վէպը շատ թոյլ է գրուած և աւելի կիրակնօրեայ երգիծաբանական ֆէլիէտօնների է նմանում, քան լուրջ հասարակական վէպի. հեղինակը չէ կարողա-

նում բոլորովին ազատուել առօրեայ «չարն ու բարուց», ուստի յաճախ դուրս է բերում դեռ կենդանի ու գործող անձինք և «թաղա» փաստեր: Այսպիսի դիպուածում շատ դժուար է անաչառութիւն պահպանել, որ և պահպանուած չէ, ինչպէս և Շիրվանղաղէի նոյն տեսակի «ժամանակակից» վէպի «Արսէն Դիմաքսեան»-ի մէջ: Վերջապէս վէպը դեռ վերջացած չէ, ուստի իրաւունք է տալիս կանգ չառնել նորա վերայ ու վերջացնել մեր խօսքը Մուրացանի chef d'oeuvre-ով, «Խորհրդաւոր Միանձնուհի»-ով: Սա, կրկնում ենք, Մուրացանի ամենատաղանտաւոր և ամենագաղափարական գրուածքն է:

Սա մի կողմից տխուր, միւս կողմից ուրախալի եղելութիւն է: Տխուր, որովհետեւ մարդիկ այստեղ իրենց նպատակին հասնելու համար, լաւ գործ առաջ տանելու համար ստիպուած են զոհել իրենց անձնական երջանկութիւնն ու բաղդը, հրաժարուել «իրենց» կեանքից և «ուրիշ» բարեկեցութեան մէջ բաւականութիւն գտնել: Միւս կողմից մենք ուրախանում ենք, բարոյական մեծ ուրախութիւն ենք զգում, երբ տեսնում ենք, որ դեռ կան մեր մէջ մարդիկ, որոնք ժողովրդի բարօրութեան համար պատրաստ են հրաժարուել իրենց անձնական բոլոր բարեմասնութիւններից ու հրջանկութիւնից, որ կան այնպիսի ալտրուիստներ, առանց որոնց մարդկութիւնը չէր կարողանալ առաջ ընթանալ: Բարեգործութիւն անելը, ուրիշին օգնելը, և այլն երբ ինքզ լաւ հանգամանքների ու դրութեան մէջ ես՝ դա մի առանձին մեծ գործ չէ. դա պարտականութիւն կատարել է. բայց ոչ մի զոհաբերութեան ու զրկանքի առաջ չկանգնել քո գեղեցիկ և ուրիշի հրջանկութեան համար ծառայող զաղափարդ առաջ տանելու—ահա իսկական մարդասիրութիւն ալտրուիզմ:

Վէպիկի, կամ պատմուածի հերոսն, Գարեգինը և հերոսուհին, Աննան, հրաժարւում են միաւորուելուց, ա-

մոսնանալուց և նուիրվում են թէ մէկը, թէ միւսը ժողովրդի լուսաւորութեան սուրբ գործին: Գարեգինը իզէալիստ ազգասէր է, նա վճռում է իրեն «ամբողջովին» նուիրել ազգին, ժողովրդին. հեռեալաւ նա պէտք է սիրէ միմիայն այդ ազգը, ժողովուրդը: Կոջ սէրը նորա համար արգելուած պատու է: Բայց ահա նա սիրում է և սիրվում: Հարկաւոր է հեռանալ. հրաժարուել այդ երջանկութիւնից՝ կամ կնոջը, կամ հայրենիքին—մտածում է նա: Նա ընտրում է հայրենիքը և նոյն ոգւով ազգում է և իւր սիրեցեալ Աննայի վերայ: Գարեգինը կուսակիւսնութիւն է ընդունում. նորա կեանքի հետ մեղ ծանօթացնում են հրապարակախօսները և ոչ թէ վէպիս հեղինակը: Բայց Աննայի կեանքի և գործի հետ մենք ծանօթանում ենք մանրամասնօրէն: Նա ընտրում է մի զիւղ և նորան է նուիրում, նորա նիւթական, մտաւոր և բարցական յառաջադիմութեանն է նուիրում իւր բոլոր ինչքը և յոյժերը և քսան դժուար տարիների ընթացքում նա իրեն մոռացած «սովորեցնում է» զիւղացիներին և նոյա երեխաներին: Քոյր Աննային բոլորն էլ ուսուցիչ են կոչում:

Յեղինակը այս վէպի մէջ արծարծում է իւր հայրենասիրական գաղափարները և իւր ծրագիրն է առաջարկում գործունէութեան: Կարելի է այդ ծրագրի հետ չհամաձայնել, բայց չէ կարելի չխոստովանել, որ այդպիսի ծրագրով գործելու համար հարկաւոր է մեծ սէր ունենալ զէպի գործը, կամքի մեծ յոյժ և ալտրուիզմ, որ այժմեան մեր «գործիչ» կոչուողներին պակասելով պակասում է:

Գրուածքը ընդհանրապէս յաջողուած է. գործողութիւնը զարգանում է յաջորդաբար առանց «շինած-սարքած» միջամտութիւնների հեղինակի կողմից: Յերոսուհու բնաւորութիւնն ու պատկերը կենդանի և հետաքրքրական

են: Աւելի քան իւր միւս գրուածների մէջ հեղինակը այստեղ դուրս բերուած անձանց հոգեբանութիւնովն է զբաղվում: Աւելայնեւ սորան գրուածքի ճոխ լեզուն, հարաւային բնութեան գեղեցիկ նկարագրութիւնները, գիւղական կեանքի կենդանի պատկերները և մենք սխալուած չինք լինի, եթէ Մուրացանի «Ուխտեալ Միանձնուհին» համարենք նորա գլուխ գործոցը և դասեւք մեր նորագոյն գրականութեան ամենալաւ գրուածքների շարքը:

Չնայելով որ Մուրացանը բաւականի շատ բան է գրել որոնց մէջ կան անշուշտ տաղանտաւոր գրուածներ, այնու ամենայնիւ ընթերցողներից շատերը նորան չգիտեն. պատճառը հասկանալի է. նորա գրեթէ բոլոր գրուածները «Նոր-Դար»-ի ղանազան թուականների, բազմաթիւ համարներում են. ում խելքին պիտի դայ «Նոր-Դար»-ի հին համարները թերթել և հրտեղից գտնել:

Ուստի լաւ կ'անէր պ. Մուրացանը, թէ՛ իւր և թէ՛ մեզ համար, եթէ իւր վիպական գրուածներից ամենույաջողները առանձին հրատարակութեամբ լոյս ընծայէր: Եւ ի սրտէ կըցանկանայինք տեսնել նորա ստորագրութիւնը «Ուխտեալ Միանձնուհու» նման գրուածների տակ:

ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆ.



ՀԱՅԿԱԿԱՆ ԱՅԺՄԵԱՆ ՔՆԱՐԵՐԳԱԿԱՆ ԲԱՆԱՅԻՍՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

Ա Շ ՈՒ Ղ Զ Ի Ի Ա Ն Ի Ն

«...Աշուղի լեզուն զրիստն է ասում ամեն մի քանին,
իր անմեղ հոգին օսկով չի ծախում նա Մամոնային...»

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ.

Գիտնական Հայերէնագէտ Հանգուցեալ Մկրտիչ Էմինը առաջինն եղաւ, որ իւր «Վէպք Հնոյն Հայաստանի» պատուական աշխատութեամբ մեր ազգային անգիր բանահիւսութեան վերաբերեալ լոյս ձգեց զիտնական աշխարհում: Մինչև այդ ժամանակ օտարազգի Հայասէր բանասէրները կարծում էին, թէ Հայերը չեն ունեցել անգիր բանահիւսութիւն: Մենք ունեցել ենք, այո՛, ազգային-ժողովրդական բանահիւսութիւն, այն ևս անկախ օտար՝ ազգերի ազդեցութիւնից: Կրկնում ենք, առաջինը եղաւ, որ յարգելի պրոֆեսսորը զիտնականօրէն հերքեց այդ սխալ կարծիքը, ապացուցանելով, որ Հայերն էլ ունեցել են իրենց ազգային-աամկական բանաստեղծութիւնը, բայց նորա բեկորներն են Հասել մեզ: Ի՞նչ երկար ժամանակ... Ի՞նչ տասնեակ դարեր զլորուել անցել են՝ և Վահագնի,

Արտաշէսի օրերում՝ երգուած երգերն ու տաղերը հասել են մինչև այժմ՝ քսաներորդ դարու շեմքը: Հետզհետէ զարգացաւ, մարմնացաւ գրականութիւնը, ստեղծուեց տրպազութիւն, պարբերական մամուլ, ստեղծուեց ու բարգաւաճեց աշխարհարար լեզուն, որ և տիրապետող դարձաւ ժամանակակից գրականութեան: Զուգընթաց կերպով այնուհետև միմեանց յաջորդեցին մեր արդի գրականութեան բազմատեսակ ճիւղերը՝ գեղարուեստական քնարերգութիւն, բանաստեղծութիւն՝ տաղաչափական և արձակ. գեղեցիկ գրականութիւն — *Բելլէտրիստիկա* (belles lettres—изящная литература), թատերական գրականութիւն և այլն: Այս ամենի հետ մինչև այժմ գոյութիւն ունին մեր ազգային-ժողովրդական բանահիւստութիւնը, քնարական-գուսանական բանաստեղծութիւնը, աշուղական երգն ու տաղը. հետևապէս մեր դարումն էլ դեռ տպրում են հայոց անզիր դպրութեան, կամ բնուէր գրականութեան հիմնադիրներէից. այսօր մեր օրերումն էլ կան գուսաններ, ժողովրդական-ռամկական ազգային բանաստեղծ երգիչներ, տաղասացներ, աշուղներ:

Դեղաբու-եռաբան Բարսեղ-Լիւնը հայոց մէջ ներկայումս այնքան էլ զարգացած չէ, ինչքան հարկուէր է: Եղակի դեր են կատարում հայ բանաստեղծական աշխարհում Հ. Անոնի Ալիշանի, Ռ. Պատկանեանի, Մ. Պէշեքթաշեանի գրուածները: Ամենքին յայտնի են Նահապետի «հայոց աշխարհիկը», «Բլբուլն Աւարայրին», «Ճրագդանը», «Լուսնիկայն գերեզմանաց հայոց», «Շուշանն Շաւարշանայ» հոգեգրաւ քնարական-բանաստեղծութիւնները: Հ. Ալիշանը առաջինը եղաւ, որ զրաբարը թողնելով երգեց աշխարհիկ լիզուով—

«...Քանց պարուսեակ պսպրդուն,
Ի մէջ մանրիկ ամպերուն
Քանց Երասխայ նունուֆար

Գլխիկն ի ցող շարուշար
 Քանց զամենայն այլ գեղեցիկ,
 Նազի Սանդուխտըն բամբռիկ.. »

Ինչ գեղեցիկ բան, ղիւցաբանութիւնը, պատմութիւնը, վսեմն ու գեղեցիկը բանահիւսկի, երգել հասարակ, պարզ, հասկանալի ու երբեմն ռամկական լեզուով:

50-ական թուականների երիտասարդութեան մէջ Պէշեքթաշլեան հետեւեց Հ. Ալիշանի շաւղին և իւր քաղցրախօս շրթունքներով երգեց ազգային միութեան, թատրոնի և ընկերակցութեան վերայ: Վերջապէս Պատկանեանն էր, որ իւր ազատ ու սուր գրչով, որպէս ազգի ժամանակակից զգացմունքների թարգման, երգեց «Ծիրուկ վանեցի», «Բողոք առ Եւրոպա», «Մշեցու նոր սերունդ», «Հայերիս թուքը» և այլ հայրենասիրական տողեր: Քնարական գեղարուեստական բանաստեղծական շրջանի մէջ Գամառ-Քաթիպայի զլուխ գործոյը կարելի է հաշուել «Վարդան Մամիկոնեանի մահը»: Հարազատ մշակներ են եղել ժամանակիս մեր գեղարուեստական տաղաշափական բանաստեղծութեան անդաստանում նաև Շահ-Ազիզ, Դուրեան, Նալբանդեան, Սադաթեան, Յովհաննիսեան, Զոպանեան, Մատուրեան, Թումանեան: Ս. Շահ-Ազիզի «Լևոնի վիշտը» իւր ամբողջութեամբ մի կատարեալ զիտակաբանական (վարդապետական, խրատական) բանաստեղծութիւն է: Մ. Նալբանդեանի «Ազատն Աստուածը» հայրենասիրական երգերի մէջ անման է: Պ. Դուրեանի «Միրեքէք զմիմեանս» ոտանաւորը գրաւիչ ու գեղեցիկ է: Մ. Սադաթեանի հայացրած «Դէր» գովելի է: Յ. Յովհաննիսեանի «Հայրենասէրը» հրաշալի է: Ա. Զոպանեանի «Տաղքը», Յ. Թումանեանի «Աղթամարը», Ա. Մատուրեանի «Զէյթունի հրդէհը» իսկապէս արժանաւոր բանաստեղծութիւններ են: Այս բոլորը անվերջ գովել են տալիս իրենց շնորհալի հեղինակների բնատուր ձիրքը:

Բէլլէֆօլէֆէլայի կողմից հայ ասպարիզում մեր ժամանակում յայտնի են որպէս վիպասաններ՝ Աբովեան, Ռաֆֆի, Պօզեան, Ծերենց, Աղայեան, Ասրպետեան, Մուրացան, Շիրվանզադէ, Գէորգ Զուբար, Նար-Դոս, Սրբուհի Տիտար և այլք։ Աբովեանի «Վէրք հայաստանին», Ռաֆֆու «Մամուլը», «Կայծերը», «Դուռից-Բէկը», Պօզեանի «Սօս և Վարդիթերը», «Հացի խնդիրը», Ասրպետեանի «Ալմաստը», Ծերենցի «Երկունքը», Մուրացանի «Խորհրդաւոր միանձնուհին», Շիրվանզադէի «Զուր յոյսերը», Զուբարի, Նար-Դոսի պատկերները, տիկ. Տիւսարի «Սիրանոյշը» մեր արդի գրականութեան ընտիր գրուածներն են և արժէ նոցա կարգաւ։

Թաթերական Գրականութիւնը շատ յետ է մեղանում. յետ է ոչ անյաջողութեամբ, այլ սակաւ զարգացողութեամբ։ Բանաստեղծութեան այս ճիւղի ուշ զարգանալու պատճառը կեանքի աղքատութիւնն է։ Մտաւոր ու գեղարուեստական զարգացումը մեր ժողովրդի մէջ առաջ չի գնացել, դորա համար բեմը, որ այդ տեսակի զարգացման ներկայացուցիչն է, մնացիլ է աղքատ։ Պատմական-ողբերգական ինքնուրոյն գրուածներ մեզ տուել են՝ Յակ. Կարինեանց, Խորէն եպ. Դալֆայեան, Մ. Պեշեքթաշլեան, Ս. Հէքիմեան և այլք։ Ժամանակակից կեանքից պիտաներ ստեղծողը տեղական բարբառներով միակն է մեր ծերունի գրամատուրգ Գ. Սունդուկեանը։ Ինչքան որ մեծ սիրով ընդունեց հայ գրագէտ ու թատրոնասէր հասարակութիւնը պատկառելի թատերերգուի «Պեպօն», «Բանդուած օջախը», «Խաթաբալան», նոյնքան, կարծես, սառն ընդունելութիւն գտաւ նորա «Սմուսիներ» անունով մի նոր երկը։ Կոմեդիաներ, օպերաներ, վոդևիլներ մեզ տուել են է. Տէր-Գրիգորեան, Ս. Ասրպետեան, Փառնակէս, Վ. Մալաթեան և այլք։

Չմոռանանք խօսել այստեղ մեր Բարգմանական Գրական-Ֆեան մասին: Հայ գրականութեան մէջ եղել են և կան այժմն էլ, թէև քիչ, բայց շնորհալի թարգմանիչներ, որոնք շարունակ թարգմանութիւններ անելով մեզ ծանօթացնում են եւրոպական շատ նշանաւոր հիշնախների և նոցա գործերի հետ: Մի կողմ թողնելով Վենետիկեան վերապատուելի հարց թարգմանութիւնները, որ օտար լեզուներից թարգմանելով գրաբար, նոյնքան անհասկանալի են թողնում այժմեան մասազ գրականութեան, դառնանք միւս նշանաւոր թարգմանիչներին: Բայց չմոռանանք շեշտել, որ հ. Թումաճեանի թարգմանութիւններից «Նոմերի Ուլիսականքը», Վետայի «Քրիստոսականքը» պատիւ են բերում Հայ թարգմանութեանց իրենց հարազատութեամբ ու ներդաշնակութեամբ:

Թիւքահայերի և Ռուսահայերի մէջ նշանաւոր թարգմանիչներ են Մ. Մամուրեան, Կ. Իւթիւճեան, Գ. Չիլինկիրեան, Փ. Վարդանեան, Գ. Բարխուդարեան: Մամուրեան տուել է մեզ Դիւմայի, Ժիւլ-Վերնի և այլոց ընտիր հիշնակութիւնների թարգմանութիւնները, բազմաթիւ հատորներով: Իւթիւճեան—Էօթէն-Սիւի «Թափառական հրերեան» է տուել մեզ, Գ. Չիլինկիրեան հիւզոյի «Թշուառներն» է թարգմանել, Վարդանեան Սմայլսի, Սմիչիսի, Իրուինգի և այլոց յայտնի գրուածները. Բարխուդարեան իւր Շիլլերով ու Լեսինգով արդէն փառաւոր տեղ է վայելում մեր դրամատիքական թարգմանական գրականութեան մէջ:

Հայկական գրականութեան նշանաւոր ծիւղերի մասին խօսելով, մեր խօսքը մասնաւորեմք Հայ գուսանական բանաստեղծութեան վերայ, նորա անցեալի և ներկայի վերայ առ հասարակ: Սուաջիները ապագայում կ'ընդարձակուեն, կըզարգանան, կըբարգաւաճեն, բայց գուսանական անգիր բանաստեղծութիւնը, աշուղական երգն ու տաղը,

ռամկական-ժողովրդական թափառական երգիչ-հրաժիշտների ստեղծագործած երգերը այսուհետև դժուար թէ ապրեն, կարծես, դոքա հետզհետե վերջանում, կորչում են: Դժուար է հաւատալ թէ այսուհետև էլ նշանաւոր երգասաց աշուղներ կրճնեն: Ուրեմն ընդունելու է, որ այժմեան աշուղները թանկագին յիշատակներ ու մնացորդներ են հին դարու մեր Գողթան երգիչների:

Ինչ է ժողովրդական երգը կամ ո՞վ է ժողովրդական երգիչը՝ աշուղը, ահա մի հարց, որի բացատրութիւնը թէև պարզ, բայց ծանր է:

Ժողովրդական աշուղը ստեղծուել է հայոց մէջ դեռ շատ դարեր առաջ: Բանաւոր գրականութեան հիմքն ու հաստատութիւնը դրել և հասցրել են մինչև գրաւոր գրականութիւնը մեր ժողովրդական բանաստեղծները, երաժիշտ երգիչները, մի խօսքով աշուղները: Պատմական և ժամանակակից հարուստ նիւթեր բերնից բերան առնելով մինչև մեր պատմագիրները աշուղներն են հասցրել: Մար-Աբաս Կատինա, Խորենացի և այլք, իրենց պատմութիւնը գրելիս մեծ օգուտ են ստացել հայ զուսանների բանաստեղծութիւններից, երգերից ու տաղերից: Վերջինս իւր պատմութեան մէջ զովեստով է խօսում Գողթան երգիչների մասին: Արտաշէս Բ-ի մասին խօսելիս արժանայիշատակ պատմագիրն ասում է. «...Արտաշէսի վերջնոյ գործ բազում ինչ յայտնի է քեզ 'ի վիպասանացն»։ Այս խօսքերից կարելի է եզրակացնել, թէ Արտաշէսի գործերի մասին, Խորենացու պատմութիւնից առաջ, ժողովուրդը շատ բան էր լսել վիպասաններից՝ զուսաններից: Ժամանակակից ոչ մի նշանաւոր դէպք, ոչ մի յայտնի արկած անտես չէ անցել հայ աշուղների հոգւոյ աչքերից: Օրուայ ամեն մի գործ, ամեն մի շարժում, մարմնացել կեանք ու հոգի են ստացել հայ աշուղի բերանում: Հայ հերոսների, հայ զիւցազուների քաջագործու-

թիւնները գովում, փառաւորում է հայ աշուղը: Վահագնի, Տորքի, Արտաշէսի նման քաջերի վերայ հիւսած բանաստեղծութիւնները մինչև այժմ մեծ բաւականութեամբ կարդում է հայ բանասէրը: Ում յայտնի չեն Վահագնի վերայ հիւսած երգերը՝ «Երկնէր երկին և երկիրը», Արտաշէսի և Սաթինիկի հարսանեաց ճոխ նկարագրութիւնը, վերջինիս Արգամի հետ ունեցած սիրային յարաբերութիւնը, կամ թէ Արտաշէս արքայի անէծքը որդուն և այլն: Ափսոս, հազար ափսոս, որ մի քանիսն են զայանից միայն հասել մեզ: Գիր, թուղթ, մամուլ, այս ամենը երազել անգամ չէր մտածում նախնի ժողովուրդը:

Յայտնի է, որ հին դարերում յունաց, պարսից և հռովմայեցոց երևելի բանաստեղծները, ժողովրդական հագներով երգիչները քնարները ձեռքներին մեծ քաղաքների փողոցներով ման էին գալիս, նուագելով ու երգելով ժամանակակից նշանաւոր դէպքերն ու դիպուածները, անմահացնելով օրուայ հերոսներին: Խնջոյքներում մեծ բաւականութիւն էին պատճառում թագաւորներին, իշխաններին և ժողովուրդին: Սյսալիսի հռչակաւոր աշուղների անունները անմահած են պատմութեան մէջ, և հասել են մինչև մեր օրերը:

Հոմերոս, Հեսիոդոս, Որփէոս ամբողջ Յունաստանը ոտի տակ էին տալիս, ման գալով, իրենց հոգեվարար ասացուածներով ու նուագելով անմահացնում, մինչև եթերի եօթներորդ յարկը բարձացնում Եդիական պատերազմի հերոսներին: Արեաց երկրի Փիրգովսը Շահ-Նամէի քաղցր ու թովչարար խօսքերով հոգի ու կեանք էին ներշնչում, արևի երկրպագուներին: Պարսիկ աշուղներից Փիրդովսի և Հաֆիզի բանաստեղծութիւններից մեզ հասել են մի քանի կտորներ:

Յունաց չափ ոչ այնքան հարուստ է մեր անցեալը երևելի բանաստեղծ-երաժիշտներով, կամ աշուղներով:

մանաւանդ ողբերգակ աշուղներով, որոնց եղերերգութիւնը փշաքաղում է մարդու սիրտը: Ոչ միայն հոմերոսի, որ յունաց երաժիշտ-բանաստեղծների նահապետն է, այլ և Ոլիմպիոսի, Լինոսի տեղ էլ մեր պատմութիւնը սոցա ժամանակակից մեզ զոնէ մի աշուղի անուն չէ տալիս «...Քանդի սուր և հուղարկութիւնք թշնամեաց և անգաւաւար պատերազմունք, ոչ միայն զմերայնոցն վսեմական մտաց ծնունդ՝ հողմոյ, հրոյ և սահանաց ջուրց ետուն, այլ ոչ քար թողին 'ի հայաստան 'ի քարի վերայ».— իբրում է զխանական էմինը: Մեր ամեն մի պատմագիրը չէ մոռացել և անհրաժեշտ է համարել իւր պատմութիւնն սկսելու Ադամից, բայց մոռացել կամ աւելորդ են համարել յիշել իրենց ժամանակակից տեղական երգելին ու տաղերը, ժողովրդի բարք ու վարքը, նիստ ու կացը և այլ սովորութիւնները: Բայց զա հին ցաւ է: Գողթան մուսաների ասացուածներից մի շարք հատորների տեղ մեր բանաւոր գրականութիւնից մեզ մնացել է քանի մի հրգ միայն, այն էլ մեծ մասամբ շնորհիւ մեր մեծ պատմահօր Խորենացու, որ մի քանի նմուշներ հաւաքել և զետեղել է իւր պատմութեան մէջ: Ուրեմն մեղադրելի չէ, որ մինչև վերջերքս օտարները կարծում էին, թէ հայերը հին ժամանակում բոլորովին զուրկ են եղել բանաստեղծութիւնից:

Աշուղները ժողովրդական երգիչներ են, որովհետեւ երգում են ժողովրդի սիրած դաղափարներն ու զգացմունքները: Աշուղներն առ հասարակ նստակեաց կեանք չեն վարում, այլ թափառում են ժողովրդի մէջ, քաղաքից-քաղաք, գիւղից-գիւղ, ապրում են նոցա մէջ և մասնակից լինում նորա թէ՛ ցաւերին, թէ՛ ուրախութեանը: Բնականաբար նոցա հրգերի նիւթը դառնում է ժողովրդի կեանքի ժամանակակից պատկերը: Աշուղները արտայայտում են նոր մտքեր և յայանում իրենց սեփական գա-

ղափարները իբրև քարոզ և աշխատում են տարածել ժողովրդի մէջ. այդպիսով աշուղն հանդիսանում է իբրև մի նուիրական անձն ժողովրդի աչքում, իբրև վսեմի և գեղեցկի կատարիչատիպը պատկերացնողը: Ուրիմն գուսանը ստանում է երկու նշանակութիւն. նախ՝ արտայայտելով ժողովրդի կեանքը, զաղափարները և լեզուն, երկրորդ՝ տարածելով իւր անձնական զաղափարները և ոգևորութիւնը: Ժողովուրդը, ռամիկ դասակարգը, ամբօխը աշուղի խօսքերը պատգամի տեղ է ընդունում, աշուղի անկեղծութեան հաւատում, նորան յարգում, մ. ծարում: Անկյայտնի փաստ է մեզ, որ պատմութեան մէջ պատահում ենք այնպիսի բարձրաստիճան հայ հոգևորականների, քարոզիչների, որոնք ժողովրդի, հասարակութեան աւելի ներքին խաւերի մէջ ազատ մտնելու համար, անվախ քարոզելու, խրատելու հաւատ, սէր, յոյս ներշնչելու համար աշուղի, թափառական գուսանի շորերով ու կերպարանքով էին մօտենում: Պատահում են գուսաններից այնպիսիները, որոնք իրենց կոչման հակառակն են գործում. սորա պատճառը նոյն իսկ ժողովրդի անցեալ գրութիւնն է. այսպիսիներին պէտք է համարել բացառութիւններ:

Վերջին ժ—ԺԶ-րդ դարերում հայոց մէջ աւելի ծաղկած զրութեան մէջ էր ժողովրդական բանաստեղծութիւնը: Բազմաթիւ գրչազիր տաղարաններ, փունջեր ու դափտարներ լի են մեր ձեռքերում: Յանկալի էր պարբերաբար լոյս ընծայել, լիովին ուսումնասիրել մեր քնարական բանաստեղծութիւնը: Լուսահոգիք Գ. Հախութեղեան, Մ. Միանսարեան, առաջինը «Մայեթ-Նովայ» և երկրորդը «Քնար Հայկական» անունով գրքեր լոյս ընծայեցին: Ինչպէս և վերջերքս Կ. Կոստանեան, Գ. Լեոնիան լոյս ընծայեցին նոյն տեսակ ժողովրդական երգերի հաւաքածուներ: Առաջինը Յով. Թլկուրանցու և այլոց, երկրորդը «Հայ աշուղների» մասին մի համեստ, բայց հում տեղե-

կութիւններ, կենսադրութիւններով հանդերձ: Բազու քաղաքում Գրիգորեան Տէր-Գրիգորը տասը տարուց աւելի է, ինչ պարբերաբար հրատարակում է աղղային-ժողովրդական աշուղական երգեր «Սոխակ» անունով հատորների մէջ:

Տաղասացների մէջ նշանաւոր են եղել՝ Յովհաննէս Թլկուրանցին, Խաչատուր Կեչառեցին, Նաղաշ Յովնաթանը, որոնց մասին պատահում ենք Հ. Ալիշանի «Յուշիկներ»-ի մէջ. աւելի մանրամասն («Ճայ աշուղներ») գրքում: Թլկուրանցին, Կեչառեցին, Նաղաշ Յովնաթանը թափառական աշուղներ չեն եղել, այլ նստակեաց քնարերգակ բանաստեղծներ: Վերջինիս լեզուն աւելի գուհիկ է և ուամկական: Ահա Նաղաշի տաղարանի յաշատակարանը:

Ես, տրուպ Նաղաշ Յովնաթան,
Գծագրեցի զայս տաղարան,
Խաղ և տաղեր աղնուական
Խրատ և խօսք ծիծաղական
Եւ ծաղկեցաւ նման գարնան,
Ձեռամբ տղայ իմ Յակոբեան
Պատկերներով տնօրինական
Մաղկօք և Թռչնօք զանազան
Ի վայելումն Յարութեան
Փոքր որդոյն իր սիրական:

Իսկապէս, բառիս բուն նշանակութեամբ, վերջին դարերումն հայ աշուղների մէջ առաջին և նշանաւոր տեղը բռնում է ԺԼ գարու սկզբների Սայեաթ-Նովայ անունով տփիսիսեցի աշուղը, որ երգում էր վրացերէն և հայերէն: Մօտ երկու հարիւր տարուայ ընթացքում, այսինքն մինչև այժմն ունեցել ենք աւելի քան հարիւր աշուղ, որոնց շատերը մնացել են մեզ անձանօթ, մեծ մասամբ հայերէն երգ չունենալու պատճառով: Ժողովրդականութիւն ստացած և հռչակ վայելող հայ աշուղներից նշա-

նաւոր են Սայեաթ-Նովայ, Թուրինջ, Միսկին-Բուրջի, Շիրին և վերջապէս մեր ժամանակակից Զիւանին. իսկ զուտ Հայերէն երգերի մէջ Զիւանին բռնում է ամենապատուաւոր տեղը: Մեր խօսքը դեռ աշըղ Զիւանու մասին չմասնաւորեցրած, մի քանի խօսք չինայէնք պարզելու մեր այն միտքը, որ սկզբում գրուած Հարցերի եզրակացութիւնն է:

Ժողովրդական կեանքի, Հասարակական-աւանդական բանաստեղծութեան տիպարն, կենդանի Հայելին է աշուղը, Հասարակաց երգիչը: Կենդանի խօսքերի քարոզիչ, ամբոխի վշտի և ուրախութեան ներկայացուցիչ, անձամբ ամեն խաւերի մէջ մտնող հրապարակախօս է աշուղը: Աշուղը բարձր, անհասանելի, անձեռնահաս դադափարների, ոլիմպոսների, երեւակայութիւնների, օգային ամրոցների հետ զործ չէ ունեցել: Նորա երգերի և ասացուածների նիւթն է կազմել ժողովրդի ժամանակակից գրութիւնը: Հասարակութեան բախտաւոր, ուրախ միջոցներում աշուղը հրճուել է, ուրախացել է, երգել է անհոգ, ուրախ, երջանիկ, ինչպէս Անակրէոսը: Նոյն Հասարակութեան կեանքի դառն հանգամանքներում, զանազան ճգնաժամերի մէջ, օտարների հալածանքների, մահ տարածումների միջոցին աշուղը նորա ցաւն ու դարձն է երգել, նորա ցաւերով է էրուել խորովուել: Մի խօսքով աշուղը ժողովրդի ժամանակագիրն է ու արձագանքը: Աշուղի մէջ կեղծ չկայ, նորա սիրտը ապակու նման փշրուող է ու ջրի նման պարզ ու թափանցիկ և ոսկու նման մաքուր: Աշուղը ժողովրդի մշակն է, Հասարակութեան չարքաշ աշխատաւորը: Սաթիւթ-Նովէն ասել է, թէ «խալխի նոքար» է երգիչը:

Զխօսենք այստեղ երաժշտութեան բնախօսական ազդեցութեան մասին, թէ ինչպէս երաժշտութիւնը, լաւ երգեցողութիւնը ազդում է ոչ միայն բանական մարդու, այլ և անբան անասունների վերայ: Ասում են՝ «Երբ որ

Որփէոսը երգում և նուազում էր տաւղի վերայ, ծառերը, գետերը, ծովի կատաղի ջրերը և վայրենի անասունները զաղարում էին շարժուելուց և հիացած՝ Որփէոսի գեղեցիկ նուագածութիւնն էին լսում»։ Աշուղը հէնց երաժշտութեան ազդեցութեամբ, իւր մուգիքով բաց է անում ունկնդիր անձանց սրտերը, գրաւում նոյա ուշադրութիւնը և ապա իւր խօսքերն ուղղում։ Իրենց երգերն աշուղները երգելով են տարածում։ Եթէ մի լաւ ոտանաւոր, մի տաղաչափական գրուած կարգալիս մարդ զգացվում է, փոխվում, ի՞նչ գրութեան կարող է լինել, երբ նոյն տենդենցիական ոտանաւորը լսվում է մելամուղձիկ եղանակի վերածած և ասիական նուագածութեան ներգաշնուկութեամբ։ Սակաւ չեն այն օրինակները, որ երաժիշտ-երգիչները՝ այսինքն աշուղները՝ իրենց երգ ու նուագով ինչէր են արել, ի՞նչ քար սրտեր փափկացրել, ինչ դուռը ու բռնակալ միապետների աչքերից արցունքներ թափել առել։ Ո՞ւմ յայտնի չէ Ուլանգի «Երգչի անէծքը», կամ նոյնչափ սրտաշարժ «Կոյր երգիչը», Մեր Լաբիրիոսը Կեսարի առաջ կամ թիւրքահայ յայտնի աշուղ Նիտային Սուլթան Մահմուդի առաջ իւր «Զեղվի գիւնիւր» ողբերգով։ Վերջապէս Պատկանեանի «Քեօրօղլուն», այն գեղեցկահիւս տաղաչափական վիպասանութիւնը, որի մէջ բաղմականք ինկրում են աշուղին—

«Աշուղ, բլբլն է քեզ աւանդել իր քաղցր լեզուն,
Կերովբէն է դիպել իւր սուրբ մատներով քու սիւմ լարերուն...»

Մեր խօսքն հաստատում է հոգեկոյս մեծ պոէտը
աշուղի վերաբերմամբ յայտնած կարծիքով—

«Աշուղի լեզուն դրիստն է ասում ամեն մի բանին,
Իր անմեղ հոգին օսկով չի ծախում նա Մամոնային,
Միշտ մէկն է ասում նա՝ Թէկուզ եարին, Թէկուզ դուշմանին,
Զի վախում խօսել դրիստն առաջի ահեղ ատենին։

Աշուղն ամենի խաթրին գլուխը զուրբան է դնում,
 Տխրած որ տեսնի՝ ինքն էլ նրա հետ անկեղծ է տխրում,
 Ծիծաղողի հետ ինքն էլ է իսկոյն ուրախ ծիծաղում,
 Հաղով ծնել է մօրը արգանդէն, հաղով է մեռնում,
 Աշուղը թէկուզ եաշովըն իլի հարիւր տարեկան,
 Նրա միամիտ, պարզ հոգին մնում է միշտ մանկական...»

Մի ուրիշ բանաստեղծ այս խօսքերն է նուիրում
 աշուղին—

«Դիտենք որ դու միշտ տանջվում ես հազար ու մի ցաւերով,
 Հալրենիքիդ խոր խոցերը դու համրում ես դարերով...»

Ժամանակի հոսանքը ամեն ինչ կերպարանափոխում է. դարերը միմեանց յետեից զլորուելով, ժողովուրդներին էլ իրենց հետ են յարմարեցնում: Մեր ամենահին աշուղները դեռ հեթանոսական ժամանակներից մինչև ԺԴ-րդ դարը մեծ մասամբ երգում էին աւելի ազգային կիսնքից, գովելով, փառաւորելով հայ քաջերի յաղթութիւնները կամ նահատակութիւնը: Մեր ազգային քաղաքական անկումից յետոյ մինչև դարուս կէսը մեր աշուղների, մանաւանդ Պարսկաստանի և Տաճկաստանի հայ աշուղների, երգերի, տաղերի ու խաղերի նիւթը կազմվում էր շատ սակաւ ազգային կամ հասարակական, այլ մեծ մասամբ կրօնական և սիրոյ բովանդակութեամբ: Վերջերում միայն սկսուեց հովուերգական երգեր շինուելը: Տեսնում ես այս շրջանի աշուղների մի երգը հիւստուած է գիցուք Փրկչի Խաչելութեան կամ Յարութեան վերայ, միւս երգով նա գովում է իւր «սիրականին», իւր «գեօղալ եւրին», իւր «աննմանին», իւր «աղունիկ»-ին: Այս շրջանի աշուղներից միայն մի քանիսը, մեծ մասամբ ուսումնասիրելից, գրի են առել նաև քանի մի աղետաբեր դէպքերի նկարագրութիւններ. համաճարակի, Իսլամի ժառանգներից ստացած նեղութիւնների մասին, ինչպէս Աղա-Մահ-մէդ-Խանի արշաւանքը և այլն:

Բերենք այստեղ մի քանի փոքրիկ կտորներ ժամանակագրական կարգով ծանոթացնելու մեր ընթերցողներին Հայ աշուղների երգերի, նիւթի և լեցուի հետ:

—Ահա տեսէք զհիշ կայր նաւին՝ որ նաւն ուռաւք զա՛ր, Ահա տեսնին վէպ կ'ւր նաւին. նաւն 'ի ծոզին, ծոզն ի տակին, տակն աւազին, որ կու ծփայր ծոզն. Ահա ցնծալոր ծոզն ու ծփա՛ր ալի զալին տալր. . .

($\oint$ - r q u).

— Ես զձեզ տեսայ սիրով նստած
Արևնման արեգական.
Զինչ որ բաղջալ, որ կալ ի ներս
Վարդ ու շուշան պայծառ ծաղկունք:
Աշուեր ունիք զինչ ծովերուք
Յունքեր ունիք զինչ թուխ ամպունք
Շողման կլափ ու լար շրթունք
Ու մարգարտեղար առամունք. . . »

(ժե-րդ դար).

—Արի, իմ եարս, արի,
 իլլա՞ծ ու ձարս, արի,
 Կարօտե՛լ եմ քո տեսող
 իմ բաժնդարս, արի. . .
 Դու կանաչ խնկի ծառ ես
 Դու քան լուսին պայծառ ես
 Դու՝ իմաստուն, ձարտար ես
 ձարտար նազանի, արի. . .

(ϕ 2-րդ դասը).

— Նազըն տիւյան, զաւրմ քեաֆիր, թուի աչնր.
Յճը չես իգար, օրեկ մի զիս հարցաներ.
Շատ եմ քաջ զարդ ու զախիր քեզ համար,
Սպիտակ ծակատ, բարակ ունքերդ է կամար. . .

(Ժէ-րդ դար).

—Շատ երկիր ժուռ էկայ, շատ երկիր տեսայ,
Զըկար նմանակդ Մայր Աստուածածին.
Թողումին շնորհեց դաս մեղաւորաց,
Մեղաց փառատող ես Մայր Աստուածածին...

(ԺԸ-րդ դար).

—Գիշեր՝ ցերեկ քո խասրածը կու քաշեմ,
Նասիւր ըլի՝ տեսնամ սուրբ Էջմիածին
Քո խասրածէն կու լամ՝ արտասունք կու թափեմ,
Նասիւր ըլի՝ տեսնամ սուրբ Էջմիածին...
Ոխտը գիւթան ունի, կ'անի ընդար ցանքը,
Թուղթ, կիր, քար կրողը շինեւ է վանքը,
Եկեցէք, տեսեցէք Աստուծոյ կամքը,
Ուխտ անեմ՝ խամբուրեմ սուրբ Էջմիածին...

(ԺԹ-րդ դարի սկիզբներին).

—Հոգի ջան, նոր բաց էլած վարդ մանուշակ ես ինձ համար,
Զեմ ուզիլ լոյսն արևու, դուն արեգակ ես ինձ համար.
Անմահական ջուրերով, լեցուն բաժակ ես ինձ համար,
Պատուական մարգարիտով, կազմած պսակ ես ինձ համար...

(ԺԹ-րդ դարու կիսերին).

—Օտարի բնական գիտումինիցը,
Իմ հայ պապի տուած խրատը լաւ է.
Փարիզու զարդարուած քառանկինիցը,
Ինձ համար Անույ մէկ պատը լաւ է...

(Մեր օրերում):

50-ական թուականներից այս կողմ հայ աշըղու-
թեան գլխական ասպարիզից հաւասարապէս, բայց ոչ իս-
պառ, վերացուելով կրօնականն ու սիրահարական ասա-
ջուածները, երգի, տաղի և ոտանաւորի նիւթ դարձաւ
աղբային ժամանակակից կեանքն ընդհանրապէս: 60-ական

թուականների սկզբներին, Թիւրքիայի հայ ամիրաների, ջոջերի և ինտելիգենցիայի հետ աշուղն էլ իւր ուրախութիւնն յայտնեց ազգային սահմանադրութեան համար: Այն օրերից մինչև այսօր մեր բանաստեղծ երգիչները երգում են մեծ մասամբ հայկական կեանքի և զանազան խնդիրների վերայ: Այո, այժմեան աշուղները երգում են բարոյական, կրթիչ երգեր, խրատներ, նոր մտքեր, մինչև անգամ փիլիսոփայական բնաւորութեամբ: Հին, նշանաւոր, առականս ու հանձարեղ մարդկանց խօսքերն իրենց նշանաբան ունենալով, երգում են որպէս քարոզ մի որոշ վարդապետութիւն: Իրերի այս վիճակում, երբ ազգային հարցը հետաքրքրում է ամեն մի հայի, երբ ամեն ոք աշխատում է իւրովսանն տալ ազգին, ըստ անմահ բանաստեղծի՝ «հարուստը՝ ոսկի, ուժը՝ պատանին», ազգի տառապալ մշակը, հայ ժողովրդական աշուղը չէ կարող անտարբեր մնալ. նա թողնում է իւր «աղունիկը», իւր սիրելի «աննման ետրը» և երգում է «հայրենիք», «Սէր», «Միութիւն», «Եղբայրսիրութիւն», «Գործ»: Քահանայի քարոզը, հրապարակասօսի խմբադրականները, գրողէտի, ուսուցչի յօդուածներն ու խօսքերը, ժողովրդի ստորին և միջին դասակարգը, ամբօխը քանի որ տեղտ է, անգրագէտ է, չէ կարող հասկանալ: Այստեղ գործ կատարողը, նորան խօսք հասկացնողը, նորա լեզուով խօսողն և չարն ու բարին ցոյց տուողը մնում է ժողովրդի աշուղը: Գիւղական հասարակութիւնները, ի հարկէ հայաշատ տեղերում, աշուղներից են տեղեկութիւններ լսում: Նա թափառական է, նա կենդանի մամուլ է. նա ամեն ինչ գիտէ: Մեծամեծ ու փարթամ տներից սկսած, բարձրատիճան անձերի տներից սկսած՝ մինչև շինականի խրքձիթը ել՝ ու մօտ ունի նա: Ժողովրդի աշուղը ազատ է. նա շատ բան կարող է անել, եթէ ուզենայ: Նորան պատվում, յարգում ու սիրում են ամեն շրջանում: Գիւ-

ղական օճախներում, սուփրի զլխին է նստում աշուղը և ուրախացնում, հեռաքրքիր տեղեկութիւններ տալիս ունիւղիրներին: Վերևում էլ յիշեցինք, թէ աշուղների սրտուի, զործելու յարմարութեան համար բաւական է յիշել պատմութիւնը, թէ մեր նախնի երանաշնորհ բարձրաստիճան հայրենասէր հոգևորականներից շատերը, երբ ուղում էին յուսահատ ու սանջուող ժողովրդին մխիթարել, ուսուցանել, սէր, միաբանութիւն քարոզել, քաջութեան ու հայրենասիրութեան հոգի ներշնչել, անարգելք ժողովրդի ստորին խաւերի մէջ մանելու համար, աշուղի կերպարանքով էին ման դալիս, քնարները ձեռքերին, քաղաքից-քաղաք, զիւղից-զիւղ թափառում, մի և նոյն ժամանակ տիրող կառավարութեան արգելքներից ազատ ման դալու համար: Ահա թէ ի՛նչ մարդ է աշուղը, և ի՛նչ է աշուղութիւնը: Մեր ժամանակում հայ աշուղների վերջին և նշանաւոր ներկայացուցիչն է Աշըղ-Ջիւանին, որ այժմ Ռուսահայոց մէջ աղղային-հասարակական համեստ գործիչներից մինն է համարվում և մեծ հռչակ ունի վաստակած մեղանում:

Աշըղ-Ջիւանին ծնուել է 1846 թուականին Կովկասում, Ախալքալսկ գաւառի Կարծախ գիւղում, երկրագործ ծնողներից: Ութ տարեկան Սերովբէն (Ջիւանիի իսկական անունն է) յանձնվում է իւր հօրեղբօրը, որովհետև նորա հայր Ստեփանը վախճանվում է և ընտանիքը մնում է առանց պաշտպանի: Ջիւանիի (այսպէս էր կանչում հօրեղբայրը Սերովբէին) կարճ ժամանակ զիւղական դպրոցում սովորում է գրել-կարդալը: Հօրեղբայրը իրեն խնամքին թողնուած երիւս եղբայրների հետ վարվում է նոցա յանկութեան համաձայն: Քերօքը, որ Ջիւանու մեծ եղբայրն է, դնում է հովիւ դառնում իսկ Սերովբը, մեծ սէր ունենալով խաղ ու տաղի, երգ ու երաժշտութեան, զիւղ դալով աշուղներից սովորում է

ջութակ ածելը: Տեղացի աշուղ Սիւյին, որ իւր սե գէմք ունենալու պատճառով Ղարա-Ղաղար էր կոչվում զիւղացիներէից, յանձն առաւ Զիւանուն սովորեցնել սաղ զարները: Ի՞նչ կ'ասես, որ Զիւանին երաժշտութեան հետ զուգընթաց առաջ է տանում երգ ու սաղեր բանահիւսելը, խաղ կ'ապելը. աշխատում էր ոտանաւորներ զրելով ու եղանակներ յարմարեցնելով զարմացնել իւր վարպետներին: Թուղթ, թանաք էլ ճվ էր տուել մի աղքատ պատանու. աշուղը ածուխի կտորով էր զրում տախտակների վերայ, կամ այդ էլ չգտնուած ժամանակ՝ չէր զրում բոլորովին, այլ մտքի մէջ դատաւորում էր: Մի կտոր թուղթը նորա համար գանձ էր. տպուածները կարդում էր, լուսանկարների վերայ ոտանաւորներ, տողեր զրում, ու զորա հետ էլ քաղցր երգում:

Գիւղական սահմանափակ կեանքը կարծես ճշում էր պատանի երգչին. առաջ գնալ, կատարելագործուել էր ցանկանում, ասպարէզ չկար: Նօրեղբայր Աբրահամը նորան չէր ուղղում մտից հեռացնել. ուրեմն ոչ մի հնար չկար նշանաւոր աշուղների մօտ գնալու, լսելու, աշակերտելու նոցա: Վերջապէս բախտը վիճակում է Զիւանուն մի հրնարով Տփլիսի հասնել, որտեղ կատարելագործում է իւր երաժշտական արուեստը: Գիւղական կոպիտ մասներով տղան Տփլիսում բարեկրթվում, դառնում է կատարեալ ջութակահար արեւելան եղանակների: Այնքան ընդունակ էր, այնպէս սուր լսողութիւն ունէր, որ Տփլիսի պարսիկ աշուղների ածած եղանակները լսելով, անմիջապէս ածում էր իւր ջութակի վերայ: Զիւանու հօրեղբայրը՝ Աբրահամ տացուն տղէտ մարդ չէր, հրէ լսեց իւր սիրելի եղբորորդու յառաջադիմութիւնը, իւր սանիկի ունեցած յաջողութիւնը, ջուղեցաւ առաջն առնել, խոչընդոտ լինել նորան. երբ տեսաւ, որ նա արդէն զլուխը ճանաչում է, կրթուել, դարգանալ է ցանկանում, թողեց նորան իւր կամքին, հակառակ գիւղական սովորութեան:

1868 թուականին Աշըղ Ջիւանին թողնում է Վրաստանը և դիմում է Շիրակ, որպէս աշուղ, որպէս մի վառվառուն երգիչ. նա ունէր իւր սրաի սիրածը, իւր եարը, նա գտաւ իւր «երկնային ամպերու մէջ նստող ծիածանը», որի «փափագով վառվում» էր: Աշուղների նշանաբանն է չաեսաժ սիրահարուել, բուլթա առնել: 1871 թուին նա ամուսնանում է և բնակութիւն հաստատում Ալէքսանդրապոլում:

Կազմելով խումբ Աշըղ-Ջիւանին այդ ժամանակուանից սկսում է զուտ հայկական երգերի տարածմանն նրպաստել: Պէտք է ասել, որ մինչև Ջիւանու յայտնուիլը, այսինքն մինչև 60-ական թուականների վերջերը, բոլոր աշուղներն անխափր երգում էին տաճկերէն, պարսկերէն կամ վրացերէն լեզուով: Աշըղ-Շիրին էլ իւր կեանքի վերջերում սկսել էր իւր սիրուհու խնդրանք «հայեվար» երգել, բայց չկարողացաւ տարածել երկու պատճառով. նախ՝ որ ժողովուրդը լսել էր, որ նա թունդ բողբոջական է, զորա համար սրտանց համակրողները պակաս էին. երկրորդ՝ կոյր էր ու զիրք չունէր հասարակութեան առաջ: Բայց բարեխղճաբար պէտք է ասել, որ Շիրինի լեզուն քաղցր էր, լաւ հմուտ էր երգի և սաղ ածելու մէջ: Նորան պակասում էր մտաւոր զարգացում, որովհետև կարգալու հնար չունէր: Սյս ամեն թերութիւններից ազատ, Ջիւանին իւր ամբողջութեամբ նուիրուեց հայերէնին. յետ մղեց թուրքերէնը և փառաւորապէս հայ քրնարերգական բանաստեղծութեան, հայ աշուղական երգերի արժէքը նորից բարձրացրեց իւր ընկած դրութիւնից: Ընկած ենք ասում, որովհետև հայ ունկնդիրներն էլ ցանկանում էին թուրքերէն լսել, դոնէ այդպէս էին սովորել նախորդ աշուղներից: Բաւական է, որ քիչ-շատ հասկացող մարդն անգամ ասում էր՝ թէ «հայեվարը թուրքեվարի համը չունի, զուր բան է»: Ջիւանին՝ այս տգէտ

կարծիքը, որ արմատացել էր երգասէր Հայ ժողովրդի սրտում, հիմնայատակ արեց: Նա վարուեց խելացի, հայերէն երգերը յարմարեցրեց թուրքերէն այն եղանակներին, որ հասարակութիւնը միշտ պահանջում է, անգիր է արել:

Այստեղ պարզուեց, որ ոչ թէ համը թուրքերէնի մէջն է, այլ եղանակների. թուրքերէն բառերը, որ շատերը չէին էլ հասկանում, շատ անպէտք, համարձակ ու սիրոյ երգեր են եղել արեւելեան տափական բնաւորութեամբ: «Միւշտագէա» ուզողին նա հայերէնն էր երգում, «Քեօրօյլի» նոյնպէս, «Թոփսանա Դիւանի» խնդրողին դարձեալ: Ժողովուրդը տեսաւ իւր մայրենի լեզուի քաղցրութիւնը, հարստութիւնը: Ինչ լաւ բան. առաջ միայն եղանակների համար էր սիրում լսել, այժմ եղանակի հետ բառերը հասկանում, նոցանով մխիթարվում: Սորանով չքուակնացաւ Զիւանին, հայերէն լեզուի վերածեց ժողովրդի սիրած, մանաւանդ գիւղական հասարակութեանց մէջ ասուող, նոցա սիրելի հեքիաթները—«Աշըղ-Նարիբը», «Քեարամն ու Սալին», «Շահ-Իսմայիլը» և այլն: Այն երգասէր, վիպասէր Հայը, որ անգիր էր անում ու առանց լաւ հասկանալու երգում թուրքերէն աղճատուած ու կցկոտուր երգերը, ահա տեսաւ իւր սիրած բոլոր եղանակների համար պատրաստի, այն ևս տպագրուած հայերէն երգեր: Զիւանին, որ լաւ հմուտ է տաճկերէն լեզուին, այնպէս է փոխադրել, հայացրել հեքիաթները, որ մեծ բաւականութեամբ կարգացվում են: Շինական ու քաղաքացի ժողովուրդն արդէն երգում է հայերէն երգերը և գովում ու համակրում գործերի հեղինակին: Գիւղականի մէջլիսներում, յօդաներում, քաղաքացու խնջոյքներում այսպէս մտաւ հայերէնը և վերացաւ թուրքերէնը: Գիւղականին պարբերաբար «հեքիաթ»-ներ ու «երգարան»-ներ տալով, քաղաքացուն կենդանի խօսքերով խրատելով, Աշըղ-Զիւանին աւելի և աւելի մօտեցաւ ժողովրդի

սրտին: Մի խօսքով երիտասարդ Ջիւանին կարճ ժամանակում ճանաչելի եղաւ ամենին և բաւականին հռչակուելով դարձաւ հասարակութեան համեստ գործիչներից մինը: Ռամիկ ժողովրդի աչքում մանաւանդ այնքան բարձրացաւ Ջիւանին, ինչքան մի մեծ գիտնական ինտելիգենցիայի աչքում: Վերջին տողերիս հաստատութեան համար մի փաստ է հետեւեալ անեկզոտը, որ պատմել է մեզ մի երիտասարդ աշուղ:

Մի ասնի, Շիրակի հայաշատ գիւղերից միում, քահանայի տանը հաւաքուած են լինում տեղացի յայտնի մարդկանցից շատերը: Երիտասարդ աշուղը ներկայ է լինում այդ ուրախութեանը մասնակցելու իւր երգով ու երաժշտութեամբ: Քիչ անցած մի հիւանդ մարդ էլ են բերում խնջոյքի ուրախութիւնից մխիթարուելու: Աշուղը հարցնում է հիւանդի զրութիւնը և երբ լսում է, որ այդ մարդը վաղուց տառապում է այդ ցաւով, խորհուրդ է տալիս հիւանդին փոխադրել Ալէքսանդրապոլ: Երդիչը նոյնպէս չի մոռանում ասել, որ նորերումս քաղաք է եկել մի գիտնական, յայտնի հայ բժշկապետ, որ լաւ հասկանում է ամեն մի հիւանդութիւն, մեծ կրթութիւն ստացած մարդ է—և այլ գովասանքներ բրժշկի հասցէին: Հանգիսականներից մինը, որ աւելի զարդացած է երևում ընկերակիցների մէջ, աշուղին խօսքը կտրելով ասում է.

—Վարպետ, մէկ ճշմարտան ասա՛, այդ քո պատմած հեքիմն է աւելի շնորհքով, աւելի կարգացող, աւելի գրել խաւ աէր, թէ՛ Ջիւանին:

Աշուղը պատրաստվում էր պատասխանելու, երբ երկու հոգի միաժամանակ յանդիմանեցին խօսողին, թէ՛ «ինչ ես ասում, Ջիւանու հատը ողջ Ռուսէթը չի ճարուի. նա իւր շնորհքը Սատուածանից է ստացել»: Այս արդէն բաւական է յոյց տալու աշուղ Ջիւանու ունեցած համա-

րումը հայ գիւղերում և զիւղացւոյ զարգացման չափը, որոնք բժշկապետի և աշուղի տարբեր մասնագիտութեան վերայ ամենեւին զաղափար չունին:

Ասում են թէ մարդուս արտաքինը, կերպարանքը մեծ նշանակութիւն ունի քարոզչի գործերում: Որ քահանան, վարդապետը կամ աւելի բարձրաստիճան քարոզիչները պէտք է հասակով է՛լ գիրքով է՛լ համապատասխան լինեն իրենց պաշտօններին. ազդու ձայն, զրաւիչ դէմք ու բարեձև հասակ ու կազմուածք է հարկաւոր: Հասարակութեան, ժողովրդի համար մի քարոզչի, մի առաջնորդի հռչակ և գործ ունեցող Աշըղ Զիւանու արտաքինի մասին մենք լուծւում ենք. թող խօսի իւր վառվառուն զրչով Թիւրքիայի մեր զրազէտներից մինը՝ պ. Տիգրան Արփարեան իւր «Արեւելք» լրագրում.

«...Պոլսւոյ սրճարանաց մէջ, կամ խաներու անկիւնը, հազուադիւս կերպով մեր հանգիստած աշուղներն ընդհանրապէս աննշան դէմքեր կըլլան, ոգորմելի կերպարանքով. այդ տպաւորութեան տակ կըմտածէի թէ արդեօք դէմս պիտի ելլէր, քիչ բարեփոխութեամբ վտիտ երիտասարդ մը, կամ կորաքամակ ծերունի՞ մը, գլուխն ուսին դէպի աջ կողմը հակած, ձայնն անսուաղութենէ խռպոտած, կեղտոյ դէմքով և զույէ միակնանի: Անակրնկալ հաճոյք մը եղաւ ինձ տեսնել քառասուն տարեկանի մօտ անձ մը. բարեձև, բարձրահասակ, աւելի շէկ քան խարտեաշ մօզերով, կարմրորակ այտերով, բոցավառ աչքերով, հազած էր սև հրկար պարեգօտ մը (չեղքեղի) որուն տակէն դարձեալ սև ներքնարկ մը (արխալուզ). մէջքը կապած էր լայն քամար մը, ըստ տեղական սովորութեան և գլուխը դրած ուստիան շլապկա... Մէկ խօսքով գեղեցիկ մարդ մըն էր աշըխ-ձիւանո:

Այժմս, ինչպէս ասացինք, Զիւանին բաւականին հռչակ ունի ինչպէս Կովկասում, այնպէս էլ Ռուսաստանի

շատ հայաբնակ քաղաքներում: Որտեղ հայեր կան, Ջիւլանին ծանօթ է. Թիւրքիայի, Պարսկաստանի, Հնդկաստանի, Եւրոպայի, Ամերիկայի հայերի մէջ էլ հասել է Ջիւլանու անունն ու երգերը: Երևելի տաճիկ կամ պարսիկ արհեստակիցները մեծ յարգանքով են խօսում կամ մօտենում մեր մեծ աշուղին: Երկիւղածութիւնը տիրել է նոցա ու չեն վստահանում միջման մէջ մանել, թեկուզ արաբական ու տաճկական երգ ու եղանակների մէջ: Աշուղական արուեստին¹ իւր բոլոր մանրամասնութիւններով քաջ ծանօթ է Ջիւլանին:

Շատ սեղերում վաղուց արդէն կրգում են աշուղ-Ջիւլանու երգերը: Նորա «Բարի գեղեցիկը», «Այծեամբ», «Զախորդ օրերը», «Մեր գործերը» մեծ համակրութեամբ կրկնվում են այսօր մեր ժամանակում հայ ժողովրդի բերանում: Աշուղ-Ջիւլանու ցոյց տուած եռանկը, նորա կրգած ու տարածած մտքերը, այն օգուտը, այն արդիւնքը ցոյց տուին և կարող են տալ հայ հասարակութեան ու ազգային շարժումներին, ինչ որ զրազէտ մարդկանց կամ ընթերցող հասարակութեան համար մի օղջամիտ ու խկապէս ժողովուրդ առաջնորդը (և ոչ առաջնորդուող ու հոսանքի հետ քշուող) օրագիր: Ոչ միայն անուրանալի, այլ և գովելի է մեր երգչի գործունէութիւնը մանաւանդ վերջին տարիներում: սկսած 80-ական թուականներից: Մեր աշուղի գործերի արդիւնքը կրտսնէ մեր ապագայ սերունդը, ափսոս ոչ ազգային երգչի կենդանութեան ժամանակ:

Սկսած 1865 թուականից մինչև ներկայ թիւը, լրիւ 30 տարի հայ քնարական բանաստեղծութեան և հասարակական-գիտակտիքական երգերի մէջ Ջիւլանին ցոյց է

¹ Աշուղական արուեստին ծանօթանալու համար տես Հայ աշուղներ» Գ. Լևոնեանի:

տուեւ կատարեալ յառաջադիմութիւն: Մանաւանդ նորա փայլուն գործերից մինն է հայերէնի կատարելապէս տարածումը և թիւքերէնի վերացումը: 30 տարի շարունակ նա երգել ու նուագել է ազգի ժամանակակից դրութեան պատկերներից, նկարագրելով ու քննելով շատ անհատների գործերը: Անպաղար մտրակել է, սթափեցրել է, երեսներովը տուել «մարդաստեաց», «ընկերատեաց», «փողի կամ կնոջ համար կրօնը փոխող» ու «ազդուրաց» մարդկանց գործերը, չար դիտաւորութիւնները, մի բոլոր էջմտածելով, որ անթիւ թշնամիներ կարող է ճարել. այո՛, արել է այդ ոչ միայն գրելով, պատգուիլներով, կեղծ անուններով, այլ ճակատը բաց, անվախ, հասարակութեան մէջ, սրճարաններում, ընտանիքներում, երեկոյթների, խընջոյքների մէջ, բարձր երգելով ու նուագելով: Դորա հաւառակ հայրենասիրական ջերմեռանդ հոգւով նոյն տեսակ երգով ու նուագով սիրել, յարգել, պատուել, քաջալերել, երկինք է բարձրացրել «սկզբունքի մարդուն», «բարի, գեղեցիկ, առաքինի» ընկերներին, «սէր ու միաբանութիւն» ճանաչողներին, «մեր լեզուն, մեր եկեղեցին» պահապանողներին, «հաւատի և ազգի համար» զոհուողներին, «հայրենեաց հաւատարիմ մշակ»-ներին:

Աշուղ-Ջիւանին իւր ոչ մի երգը պատարկ տեղը չէ յօրինել, այլ մի պատճառ է ունեցել, մի պահանջ, մի բողոք կեանքի փոփոխուող հանգամանքներից: Կեանքի մէջ, առօրեայ գործերի մէջ ահա՛ ինչ որ կատարվում է, ամենը իւր գոյներով պատկերացրել է մոքի կտաւի վերայ, և արձանագրել ջութակի սիմերին: Մեկ շատ հեռու կըտանէր առաջ բերել այստեղ Ջիւանու երգերից շատերը, իրենց նշանակութիւններով և քննութեամբ: Բերենք մի քանի օրինակներ միայն, բացատրելով նոցա ամեն մի նի գրուելու պատճառն ու նշանակութիւնը: Հանդիպելով ձախորդ ու անյաջող օրերի, նա չի վհատում, փորձ-

ուած, էփուած ու անձնական փորձի բովից անցած, խրա-
խուսում է ու խարախուսվում—

Ձախորդ օրերը ձմրայ նման կուզան ու կերթան,
Վհատելու չէ, վերջ կունենան, կուզան ու կերթան,
Դառն ցաւերը մարդու վրայ չեն մնայ երկար,
Որպէս յաճախորդ՝ շարուեշարան կուզան ու կերթան:
Փորձանք, հալածանք և նեղութիւն ազգերի զխից
Ինչպէս ձանաաարհի կարաւան կուզան ու կերթան:
Աշխարհը բուրաստան է յատուկ մարդիկը ծաղիկ,
Որքան մանիշակ, վարդ, պալասան կուզան ու կերթան:
Ոչ ուժեղը թող պարծենայ, ոչ տկարը տխրի,
Փոփոխակի անցքեր զանազան կուզան ու կերթան:
Արեւը առանց վախենալու ցայտում է լուսը,
Ամպերը դէպի աղօթարան կուզան ու կերթան,
Երկիրը ուսնալ զաւակին է փայփայում մօր պէս,
Անկիրթ ցեղերը թափառական—կուզան ու կերթան:
Աշխարհը հիւրանոց է, Զիւան, ազգերը հիւր են,
Այսպէս է կանոնը բնական—կուզան ու կերթան:

Ինչ՞որ ասես որ չկան այս սողերի մէջ, ի՛նչ մաքեր,
ի՛նչ յոյսեր... Թոյլ տայ մեզ յարգելի երգիչը, որ այս
երգը իւր գրուածների chef d'oeuvre-ը համարենք, ընթա-
ցիկ՝ հոգսերի մէջ գրած երգերից:

Որքան էլ ասացինք որ մեծ դերք ու կշիռ ունի
Ժողովրդի, ամբոխի աչքում Զիւանին, նա չի շլանում
նորա ցոյց տուած յարգանքներից, կեցցէ՛ններից և երգում է.

Ամբոխի սուտ փայփայանքը

Երես անցնող մոխիր է.

Նրա տուած գովասանքը

Սառուցի վրայի գիր է. . .

Որ աշուղի սիրտը պարզ է ու պայծառ, որ նա ան-
նախանձ սրտով իւր թշնամիներին անգամ սիրում է՝
Հաստատում է այս երգը.

Տէր, տուր նախանձողիս շատ ոսկի ու արծառ,

Որ մոռանայ ինձի, չըխօսի ծուռ, ծուռ,

Տհւր նրան յաջող գործ, ամենայն շաբաթ

Զըբամբասէ ինծի, օքլի մնայ լուռ:

Իւր հակառակորդների, իւր թշնամիների կողմից կը-
րած զանազան վշտերը լցնում են մեր աշուղի փափուկ
սիրտը. նա խոր զգածուած զայնում է ջուլթակի լարերին:

Անպակաս շողշողում է սրտիս վերայ սուր ամեն օր,

Լսում են ականջներս բօծալի, վատ լուր ամեն օր.

Օր չեղաւ որ ննջէի հանգիստ, խաղաղ, առանց ցաւի,

Տուհական է ինձ մնալ տրտում ու տխուր ամեն օր:

Կարծամիտ, նախանձայոյզ, չար մարդիկը գրգռուելով,

Խօսում են ուղղութեանս հակառակ իզուր ամեն օր.

Ա՛խ, պիտի ես շատ մնամ այսպիսի վատ շրջանի մէջ,

Պարզութեանս պատճառաւ կրնմ թուք ու մուր ամեն օր:

Հազար տեսակ որոգայթ, հազար տեսակ մեքենաներ,

Լարում են թշնամիքս երկամից ամուր ամեն օր,

Պաշտպանող Արարիչը պաշտպանում է իւր Զիւանին,

Պարզերես դուրս կըբերէ անմեղը մաքուր ամեն օր:

Այս բոլորից չէ վախենում, թշնամի մարդկանց դա-
րաններից ու օրօգայթներից զգոյշ է մեր աշուղը. նա
այսպիսի ժամանակներում էլ համբերում է ասելով.

Մի այլալիւր ի զուր տեղը,

Համբերէ, սիրտս, համբերէ.

Համբերանքն է վէրքիդ դեղը,

Համբերէ, սիրտս, համբերէ:

Յուսով եղիր միշտ աներկբայ,

Տէրը յաջող դուռ կըբանայ.

Երջանը միշտ այսպէս չի մնայ,

Համբերէ, սիրտս համբերէ:

Քեզանից պատուով ու պայծառ

Մարդիկ շատ են եղել թշուառ.

Մեծ մարդկանցից օրինակ առ,

Համբերէ, սիրտս, համբերէ:

Փչելով մի քամի թեթև,
 Կըվանէ ողջ ամպ ու անձրև.
 Շուտ կըծագէ պայծառ արև,
 Համբերէ, սիրտս, համբերէ:

Ժամանակիս մի խումբ թերուս ու թեթևողիկ մարդ-
 կանց արարմունքներն ու ազգամիջևս արշաւանքները տես-
 նելով, այն ևս ուսման, կրթութեան ու «Ժողովրդի պաշտ-
 պան» - ի դիմակի տակ ծածկուած, Ջիւլանին ծաղրում է.

Թէ ուզում ես, քեզ զիտնական անուանեն,
 Եւրոպայի ձևով հալաւ ունեցիր.
 Թէ կըցանկաս պատիւդ լաւ պահպանեն,
 Շինծու դիպլոմ, շինծու համբաւ ունեցիր:
 Ժողովրդի կամքը, բերանը շինէ.
 Զի հասկանայ, նրա համար դիփ մին է.
 Այն որ հիմա հաստ ու բարակ մի գին է,
 Անվնաս է՝ խելք էլ սակաւ ունեցիր:
 Այնքան որ ունեցիր մէկ վկայական,
 Կասեն, որ մտնլ ես դու համալսարան.
 Վախենաս թէ հազարներով քեզ չըտան,
 Հոգաբարձուաց հետը քեզ լաւ ունեցիր:

Սէրը աշուղի նշանաբանն է. «աշըգ» բառը նշանա-
 կում է «սիրահար»: Սիրոյ ձեռքից շատ աշուղներ հոգեհան-
 են եղել. Քերամի պէս վառուել: Աշուղի գէպի իւր սիրու-
 հին ունեցած անսահման սէրը երգել է տալիս.

Յօժար եմ, ինչ որ կուզէ, թող անէ իմ սիրականս.
 Մարմինս սուր սուսերով թող կտրատէ աննմանս.
 Ինձի սպանելու կամք է ունեցել գովականս,
 Գնալով կաղաչեմ վիզս ձգելով պատանս:
 Դու միայն քու ծամերդ, սիրուն, արա՛ ինձ կախադան,
 Ես կըքաշեմ, թագուհի, իմ ձեռքերով իմ պարանս.
 Աչքիս արտասուքի պէս աչքես ելաւ աշխարհը,
 Բացի Աստուած չէ կարող ոչ ոք լինել օգնականս...

Մեր դարի վնասակար ու նորելուկ գործերը, ամեն տեղ տիրող անհաւատարմութիւնը տեսնելով, Զիւանին ասում է.

Այս քնչ դարի հասանք, քնչ օրեր գտանք,
Ամենեւին հաւատարմութիւն չըկայ.
Ինչ օրեր կորուսինք, քնչ օրեր գտանք,
Հազարից մէկի մէջ լաւ արիւն չըկայ...

Չար մարդկանց կողմնապահութիւնները, դատաւոր կարգուած մարդկանց միակողմանի քննութիւնները տեսնելով, դրամապաշտութեան, սիմոնականութեան տարածուելը տեսնելով՝ որոնք մեծ դեր են խաղում աւօրեայ կեանքի մէջ, Զիւանի աչքը իւր դատը հաւատում է յանձնել միայն Նախախնամութեան և այդ դրութեան մէջ հայազգի աչքը երգում է.

Խնդրում եմ, Տէր Աստուած, իմ դատաստանս
Անամօթ, անպիտան մարդուն մի յանձներ.
Դու քանդէ իմ տունս, իմ կեցարանս,
Մարդատեաց, դաւաճան մարդուն մի յանձներ...
Նախանձում են խեղձ Զիւանու համբաւին,
Տէր, տո՛ւր կարողութիւն դիմանամ ցաւին,
Ծովումն ալեկոծեալ դժբախտ իմ նաւին
Ղեկը ամպարտաւան մարդուն մի յանձներ.

Խարդախ, նենգ, զրպարտող մարդկանց գործերից զգուհելով, ահա նա հրապարակ է հանում այդպիսիների ստոր արարմունքները.

Անդադար վատ-վատ լուրեր հնարում է զրպարտիչը,
Մշտական շատացնելով տարածում է լսած քիչը.
Լաւ բանի համար ամենեւին չի շարժուիլ տեղիցը,
Երբ լսեց մի վատութիւն, ձեռք կառնի աղտոյ գրիչը:
Ծառի պէս, մեր որդերը մեր միջիցն են, հում ինչ ասենք.
Մեր տանիցն է դուրս եկել մեր կեանքի ցեցը, կերիչը:
Այդպիսեաց խրատ տալը քահանայից պարտքն է յատուկ,
Ի՞նչ կարող է բան շինել Զիւանու պէս խեղձ երգիչը:

Կեղծ, զիմակաւոր, շինծու մտերմութիւն ունեցող
ընկերներից ու ծանօթներից Հիասթափուած, Աշըղ-Զի-
ւանին եղանակում է.

Լայն օրերուս ուրախացող կեղծ ընկեր,
Այժմ նեղն եմ ընկել, արի, հւր տեղ ես.
Պատահներուս կտորներու շատակեր,
Մեծը քեզ եմ տուել, արի, հւր տեղ ես:
Երբ ունէի փայլուն մետաղ քաւական,
Ինձ կասէիր—չըկայ մարդ քեզի նման.
Քո ձեռքովդ կազմում էիր ձոխ սեղան.
Ո՞ր անկիւնն ես մտել, արի, հւր տեղ ես:
Քանի տունս հաց կար, չէիր պակասի,
Կուգայիր, կանջելու չէիր սպասի.
Իմ ունեցած կարողութեանս մասի
Կէսը քեզ եմ տուել, արի, հւր տեղ ես:
Ասում էիր—Մի վախենար փորձանքից,
Քեզ աւել կըսիրեմ իմ ըղձոր կեանքից—
Եթէ հնար ունիս, փրկէ վտանգից,
Վերջին օրս է հասել, արի, հւր տեղ ես:

Բայց խկական բարի, անկեղծ, ազնիւ ու աստուա-
ծափախ բարեկամ ընկերի յարդն ու արժէքն իմանալով,
Զիւանին երգում է.

Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն,
Փայլեցնում է արեւի պէս պատկերը մարդուն:
Ինչ մարդ ունենայ իւր մօտը հաւատարիմ ընկեր,
Ցերեկի նման անցնում է մութ գիշերը մարդուն.
Կեանքդ նուիրես ընկերի լաւին, քիչ է դարձեալ,
Այնպէսն է հոգեկան լուսատու լապտերը մարդուն:
Ընկեր եմ ասում՝ աստուածավախ, ծղմարիտ ընկեր,
Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը մարդուն.
Թշնամիները իւր վերայ զալած ժամանակը
Կտրիչ, հարազատ ընկերն է սուսերը մարդուն.
Ով որ ունենայ մտերիմ ընկեր, Զիւան աշըղ,
Զի սպիտակեր ամենեւին մէկ հերը մարդուն:

Շրջանից, ընկերութիւնից հեռացած, ընկած մարդու հետ ժողովրդի վարմունքը զայրացնում, վրդովեցնում է աշուղին. նա երգում է տխուր.

Ընկած մարդը չունի հաստատ օգնական,
Կողմը պահողը քիչ, զանգատողը շատ.
Տառապելոյն եթէ կանչեն դատարան,
Մեղքը ստողը քիչ, հաստատողը շատ. . .

Կան մարդիկ, որ իրենք ինչ որ քարոզում են, նոյնը չեն կարողանում անել. բարեգործութիւն, չափաւորութիւն, պարզութիւն քարոզողները շատ անգամ իրենք լինում են ագահ, պճնասէր, հպարտ ու մեծամիտ: Ահա այդպիսի անձանց համար էլ ունի զրած մեր ժողովրդական աշուղը.

Ո՛վ չի սիրել անձը իրան,
Ուրիշին սիրել չի կարող.
Ինչ մարդ չի պահել պատուիրան,
Այլոց պատուիրել չի կարող. . .

Փարթամ, ճոխ ու շուայլ կեանք կամ ապրուստ չէ ցանկանում հայ աշուղը. նա բուսական երջանիկ է զգում իրեն, եթէ միայն միջին կարգի ապրուստ ունի, նա զոհ է լինում իւր դրութիւնից: Ահա թէ ինչ է ասում—

Ունիմ, փառք Աստուծոյ, մասնաւոր ապրուստ,
Ես իմ վիճակիցս անբաւական չեմ.
Կըհազնիմ միակերպ հասարակ հագուստ,
Աստիճանս ցածր է. ես խօ իշխան չեմ:
Դեռ ես շատ բանի մէջ միամիտ եմ.
Ունիմ կարողութիւն, ուսման կըդիտեմ,
Երգիչ եմ հայերէն, տաճկերէն դիտեմ,
Այս է գիտութիւնս, ուսումնական չեմ. . .
Ուսումը չըգիտնալու ես չեմ յանցաւոր,
Հայրս է պարտական, ես պարտական չեմ:

Վերջապէս ժամանակիս պղտոր հոսանքների մէջ լողացող արարածներին է ձեռք առնում Ջիւանին: Շրջիկ, մոլոր ու անմիտ տղայական խմբակների ստոր վարմունքը տեսնելով՝ որ ամեն մի այբ ու բէն գիացող իրեն ժողովըրդի առաջնորդ, հասարակութեան, ժողովրդի պաշտպան և ուղեցոյց է հրատարակում, և իւր շքից վախեցողը ինքն իրեն ազգային գործիչ համարում, նմանուելով մեծերին, երգիչը երգում է.

Խելքին զօռ տալով է հիմա ամեն բան.
Յիմարն էլ իմաստուն կարծում է իրան.
Նիհար հաւը, պարարտ, մեծ սագի նման,
Ուզում է ծու ածել—խելքի աշեցէք:

Գառնազգեստ գայլերի իշխանութիւնը և անարժան վեղարների ամբիոն բարձրանալը տեսնելով, Ջիւանին նոյն եղանակով շարունակում է.

Գայլը վերան ոչխարի մորթի առած,
Գառներուն պահապան, հսկող է դառած.
Աքլարը քարոզչի վերարկու հագած,
Ամբիոն է ըարձրացել—խելքի աշեցէք:

Երբ տեսնում է, որ արժանաւորի տեղը անարժանն է բազմել, արթուն, ողջամիտ ու բարեխիղճ պաշտօնեաների տեղ չար բանասարկուններն են պաշտօն վարում, կասկածաւոր ու կլանող մարդիկ երեսփոխան, հոգաբարձու կամ հաշուետեսներ են ընտրվում, Ջիւանին ասում է.

Ուղտը մետաքսագործ, եզը նաւավար,
Գայլը հովիւ դառած կարածէ ոչխար.
Ադուէսը հանոցի դրան յուշարար.
Ի՞նչ հսկող են գտել—խելքի աշեցէք:

Հայ ժողովրդի սիրելի աշուղը երբ տեսնում է, որ ազգի մի սիւն, մի ամուր ու սրբազան պատուանդան, որ

Ժողովրդի կենաց-մահու հիմնաքարն է եղել, և մէկը կամենում է հիմնադրատակ անել այդ իւր կարճ խելքով ու կարճիկ հասակով՝ երգում է.

Երեխան ձեռն առած փծած, հին լարը,
Բռնել կամի դարձող ջաղացի քարը.
Գածած մուկը շրջել կուզէ մեծ սարը,
Կողքը դէմ է տուել—խելքի աշեցէք...

Կան մարդիկ, որ իրենց կեանքը անց են կացնում ամեն նեղութիւններով, ինչ է որ փող հաւաքեն: Դորա հետ և իրենք իրենց զրկում են ամեն բաւականութիւնից, մինչև անգամ մի մարդավայել ապրուստից: Հասնում են մահուան ընկերները—այդպիսիները յոգնած ու տանջուած դրամական խառն հաշիւներով, աշխարհից զեռ մի համ չառած՝ գնում են մահու գիրկը: Ահա ուրիշները ուրախ ու զոհ պատրաստի դրամի համար, փառաւորապէս ըսկտում են վայելել, հազիւ թէ յիշելով հանդուցեալ ժլատ փողատիրոջը: Օրինակները մեր կեանքում բիւրաւոր են: Զիւանին այսպիսիների համար է, որ ասում է.

Ժլատն աշխատելո՞ւ է շատ ընդունակ.
Իւր հացը ուտելու ջունի ախորժակ.
Խեղձ անձը զրկելով դիզել է ստակ,
Ուրիշն է վայելել—խելքի աշեցէք:

Երբ տեսնում է, որ գործունէութեան ասպարիզից ողջամիտ, զիտնական ու հանճարաւոր մարդիկ նոյն ասպարիզում վիտացող չար ու անառակների հետ դործակից չլինելու համար հեռու են կանգնած ու չըջանք թողնուած է համբաւներին, Զիւանին համեստօրէն իրեն էլ միացնելով վերջինների հետ, աւարտում է երգը.

Մեծամեծ մարդիկը հեռու են կանգնած,
Ասպարէզը համբաւներին են թողած.
Զիւանն էլ կաղ իշով կարաւան մտած,
Բանաստեղծ է դառել—խելքի աշեցէք:

Այսպէս ահա Զիւանին ամեն մի տպաւորութեան տակ, կեանքի ամեն պատահարներում, զրել, երգել է իւր տողերը, և մինչև այժմ էլ շարունակում է. նորա քնարը զեռ. չէ լռել. նա անգաղար աշխատում է: Մեր աշուղի բոլոր երգերն էլ ունին իրենց նշանակութիւնները, ոչ մի երգը զատարկ տեղը չէ զրաժ, որի ամեն մի տունը, ամեն մի տողը մի ընդարձակ իմաստ ունի, մի բողոք է կեանքի բռնութիւնների դէմ:

Աշուղ Զիւանին մի շկուլա հիմնեց, մի շրջան ստեղծեց, որտեղից զուրս գալով մի շարք աշուղներ, բարի թէ չար նախանձով հետեցին իրենց մեծ վարպետին, աշխատեցին և աշխատում են նորա պէս երգել:

Զիւանին, ներկայումս հայ գրական աշխարհում յայտնի է որպէս հայ ժողովրդական երգերի յօրինիչ Աշուղական արուեստը պահելով, Զիւանին գոեհիկ ու ռամկական լեզուն երգերից վերացրեց ու զրեց աւելի մաքուր պրահանական լեզուով քնարերգական գրուածներ: Ունի բաղմամբիւ աշխատութիւններ — հայերէն և սաճ. կերէն ¹:

¹ Մինչև այժմ լոյս են տեսել հետեւալ աշխատութիւնները.

- «Աշուղ-Զիւանու երգերը» Ա. 1882. . . . — ր. 70 Կ.
 Նոյնը Բ. 1886. . . . — > 80 >
 Նոյնը (հաւաքածու հեղինակի տպուած և անտիպ երգերից) 1893. պատկերով . . . 1 ր. 20 Կ.
 «Աշուղ-Նարիի հեքիաթը» երգերով. փոխադրութ. — > 40 >
 Նոյնը Բ. տպագր. ինքնուրոյն երգերով. — > 45 >
 Նոյնը Գ. տպագրութիւն, 1892. . . — > 40 >
 Նոյնը Դ. > 1895. . . — > 40 >
 «Քեարամի Ասլիի հեքիաթը» երգերով 1891. . . — > 60 >
 Նոյնը Բ. տպագրութիւն 1895. . . — > 60 >
 «Շահ-Իսմայիլի հեքիաթը» երգերով. 1895. . . — > 30 >

Ի՞նչ է նշանակում ժողովրդականութիւն ձեռք բերել, ժողովրդականութիւն բառիս ընդարձակ նշանակութեամբ: Կարինեսաներում ապրող մարդկանց ժողովրդականութիւնն ուրիշ է, հասարակութեան մէջ ամեն շրջաններում ման եկողի ժողովրդականութիւնն ուրիշ: Հայ հասարակութեան միջին և ստորին դասակարգը, զիւղացի թէ քաղաքացի ազահութեամբ սպառում են Ջիւանու զրբերը: Մեզանում, որ բացի դասագրքերից ուրիշ գրքեր հազիւ են պատահում երկրորդ-երրորդ տնտեսագրութեան արժանանալ, այդ մեր աշուղի համար սովորական բան է դարձած: Նորա լոյս ընծայած գրքերը, որը երկու, որը երեք, որը չորս անգամ տպագրութեան են յանձնուել, այն էլ կարճ ժամանակում և հազարաւոր օրինակներով: «Աշուղ-Նարիբի Հեքիաթը» դասագրքի պէս տարին մի անգամ տպագրելու պահանջ կայ: Կան մարդիկ, որոնց համար ընթերցանութիւնը դեռ պահանջ չէ դարձած, պէտք է նախ ընթերցանութիւն սովորեն: Այդ դասակարգը, որ մեր ստորին դասակարգն է և զիւղական հասարակութիւնը, ինչով կարող է կարդալու վարժութիւն, հմտութիւն ձեռք բերել, եթէ ոչ իւր սիրած հեքիաթներով, երգերով ու վէպերով: Եւ ուշադրութեան արժանի է այն, որ Ջիւանին տաճկերէնից փոխադրելով, հեքիաթները խկապէս հայացնում է: Առասպելներ, նախապաշարմունքներ, առփական բնաւորութիւն ունեցող կառնները չափաւորել է, կամ բոլորովին դուրս ձգել, իսկ դուրս ձգուած սողերի տեղ հեքիաթի մէջ

հեղինակի անտիպ երգերից յիշենք:

«Ազգային երգարան» (բոլորովին անտիպ երգեր).

«մայեակ և Սրուսեակ» երգերով. ազգային վիպասանութիւն.

«Աշուղ-Ջիւանու երգերը» Դ. (նոր երգեր).

«Աշուղական երգեր» Ա. (տաճկերէն).

մտցրել է ազդասիրական, մարդասիրական հոգի, բարոյական բնավորութեամբ կտորներ և շատ անգամ ինքնուրոյն երգեր: Սյսպէս էլ պէտք է վարուէր, քանի որ գրքերը գիտնական, բանասէր մարդկանց համար չեն հրատարակվում, այլ հասարակ ժողովրդի: Սյս վարմունքի համար Ջիւանին քաջալերութեան է արժանացել ինչպէս շատերից, այնպէս էլ Մինաս Չերազից: Ինչպէս յայտնի է նախ քան Ջիւանին, հայ հեքիաթասէր հասարակութիւնը այս բաները լսում ու պատմում էր թուրքերէն, իսկ այժմ ամեն մի հայ գրագէտ կարող է կարգաւ այդ հեքիաթների հայերէն փոխադրութիւնները: «Աշըղ-Ղարիբ» ամբողջապէս մի բարոյական վէպ է, նորա մէջ լի են հայ ընթերցողին օգտակար նիւթեր: Բացի ընկերասիրութեան, ծնողասիրութեան, ուխտի, աստուածասիրութեան, յուսոյ օրինակներից, կան նաև աշխարհագրական, տեղագրական ամփոփ տեղեկութիւններ և այլն: Ջիւանու ամեն մի գրքի մասին գրախօսութիւններ գրելը մեր ծրագրից դուրս է, այսքանը միայն կրկնում ենք դարձեալ, որ հասարակութեան համար ընթերցանութեան յարմար գրքեր են ճանաչուած դոքա: Կովկասեան և հեռաւոր շատ քաղաքներ, Շիրակի, Աբարանի, Ղարսի, Ախալքալաքի գիւղերը արդէն տարածուած են և տարածվում են Ջիւանու հեքիաթներն ու երգերը: Դպրոցական աշակերտներն անգամ ծանօթ են «Աշըղ-Ղարիբ» ու նման հեքիաթների և երգերի հետ: Հեքիաթներից քանի մի երգեր անցուած են հայոց լեզուի դասագրքերի մէջ. մի քանի ծխական դպրոցներում էլ աւանդվում են Ջիւանու երգերից: Ալէքսանդրապոլի փողոցներում լերնից բերան ման գալով երգվում են «Բանի մէկ բորբոքուիմ»-ը, «Վառովւմ եմ Սալի»-ն, «Արաքս, ինձ մի ճանապարհ տուր» և այլ հայացրած երգերը:

Աշուղ-Ջիւանու երգերը կարելի է բաժանել չորս մասի՝ բովանդակութեան կողմից:

Ա. Աղգային, դիւցազնական.

Բ. Սիրոյ, հարսանեաց, գինու, ուրախութեան.

Գ. Վարդապետական, խրատ, կրթող, քարոզ, հրապարակասական.

Դ. Ժամանակադրական, նկարադրական, ողբերգական, — ներբողք:

Աշուղ-Ջիւանուն համեմատելով անցեալ դարերու կամ մեր դարի մէջ եղած նշանաւոր աշուղների հետ, կրգտենք մեծ տարբերութիւն: Ինչպէս դարն էլ պահանջում է, Ջիւանին մտաւոր զարգացմամբ շատ առաջ է իւր նախորդներից: Եթէ քննութեան տակ ձգենք դոցա երգերը, կրտեսենք, որ Ջիւանին իւր մոգերով, իւր խօսքերով գերազանցում է առաջիններից: Մեղաւոր չեն նոքա. ոչ գիրք էին կարդացել, ոչ լրագիր անսել. ի՞նչպէս կարող էին վարպետաւ, մանաւանդ որ շատերը նոցանից կոյր են եղել:

Աշուղ-Ջիւանին իւր գործին հաւատարիմ ծառայում է, նա իւր կոչման համեմատ երկար չէ մնում իւր հայրենիքում, այլ մեծ մասամբ օտարութեան մէջ է, հեռու իւր քաղաքից, հեռու իւր բնաւանդներից: Նորա համար իսկապէս *ubi bene ibi patria*. Նորա համար հայրենիք է, որտեղ հայեր կան, որտեղ հայ երգերի փափագ ունին: Ջիւանին իւր խմբով ու ջութակով շարունակ ման է գալիս Կովկասի զանազան քաղաքներում և զիւղերում:

Հովիկ, Զիւանուցս լուր տար, — ասում է նա,

Թէ հարցնեն ինձի համար.

Ասա Թէ միշտ ձեռին քնար,

Ազգի համար կանչում է խաղ:

Այսպէս դարուս մեր յարգելի գուսանին արեւատուութիւն ցանկալով, փափագում ենք, որ հայ-աշուղութեան

երեսնամեայ գործունէութիւնը չդադարեցնէ: Թող շարունակէ աշուղ-Ջիւանին իւր աղնիւ ու բեղմնաւոր գործը յօգուտ Հայրենիքի, քանի որ կը ներեն նորա ուժն ու կարողութիւնը:

ԳՐԱՍԷՐ.



Պ Ա Տ Ջ Է Ն

ԽՆԴՐԱԳՐՈՅ ՀԱՅՈՑ ԱՌ ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ

՚ի մ ա ս ի ն

ՀԻՒՍԻՍԱՓԱՅԼ ՕՐԱԳՐԻ 1860 Թ. 10 ՀԱՄԱՐՈՅ

ԾԻ

«ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ԿՐՕՆԻ» ԳՐՈՑՆ.

ՎԵՀԱՓԱՌ ՏԵ՛Ր,

Մենք զրիչ ենք առնում ձեռներս այսօր ո՛չ մի անձն և ո՛չ մի կուսակցութիւն պաշտպանելոյ համար, որդիական սէրը առ Քրիստոսի եկեղեցին, առ Ճմարտութիւնը և առ արթուն հովուապետդ միակ առաջնորդ է մեր սրտերի, մինչ այս տողերը գրում ենք:

Տէ՛ր, կան այնպիսի դիպուածք, ուր անհրաժեշտ հարկը և ընկերսիրութիւնը պահանջում են բացարձակ խոստովանութիւն կարծեաց. անհրաժեշտ հարկը այն ժամանակ, երբ հասարակաց օգուտը փասնփի մէջ է և մեր լուութիւնը կընշանակէր թշնամանել փառացն Աստուծոյ. ընկերսիրութիւնը այն ժամանակ, երբ լուրով անիրաւութիւն կըզործէինք դէպի մեր ընկերը:

Ահա մի այսպիսի դիպուած կոչում է մեզ այսօր որդիապատկան անկեղծութեամբ ասել մեր կարծիքը այն

տրտմամբ անյաբի մասին, որոյ գործը այս օրերս Հասաւ մեղ, այս է՝ Զեր Հրամանը թիմակալ առաջնորդներին՝ ժողովել իւրեանց վիճակի մէջ հիւսիսափայլ օրագրի 1860 թուի 10 ամսատետրերը, նոյնպէս գերապատիւ Նազարեանցի ութն ամօք յառաջ տպագրած Վարդապետարան Կրօնի կոչեցեալ, զոյգ ընդ այսմ և այն առաջարկութիւնը Կովկասեան Փոխարքային, որով կամիք զազարեցուցանել յիշեալ օրագրի հրատարակութիւնը:

Վեհափառ Տէրդ, իբրեւ հովիւ և պաշտպան հայաստանեայց եկեղեցւոյն, 'ի հարկէ յանուն նորա կըգործէք այդ, բայց այդ եկեղեցին տասն և ութ դարուց մէջ օտար մնալով որ և է արտաքին օգնականութեան, պահպանուել է իւր ազատութեամբ և փրկութիւնաբեր խրատներով: Սրբազնասուրբ հայր, օրագրական հատուածը դատվում է օրագրերով, զիրքը, որ օրէնքի թոյլտուութեամբ հրատարակուել է, դատվում է քննութեամբ (կրիտիկայով). սոցա ընթերցողքը վաւում են, թէ որոյ կարծիքն է իրաւացի և ընդունելի:

Սյս է բնական կարգը տպագրական աշխարհի մէջ, որ և ընդունուած են բոլոր լուսաւորեալ ազգերը:

Հիւսիսափայլի 10 ամսատետրը տարակուսութիւն պատճառեց Կռունկ օրագրին, որ քանի մի նկատողութիւններ արեց այդ մասին և հիւսիսափայլը ներկայ ամի երրորդ ամսատետրի մէջ, թէ և մի քանի անտեղի խօսքերով դէպի Կռունկի հատուածի հեղինակը, բայց այնու ամենայնիւ բոլորովին փարատեց այն տարակուսութիւնները, որք յառաջ էին զալու նորա անստոյգ ասացուածներէն:

Իրաւախոհ և անաչառ դատաւորը պիտոյ էր բաւականանար հիւսիսափայլի բացատրութիւնով, ըստ որում իւրաքանչիւր անձն սրբազան իրաւունք ունի դէպի իւր ասացուածոց բացատրութիւնը, առանց որոյ ոչ ոք չկարէ արդար դատաւոր լինել նորա խօսքերի վերայ:

Այն ընթերցողք, որոնք ճշմարտութիւն էին որոնում, այլ ոչ կերակուր իւրեանց կրքերի, համակրութեամբ զգայակցելով Կռունկի նկատողութեանց, բերկրութեամբ սրտի ընդունեցին նաև հիւսիսափայլի բայցարութիւնները. բայց այդպէս չէին մտածում մի քանի ընթերցողք, որք որ և է դիպուածքի մէջ առաւել դատապարտութիւն են խնդրում, քան արդարութիւն. սորա, կարծես թէ, առաւել ուրախ են մարդոյ յանցաւորութեան քան անմեղութեան:

Հայր սուրբ, մենք խոստովանում ենք, որ շատ զարմացած ենք, լսելով թէ օրագրական հատուածը հիւսիսափայլի, Վարդապետարան Կրօնի գիրքը և օրագրի արգելումը առաջադրել էք վճռահատել բարձրաստիճան հոգեւորականաց. այս մի անօրինակ բան է մեր եկեղեցւոյ աւանդութեանց մէջ, որովհետև այդպիսի գործը օտար է մեր եկեղեցւոյ հոգւոյն, որ վարուելով ազատութեամբ և խրատով, այդ քրիստոնէական կրօնի սկզբունքովը միշտ ընթացել է թե ի թե գիտութեան և լուսաւորութեան հետ:

Հայր սուրբ, այդ ուղին սահուն և վտանգաւոր է. նա տանում է զէպի կորուստ որպէս ազգը, նոյնպէս և եկեղեցին. նա տանում է զէպի զժտութիւն ազգի և հոգեւորականութեան մէջ: Այսու ազագաւ մենք աղաչում ենք Քեզ, յանուն եկեղեցւոյն, որ կամիք պաշտպանել, դարձ առնել այդ առաջին քայլէն, որ գործել էք: Հայաստանեայց եկեղեցին անխախտ է մնացել, ոչ անաթեմայի և նզովքի քուլաներով, ոչ հրով և սրով և ոչ արգելական կարգադրութիւններով. նա պահպանուել է միայն ազատութիւնով և խրատով. նա, իբրև կրօն Քրիստոսի, զերծ է այն հնարներից, որք անարժան են ճշմարտութեան: Հայաստանեայց եկեղեցւոյ խօսքը եղել է սէրը, այն սէրը, որ ըստ զեղեցիկ բանի առաքելոյն Պօղոսի, «երկայնամիտ

է, քաղցրանայ, ոչ նախանձի, ոչ ամբարհաւաճի, ոչ հրպարտանայ, ոչ յանդգնի, ոչ խնդրէ զիւրն, ոչ զրդուի, ոչ խորհի զչար: Ո՛չ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ ստուգութիւն: Ամենայնի տեէ, ամենայնի հաւատայ, ամենայնի յուսայ, ամենայնի համբերէ:

Պ. Նազարեանցի Վարդապետարան Կրօնի զիւրքը, որպէս ասացինք, ութն ամօք յառաջ տպագրուած լինելով թեմակալ առաջնորդի հրամանաւ, յայտնի էր և երջանկայիշատակ Ներսէս պատրիարքին, որ ուշադրութիւն չդարձրեց դէպի այն բաժանումը եկեղեցւոյ խորհրդոց, որ յիշուած է այդ զրքի 23 գլխում, զիտեղով չափ թէ այդ զրքի մէջ ստոյգ են առաջադրուած աւետարանական ուսումը և քրիստոնէի բարոյականութեան ուղղութիւնը: Եւ յիրաւի իսկ, իթէ մի աննշան բիծ ոչնչացնելու է ամբողջի գործունէութիւնը, ինչ կարէ մնալ անջնջելի յերեսս երկրի: Չնչին արատիքը մի բանի չըպիտէր արգելին աչալուրջ դատաւորին տեսանել նորա ամենագեղեցիկ բովանդակութիւնը:

Հայաստանեայց եկեղեցին երբէք օգնութիւն չէ խընդրած արտաքոյ ինքեան. նա իբրեւ կրօն Քրիստոսի, արտաքին ոյժը օտար է համարել իւրեան, հաւատալով թէ ոչինչ է հասարակաց ճշմարտութեան և բռնութեան. նա քաջ գիտէ, թէ ճշմարտութիւնը, սպառաղինուելով բռնութեամբ, դառնում է երկբայելի, կորուսանում է ժողովրդի դէպի ինքը վստահութիւնը և անարդում է Աստուծոյ փառքը: Սրբութիւնը և ճշմարտութիւնը եկեղեցւոյ պահանջում են, որ նա յաղթական հանդիսանայ իւր ներքին կարողութիւնով և հաւատով դէպի ճշմարտութեան զօրութիւնը, այլ ոչ ապաւինելով արտաքին նիւթական ոյժի:

Ճշմարտութեանը նեցուկ տալ նիւթական ոյժ, նշանակում է խոստովանել նորա տկարութիւնը, որ անար-


գանք է վերաբերում ժողովրդի կրօնական զգայմանց, որովհետեւ ժողովուրդը իւր եկեղեցին համարում է այնքան հզօր, մինչեւ զրօնք դժուարաց, ըստ բանի Փրկչին, չին կարող խորտակել:

Աստուածընտիր Հայր, որդիական համարձակութեամբ կրկին աղաչում ենք Բեղ թողնել այդ արդեւական ուղին, այդ ուղին արտաքուստ օգնութեան, և վստահ լինել վեպի մեր եկեղեցւոյ ճշմարտութեան զօրութիւնը, որ աղատութեամբ անցել է մաքուր և սուրբ, ազգաց և ազանց դարաւոր աղմուկների միջով: Այդ անխրաւ զուգաօրութիւնը ճշմարտութեան և բռնութեան կշիռով է մեր ազգի ազատութեան զգայումը, որ իւր եկեղեցւոյ մէջ տեսնում է նորա հեզ, ողորմած, սիրող, անկեղծ և անզէն չիմնադրին, որ ոչ զոհ, այլ մարդասիրութիւն է խնդրում: «Ուրեմն այսուհետեւ մի՛ յառաջ քան զժամանակն դատէք մինչեւ եկեսցէ Տէր, որ լուսաւոր առնիցէ զզաղանիս խորհրդոց և յայանեսցէ զխորհուրդս սրտից և ապա իւրաքանչեւրոց զովութիւնն եղեցի յԱստուծոյ»:

Յուսալով, որ մեր աղաչանքը Դուք կընդունէք նոյն սիրով, որով մենք գրում ենք և նուիրելով մեր անձները առաքելաշնորհ օրհնութեան և աստուածահաճոյ ազօթից Վեհափառ Կաթողիկոսիդ ամենայն հայոց, մնամք ամենախոնարհ ծառայք:

21 օգոստոսի 1861 ամի,

Ի Ս. Պետերբուրգ:



ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

ԺԱ.

26-ին մարտի 1863 ամի, Մոսկուա.

ԱԶՆԻԻ ԲԱՐԵԿԱՄ ԷՄՄԱՆՈՒԷԼ ՄԻՆԱՍԵԱՆ,

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՄԻ Ի ՄԵՌԵԼՈՑ.

Ձեր սիրելի նամակը ամսուս 19 թուականից անկորուստ հասաւ ինձ պարոն Սուլթան-շահի միջնորդութեամբ, մեծ ուրախութիւն պատրաստելով ինձ, որ ողջ և առողջ վերադարձել էիք Նախիջևան: Որովհետեւ իմ ֆօտոգրաֆիկական պատկերս փոքր ի շատէ նորոգել է իմ յիշատակը մեր բարեկամների մէջ, և պատճառ է տուել այս և այն բարեկամի, որ վաղուց մեզ մոռացել էր, սիրոյ ողջոյն ուղարկել մեզ. շնորհակալ եմ մեծապէս, և խնդրում եմ դարձեալ սիրով և յարգութեամբ ողջունել նորանց իմ անունով:

Դուք յայտնելով ինձ բարեկամաբար, թէ մտադիր էիք ապրիլի 10-ին կամ 12-ին ճանապարհորդել իբրև ուխտաւոր դէպ ի Սուրբ Կարապետ, գրում էք ինձ թէ լինելու էիք Էջմիածնում և կըհանդիպէիք մեր կաթողիկոսին. և այս պատճառով կամիք իմանալ ինձանից, թէ

կաթողիկոսը ի՞նչ հիման վերայ իմ հիւսիսափայլ օրագիրը խափանել է. մի այդպիսի լուր հասած է ինձ և հաշտարխանից: Ինչպէս երեւում է, և ինչպէս ամենայն խոհական մարդ պարտ է հաւատարմութեան, և ես իսկ կարծում եմ, այդ լուրը, որպէս թէ կաթողիկոսը խափանել էր իմ օրագիրը, ամենեւին «ոչ» և խաբէբայ իօսս է, որովհետեւ կաթողիկոսը «չինչ իշխանութիւն չունի» ոչ կապելու և ոչ «բնակելու» հիւսիսափայլ օրագիրը, թէպէտ նա շատ ցանկացել է դորան, և ամենայն կարելի հնարք գործ է դրել խափանելու, բայց ի զուր: Կաթողիկոսի յանցանքը այն է, որ նա խափանել է հիւսիսափայլը, ըստ որում կարող չէր, այլ որ նա կամեցած է խափանել և ամենայն անօրէն ճանապարհ գործ է դրել դորան խափանելու, թէև անկաջող է գտնուել օրէնքի առաջ: Բայց, բայց, ասեմ Ձեզ ճշմարտապէս, որ կաթողիկոսը իւր սինօդի հետ միասին կոնդակներով և հրամաններով տգէտ ազգի մէջ քանդել ու կործանել է ամենայն հաւատ և սէր դէպ ի հիւսիսափայլը, և այդպէս պղտորելով ազգի սրտերը, պատճառ է տուել մինչև այն ստորձան փոքրանալու հիւսիսափայլի ընկերագիրների թիւը, որ ես կարող չեմ այսուհետև յառաջ տանել օրագիրը: Հիւսիսափայլի 12 տետրակի մէջ անցեալ 1862 թուականում Դուք պիտի կարդացած լինիք, որ օրագիր ստացողների թիւը եղած է 170 մարդ: Ազգի տգիտութիւնը մի կողմից, կաթողիկոսի և նորա սինօդի թշնամական և բռնակալ կոնդակները միւս կողմից, ի հարկէ, շատ ու շատ պիտի մնասէին իմ համարձակախօս ճշմարիտ օրագրութեանը, և մնասեցին, որովհետև ժողովուրդը գայթակղուելով ինձանից, հրաժարուելով ինձանից, և ես կարող չեմ գործ կատարել: Ինչպէս միւս քաղաքները իմ հետ վարուեցան, վարուեցաւ և Ձեր Նախիջևանը. մեղաւորը Դուք էք, հայ ժողովուրդքդ, և ապա Ձեր կաթողիկոսը. մինդ

միւսին արժանի: Ի՛նչ առնէ ողորմելի Հեղինակը Ձեր պէս ժողովրդի մէջ. եթէ ամեն մի տղէտ և յիմար, չարեացակամ մարդ կարող է Ձեզ մոլորեցնել, ճանապարհից հանել, Ձեր սիրտը և հաւատը խլել Ձեր հայրենասէր աշխատաւոր Հեղինակից, ապա այս Ձեր Հեղինակը ճորջ ուսերի վերայ պիտի գործ կատարէ: Դուք չունիք պատճառ գանգատաւոր լինելու Ձեր կաթողիկոսից, Ձեր արիւնարբու թշնամին Ձեր տգիտութիւնն է, ձեր բարոյական և մտաւոր մեռելութիւնը. և այդպիսի զրութեան մէջ ոչ թէ մի կաթողիկոս, այլ նորանից տասնապատիկ աւելի փոքր մարդ կարող է Ձեզ փնասել իւր կոնդակներով, և Ձեզանով ևս ինձ: Զարմանք է ինձ, որ Դուք, Մոսկուա լինելով չէիք հասկացած իմ ասածներս, թէ ի՛նչ պատճառներով ես հարկադրուած գտնուեցայ կարծել հիւսիսափայլը. այսինքն, ոչ թէ կաթողիկոսի ուղղակի արգելքովը, որ անկարելի էր օրէնքի զօրութեամբ, այլ միայն ազգի հրաժարուելովը ինձանից կաթողիկոսի խառնակիչ և մոլորեցուցիչ կոնդակներով ազգի մէջ: Հիւսիսափայլը ամեն լուրջ կարող է դարձեալ դուրս երևել, միայն թէ կամենայ ժողովուրդը, այսինքն արժանաւոր ձեռնադրութեամբ կարողութիւն տալով ինձ յառաջ տանել օրագիրը, այնպիսի ազատախօսութեամբ, որքան թոյլ տուած է Ռուսաստանում:

Մի փոքր սաստիկ գրեցի, որովհետեւ հաւատաւոր եմ, որ Դուք կամէիք և կարող էիք լսել իմ բերանից ճշմարտութիւնը և դորան մարսել Ձեր ստամոքսի մէջ. այո՛ դառն է դա, բայց շատ առողջարար: Ինչպէս Մոսկվայում, անաչառապէս, առանց երեսպաշտութեան խօսեցի Ձեր հետ, նոյնպիսի գտանում էք Դուք ինձ իմ նամակիս մէջ. այսինքն մի և նոյն, թէ խօսքի և թէ զրի մէջ. բերանով չեղայ քաղցրախօս, գրով ևս աւելի փոքր յանձնառու եմ:

Առ ի սրտէ սիրոյ ողջունելով Ձեզ, մեր բարեկամ-
ներին, եթէ զոքա արժանի էին մեր բարեկամութեանը, և
Ձեր քաղցր ընտանիքին,

Մնամ, ազնիւ բարեկամ,

Ձեր պատրաստական բարեկամ

Ս. ՆԱԶԱՐԵԱՆՑ.



ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆԱԻՈՐ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ.

Եթէ մենք կ'ընդունինք, որ մարդս բաղկացած է մարմինէ և հոգիէ, եթէ կ'ընդունինք, որ մարդուս մարմինը ունի իւր հարկաւոր պահանջները, ուրեմն այն ևս պէտք է ընդունինք, որ հոգին ալ ունի իւր պահանջները: Ինչպէս որ սնունդը, շարժումները, քունը հարկաւոր են մարմինը առողջ պահելու, այնպէս ալ հոգւոյ համար հարկաւոր են հոգեկան սնունդ, որոյ մէջ է նաեւ ԳԽ-Լը: Ինչպէս որ ցուրտը, քաղցը, խոցը, հիւանդութիւնները կը տանջեն մարմինը, այնպէս ալ գոյժը, տրամութիւնը, զըպարտութիւնը, մերձաւորներուս թշուառութիւնը կը տանջեն մեր հոգին. և այսպիսի հոգեկան տանջանքը մենք կ'անուանենք ԳԽ-Լ: Մեր հոգին՝ տանջող գութէն ազատելու համար մենք ուրիշ հնար չունինք, բայց եթէ մեր մերձաւորներին նորա կրած տանջանքներէն ազատելու, որն կ'ասուի Բարեգործութիւն:

Ուրեմն՝ գութը զգացմունք է, իսկ բարեգործութիւնը՝ այդ զգացմունքի մարմնականը:

Ես ձեռքս հաց բռնած՝ կ'ուտեմ: Իմ մերձաւորը, որ չունի հաց՝ վրաս կրնայէ, և ես նորա աչքերէն կընկատեմ, որ նա ևս կուզէ ունենալ այդ հացէն ու ինձ պէս ուտել: Ի՞նչ կրգգայ իմ մերձաւորը: Ես զիտեմ նորա զգացածը, վասն զի եղել է ժամանակ, որ ես ալ տեսել էի ի՛նչպէս մարդուն մէկը կ'ուտէր հաց. ես այդ հացէն չունէի և նորա վրան նայելով՝ չարաչար կըտանջուէի: Եւ այժմ, որ ես իմ մերձաւորին քաղցած կըտեսնեմ՝ իմ այն ժամանակուայ կրած տանջանքս միտքս կուզայ և հոգիս նորէն կըտանջուի: Օտարի քաղցը իմ հոգիս կըշարժէ, օտարի քաղցը ինձ կըտանջէ, օտարի չքաւորութիւնը, տուայտանքը, տառապանքը ինձ կըչարաչարեն ու ներսս գուլթ կըլիլտի. հոգիիս զգացած գուլթը ինձ չի տալ հանգստութիւն: Հոգիս տեսնել չուզէ օտարի նեղութիւնը, տանջանքը. հոգիս բարձրաբարբառ կըխօսի մէջս և կըբողբօքէ. նա ինձմէն կըպահանջէ, որ ես օտարին աղատեմ՝ նորա կրած տանջանքէն. և մինչև որ նորա կամքը և հրամանը չի կատարեմ՝ նա չի հանդարտիլ: Ես ստիպուած եմ հոգուս հանդարտեցնելու համար նորա պահանջը կատարել: Եւ այն բաւարարութիւնը, որ ես կուտամ հոգիիս՝ կ'ասուի Բարեգործութիւն: Ուրեմն բարեգործութիւնը բնածին է մարդուս, վասն զի մարդս բաղձ կացած է ո՛չ միայն մարմինէ, այլ հոգիէ ևս: Եւ այսպէս՝ հոգին իւր անդորրութեան համար կըպահանջէ, որ քաղցածը յագենայ (կշտանայ), մերկը հագուի, հիւանդը առողջանայ, լքուածը, անտէրը պատսպարուի:

Մէկ անհատը կ'անէ այնքան, որքան որ նորա կարողութիւնը կըհասնէ, բայց դորանով աշխարհքի քաղցածները, մերկերը, անտէրները չեն երջանկանալ. անթիւ անհամարները կըմնան անայցել, թշուառ: Ուրեմն ի՞նչ պէտք է անել:

Այն ժամանակ իմ վրդոված հոգին կրպահանքէ ինձ-
մէն, որ ես միւսներուն եւս յորդորեմ անելու այն, ինչ
որ ես ինքս արի: Ես իմ շուրջը կը ժողովիմ իմ զրացի-
ներուն, բարեկամներուն, ծանօթներուն, քաղաքացիներուն
և կըսկսեմ նկարելու թշուառականներու վիճակը սե-
զոյներով և կը շարժեմ նոցա գութը: Մենք կը միաւո-
րու ինք, ոյժերս, նիւթական կարողութիւններս կը միացնեմք
և շատ կարօտեալներու, շատ անհատներու օգնութիւն
կը հասցնեմք:

Այսպէս կը ծագի հասարակաց Բարեգործութիւնը:

Թէեւ մարդկային առաջին պիտոյքն են՝ անուանողը,
հաղուստը և բնակարանը, բայց կան շատ ուրիշներն եւս,
որոնք ոչ դոցանէն պակաս բուռն պահանջներ ունին և
կ'ազդեն մեր հոգու վրայ:

Ահա՛ օրինակ: Զինուորները մէկ շղթայակապ թշուա-
ռականի կը քանեն դատաւորի մօտ: Փողոցի տղայք մա-
տով կը ցուցնուն նորա վրայ ու կ'ասեն՝ «Նայեցէք, նա-
յեցէք՝ ահա գող աւազակին կը քանեն դատելու ու դա-
տապարտելու»:

— Ինչո՞ւ գողութիւն ու աւազակութիւն արել է այդ
մարդը, — կը հարցնեմ ես:

— Նորա համար, — կը պատասխանեն ինձ, — որ նորա
կնիկը ու զաւակները ցուրտ տան մէջ մերկ ու քաղցած
էին, ու ինքն ալ նոցա խնամելու հնար չունէր:

— Ուրեմն, — միտք կ'անեմ ես, — այս մարդուն չքաւո-
րութիւնը տախել է գող, աւազակ և պատժապարտ լի-
նելու: Եթէ նա չքաւոր չլլինէր՝ չի պիտի գողութիւն ու
աւազակութիւն անէր և չի պիտի դատապարտուէր չարա-
չար պատուհասի:

Ես կը շարունակեմ հարցմունքս փողոցի մարդոցմէն.

— Ինչո՞ւ այս մարդը հնար չունէր իւր ընտանիքը
խնամելու, իսկ ուրիշները ունին:

— Այնոր համար, — կրպատասխանեն ինձ, — որ դա չուզէր և կամ չզիտէր աշխատելու, իսկ այլք կ'ուզէն և գիտեն:

— Ինչո՞ւ չուզէր կամ չզիտէր, — կըշարունակեմ ես հարցնել:

— Այնոր համար չուզէր նա աշխատելու, որ ծոյլ էր, և չզիտէր այնոր համար, որ փոքր ժամանակէն սովորած չէր, — կրպատասխանեն ինձ:

Եւ ես դարձեալ կըշարունակեմ ինքս ինձ խորհելու՝ «Եթէ մարդս ծոյլ է և եթէ փոքր հասակէն աշխատանք չի սովորել՝ նա անշուշտ քաղցած կըմնայ: Ուրեմն ծոյլերը և տգէտները հարկաւ իրենց բոլոր կեանքը կարօտութեան մէջ պիտի մնան. կարօտութիւնը նոցա յանցանքի մէջ պիտի դնուի, իսկ յանցանքը միշտ պատժի ու երբեմն ալ մահապարտութեան պիտի ենթարկէ նոցա:

Դարձեալ իմ հոգին կըկորցնէ իւր անդորրութիւնը. այժմ նա կըտանջուի մարդուս ո՛չ քաղցած, մերկ կամ անտէր լինելու համար, այլ որ նա ծոյլ է և աշխատելու ընդունակ չէ: Թէեւ իմ ունեցած միջոցներս մէկ երկուսի պէտքերուն կըբաւականանայ, բայց քաղաքիս բոլոր կարօտեալներուն օգնութիւն հասցնել կարող չեմ. ուստի հարկաւ պիտի դիմեմ ձեռնաուղծութեան իմ մերձաւորներուս, որ միացեալ զօրութեամբ այս թշուառականներուն նպաստ հասցնեն:

Ահա արդէն լայնացաւ բարեգործութեան ասպարէզը և դարձաւ աւելի նուրբ և աւելի նպատակայարմար: Այժմ մենք օգուտը հասկացանք և հնարը գտանք ո՛չ թէ քաղցածին կշտացնելու և մերկին հագցնելու, այլ և մարդուս այնպիսի վեճակի մէջ դնել, որ նա ինքը հոգայ ոչ միայն իւր, այլ և ընտանիքի հացը, հալաւը և բնակարանը ձեռք բերելու:

Մէկ ուրիշ դէպք ևս: Աղքատին մէկը մէկ հարուստ մարդու կը յայտնէ, որ նա մէկ ընդունակ որդի ունի, բայց չունի կարողութիւն նորան զարոյցի մէջ կրթելու և կրնանորէ նորա օգնութիւնը: Հարուստը կը պատասխանէ նորան՝ «Գնա՛ կորի՛ր ինձմէն. ես ի՞նչ պարտական եմ օխտն-օտարի զաւակին կրթութիւն տալու. եթէ զաւակ ունենալ գիտես՝ ուրեմն ինքդ ալ աշխատէ՛ նորան կրթելու միջոցները գտնել: Ես քեզ համար աւելորդ ստակ չունիմ»:

Վրայ անցան տասնեակ տարիներ: Աղքատի որդին, մանկութեան օրերը օգտաւէտ ուսումէ և բարի օրինակներէ զրկուած՝ մեծ ճանփու վրայի աւաղակ դարձաւ. իսկ հարստի որդին, հօր նման, հարուստ վաճառական եղաւ: Մի օր, գիշերուայ ժամանակ, անտառի մէջէն անցնելով, հարստի որդու վրայ յարձակուեցաւ աւաղակներու խումբ, որի պարագլուխը յիշեալ չքաւորի որդին էր, և նորա հետը ունեցած բոլոր ինչքը կողոպտեց և իրեն ալ սպանեց: Հայրը լսեց այդ բօթը. սկսաւ լալ, ողբալ և իւր չար աստղի վրայ վանդատել:

Այժմ՝ ես կը հարցնում՝ մենակ աւաղակն էր մեղաւորը նորա որդու աղետալի մահուան. ինքը հայրը բոլորովն անմեղ էր այդ չարաշուք դէպքի մէջ...

Այս աղետալի արկածքը խելօք մարդոց խոկմունքի մէջ կը ձգէ. նոքա իրար հետ խօսելով և խորհրդակցելով՝ այն եղբակացութեանը կուգան, որ աւելի օգտաւէտ է մեզ համար օր առաջ անբաղին իրան դառն վիճակէն ազատել. քան թէ երեսի վրայ ձգած, անտէր թողնել նոցա:

Ահա՛, ևս առաւել լայնացաւ բարեգործութեան ասպարէզը. և մարդիկ նկատեցին, որ բարի գործելը ո՛չ միայն լաւ է, այլ և կարի հարկաւոր է ո՛չ միայն իրենց կարօտեալներուն, այլ և մեզ հարուստներու համար:

Այսուհետև արդէն դիւրաւ կը մեկնուի և կը հասկացուի զպրօցներու, վարժարաններու, աղքատանոցներու և հազար ու մէկ տեսակ աստուածահաճոյ բարեգործական հաստատութիւններու հիմնարկութիւնը:

Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆ.



ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՌԱՏԻ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՈՅ.

Առաջիկայ պատմութիւնս տակաւին չհսկած՝ իբր ներածութիւն ցանկալի էր մեզ երկու խօսք ասել ազգիս մէջ նշխարած մէկ առաքինութեան մասին, որ պատուական ժառանգութիւն է մնայած մեր խելացի նախնիներէն, և որն պրեթէ իբր հրեշտակ պահապան կանգնած է մեր չայերու վրայ՝ ամբողջ 600 տարի ամեն օրուայ ամեն վայրկեանը փրկելով մեր ազգը ամենայն երեսի և աներեւոյթ թշնամիներէ. — այդ առաքինութիւնն է՝ չայերուս մէջ խորունկ արմատ ձգած բարեպաշտութիւնը:

Զգիտենք՝ դարուս շրջանն է, թէ ժամանակակից փիլիսոփայութեան թերի ըմբռնմունքը, թէ՞ անցեալի տկար իմաստասիրելը, թէ՞ ընդհանուր բարոյականութեան պակասութիւնը, թէ՞ վերջապէս, խելքի պակասութիւնը: Բայց կրօնական անտարբերութիւնը սկսել է խրամատելու մեր իբր-լուսաւորեալներու բարոյական շէնքը, եկեղեցի, աղօթք, պատ, ուխտ, բարեպաշտ ծէսեր, սրբազան աւանդութիւններ, մինչև անգամ՝ Աստուծոյ բանը կորցրել են նոցա առջև իրենց սրբութիւնը, և այս նկատելի է մա-

նաւանդ բարձրագոյն ուսումնարաններէ ուսումնաւարտ-
ների և այնտեղ երթեկողների մէջ: Այդ շատ մեծ ցաւ
չէր, եթէ այդքանով սահմանափակուէր մեր տարաբաղ-
դութիւնը (երկբայութիւնը սկիզբն է հաստատուն հա-
ւատին). ցաւ է խոստովանելն, որ այս մոլորութիւններէն
ազատ չեն մինչև անգամ մեր կղերականք, որոնք, ըստ
երեւութին, ամբակուռ սիւներ պիտի լինէին մեր եկեղե-
ցուն: Այս աններելի սառնութիւնը դէպի ամենատուրբ
զգացմունքն, որպիսին է կրօնը, մարդիկ կ'անուանեն
«*պատմա-մարտիրոսութիւն*», կարծես թէ իւր սուրբ նախնեաց նուիր-
ական համարուած բաներն արհամարհեն, ծաղրեն, պրդ-
ծելն մարդկային մտաց ազնիւ ձգտումն է, կորովամոռ-
ութիւն է, առողջամտութիւն է:

Վաղուց արդէն ասած է, որ հաւատը եթէ քննուի,
հետազոտուի, դատմունքի տակ ընկնի՝ նա հաւատ չէ՝:
Միայն հաւատովն է, որ բարոյական աշխարհը յականտանի
կայ. եթէ կորչէ հաւատ՝ աշխարհիս երեսին քար քարի վրայ
չի մնալ. կրկորչին օրէնք, կրկորչին տէրութիւնք, կրկորչին
ընտանեկան յարաբերութիւնք, և մարդկութիւնը դադա-
նաց կարգը կ'ընկնի: Հաւատը, կրօնը եթէ շրջապատուած
չլինին սուրբ և նուիրական աւանդութիւններով, արա-
րողութիւններով, ծէսերով — նոքա ոչ այլ ինչ կըլինին,
բայց եթէ աննշանակ խօսքեր, դատարկ ձայներ, որքան
սուրբ են մեզ համար Աստուծոյ և Քրիստոսի խօսքերը,
այնքան սուրբ պիտի լինին և մեր պաշտելի նախնեաց
(սրբոց հարց) աւանդած ծէսերը՝ աղօթքը, օրհնութիւնը,
ուխտագնացութիւնը, պասերը, տօները և այլն, և այլն,
որոնք միայն հաւատը կըտարբայեն և մեր մէջ և մեր
կեանքը կ'անեն նպատակաւոր, իմաստալից: Մենք չուզենք
այստեղ հաւատի վրայ անվերջանալի բանակոռութիւն
բանալ, չուզենք նորա պաշտպանը հանդիսանալ: Եթէ
բիւրաւոր նահատակներու գործքն ու խօսքը չըհամոզե-

ցին բթամիտներուն ու լրբերուն, ի՞նչպէս կարող ենք մենք այժմ համոզել: Մենք միայն այս կ'ուզենք ասել, որ եթէ մեր ազգի մէջ օրինաւոր, արդիւնաբեր, իրեն և ընկերին օգուտ տուող մարդիկ կան, այդ միայն նոքա են, որոնք Նախնիներուս դաւանած հաւատը մանկական մտերմութեամբ մաքուր պահել են իրենց մէջ: Զարմանալի՜ երեւոյթ. մենք տակաւին տեսած չենք մի հայ մարդ, որ լինէր բախտաւոր, յաջողակ, յարգելի, հարուստ, իսկապէս խելօք, իսկապէս զիտուն, որ և ընդ նմին լինէր կրօնական ինչորեքերու մէջ անասորբեր, սառնասիրտ: Կարծես թէ անկրօնը, կամ դէպի իւր եկեղեցին սառնահոգին իւր ճակատին վրայ թշուառութեան խորամուխ կնիքը կը կրէ: Մանկութեան միջոցին մենք համոզուած էինք, որ քրիստոնեայ ասելով հայ պէտք էր հասկանալ այժմ մենք համոզուած ենք, որ հայ ասելով պէտք է քրիստոնեայ հասկանալ:

Հային իւր եկեղեցիէն դուրս փրկութիւն չի կայ:

Եղբայր հայեր, ամուր պահպանենք մեր պաշտելի Նախնիներու սուրբ աւանդութիւնները, աղօթքով սկսենք մեր ամեն գործը, հաւատով և յուսով յարատեւենք, և կըտեսնենք որ նա փառքով և օրհնութիւնով կը պսակուի: Դաստիարակութիւնը, կրթութիւնը, լուսաւորութիւնը միայն այն ժամանակ արդասաւոր են, երբ նոքա ամրացած են կրօնի հիման վրայ: Աշխարհքիս երեսին անկրօն ազգ կամ ժողովուրդ չէ՛ կարող լինել, և եթէ լինի՛ նա չի ասուիլ ազգ, այլ տաղաւկաց խումբ: Թէ՛ ազգի, թէ՛ ժողովրդի և թէ՛ գերպատանի ամուր պահողն է ոչ զէնքը, ոչ ոյժը և ոչ հարստութիւնը, այլ կրօնը միայն:

Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆ.



Ի ԳԱՆՈՒՍՑ ԽԱՉԱՏՐՈՑ ԼԱԶԱՐԵԱՆՑ

Ի 1847 ամի.

Յորժամ աշխարհ ամենայն
Վկայ Ձերոցըդ փառաց,
Դովէ զՁեզ և ընդ այն
Տայ զպսակ պարծանաց,

Զի՞նչ արացէ արդ նորոգ,
Դեռ ևս անյայտ բանաստեղծ.
Յանդգնեսցի՞ նա արդեւք
Նրդեւ զփառս Ձեր անեղծ:

Էանց բազում ժամանակ,
Յորմէ յետէ անհամբեր
Աւուր այնմիկ մնայաք,
Յորում զերես տեսցուք Ձեր:

Ահա եհաս օրն այն,
Եհաս և ժամն այն, յորում
Մեք որդեգիրքս համայն
Նմք բերկրութեան յանպատում:

Զի մինչդեռ դուք հեռացեալ
Էիք ի հոգս ծանունս,
Մեք գիտութեանց պարապեալ
Յառաջագէմ ի յուսմունս,

Սպասէաք անհամբեր
 Բարերարիցդ գալստեան,
 Զի ընդ պտուղս քրտանց Զեր
 Սիրտք բերկրեսցին հայրական:

Ով առաքեալք յաստուածուստ
 Ի փառս ազգիս հայկազեան,
 Շնորհաւորեմք զՁեր գալուստ
 Յայս ի տաճար գիտութեան:

Թող յարիցէ հոմերոս,
 Եւ յերգս առցէ նա զՁեզ,
 Զի վեհապանձ է Ձեր գործ,
 Քան զոր գործեացն Աբիլէս:

Օրհնեալ պտուղք, զՁեզ ծնաւ
 Հայրենասէր Մեկենաս,
 Զեօք բարձրագլուխ պերճացաւ
 Պճնազարդեալ մեր Պառնաս:

Օրհնեն բոլոր հայք զՁեզ
 Անդ, ուր խռովին անհանգարտ
 Պրոպոնդիտոս և Գանգէս,
 Երասխ, Տիգրիս և Եփրատ:

Զի թագք էք Դուք պարծանաց,
 Եւ հարք նոցայն Դուք որդւոց,
 Լուսաւորիչք էք մոաց,
 Նոցայն սրտից և հոգւոց:

Եւ ես յաւարտ իմ բանից,
 Օրհնեալ պտուղք մեծի տան,
 Յար գոչելով գոչեցից՝
 Հեցցէ՛ անուն Լազարեան:

Ի ԳԱՂՈՒՍՏ ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԻՆ ԳՈՐԾՈՅ ԿՈՎ-
ԿԱՍԵԱՆ ԿՈՍԻՏԵՏԻ, ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱԿԱՆԻ ԵՒ
ԱՍՊԵՏԻ ՎԼԱԴԻՄԻՐԱՑ ՊԵՏՐՈՎԻՉԻ ԲԱՌՏԿՈՎՈՒ:

Լուր բերկրալիւր յանկարծուստ
Զլսելիս մեր բաղխեաց,
Եւ զերջանիկ մեզ վեճակ
Սւետելով աւետեաց:

Զուարճացաւ և ցնծաց
Յաւուրս յայնմիկ Ճեմարան,
Իսկ բերկրութեան հայկազանց
Ոչ չափ եղև, ոչ սահման:

Ե՛հեղ զշնորհս իւր անչափ
Ի մեզ արքայ միւս անգամ:
Եւ մեք տեսաք յայտնապէս
Զգուժ նորա և խնամ:

Բայց ո՞վ էր այն, որ նմա
Զմէնջ բարիս քարոզէր,
Ո՞վ ողորմած ինքնակալ
Մեզ ողորմիլ թախանձէր:

Ո՛չ ապաքէն Դու, ո՛վ քաջ,
 Բարօրութեան մեր պատճառ,
 Դու զայս համայն արարեր,
 Վեհանձնութեամբ քո անճառ:

Յարեաւ յորդիս Թորգոմայ
 Եռանդագին առ Քեզ սէր,
 Զի Քեւ այս մեր վարժարան
 Եգիտ զշնորհս կայսեր:

Մեծապայծառ տեսարան
 Այսօր աչաց երեւի՝
 Զքեզ տեսեալ ձեմարանս
 Եւ բերկրանայ և հրճուի:

Եւ մեր տեսեալ աստանօր
 Զքեզ աղբիւրդ բարեաց
 Երախտավէպ մեք շրթամբք
 Ի յայսմ աւուր անմոռաց:

Շնորհաւորեմք և օրհնեմք
 Զքոյդ գալուստ յայս տաճար,
 Յորում ծաղկին յանդորրու
 Իմաստութիւն և հանճար:

Ի 4 յունիսի:

ՄԱՏԱՆԻ ՊՈՂԻԿՐԱՏԵԱՅ ¹.

(Շիլլէր, Թարգմանումինն ի գերմանացոց լեզուէ).

Նա ի վերայ տանեաց իւրոց կայր կանգուն,
Նա ընդ Սամսոն ընկճեալ ի դէմն զուարթուն
Գոռողաբար զաչս յածէր սրատես:

Այս ամենայն ինձ հպատակ է բնաւին,
Ասաց նա անդ եգիպտացոց արքային,
Լէր խոստովան, զի երջանիկ եմ յոյժ ես:

— Գտեր զշնորհս աստուածոց Դու վերին,
Որք ի սկզբան անդ քեզ նման պէտք էին,
Այժմ ընդ քո հզօր ձեռամբ նուաճին,
Այլ կեայ դեռ մինն զի քէն զվրէժ խնդրեսցէն,
Զքեզ երջանիկ շրթունք իմ ոչ կոչեսցեն,
Մինչև արթուն հսկէ քո քաջ թշնամին»:

Զև ևս արքայն էր զայս իւր բան աւարտեալ,
Այն ինչ մատեաւ ի Միլետեայ առաքեալ
Անդէն և անդ առ բռնաւորն հրեշտակ:
«Թող մատուցի, Տէր, աստուածոց ողջակէզ,
Ի զարդ հերացըդ դիւցապնոյ այժմ քեզ
Թող հիւսեցի թաւ ի դափնեաց ճոխ պսակ»:

¹ Այս Թարգմանումիննը փոքրիկ փոփոխութեամբ տպուած է
հանգ. Մ. Էմինի «Ընտիր հատուածք» գրքում.

«Նիղակահար անկաւ քո գոռ թշնամի,
 Զիս առաքեաց բերել զայս լուր բերկրայլի—
 Հաւատարիմ քո զօրավար Պոլիդորոյ,
 Ի ամբարձ ի ցոյց սեաւ յանօթէ առ ի նոյն
 Դեռ զարիւնոտ, յահ ի սարսափ երկոցուն
 Զթշնամնն նորա զգլուխ ահաւոր»

Սարտեաւ արքայն ընդ այս ուժգին պակուցեալ՝
 Ի իսկոյն առ նա յաւել ի դէմն շուարեալ,
 Քեզ ի սին բաղդ յոյս դնել օ'ն մի' լեցի,
 Յուշ ած զի անդ ընդ յարածուի, անողորմ
 Նաւէ նդ ալիս քո հոյակապ նաւատորմ
 Զնա դիւրաւ կարէ մրիկ խորտակել»

Զև էր նորա յաւարտ ածեալ զիւր զբան,
 Երբ աղաղակ զայն ընդմիջեաց ցնծութեան,
 Որ յեզերաց ծովու լինէր լսելի,
 Զօխ վաճառօք ծանրաբեռնեալ աշխարհաց,
 Գայր հասանէր անդր ի յեզերս հայրենեաց
 Յայնժամ անտառ կայմից նաւուց հրաշալի»

Ծիրանակիր հիւրն պակեաւ մեծապէս.
 — Բաղդ քո այսօր այո' շատ լաւ օգնէ քեզ,
 Սակայն երկիր, զի անհաստատ է յոյժ նա.
 Կրիտացեաց զինաւորեալ գունդք զօրեղ
 Արշաւանօք քեզ սպառնան դեռ ահեղ.
 Եւ չեն հեռի ի յեզերացըս նորա»

Եւ հաղիւ հազ նա աւարտեաց զիւր զբան,
 Այն ինչ ի նաւս ահա խռնին և ծփան
 Եւ բիւրք գոչեն ի մի բերան «յաղթանալ»,
 Աղատեցաք յարձակմանէն թշնամեաց՝
 Զկրէտացիս հողմ յարուցեալ հար ցրուեաց,
 Էանց, յանգեաւ գոռ պատերազմն արագ»

Լուաւ զայս հիւրն բարեկամ յահ սաստիկ,
 — Այո', զքեզ պարտ է կոչել երջանիկ,

«Բայց, ասաց նա, ես երկնչեմ վասն քո,
Զիս ահաբեկ առնէ նախանձ աստուածոց,
Կեանք՝ բնաւին լի բերկրութեամբ անխորոց
Զեղև երբէք բաժին ուրուք երչրայնոյ» :

«Եւ ինձ ինքեան քաջ յաջողէր ամենայն,
Յարբայական ի գործս իմ ի համայն
Առաջնորդէր ողորմութիւն ինձ երկնի,
Բայց զժառանգ մի ունէի սիրասուն,
Զնա է առ յինէն աստուած գերաւորն:
Ահա այսու զպարտս հատուցի ես բաղդի» :

Արդ եթէ զբեղ փրկել կամիս ի վշտաց,
հայցեա՛ս ուրեմն ի յաստուածոց ողորմած,
«Զի յաւելցեն յերջանկութիւնդ և զկսկիծ,
Դեռ չէ տեսեալ իմ զոք ուրախ վախճանել,
Որում յերկրի առատաձեռն ի վայել
Աստուածք զշնորհս պարգևեցին ի յերկնից» :

Եթէ գիք ոչ կատարեսցեն զքո խնդիր,
Լեր դու բանից բարեկամիդ ունկնդիր,
Եւ դու քեզէն կոչեա՛ս զվիշտ քո փութով,
Որ ի յընչից քոց թանգագնից յարբունի
է յաչս քո քան զամենայն սիրելի,
Առեալ զայն արկ անդէն և անդ յայս ի ծով :

Ասաց նա անդ յայնժամ շարժեալ յերկիւղէ՝
Ի մթերից, զորս կղզիս ամիտփէ
Այս մատանի էմ բարի լաւագոյն.
Զայն երինեանց¹ անշուշտ ձօնել ես կամիմ,
Զի ներեսցեն զերջանկութիւն նոքա զիմ :
Եւ զաւն անգին էարկ յալիս նա իսկոյն :

Վաղվաղակի ի վաղիւ անդր ընդ այգուն
Զկնորս մի ոմն ահա ի գէմն զուարթուն

¹ Զաստուածուհիք վրէժխնդրութեանն :

Ճեպ ի ճեպոյ գայ և մատչի առ արքայ,
Տէր, աւասիկ է իմ զայս ձուկն որսացեալ,
Որոյ նման յուռկան երբէք չէ անկեալ,
Ձայն քեզ ի նուէր մատուցանէ քո ծառայ:

Երբ խոհակերն ձկանն զփոր պատառեալ
Առ թագաւորն եկեալ ընդ նոյն ճեպընթաց
Ձայնեաց առ նա ի մեծապէս զարմացման,
Հայեաց, Տէր իմ, զոր կրէիր մատանի,
Ի փոր ձկան նուիրելոյ քեզ գտի.
Ձարմանահրաշ քոյոյ բաղդիդ չիք սահման:

Դարձոյց զերեսս Եգիպտացին սարսափեալ.
Ձիք ինձ հնար այլեւ յամել աստ և կեալ.
Ինձ բարեկամ դու ի յօրէս յայսմանէ
Ոչ կարես գոլ: Դիք զկորուստ քո կամին.
Երթամ, զի մի' մեռայց ընդ քեզ ի միասին
Ի կէտալ ի նաւ իւր, մեկնեցաւ ի նմանէ:

ՎԱՃԱՆ ԱՍԿԱՐԵԱՆ.



ՄՏԱՑՈՒԱԾ ԴՐՔԵՐ

ԱԽՇԱՐՈՒՄՈՎԱ, Շառատ, Թարգման. ռուսերէնից օր.
Ն. Փ. Մոսկուա, 1896 թ. տպ. Բարխուդարեանի,
զինն է 5 կոպ.:

ԲԱՃԱԹՐԵԱՆՑ ՍԱՐԳԻՍ, Հողային և տննական իրա-
ւունքը չին հայաստանում (հայկազանց շրջան, ար-
տատպած «Մուրճ» ամսագրից). Թիֆլիս, տպ. Մ.
Դ. Ռօտինեանցի, 1895 թ. զինն է 40 կոպ.:

ԲԱՅՐԸՆ ԼՈՐԴ, Դոն-Ժուան, երգ առաջին, Հեղինակի
պատկերով, Թարգ. Լ. Սբրահամեանցի. Մոսկուա,
1894 թ., տպ. Բ. Բարխուդարեանի. զինն է 50 կ.:

ԲԵՕՐՆՍՕՆ ԲԵՕՐՆՍՏԵՐՆԷ, Միակնութիւն և բազմա-
կնութիւն, հրաւէր հիւսիսային երիտասարդութեան,
Թարգ. ռուսերէնից Արշակ Եղիզարեան. Մոսկուա,
1896 թ., տպ. Բ. Բարխուդարեանի. զինն է 30 կ.:

ԴԻԿԿԷՆՍ 2., Վերադարձրած յանցաւորը, Թարգ. Արշակ
Եղիզարեանց. Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեսանի, 1896
թ., զինն է 8 կոպէկ:

ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ և Մոռացուած, Մոսկուա, 1896
թ., տպ. Բ. Բարխուդարեանի. զինն է 3 կոպէկ:

ԼԵԻՄՆԵԱՆՑ ԳԱՐԵԳԻՆ ԶԻԼԱՆԻ, Հայոց պարբերական մամուլը. պատմական տեսութիւն սկզից մինչև մեր օրերը (1794—1894) ընդարձակ ծանօթութիւններով: Արժանացած է Սահակ-Մեսրոպեան առաջին մրցանակին: Ալէքսանդրապօլ, 1895 թ. տպ. Արրահամ Մ. Մալխասեանի. Գինն է 3 ռ.:

ԼԵԲԲՈԿ ԶՈՆ, Հարիւր ամենալաւ գրքեր, Հին և նոր ժամանակի. թարգ. ռուսերէնից Արշակ Եղիզարեան. Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանցի, 1895 թ.:

ԼԵՖՈՐ Գ., Դրօշակ, պատմուածք. թարգ. Գէորգ քահաճի Մկրտումեանց. Թիֆլիս, տպ. Մովսէս Վարդանեանի, 1895 թ. գինն է 8 կոպէկ:

ԿԻԼԻԿԻԱ, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ: Մատենադարան «Արաքսի», Ս. Պետերբուրգ, տպ. Ի. Լիբեմանի, 1894 թ., գինն է 1 ռ. 25 կոպէկ:

✓ ԿՈՍՏԱՆԵԱՆՑ Կ., Նոր ժողովածու, գ. պրակ. միջնադարեան Հայոց տաղեր և ոտանաւորներ. Թիֆլիս, 1896 թ., տպ. Մ. Շարաձէի և Ընկ. գինն է 20 կոպէկ:

ԿՈՍՏԱՆԵԱՆՑ ՅՈՎՀԱՆՆԷՍ, Շիրակի լեզներաներից և ժողովրդական կեանքից. Ալէքսանդրապօլ, տպ. Ա. Մալխասեանցի, 1896 թ., գինն է 30 կոպէկ:

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ Մկրտիչ Սանասարեանի կտակի գործադրութիւնը. Ս.-Պետերբուրգ, 1895 թ.:

× ՄԱՔՍԸՄԱՃԵԱՆ ՍԱՐԳԻՍ Ք., Փռնի իմաստալից բանից ազգային մատենագրաց. Ռոստով, տպ. Յովհաննու Տէր-Աբրահամեան, 1886 թ.:

ՄԷՆԷՎԻՇԵԱՆ Հ. ԳԱՐԻԻԷԼ Վ., Յիսնամեայ յորեւանի առթիւ կենսագրական ափնարկ Գեր. Արսէն արքեպիսկոպոսի Այսնեան, ընդհանրական արքայի Մխիթարեանց Վիեննայ՝ կենաց և գործունէութեան. Վիեննա, Մխիթարեան տպարան, 1895 թ., գինն է 35 կոպէկ:

ԹԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ, Ներսիսեան Հոգևոր դպրոցի
սաների երկրորդ դպրոցական ճանապարհորդութիւ-
նը. Մոսկուա, 1895 տպ. Բ. Բարխուդարեանի, գինն
է 20 կ.:

ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ ՍԻՄԷՕՆ ԲՈՒՆԻՅ, Երէցփոխանութեան
հարցը Մոսկուայում. Մոսկուա, տպ. Բ. Բարխու-
դարեանի, 1895 թ., ձրի:

ՇԻԼԼԷՐ, Մարիա Սաիւարա, ողբերգութիւն Հինգ զործո-
ղութեամբ, թարգ. դերմաներէն բնագրից Գէորգ Բար-
խուդարեանց. Թիֆլիս, 1894 թ., տպ. Մ. Մարտի-
րոսեանի և Ընկ., գինն է 50 կոպէկ:

ՉԻՆԱԿԱՆ ԱՌԱՍՊԵՆԼՆԵՐ, Թարգմանեց Տիրուհի Կոս-
տանեանց. Տիֆլիս, 1895, տպ. Շարաձէի, գինն է 15 կ.:

ՉԻՓՈՎՍԲԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԼԱԳ ք., Հրահանգ քննու-
թեանց ստուգելոյ զվաւերականութիւն պատկաց և
այլն, գրեալ ի վերայ հիման օրինաց, թարգ. Սարգիս
ք. Մաքսիմաճեան. Ռոստով, տպ. Յովհաննու Տէր-
Աբրահամեանի, 1886 թ.:

ՍՈՒԱԿ ՀԱՅՍՏԱՆԻ, Ազգային լիակատար երգարան,
հրատարակեց Գրիգոր քահ. Գրիգորեանց, հատոր
առաջին, չորրորդ տպագրութիւն, Մոսկուա, 1895 թ.,
տպ. Բ. Բարխուդարեանի. գինն է 1 ռ. 20 կոպէկ.

ՍՕԼՕՎԵԱՆ ՅՈՎԱԿԻՄ, Ղօնաղլուղս ֆապ, վոդովիլ մէկ
արարուածով. Մոսկուա, 1896 թ., տպ. Բ. Բարխու-
դարեանի:

ՏԱՂԱԽԱՐԵԱՆ ՏՕԲ. Ն., Ծագումն հայ տառից. Վիեննա,
Մխիթարեան տպ., 1895 թ., գինն է կէս Ֆրանկ:

ՏԱՐԵՑՈՅՑ ՀԱՅ-ՌՈՒՄԱՆԵՐԷՆ, 1896 թ. խմբագրեալ
ի տ. Ղևոնդ քահանայէ Փափաղեան. Կալաց, գինն
է կէս Ֆրանկ:

ՏԷՐ-ՄԻՔԷԼԵԱՆ ԱՐՇԱԿ, Պսակի սուրբ խորհուրդը, Վա-
ղարշապատ, 1894 թ., գինն է 50 կոպէկ:

ՏՈՒՐԳԵՆԵՎ ԻՎԱՆ, Սրձակ բանաստեղծութիւններ,
 Թարգ. Ալէքսանդր Մատուրեան. Մոսկուա, տպ. Բ.
 Բարխուդարեանի, 1895 թ. զինն է 50 կոպէկ:
 ՐԱՖԳԻ, Խամսայի Մէլեքութիւնները (1600 — 1827),
 նիւթեր չայոյ նոր պատմութեան համար. Երկրորդ
 տիպ. Թիֆլիս, տպ. Յովհաննէս Մարտիրոսեանցի,
 1895 թ., զինն է 1 ռ. 75 կոպ. Ճանապարհածախ-
 սով 2 ռուբլի:

МАРРЪ Н. Я., Сказаніе о Католикосѣ Петрѣ и
 ученомъ Іоаннѣ Козернѣ. Изъ сборника факуль-
 тета Восточныхъ языковъ «Восточныя замѣт-
 ки». СПБ. Тип. Императорской Академіи Наукъ.
 1895.

„ Мнимое географическое названіе тротостак,
 въ исторіи Агоуангела. СПБ. Тип. Императорской
 Академіи Наукъ.



ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Նոյն Կայսերական Մեծութեանց Թագադրութեան Հանդիսին Ազգիս Վեհափառ Հայրապետի կողմից ներկայ դանուելու Մոսկուա էր եկել սինոյի նախանդամ Երեմիա արքեպիսկոպոսը, որին ուղեկցում էր, որպէս Թարգման, Մեսրոփ ք. Տէր-Մովսիսեանը: Նոցա հետ ժամանեց նոյնպէս Թագադրութեան Հանդիսին ներկայ լինելու համար Հաշտարխանի առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանը: Երեմիա սրբազանին, ինչպէս յայտնի է պաշտօնական տեղեկութիւնից, տրուել է ս. էջմիածնի գանձարանից 3000 ռուբլի ծախսերի համար, սակայն Թեմիս կառավարիչ Յուսիկ ք. Մովսիսեանի առաջարկութեան համաձայն՝ Ս. Պետերբուրգի Հայոց եկեղեցեաց խորհրդարանն էլ որոշում է 1000 ռուբլի յատկացնել այդ նպատակին: Եւ այդ մարդկանց ժամանակ է եղել, որ «բուերի և չղջիկների Թագադրութեան մէջ յանկարծ (երևի, մոզական դաւաղանի զօրութեամբ) կենդանի մարդկանց կենդանի ձայն է լսվում. աւերակներից կանգնում են նոր հրաշալի շինութիւններ, չորացած այգիները փոխարկվում են ճոխ այգիների, խանդարված տնտեսութիւնը մասնագէտների ձեռքն է յանձնվում. ամայի դաշտերը ոռոգվում

են ջրով և բուսնում անտառներ. վանքի դասարանի «ընդունվելը» (Տես Հաշման-փչան թերթ, № 58, Մոսկովայից գրած պ. Լ.-ի վայրահաշ համալը): Բայց թողնե՛ք այդ, դա շատ հեռու կրտսնէ մեզ: Սրբադաններին հասարակութիւնը ընդունում է ամենասառը կերպով. կատարվում է միայն պաշտօնականը. — Վեհափառի ներկայացուցչին դիմաւորելու ուղարկվում է կայարան եկեղեցեաց փոխ-նախագահ պ. Ս. Յովհաննիսեանը, իսկ այնտեղ նոյա համակրողներից 3—4 հոգի են լինում: Հասարակութիւնը սպասում էր, որ Երեմիա սրբազանը կըբերէր Նորին Վեհափառութեան ողջոյնն ու օրհնութիւնը, սպասում էր, որ Սրիստակէս սրբազանն էլ կըտար իւր ողջոյնը այն հասարակութեան, որի մէջ էր դնւում. սակայն ոչ մէկը խօսեց, և ոչ իսկ միւսը: Զար լեզուները ասում են, թէ դորա պատճառը այն է եղել, որ հասարակութիւնը չէր գնացել նոյա դիմաւորելու: Բայց Երեմիա սրբազանը մի անգամ պատարագեց, իսկ նորանից առաջ Մեսրովը վարդապետը, որ և քարոզ խօսեց: Մեսրովը վարդապետի մասին մենք կարող ենք ասել, որ իւր անմիջական պարտականութիւնը չգիտէ— ո՛չ զգեստաւորուել, ո՛չ պատարագել, ո՛չ խաչ բռնել, ո՛չ խաչակնքել, և ոչ իսկ քարոզ խօսել: Պատարագի ժամանակ մաղերն ու մօրուքը հանգիստ պէտք է թողնել, իսկ բեմից քարոզելու ժամանակ ձեռքը կողքին յցել շուրջառի տակ—վայել չէ վարդապետին: Դաւով քարոզին՝ պէտք է տսել, որ շատ բանից խօսեց, բայց ոչինչ չսասաց: Խօսեց մի ինչ որ սէյիդի մասին, խօսեց իւր ճանապարհորդութիւնների մասին, խօսեց լեզուի մասին, խօսեց և ս. Էջմիածնի սրբազումար միաբանութիւնից, բայց ո՛չ մի տեղ հարկ չհամարեց իւր Պետի անունը տալ: Այն միաբանութիւնը, որի անդամներից մէկը հիւր լինելով մի հեռաւոր գաղութում և ամեն բանից խօսելով՝ մոռանում

է իւր Պետի անունը յիշել, այն միաբանութիւնը սրբագործար չէ, իսկ մի այդպիսի եղբայր կարող է ամենափառ զաղափարը կազմել տալ ամբողջ միաբանութեան մասին: Եւ ինչպէս կարող է ազդել այն հոգեւորականի քարոզը, որ բեմից անմիաբան ողւոժ է խօսում և կամենում է, որ այդպիսի քարոզը զին ու նշանակութիւն ունենայ: Երանի՛, եթէ նա էլ միւսների պէս ձկան լռութիւն պահպանէր: Մեզ մնում է բաւականանալ քչով և աւելացնել միայն. ինչ որ ցանկէք, էն էլ կըհնձէք: Ինչպէս եկել էին, այնպէս էլ վերադարձան մայիսի 27-ին, թողնելով հասարակութեան վերայ ամենածանր և անախորժ տպաւորութիւն:

«Հանդիսի» հետեւեալ զրքում, որ լոյս կըտեսնէ այս տարուայ վերջը, կըտանք մեր ընթերցողներին հանգուցեալ Բաֆֆիի «Սալբի» վէպից մի քանի գլուխ, որ հեղինակը խորին յարգանքով նուիրում է «աննման Միքայէլ Նալբանդեանի ընդ միշտ օրհնեալ յիշատակին»: Կըտանք նոյնպէս կենսագրական տեղեկութիւններ հանգուցեալ Բաֆֆիի մասին և նորա մի քանի կարեւոր թղթերը:

Պատրաստած է յիշեալ զրքի համար նաև Սիլվիո Պելլիկոյի «Le mie prigioni» յայտնի աշխատութեան թարգմանութիւնը:



Հ Ա Ն Դ Է Ս

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ս. Ռ. Ս. Ջ Ի Ն Գ Ր Ք Ի.

I. Նա սպասում է դեռ... պատկեր. Գ. Չուբար. — II. Մի' կարծէք որ ես... բանաս. Գամառ-Քաթիպա. — III. Առաջին սէր, վէպ Տուրգենևիվից. — IV. Չորս բանաստեղծութիւն. I. Արազն է-կաւ, II. Մ-ին, III. Երգչի անէծքը (Ուլանդից) և IV. Կեանք. Յով. Յովհաննիսեան. — V. Անկոչ Տիւրք, վէպ. Պ. Տ. Աղամեան. — VI. Մտի'ր կուսաստան, բանաստ. Պ. Տ. Աղամեան. — VII. Ման-կական թոթովանք, բանաստ. Ղ. Աղայեանց. — VIII. Յիմար ոչ-խարներ (առակ մեծերի համար), Գ. Չուբար. — IX. Արևելեան զըշյց. Եւրէինովից. — X. Ազգային բանաստեղծ, բանաստ. Աղէք. Ծատուրեան. — XI. Ագեւոս իշխանի պատմութիւնը, Վ. Գարշի-նից. Վ. Մ. — XII. Ձեմ աղօթում... բանաստ. Նադսոնից. Պ. Տ. Աղամեան. — XIII. Յարութեան գիշեր, աւանդութիւն, Շչեդրինից. Ա. Ծատուրեան. — XIV. Գիւղի ասպետները, զըշյց Մօնալէից. — XV. Մուսա, բանաստ. Ա. Ծատուրեան. — XVI. Կիսրար կամ Մշեցու հայու մը խոստովանանքը. Վ. Յ. Մ. — XVII. Հայ Ժո-ղովուրդը, նորա այժմեան լեզուի և մատենագրութեան վիճակը Ռուսաստանում, համառօտ տեսութեամբ. Ստ. Նազարեանց. — XVIII. Հին ցաւ. Գար. Ենգ. — XIX. Նիւթեր մատենագրութեան պատմութեան համար. I. Ստեփանոս Նազարեանցի թղթերից. II. Ոսկան. Վ. Կտակը. — XX. Շատերէն մէկը, պատկեր. Սիւլիկ. — XXI. Ձէյթիկների կինն առ պանդուխտ ամուսինն իւր. Յ. Չաք-րեան. — XXII. Խոստովանանք, Կուպէոնաթոռին հացը, Նոր ա-ղօթք, հայլի. Սիւլիկ. — XXIII. Վանեցի պառաւ Սառայի իրատն առ Կուարթաթ Խաթունն և Կուարթաթ Խաթունի պատասխանը. Մ. Կ. Միրախորեան. — XXIV. Օձի խածած, պատկեր. Սիւլիկ. — XXV. Մատենախօսութիւն. I. Շէքսպիր և իւր համէթ ողբեր-գութեան աղբիւրն ու քննադատութիւնները, աշխատասիրեց Պ. Տ. Աղամեան դերասան. II. Կորած Մարգարիտ, վէպ-նկարագրու-թիւն Ս. Փիլոյեան. — XXVI. Մահացուցակ Յ. Շիշմանեանի. — XXVII. Բաֆֆի մահ (մի առաջարկութիւն). — XXVIII. Հայ գիւղացիների հայեացքը բնութեան երևոյթների վերայ. Յ. Մ. Տուտուխեան. — XXIX. Ակամայ պատասխան. — XXX. Հրատարակ-չի կողմից. — XXXI. Յայտարարութիւններ:

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Գ Ր Ք Ի.

I. Մի կտոր հանած իմ տպելու պատրաստ աշխատասիրութիւնից. Պ. Պոռնեանց.—II. Բանաստեղծութիւններ Մ. Նալբանդեան.—III. Մեր Մարկոսը, պատկեր. Լէօ.—IV. Վերջին փափագ, բանաստ. Ս. Շահագիզեան.—V. Կաճեալ ծուկեր, յիշողութիւն, Տ. Փիրումեան.—VI. Ընկեր իմ, բանաստ. Նազսօնից. Յ. Յովհաննիսեան.—VII. Հասօ, պատկեր. Գ. Զուբար.—VIII. Երեք արմաւենի, բանաստ. Լերմօնտովից. Դամառ-Քաթիպա.—IX. Յիշողութիւն, Սօնէտ, Ինչպէս քաղցր երազ, բանաստ. Յ. Յովհաննիսեան.—X. Պոյէտ, բանաստ. Ա. Մատուրեան.—XI. Հայի ճուտ, երգ. Աշղղ Ջիւանի.—XII. Երեք զրոյց. I. Վախկոտ. II. Գիւղի Մուրացկան և III. Զինուորի Դիւբիւն. Գիւղի զր-Մօպասանից. Ա. Մատուրեան.—XIII. Երգ, բանաստ. Նժդեհ.—XIV. Մեր դաշտն ու հովիտ... բանաստ. Գ. Բարխուդարեան.—XV. Սիրոյ վշտեր, Զարատանց զոհ, Այս աշխարհին (Հայնէից), բանաստ. Ա. Մատուրեան.—XVI. Լաւ բժշկեցին, պատկ. Նար-Դոս.—XXII. Պօէտ և Աստղեր. Սպիտակ զգեստ, բանաստ. Թարգ. Ս. Թանդեան.—XVIII. Արձագանք, Տաճկա-Հայաստան և Հայք, բանաստ. Գ. Բարխուդարեան.—XIX. Ճանապարհորդութիւն դէպի Հայաստան, Յր. Բօղէնշտէդտից. Յ. Բարխուդարեան.—XX. Թէ ովքեր էին ս. Վարդանանց և նոցա ժամանակակից Հայ սերունդի դաստիարակիչները. Լորդ.—XXI. Երկու խօսք, Յառաջաբան. Մ. Նալբանդեան.—XXII. Ազգային նկատողութիւնք. Լապտեր Հայաստանի. Ս. Նազարեանց.—XXIII. Արկողղ ըղլոյս... Գ. Եպ. Այվազեան.—XXIV. Յուցակ ստացեալ արկից... Մ. Թաղիադեան.—XXV. Մատենախօսութիւն—Տեղեկութիւն ի գիրս պատմութեան Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողիկ կոչեցելոյ. Ն. Ն. Բիւզանդացի.—XXVI. Բանք ի Պօղոս Կրօնաւորէ, Դ. վ. Փիր-ղալէմեան.—XXVII. Ազդ. Այլ և այլք:

I. Վարժապետ, II. Վարժէվօր. պատկ. Ախտամերկեան.—III. Սատանայի օղիւ, պատկեր, Սիւլիւկ.—IV. Խօնթլախ, պատկ. Սիւլիւկ.—V. Յայտարարութիւններ:

Ե Ր Ր Ո Ր Դ Գ Ր Ք Ի.

I. Աղամայ մութը, աւանդութիւն. Պերճ Պոռնեան.—II. Բանաստեղծութիւններ Մ. Նալբանդեան.—III. Դոն Բիշոտի իմաստը (Ն. Ստօրոթենկօ).—IV. Տղմուտ, Զինուորի մահը, Տեսնում եմ ահա... բանաստ. Յ. Յովհաննիսեան.—V. Առաւօտեան ժամին, սերրիական զրոյց. Լ. Կ. Լազարեվիչից.—VI. Դողժան երգիչներին, բանաստ. Լ. Մանուէլեանց.—VII. Փիլիսոփայական

մանկավարժութեան հիմունքներն ըստ Լինդների. Յ. Բարխուդարեան, —VIII. Երկու վարդ (Մ. Վալդաուից), Մարգարիտներ և Երգեր (Ր. Պրուտցից). Երգեր (Հայնէից). Փոթորկից յետոյ (Ր. Պրուտցից), բանաստ. Ա. Ծատուրեան:—IX. Ինչո՞ւ աշխարհս բարեկարգուած չէ, Կոտ-Մուրիկայից. Մ. Տէր-Զաքարեանց:—X. Մաշան, պատկեր, Սուլթան:—XI. Մարտովից. Օտար պօէտին. Սոկոլովից. Նոր լուրեր Տաճկահայաստանից. Էջը. Եթէ դու մի օր... բանաստ. Զ. Բալուղեան:—XII. Հանս Շիլդերգերի կեանքի և ճանապարհորդութեան մասին: Վ. Սուրէնեանց:—XIII. Դաւաճանին. Իմ հայրենիքն... բանաստ. Լ. Մանուէլեանց:—XIV. Կարաբաս, Մօրիս Մօստրցիից. Զ. Պ.:—XV. Արծիւ, բանաստ. Սէթ:—XVI. Ուրուականներ, Ֆանտազիա. Ի. Տուրգենեվից:—XVII. Ծեր ժամկոչը, գարնանային իդիլիա. Վ. Կօրոլենկոյից:—XVIII. Թափօր Աւագ ուրբաթ երեկոյեան, բանաստ. Պ. Հ. Աղամեան:—XIX. Վարդանանց պատերազմի պատճառներն և հետեանքը. Եր. Շահազիզ:—XX. Լէօպօլդ Ֆօն Ռանքէ և հայոց Պատմութիւնը. Լօրդ:—XXI. Շահիր Խաչատրի երգերից:—XXII. Մատենախօսութիւն. Սօս և Վարդիթեր, վէպ Պերճ Պոռեանցի. Մ. Նալբանդեան:—XXIII. Ստացուած գրքեր:—XXIV. Յայտարարութիւններ:

I. Հայագիտութիւն, հաղորդեց Կ. Եղեանց.

Զ Ո Ր Ր Ո Ր Դ Գ Ր Ք Ի.

I. Սպանդանոց, պատկեր. Բաֆֆի:—II. Բաց աչքով երազ, զրոյց (Պօլ Բուրժէից). Տիկ. Մարգարիտ:—III. Բանաստեղծութիւններ. I. Ո՛հ, կանայք... (Լէօպարդիից). II. Կար մի ժամանակ. III. Բուզըլոյի Մադոննայի առաջ. Յ. Յովհաննիսեան:—IV. Վերածնութեան դարու մանկավարժական տեսութիւնները (Ն. Ստորոժենկոյից):—V. Մի մեծ յօգուածից մի հանգուցեալ կտոր. Գառնեցի:—VI. Մի կնոջ խելացի մոքերը. Յ. Բարխուդարեանց:—VII. Բանաստեղծութիւններ, I. Խաղաղութիւն ձեզ (Թ. Մուրից). II. Մեղդիա (Ֆրուգից) Ա. Ծատուրեան:—VIII. Մառգօ, պատկ. Ժիւլ Կլառեսսի. Գ. Զուբար:—IX. Խղճի խայթոցներ, հոգեբ. պատկ. Գ. Զուբար:—X. Դիմակահանդէս, դրամ 4 արարուածով. Լերմոնտովից Յ. Զանուսեանց:—XI. Բանաստեղծութիւններ. I. Մենք կը լուրմ ենք, II. Կտակ, III. Վահագնի ծնունդը. Զ. Բալուղեան:—XII. Մոռացուած շիրիմ, բանաստ. Բաֆֆի:—XIII. հատուցումն, բանաստ. Պ. Հ. Աղամեան:—XIV. Մի երես մեր նորագոյն պատմութիւնից. Դ. Աղայեանց:—XV. Բանաստեղծութիւններ, I. Կէս գիշեր. II. Սոնետ. III. Թշուառին. IV. Ա՛խ, երանի չէ՞. Աղէք. Ծատուրեան:—

XVI. Բանաստեղծութիւններ, I. Անպտուղ երկունք. II. Է՛հ, սա էլ իմ սէրը. III. Հայու մեծերը. Զ. Բալուղեան.—XVII. Նախարար և նախարարութիւն. Եր. Շահազիզ.—XVIII. Աշուղի երգ.—XIX. Մատենախօսութիւն—Դաւիթ և Մհեր. Լէօ.—XX. Մկրտիչ էմին.—XXI. Ստացուած հրատարակութիւններ.—XXII. Յայտարարութիւններ.

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Գ Ր Ք Ի

I. Հայրիկը-կաթողիկոս. Ա. Մատուրեան.—II. Զատկական յիշողութիւններից. Պերճ Պռօշեանց.—III. Թագուհու արտասուքը, ականդութիւն. Մամին-Սիրիրեակից.—IV. Մի' վհատիւր, բանաստ. Ա. Մատուրեան.—V. Բանաստեղծութիւններ, I. Արևմուտքը բորբոքուեց (Լերմոնտովից). II. Վէճ (Լերմոնտովից). III. Իմ կինը և իմ սուրը (Պէտեօֆից). Գ. Բարսուղարեան.—VI. Նեղզա, պատկեր. Թարգ. Տիկ. Մարգարիտ.—VII. Բանաստեղծութիւններ. I. Վարդանանց օրը. II. Երգիր, հոգեակ. III. Քուն եղիր... Յ. Յովհաննիսեանց.—VIII. Վեցերորդ և եօթներորդ դարերի հայոց մտաւոր կեանքը. Եր. Շահազիզ.—IX. Հրէական մեղեդիներ, բանաստ. Բայրընից. Ա. Մատուրեան.—X. Բայրընը Մխիթարեանների մօտ. Իւրիկ Վեսելովսկի.—XI. Բանաստեղծութիւններ. I. Բարի չրեշտակ. II. Հալածուած սէր. Ա. Մատուրեան.—XII. Շոգենաւի վերայ, զոյց. Թարգ. Տիկ. Մարգարիտ.—XIII. Բանաստեղծութիւններ. I. Սրբազան ուղին. II. Աւետիաց երկիրը. III. Հայդուկ. IV. Հասարակաց խումբը և աշուղը. V. Ժողովրդին. VI. Ուխտաւորներ. Յ. Կոստանեանց.—XIV. Մի երես հայոց հնազոյն պատմութիւնից. Եր. Շահազիզ.—XV. Մի քանի խօսք Թէոդոսիայի (Կաֆայի) հայկական հնութիւնների մասին. Ս. Թանգեան.—XVI. Հուքեւ, դրամա հինգ գործողութեամբ, գործ Ս. Առնոյի. Յ. Զանուժեանց.—XVII. Յուշարարի նամակը Կ. Պոլսից. Յ. Պարոնեան.—XVIII. Ի Զամէեան հայր Միքայել.—XIX. Վանեցի մուրացկանուհուն, բանաստ. Գ. քահ. Մկր.—XX. Գամու-Քաթիպայի Թարմ շիրմի առաջ, Ա. Մատուրեան.—XXI. Լեհաստանի և Արևմտեան-հարաւային Ռուսիայի հայերը. Ի. Ա. Լիննիչենկոյից. Թարգ. Խ. Յովհաննիսեանց.—XXII. Անվեհեր ասպետութիւն. Մ. Բարսուղարեան.—XXIII. Հրատարակչի կողմից.—XXIV. Յայտարարութիւններ.

Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ Գ Ր Ք Ի.

I. Դոն-ժուան, երգ առաջին, Լորդ Բայրենից, [Ժարգ. Լ. Աբրահամյան. — II. Խաչատուր Արուսեանի Վէրք Հայաստանին և իմ Սօս և Վարդիթերը, յիշող. Պերճ Պօօշեանցի. — III. Բանաստեղծութիւններ. 1) Դարուն. 2) Նոր սերունդին. 3) Մարգարէ (Լեւոնտովից). 4) Թէ իմանայիր. . . 5) Կարեկցութիւն. Գէորգ Դոդոխեանի. — IV. Ստեփանոս Նազարեանցի նամակները. Ա.—Ժ.—V. Բանաստեղծութիւններ. 1) Հայրենիքի կարօտը. 2) Դիր. Ալ. Ծատուրեան. — VI. Լուկի-Լարաս, Դիմիտրի, Բիկելսից. վէպիկ յունական ապստամբութեան ժամանակից. Մ. Բ.—VII. Բանաստեղծութիւններ. 1) Ժ. Ժ. Ռուստոյի յիշատակին. 2) Հենրիկոս Թովմաս Բաբլի յիշատակին. 3) Սուրբ Մեսրոպի տօնին. 4) Կնդուկ Պոչատի և Նորա Սանչոյի մկրտութիւնը. Միքայէլ Նալբանդեան. — VIII. Պատասխան վաղեմի ընկերիս նամակներին. Անդրէաս. — IX. Բանաստեղծութիւն. Թոմմոմ է քնքոյշ... Գ. Մ.—X. Մաճակալի երգը. Ջիւանի. — XI. Դպրոցական ճանապարհորդութիւն. Իս. Յարութիւնեանց. — XII. Պօլոս Աւագեանի Յիշատակարանը. Խ. Յովհաննիսեան. — XIII. Ծխականաց ընդհանուր ժողով Մոսկուայում. Մ. Բարխուդարեան. — XIV. Սալդատսկի բազարի պուրիցիստին. Մ. Բ.—XV. Ստացուած զրքեր. — XVI. Այլ և այլք. — XVII. Յայտարարութիւններ.

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Մ.

Յաղագս Հայկական դպրութեան ճառ, Միքայէլ Նալբանդեան.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Ներկայ 1896 թուականին

(ՏԱՄՆԵՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՍԵՆՈՐԵԱՅ ԹԵՐԹԸ

Թիֆլիսում

հրատարակվում է նոյն դիրքով և ծրագրով ամեն օր, բացի կիրակի և
սոսներին հետևող օրերից:

(Տարուայ ընթացքում Նոր-Դար-ը լոյս կըտեսնի առնուազն
220—225 անգամ)

ՆՈՐ-ԴԱՐ, -Ը ՍՏԱՆՈՒՄ է ԵՒ ՍԵՊՏԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

Նոր-Դար-ի տարեկան գինն է 10 ռուբլի, վեց ամսուանը
6 ռ., Թիֆլիսից դուրս ամիսը 1 ռ. 50 կ., Հատով դուրսը՝ 7 կ.,
Թիֆլիսում՝ 5 կոպ.:

Ներողայի, Թիւրքիայի և այլ հեռավոր երկրների բաժա-
նորդները վճարում են տարեկան՝ 40 ֆրանկ:

Սմերիկայի բաժանորդները վճարում են տարեկան՝ 8 դոլար:
Նոր-Դար-ին բաժանորդ են գրում իւրաքանչիւր ամսի 1-ից
միայն:

Թիֆլիսում բաժանորդ են գրում մի միայն Նոր-Դարի-ի
խմբագրատանը:

Խմբագրութիւնը գտնւում է Պուշկինսկայա փողոց, Սկուե-
րի դիմաց:

Օտար քաղաքներից բաժանորդ գրողները ղիմում են
խմբագրութեան այս հասցէով՝ Тифлисъ, въ редакцію ежеднев-
ной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase), Rédaction
du journal «NOR-DAR».

Խմբագիր հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ:

Ն Ե Ր Կ Ա Յ 1896 Թ Ո Ւ Ա Կ Ա Ն Ի Ն
Կըհրատարակուի Մոսկուայում մեր խմբագրութեամբ

„Խ Օ Ս Ք“

Կ Ի Ս Ա Մ Ե Ա Յ Ն Ա Ն Դ Է Ս

Հ Ա Ն Ր Ա Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք Ի Ե Ի Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

«Խօսքի» բաժանորդագիրն է 3 րուբլի Ռուսաստանում, իսկ արտասահմանի համար—10 ֆրանկ.

Բաժանորդագրութեան համար պէտք է դիմել. Москва, Редакция «ХОСЪ», իսկ արտասահմանից—Moscou, Rédaction de la Revue «KHOSK».

Խմբագիր-Հրատարակիչ ՍՏԵՓԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ.

„Ա Ր Ա Ք Ս“

Վ Ե Ց Ա Մ Մ Ե Ա Յ Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Դ Հ Ա Ն Դ Է Ս

Բաժանորդագիրն է 3 րուբլի.

Իւրաքանչիւր գիրքն առանձին 2 րուբլի 50 կոպէկ.

Հասցէն՝ С.-Петербургъ, Семену Гуламирянцъ, կամ St.-Petersburg, Simeon Goulamiriantz.

„Ա Ր Ա Ր Ա Տ“

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն, Բ Ա Ր Յ Ա Կ Ա Ն, Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն, Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Ե Ի Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Ա Մ Ս Ա Գ Ի Ր Ը

Ս Ո Յ Ն 1896 Թ Ո Ւ Ա Կ Ա Ն Ի Ն

Հրատարակվում է նոյն ուղղութեամբ և ծրագրով:

Բաժանորդագիրն է Ռուսաստանում 4 ռ., Եւրոպայում՝ 5 ռ., Հնդկաստանում՝ 6 ռ.

Հասցէն՝ Эчмиадзинъ, Типографскій Комитетъ.

„ԱՐԶԱԳԱՆՔ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը (Վե-
րամինովսկի փողոց, № 22, տուն Խանդավանի) և «Կենտրո-
նական Գրալաճառանոցում»:

Բաժանորդագինն է տարեկան 10 ռ., կէս տարուանը 6 ռ.:
Օտարաբաղադրացիք պէտք է դիմեն. Тифлисъ, Редакция
«АРДЗАГАНКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du
journal arménien «ARDZAGANG»:

Խմբագիր-Հրատարակիչ ԱՅԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ:

„Մ Ո Ւ Ր Ճ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ 1896 Թ.

Բաժանորդագրութիւնը շարունակվում է.

Տարեկան գինն է 10 ռուբլի:

Ուսուցիչների և ուսանողների համար 8 ռուբլի:

Վճարել կարելի է նաև մաս - մաս, սկզբում 5 (կամ 4)
ռուբլի, մնացեալը լրացնելով մինչև յունիսի վերջը:

Բաժանորդագրութեան համար դիմել խմբագրութեանը.
Тифлисъ, въ Редакцію журнала «МУРЧЪ», իսկ արտասահմա-
նից՝ Tiflis, Rédaction de la Revue «MOURTCH»:

„ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ“

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԿԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

1896—Ժ. ՏԱՐԻ.

Կըհրատարակուի առաջիկայ տարին նոյն ծաւալով՝ աւելի
ճոխ և բազմակողմանի բովանդակութեամբ:

«Ամսօրեայ հանդիսի» տարեկան բաժանորդագինն է 10
ֆրանք=4 ռուբ. Թղթագրամի—կէս տարուանը՝ 6 ֆր.=2.50 կ.:

Հանդիսի բաժանորդ գրուել ցանկացողները դիմելու են
կամ գործակալաց և կամ ուղղակի խմբագրութեան հետեւեալ
հասցեով. A la Rédaction de la Revue «HANTESS». Au Couvent
des RR. PP. Méchitharistes.

VIENNE (Autriche) VII/2 Mechitharistengasse 4.

ԲԱՑՈՒԱԾ Է Բ Ա Ջ Մ Ա Վ Ի Պ Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆ

1896 (ԾԴ) ամին

«ԲԱՋՄԱՎԻՊ», ամսագրերի տարեկան գինն է 10 փռանկ
(4 ռուբլի) կանխիկ վճարելի:

Գործակալութեան և բաժանորդագրութեան պայմանքն
նոյն կրման.

Բաժանորդ գրուիլ ցանկացողք կարող են դիմել Տպարա-
նիս Տեղութեան պոսպէս.

DIRECTION DE L'IMPRIMERIE ARMÉNIENNE
de S. Lazare, VENISE (Italie.)

Սոյն 1896 թուականից հրատարակվում է Թիֆլիսում

ԼՈՒՄԱՅ

Գ Ր Ա Կ Ա Ն Հ Ա Ն Դ Է Ս

Առաջին զիրքը լոյս է տեսնում յունուարի 1-ին, իսկ երկ-
րորդը՝ յուլիսի 1-ին:

«Լումայի» բաժանորդները ձրի ստանում են մի օրինակ պատի
օրացոյց (օտար տեղերից ուղարկում են ճանապարհածախք 20 կ.):

«Լումայ» հանդիսի բաժանորդագինն է 3 ռ. իւրաքանչիւր
գիրքն առանձին արժէ 2 ռուբլի:

Հասնէ՝ Тифлисъ, Свящ. Гюту Аганянцъ.

Մոսկուայում, կարելի է ստանալ «Հանդիսի» խմբագրատանը:

„Թ Ա Տ Ր Ո Ն“

ԳՐԱԿ. ԵՒ ԹԱՏԵՐ. ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ.

Տարեկան բաժանորդագինն է 3 ռ. 30 կ., արտասահման
10 ֆրանկ:

Հասցէն՝ Тифлисъ, Александру Тарханянъ կամ Tiflis,
Alexandre Tarkhanian.

Հրատարակիչ՝ ԱՂԷՔՍԱՆԴՐ ԹԱՐԽԱՆԵԱՆ:

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Կ Ի Ս Ա Մ Ե Ա Յ

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Դ

Ն Պ Ա Տ Ա Կ.

ա. Հաւաքել և մշակել հայ ազգագրութեան վերաբերեալ նիւթեր.

բ. Մանթագնել ընթերցողներին ընդհանուր ազգագրութեան և առաջնորդել նիւթեր հաւաքելու.

Ծ Ր Ա Գ Ի Ր.

ա. Տեղագրութիւն հայաստանի և հայ գաղութներին.

բ. Պատմական և մատենագրական յօդուածներ հայոց և նրանց հետ շփող ազգերի մասին.*

գ. Վիճակագրութիւն հայոց և համեմատութիւններ.

դ. Մարդաբանական հետազոտութիւններ և համեմատութիւններ.

ե. Հնախօսութիւն հայաստանի և համեմատութիւններ.

զ. Ազգագրութիւն և ցեղագրութիւն.

է. հայոց բանաւոր գրականութիւն. (Ժողովրդական ձայնագրուած եղանակներ.) ա. նիւթ. բ. ուսումնասիրութիւն.

ը. հայ գաւառաբարբառների ուսումնասիրութիւն. բառ և ոճ.

թ. Ազգային իրաւաբանական սովորութիւններ.

ժ. Մրադիրներ և եղանակ նիւթեր հաւաքելու.

ժա. Գրախօսութիւն ա. հայերէն և օտար լեզուներով հայ ազգագրութեան և բ. ընդհանուր ազգագրութեան վերաբերեալ գրքերի և յօդուածների.

ժբ. Այլևայլք.

ժգ. Յայտարարութիւններ.

Առաջին գրքի գինն է 2 ռուբլի.

Բաժանորդագինն է 5 Ֆր. կամ 2 ռուբլի կանխիկ.

Դիմել. Rédaction de la Revue „Azgagrakan handess“: Schouscha (Caucase), կամ Вѣ Редакцію журнала „Азгграканъ андесъ.“ Шуша.

Հրատարակիչ Եր. ԼԱԼԱՅԵԱՆ.

* Մանթ.—Այս և վերոյիշեալ մասն ազգագրութեան վերաբերեալ ծրագրով եւ ծաւալով:

Ասենք, բոլորին պարզելու համար, որ «Ազգագրական Հանդէսը» իւր կոչման համեմատ բոլորովին հեռու է մնալու քաղաքական և կուսակցական հարցերից:

JOURNAL OF THE AMERICAN MEDICAL ASSOCIATION

PUBLISHED WEEKLY

CHICAGO, ILL., U.S.A.

Vol. 10, No. 1

Published by the American Medical Association, 535 North Dearborn Street, Chicago, Ill., U.S.A.
 Entered as Second-Class Matter, June 26, 1911, Post Office at Chicago, Ill., under No. 100,000.
 Accepted for mailing at special rate of postage provided for in Act of October 3, 1917, authorized on July 1, 1918.

JANUARY 1, 1921

Published by the American Medical Association, 535 North Dearborn Street, Chicago, Ill., U.S.A.
 Entered as Second-Class Matter, June 26, 1911, Post Office at Chicago, Ill., under No. 100,000.
 Accepted for mailing at special rate of postage provided for in Act of October 3, 1917, authorized on July 1, 1918.

Published by the American Medical Association, 535 North Dearborn Street, Chicago, Ill., U.S.A.
 Entered as Second-Class Matter, June 26, 1911, Post Office at Chicago, Ill., under No. 100,000.
 Accepted for mailing at special rate of postage provided for in Act of October 3, 1917, authorized on July 1, 1918.

Published by the American Medical Association, 535 North Dearborn Street, Chicago, Ill., U.S.A.
 Entered as Second-Class Matter, June 26, 1911, Post Office at Chicago, Ill., under No. 100,000.
 Accepted for mailing at special rate of postage provided for in Act of October 3, 1917, authorized on July 1, 1918.

Published by the American Medical Association, 535 North Dearborn Street, Chicago, Ill., U.S.A.
 Entered as Second-Class Matter, June 26, 1911, Post Office at Chicago, Ill., under No. 100,000.
 Accepted for mailing at special rate of postage provided for in Act of October 3, 1917, authorized on July 1, 1918.

ՍԻՐԼԻՐԻԿ.

ՏԱՅՄԱՔՎԱՅ ՊԱՆԵՐ

ՅԱԻԵԼՈՒԱԾ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻ,



1871

STUDY OF THE

CONSTITUTION

OF THE UNITED STATES

ԱՆԿԵՂԾ ԲԱՐԵՎԱՄԱԿԱՆ ԵՒ ԽՈՐԻՆ ՅԱՐԳԱՆԱՅ

Ն Ո Ւ Է Ր

ԲԱԶՄԵՐԱԽՑ, ՄԵԾԱ-ՂԱՆ-ՂԱՐ ԵՒ ՄԵԾԱՀՈՉԱԿ

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻՆ

Ը Ս Տ Դ Ի Պ Ա Ց

ՆՈՐԱ 25-ԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆԻՆ,

Ի ԿՈՂՄԱՆԷ ՆՈՐԱ ԵՐԿՐՊԱԳՈՒԻՆ.

ՆՈՐ-ՆԱԽԻՉԻ ԱՆ,

Նոյեմբերի 15, 1888 ամի:

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Ք.

ՄԿՐ ԶԱՄԱՆՈՎ (Մաքառ Փեթոսովիչ).

ՍՕՖԻԱ, նարա աղջիկը.

ՎԱՐԴԵՐԵՍ ՓԱԽԱԼՈՎ (Վլատիմիր Վազնեսենիչ).

ԽԱԶԱՐՈՍ, նարա օրդին (Լազըր Վլատիմիրիչ).

ԿԱԼՈՒՍ ՈՒՐՈՒՐՈՎ (Ուլաս Պաղտանիչ Եասնոէպցով).

ՍՈՒՐԲՈՒՀԻՆ-ՃԻՃԱՆ, ծեր ու զէնկին էրփէվարի.

ԹԱԳՈՒՇ, պանտր աղջիկ. Հաձի-մային սօյր.

ԱՔՍԷՆՏ, Մկր Զամանովին խարիպիկիտ սօյր, տունի խզմէթքար.

ԽԱՆԻՉԻՃՈՎ, ատվաքած:



ՏԱՅՄԱՔՎԱՅ ՊԱՆԵՐ.

Տեսարանը կրներկայացնէ Մկր Զամանովին տունին զալը. մէջը պէծէր անկարգութիւն. կինիի, ռախիի չէշիտ - չէշիտ փիծիլքաներ, սննդաններ, պաքալներ, ռիւմքաններ, որը խմած, որը կէս խմած, որն ալ իլինք. քանի տեղ քառնի սննդներ պացած, մարած չրախներով. վրան պօռի կտորներ, մարած փափիոսաներ, ցիկառներ, փէփէլնիցաներ, շշօնքաներ. կետին վրայ թալտած քառներ, մարած փափիոսաներ, տեղ-տեղ ալ վօծած կինի, կոխկոտած պօռ:

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ.

ՓԱԽԱԼՈՎԸ, ՈՒՐՈՒՐՈՎԸ, ԱՔՍԷՆՏԸ.

ՓԱԽԱԼՈՎԸ.

(Տուտէն կամաց-կամաց նես կըմտնէ, կտակը կօլօխէն կըհանէ անողքին վրան կըտնէ, ասքով-անքով կընայէ. կերմայ կամացուկ սաղ սէմնի տուռը սլօվէն կըպանայ, կօլօխը նես կըխողէ-կըհանէ, տուռը նորէն կըփակէ, ոտքի մատին ծարովը կըհեռանայ տուռէն). **Ի՛, իսա ի՞նչ է իսա, մարդ չի կայ ինչ.** (սահանք կըհանէ կընայէ). **Կիտիս քի կանոխ չէ՛ ու,** իսախատար ատէն քուն կըլացվի՞. (չորս քովը, վարը կընայէ) **նայիս-նը, նայիս-նը՝** աս քըշէր ալ տաքա լուսէ-լուս քէֆեր արիլ ին. **չաթլամիշ** բլային պարէմ. **իսա ի՞նչ է իսա,** թամամ զասօռինի տուն է - ու. **հոս նայէ՛, հո՛ս՝** իրեք սթօլ թուղթ խաղացիլ ին. **հայ քու խելքիդ ինչ ասիմ,** շաշխըն Մա-քառ **Փեթուօվիչ.** պապայիդ անախըլտա միլիօններուն, միտք ու-

նիս, տակէն մոնելու, վրայէն էլլելու—հա՛. թիւֆ-թիւֆ. ամա ի՛նչ. հապա հէլա՛լ պիտի մասրէիք խարիւ-Խաղարին արդար քրտինքը ու օղորմելի էրփէվարիին արուն - արտըսունքը, հարամ վաստըկածը տայմա հարամ ալ եօխ կըլայ, ատոր իշկիլը կա՛յ որ, Ասվածը կըսիրիս՝ հէչ լսված պա՛ն է որ՝ հարամի օրդին օրինաւոր, սըրայի մարդ ըլայ... (նես կըմտնէ Ուրուրովը). Ի՛հ, տուն ալ էկար—հա՛. տուն ինչ գործ ունիս հոս, Պարե տեսանք:

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Ի՛նչ գործի տուն էկիլ իս-նը՝ ա՛ն գործին ալ ես էկիլ իմ, պէլլի՛ մի չէ. այլըխիս վատէն էկիլ է-շտէ:

ՓԱԽԱԼՕՎԸ.

Շատ է:

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Էփպէյի պան է:

ՓԱԽԱԼՕՎԸ.

Կէնէ՞ կէնէ:

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Տասնըմէկ հազարներու կըհասնի...

ՓԱԽԱԼՕՎԸ.

(Ուռուֆ ըլալէն). հա՛ծէ, ինչ կասէ. խո՞րդ:

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Աւելի չի լա-նը: հա՛պա տուն...

ՓԱԽԱԼՕՎԸ.

հայ մարդ լամ, Ուլաս Պաղտանիչ, ամմա օյինի էկիլ ինք-հա... հա՛ծէ՝ իմնն-ալ քուկտէն պակաս չէ կիտի՛ս. ես ալ թա՛մամ տասը հազար ունիմ վըրան, իննը հազար հինկ հարուրը զապօռ արիլ էր խանութէս ու զավտէս, հինկ հարուրն - ալ անօրները տուվի նաղտ ստըկով, որ հէսապներս կըլօրնայ-տէյին, էտե ի՛նչ կըլայ մեր պանը:

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Ի՛նչ ատոր խասէվէթը կանիս, կըկոխինք, ստակը կառ-նունք-տա:

ՓԱԽԱԼՕՎԸ.

Այլէկ որ ստակ ունենայ. հապա չունենայ-նը.

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Տունը ծեռքէն կառնունք-տա.

ՓԱԽԱԼՕՎԸ.

Հապա տունն ալ ուէ՛հին տրած լանը. անկից ալ պէ՛թէր
սուտ քուփչիով մէկին անունին վրայ անցուցած լանը, զէրէ
Մաքառ Փեթոփլէէն շատ թահմին չանելու պան չէ—կիտի՛ս.

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

(Վախցած). Ա՛ն է որ կորանք.

(Նես կըմտնէ Աքսէնտը լաթը, աւելը ու կրակամանը ծեռքը):

ՓԱԽԱԼՕՎԸ.

Պարե՛, Աքսէնտ-ա. ի՞նչ է իսա. հայ-հայ յորձուկու ա-
տէններ է՝ ծերոնք տահա քուն կըլան. չէնէ՞ գըշերը զիաֆէթ
ունէիք.

ԱՔՍԷՆՏԸ.

(Վեր-վար ժողոտելէն). Ծան-տուված պան չի կար ամա՛ էնկ
պաշ զիաֆէթին ուվաթիթ չէր անիլ մեր էրեկ գըշերվայ քէֆը.
տուժի՛ններով փունճ, տուժի՛ններով շամփանցքի, մուզկը, տա-
վուլ-ղուռնա, թուղթ, թանց—ի՛նչ կուզէր սիրտդ՝ ալայը թա-
մամ՝ էղաւ.

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

(Արմացած). Ինչէ՞ր կասէ իսա մարդը.

ԱՔՍԷՆՏԸ.

Հապ-պա ինչ կիտ-տէ-իր մե-զի. աս առջի՞ ժումն է ինչ.
շաբաթ կանցնի՞ որ՝ մէմը-էրկու ատպէս առասպել քէֆեր չու-
նենանք (կէտինը ու սթօլներուն վրան կըցուցնէ). Իսա Սողոմ
Գոմորը կըտեսնո՞ւս.

ՓԱԽԱԼՕՎԸ.

Էտե՞, ատոր ստա՛կ կօղտէ.

ԱՔՍԷՆՏԸ.

Ես կօղտէ ասի՞լ իմ օր. ատէ որ միլիօններուն քասսայէն արդըն պաշլայիլ ինք խումորի քերուցքով մանէթները ժողվելու-տա... . Կով կիտէ՝ խանութները հոս-հոն քանի՜-քանի հազարներու զապօռ ունինք:

ՓԱԽԱԼՕՎԸ.

(Էրեսը մեռելի կուն կտռած). Աքսէնտ-ա՛ խորդ կասիս խա. նէութե՞լի պանը ատ տէրէճէին հասիլ է:

ԱՔՍԷՆՏԸ.

Հապա, Ասվածտ կըսիրիս, ասխատար խարճին ստա՞կ կըտի-մանայ. հարը մէկ սէմթէն, օրդին մէկալ սէմթէն, սէմէյսթվան ալ նացամէն պէթէր. աս հագվել-զուգվելուն, աս չէշիտ-չէշիտ երիփաթներուն, աս պալ-զիաֆէթներուն, աս Ռաստովի պահ-չաներ քաշ գալուն, աս մուղիքանթին շապաշներ տալուն, աս կեր ու խումին, աս խաղերուն, աս թանթանաթին խազնա՛ կօգտէ. մեր Մկր-ային չէքի մէքամ պապայի միրաս, սաղ աշխարքի մի-րան ալ քիչ կուգայ:

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Ան չէ ամա՛ էրեկ իրիկուն որո՞նք էին ծեր միսաֆիրները:

ԱՔՍԷՆՏԸ.

Միսաֆիրներ. չէ՛ տահա ինչ տուակիլներ ասա՛-տա, ի՞նչ կըվախնաս-օր. Սօռինովին Կարապետը, Պօյաճիօվին Օվանէսը, Այուճիօվին Սէմէնը, Պաշպուռունին Օվակէմը, տուակիլ Այուլ-թինը, տուակիլ Պապուկը, տէր Մանիէլին Խաչուկը, Մօմճի Իվանուշը:

ՓԱԽԱԼՕՎԸ.

Մէկ-ալայմը Զիպիրի քանտիտաթներ էին ասիս-նր:

ԱՔՍԷՆՏԸ.

Էյ-շտէ, իմացի՛ր խարէրներս. Ան չէ ամա՛ էրթամ-նայիմ աղաներս եթախներէն էլլի՞լ ին, չէնէ չէ՛. (Կերծայ):

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ.

ՓԱԽԱԼՕՎԸ, ՈՒՐՈՒՐՕՎԸ, ՀԱՃԻՄԱՆ ՈՒ ԹԱԳՈՒՇԸ.

ՓԱԽԱԼՕՎԸ.

Հայ անա-սընը, ասպէս ալ հէքիաթ-պա՛ն. անախըլտա միլքերուն տէրը իտա տէրէճէին գայ հասնի—հա՛ն...

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Ատ պանը սիֆթէյէն պէլլի չէր-ինչ. ամա ինծի հարցու-նուս-նը՝ մեղքը Մըլըրինը չէ՛, մեղքը նարա պապային՝ Պետոս-այինն է, որ օրդին քանի որ տահա տղայ էր՝ պանի-գործի չի տըրից, ծեռքը պզտի սէրմիա չի տուվից, կամաց-կամաց առու-տուրի ալըշմիշ չարաւ. տայմա զըպնած կըպայէր՝ չիլլայ որ խաբ-վի, եա մէկ զարար անէ։ Նբոր ինկաւ-մեռաւ-նը օղորմելի Մըկը-րը հայ-հայ էռսուն տարու էր, ամա աշխաբք տեսած չէր, մարդ չէր ճանչնար, բարեկամ չունէր. ծեռքը մէկէն իմէկ նօմայ ստակ ինկաւ-նը՝ աչքը մնւթ կոխից, շտէ ինչ որ տասնըութը - քսան տարու լէվէնտի կըվայէր-նը՝ օղլուշախի հար տեղովը՝ ան պաշ-լայից անելու. թօի արաւ կուլնուն մէկ-ալայմը զասօռիններ, տունը թռախթիր տառցուց ու պապային հարամ վաստըկած ստակն-ալ կըցից քամին տալու... Ատ ատպէս ամա՛, իմ խել-քիս հէջ տեղ չի անիլ քի Մկը-ան սէրմիային կօլօխէն պաշլա-յեած ըլլայ. մալը չէվօ կասին, թօ՛ ասին-տա. մեր հալխին լու-զուն չիտի՞ս-ինչ. նարա նաղտ ստըկէն, նարա միլքերէն, նարա խութուններէն, ի՛նչխատար ալ չի լանը՝ կէնէ տարին-տարենա-կան 60 — 70 հազար մանէթի տախօտ պիտի լայ. թօ՛ խարճէ քառսուն հազար, թօ՛ խարճէ յիսուն հազար. վերջը-վերջը՝ ալայ տախօտն ալ թօ՛ խարճէ,—վացցուն-եթմիշ հազարը քիչ պա՛ն կիտիս... Զէ՛, պօշ պան է. թահմինովըս կօլօխը սաղ պիտ լայ.

ՓԱԽԱԼՕՎԸ.

Ես ալ ատպէս թահմին կանիմ, զէրէ պապայէն մնացածը պէթէր նօմայ պան էր. անոր տախօտովը—տուն ի՛նչ կասիս—չորս սէմէյսթվայ կըլար քառմիթցա լալու, տուն շախմօ կանիս, միլիօններ է-ու. ամմա՛ Աքսէնտ - ային ասածը ի՛նչ խուճուռ պան է։

ՈՒՐՈՒԲՕՎԸ:

Ատ հերկէլէին հաջածին ի՛նչ կընայիս, կըհաջէ—շտէ. հայերուս փախիկոտ, չար-լուզու էղածը տահա նոր կիմանաս. (եախան կըծօծփէ). Ասված փրկէ, ազատէ խարիպիկիտ սօյէն. վօվ է մեր ունիմ-չունիմը աչքովը ծըծողը—խարիպիկիտ սօյը, վօվ է տարին տասվերկու-ամիս քիւյէնի պէս մեզի ուտողը—խարիպիկիտ սօյը, վօվ է մեր տուներուն սըռը սուտ-խորդ հալխին մէջ փըռողը—խարիպիկիտ սօյը, վօվ է մեր քուէտիթին, մեր առու-տուրին տակը փոս-փորողը—խարիպիկիտ սօյը. դատաստանի մէջ մեր տուշմանին եարտըմ անողը, մեր դէմ սուտ-վկան վօվ է—մեր խարիպիկիտ սօյը, էնկ վերջն ալ, մեր էնկ-չար, աներեւոյթ դուշմանը վօվ է—մեր խարիպիկիտ սօյը. Կըհաւատաս, Վլատիմիո Վաղնեսնիչ, ռահաթ կենալ կուզեսնը՝ էնկ սիֆիթէ փոնա-ւելով տունէտ փախ պիտի տաս խիւլոնց, Քաղաքին ալ մեծ ֆայտա տուված կըլաս, զէրէ ատ պօշպօղաղներուն խելքի կը պերիս, քեզիմէն իւմէտները կըկտուին ու բանի-գործի կըլան, քաղաքս ալ կ'ազատվի շան-լուզու քիւհաններէ:

ՓԱՆԱԼՕՎԸ:

Խորդ է ասածտ, խորդ է. ես ինքս ալ չօտան հասկըցիլ իմ..... (Նես կըմտնէ Սուրբուհին-ձիծան):

ՍՈՒՐԲՈՒՀԻՆ - ՃԻՃԱՆ:

(Հագված, ծնոքը տայեախ, Թէզպէհ ու կապուտ եալըխ). Օղորմի՛ Ասված (հիւալէն կասէ ու կալածի անելէն կուլխուն փօշին ու սե պառխըթէ պոռնուսը կըհանէ). Վըյհ, ճանս, մեռայ, հայ-հայ հոգիս կէլլէ... նէֆէսս կըպոնըվի... պէթէր յոգնեցայ... (ծանտոծանտ ու խորունկ-խորունկ նէֆէս կառնէ). Իսա ինչ է իսա... հարսըս չերենալ-ո՛ւ. կնացիլ է-ի՞նչ է. (Փախալօվին). պարե՛, Մկր, աս ո՛ւտեիս է հարսըս:

ՓԱՆԱԼՕՎԸ:

(Ամուր ծանով, ինչպէս ծեր մարդու հետ կալածի կանին-նը). Սուրբուհին-ձիծա, եանըշ իս, ես Մկըրը չիմ, ես Վարդերեան իմ, չի ճանչըցար—ինչ:

ՍՈՒՐԲՈՒՀԻՆ - ՃԻՃԱՆ:

Վը՛յ, հազար վայ թէփէի՜ս, մէկէն իմէկ չի ճանչըցայ, հա-

Ժէ Վարդերես՝ տուն իս-հա՛մ. պարե՛ւ. հա՛մըս ինչպէս է, տղա՛քդ ինչպէս ին. . .

ՓԱԽԱԼՈՎԸ.

Փա՛ռք Ասծու, աղէկ ին, ծեռ.քտ կը պագնին. . .

ՈՒՐՈՒՐՈՎԸ.

Պարե՛ւ, ձիճա, ծեռ.քդ տուր պագնիմ. . . չէնէ՞ ինծի ալ չի ճանչըցար:

ՍՈՒՐԲՈՒՀԻՆ - ՃԻՃԱՆ.

Ձէ՛, տահա-ինչ, քեօ՞ն իմ-ինչ, Կալուստն իս-տա:

ՈՒՐՈՒՐՈՎԸ.

(Խնտալէն). Կըտար:

ՍՈՒՐԲՈՒՀԻՆ - ՃԻՃԱՆ.

(Սիրտը ցաւած). Խեի պա՛ն է ինչ. կըտա՛րս որն է. փա՛ռք Ասծու, տահա ըուս կայ աչ.քիս մէջը. ան պամալ տուսէն նես մտայ-նը՝ աչ.քս մէկէն իմէկ խամաշմիշ եղաւ ու չի կրցայ Վարդ-երեսիս համան ճանչնալու, չէնէ աչ.քս ի՞նչ անի որ. ամպէս ալ ա կանճս, ամպէս ալ պերնիս ա կռաները. ինա կաղինը չի կա՞յ՝ չա՛թ-չա՛թ կը կոտորիմ. անխատար օր՝ մէկ.քանի ատէն է՞ է վիլքի պէս շատ քալել չիմ կրնալ, համան սիրտս խափմիշ կանէ, նէ-ֆէսըս կը պոնըվի. չէնէ ի՞նչ ունիմ օր, փա՛ռք Ասծու. . .

ՓԱԽԱԼՈՎԸ.

Ան չէ ամա, հաճի-մա, քանի՞ տարու կըլաս:

ՍՈՒՐԲՈՒՀԻՆ - ՃԻՃԱՆ.

(Ծուռ-ծուռ, վախնալէն Ուրուրովին վրան կընայէ). հրեշտակա-պետը գայ-նը՝ յիսուն էրկուսէս կէլլիմ, յիսուն իրեքըս կըմո-տնում:

ՈՒՐՈՒՐՈՎԸ.

(Քովինա). Մա՛րը լամ՝ տուտիտ, տօխսան վիրէ.քդ չի մո-տնուս-նը. (Ամուր). Ի՛, ատիւտար կաս—հա՛մ. էփպէյի պան է-ու. (Փախալովին աչքով կանէ). ես կիտէի քի՛ շատ-շատ քառ-տուն օխտը ըլաս. . .

ՍՈՒՐԲՈՒՀԻՆ - ՃԻՃԱՆ.

(Կոտորովելէն). Ձէ՛ տահա-ինչ... մեր պանը արդըն մնցաւ, այսօրէտե մինք Ասծու ճանխան պիտ նայինք ու հոգուններուս էտեէն պիտ լանք. հէյ կիտի տունեա:

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

(Կէնէ Փախալօվին աչքով կանէ՝ կօյնա՝ նայէ ինչպէս պիտի խնցնում տարան). Կիտիս քի, հաճի-մա, շատ կանոխ է-ու. տահա ի՛նչ եղաւ հոգիին էտեէն ըլալու. քու տարիքիտ շնտխվայ էր-փեվարինները տահա նոր մէյտան կէլլին էրիկ փնտուելու. օրի-նակներ չի կա՞ն-ինչ. . .

ՍՈՒՐԲՈՒՀԻՆ - ՃԻՃԱՆ.

(Կոտորովելէն, պուռունկները թօփ անելէն). Վը՛յհ, հաղար վա՛յ կուլխուս (կըխնտայ) հի՛, հի՛, հի՛, հի՛... Կլխաւորս տուն շատ ապրիս եղաւ-նը՝ ես թամամ՝ քսան տարու-պիլէ չի կայի. շըն-տխվայ խեղքս վրաս լար-նը՝ կէնէ-կէնէ, շինտէն սօրա ատ առաս-պել պանները միտքէն անցնելը պիլէ հոգու մեղք է. .

ՓԱԽԱԼՕՎԸ.

Խորդ քի, հաճի-մա, ես չօխտան կուզէի հարցունելու. ատ-պէս կէնճ էրփեվարի մնացիր-նը՝ ինչո՞ւ մէմալ չի կարգըվեցար. մեր հալըն ստըկի տամահ է, տուն ալ նօմայ ստակ ունէիր, քե-զի ուզեցո՞ղ չէր կտնըվէր. . .

ՍՈՒՐԲՈՒՀԻՆ - ՃԻՃԱՆ.

Է՛, հէ՛, հէ՛, հէ՛, ախպարս, իմ կուլխուս էկածը հէքիաթի, պէս պան է, իրեք օր, իրեք գըշեր պատմիմ-նը՝ չիմ խալսիլ: Սղորմած-հոգիս շատ աղէկ, շատ աղէկ մարդ էր ամա՝ ինծի հա-մար արուն խըմող հարամիէն պէթէր եղաւ. Փսակիս հինկում ամիսը տամլան զարկից ոտքերուն, ճանըմ-ճանըմ տեի պէս մարդուն անկալ արաւ: Հարսնիքիս պաշմաքին տահա ոտքս էր, որ պաշլայեցի նարա հիւանտ-նայողը ըլալու—ճարը տար, ճուրը պէ՛ր, պարձը սաղէն սօլ, սօլէն սաղ տաւոցո՞ր,—հեռի հարկին-քէ—ամանը տար, եարան կապէ՛, ասպէս իւր-իւրու իւր-իւրու ան-ցաւ իրեք տարի. մէկ օր ալ, սապահթան կանոխ գամ-նայիմ՝ որ, ի՛նչ նայիմ, կլխաւորս տուն շատ ապրիս եղիլ է, հետն ալ

իմ՝ կենճ սեցուցիլ է. Ատ հէչ, Տուն նարան սատանաութիւնը մէմը նայէ՛. ինծիմէն կաղտուկ կտակ արիլ է, կտակին մէջն ալ ասպէս կըրել տուվիլ է. երոր ես նարա մեռնելէն ետքը կարգը-ւել չուզենամ-նը՝ նարա ալայ կայլքին տէրը ըլամ, չէնէ՛ ինչպէս չըռ-չպլախ նես մտիլ իմ-նը—գէրէ ես խարիպիկիտ տունէ էի—ամպէս ալ չըռ-չպլախ տուս էլլիմ նարա շէմքէն. էրկու կրակի մէջ կասին-նը՝ ես ալ թամամ ատպէս էղայ, ի՞նչ անէի. որ խեւը մէքամ չպլախ էրփեվարիի աշըխ պիտ լար, երոր մեր տեղի վարդի պէս հոտոտ, տեսօք աղապ աղջիկները սիրիւ-սիրիւ տու-նը կըմնան ու կըթռումին. Ես ալ միտքիս մէջը ասի՝ երոր ճա-կատիս կիրն էր առանց կլխաւորի օրս անցունելու-նը՝ հէջումասա հալիին էտեաճ չիմ՝ ըլալ, նեղութիւն չիմ՝ քաշիլ. ինծի համար պօլ ու ռահաթ կապրիմ: Երկանս խազնան տակս տըրի, ինքս ալ վրան ամուր նստայ. Ես կիտէի քի՛ աշխրըքիս էրեսը ստակէն աղէկ պան չի կայ. ամմա, երոր իմացայ, որ մարդուս համար ստա-կէն ալ թանկ ու անուշ պան կայ՝ արդըխ ուշ էր... հայ կիտի տունիս:

ՓԱԽԱԼՕՎԸ:

Նէուժեմի լի քեզի շէնքով ուղեցողներ չի կտնըվեցան. շն-տրիս համան լէվէնտ տղայ չիլար, թեկարան էսլի եա օրքեվարի լար. լսողաց իմ, քեզի համար կասին քի՛ կէնճութգ չի կտնը-վելիք տեսօք էիր—կարմիր, ճերմակ, պօյով-պօսով, կօվտալը՝

ՍՈՒՐԲՈՒՀԻՆ - ԺԻՃԱՆ:

Շտէ ատ է ասածս-տա, էղան, ինչու չէ. ամա ես էի ան-խելքը. տամահութին արի, ստակէն պաժնըւել չուզացի, ինա կետնին տակի խազնա պայող ճիները չի կա՛ն, թամամ ինիվոնց լմանեցայ ու պայծառ արեւըս իմ ծեռքովս խաւարցուցի. Լսի՛լ իս—խեղութիւնը տօխսան իննը չէշիտ կըլայ, կասին-նը, —իմն ալ թամամ՝ ատ տօխսան իննէն մէկն էր. Կինիմարդ ասած արարա-ծին էնկ մեծ ամբախտութիւնը էրիկ չունենալն է. ատոր համար ես տայմա կասիմ կինիմարդոց՝ հաքա խելքերըս ժողտեցէք, կլխաւորներուդ խաթուր աղէկ ճանչըցէք. դուժոխքին անասնա-կան կրակը ի՞նչ պան է որ էրփեվարիին էրեցքին տիմացը:

ՈՒՐՈՒՐՕՎԸ:

Էրկադ սէմթէն ժառանգներ կա՛ն:

ՍՈՒՐԲՈՒՀԻՆ - ՃԻՃԱՆ.

Կային ամա, էտե էտեէ ինկան-մեռան. մնացիլ է մենակ թագուշը, որ մօրը սէմթէն օղորմած-հոգիիս սօյ կուգայ, Ի՞նչ է որ:

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Հէպէթ, Ասված քեզի էրկար կեանք տայ եալ, ամմա վերջը-վերջը իտա թագուշը անախտա միրասին տէրը պիտ լայ-հա՛. ասածներէն կայ-նը միլիօններու կայիք է:

ՍՈՒՐԲՈՒՀԻՆ - ՃԻՃԱՆ.

(Սիրտը էլլած). Քափիկ ալ չի տալ, չէքի միրաս, Իմ օր սենայ, ես ուտելու հագնելու պիտամիշ անիմ ու միլիօնի կայիքը մէքամ սուղութմա պանուրի ծոցը տնիմ,—ամմա՛ խօլայ պան, անոր աղէկը՝ ալայը կառնում ճուրը ու կրակը կըձըգիմ-տա՛. Ես չի կրնամ սիրտս ուզեցածին պէս վայլելու ու խայիլ ըլամ որ օխտն-օտարը վայլէ,—չի տայի-պարէմ: Տուն միամիտ կեցի՛ր. ան միլիօններուն ինդաւ տեղը ես չօխտա՛ն կըտիլ իմ,—իմ ծեռքովս կըտանիմ էրուսաղէմ ու հոնի. վարդապետներուն կուտամ. հէջօլմասա աչքովս չիմ տեսնիլ նացա չաթլամիշ էղածը.

ՓԱԽԱԼՕՎԸ.

Ասիլ է՝ կտակտ էրուսաղէմին անունով արիլ իս-հա՛. աշ-թօշ, ատալ գէշ չէ. հոգուտ ալ վարձք է:

ՍՈՒՐԲՈՒՀԻՆ - ՃԻՃԱՆ.

Միտքս էրուսաղէմին տալ է ամա՝ կտակ արած չիմ:

ՓԱԽԱԼՕՎԸ.

Ինչո՞ւ:

ՍՈՒՐԲՈՒՀԻՆ - ՃԻՃԱՆ.

Խուճուռ պան է իտա ստակ ասածդ. քանի որ սաղ իս՝ կը-խըյմըջիս նարամէն պաժներվելու. ծեռքի տակէ, կաղտուկէն թօ կողնան, թօ թալին՝ ումուռիտ չէ. ամա քու ծեռքովտ մէկին-մէկալին տա՛լ՝ անհնարին պան է. հոգիէն պաժներելը աւելի խօ-լայ է, Ասվածուկայ խօլայ է. Մէկալ սէմթէն ալ՝ իտա կտակ ասած թուղթէն պէ-թէր կըսասանիմ. ինծի ամպէս կուգայ որ՝ կտակս կըրեցի-իսէ՛. համան պիտի իյնիմ, պիտի մեռնիմ: Շինտը ինծի ասա՛՝ Ի՞նչպէս կըլայ իտա էրուսաղէմին պանը:

ՓԱԽԱԼՕՎԸ.

Խորդ կիտիս, հաճի-մա, ես ալ իտա կտակ կրելուն պանը խիստ տէյեմիշ արիլ իմ: մէմը կըլսիս որ ֆէլանը կտակ արիլ է. շատ չի անցնիլ, մէմալ կըլսիս որ՝ վայկիրինը ինկիլ է մեռիլ է:

ՍՈՒՐԲՈՒՀԻՆ - ՃԻՃԱՆ.

Էյ-շտէ, ինչ ալ լանը, իտա կտակ ասած թուխտէն խիստ պէթէր կըվախնամ: (Թագուշը նես կըմտնէ):

ԹԱԳՈՒՇԸ.

(Ամընջնալէն աջքերը վար արած). Պարե՛, հաճի-մա, ծեռքդ տուր պագնիմ:

ՍՈՒՐԲՈՒՀԻՆ - ՃԻՃԱՆ.

Շէ՛ն կենաս, պալաս. ի՞նչպէս իս, աղէ՛կ իս, ըռի՞նտ իս: (Ոտքէն կոլոխը կընայ): հա՛քա, նազար չանիմ, թի՛ւֆ-թի՛ւֆ (լուզուի՞ն ծարովը կըծուքնէ) աս ի՛նչ էղիլ իս աս, կէնճըցի՛լ իս, տեսօքցի՛լ իս, էրեստը կո՛ւն էկիլ է, վա՛րդ կտրիլ իս, թամամ զէնկինի օրդու հարձ պարի էղիլ իս-ու. քեզի տեսնողը վո՛ւ կասէ քի՛ պանւոր աղջիկ է-տէյին. ատէթով պառիչնա կըկիտնայ. . .

ԹԱԳՈՒՇԸ.

(Ամընջնալէն). Ձէ՛ տահա ինչ. իսա ծուծոտ-մուրոտ էթէք-նեւով, փիթուն օրը աղտոտ ծեռքերովս պառիչնա չի լայի-պարէմ: Որի՞ն շունը մեր վրան պիտի նայէ, մեղի մարդու սըրա պիտի տնէ:

ՍՈՒՐԲՈՒՀԻՆ - ՃԻՃԱՆ.

Ինչո՞ւ ատպէս կասիս օր, սախը՛ն. ամեն մարդ ալ իրեն խըսմէթը ունի. Ասծու վըայ տօտովել պէ՛տք է որ. որին ծեռքը տուխի—ամպուէի մէջ կըլայ, որինն ալ՝ եղ ու մուրի մէջ. ան ի՛նչ պան է որ. հէպէթ քու խըսմէթա ալ մէկ օր կըպացվի. շինտը զէնկինի օրդի թօ չի լայ՝ մէքամ արապաճի թօ լայ, ի՛նչ կըլայ որ. մարդուս պահթը սալթը ստըկի՞ն մէջն է-ինչ:

(Նեսէն կինիմարդու ծան կըլսվի՝ Վթագուշ, հաքա թագուշ, ի՛նչ կանիս, ի՛նչ ատէն է, կնացիլ իս, իսայիպ էլիլ իս, սամավարը թաշմիշ կըլայ, նես պե՛ր):

ԹԱԳՈՒՇԸ.

Էկայ, էկայ, (Ցատկըտնէն կերծայ):

ՓԱՆԱԼՕՎԸ.

(Թագուշին էտեկն նայելէն). Հաճի-մա, խոտ խանճընը պէ-
թէր թէյֆէ պարի է—կիտիս. աղէկ-շէնքով հագցունուս, ծոցն
ալ հինկ-տասը հազար տընիս՝ մեր քաղաքի էնկ-փէովը լէվէն-
տին տունը վայլածք պիտ լայ. . .

ՍՈՒՐԲՈՒՀԻՆ - ՃԻՃԱՆ.

Շտէ-աւտ է, որ ինծի եալ առանց կրակի կերէ-տա. իտիպէս
կէնճ, տեսօք աղջիկներ կըտեսնում, քովը ալ կտրիճ լէվէնտ-նը
կեցած տեղս միսս կռծիլ կուզեմ սիրտիս փախելու թենէն. . .
Մինք ալ կէնճ եղած չի՞նք, մեր սիրտն ալ աղէկ-աղէկ պանե-
րու համը ուղեցած չի՞նք, ամա արի-նայէ՛ որ մեր քեօ պահլթը
կամեցած չէ՛ եղել է մեր աղէկութիւնը. Ասվածդ կըսիրիս՝ տասնը-
վեցս նոր թամամ՝ արիլ էի, որ թլթկած, ցաւոտ, եարափարա-
յոտի կիրկը ինկանք. վեց ամիս չանցած աղլի կէս-մարդը ալայ-
մալայ մէքամ ֆոտած լէշ կտրեցաւ. լման իրեք տարի ալ վի-
զերուս պարտքը եղաւ, մեղա՛յ եասծու մեղայ, ատ լէշին եաթա-
խին մէջը ասքով-անքով տառցնելու. ատ չօգտեցաւ մեղի. երոր
կինիմարդս ամեն դիաց Ասծու օրէնքը ճանշնալու տարիքը կու-
գայ-նը՝ մեզի սե զուգի մէջ խողեցին ու ծեռքերս խազինային
պալիքը տուվին, իմիշ՝ սատանայի պէս խարավուլ կայնէ, մու-
խայթթ եղեր հալխին հարամ թօփ-արած ստըկին. Ա՛խ, ա՛խ,
ա՛խ, զո՛րն ասեմ՝ կամ զո՛րն խոստովանիմ. Մեր կուլիէն ան-
ցածը, պալամ, թէմիզ հէքիաթ է... Շինտը ես խե՛ պիտ լամ,
որ ինքս փիթուն կեանքս ամպահլթ եղած, խայրէթ անիմ ուրի-
շին պահլթաւորցունելու. (Ձեռքով սեօլին կըզարնէ, սիրտը էլլած).
Բա՛-փիկ չիմ տալ խոտ սուռուլթմային, չէքի տասը հազար. . .
Ձուզէր մէքամ ծուլթոտ օջիլոտ արապաճի, որ փիթուն օրը ես
եռամբուկներ ուտէր, եա քաղցած ուտէր... է-է-է՛, կօզտէ լա-
ֆերս. մէտօմ՝ ալ էրթամ-նայիմ՝ ինչ կանին Մըկըրս, հարսըս
Պարե՛ կեցիք:

ՓԱՆԱԼՕՎԸ ՈՒ ՈՒՐՈՒՐՕՎԸ (մէկտեղ).

Պարե էրթաս. (ինքերն ալ էտեկն կերծան մինչի զալին տուռը):

ՍՈՒՐԲՈՒՀԻՆ - ՃԻՃԱՆ.

(Փախալօվին). Անչէ ամա, մոռցայ պամալ հարցունելու՝
հարսըս էրեշկիկ ապուխտ արա՛ւ, լուզու աղից:

ՓԱՆԱԼՕՎԸ.

Ինչպէս չէ՛, հապա՛ հապա՛. հէմ ամպէս ալ համով ին,
որ կուտիս՝ չիս քշտանալ. (Սուրբունին-ձիճան կերծայ):

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ.

ՈՒՐՈՒՐՕՎԸ, ՓԱԽԱԼՕՎԸ, ԱՔՍԷՆՏԸ.

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Աս ի՞նչ է աս. սահաթը հայ-հայ տասվերկու կըլայ, Մա-
քառ փեթռովիչը տահա զարթած չէ. Չէ՛նէ զարթիլ է ու՛ մէյ-
տան ելլել չուզէ:

ՓԱԽԱԼՕՎԸ.

Ես ալ ատոր կարմընամ: Ինչախ աս ատէններս քուն լալ
կըլայ, պէլլի պան է որ... (Աքսէնտը նես կըմտնէ):

ՈՒՐՈՒՐՕՎԸ ՈՒ ՓԱԽԱԼՕՎԸ (մէկտեղ).

Մաքառ փեթռովիչը տեղէն տահա ելլած չէ՞-ինչ է:

ԱՔՍԷՆՏԸ

Թողութին անիք, կասիատա, շինտը արապան նստաւ, Ռաս-
տով կընաց. պէթէր հարկաւոր գործ կար...

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Չօխտան ատպէս ասէիր, որ մինք ալ մեր գործին էրթայինք...

ՓԱԽԱԼՕՎԸ.

Մինք անգործ մարդ չինք. մեր ժամանակը թանկ է...

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Ասվածդ սիրիս՝ հալիսին սահաթներով առնել-մնալս որն է...

ԱՔՍԷՆՏԸ.

Թողութին անիք, կասիատա, Ռաստով...

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Մինք հալեւն ստակ առնելու էկած չէինք...

ՓԱԽԱԼՕՎԸ.

Մինք մեր հէլալ ստըկին էտեւն...

ԱՔՍԷՆՏԸ:

Ռաստով... պէթէր հարկաւոր... պանք... վօլթարը-Տանպրդ...
Սքառամանկա...

ՓԱԽԱԼՕՎԸ:

Պէքիմ սուտ ալ ըլայ...

ՌԻՐՈՒՐՕՎԸ:

Փախչե՞լս որն է. վէքսիլին վատէն...

ԱՔՍԷՆՏԸ:

Կասփատա, թողու՞թին անէք... Վալիան... Սքառամանկա...

ՌԻՐՈՒՐՕՎԸ:

Տռակիլներուն հետը լուսէ-լուս քէֆ անելու ժամանակ
կ'կտնէ, ու հարկաւոր գործի համար էրկու մինուէթ ժամանակ
չի կուտնուէ...

ՓԱԽԱԼՕՎԸ:

Հէչ ալ չիմ հաւատալ որ...

ԱՔՍԷՆՏԸ:

Թողու՞թին անիք... Ռաստով... Սթուքին... քանթօռ...

ՌԻՐՈՒՐՕՎԸ:

Պէքիմ պօհօտվիլ է եալ. էրեսը ցուցնել չուզէ...

ՓԱԽԱԼՕՎԸ:

Ատալ ի՞նչ շթուք-պան է. ստակ առնելու ատէնը մեզի
դուժօխքին անդունտէն կտնել կիտէ, ստակը ետ տալու ատէն...

ՌԻՐՈՒՐՕՎԸ:

Ատ մինք Քաթիլիքովին տունին ճամփան չիտի՞նք-ինչ...

ԱՔՍԷՆՏԸ:

Ռաստով... Մալուքօռտաթօ... պանք... քանթօռ... թողու-
թին անիք, կասփատա...

ՓԱԽԱԼՕՎԸ:

Էղա՛ւ-էղաւ, պօշ պան է...

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Աղատ պէթէր վարպետ է հալին ճէպէն ստակը հանելու...

ԱՔՍԷՆՏԸ.

Փամիլըյթե, կասիաթա...

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Տուն ալ վարպետ իս ստակ նեւ քաշողներուն պարտկելու...

ԱՔՍԷՆՏԸ.

Ես ի՞նչ, ես ի՞նչ, մինք խզմէթեար մարդ ինք, մեզի ինչ հրամայած է-նը... քանթոռ... Սթուքին...

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Էղաւ, Ասվածտ սիրիս, սուտ-մուտ խօսքերով մարդու քուն անելու. շիտակ ասա՜-շտէ՜ աղաս ստակ տալ չուզէ, պօհօտվիլ է, ուրիշ լօ-լօ-լօ պէտք է որ, (Գովինա, Աքսէնտին ականջին). Իսա ալայ ասածս չիլայ որ պանի տեղ տնիս, ալայը Փախալօվին կուլ-խուն թանցեր էր. ես կէս սահաթէն նորէն կուգամ, ալայը աղայիտ ալ, քեզի ալ տեղով տեղով կը պատմիմ. շատ Ֆայտալը եալ ասելու պաներ ունիմ (Սմոր). Ես կերթամ (Տուս կելլէ):

Փ Խ ԼՈՎԸ.

(Կէրթայ սիֆթէ տուրը կը պանայ կընայէ՜ տուսը մարդ կալ, չէնէ չիկայ. ետրէն ետ կը տառնայ). Իսա ինչ որ լսեցիր-նը, իմ սէմթէս ալայը ույտուրմաճա պաներ էին Կալուստ-պին ջինի պերելու համար. Ես սահաթ-սահաթ ու կէսէն կուգամ, ամեն պան տեղով կը պատմիմ. Փաքուտը պարե կեցիր. (Կերթայ):

ԱՔՍԷՆՏԸ (մենակ).

Շտէ քեզի մեր աղաներուն թապիէթը, շնտիս կնա՜ ու տա-ցա սուտը խորդէն պաժնէ՜. ճանչւոր ճանչւորի, բարեկամ բարեկամի, աղպար աղպօր հետ ամպէս խալպ կը ժաժկըտի, որ այլազգիի տուշմանը իրեն տուշմանին հետ ամպէս չէր ժաժկըտիլ. Օղորմէլի՜ ժողովուրդ, անտէ՜ր քաղաք. գնա ու տացա հետը գործ կատարէ՜, բարեկամութիւն արա՜, տացա վրայ իշամիշ էղիւ:

ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ.

ՉԱՄԱՆՕՎԸ, ԱՔՍԷՆՏԸ, ԽԱՆԻՉԻՃՕՎԸ.

(Տուրը կամացուկ կը պացվի ու Չամանովին ծանր կը լսվի). հա-
ծէ Աքսէնտ՝ միսաֆիրները կը նացի՞ն.

ԱՔՍԷՆՏԸ.

Կնացին, աղա, կնացին. եօխ էղան. ոտքերը չորնար-պարէմ:
(Չամանովը վախենալէն, մատերուն ծարովը նետ կը մտնէ, ասքով - ան-
քով կ'նայէ օտար մարդ չի կայ-ածափ):

ՉԱՄԱՆՕՎԸ.

Ի՞նչ կուզէին. վարիսա ստակի էտեէ եկիլ էին.

ԱՔՍԷՆՏԸ.

Տեղով պան կըցայ որ հասկընալու. սիֆթէ կանչվաւելէն,
շամաթա անեղէն ստակի, պլըխի անուն տուվին ամա, էրթալու
ատէն ասին քի՝ կաղտուկ ասելիք ունին, սեօզտէ սահաթ - սա-
հաթ ու կէսէն պաշխա պիտի գան ու հարկաւոր պաներ պիտի
ասին. Մեզի՞ մի կըխաբին, չէնէ մէկզմէկու՝ տեղովը չի հասկը-
ցայ. անխատար խելքս հասաւ որ՝ էրկուսն ալ շալվէր, քիւլ-
հանի մարդիք ին՝ Անոր աղէկը ան կըլար, որ ստակները սու-
ռաթներուն թապլէիր ու վազ պերէիր եախայէդ. Տուռին ան-
կաճս տրած՝ նացա ալայ կալաճին լսեցի—մարդ մնաց որ միսերը
չի ծամէին. սըրան ինծի ալ հասաւ. ինա ուկօլը կայնող աղա-
ները չի՞ն մի. պամպասանքէն մատտէ նաքա ուրու զէնիաթ
կիտի՞ն որ...

ՉԱՄԱՆՕՎԸ.

Շատ հեռունները մի՛ թապլիլ. նացա ալայ խասէվէթը տա-
նըհինկ-քսան հազար պարտքս է...

ԱՔՍԷՆՏԸ.

Ատ կայ ու կայ. ամա չէ՛, միտքերը մէկ ուրիշ սատանու-
թին ալ պիտ լայ. տուն չիտի՞ս-ինչ, որ մեր հայը ֆայտա չու-
նենա-նը՝ մէկ ապուրթ չի անիլ. Աս հերկէլէններու սիրտերուն մէջ
մէկ օրօտ կար ամա, չիմացայ ի՞նչ էր:

ՉԱՄԱՆՈՎԸ:

Էյ, ինչ ալ լանը. պանը ան չէ՛: Մինութե մինութ ապ-
լաքաթին տուռը կընայիմ: Տուն կնա շինտը, ինչ-ասիս զաքուսքա-
պան հաղիր արա՛. կիտիս-խօմ, ատ փէզէվէնկին զաւակ արուն-
ծծողները ստակդ պօլէն-պօլ կառնուն, ատ հէչ. ամեն էկածնե-
րուն ալ—նացա ո՞տքը չորնայ—տահա կուշտ պիտի ուտեցնուս
խումցնուս, նացա քօ՞քը չորնայ. (Տուռը կըզարնին չըք, չըք, չըք.
ծան կըլսվի՝ նես գալ կարելի է). Հա՛նա, քեզի ասի-ու. շունին
անունը տո՛ւր, փատը ա՛ռ, կուլխուն տուր. Ապլաքաթն է, ապլա-
քաթն է. Փաթա՛լըյթե, փաթա՛լըյթե. (Խանիչիծովը նես կըմտնէ.
Աքսէնտը վազելէն կերծալ):

ԽԱՆԻՉԻՃՈՎԸ:

Պարէ՛, Մաքառ. Փեթուփիչ. հը՞, ի՞նչպէս իմ, խօսքիս ա-
մո՛ւր իմ:

ՉԱՄԱՆՈՎԸ:

Շինտը մինք ալ քու անունտ տուվինք...

ԽԱՆԻՉԻՃՈՎԸ:

Վո՛վ կիտէ ի՞նչ քիւֆիւրներով...

ՉԱՄԱՆՈՎԸ:

Ձէ՛, ինչո՞ւ, սախը՛ն. տուն կիտիս-խօմ, ես քեզի ասլը սի-
րիլ իմ. տուն մէկալ ապլաքաթներուն կըլմանի՞ս օր, նացա հէ՛րն
անիծած. . .

ԽԱՆԻՉԻՃՈՎԸ:

Ես քեզի հաղար տապուս ասիլ իմ՝ ապլաքաթ մի՛ ասիլ,
ատվօքաթ ասա՛. ապլաքաթը ան խապախէ - խապախ քաշ կու
գայ, մէկ կաւաթ ռախիի համար քլեաուզնը փռաշենիններ կըկրէ,
խարիպ-խազարին վերջին սամաւարը ծախու կըհանէ, էքսիզին
ու օրբեվարիին կոնըկէն շապիկը կըքաշէ-կըհանէ. ատվօքաթը՝
ան զաֆսեմ ճոկ պան է, նա իրեն ազնիւ կըպայէ, թէմիդ կը-
հաքվի, աղէկ-աղէկ մարդոց հետ կընստէ-կէլլէ, խմելու եալ
լանը՝ հէչօլմասա քօնեակ, պօռտօ, շաթօ-իքէմ ու ասպէս թանգ-
նոց պաներ կըխմէ. . .

2ԱՄԱՆՈՎԸ.

Վա՛ղ արի, Ասվածդ սիրիս, երկուսին վիզէն ալ քար կապիս, ճուրը ձգիս. ալայն ալ արուն-ծծող ին...

ԽԱՆԻՉԻՃՈՎԸ.

(Զարնըված). Ես ա՛լ. . .

2ԱՄԱՆՈՎԸ.

(Քովինա), Արուն-ծրծողներուն էնկ-պաշը տուն չի լաս-նը: (Ամուր). Քու պանըտ պաշխա է, պամալ քեզի ասի-ու:

ԽԱՆԻՉԻՃՈՎԸ.

Ատպէս ասա-շտէ. (Արսէնտը պալապան փատնօցով զաքուսքա, կինի-ռախի կպերէ կտնէ սծօլին վրան): Մաքառ Փեթօսվիչ՝ ես քեզի աղէկ խապէր պերած չիմ-կիտի՞ս:

2ԱՄԱՆՈՎԸ.

(Ուռուժ էղած). Ի՛նչ կասէ...

ԽԱՆԻՉԻՃՈՎԸ.

Հա՛, ճանըս, Հա՛. ի՛նչ խառար ասի՛ խայիր չէղաւ. մէկ խօսքի վըայ կեցիլ է՝ սթօլիս վրան-իմիչ [Թօ պերէ, Թօ տնէ Հարուր քսան Հինկ Հազար մանէթս՝ չէնէ՛ Զիպիրին տուռը առջևը կըպանամ, կասէ:

2ԱՄԱՆՈՎԸ.

(Էրեսը մեռելի կուն կտրած). Էտե չասի՞ր որ՝ ատ փուսթօյ ստակին համար — աղլի վէքսիլը, կիտի՞ս-խօմ, ճէմը հազար երկու հալուր մանէթի էր — հոգու մեղք պան է աղամորդու հոգին կորցնելու:

ԽԱՆԻՉԻՃՈՎԸ.

Հապա չասի՞, հէպէթ ասի, ամա խայիր չարաւ-նը՝ (Քիչմը սուս կենալէն ետքը). Մեղքը քուկտն է. քեզի վո՛վ ասիլ էր по предьявлению ատխատար ստրկի ծեռքէտ վէքսիլ տաս:

2ԱՄԱՆՈՎԸ.

Հապա ի՞նչ անէի, կըխղդէր-նը...

ԽԱՆԻՉԻՃՈՎԸ:

Ինչո՞ւ համանձինժի չեկար, ես պէքիմ 25—30 հազարով պանը կը վերջացունէի:

ՉԱԽԱՆՈՎԸ:

(Քոզինա). Կաշի սկրգողներուն մէջ է՛նկ-պաշը տուն չի լայիր-նը, (Ամուր). Ա՛խպար՝ ան մինութին կօլօխս խելք կա՞ր-որ:

ԽԱՆԻՉԻՃՈՎԸ:

Աղէկ. շինտի-խօմ կայ:

ՉԱԽԱՆՈՎԸ:

Կայ. էտե՞:

ԽԱՆԻՉԻՃՈՎԸ:

Երոր կօլօխտ խելք կայ ու տուն Զիպիրէն խալսել կուզես-նը՝ իսա մինութիս հանէ՛, տիմացս տի՛ր քսան մէկ հազար մա-նէթ. Սէլիֆօնօվին ալ 5—10 հազար, պէքիմ՝ ատ խատարով գործտ կը լմնցունում. հէջօլմասա հարուր քսան հինկ հազարէն, ես Զիպիրէն կը խալսիս-ալ:

ՉԱԽԱՆՈՎԸ:

Շատ է, ախպարս. ա՛ռ հինկ հազար մանէթ, հէլալ լա քեզի. Սէլիֆօնօվին ալ կուտամ իրեք հազար—էղաւ կընաց. կօ՛գտէ. ա՛ռ իտա խատար. էյպօհըմ՝ ապիտնի կը լայ:

ԽԱՆԻՉԻՃՈՎԸ:

Քսան մէկ հազարէն մէկ քապիկ պակաս չիմ առնուլ. Սէ-լիֆօնօվինը կրնամ-նը, պէքիմ մէտօմը կը կոտոխիմ:

ՉԱԽԱՆՈՎԸ:

Շա՛տ է, աղպար, շատ է, կուրանամ-կուր քալիմ-օր ու-թէս վեր է՝ պէթէր ապիտնըյ պան է իտա արածտ. պէքիմ մէկ օր ալ մինք քեզի պէտք կուգանք:

ԽԱՆԻՉԻՃՈՎԸ:

Քեզի պէս մարդիք, մինչի աս օրս, ինժի-պէս մարդոց տա-հա պէտք է կած չունիր. ի՞նչ ետքէն պիտ լայ՝ ան ալ Ասված կիտէ. Քեզի պէս մարդոց համար ապիտնի է ինժի պէս մարդոց

քսան մէկ հազար տալը որ Զիպիրէն խալիք. ինծի պէս մարդոց ապիտոնի չէ՞, երոր քեզի պէս զէնկին զասօռինները սաղ քաղաքս զաֆթ արիլ իք, որ սէմթ ուզենաք՝ ան սէմթ կը տառցնուք, սեւը ճերմակ կանիք, ճերմակը սև... մեզի ապիտոնի չէ՞, երոր տուք պալապան սարայներուն մէջը կը կենաք, մի՛նք՝ սարայ չէքի մէքամ խարերով տուն պիլէ չունինք, հաւի քիւմէսի մէջ նօմայ պալա-չաղայով կռած ինք. մեզի ապիտոնի չէ՞, երոր ձեր ծի քշողը իմ օրդոց կիր-կարդացնողէն աւելի ժալօյնի կառնէ. մեզի ապիտոնի չէ՞, որ ձեր կօռնիշնան մեր սայեախյուէյն թէմիզ կը հագուէ կը քալէ ու փորն ալ աւելի քուշտ է. մեզի ապիտոնի չէ՞, որ տուք տարին օխտը-ութը ժում պալ, զիւֆէթ, յարկինք, կեր ու խում, մուղիբով ու տափուլ-զուռնայով քէֆեր կանիք ու ամեն-մէկ քէֆին անխատար կը խարճիք, ինչխատարով որ մէքամ քիւլ ու աշխատաւոր մարդ սաղ տարին տուն-տեղ կը պայէ. մեզի ապիտոնի չէ՞ տեսնելը, որ տուն, իլվանիտ համար, մէկ պրասայէն մուղեքանչիքին աւելի շապաշ կուտաս, նէժէլի տարեպտուտը հայի ժամին, հայ տէրտէրներուն, քաղաքիս բարեգործական ընկերութիւններուն, հայ գիրք շարագրողներուն, հայ խարիպ-խաղարին, հայ անկալներուն, մեր սուրբ Աթոռ Էջմիածնին, մեր սորվող հայ աշկերտներուն, մեր տղայ կարդացնող հայ վարժապետներուն՝ ալայը մէկտեղ առած: Ինծի պէս մարդուն ապիտոնի չէ՞ տեսնելը, որ քեզի պէս մարդու ծիին առանը մէկ հայ վարժապետի կեցած տունէն մեծ, թէմիզ ու ցոլուն է. Տուք զէնկիններտ ինչո՞ւ թահմին կանիք, որ տուք միւճէրէթ տարին-տարենական 25—30 հազար պիտի խարճիք, ու մէկ տղայ կարդացնող, մէկ տէրտէր, մէկ եազըճի, մէկ ուփուպ ծառայող, մէկ քանթօռչիք մուրացկան աղքատի պէս պիտի կենայ. աս օլորմէլիններուն վրաները ալ ինա նոր հալաւ տեսաք իսէ՛ աչքերըտ կը պատուիք, փախիլութենէն սիրտերըտ դուժօխքի կրակով կէրի: Ինչո՞ւ տուք թահմին կանիք քի՛ մենակ տուք, զէնկիններտ, հրաման ունիք նէֆէս առնելու, մեկալոնք ալայը պիտի խղղղւմին, պիտի շանսատակ ըլան. վո՞վ տուվիլ է ծեղի ատ փերվէլէկը, վո՞ր խելքերուտ, վո՞ր իմաստութիւններուտ, վո՞ր էմէկներուտ, վո՞ր արուն-քրտինք հէլալ աշխատանքներուտ համար: Որ տուն կրցիլ իս նեղի ընկածներուն, միամիտներուն կաշին սկրդիլու — ամո է քու աշխատանքդ, որ տուն հալիին ծեռքով կատուի ու շունի կաշի կը թէմիզցունուս — ամո է քու մինիսթրի խելքտ, որ տուն մայպալըխի փուշտու-

կով ֆիչիններ կիլինքցունուս ու կրտանիս Տրապըզոն ծախելու—
 ամտ է քու էմէկտ, որ տուն մուծիքին ցորենը ամպարտ լըցիլ իս,
 ամպարէտ ալ Մափուքօռտաթոյին քանթօռը կըկըրիս—ամտ է քու
 պարծանքդ, իմիշ՝ ես ֆայտալը շէնքով, հասարակին պէտքական
 քաղաքացի իմ. որ տուն իրեք տարին մէմը Մուկօֆին հետը հախ-
 լաթմիշ կըլաս—ամտ է քու կովական գործտ, որին համար սաղ
 քաղաք պարտաւոր է առջևտ կտակ հանելու, ռաստ էկած տեղը
 ճամբայ տալու ու մինչի կեանքիտ վերջը առջևտ մոմ տնկելու
 ու խունկ ծխելու, Տուն չի՞ս տարին-տասվերկու-ամիս ասողը քի՛
 հէլալութինով միլիօններ թօփ չի լալ-տէյին, Տուն կիտիս քի՛
 կողուլթինը, հարամիութինը սալթը մարդ մորթելով ու սուն-
 տուկ կոտորելով կըլայ. շատ եանլըշ իս. հալխին ծեղքով կրա-
 կէն պօհրած կաստանաներ հանելն ու միամիտներուն քրտինքը
 խմելն ալ հարամիութին է, ամմա մինք տահա ատ ֆէնտերուն
 վրայ աղէկ միտք արած չինք:

ՉԱՄԱՆՈՎԸ.

Աղէկ, աղէկ, հասկըցանք. ասինք որ իտա ալայ ասածտ
 խորդ թօ լայ—մինք գէշ ինք, մինք մեղաւոր ինք, մինք քիւլհանի
 ինք. զաթօ՛ մինք սորված չինք, մինք ուսում առած չինք, մեզի
 ամեն գէշութին ներելի է. ամա տուն Մուկօֆի ունիվերսիթէթ-
 ները սորված իս. քեզի 21 հազարը ԽԻ ՅԱ ՎՏՈ, ԽԻ ՍՐՈՎՏՈ կո-
 խել առնելը մէկ փութթոյ պանի համար ներելի չէ՛, առած ու-
 սումիտ չի՛ վայլիլ:

ԽԱՆԻՉԻՃՈՎԸ.

Մէկ հինկ տարի առաջ լսէի-նը՝ պէքիմ-պէքիմ կըհաւա-
 տայի իտա խաբերուտ, ամա շի՛նտը՝ որ ծեղի շատ մօտիկէն ճան-
 չըցայ, արդըն չիմ հաւատալ. Ինքերտ ծեղի առանց ուսումի,
 մեզի ալ ուսումով ասելէն՝ տուք մեզի քուն կանիք, կըմոլորցու-
 նուք, կըխարիք, Տուք ուսումով, բարի սիրտով, թէմիզ հոգիով,
 շիտակ բնութեով. հէլալ մարդուն խե կըճանչնաք. տուք սալթը
 խօլք, պատուաւոր, օրինաւոր մարդ կըճանչնաք նարան, որ մէջը
 հոգի-ճիկար չունի, որ հալխին ցաւ ու տէրտը ճանչնալ չուզէ,
 որ ծեռքէն էկած ամեն հնարներով ստակ թօփ արիլ է, սուն-
 տուկը կռիլ է, վրան ալ պալպան կպղաք զարկիլ է ու ծեռքէն
 մէքամ փապլտած տէնչիկէ ապուլ չի տալ, Շտէ ասպէս քիւլ-
 հանին տուք հուտաք պատիւ, աղէկ մարդու սըրա կըտնիք, ոտ:

քը կըլզէր, խօլօք մարդ ու ֆայտալը քաղաքացի կըճանչնար, նորէն կասիմ՝ հինկ տարի առաջ ես ալ մեղքըցող, հալխին տէր-տին տէրման տանող, էօքսիւզին աչքին արտըսունքը սրբող էի. ամա. ծեր մէջ կենայէն՝ ծեղիմէն սորվեցայ հէ՛մ մարդ չի մեղքընալ, հէ՛մ ռաստ էկողին կոնըկէն շապիկը քաշել-հանել, Տէ՛հ, պօշ կալաճիներով ժամանակ չի կորցնուեր. թէ՛ղ արէ, պե՛ր համպրէ՛ քսան մէկ հազարը, չէնէ՛ տանօսը ծոցս է, վաղը փոօ-քուռօսին կուտամ:

ՉԱՄԱՆՈՎԸ:

Ճանըս՝ տուն հէ՛մ իմ, հէ՛մ ալ Սէլիֆանօվին սէմթէն իս-ինչ,

ԽԱՆԻՉԻՃՈՎԸ:

(Չար տէվի պէս խնտալէն). հապ-պա ինչ կի-տէ-իր պա-լաս:

ՉԱՄԱՆՈՎԸ:

Ի-ի-ի-ի, պանը առ պէս է, հա-ա-ա-ա՞. (կօլօխ քովինա ծռած՝ վար, վար ու վար կանէ, անկէ ետքը, ծան չի հանած, կերթայ մէկալ օտան. քասուային տի՛ննն ծանը կըլսվի. քիջ մը ատենէն ետ կուգայ, ծեղքը պալապան թօփ աջինացի պոնած, կտնէ սթօլին վրան). հա՛նա, համպրէ՛:

ԽԱՆԻՉԻՃՈՎԸ:

(Տեղէն չէլլած՝ հարուրնոց փաջքաները կըհամրէ). Թամամ է. (Փաջքան սթօլին կըզարնէ ու կէլլէ տեղէն). Շինտը-շտէ արի ու-տինք ու խմինք. (Փաջքան կարմիր փլածօքին մէջը կըկապէ, կըտնէ շլեափին տակը. կըմօտկընայ զաքուքայի սթօլին, կըլցնէ մէկ ուսմքա քօնիաք, ուսմքան ծեղքը կառնէ). Կենդանութի՛ւն, ամեն տարի պա-րով հասնինք. (Կըխմէ):

ՉԱՄԱՆՈՎԸ:

(Գովինա). Փաթլամիշ ըլայ փորըտ, ողպօյնիք շուն. (Ա-մուր). Շունորակալութի՛ւն. ամէն. Զաքուքի արա՛, փաժալտտա:

ԽԱՆԻՉԻՃՈՎԸ:

(Կըմօտկընայ զսքուքային, չաթալը կըխողէ սելեալքիին). Ո՛ւյ, ո՛ւյ, ո՛ւյ, աս ի՛նչ պալապան ու եղոտ սէլեալքի է. որիմէ՞ն առիլ իս (Կուտէ):

2ԱՄԱՆՈՎԸ.

(Քովինա) Օսկոը պողազտ կայնէր, խըղղըվէիր-պարէմ, հարամի շո՛ւն, (Ամուր). Քառի Ալէքսէիչ Քաթեֆնիքովէն առի, Անօրները ինա պամպասանքին ուկօլին քովէն կանցնէի. նայիմ Քառի Ալէքսէիչը ծեռքով-ծեռքով կանէ (ինքնալ ծեռքով կըցուցնէ). ծան կուտայ. լամպէս սէլեալքի ունիմ որ, կասէ, կերած ա-տէնտ եղը շառը՛լ շառը՛լ կըվազի. նայիմ՝ խորդ աղէկ պարի է. էռսուն հատ պան առի, տուն խրկեցի. Քառի Ալէքսէիչը թէկարան թանկ-կոշ է ամա, տղին մեղքը առնել պէտ է՛, աղէկ պարի կըպոնէ. Ան մէկալը, Առթիւշը, փէռատնալու պաշ-լայիլ է. Պէլլի՛ մի չէ, զէնկինցաւ-տա. Աս նորերս, կասին, պա-լապան իմէնի կընիլ է. Տուն ի՛նչ կասիս. շինտը նարա էրկու-հարուր հազարով կընա՞ս որ կընելու. Թօփով չիս զըջիլ, ամպէս մալատեց թառկօվից է.

ԽԱՆԻՉԻՃՈՎԸ.

Ատ ալայը առպէս ամա՛ ես էրթալու տեղեր ունիմ մէկ քօնիաքալ զարնիմ, էրթամ. (շուքսն կ'ուլէ, կառնէ ծեռքը). Կեն-դանութի՛ն, (Կըխմէ):

2ԱՄԱՆՈՎԸ.

(Քովինա). Կրակ ըլար, նեսըտ էրէր, չախօթքա շուն. (Ա-մուր). Անտշ.

ԽԱՆԻՉԻՃՈՎԸ.

(Կառնէ կտակը ու փաջքան). Պարն՛ կեցիր.

2ԱՄԱՆՈՎԸ.

(Քովինա). Հարամ սատկիս, ռազ-պօյ-նիք. (Ամուր). Պարի էկար, հածէ Աքսէ՛նտ՝ աղային փալէթօն տո՛ւր, մինչի էքիփաթ ճամբայ տիր, ինքտ ալ նես արի. (Խանիչիճովը կերծայ). Հարամ սատկիս, Ֆոտած շուն. վոթկըտ կոտուէր, սաղ-սէլամէթ տուն չի հասնէիր, ժուլիք-մաղուռիք. աչքըտ քօռնայ, կող-մաշէնիք, որ լակոտներուտ էրեսը չի տեսնէիր, չինկեանայի թօխում. էքիփա-թէն վար կօյօրվէիր, կօյօխտ պատուէիր, ալուպուլիկ մայմուն. չէպէքռաթըտ թուքնում, շունի կաթ ծըծող. (Ուրուրովը նես կըմտնէ):

ՀԻՆԴԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ.

ՉԱՄԱՆՕՎ, ՈՒՐՈՒՐՕՎ ԵՒ ՍՕՖԻԱ.

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Պարև, Մկր-ա. աս ո՛ւտեիս իս. սապահածան էկայ՝ քուն կըլայիր. Ի՛նչպէս իբ. աղէկ իբ, ըռի՞նտ իբ...

ՉԱՄԱՆՈՎԸ.

Ничего, такъ себѣ. Շինտ Խանիչիճովը հոս էր. էփպէի նստանք, հոսէն-հոնէն լաֆեր արինք.

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Ի՞նչ կասէ. Ի՞նչ նոր պաներ կայ Ռաստով:

ՉԱՄԱՆՈՎԸ.

Նարա լաֆը կիտիս-իօմ, — արթեօռի, արթուցայի, թիաթը-ռի պաներ է, պէլլի՞մի չէ:

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Իտա ուսեաները կայ եալ՝ ալայը տղու պէս պաներ ին. խելքերը, միտքերը տայմա խաղի ու էկէնձէի հետ է. հէչ նա-քա, մեկի պէս, սեռիօղնը պաներու — քեարի, շահի, վաստակի խելք չին մաշիլ:

ՉԱՄԱՆՈՎԸ.

(Քրփինա). հապա, հապա, տուն նարան ատպէս ճանչըցի՛ր. ատ շունին կաթ կերածս խուռպաղային կոնրկէն ալ մուշտկացու մորթի կըսկրդէ-կըհանէ. (Սմուր). Ատ խորդ է, Մօսկօֆ սորվեցածները ասլը ճիւնապէթ կըլան. ուսումի դիպոյ, սուտ չէ՛, աղէկին. ամա աշխարքիս էհվալէն հէչ պան չին հասկընալ. ան ալ ասինք՝ մարդս ես՝ ուսումին էտեէն պիտ լայ, ես՝ վաստակին. էր-կու պանը մէկտեղ կըլա՞յ որ:

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Խօսք կայ որ.... Ան չէ ամա, Մկր-ա, ես քեզի մէկ հար-կաւոր գործի էկիլ իմ:

ՉԱՄԱՆՈՎԸ.

Ի՞նչ սոյ գործ է, ասա՛, նայինք:

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Գործս, ճանս, աս սոյ է. տուն էղիլ է, ստըկի հարկաւորութի՞ն ունիս:

ՉԱՄԱՆՈՎԸ.

Ստակ ասած պանտ, որին ալ լայնը՝ հարկաւոր է ու հարկաւոր է, ատոր լաֆը կա՞յ որ: Էտեւ, որիմէ՞ն լսիլ իս:

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Որիմէն լսածս, փաքուտը, քովի թօ. կենայ. տուն ինծի շիտակը ասա՛, պէտք է քեզի ստակ, չէնէ չէ՛:

ՉԱՄԱՆՈՎԸ.

Ես քեզի մէմը ասի-ու՝ ստակը ե՛ր ալ լայնը, որի՛ն ալ լայնը՝ պէտք է ու պէտք է, էտեւ՛:

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Եւոր քեզի ստակ պէտք է-նը՝ մինք сь нашимъ удовольствіемъ.

ՉԱՄԱՆՈՎԸ.

Մեծապէս շնորակալ իմ: ամա ատ ի՞նչպէս կըլայ. ես քեզի տահա հին պարտքս տուված չիմ: Խանութէտ զապօռ ալ կիտիս քի ունիմ, — ալայը ի՛նչխատար է, ախաչը միտքս չէ՛: Նոր պարտքի՞ խողել կուզիս ինծի:

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Ատամ, վաճ արի իտա պօշ կալաճիններէտ. ստակ պէտք է-նը՝ տամ-տա. մէմալ ի՞նչ հալխին տուռը իյնիս, թէմիզ ա-նուռլոտ մուրտիս: Քանի՞ հազար պէտք է—հի՞նկ, ո՞ւթը, տասը:

ՉԱՄԱՆՈՎԸ.

(Աչքին ծարովը նայելէն, իշքիլէմիշ ըլալէն). հա՛, տասը-տաս-նը հինկ հազար պէտք էր: Քովտ ունի՞ս-ինչ:

ՈՒՐՈՒՐՕՎԸ.

Իսա սահաթիս քովս չունիմ, ամա մէկ-պայ տուն կերթամ, կըպերիմ-տա, ատ ի՞նչ տիժար պան է-որ:

ՉԱՄԱՆՈՎԸ:

Զարար չունի տասնըհինկ-քսան հազար մանէթ *съ удоволь-
ствиемъ* կառնէի կարճ վատէով ու փռացէնթն ալ վրան զար-
կած՝ վէքսիլ կուտայի:

ՈՒՐՈՒՐՕՎԸ:

Ասվածտ սիրիս՝ վաճ արի խտա փռացէնթներէ, վէքսիլնե-
րէ. կուզիսնը՝ ունեցածներս ալ պատռիմ թապլիմ սօպան. ան
ի՞նչ հօրս ցաւն է որ:

ՉԱՄԱՆՈՎԸ:

(Քոզինա). Իսա ի՞նչ է իսա, խեցի՞լ է, չէնէ ինծի կը-
խեցունէ. ինչի՞ կըլմանի ասածները, (Ամուր). Զարար չունի. շին-
տի եալ էրթաս պերիս-նը՝ գէշ չէ. *кстати*, սիրտս չուզէր մէ-
մալ *Стукнуть*-ին էրթալու, ամպարիս պուրտը ծախելու. կինն
ալ, կասին, պէթէր եօղըխսզ է. (Քոզինա). Պուրտ չէ քի, կա-
տուի մէկհատիկ մազ կայ որ սաղ ամպարիս մէջը:

ՈՒՐՈՒՐՕՎԸ:

էրթամ բերիմտա. շատ ստակ պէտք է:

ՉԱՄԱՆՈՎԸ:

հազիր ունիս-նը՝ պե՛ր մէկ քսանհինկ-էռսուն հազար մանէթ:

ՈՒՐՈՒՐՕՎԸ:

Թօ լայ, էրթամ: (Կերթայ մինչի տուը ու ետ կըտառնայ).
Մկրա-ա, ես քեզի մէկ ուրուշ ինդրինք ալ ունիմ, ամա՛ չիմ
համարձակիլ ասելու, կըվախնամ որ չիս կատարիլ:

ՉԱՄԱՆՈՎԸ:

Ասա՛, նայինք, ի՞նչ է ինդրինքտ, պէքի կըկատարիմ, վով կիտի:

ՈՒՐՈՒՐՕՎԸ:

Խնդրինքս, ճանս աս է. օրդիս...

ՉԱՄԱՆՈՎԸ:

էտե՞:

ՈՒՐՈՒՐՕՎԸ:

Օրդիս. . .

ԶԱՄԱՆՈՎԸ.

Ատ լսեցինք՝ օրդիտ. էտե ի՞նչ կուզէ օրդիտ, ի՞նչ կասէ օրդիտ. եա ես ի՞նչ անիմ օրդուտ:

ՈՒՐՈՒՐՕՎԸ:

Օրդիտ խեցիլ է:

ԶԱՄԱՆՈՎԸ.

(Ուռուֆ էղած). Հէ՞, ի՞նչ ասիր, օրդիտ խեցիլ է՞, Խաղարոսը:

ՈՒՐՈՒՐՕՎԸ:

Չէ՛, չէ՛, ամպէս չասի. օրդիտ խեցած չէ՛ ամա՛ խեի պէս պան էղիլ է:

ԶԱՄԱՆՈՎԸ.

Ատ ալայը հաշվէ մէկ պան է՝ հա՛ խեցիլ է, հա՛ խեի պէս պան էղիլ է. իսա ինչե՞ր է, որ կասիս...

ՈՒՐՈՒՐՕՎԸ:

Չէ՛, չէ՛, ատպէս ալ չասի. օրդիտ, Խաղարոսը խեցած ալ չէ՛, խեի պէս պան ալ չէ՛. օրդիտ փոսթը զարնվիլ է քու Սօֆիա օրիորդիտ վրան, Վապա՛, կասէ, եբոր Սօֆիան իմն չի լայնը, ես լիփօսվէլը կառնում, անկաճքօքիս կը զարնիմ, կասէ. Մախսումը փոսթը խօստուա էղիլ է. Աս էրկու շարաթ է որ չուտիլ, չի խմիլ, թա՛մամ խախաճ կտուիլ է ճանրմ-ճանում պուզայի պէս կը փ-կըլոր օրդիտ. Աղա՛՜ ողբդ պագնիմ, փոեամը ա-սա՛՜ Սօֆիա օրիորդիտ կուտամ Խաղարոսիս, չէնէ չիս տալ. (Քովինա). Անիսէ Խաղարոսըս սիրած ալ չէ՛, զարնված ալ չէ՛. պէքիմ մախսումը չիտէ եալ՝ աշխարքիս էրեսը Սօֆիա աղջիկ կա՛յ, չէնէ չի կայ, ալայը փորէս ույուրմիշ արիլ իմ. աս խե-րուն միիծնենը մէկ ցի՛նով զաֆթ անել է միտքս. (Ծեռքերը կը վերցունէ). Տէ՛ր Ասված, Տէ՛ր Ասված, եբոր տուն իսա թանցե-րուս մէջ ինծի եարտըմ անիս-նը, մեր Սուրբ-Խաչին մէքամ ամպէս պա՛լապան չանկ կընծայիմ որ՝ ծանը մինչի Նախջուփան գայ. (Ամուր) էտե՞, Մկր-ա, խայի՞լ իս Սօֆիաին օրդուս տալու:

ԶԱՄԱՆՈՎԸ.

Նիչեվօ՛, ատ չիլալու պան չէ՛. օրդիտ Խաղարոսը, ինչ-խատար կը ճանչնամ-նը, չինտիպայ կէնծերուն չի լմանիլ. քիւլ-

Հանի զաստին չէ՛. Ռաստովները քաշ չի գալ, քուլպ չէրթալ, լուսէ-լուս թուխթ չի խաղալ, ուրուշ ամպէս художественный պան ալ վրան լսված չէ. Ա՛մա՛ մէմը աղջիկանն ալ պիտի հարցըվի... (Բովինա). Իսա խազին, իսա նեղիս ատենը, փոօսթը Ասված խրկից ինծի. ինծի ստակ պէտք է՝ տա էկիլ է ինծի ստակ տալու. Սօֆիաս ասոր - վաղը քսան հինկը կուժնուտնու, ուզեցող չի կայ, ծեռքս պատթալ պարի մնացիլ է, տա էկիլ է աղաչանքով - պաղատանքով օրդուն համար կուզէ. հրաշք չէնը իսա՛՝ հապա ի՞նչ պան է... Գրիգոր Լըսաւորի՛շ - պապա՛ տո՛ւն հասնիս, եբոր իսա խազին օրդուն վիզը փաթթելու կրնամ Սօֆիասինը, մեր Լըսաւորիչ ժամին վրան մէքամ պալապան եալտըզը իսաչ կըտնիմ, որ Սուրբ-Խաչէն պիլէ էրեայ ֆա՛ռ ֆա՛ռ ցոլալէն. (Ամուր). Ի՞նչ կասիս, Սօֆիային ծան տամ հարցունո՛ւմ:

ՌԻՐՈՒՐՕՎԸ.

Ս: շԹօշ, հարցո՛ւր-տա:

ՉԱՄԱՆՈՎԸ.

էտե՞, խօսքիտ տէ՛ր իս, ծան տամ, տիմացդ հարցնո՛ւմ... Ամա՛ չէ՛. ինչ ալ լանը, կէնէ աղջիկ է, օտար մարդումէ կըքաշվի. (Սետովը միտք անելէն ետքը). Արի մինք ֆէնտ պանեցնունք, տուն իսա փերտէին էտեք պօհօտվէ. ես Սօֆիայիս ծան կուտամ, ամեն պան տեղով-տեղով կըհարցունում տուն ալ պօհօտված տեղէտ լսէ. Ասպէս աղէկ կըլայ, կուզի՞ս...

ՌԻՐՈՒՐՕՎԸ.

Ատ ալ գէշ չէ՛. ամա՛ նայէ, հէսապով կալաճի արա՛, չիլայ որ մէկ եօւրիսըզ պան ասիս, որ մէկէնիմէկ խայթ ըլայ մախսումը. պաներ ուզենալու լայնը՝ աթքաղ չանիս, չէ՛ չասիս. ինչ որ սիրտդ կուզէ՛նը՝ կունենաս, ասա՛... հասկըցա՛ր:

ՉԱՄԱՆՈՎԸ.

Աղէկ, աղէկ, Տուն կնա՛, փերտէին էտեք պօհօտվէ. (Ուրուրովը կըպօհօտվի). հաճէ Աքսէ՛նտ, Աքսէ՛նտ. (Տուսէն կըլսվի «հէ») Մէկ-պայ ծան տուր Սօնիչքային, աղան պան պիտի ասէ, ասա՛ (Տուսէն կըլսվի «աղէկ»), Ես իմ զաւակներուս բնութքը կիտիմ, նաքա իմ՝ հրամանէս չին էլլիլ. ամա, Փօռմի համար ալ լայնը՝ կէնէ հարցունել կըպատկանի (Սօֆիան նես մտնէ). հաքա

Սօնիչքա՝ քեզի խնամի էկիլ է, ի՞նչ կասիս, (Սօֆիան արմնցած հօրը էրեսը կընայէ). ինչո՞ւ ճուղապ չիս տալ, սուս կեցիլ իս, Թառկօվը տղայ է. քաշ-գալ, թուխթ խաղալ, խմել-հարբել, առասպել պաներով զանիմացա ըլալ—ատպէս պաներէ՝ խիտ հեռու յէ. ի՞նչ կասիս, կուզի՞ս, (Սօֆիան սուս կեցիլ է, աչքերը վար արած՝ փաթօքին ծարը կ'ծմռէ). Ես քեզի սուտ չիմ ասիլ կիտի՞ս. մեր տեղի լէվէնտներուն մէջ, առուտուրի դիաց, էնկ-փէռվըն է, կիմանաս. ասպէս տղայ ցորեկով ֆէնէռով կտնելը տիժար է շընտիսպայ ատէններս. ի՞նչ կասիս, Մուժիքին հարուր մէռքային մէջէն տանըհինկ-քսան մեռքա ճըպրոթ անելը, թաց ու թեթեւ պարին փէռվը սօռթի տեղ քանթօռը զտալաթ ա-նելը նարա համար ֆսեռալնօ մէկ սթաքան ճուր խմելու պէս պան է. էտե՞. կուզի՞ս:

ՍՕՖԻԱՆ.

Ես ատ լէվէնտին կերթամ ամա...

ՉԱՄԱՆՈՎԸ.

Ի՞նչ ամա. իտա ամալովտ ի՞նչ կուզիս հասկըցնելու. փռեամը ասա՛, մի՛ վախնալ:

ՍՕՖԻԱՆ.

Տղին անունը ի՞նչ է:

ՉԱՄԱՆՈՎԸ.

Խազարոս է:

ՍՕՖԻԱՆ.

(Սօֆիան աչքը վեր արած, միքը պան պերելէն, կամացուկ). Խազարոս, Խազարոս... չէ՛, ատպէս լէվէնտ տղայ միտքս չիգալ. տեսած ալ չիմ, լսած ալ չիմ. է՛յ, ինչ ալ լանը՝ ինծի համար ալայը մէկ պան է, վով կուզէ թօ լայ. ես ատ Խազարոս է, Պետուս է, Կիրակոս է, կէրթամ. ամա՛ նա իմ մէկ քանի ուզեցած պաներս կըկատարէ՞:

ՉԱՄԱՆՈՎԸ.

Պապան շինտի հօս էր. նա ինծի կատարեալ իրաւունք տու-վից իրեն տեղը քու ամեն խօսքիտ, խնդրիներիտ պատասխանը տա-լու. ես ալ քեզի կըխոստանամ որ՝ Խազարոսը չէքի մէկ քանի, հապա հարուր կամքտ կըկատարէ. ասա՛ նայիմ, ի՞նչ է ուզեցածու:

ՍՕՓԻԱՆ.

Ինչ, նավամտներ, ցածկէկ ուսուցող ու փառա սև ուս-
սաբներով. ֆաէտոնը կունենան:

ՉԱՄԱՆՈՎԸ.

Անալ ի՞նչ հօրս ցաւն է որ. հէպէթ կունենաս.

ՍՕՓԻԱՆ.

Պուլվառթին վրան, պալապան փէնճէրէներով, թէփէն
ֆոանցուզքի ֆասոն, զալին մէջն ալ խօռով, թուլայէնոր տուն
կունենան:

ՉԱՄԱՆՈՎԸ.

Միամիտ էղի՛ր՝ կունենաս, կունենաս.

ՍՕՓԻԱՆ.

Հէջումասա տարին էրկու ժու՛մ՝ իմ ու իրեն տօնին ուժի-
նով, մոռլիքով, փովուռով, լաքէյներով զիաֆէթ կանէ՞.

ՉԱՄԱՆՈՎԸ.

Կանէ, կանէ. ատ զիաց ալ միամիտ էղի՛ր.

ՍՕՓԻԱՆ.

Ամառները Բիսլափօտսք ու Եալթա կըտանէ.

ՉԱՄԱՆՈՎԸ.

(Զարմացած). Ա՛տ ալ ինչ նոր պան է. հաքա՛ հիւանտ չի՛ս-
խամ. քեղի ի՞նչ պէտք է ցաւագարներու Եալթան, Բիսլափօտսքը
էրթալ. . .

ՍՕՓԻԱՆ.

Իտա՛ ինչ սուտ կալաճիներ է. Եալթա, Բիսլափօտսք սալ-
թը հիւանտները կէրթան-ինչ. ատպէս է՛նը, հապա ինչո՛ւ Կուռ-
չովին հարսը, Թիլքի Ակորճանին աղջիկը, Խուլխուլուկ Գարուէ-
լին սայեախլուն տայմա կէրթան. ի՞նչ ցաւ կպիլ է նացա.
Թէքնէի խատար էրեսներով, կունտ ու կլոր, վրանները վիչինայէն
հաստ եղ կապիլ է-ու.

ՉԱՄԱՆՈՎԸ.

էյ, աղէկ, աղէկ, սիրտտ կունտ թօ չի լայ. ամառները
Տաք-ծուր ու Եալթա կերթաս. միամիտ էղի՛ր. Տահա՛ ինչ կուզիս.

ՍՕՖԻԱՆ.

Ինա պաշ-մատիս ծարին (կը ցուցնէ պաշ-մատին ծարը) խա-տար խոշոր պրուեանթներէ քօլիէ կառնէ՞.

ՉԱՄԱՆՈՎԸ.

Ինչո՞ւ առնելու չէ որ. հէպէթ կառնէ, թէք խա փսա-կին պանը կօլօխ գայ. Տաճա ինչ կուգիս:

ՍՕՖԻԱՆ.

Ինա արունի պէս ալ եախութէ—տամլա կասին—նը—օղեր կունենամ: Անօրները Խզղանչ Օվանէսին աղջիկան անկաճէ տեսայ որ՝ համան սիրտս պիտի անցնէր,—ամպէս թէյֆէ պան էր...

ՉԱՄԱՆՈՎԸ.

Սօնիչքա՝ ես քեզի մէկ պան ասիմ—ատ ալպը պօշ պա-ներին. մէկ սայեախլուի էրիկը զէնկին ըլայ-չէնէ, հէչ նա ստակ պեամիշ կանէ՞ ծի-էքիփաթի, թէյֆէ տունի, օղ ու կերտանլը-խի, Եալթա ու Տաք-ձուրի համար: Ատ առանց քու ասելուտ ալ պիտ լար, իշքիլլէմիշ ըլալ պէտք է-որ. ստակ էղած տեղը ամեն պան ալ կըլայ. ատ վո՞վ չիտէ-որ: Տուն ան ասա որ՝ տուն մէ-քամ կէնճ ու տէսօք էրիկ պիտ ունենաս: Ատ է-շտէ ամեն պա-նէն թանկը:

ՍՕՖԻԱՆ.

(Բիծ ու պռունկ անելէն). Պապա՝ ես քեզի մէկ խորդ խօսք ասիմ՝ ես էրկանս ինչ կէնճութիւնը կըփնտուիմ, ինչ տեպըր. թէք ճէպը ստակով իլինք ըլայ. ինքը կուզէ վացցուն չորս տա-րու պառաւ քաթթաու ըլայ, էրեսով ալ պուրթոտ՝ շէպէքի լմանի—իմ հէչ ումուռիս չէ. (Կըտառնայ փուփլիքային). Ամպէս չէ՞, քուրիկներ:

ՉԱՄԱՆՈՎԸ.

(Զափ կըզարնէ). Պապա, Սօնիչքա, պապա, աչքտ սիրիմ խօլօք էղածովտ. (Ուրուրովը փէրտէին էտէն կելլէ). Տեսա՞ր Ուլաս Պաղտանիչ, ես քեզի չասի՞, որ իմ Սօնիչքաս հէմ հնազանտ զաւակ է, հէմ ալ խօլօք, съ современными понятиями աղջիկ է, Տուն ինչ կասիս. շտափայ աղջիկները, խելքի դիաց, մամա-ներուն ալ, մեծ մամաներուն ալ ճէպերը կըխողին. . . .

CHAPTER I

The first thing that I observed when I came to the city was the great number of people who were going to the market.

CHAPTER II

The next day I went to the market and saw many people who were going to the market.

CHAPTER III

The third day I went to the market and saw many people who were going to the market.

CHAPTER IV

The fourth day I went to the market and saw many people who were going to the market.

CHAPTER V

The fifth day I went to the market and saw many people who were going to the market.

CHAPTER VI

The sixth day I went to the market and saw many people who were going to the market.

XIV.	ՊԱՏՃԷՆ ԽՆԴՐԱԳՐՈՅ ՀԱՅՈՅ ԱՌ ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ	317
XV.	ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ . . .	322
XVI.	ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՄԱՍՆԱ- ԻՈՐ Լ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ . . .	} Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆ 326
XVII.	ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԲԱՐԵՊԱՇ. Լ ՀԱԻԱՏԻ ԱՆՏԱՐԲԵՐ ՄԱՍԻՆ .	
XVIII.	Ի ԳԱԼՈՒՍՏ ԽԱԶՍՏՐՈՅ ԼԱ- ԶԱՐԵԱՆՑ	332
XIX.	Ի ԳԱԼՈՒՍՏ Վ. Պ. ԲՈՒՏԿՈ- ՎՈՒ	} Վ. ԱՍԿԱՐԵԱՆՑ 337
XX.	ՄԱՏԱՆԻ ՊՈՂԻԿՐԱՏԵԱՅ, ՇԻԼ- ԼԷՐ	
XXI.	ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐԲԵՐ, ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ Լ ՅԱՅ- ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	339
		343

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ճ .

ՏԱՅՄԱՔՎԱՅ ՊԱՆԵՐ, ՍԻՒԼԻԻԿ	1
------------------------------------	---



ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

				Բ. Կ.
1.	Հանդէս Գրականական և Պատմական	I	գիրք (սակաւածիւ)	3 —
2.	» » »	II	» »	3 —
3.	» » »	III	»	1 50
4.	» » »	IV	»	1 50
5.	» » »	V	»	2 —
6.	» » »	VI	»	2 —
7.	» » »	VII	»	2 —
8.	Արեւելեան ականդութիւն, Թարգ. Եւրէնովից			— 05
9.	Տաճիկ Փաշա, Բոլզար միանձնուհու յիշատակարանը, փոխադրեց Գ. ք. Սկրտումեան			— 15

Ապագայի կամ վերադիր վճարով ոչ դքի չէ ուղարկվում: Գրաւաճառներն ունին 10% զեջումն կանխիկ վճարելու պայմանով. ծանուցարհաճախը մեկնելից է:

VII և VIII դրքերի բաժանորդագրինն է **3** ռուբլի. արտասահմանի համար 10 ֆրանկ:

Ցանկացողները գիմում են հետեւեալ հասցեով.
 Москва, Мясницкая, д. Ермаковых.

Հրատարակիչ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ.



